

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## **ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

*ընդհանուր խմբագրությամբ*

*Ռ.Ն. ՍԱՐԻՆՅԱՆԻ*

Երևան 2005

Հրատարակվում է Հայաստանի պետական  
ճարտարագիտական համալսարանի  
30.12.2004թ գիտական խորհրդի որոշմամբ

Տնտեսագիտություն: Ուսումնական ձեռնարկ: /Ռ. Ն. Սարինյանի  
ընդհանուր խմբագրությամբ /, Հայաստանի պետական ճարտարագիտա-  
կան համալսարան, Երևան, 2005թ., 358 էջ:

Նախատեսված է բուհերի տնտեսագիտական և ճարտարագիտա-  
կան մասնագիտությունների ուսանողների, ասպիրանտների, գործա-  
րար ոլորտի աշխատողների համար:

Գրախոսներ՝ տ. գ. դ., պրոֆ. Վ. Տ. Պետրոսյան  
տ. գ. դ., պրոֆ. Բ.Ս. Սելվինյան  
Մասն. խմբագիր՝ տ. գ. թ. Բ.Պ. Կարապետյան

Հրատ. . խմբագիր՝ Ն. Խաչատրյան

Պատվեր՝ Տպաքանակ՝  

---

*Տպագրված է Հայաստանի Պետական ճարտարագիտական  
համալսարանի տպարանում*  
*Երևան, Տերյան 105*

## Ներածություն

Տնտեսագիտության սույն դասընթացն ունի մակրոտնտեսական  
թեքում: Առաջին թեմաները, որպես ներածական տնտեսագիտության  
դասընթաց, պատկերացում են տալիս առարկայի, աշխարհի տնտեսա-  
կան ճանաչողության, հասարակության արտադրական հնարավորու-  
թյունների սահմանների, տնտեսության շուկայական համակարգի ինս-  
տիտուցիոնալ շրջանակների, պահանջարկի ու առաջարկի շուկայա-  
կան ուժերի ու պետության տնտեսական դերի մասին: Այնուհետև  
ուսումնասիրվում են մակրոտնտեսական ցուցանիշների, գործազրկու-  
թյան, ինֆլյացիայի, տնտեսական ցիկլերի, ամբողջական պահանջար-  
կի ու ամբողջական առաջարկի, ամբողջական ծախսերի մոդելների,  
զանձարանային քաղաքականության ու պետական բյուջեի, փողի,  
տնտեսական աճի ու միջազգային առևտրի բազմաթիվ հարցեր:

Արդի տնտեսագիտության հիմնական հասկացություններն ու  
սկզբունքները տնտեսագիտության և տնտեսական գործունեության  
երկարատև զարգացման արդյունք են: Այդ պատմության իմացությունը  
թույլ է տալիս խորը ըմբռնելու «տնտեսական մտածողության» տրամա-  
բանությունն ու լինելիությունը: Այդ նպատակին է ծառայում 16-րդ  
գլուխը::

Ձեռնարկի առաջադրույթի շրջանակներում լայն շրջանառության  
մեջ են դրվել արտասահմանյան և ռուսական բազմաթիվ դասագրքեր և  
սկզբնաղբյուրներ:

Ուսանողների կողմից նյութի յուրացումը հեշտացնելու համար  
կիրառվել են հետևյալ միջոցները.

- շարադրանքը հատկանշվում է համառոտությամբ, պարզությամբ  
և հստակությամբ,
- ամեն թեմայի սկզբում տրվում են նյութի բովանդակությունն ուր-  
վագժող հանգուցային հարցերը,
- շարադրանքը կատարված է ըստ հարցերի,
- ընդգծված են յուրաքանչյուր թեմայի նոր հասկացությունները,
- տնտեսական կապերի բացատրության համար օգտագործվել  
են գրաֆիկներ:

Սույն ձեռնարկի առաջին հրատարակությունը լույս է տեսել 2002  
թվականին: Վստահությամբ կարելի է ասել, որ այն գտել է իր ընթերցո-

դին: Սակայն միշտ ժամանակի հետ անհրաժեշտություն է առաջանում կատարել վերանայումներ: Այս իմաստով երկրորդ հրատարակության մեջ.

- տեքստերում կատարվել են ճշգրտումներ, լրացումներ, պարզաբանումներ,

- որպես լրացուցիչ նյութ ավելացվել է « Հայ տնտեսագիտական միտքը» բաժինը,

- նոբելյան մրցանակի դափնեկիր տնտեսագետների կյանքի, գործունեության և տնտեսագիտական մտքի վերջին տասնամյակների արժարժույթների վերաբերյալ պատկերացում է տալիս համապատասխան բաժինը,

- ժամանակակից տնտեսագիտական բառարանը հեշտացնում է նոր հասկացությունների և նյութի յուրացումը:

Ուսումնական ձեռնարկի առանձին թեմաները շարադրել են.

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ն.Սարինյանը՝ ներածությունը, 1, 2, 4, 7, 9, 16, 17 գլուխները և նոբելյան մրցանակի դափնեկիր տնտեսագետները բաժինը, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ. Ս. Գրիգորյանը՝ 6, 8, 10, 11, 12 գլուխները և տնտեսագիտական բառարանը (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Ս. Թադևոսյանի համահեղինակությամբ), ասիստենտներ՝ Ն.Ս. Ավիյանը՝ 3 (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ.Յ.Կարապետյանի համահեղինակությամբ), 5, 13 և Մ. Կ. Աղայանը՝ 14 (տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Ս. Թադևոսյանի համահեղինակությամբ), 15 գլուխները:

Սույն դասընթացի հրատարակության նախապատրաստմանը և նյութերի համակարգմանն օգնել են տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ.Յ.Կարապետյանը և Գ.Կ.Խուդավերդյանը:

Ձեռնարկը հրատարակության է նախապատրաստել ՀԴԵՀ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը:

## ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ և ՄԵԹՈՂԸ

**1.1. Տնտեսագիտության առարկայի սահմանումը և սահմանները:**

**1.2. Տնտեսագիտության վերլուծության մեթոդները:** Մակրոտնտեսագիտություն և միկրոտնտեսագիտություն: Տնտեսական քաղաքականությունը: Տնտեսական նպատակներ: Պոզիտիվ և նորմատիվ տնտեսագիտություն:

**1.3. Տնտեսական մտածողություն. ոչ ճիշտ պատկերացումներ և խոչընդոտներ:**

**1.4. Գրաֆիկները և դրանց նշանակությունը:**

Հասարակության զարգացման պատմությունը, իր ամենալայն իմաստով, տնտեսական զարգացման պատմություն է: Բազում հարյուրամյակներ տնտեսությունն ունեցել է բնափրային բնույթ, ուր արդյունքների արտադրությանն անմիջապես հաջորդում էր դրանց սպառումը: XIII դարից սկսած՝ դժվարաշարժ եվրոպան միակերպ բնափրային տնտեսությունից սկսում է անցնել դրամական տնտեսությանը: Աստիճանաբար փոխվում է տնտեսության կառուցվածքը: Ի հայտ է գալիս շուկան, և արդեն XVI-XVII դարերից տնտեսությունը մտնում է նոր չափումների մեջ: Ու թեև տնտեսական երևույթները միշտ էլ այս կամ այն չափով զբաղեցնում էին հասարակական միտքը, այնուամենայնիվ, որպես գիտելիքների առանձին բնագավառի, որպես ինքնուրույն գիտության՝ նրա տարբերությունը սկիզբ է առնում վերոհիշյալ ժամանակաշրջանից:

**1.1. Ժամանակակից տնտեսագիտությունը ձևավորվել է տնտեսագետների բազմաթիվ սերունդների, դպրոցների, ուսումնառների հասարակական գաղափարների հաջորդափոխության արդյունքում, որոնցից յուրաքանչյուրը փորձել է որոշարկել առարկայի ուսումնասիրության սահմանները և սահմանումը:** Այսպես.

- տնտեսագիտությունն ուսումնասիրում է մարդկանց միջև փոխանակության և դրամական գործարքների հետ կապված գործունեության ձևերը,

- այն գիտություն է մարդկանց կողմից հազվագյուտ կամ սահմանափակ արտադրողական ռեսուրսները տարբեր ապրանքների արտադրության և սպառման նպատակով հասարակության անդամների միջև բաշխելու մասին,

- գիտություն է մարդկանց ամենօրյա գործարար կենսագործունեության, գոյամիջոցների հայթայթման և օգտագործման մասին,

- գիտություն է այն մասին, թե մարդկությունն ինչպես է լուծում ինչ արտադրել, ինչպես և ում համար խնդիրները,

- գիտություն է այն մասին, թե հասարակությունն ինչպես է կառավարում իր տրամադրության տակ եղած ռեսուրսները, սպառման և արտադրության խնդիրները,

- գիտություն է հարստության մասին,

- հասարակության նորմալ կենսագործունեության մասին:

Կարելի է շարունակել բնորոշումների այս ցանկը: Տնտեսագիտությունը ներառում է վերը նշված բոլոր տարրերը, որոնք ի վերջո վերաբերում են սահմանափակ ռեսուրսների պայմաններում նյութական բարիքների և ծառայությունների արտադրության, բաշխման և սպառման գործընթացում մարդկանց պահվածքի ուսումնասիրությանը:

Մարդկանց բնորոշ են ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալապես պայմանավորված պահանջումներ: Նրանք ձգտում են ձեռք բերել սնունդ, հագուստ, բնակարան, բազմաթիվ ապրանքներ և ծառայություններ, որոնք կապակցվում են պատշաճ կամ բարձր կենսամակարդակի հետ: Սակայն մարդկանց բոլոր նյութական պահանջումներն ամբողջությունը գերազանցում է ունեցած բոլոր ռեսուրսների արտադրողական հնարավորությունները: Այստեղից էլ առավել ժամանակակից է հնչում այն բնորոշումը, ըստ որի տնտեսագիտությունն ուսումնասիրում է սահմանափակ արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնահարցերը կամ կառավարումը դրանցով, մարդկանց նյութական պահանջումների առավելագույն բավարարմանը հասնելու նպատակով: Եվ ըստ էության, բոլոր արդի հիմնահարցերը, կապված ինֆլացիայի, գործազրկության, ռազմական ծախսերի, բյուջետային դեֆիցիտի, աղքատության և անհավասարության, շրջակա միջավայրի աղտոտման, բիզնեսի պետական կարգավորման հետ և այլն, իրենց արմատներով կապվում են հազվագյուտ ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնահարցի հետ:

Տնտեսագիտության տեսության խնդիրն է ձևակերպել անհատների և հաստատությունների իրական պահվածքի օրենքներն ու մոդելներն ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ բիզնեսի առումներով: Տնտեսագիտության սկզբունքների իմացությունը պատկերա-

ցում է տալիս ամենօրյա այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են պետական բյուջեի կամ արտաքին առևտրի դեֆիցիտի պատճառները, ինչ է ինֆլացիան, ինչպես կրճատել գործազրկությունը, որքանով են արդյունավետ սոցիալական ապահովության կառավարության ծրագրերը, ինչպիսին է գործող հարկային համակարգը և այլն, ինչը տնտեսական սուբյեկտների ղեկավարներին հնարավորություն է տալիս այս կամ այն տնտեսական իրավիճակում ծառայած խնդիրների և ստրատեգիայի հարցում ճիշտ կողմնորոշվելու, անհատներին՝ մասնագիտության ընտրության, ինֆլացիայի ժամանակ գնողունակության անկումից պաշտպանվելու, վարկային գործարքների, արժեթղթերի կուրսերի, անձնական ինվեստիցիաների և շատ այլ հարցերում արդյունավետ տնտեսական որոշումներ կայացնելու համար: Սակայն տնտեսագիտության տեսությունը, իր գործնական օգտակարությամբ հանդերձ, գերազանցապես ակադեմիական գիտություն է: Ի տարբերություն հաշվապահական հաշվառման, մարքեթինգի, գովազդային գործի, այն գիտություն է այն մասին, թե ինչպես շատ փող աշխատել: Այն կարող է օգնել կառավարելու ֆիրման կամ անձնական ֆինանսները, սակայն նրա գլխավոր ֆունկցիան ոչ թե անհատական խնդիրների, այլ տնտեսության ուսումնասիրությունն է՝ որպես մի ամբողջության, ուր ապրանքների և ծառայությունների արտադրությունը, փոխանակությունը և սպառումը դիտարկվում են ոչ թե առանձին մարդու բանկային հաշվի, այլ ամբողջ հասարակության դիտակետից:

Հաճախ ասում են, թե այն ինչ վերաբերում է բոլորին, որոշակիորեն ոչ ոքի չի վերաբերում: Այս իմաստով տնտեսագիտության տեսությունը յուրաքանչյուր տվյալ կացության համար պատրաստի պատասխաններ չունի, բայց նրա իմացությունն օգտակար հիմք է ստեղծում տնտեսական գործունեության համար:

Տնտեսագիտության տեսությունը տեխնիկական գիտություն չէ և չի պարզաբանում, թե ինչպես կառուցել այս կամ այն ջրամբարը, ստանալ այս կամ այն դեղը, կրճատել մեքենայի վառելիքի ծախսը և այլն: Այնուամենայնիվ, տնտեսագիտությունը շփման եզրեր է հայտնաբերում այդ հիմնահարցերի լուծման հետ: Օրինակ, ելակետ ունենալով ռեսուրսների սահմանափակությունը կամ գների մակարդակի փոփոխությունը՝ հաճախ ընտրություն է կատարվում տեխնոլոգիական տարբեր լուծումների համար:

Այն, որ մարդը սոցիալական էակ է, առավել ևս չեն կարող խուսափել ոչ պատմաբանը, ոչ սոցիոլոգը, ոչ տնտեսագետը, ոչ քաղաքագետը: Տնտեսագիտության տեսությունը թափանցում է բոլոր սոցիալական գիտությունները ճիշտ այնպես, ինչպես որ վերջիններս թափանցում են տնտեսագիտության մեջ: Սոցիալական գիտությունը միասնական է: Տնտեսագիտության տեսությունը պարտավոր է իր հնարավորություններով գրավել ուրիշի տարածքները, որքանով նրա օգտագործած վերլուծական կատեգորիաները՝ ռեսուրսների սահմանափակություն, ծախքեր, նախընտրելիություն, իրենց օգտագործման ոլորտներով ունիվերսալ են: Տնտեսագիտության տեսությունը «հիրավի հասարակական գիտության ունիվերսալ քերականությունն է»: Տնտեսական գիտության այս համընդհանուր կարգավիճակի մեջ գուցե և առկա է որոշակի «կայսերական գոռոզամտություն»: Սակայն այդ է վկայում տնտեսագիտության տեսության վերջին երկու հարյուր տարվա հետազոտողները, տնտեսական երևույթների ուսումնասիրության նոր տեսանկյունների, մտավոր նոր շառավիղների անհրաժեշտությունը՝ սոցիալական մյուս գիտությունների փորձի յուրացման առումով: Պատահական չէին դեռևս տասնամյակներ առաջ տնտեսագետներից մեկի այն խոսքերը, թե իսկական տնտեսագետը պետք է լինի «մաթեմատիկոս, փիլիսոփա, հոգեբան, մարդաբան, պատմաբան, աշխարհագրագետ, մասնագետ քաղաքականության բնագավառում, զրական ոճի վարպետ, ռեալ կյանքն իմացող և բիզնեսի ու ֆինանսների բնագավառում պրակտիկ փորձ ունեցող մարդ, պետք է հասկանա կառավարումից և լավ տիրապետի 4-5 լեզուների»:

**1.2.** Մեթոդը տվյալ գիտության ինքնագիտակցությունն է, նրա լաբորատորիան: Տնտեսական այս կամ այն երևույթի վերլուծությունը պահանջում է որոշակի մոտեցում, մեթոդ: Տնտեսագիտության առաջին խնդիրն է նկարագրել, վերլուծել և բացատրել արտադրության, գործազրկության, ապրանքների և ծառայությունների գների և այլ երևույթների դինամիկան, ինչպես նաև սահմանել դրանց միջև առկա հարաբերակցությունը: Իսկ որպեսզի այդպիսի նկարագրությունը որևէ արժեք ունենա, այն պետք է լինի ավելին: Այն պետք է ենթարկվի որոշակի համակարգման:

Բոլոր գիտություններն էմպիրիկ են, այսինքն՝ հիմնվում են փաստերի վրա: Տնտեսագիտության տեսության խնդիրն է համակարգել, մեկ-


նաբանել և ընդհանրացնել այդ փաստերը: Տնտեսագիտական վերլուծության վերջնական արդյունքները՝ սկզբունքները և մոդելները, հավաքված փաստերը կանոնավորվում են և իմաստավորվում, ի մի բերվում, դրանց միջև սահմանվում են համապատասխան փոխադարձ կապեր՝ դուրս բերելով որոշակի ընդհանրացումներ: Տեսությունն առանց փաստերի կարող է դատարկ լինել, բայց փաստերն առանց տեսության անհնաստ են:

Տնտեսական իրականությունը, տեսությունը, քաղաքականությունը գտնվում են որոշակի կապի և միմյանցից կախվածության մեջ (տես սխեմա 1.1):

Ինչպես ցույց է տրված սխեմայում, որևէ հիմնահարցի ուսումնասիրությունը սկսվում է փաստերի հավաքումից, որն անվանվում է նկարագրական կամ էմպիրիկ տնտեսագիտություն: Փաստերի դիտողականության արդյունքում սահմանվում են սկզբունքներ, այսինքն՝ անհատների և հաստատությունների իրական պահվածքի վերաբերյալ կատարվում են ընդհանրացումներ: Փաստերից կատարվող այդ ընդհանրացումները անվանում են տնտեսագիտության տեսություն կամ տնտեսագիտական վերլուծություն:

Տնտեսական պահվածքի ուսումնասիրության ժամանակ տնտեսագիտությունը կարող է շարժվել ինչպես փաստերից դեպի տեսություն, այնպես էլ՝ տեսությունից դեպի փաստեր: Դա նշանակում է, որ կիրառվում են ինչպես *ինդուկցիայի*, այնպես էլ *դեդուկցիայի* մեթոդները<sup>1</sup>: Ինդուկցիայի մեթոդը թույլ է տալիս մասնավոր դիտողություններից ու փորձերից կատարել եզրակացություններ, մի շարք այդպիսի եզրակացություններից անել ավելի ընդհանուր բնույթի եզրահանգումներ: Օրինակ, մարդիկ իրենց գործունեության ընթացքում նկատել են, որ երկու տարբեր մարմինների շփումից առաջանում է ջերմություն: Բազմաթիվ այդպիսի երևույթների մասնարկության արդյունքում կատարվել է այն ընդհանրացումը, թե մարմինների շփումից առաջանում է ջերմություն: Ինդուկցիան, հիմնվելով դիտողականության և փորձի վրա, իր եզրակացությունների մեջ անցնում է մասնավորից ընդհանուրին կամ փաստերից դեպի տեսություն:

<sup>1</sup> Տնտեսագիտության մեթոդների մասին կխոսվի նաև 16-րդ գլխում:



Սխեմա 1.1

Ընդհանրացումներ կատարվում են նաև դեդուկցիայի կամ վարկածային մեթոդի միջոցով: Այդպիսի իրավիճակում տնտեսագետները հիմնվում են պատահական դիտարկումների, տրամաբանության և ինտուիցիայի վրա և ձևակերպում ենթադրական, չստուգված սկզբունք, որն անվանվում է վարկած: Օրինակ առաջնորդվելով «կաբինետային» տրամաբանությամբ՝ կարելի է ենթադրել, որ սպառողներին նպատակահարմար է շատ ապրանքներ գնել այն ժամանակ, երբ գինն ընկնում է: Որպեսզի ստուգվի վարկածի ճշմարտացիությունը, որին հանգել են

դեդուկցիայի միջոցով, անհրաժեշտ է այն ենթարկել համակարգված բազմակի ստուգումների, օրինակ, թե իրական տվյալները որքանով են արտահայտում գնի և ձեռք բերված ապրանքների քանակի միջև բացասական կամ հակադարձ համեմատական կախվածությունը: Հետևապես, դեդուկցիան ենթադրում է հակառակ շարժումը՝ ընդհանուրից դեպի մասնավորը, տեսությունից դեպի փաստեր:

Դեդուկցիան և ինդուկցիան ոչ թե իրար բացառող, այլ լրացնող մեթոդներ են: Դեդուկտիվ մեթոդի միջոցով ձևակերպված վարկածները կողմնորոշիչ են էմպիրիկ տվյալների հավաքման և համակարգման ժամանակ: Իրենց հերթին փաստերը նախադրյալներ են վարկածների համար: Դեդուկցիան իր հիմքում միշտ պարունակում է ինդուկցիա, քանի որ այն ընդհանուրը, որից կատարվում են մասնավոր եզրակացություններ, ստացվում է ինդուկտիվ ճանապարհով: Հայտնի տնտեսագետ Գ. Շնոլերը նկատում է, թե տնտեսական երևույթների փոխկախվածության բացահայտման համար գիտական մտքին ինդուկցիան և դեդուկցիան անհրաժեշտ են ճիշտ այնպես, ինչպես որ մարդուն երկու ոտքերը՝ քայլելու համար:

Տնտեսագիտական ընդհանրացումների ժամանակ հաճախ օգտագործվում է «այլ հավասար պայմաններում» ենթադրությունը: Այսինքն, ընդունվում է, որ մյուս փոփոխականները, բացառությամբ հետազոտվողների, տվյալ դեպքում մնում են անփոփոխ: Այն պարզեցնում է վերլուծությունը: Դա նշանակում է արստրակցիայի (վերացարկման) մեթոդի կիրառում, որը թույլ է տալիս մտովի վերանալ տվյալ երևույթին ոչ հատուկ երկրորդական կողմերից և ուշադրությունը կենտրոնացնել գլխավորի վրա: Օրինակ, x ապրանքի գնի և վաճառքի քանակի միջև կապի քննարկման ժամանակ կարելի է կատարել ենթադրություն, թե բոլոր այն գործոններից, որոնք կարող են ազդել x ապրանքի վաճառքի չափի վրա, փոփոխվում է միայն նրա գինը: Դա հնարավորություն է տալիս կենտրոնանալ միայն «գին-վաճառքի ծավալ» փոխադարձ կապի վրա:

Բնական գիտություններում կարելի է ստուգողական փորձերի արդյունքում հասնել ճշգրիտ արդյունքների, որոնց ժամանակ «այլ հավասար պայմանները» իսկապես մնում են անփոփոխ կամ գործնականում անփոփոխ (ինչպես օրինակ, դա կարող է անել քիմիկոսը կամ կենսաբանը): Սակայն տնտեսագիտությունը լաբորատոր հետազոտություն

չէ: Տնտեսագիտության մեջ դժվարությունն այն է, որ միևնույն տնտեսական երևույթի վրա ազդող գործոնները բազմազան են, դրանք գործում են միաժամանակ, և հնարավոր չէ իրարից անջատել, ունենում են հակասական ազդեցություն, և յուրաքանչյուրը ենթակա է մշտական փոփոխության:

Այդպիսի քառասյին միջավայրում «այլ պայմանները» փոփոխվում են: Եվ արդյունքում տնտեսագիտական սկզբունքները գործնական կիրառության ժամանակ դրսևորում են պակաս հստակություն և ճշգրտություն: Այստեղ խոսքը սկզբունքների, օրենքների և մոդելների (հաճախ այդ հասկացությունների մեջ դրվում է նույն իմաստը, որպես անհատների և հաստատությունների տնտեսական պահվածքում օրինաչափությունների հաստատում կամ ընդհանրացում) հարաբերական ճշտության մասին է: Այս իմաստով տնտեսագիտության տեսությունն ընդհանրություններ է հայտնաբերում հրաձգության տեսության հետ: Հրաձգության տեսության մեջ անհրաժեշտ է լինում հաշվարկել կրակոցների տվյալ քանակից նշանակետը խոցելու հավանականությունը: Արկի թռիչքի հետագծի վրա կարող են ազդել չնախատեսված հանգամանքներ, որոնց կառավարումը հնարավոր չէ, օրինակ պատահական քամու պոռթկումը, լիցքի կշիռը, որը որքան էլ ճիշտ որոշեն, երկու միատեսակ հրանոթային արկերում բացարձակ նույնը չի կարող լինել և այլն:

Տնտեսագիտական սկզբունքները կամ տեսություններն անխուսափելիորեն կրում են վերացական բնույթ: Դրանք չեն արտահայտում իրական կյանքի բոլոր գույները: Սակայն, դա չի նշանակում թե այս կամ այն տեսությունը ոչ գործնական կամ ոչ իրական է: Իրականում տնտեսագիտության տեսությունները գործնական են հենց այն պատճառով, որ դրանք վերացարկումներ են: Իրականության աշխարհը չափից շատ բարդ ու խճճված է, որպեսզի այն ներկայացվի խիստ կանոնակարգված ձևով: Տնտեսագետներն իրենց տեսությունները կառուցում են՝ ձգտելով փաստերի քառասյին հավաքածուի մեջ հայտնաբերել իմաստ՝ այդ փաստերը հանգեցնելով պիտանի և ռացիոնալ ձևի: Ընդհանրապես ամեն մի վերլուծություն ուղեկցվում է վերացարկման պրոցեսով: Տնտեսագիտության տեսությունը մոդել է, տնտեսության այս կամ այն ոլորտի պարզեցված պատկերը կամ սխեման: Այդպիսի մոդելը հնարավորություն է տալիս իրականությունը լավ հասկանալ հենց այն

պատճառով, որ նրանում անտեսվում են իրական կյանքին բնորոշ շեղումների մանրամասները:

Գիտության շատ ճյուղերում տարբեր երևույթների ուսումնասիրությունը կատարվում է տարբեր մակարդակներով: Այսպես՝ մոլեկուլյար տեսության մեջ մասնագիտացած կենսաբաններն ուսումնասիրում են այն քիմիական բաղադրամասերը, որոնցից կազմված են կենդանի օրգանիզմները: Բջջային տեսության մեջ մասնագիտացած կենսաբաններն ուսումնասիրում են բջիջները, որոնք բաղկացած են բազմաթիվ քիմիական տարրերից և միաժամանակ կազմում են կենդանի օրգանիզմների բաղկացուցիչ մասերը: Կենսաբանները, ովքեր մասնագիտացել են էվոլյուցիայի տեսության մեջ, ուսումնասիրում են կենդանիների ու բույսերի տեսակներն ու դրանց փոփոխությունը դարերի, հազարամյակների ընթացքում: Այդպես էլ գոյություն ունեն տնտեսական երևույթների վերլուծության միանգամայն տարբեր երկու հարթություններ, որոնց համապատասխան տնտեսագետները կատարում են տնտեսական պահվածքի վերաբերյալ ընդհանրացումներ, ձևակերպում օրենքներ *մակրոտնտեսության և միկրոտնտեսության մակարդակներով*: Մակրոտնտեսության հարթությունը (մակարդակը) վերաբերում է կամ տրնտեսությանն ամբողջությամբ, կամ նրա հիմնական ստորաբաժանումների ու ազդեցացված օբյեկտների այնպիսի հիմնական բաղկացուցիչներին, ինչպիսիք են՝ պետական ոլորտը, տնային տնտեսությունները և մասնավոր ոլորտը: Ազդեցատն այն յուրահատուկ տնտեսական միավորների ամբողջությունն է, որոնք կարելի է դիտել որպես մեկ միավոր: Օրինակ, Հայաստանի Հանրապետության բոլոր մասնավոր ձեռնարկությունները կարելի է դիտել որպես մի հսկայական, ամբողջական միավոր: Ուսումնասիրելով ազդեցատները՝ մակրոտնտեսագիտությունը ձգտում է ուրվագծել տնտեսության ընդհանուր կառուցվածքային սխեման և կապը ամբողջ տնտեսության բաղադրամասերը կազմող ազդեցատների միջև: Այստեղ ուշադրության չեն արժանանում տարբեր ազդեցատները կազմավորող առանձին բաղադրիչները: Մակրոտնտեսագիտության մեջ տարբեր տնտեսական հարցերի վերլուծության ժամանակ օգտագործվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ արդյունքի ամբողջական ծավալը, զբաղվածության ընդհանուր մակարդակը, ամբողջական եկամուտը, ամբողջական ծախսերը, գների ընդհանուր մակարդակը և այլն: Մակրոտնտեսագիտությունը պատկերացում է

տալիս այն մասին, թե ինչի վրա է հիմնված կառավարության հարկային քաղաքականությունը և ինչ նպատակ է հետամտում, ինչ է բյուջետային դեֆիցիտը կամ պետական պարտքը և ինչպիսի սոցիալ-տնտեսական հետևանքներ ունի դրանց աճը, ինչպիսի նշանակություն ունի երկրի համար առողջ բանկային ու դրամական համակարգը և այլն: Ակներև է, որ մակրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է ոչ թե ծառերն առանձին-առանձին, այլ անտառը: Այն հնարավորություն է տալիս տնտեսությանը նայել բարձունքից:

Միկրոտնտեսագիտությունը գործ ունի կոնկրետ տնտեսական միավորների, առանձին տնտեսական սուբյեկտների ուսումնասիրության հետ: Երբ տնտեսագետը ուսումնասիրություն է կատարում այդ հարթության մեջ, նա այդ տնտեսական միավորը և տնտեսության մի փոքր մասը, ինչպես ասում են, դնում է մանրադիտակի տակ և մանրակրկիտ ուսումնասիրում նրա գործունեության տեսանկյունները: Այստեղ մենք օգտվում ենք՝ «առանձին ճյուղ», «ֆիրմա» կամ «տնային տնտեսություն» հասկացություններից և ուշադրության ենք արժանացնում այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ կոնկրետ արդյունքի արտադրությունը կամ գինը, մեկ ֆիրմայում զբաղված բանվորների թիվը, առանձին ֆիրմայի կամ առանձին ընտանիքի եկամուտը կամ ծախսերը, այն ուղիներն ու լծակները, որոնցով կարելի է կարգավորել տնտեսական հավասարակշռվածությունն այդ հարթության մակարդակով:

Միկրոտնտեսագիտությունը, արդեն, ուսումնասիրում է ոչ թե անտառը, այլ ծառերն առանձին-առանձին: Այդպիսի վերլուծությունն անհրաժեշտ է տնտեսական համակարգի որոշ յուրահատուկ քաղաքականասերը մոտիկից տեսնելու համար:

Տնտեսագիտության բաժանունը մակրո և միկրո կտրվածքների դեռևս չի նշանակում, թե բոլոր հարցերի քննությունն անհրաժեշտ է ենթարկել կտրուկ սահմանազատումների: Շատ բաժնիներ և հարցեր ընդգրկում են այդ երկու ոլորտները, և քննարկվում ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ միկրոտնտեսական տեսանկյուններից: Օրինակ, եթե ժամանակ առաջ գործազրկությունը գերազանցապես դիտվում էր որպես մակրոտնտեսագիտության խնդիր (գործազրկությունը կախված է ամբողջական ծախսերից), ապա այժմ գործազրկության մակարդակի որոշման դեպքում կարևոր նշանակություն է տրվում բանվորների կողմից նոր աշխատանք փնտրելու անհատական որոշումներին և կոնկրետ

ապրանքային շուկայի և աշխատանքի շուկայի գործողության եղանակներին:

Այնուամենայնիվ, եթե միկրոտնտեսությունն առավելապես ձգտում ունի կայունության և հավասարակշռության, ապա մակրոտնտեսությունը՝ դինամիկայի և աճի: Նկատենք, որ տնտեսագիտության տեսության մեջ մակրո և միկրո սահմանազատումներն ընդունված է վերագրել XX դարի 30-ական թվականներին:

Տնտեսագիտության տեսությունը *տնտեսական քաղաքականության* հիմքն է: Տնտեսագիտական սկզբունքների իմացությունը հեշտացնում է այս կամ այն հարցի լուծումը՝ կապված հասարակության հիմնական նպատակների իրագործման հետ: Օրինակ, ինչպես մեղմացնել տնտեսական ցիկլերի փոփոխականությունը, խթանել արդյունավետությունն ու տնտեսական առաջընթացը, ավելի հասանելի դարձնել բավարար կենսամակարդակը և այլն: Տնտեսական սկզբունքները հիմք են ծառայում կանխատեսումների համար, իսկ ինչ-որ երևույթի հետևանքների փոփոխությունը պահանջում է ճշգրիտ կանխատեսումներ: Եթե տնտեսագիտության տեսության միջոցով կարելի է կանխատեսել այնպիսի անցանկալի երևույթներ, ինչպիսիք են՝ գործազրկությունն ու ինֆլյացիան, ապա այդ դեպքում կարող ենք ազդել դրանց վրա և կառավարել:

Բժիշկը, որը ձգտում է արմատապես վերացնել հիվանդությունները, սկզբում պետք է սովորի օբյեկտիվորեն գնահատել այն, ինչը նրա դիտողությունների առարկան է: Սակայն, օգտագործելով մանրէաբանությունը, խելահեղ գիտնականը, մարդկանց վարակելով ժանտախտով, կարող է ոչնչացնել մարդկությանը: Չի կարելի միայն բարի մտադրություններով հասնել ցանկությունների իրականացմանը:

Ճիշտ այդպես էլ, յուրաքանչյուր տնտեսական իրավիճակի համար գոյություն ունի մեկ ճշմարիտ բացատրություն: Տնտեսագիտությունն ընդհանուր է և՛ հանրապետականների, և՛ դեմոկրատների, և՛ բանվորների, և՛ ձեռնարկատերերի համար: Հիմնական տնտեսական հարցերի գնահատման խնդրում տնտեսագետների մեծ մասի տեսակետները բավականին մոտ են: Դա բնավ չի նշանակում, թե տնտեսական քաղաքականության որոշման ժամանակ տնտեսագետները միակարծիք են: Տնտեսագետներից մեկը կարող է հանդես գալ ցանկացած գնով լրիվ զբաղվածության հասնելու համար, մյուսը՝ դրան կարող է չտալ առաջնային նշանակություն:



Այս կամ այն նպատակի իրականացման համար տնտեսական քաղաքականության մշակումը բարդ խնդիր է: Այն պահանջում է անցնել հետևյալ հիմնական փուլերը.

- նպատակների հստակ ձևակերպումը. օրինակ, «լրիվ զբաղվածություն» ապահովելու քաղաքականությունը ենթադրում է արդյոք, որ 16-ից մինչև 65 տարեկան բոլոր մարդիկ պետք է աշխատանք ունենան, թե՞ նկատի է առնվում աշխատանք բոլոր նրանց համար, ովքեր ուզում են աշխատել, կամ արտադրության կառուցվածքի անխուսափելի փոփոխությունների և աշխատողների կողմից աշխատանքը կամավոր փոխելու հետ կապված թույլատրելի՞ է համարվում որոշակի «նորմալ» գործազրկության մակարդակը,

- քաղաքականության հնարավոր տարբերակները. անհրաժեշտ է սահմանել, թե ինչպիսի արդյունքների կարող են հանգեցնել տվյալ նպատակին հասնելու քաղաքականության տարբերակները: Օրինակ, որպես լրիվ զբաղվածության հասնելու այլընտրանքային եղանակներ տնտեսագետները քննարկում են գանձարանային (բյուջետային) քաղաքականության (որը ենթադրում է պետական ծախսերի և եկամուտների կառուցվածքի փոփոխություն) և դրամական քաղաքականության (որն առաջ է բերում դրամական զանգվածի մեծության փոփոխություն) համեմատական առավելություններն ու թերությունները,

- գնահատումը. նշանակում է հաշվի առնել տվյալ քաղաքականության հետևանքներն ու գնահատել նրա արդյունավետությունը: Թե օրինակ, հարկային համակարգի կամ դրամական զանգվածի փոփոխության արդյունքում որքանով է հաջողվել գործազրկությունը հասցնել կանխատեսված մակարդակին, կամ որքանով է ֆիրմայի մասնավորեցումը բերել սպասվող հետևանքներին:

Քանի որ տնտեսական քաղաքականության միջոցով, ի վերջո, իրականացվում են որոշակի *տնտեսական նպատակներ*, ուստի առանձնացնենք դրանցից կենսականորեն անհրաժեշտները, որոնց հետամուտ է ամեն մի երկիր.

ա) տնտեսական աճ, որը պահանջում է ավելի շատ և որակյալ ապրանքների և ծառայությունների արտադրություն, իսկ դա ենթադրում է համեմատաբար բարձր կենսամակարդակ,

բ) լրիվ զբաղվածություն. աշխատանքի ապահովում բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում և ընդունակ են աշխատելու,

գ) տնտեսական արդյունավետություն. առկա սահմանափակ արտադրական ռեսուրսներից նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքների ստացում,

դ) գների կայուն մակարդակ. խուսափում գների ընդհանուր մակարդակի նշանակալից բարձրացումից կամ իջեցումից, այսինքն՝ ինֆլյացիայից և դեֆլյացիայից,

ե) տնտեսական ազատություն. ֆիրմաների կառավարիչները, բանվորները և սպառողները պետք է իրենց տնտեսական գործունեության մեջ տնօրինեն բարձր աստիճանի ազատության,

զ) եկամուտների արդարացի բաշխում. խուսափել հարստության և աղքատության ծայրահեղ բևեռացումներից,

է) տնտեսական ապահովվածություն. հիվանդների, անաշխատուցների, ծերերի և տարբեր պատճառներով նվազագույն եկամուտ ստանալու հնարավորությունից զրկված այլ մարդկանց արժանապատիվ գոյության ապահովում,

ը) առևտրական հաշվեկշիռ. միջազգային առևտրի և միջազգային ֆինանսական գործարքներում ճիշտ հաշվեկշռի պահպանում:

Այս նպատակներից շատերն իրար *փոխլրացնում են* այն իմաստով, որ դրանցից որևէ մեկի իրականացմանը զուգընթաց կարող են իրագործվել նաև այլ նպատակներ: Օրինակ, հասնել լրիվ զբաղվածության, նշանակում է գործազրկության կրճատում և տնտեսական ապահովվածության իրականացում: Իսկ առանձին նպատակներ կարող են *հակասել* կամ *բացառել* միմյանց: Այսպես, տնտեսագետների մի մասը գտնում է, թե այն ուժերը, որոնք նպաստում են հասնելու տնտեսական աճի և լրիվ զբաղվածության, կարող են առաջ բերել ինֆլյացիա, իսկ եկամուտների բաշխման մեջ ավելի շատ հավասարության ձգտումը կարող է թուլացնել աշխատանքի, ինվեստավորման, տեխնիկական առաջընթացի և ձեռնարկատիրական ռիսկի խթանները, այսինքն, թուլացնել հենց այն գործոնների գործողությունը, որոնք պայմանավորում են արագ տնտեսական աճը: Սովորաբար, այսպիսի հակասական իրավիճակներում հասարակությունը որոշում է, թե որ նպատակներին պետք է *առաջնություն* տա: Եթե լրիվ զբաղվածությունն ու գների կայունության նպատակներն իրար հակասում են, այսինքն, լրիվ զբաղվածությունն ուղեկցվում է ինֆլյացիայի աճով, իսկ գների մակարդակի

կայունությունն իր հետ բերում է գործազրկություն, ապա հասարակությունը պետք է որոշի, թե այդ նպատակներից որն է համեմատաբար կարևոր: Տնտեսական որոշ նպատակներ՝ տնտեսական ազատությունը, եկամուտների արդարացի բաշխումը հնարավոր չէ ենթարկել քանակական չափակցման: Չնայած տարակարծություններին՝ հասարակությունը գնում է փոխզիջումների և ընդունում որոշումներ: Հակառակ դեպքում, ինչպես նկատել է Բեռնարդ Շոուն, եթե տնտեսագետները փորձեն մինչև վերջ հասցնել իրենց գործը, նրանք երբեք համաձայնության չեն գա:

Ինչպես ցույց է տրված առաջին սխեմայում, անցումը փաստերից և սկզբունքներից տնտեսական քաղաքականության, ենթադրում է անցում *պոզիտիվ տնտեսագիտությունից նորմատիվ տնտեսագիտության:*

*Պոզիտիվ տնտեսագիտությունը* գործ ունի փաստերի հետ և ազատ է սուբյեկտիվ գնահատումների դատողություններից: Պոզիտիվ տնտեսագիտությունը փորձում է ձևակերպել գիտական պատկերացումները տնտեսական պահվածքի վերաբերյալ:

*Նորմատիվ տնտեսագիտությունն* ընդհակառակը, գնահատումային դատողություններ են այն մասին, թե ինչպիսին պետք է լինի տնտեսությունը, ելակետ ունենալով այս կամ այն տնտեսագիտական տեսությունը:

Այլ կերպ ասած, պոզիտիվ տնտեսագիտությունն ուսումնասիրում, նկարագրում է այն, ինչ կա, մինչդեռ նորմատիվ տնտեսագիտությունը արտահայտում է սուբյեկտիվ պատկերացումներն այն մասին, թե ինչ պետք է լինի: Պոզիտիվ տնտեսագիտությունը հետազոտում է տնտեսության փաստացի վիճակը, նորմատիվ տնտեսագիտության խնդիրն է որոշել, թե տնտեսության համար ինչպիսի կոնկրետ պայմաններն ու տեսանկյուններն են ցանկալի կամ ոչ ցանկալի: Օրինակ՝ «պետական բյուջեն ունի դեֆիցիտային բնույթ», «այլ հավասար պայմաններում, երբ բժշկական ծառայության համար վարձը բարձրանում է, հաճախորդների թիվը կրճատվում է» արտահայտություններն ունեն պոզիտիվ բնույթ: Որպես նորմատիվ արտահայտություններ դրանք կհնչեն հետևյալ ձևով. «պետական բյուջեի դեֆիցիտը պետք է կրճատել», «բժշկական ծառայության համար վարձերը պետք է փոքրացնել, որպեսզի շատ մարդիկ կարողանան օգտվել դրանից»:

Գոյություն ունի մի հայտնի արտահայտություն, ըստ որի, եթե չորս տնտեսագետներ վիճում են որևէ հարցի շուրջ, ապա կհայտնվի առնվազն հինգ կարծիք: Եվ տնտեսագետների տարակարծությունների մեծ մասը կապված է նորմատիվային կարգի մոտեցումների քաղաքականության հետ: Տարբեր տնտեսագիտական դպրոցներ առաջադրում և պաշտպանում են տնտեսագիտության տարբեր մոդելներ, տեսություններ: Սակայն տարակարծություններն ու դատողությունները գերազանցապես վերաբերում են այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի հասարակությունը: Օրինակ, ավելի շատ համաձայնություն գոյություն ունի այն հարցում, թե փաստացի ինչպես է բաշխվում եկամուտը, քան այն հարցում, թե ինչպես պետք է այն բաշխել: Նորմատիվ պնդումներն ավելի շատ ծագում են տնտեսական քաղաքականության հիմնավորման մակարդակում: Պատահական չի ասվում, որ երբ տնտեսագետը սկսում է կատարել նորմատիվ պնդումներ, ապա նա ավելի շուտ հանդես է գալիս ոչ թե որպես տնտեսագետ, այլ որպես քաղաքագետ:

**1.3.** Երևույթների տնտեսական ճանաչողությունը կապված է բազմաթիվ խոչընդոտների հետ, որը եթե ընդհանրացնելու լինենք, հանգում է այն բանին, որ չի կարելի երևույթներն ընդունել այնպես, ինչպիսին դրանք հաճախ թվում են: Տնտեսության մեջ, այն ինչ ճշմարիտ է թվում առանձին անհատի համար, ոչ միշտ է ճիշտ ընդհանուրի կամ հասարակության համար, և ընդհակառակը, այն ինչը ճշմարիտ է ներկայանում ընդհանուրի կամ հասարակության համար, կարող է սխալ լինել առանձին մարդու համար: Հետևապես, «այն ինչ ճշմարիտ է անհատի կամ խմբի մի մասի համար, անպայմանորեն ճշմարիտ է նաև ամբողջ խմբի համար» ենթադրությունը *տրամաբանական սխալ կառույց է:* Դասարանում աշակերտներից մեկը գրատախտակը լավ տեսնելու համար կարող է կանգնել: Որպես անհատ դա նրա համար ճիշտ է, բայց եթե նույն նպատակի համար բոլորը ոտքի կանգնեն, ապա գրատախտակը կդառնա ավելի վատ տեսանելի ընդհանուրի համար: «X» արդյունք արտադրող ֆիրմաներից մեկը կարող է կրկնապատկել արտադրությունը և ստանալ սովորականից շատ եկամուտ: Սակայն, եթե նույն նպատակի համար նույն «X» արդյունք արտադրող ֆիրմաներն ավելացնեն իրենց արտադրությունները, ապա գները կսկսեն իջնել, որը և կբերի հակառակ հետևանքների:

Տնտեսության մեջ հաճախ դժվար է ճանաչել պատճառահետևանքային կապերը: Ոչ միշտ կարելի է արդարացված համարել այն ընդհանրացումը, ըստ որի «որքանով A երևույթը նախորդում է B երևույթին՝ A - ն հանդիսանում է B - ի պատճառը»: Արագիլները եկել են, բայց դա չի նշանակում, թե գարնան գալը կապված է արագիլների գալու հետ: Երկրագնդի որոշ մասերում երկրաշարժերը կամ ցնցումները տեղի են ունենում այն պահերին, երբ Լուսնի ձգողության ուժն ավելի մեծ է, բայց դա դեռևս չի նշանակում, թե վերջինս դրանց պատճառն է: Այս իմաստով անհրաժեշտ է չչփոթել *կոռելյացիա՝ փոխադարձ կապ և պատճառակա-նություն հասկացությունները*: Կոռելյացիան տեխնիկական հասկացություն է, որը ցույց է տալիս, որ երկու խումբ տվյալների հարաբերակցությունը կրում է համակարգված և փոխկապված բնույթ: Օրինակ, կարելի է հայտնաբերել, որ երբ աճում է x-ը, ապա աճում է նաև y-ը: Բայց դա դեռևս չի նշանակում, թե x-ը y-ի պատճառն է: Կապը կարող է լինել զուտ պատահական, կամ ծնված մի այլ z գործոնի ազդեցությամբ, որը մտած չէ վերլուծության մեջ: Այսպես՝ տնտեսագետները հայտնաբերել են դրական կոռելյացիա կրթության և եկամուտների միջև: Սովորաբար ավելի բարձր կրթությամբ մարդիկ ստանում են ավելի բարձր եկամուտներ, քան պակաս կրթություն ունեցողները: Այստեղից էլ այն հետևությունը, թե բարձր կրթությունը պատճառն է, բարձր եկամուտները՝ հետևանքը: Սակայն կարելի է հարցին մոտենալ նաև այլ ձևով՝ բարձր կրթություն ստանում են նրանք, ովքեր ստանում են բարձր եկամուտներ: Եկամուտներն այս հարաբերակցության մեջ դառնում են պատճառ: Գուցե այդ հարաբերակցությունը բացատրվում է նաև այլ գործոնների ազդեցությամբ: Արդյո՞ք կրթական և եկամուտների մակարդակների միջև դրական կոռելյացիան պայմանավորված չէ կրթության մեջ հաջողության հասնելու այլ հատկություններով՝ ունակություններ, մոտիվացիա, անձնական սովորություններ, որոնք բանվորին անհրաժեշտ են բարձր արտադրողականության հասնելու և բարձր վարձատրություն ստանալու համար: Յետևապես, այսպիսի մոտեցմամբ «բարձր կրթությունը բերում է բարձր եկամուտ» կապը դառնում է կասկածելի և իրականությանը չհամապատասխանող:

Ակներև է, որ տնտեսագետներն օգտվում են բնական և հասարակական գիտություններին բնորոշ մեթոդաբանությունից: Այնուամենայնիվ, նրանք առանձնահատուկ հայացք ունեն երևույթների նկատմամբ:

Նրանք մարդկանց և հաստատությունների գործողություններում փընտրում են *ռացիոնալություն և նպատակամղվածություն*: Այդպիսի նպատակամղվածությունը ենթադրում է, որ մարդիկ՝ անհատապես, թե կուլեկտիվ ձևով, համադրելով ծախքերն ու օգուտները, իրենց որոշումներում կատարում են ընտրություն: Այս իմաստով կարելի է ասել, որ տնտեսագիտական ընկալումը ելնում է «ծախքեր-օգուտներ» հարաբերակցության տեսանկյունից: Քանի որ մարդիկ բազմաթիվ տարբերակներից կատարում են տնտեսական ընտրություն, ուստի ամեն մի այդպիսի ընտրություն ենթադրում է զոհողություն կամ ծախքեր: A ապրանքի գնումը կարող է ամհնար դարձնել B ապրանքի գնումը: Գործազրկության նպաստները բարձրացնելու մասին կառավարության որոշումը կարող է տանել գործազրկության մակարդակի բարձրացման: Կրթության ոլորտին կատարվող ֆինանսական հատկացումների կրճատումը բացասաբար կանդրադառնա սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ուսումնառության վրա: Մարդիկ իրենց ամենօրյա պահվածքում կանգնած են ընտրության առաջ՝ ինչպիսի ապրանքներ գնեն, աշխատեն թե չաշխատեն, ինչպիսի ապրանքներ արտադրեն և իրացնեն, ինչպես բաշխեն իրենց ժամանակը և այլն: Եվ ամեն անգամ մարդիկ համադրում են հնարավոր օգուտները կատարվող ծախքերի հետ: Ավելին, երբ ծախքերի կամ օգուտների չափերը փոփոխվում են, մարդիկ համապատասխանաբար փոխում են իրենց պահվածքը: Տնտեսագետները մշտապես հետևում են ծախքերի և օգուտների դինամիկային՝ տնտեսության մեջ մարդկանց և հաստատությունների ամենօրյա գործունեության բնույթը հասկանալու համար:

**1.4.** Ուսանողները հաճախ կատակում են, թե տնտեսագետները գրաֆիկներ կառուցում են ավելի շուտ ուսանողներին շփոթեցնելու համար: Իրականում գրաֆիկները հնարավորություն են տալիս հստակ պատկերացում կազմել տնտեսական կապերի մասին: Դրանց միջոցով արտահայտվում են տնտեսագիտական տեսություններն ու մոդելները:


Գրաֆիկը երկու փոփոխականների միջև կախվածության պատկերավոր արտահայտությունն է:

Հայտնի ճշմարտություն է. շատ սպառում են նրանք, ովքեր շատ եկամուտ են ստանում: Ստորև բերվող աղյուսակի (աղյուսակ 1.1) տղվյալները ցույց են տալիս եկամտի և սպառման միջև գոյություն ունեցող կախվածությունը, արտահայտելով այն հայտնի թեզը, ըստ որի եկամուտների աճի հետ աճում է նաև սպառումը:

Աղյուսակ 1.1

Շաբաթական եկամուտը (դոլարներով)	Շաբաթական սպառումը (դոլարներով)	Կետերը
0	5	A
10	10	B
20	15	C
30	20	D
40	25	E

Սովորաբար ընդունված է անկախ կամ ազատ փոփոխականը որպես որոշիչ գործոն արտահայտել գրաֆիկի հորիզոնական առանցքի վրա (մեր օրինակում եկամուտը), իսկ կախյալ փոփոխականը (մեր օրինակում՝ սպառումը) ուղղահայաց առանցքի վրա: Համապատասխան մասշտաբ ընտրելուց հետո աղյուսակի արժեքները տեղադրում ենք գրաֆիկի վրա (գրաֆիկ 1.1):



Գրաֆիկ 1.1

Տվյալ դեպքում վերընթաց ուղիղ գիծը ցույց է տալիս եկամտի և սպառման միջև ուղիղ կապի առկայությունը: Դրական կամ ուղիղ կապ ասելով հասկանում ենք, որ երկու փոփոխականները, տվյալ դեպքում եկամուտը և սպառումը, փոփոխվում են միևնույն ուղղությամբ: Սպառման աճը կապված է եկամտի աճի հետ և ընդհակառակը: Երբ տվյալները


րի երկու շարքերի միջև գոյություն ունի դրական կամ ուղիղ կախվածություն, այն գրաֆիկորեն արտահայտվում է վերընթաց գծի տեսքով:

Տվյալների երկու շարքերի միջև կապը կարող է լինել նաև հակադարձ կախվածության ձևով: Աղյուսակ 1.2-ի տվյալները ցույց են տալիս այդպիսի կապ թատրոնի տոմսի գնի և հանդիսատեսների թվի միջև:

Աղյուսակ 1.2

Տոմսի գինը (դոլարներով)	Հանդիսատեսների թիվը (հարյուրներով)	Կետերը
25	0	A
20	4	B
15	8	C
10	12	D
5	16	E
0	20	F

Գրաֆիկորեն այն կունենա հետևյալ տեսքը (տես՝ գրաֆիկ 1.2).



Գրաֆիկ 1.2

Այստեղ երկու փոփոխականների միջև կապը հակադարձ է, որն արտահայտվում է վարընթաց գծի ձևով:

Չնայած խնդրի դժվարությանը, տնտեսագետները ձգտում են որոշել, թե երկու փոփոխականներից որն է պատճառը և որը հետևանքը, այսինքն, թե որ փոփոխականն է անկախ և որը կախյալ: Համապատասխանաբար՝ անկախ փոփոխականը պատճառն է, իսկ կախյալ փոփո-

խականը՝ հետևանքը: Որ փոփոխականը, որ առանցքի վրա տեղադրելու հարցում տնտեսագետներն անկաշկանդ են: Մեր օրինակներում «եկամուտ-սպառում» կապի ժամանակ անկախ փոփոխականը տեղադրել ենք հորիզոնական առանցքի, իսկ «տոմսի գին-համդիսատես» կապի դեպքում՝ ուղղահայաց առանցքի վրա:

Վերևում բերված պարզ գրաֆիկները, որոնք արտահայտում են երկու փոփոխականների կապը, անտեսում են բազմաթիվ այլ գործոնների ազդեցությունը, որն իր հիմքում ունի «այլ հավասար պայմաններում» ենթադրությունը: Իրականում այդ «այլ հավասար պայմանները» հաճախ փոփոխվում են, և բնականաբար գրաֆիկները տեղաշարժվում են ընդունելով նոր դիրքեր:

Սույն դասընթացում դիտարկվող սկզբունքներն ու մոդելները գերազանցապես արտահայտում են կապերը երկու շարքերի միջև: Սակայն այդ կապերը կարող են արտահայտվել ինչպես գծային (ուղիղ գծերի), այնպես էլ ոչ գծային (կորերի) կապերի ձևով, երբ կորի թեքությունը փոփոխվում է կորի մի կետից մյուս կետը տեղափոխվելու ժամանակ:

## **ԳԼՈՒԽ 2. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՔԸ: ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆ**

*2.1. Տնտեսագիտության հիմքը. պահանջմունքներն անսահման են, ռեսուրսները սահմանափակ: Ռեսուրսների կատեգորիաները:*

*2.2. Տնտեսագիտությունը և արդյունավետությունը: Լրիվ զբաղվածություն և արտադրության լրիվ ծավալ:*

*2.3. Հասարակության արտադրական հնարավորությունների սահմանը: Ծախքերի աճի օրենքը:*

*2.4. Չզբաղված ռեսուրսներ. տնտեսական աճը և ապագան: Ներկայիս այլընտրանքները և ապագա հնարավորությունները:*

*2.5. Տնտեսական համակարգերի մոդելները:*

**2.1.** Տնտեսագիտության հիմքը կազմում են երկու հիմնարար փաստեր. ա) հասարակության (այն կազմող անհատների և հաստատությունների) նյութական պահանջմունքներն անսահման են, բ) տնտեսական ռեսուրսները, այսինքն՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար անհրաժեշտ միջոցները սահմանափակ են կամ հազվագյուտ:

*Պահանջմունքը* որևէ ապրանք կամ ծառայություն ձեռք բերելու սպառողների ցանկությունն է: Պահանջմունքների ցանկն ընդգրկում է արդյունքների մի անթիվ բազմություն, որն ըստ կարևորության կարելի է բաժանել առաջին անհրաժեշտության արդյունքների (սնունդ, հագուստ, բնակարան) և պերճանքի առարկաների (օժանելիք, օդանավ, մուշտակ): Այն, ինչ պերճանքի առարկա է մեկի համար, կարող է առաջին անհրաժեշտության առարկա լինել մյուսի համար, իսկ այն, ինչ ժամանակ առաջ համարվում էր պերճանքի առարկա, կարող է դառնալ առաջին անհրաժեշտության ամենասովորական առարկա:

Ծառայությունները (բժշկի, իրավախորհրդատուի, վարսահարդարի) մարդկանց պահանջմունքները բավարարում են այնպես, ինչպես նյութական բարիքները: Վերջին հաշվով, շատ ապրանքներ (հեռուստացույց, փոշեկուլ) մարդիկ գնում են իրենց համար որոշակի ծառայություններ կատարելու նպատակով: Հետևապես, ծառայությունները նույնպիսի ապրանք են, ինչպիսիք նյութական բարիքներն են:

Նյութական պահանջումներն ընդգրկում են ինչպես անհատների, այնպես էլ մասնավոր ձեռնարկությունների ու պետական հաստատությունների պահանջումները: Մասնավոր ձեռնարկություններն իրենց արտադրական նպատակների իրականացման համար կարիք ունեն արտադրական շենքերի, մեքենաների, հունքի, պահեստների և այլն: Նույն ձևով կառավարությունն, արտահայտելով իր երկրի քաղաքացիների կոլեկտիվ պահանջումները կամ սեփական նպատակներից ելնելով, կառուցում է ավտոճանապարհներ, դպրոցներ, հիվանդանոցներ և այլն:

Այստեղից հետևում է, որ ըստ իրենց ֆունկցիոնալ բնույթի պահանջումները կարելի է բաժանել երկու խմբի՝ անձնական, որոնք իրենց հերթին լինում են նյութական (կամ ֆիզիկական), հոգևոր, սոցիալական և արտադրական, որոնք ընդգրկում են արտադրության համար անհրաժեշտ միջոցները:

Ձարգացման մակարդակի տեսակետից տարբերվում են տարրական (ֆիզիկական) և բարձր (սոցիալական) կարգի պահանջումները: Տարրական կամ ֆիզիկական կարգի պահանջումները ենթադրում են անհրաժեշտ պայմանների որոշակի ամբողջություն, որոնց իրացումն անհրաժեշտ է մարդու նորմալ կենսագործունեության համար: Դրանք առաջին մակարդակի պահանջումներ են, որոնք պայմանավորված են մարդկային օրգանիզմի կենսաբանական ֆունկցիաներով: Բարձր մակարդակի պահանջումները կապված են մարդու սոցիալիզացիայի պրոցեսի հետ և արտահայտում են, որպես հասարակության անդամի, նրա կենսագործունեության պայմանները: Դրանց ծավալը և քանակը որոշվում են կուլտուրայի ընդհանուր մակարդակով:

Նյութական պահանջումներն անսահմանափակ են, և դրանք ամբողջությամբ բավարարելն անհնար է: Խոսքը չի վերաբերում կոնկրետ մարդու տվյալ ապրանքի կամ ծառայության նկատմամբ ունեցած պահանջումներին: Մի վիրահատության միջոցով կարելի է սպառել կույր աղիքը հեռացնելու պահանջումները: Բայց այլ են ապրանքներն ընդհանրապես, և ամբողջությամբ բավարարել ապրանքների և ծառայությունների մեր պահանջումները հնարավոր չէ: Ժամանակի ընթացքում նյութական պահանջումները բազմապատկվում են: Պահանջումները ճագարների պես արագ բազմացման բարձր գործակից ունեն: Նոր հայտնագործությունները, նոր ապրանքների արտադրությունն անընդհատ ընդլայնում է մեր պահանջումների շրջանակները:

Ամեն մի նոր պահանջումը, իր հետ բերում է մի այլ նոր պահանջում: Ձանգվածային տեղեկատվական միջոցները շատ արագ տվյալ պահանջումները դարձնում են ընդհանուրի սեփականությունը, անկախ նրանից, թե մարդիկ ինչ սոցիալական շերտի են պատկանում կամ որ երկրում են ապրում: Ի վերջո, պահանջումներն աճում են քանակապես՝ կապված երկրագնդի բնակչության աճի հետ: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր տվյալ պահի հասարակությունը կազմող անհատների և հաստատությունների մոտ միշտ առկա են չբավարարված նյութական պահանջումներ: Տնտեսական գործունեության վերջնական նպատակը՝ ձգտումն է բավարարել այդ բազմազան նյութական պահանջումները: Այսպիսով մի բան ակներև է՝ տնտեսական առումով մարդը նյութական բարիքների և ծառայությունների նկատմամբ անսահմանափակ պահանջումներ ունի: Ամբողջ խնդիրն այն է, որ այդ պահանջումներն անհրաժեշտ է բավարարել, որն օբյեկտիվ անխուսափելիությամբ ընդհարվում է ռեսուրսների սահմանափակության, հետևապես նաև պահանջումների բավարարման սահմանափակ հնարավորությունների հետ:

Մարդու ամբողջ տնտեսական գործունեությունը միշտ և ամենուր ուղղված է եղել ռեսուրսների սահմանափակության հաղթահարմանը: Ոչ պատահականորեն տնտեսագիտության երկրորդ հիմնարար փաստը կապված է տնտեսական ռեսուրսների հետ:

*Տնտեսական ռեսուրսներ* ասելով հասկանում ենք բնական, մարդկային և մարդու կողմից արտադրված այն ամենը, ինչն օգտագործվում է ապրանքներ և ծառայություններ արտադրելու համար: Բոլոր տնտեսական ռեսուրսները կարելի է դասակարգել և ամենաընդհանուր ձևով բաժանել երկու կատեգորիաների.

1. *Նյութական ռեսուրսներ*, որոնց մեջ մտնում են հողը կամ հունքային նյութերը և կապիտալը (մեքենաները, սարքավորումները, շենքերը),

2. *մարդկային ռեսուրսներ* աշխատանքը և ձեռնարկատիրական ունակությունը:

Տնտեսական ռեսուրսները կազմում են հասարակության պոտենցիալ արտադրական հզորությունները, սակայն գործնականում արտադրության մեջ օգտագործվում է դրանց միայն մի մասը, որն անվանում են «արտադրության գործոններ»:

### **Ռեսուրսների կատեգորիաները.**

*Յոդ* հասկացության տակ տնտեսագետները նկատի ունեն բոլոր այն բնական ռեսուրսները, բնության բարիքները, որոնք կիրառելի են արտադրության պրոցեսում, ինչպիսիք են՝ վարելահողերը, անտառները, հանքային հանածոները, ջրային ռեսուրսները և այլն: Այն առաջին հերթին տարածական - աշխարհագրական գործոն է, որը բաժանված է պետությունների՝ մեծ և փոքր: Սակայն բոլոր երկրների տարածությունները սահմանափակ են, թեև այդ սահմանափակությունը մեծի և փոքրի համար տարբեր է: Գոյություն ունի սահմանափակ է նաև որակապես: Մի երկրում վարելահողերը շատ են, մյուսում՝ քիչ, մեկում ընդերքը հարուստ է, մյուսում՝ ոչ: Հնարավոր չէ հող արտադրել կամ կուտակել: Այն բնական գործոն է:

*Կապիտալ* կամ «*ինվեստիցիոն ռեսուրսներ*» հասկացությունն ընդգրկում է արտադրության բոլոր միջոցները, այսինքն՝ գործիքների, մեքենաների, սարքավորումների բոլոր տեսակները, ֆաբրիկագործարանային, պահեստային և տրանսպորտային միջոցները և իրացման ցանցը, որոնք օգտագործվում են ապրանքների ու ծառայությունների արտադրության և դրանք վերջնական սպառողին հասցնելու համար: Արտադրության միջոցների արտադրությունն ու կուտակումը կոչվում է *ինվեստավորում*: Ինվեստիցիոն ապրանքները տարբերվում են սպառողական ապրանքներից նրանով, որ վերջիններս պահանջմունքները բավարարում են ոչ թե անմիջական, այլ անուղղակիորեն՝ ապահովելով անձնական սպառման ապրանքների արտադրությունը: Մյուս կողմից, կապիտալի բերված սահմանման մեջ նկատի է առնվում իրական կապիտալը՝ գործիքները, մեքենաները և այլն: Իսկ փողն ինքնին ոչինչ չի արտադրում, ուստի ի տարբերություն առաջինի, այն չի դիտվում որպես տնտեսական ռեսուրս, թեև գրականության մեջ հաճախ օգտագործվող «դրամական կապիտալ» հասկացությունը ենթադրում է այն փողը, որը կարող է օգտագործվել արտադրության միջոցներ գնելու նպատակով:

«Կապիտալ» հասկացությունը տարբեր ժամանակներում ունեցել է տարբեր իմաստներ: Օրինակ, միջին դարերում կապիտալը փողի այն գումարն էր, որը տրվում էր որպես վարկ: Առավել ընդգրկում է Ադամ Սմիթի բնորոշումը, ըստ որի մարդու կապիտալը նրա կարողության (ունեցվածքի) այն մասն է, որից նա նպատակ ունի եկամուտ քաղել:

*Աշխատանքը* լայն հասկացություն է, որն օգտագործվում է մարդկանց բոլոր այն ֆիզիկական ու մտավոր ունակությունները բնութագրելու համար, որոնք կիրառվում են ապրանքների և ծառայությունների արտադրության պրոցեսում: Ժամանակակից ֆիզիկոսը տիրապետում է գիտելիքների ավելի մեծ ծավալի քան սրանից երկու հարյուր տարի առաջ: Մարդիկ յուրացնում են տիեզերքը, բայց չեն կարողանում կանխագուշակել, թե երբ է երկրաշարժ լինելու կամ գտնել սպիդի հակահարուցիչը: Մեր գիտելիքները յուրաքանչյուր տվյալ ժամանակ ընդհարվում են որոշակի սահմանների հետ: Գիտելիքները ընդլայնվում են, բայց այդ սահմանները չեն վերանում: Դրանում արտահայտվում է ռեսուրսների սահմանափակության էությունը:

*Ձեռնարկատիրական ունակությունը* հատուկ մարդկային ռեսուրս է, որը դրսևորվում է ձեռնարկատիրոջ հետևյալ հիմնական ֆունկցիաներում.


- ձեռներեցն իր վրա է վերցնում հողի, կապիտալի և աշխատանքի միավորման, ղեկավարման ու կազմակերպչի նախաձեռնությունն այնպիսի գործունեության համար, որը խոստանում է շահութաբեր լինել,
- ձեռներեցը բիզնեսի վարման ընթացքում իրականացնում է որոշումների ընդունում՝ դրանց համար կրելով պատասխանատվություն,
- ձեռներեցը նորարար է, որը ձգտում է արտադրել նոր արդյունքներ, կիրառել նոր տեխնոլոգիաներ և բիզնեսի կազմակերպման նոր ձևեր,
- նա դիմում է ռիսկի: Նրա վարձատրությունը կարող է լինել շահույթը կամ վնասը, ինչպես նաև սնանկացումը: Նա վտանգի է ենթարկում ոչ միայն իր ժամանակը, աշխատանքը և գործարար հեղինակությունը, այլ նաև իր, ինչպես նաև բաժնետերերի ու գործընկերների կողմից ներդրված միջոցները:

Արտադրության յուրաքանչյուր գործոն իր սեփականատիրոջը (տնային տնտեսություններին) բերում է եկամուտ:

- Հողի օգտագործման դիմաց վճարվող գինը կոչվում է *վարձակալական վճար*: Վերջինս կամ, ինչպես անվանում են ռենտան, հողատիրոջ եկամուտն է,
- կապիտալը եկամուտ է բերում *տոկոսի* ձևով,
- աշխատուժի տերն իր աշխատանքի դիմաց ստանում է *աշխատավարձ*,

- ձեռներեցի նորաստեղծական գաղափարների, ջանքերի և ռիսկի դիմաց ստացած եկամուտները, որոնք մնում են հողատիրոջ, աշխատուժի և կապիտալի տիրոջ հասանելիքը վճարելուց հետո, կոչվում են *շահույթ*:

Եկամուտների տեսակներն ըստ արտադրության գործոնների պատկերավոր ձևով կարելի է արտահայտել հետևյալ սխեմայի օգնությամբ.



Միևնույն անձը միաժամանակ կարող է ստանալ եկամուտների մի քանի տեսակներ, որոնք դժվար է սահմանազատել:

**2.2.** Ինչպես արդեն նկատել ենք, տնտեսական ռեսուրսները սահմանափակ են կամ հազվագյուտ, իսկ հասարակության պահանջմունքները՝ անսահման: Հետևապես տնտեսագիտության հիմնական հարցն է՝ որոշել արտադրության գործոնների բաշխման արդյունավետ ուղիները և լուծել հասարակության անսահման պահանջմունքների և սահմանափակ ռեսուրսների հետևանքով ստեղծված հակասությունը: Դա ստիպում է մտածել ռեսուրսների խնայողության և արդյունավետ օգտագործման մասին, փնտրել «մեր ունեցածի լավագույն օգտագործման» ուղիները: Կարող ենք ասել, որ տնտեսագիտությունը գիտություն է արդյունավետության, հազվագյուտ ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին: «Արդյունավետություն» հասկացությունը մոտ է տեխնիկայում կիրառվող նույն հասկացությանը, որը հաճախ չափվում է օգտակար գործողության գործակցի օգնությամբ: Օրինակ, բեռնատար մեքենայի վազքի օգտակար գործողության գործակցը բնութագրում է նրա ընդհանուր վազքի մեջ արտադրողական (բեռնավորված) վազքի տեսակարար կշիռը, որը թույլ է տալիս պարզելու արտադրողական և դատարկ վազքի հարաբերակցությունը: Որքան բարձր է արտադրողա-

կան վազքի տեսակարար կշիռը, այնքան բարձր է նաև մեքենայի օգտագործման արդյունավետությունը: Նույն սկզբունքով տնտեսագիտությունը պարզում է «ծախքեր-թողարկում» կապը, որը բնութագրում է արտադրության պրոցեսում օգտագործվող սահմանափակ ռեսուրսների և ստացվող արդյունքների քանակի հարաբերակցությունը: Ծախքերի միավոր ծավալից ստացվող ավելի մեծ արդյունքը նշանակում է արդյունավետության բարձրացում և, ընդհակառակը:

Սահմանափակ ռեսուրսներից ապրանքների և ծառայությունների առավելագույն քանակի արտադրությանը հասարակությունը կարող է հասնել՝ ապահովելով ռեսուրսների լրիվ զբաղվածություն և արտադրության լրիվ ծավալ:

*Լրիվ զբաղվածություն* ասելով հասկանում ենք արտադրության համար պիտանի բոլոր ռեսուրսների օգտագործում: Տնտեսությունն աշխատանքով պետք է ապահովի բոլոր նրանց, ովքեր ցանկանում են և ընդունակ են աշխատել, պետք է մշակվեն բոլոր վարելահողերն ու օգտագործվեն կապիտալ սարքավորումները: Ամեն մի երկիր ինքն է որոշում, թե ինչպես օգտագործի իր ռեսուրսները: Օրինակ, վարելահողերի մի մասը, բերրիության բարձրացման նպատակով, պարբերաբար թողնվում է անմշակ, սահմանվում է աշխատանքային կամ թռչակային տարիք, կանանց համար նախածննդյան և հետծննդյան արձակուրդներ և այլն:

*Արտադրության լրիվ ծավալը* նշանակում է ռեսուրսների այնպիսի արդյունավետ բաշխում և օգտագործում, որ դրանք առավել արժեքավոր ներդրում ունենան արտադրանքի ընդհանուր ծավալում: Աշխատուժը պետք է օգտագործվի ըստ նշանակության, վարելահողերը մշակվեն այնպես, որ դրանցից ստացվի բերքի առավելագույն քանակություն և ցանվի այն կուլտուրան, որը տվյալ բնակլիմայական պայմաններում ամենահարմարն է: Արտադրության լրիվ ծավալը ենթադրում է նաև առկա տեխնոլոգիաներից լավագույնի կիրառում:

**2.3.** Սահմանափակ ռեսուրսների ամբողջությունը, որի միջոցով իրականացվում է տարբեր ապրանքների արտադրությունը, պարտադրում է կատարել ընտրություն՝ թե ինչ և ինչպես արտադրել: Տնտեսությունը պետք է որոշի, թե այդ ռեսուրսները ինչպես պետք է բաշխվեն հազարավոր բազմազան ապրանքների արտադրությունների միջև, որքան հողատարածություններ պետք է հատկացվեն հացահատիկ ցա-



նելու և որքան՝ արտավայրերի համար, քանի գործարան պետք է կանացի գլխարկներ արտադրի, քանիսը՝ հեռուստացույց և այլն: Սրանք բարդ հարցեր են, իսկ առավելապես բարդ են դրանց լուծումները: Ուստի հարցի պարզեցման համար կատարում են հետևյալ ենթադրությունները.

ա) տնտեսությունը գործում է լրիվ զբաղվածության պայմաններում և հասնում արտադրության լրիվ ծավալի, այսինքն՝ ապահովվում է արդյունավետության առավելագույն մակարդակ,

բ) ռեսուրսները հաստատուն են, ինչպես քանակապես, այնպես էլ որակապես: Իհարկե, տարբեր նպատակներից ելնելով, որոշակի սահմաններում կարող է փոփոխվել դրանց օգտագործման հարաբերակցությունը, այսինքն՝ դրանք կարելի է վերաբաշխել,

գ) արտադրության տեխնոլոգիան մնում է անփոփոխ:

Երկրորդ և երրորդ ենթադրություններից հետևում է, որ տնտեսությունը դիտվում է շատ կարճ ժամանակահատվածի կտրվածքով: Երկարատև ժամանակի համար տեխնիկական առաջադիմության և առկա ռեսուրսների կազմի փոփոխության հնարավորության բացառումն իրական չէ,

դ) ենթադրվում է, որ արտադրվում են ոչ թե բազմաթիվ քանակության ապրանքներ և ծառայություններ, այլ ընդամենը երկու տնտեսական արդյունքներ՝ հաց և հաստոց: Հացը խորհրդանշում է սպառողական ապրանքները, որոնք բավարարում են մարդկանց անմիջական պահանջմունքները, իսկ հաստոցը՝ արտադրության միջոցները կամ արտադրական նշանակության ապրանքները, որոնք պահանջմունքները բավարարում են անուղղակիորեն՝ ապահովելով սպառողական ապրանքների արտադրությունը:

Տնտեսությունը կանգնում է այլընտրանքներից ընտրություն կատարելու անհրաժեշտության առաջ: Սահմանափակ ռեսուրսների պայմաններում մի ապրանքի արտադրության ավելացումը նշանակում է երկրորդի արտադրության կրճատում և ռեսուրսների տեղափոխում մի ճյուղից մյուսը: Հասարակությունը միաժամանակ չի կարող ձգտել միայնաց բացառող երկու նպատակների: Հացի արտադրության ավելացման համար անհրաժեշտ ռեսուրսները կարող ենք ստանալ միայն հաստոցների արտադրության կրճատման հաշվին: Հարցի այսպիսի դրվածքն ընդհանրական է մնացած բոլոր ապրանքների համար: Ստորև

բերվող աղյուսակի պայմանական տվյալների միջոցով մեր դատողությունները որոշակիացնենք հացի և հաստոցների արտադրության հնարավոր զուգակցությունների օրինակով ( աղյուսակ 2.1).

Աղյուսակ 2.1


Այլընտրանքային հնարավորություններ	Հաց (հազ. տոննա)	Հաստոց (հազ. հատ)
A	0	20
B	1	18
C	2	14
D	3	8
E	4	0

A տարբերակի դեպքում հասարակությունն իր բոլոր ռեսուրսներն ուղղում է հաստոցների արտադրությանը, իսկ E-ի դեպքում՝ հացի: Երկու տարբերակն էլ ծայրահեղություններ են: Տնտեսությունը միշտ էլ իր ռեսուրսներն այս կամ այն հարաբերակցությամբ բաշխում է հացի և հաստոցի (սպառման առարկաների և արտադրության միջոցների) արտադրության միջև: Շարժումը A-ից դեպի E տարբերակը նշանակում է հացի արտադրության աստիճանական ավելացում, իսկ E-ից դեպի A-ն, ընդհակառակը՝ հաստոցների: Առաջին դեպքում հաստոցը «տրանսֆորմացվում» է հացի, երկրորդ դեպքում՝ հացը հաստոցի: Երկու դեպքում էլ ռեսուրսները մի արտադրությունից տեղափոխվում են մյուս արտադրություն: A-ից E շարժվելիս հասարակությունն ընտրում է «շատ և հիմա» քաղաքականությունը, որի դեպքում մեծացնում է իր ընթացիկ սպառումը, բարձրացնում կենսամակարդակը: Դա, սակայն, ապագայում կարող է կրճատել մրա արտադրական հզորությունները, հետևաբար, թե՛ հացի, թե՛ հաստոցների արտադրության ծավալները, քանի որ փոքրացնում է մաշված արտադրության միջոցների փոխհատուցման հնարավորությունները: E-ից դեպի A շարժվելիս հասարակությունը նախընտրում է «ավելի շատ, բայց հետո» քաղաքականությունը կամ, այսպես կոչված «գոտիներն ամուր ձգելու» քաղաքականությունը, որի դեպքում, կրճատելով ընթացիկ սպառումը, միջոցներ է հատկացնում

հաստոցների արտադրությանը և մտածումն ապագա հզորությունների ավելացման մասին:

Այսպիսով, լրիվ զբաղվածության և արտադրության լրիվ ծավալի տնտեսությունը պետք է զոհաբերի «X» արդյունքի մի մասը, ավելի շատ «Y» արդյունք ստանալու համար: Ռեսուրսների սահմանափակության փաստը թույլ չի տալիս միաժամանակ ավելացնելու և՛ «X»-ի, և՛ «Y»-ի արտադրությունը:

Արտադրության այլընտրանքային հնարավորությունների աղյուսակի տվյալները կարող ենք արտահայտել գրաֆիկորեն, որը կոչվում է «արտադրական հնարավորությունների» կամ «տրանսֆորմացիայի» կոր (գրաֆիկ 2.1):



Գրաֆիկ 2.1

Կորի վրա գտնվող ցանկացած կետ ցույց է տալիս հացի և հաստոցների արտադրության առավելագույն ծավալները, որին կարելի է հասնել 100%-անոց արդյունավետության դեպքում: Հասարակությունը ստիպված է որոշել, թե այդ արդյունքների ինչպիսի զուգակցություն է նախընտրում՝ մեկից շատ միշտ նշանակում է մյուսից քիչ: Նյութական և մարդկային ռեսուրսների սահմանափակությունը անհրաժեշտ է դարձնում հացի և հաստոցի արտադրության ամեն մի զուգակցություն արտադրական հնարավորությունների կորից դուրս որևէ W կետում:

Իսկ թե կորի վրա նշված կետերից որը հասարակությունը կնախընտրի, զուտ որակական կամ նորմատիվային բնույթի հարց է :

Արտադրական հնարավորությունների կորն արտահայտում է հետևյալ կարևոր տնտեսական սկզբունքը. եթե ուզում ենք արտադրել որևէ «X» արդյունքից ավելի շատ, ապա անհրաժեշտ է դրա համար վճարել բարձր գին՝ արտահայտված այլ ապրանքներով, որոնցից մենք հրաժարվում ենք: Այսինքն, յուրաքանչյուր պահանջվող ապրանքի լրացուցիչ միավորը ստանալու համար պետք է հրաժարվենք այլ ապրանքների որոշակի քանակից:

«X» արդյունքի այն քանակը, որն անհրաժեշտ է զոհաբերել «Y» արդյունքի արտադրությունը մեկ միավորով ավելացնելու համար, կոչվում է «Y» արդյունքի արտադրության *լրացուցիչ ծախս*: Աղյուսակ 2.1-ն արտահայտում է ծախսերի աճի այդ միտումը: Հացի արտադրության ավելացումը մեկ միավորով պահանջում է հաստոցների արտադրությունը կրճատել երկու միավորով, սակայն հաջորդ միավորի համար արդեն լրացուցիչ ծախսերը կազմում են 4, ապա 6 և 8 միավոր: Նույն ձևով հաստոցների արտադրության ավելացումը պահանջում է հացի արտադրության աճող կորուստներ:

Այս երևույթը կոչվում է *լրացուցիչ ծախսերի աճի օրենք*, որի տնտեսական իմաստն այն է, որ ռեսուրսները պիտանի չեն ամբողջական օգտագործման համար այլընտրանքային արդյունքների արտադրության մեջ: Եթե առաջին միավորների արտադրության դեպքում հասարակությունը հնարավորություն ունի ընտրել այն ռեսուրսները, որոնք հարմար են նաև երկրորդ արդյունքի արտադրության համար, ապա աստիճանաբար այդ հնարավորությունները սահմանափակվում են, և ավելի ու ավելի քիչ հարմարեցված ռեսուրսներ են տեղափոխվում մի արդյունքի արտադրությունից դեպի մյուսը, որն էլ մեծացնում է յուրաքանչյուր հաջորդ միավորի արտադրության լրացուցիչ ծախսերը: Գրաֆիկորեն լրացուցիչ ծախսերի աճն արտահայտվում է կորի գոգավորության տեսքով, որովհետև, երբ տնտեսությունը շարժվում է A-ից դեպի E տարբերակ, ստիպված է հրաժարվել հաստոցների ավելի մեծ քանակությունից (2, 4, 6, 8 ուղղահայաց առանցքի), որպեսզի ստանա հացի հավասար լրացուցիչ քանակ (1, 1, 1, 1 հորիզոնական առանցքի վրա): Դա էլ հենց արտադրական հնարավորությունների կորը դարձնում է գոգավոր:

Այն երևույթը, որ մի ապրանքի գինը՝ արտահայտված մի այլ ապրանքի մեջ, աճի միտում ունի, մասնակիորեն կապված է առավել հայտնի մի այլ տնտեսական հարաբերակցության, այսպես կոչված, նվազող եկամտաբերության օրենքի հետ: Վերջինս հանգում է հետևյալին. այլ անփոփոխ ծախքերի նկատմամբ որոշակի ծախքերի մեծացումը բերում է արդյունքի ընդհանուր քանակի ավելացմանը, բայց լրացուցիչ եկամտի նվազմանը: Վերջինս այն բանի հետևանքն է, որ փոփոխվող ռեսուրսների նոր «բաժինները» միավորվում են ֆիքսված ռեսուրսների ավելի պակաս քանակի հետ: Օրինակ, հողի միևնույն ֆիքսված չափերի պայմաններում աշխատանքի ավելացումները մի որոշ սահմանից տանում են արտադրված լրացուցիչ արդյունքի քանակի նվազմանը կամ աշխատանքի պակաս արտադրողականությանը:

Այսպիսով, արտադրական հնարավորությունների կորն արտահայտում է հետևյալ հիմնական գաղափարները.

- ռեսուրսների սահմանափակությունը ենթադրում է, որ արդյունքների արտադրության բոլոր զուգակցումներն արտադրական հնարավորությունների կորից դուրս որևէ կետում անհրաժեշտ է,

- արդյունքների բոլոր հնարավոր զուգակցումների ընտրությունն իր արտահայտությունը գտնում է կորի վրա,


- կորի վարընթաց թեքությունը ենթադրում է լրացուցիչ ծախքերի հասկացությունը,

- կորի զոգավորությունը ցույց է տալիս լրացուցիչ ծախքերի աճը:

**2.4.** Ի՞նչ տեղի կունենա արտադրական հնարավորությունների կորի հետ, եթե նրա հիմքում դրված առաջին երեք ենթադրությունները չգործեն: Ըստ առաջին ենթադրության տնտեսությունը բնութագրվում էր ռեսուրսների լրիվ զբաղվածությամբ և արտադրության լրիվ ծավալով: Մինչդեռ հասարակության մեջ կարող են առկա լինել չօգտագործվող կամ անարդյունավետ օգտագործվող ռեսուրսներ: Դա նշանակում է, որ տնտեսությունը գործում է ոչ լրիվ՝ կորի վրա նշված A,B,C,D,E այլընտրանքներից պակաս հզորությամբ: Այս դեպքում արտադրական հնարավորությունների կորի ներսի ցանկացած կետ, օրինակ U-ն, ցույց կտա չօգտագործվող կամ անարդյունավետ օգտագործվող ռեսուրսների առկայությունը (տես՝ գրաֆիկ 2.2):

Լրիվ զբաղվածության և արտադրության լրիվ ծավալի հասնելու համար, ինչպես ցույց են տալիս սլաքները, հասարակությունը կարող է

ավելացնել արդյունքներից որևէ մեկի արտադրությունը կամ երկու արդյունքների արտադրությունը միաժամանակ:




Գրաֆիկ 2.2

Այժմ հրաժարվենք այն ենթադրությունից, որ ռեսուրսների քանակը և որակն անփոփոխ է: Օրինակ, բնակչության թվի ավելացումը հանգեցնում է աշխատուժի և ձեռնարկատիրական ունակության քանակական աճի: Հանքային ռեսուրսները սպառվում են, սակայն միաժամանակ հայտնաբերվում են նորերը, կատարելագործվում են դրանց հանույթի եղանակները, հողերի մշակման կատարելագործման, ճահիճների չորացման, ռոռզման հաշվին մեծանում են հողային ռեսուրսները և այլն: Ռեսուրսների լրիվ զբաղվածության և արտադրության լրիվ ծավալի պայմաններում ռեսուրսների առաջարկի աճը և կատարելագործումը հանգեցնում է տնտեսական աճի, բոլոր արդյունքների պոտենցիալ ծավալի մեծացման: Այս դեպքում արտադրական հնարավորությունների կորը տեղաշարժվում է դեպի աջ (տես՝ գրաֆիկ 2.3):

Միաժամանակ անհրաժեշտ է նկատել, որ արտադրական հնարավորությունների կորի այդ տեղաշարժը, դեռևս չի երաշխավորում, որ տնտեսությունն իրականում կգործի այդ նոր դիրքին համապատասխան: Հնարավոր է նաև, որ տնտեսությունը չկարողանա իրացնել իր նոր հնարավորությունները: Արտադրական հնարավորությունների կորը կարող է տեղաշարժվել, բայց արտադրությունը կարող է նաև չիրականանալ այդ նոր կորի վրա տվյալ կետի ծավալով:

Արտադրական հնարավորությունների կորը կտեղաշարժվի դեպի աջ նաև այն դեպքում, եթե հրաժարվենք երրորդ ենթադրությունից, ըստ որի տեխնիկան և տեխնոլոգիան մնում են անփոփոխ:



Գրաֆիկ 2.3

Հատկապես երկարատև ժամանակահատվածում տեխնիկական առաջընթացն անխուսափելի է: Արդյունքում տեղի է ունենում ապրանքների արտադրության եղանակների կատարելագործում, նոր և բարձր որակի ապրանքների թողարկում, ռեսուրսների միևնույն քանակից ավելի շատ արդյունքների ստացում:

Այսպիսով, ռեսուրսների առաջարկի աճը և տեխնիկական առաջընթացը, որոնք բնութագրում են աճող տնտեսությունը, արտադրական հնարավորությունների կորը տեղաշարժում են դեպի դուրս և աջ: Տնտեսական աճի արդյունքն այն է, որ տնտեսությունը լրիվ զբաղվածության պայմաններում կարող է ապահովել և՛ «X», և՛ «Y» արդյունքների արտադրության մեծ ծավալներ: Եթե ստատիկ կամ չաճող տնտեսությունը «Y» արդյունքից շատ արտադրելու համար ստիպված է հրաժարվել «X»-ի մի մասից, ապա դինամիկ տնտեսությունն ընդունակ է շատ արտադրել և՛ «X»-ից, և՛ «Y»-ից: Տնտեսական աճը դեռևս չի նշանակում արդյունքների արտադրության ազգային հզորությունների համամասնական ավելացում. «X» արդյունքն «Y»-ի համեմատությամբ կարող է ավելանալ պակաս չափով: Եթե զարգացած երկրների համար տնտեսական աճը՝ արտադրական հնարավորությունների կորի տեղաշարժը


դեպի աջ, շատ թե քիչ կայուն երևույթ է, ապա կապված տարբեր պատճառների՝ տեխնիկայի կիրառման, վարելահողերի և արոտավայրերի չափից ավելի ինտենսիվ շահագործման կամ, ինչպես օրինակ, ԽՍՀՄ փլուզման արդյունքում նախկին հանրապետությունների միջև տնտեսական կապերի խզման հետևանքով, թույլ տնտեսություն ունեցող երկրներում այդ կորը կարող է տեղաշարժվել դեպի ձախ: Կորի դեպի ձախ տեղաշարժը կարող է առաջանալ նաև պատերազմների և բնական աղետների հետևանքով: Ընդ որում, կորի դեպի ձախ տեղաշարժն ավելի վատ է, քան կետի դեպի ձախ տեղաշարժը, քանի որ առաջին դեպքում հասարակությունը կորցնում է իր արտադրական հզորությունները, իսկ երկրորդ դեպքում՝ դրանք պահպանվում են, պարզապես արդյունավետ չեն օգտագործվում:

Շարադրանքից հետևում է, որ արտադրական հնարավորությունների կորի վրա այժմյան կետի ընտրությունը, ծառայում է որպես հիմնական դետերմինանտ այդ կորի ապագա դիրքի համար: Դա կարելի է արտահայտել գրաֆիկորեն: Գրաֆիկի ուղղահայաց առանցքի վրա՝ նշանակենք «ապրանքներ ապագայի համար», իսկ հորիզոնական առանցքի վրա՝ «ապրանքներ ներկայի համար»: «Ապրանքներ ապագայի համար» հասկացության տակ նկատի են առնվում արտադրության միջոցները, գիտական հետազոտությունները և կրթությունը, պրոֆիլակտիկ բժշկությունը: Որպես տնտեսական աճի բաղկացուցիչ տարրեր, ապագայի համար ապրանքները պետք է ավելացնեն նյութական ռեսուրսների քանակը և որակը, ընդլայնեն տեխնոլոգիական տեղեկատվության ծավալը և բարձրացնեն մարդկային ռեսուրսների որակը: «Ապրանքներ ներկայի համար» հասկացության տակ նկատի են առնվում զուտ սպառողական նշանակության ապրանքները՝ սնունդ, հագուստ, ավտոմեքենա և այլն:

Այժմ ընդունենք, թե գոյություն ունեն երկու տնտեսություններ՝ A-ն և B-ն, որոնք նույնական են, այն տարբերությամբ, որ A-ն ներկա ժամանակում իր արտադրական հնարավորությունների կորի վրա նախապատվությունը տալիս է «ներկա ապրանքներին», իսկ B-ն՝ «ապագա ապրանքներին» (տես գրաֆիկ 2.4):

Կարելի է ենթադրել, որ 2020 թվականին A տնտեսության համեմատությամբ B տնտեսության արտադրական հնարավորությունների կորը կտեղաշարժվի դեպի աջ ավելի մեծ չափով, քանի որ այսօր այն

ընտրել է արտադրության այնպիսի կառուցվածք, որը բարենպաստ է տեխնոլոգիական առաջընթացի, նյութական և մարդկային ռեսուրսների ավելացման համար: Այսինքն B-ն գերադասում է ավելի շատ ինվեստավորել այսօր, որն իրեն կփոխհատուցի արագ տնտեսական աճով ապագայում:



Ապրանքներ ներկայի համար  
 ա) A տնտեսություն  
 Ապրանքներ ներկայի համար  
 բ) B տնտեսություն Գրաֆիկ 2.4

**2.5.** Ամբողջ տնտեսական էվոլյուցիայի ընթացքում՝ լինի դա Ռոբինզոն Կրուզոյի տնտեսությունը, թե ժամանակակից ինդուստրիալ հասարակությունը, մարդիկ ուղիներ են փնտրել լուծելու երեք փոխկապակցված խնդիրներ.

- ա) ինչ արտադրել, այսինքն, իրար փոխադարձաբար բացառող ապրանքներից և ծառայություններից որոնք արտադրել և ինչ քանակությամբ,
- բ) ինչպես արտադրել, ինչպիսի ռեսուրսների և տեխնոլոգիաների միջոցով,
- գ) ում համար արտադրել, թե ով պիտի տնօրինի այդ ապրանքները և ծառայությունները և դրանցից օգուտ քաղի:

Սակայն տարբեր տնտեսական համակարգեր դրանք լուծում են տարբեր ձևերով՝ կիրառելով տարբեր ինստիտուցիոնալ կառուցվածքներ և մեխանիզմներ: Այս իմաստով առանձնացվում են տնտեսական համակարգերի հետևյալ մոդելները.

ա) *զուտ կապիտալիզմը* բնութագրվում է ռեսուրսների մասնավոր սեփականությամբ և տնտեսական գործունեության կորրեկցման ու կառավարման բնագավառում շուկաների ու գների համակարգի օգտագործմամբ: Այս և այլ հարցերի մասին հանգամանորեն կխոսվի հաջորդ քննաներում,

բ) *վարչահրամայական տնտեսությունը*, ի տարբերություն զուտ կապիտալիզմի, բնութագրվում է բոլոր տնտեսական ռեսուրսների նկատմամբ հասարակական (իրականում պետական) սեփականությամբ, տնտեսության մոնոպոլացմամբ և բյուրոկրատացմամբ, կենտրոնացված պլանավորմամբ՝ որպես տնտեսական մեխանիզմի հիմքի:

- Վարչահրամայական համակարգի առանձնահատկություններն են.
- բոլոր ձեռնարկությունների անմիջական կառավարումը մեկ միասնական կենտրոնից՝ պետության բարձրագույն կենտրոնական մարմինների կողմից, որը տնտեսական սուբյեկտներին զրկում է ինքնուրույնությունից,
  - պետությունն ամբողջությամբ վերահսկում է արդյունքների արտադրությունն ու բաշխումը, որի արդյունքում, ըստ էության, բացառվում են տարբեր տնտեսությունների միջև ազատ շուկայական փոխադարձ կապերը,
  - տնտեսական գործունեությունն իրականացվում է վարչարարական, հրահանգչական մեթոդներով, որը քայքայում է աշխատանքի արդյունքներում նյութական շահագրգռվածությունը,

գ) *խառը համակարգեր*: Իրականում տնտեսական համակարգերը գտնվում են զուտ կապիտալիզմի և հրամայական տնտեսության ծայրահեղությունների միջև: Ջարգացած կապիտալիստական երկրներում ազատ շուկայական համակարգը գործում է պետական միջամտության հետ համատեղ: Կառավարությունն ակտիվ դեր է կատարում տնտեսության մեջ, նպաստելով նրա կայունությանն ու աճին: Իր հերթին, մաքուր ձևով գոյություն չունի նաև վարչահրամայական տնտեսություն, որովհետև ցանկացած երկիր, որը հիմնված է այդ մոդելի վրա, ինչ-որ չափով օգտագործում է շուկայական տնտեսությանը հատուկ տարրեր, պահպանում մասնավոր սեփականության որոշ մնացուկներ:

դ) *ավանդական կամ սովորությունների վրա հիմնված* համակարգերը բնորոշ են թույլ զարգացած երկրներին, որոնք հիմնված են հետա-

մնաց տեխնոլոգիաների, ձեռքի աշխատանքի և բազմակացութեան տնտեսության վրա: Ժառանգականությունը և կաստաները թելադրում են անհատների տնտեսական դիրքը, իսկ կրոնական ու կուլտուրական արժեքներն այստեղ, տնտեսականի համեմատությամբ, ունեն առաջնային նշանակություն: Դրանք հաճախ խոչընդոտում են գիտական և տեխնիկական առաջընթացի տարածմանը: Հասարակությունը ձգտում է պահպանել իր ստատուս-քվոն. այստեղից էլ տնտեսական աճը պայմանավորող որոշումների կայացման դժվարությունները:

Այդ երկրներում առկա է հարստության խիստ բևեռացում: Հարկային համակարգը կազմավորվում է կամայականորեն, որը հասարակության հարուստ շերտերի համար սահմանում է արտոնություններ: Քաղաքական որոշումները կայացվում են ոչ թե ելնելով ազգային տնտեսության շահերից, այլ ուժեղ տերությունների կամքը կատարելու նպատակով:

Տնտեսական խնդիրների լուծման ժամանակ ավանդականությունը կարող է պայմանավորված լինել առկա տնտեսական ռեսուրսների յուրահատկությամբ: Օրինակ, ՀՀ-ում խաղողի որոշակի տեսակների առկայությունը և կոնյակի արտադրության ավանդական տեխնոլոգիաների կիրառումը ենթադրում է ինչպես այդ ավանդների, այնպես էլ սպառող երկրների հետ ավանդական կապերի շարունակություն:

Այսպիսով, գոյություն չունեն, ի՞նչ, ինչպե՞ս և ու՞մ համար արտադրել հիմնահարցերի միանշանակ և համընդհանուր ընդունելի լուծումներ: Տարբեր հասարակարգեր, որոնք ունեն տարբեր կուլտուրական և պատմական անցյալ, ավանդույթներ, գաղափարախոսություն, և ամենակարևորը, նաև տնտեսական ռեսուրսներ, վերջիններիս հարաբերական սահմանափակության հիմնահարցի լուծման համար օգտագործում են տարբեր հաստատություններ:

### **ԳԼՈՒԽ 3. ԶՈՒՏ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՄՈՒՏՆԵՐԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՑԻ ՄՈՂԵԼԸ**

**3.1. Զուտ կապիտալիզմի ինստիտուցիոնալ շրջանակներն ու սկզբունքները.**

- մասնավոր սեփականություն,
- ձեռնարկատիրության և ընտրության ազատություն,
- անձնական շահը՝ որպես վարքագծի գլխավոր շարժառիթ,
- մրցակցություն,
- գների կամ շուկայական համակարգի վրա հիմնվելը,
- պետության սահմանափակ դերը:

**3.2. Ռեսուրսների, արդյունքների և եկամտների շրջապտույտի մոդելը: Մոդելի թերությունները:**

Սույն թեման նպատակ ունի ընդհանուր պատկերացում տալու գուտ կապիտալիզմի կամ ինչպես, հաճախ անվանում են, *laisser faire* համակարգի գործողության մասին: Դրան առավել մոտ համակարգ ձևավորվել է XVIII դարում և գոյատևել մինչ XX դարի առաջին տասնամյակները: Զուտ կապիտալիզմի պարզեցված մոդելի (քանի որ, խիստ սասած, այդպիսի համակարգ գոյություն չի ունեցել և չի էլ ունենալու) շատ տարբեր գործում և պատկերացում են տալիս ժամանակակից տնտեսական համակարգերի գործողության մասին:

**3.1.** Գրականության մեջ բացակայում է կապիտալիզմի վերջնական սահմանումը: Սակայն առանձնացվում են գուտ կապիտալիզմը բնութագրող հետևյալ հաստատություններն ու սկզբունքները.

- մասնավոր սեփականություն,
- ձեռնարկատիրության և ընտրության ազատություն,
- անձնական շահը՝ որպես վարքագծի գլխավոր շարժառիթ,
- մրցակցություն,
- գների կամ շուկայական համակարգի վրա հիմնվելը,
- պետության սահմանափակ դերը:

Ոչ մի հասարակություն կամ արտադրություն հնարավոր չէ առանց սեփականատիրական հարաբերությունների: Գերմանացի տնտեսագետ Կ.Մարքսը, զուգահեռ գծելով լեզվի հասարակական բնույթի և սեփա-

կանության սոցիալական բնույթի միջև, նկատում է, թե ինչպես լեզուն չի կարող մի մարդու արդյունք լինել, ճիշտ այդպես էլ մեկուսացած մարդու սեփականությունը զուրկ է որևէ էությունից, քանի որ դա կենթադրի մի մարդու փաստացի հարաբերությունը տվյալ իրի նկատմամբ, առանց փոխադարձ կապի մյուս մարդկանց հետ: Առանց ուրիշ մարդկանց հետ կապի սեփականության հաստատությունը դրսևորվել չի կարող, հետևաբար հնարավոր չէ սեփականատեր լինել: Հասարակության պատմական էվոլյուցիայի հետ սեփականության հարաբերությունները ընդունել են տարբեր ձևեր, պայմանավորելով ոչ միայն տնտեսական կյանքի երևույթները, այլև հասարակական կառուցվածքը, պետական հաստատությունները, սոցիալական ու կուլտուրական կյանքը: Կապիտալիստական համակարգին բնորոշ է նյութական ռեսուրսների մասնավոր անձանց և մասնավոր հաստատությունների սեփականությունը: Մասնավոր սեփականությունը, ազատության հետ միասին, մասնավոր անձանց կամ ձեռնարկություններին թույլ է տալիս իրենց հայեցողությամբ ձեռք բերել, տնօրինել, վերահսկել, օգտագործել և իրացնել նյութական ռեսուրսները: Մասնավոր սեփականության հաստատությունը տալիս է նաև կտակելու իրավունք, այսինքն, սեփականատիրոջ կողմից այդ սեփականության նկատմամբ ժառանգորդ նշանակելու իրավունք: Նկատենք, որ սեփականության նկատմամբ անհատների իրավաբանական իրավունքները հարաբերական են և սահմանափակ: Հասարակությունը որոշում է, թե սեփականության որ մասը մարդը կարող է կտակել իր ժառանգորդներին և որ մասը պետք է անցնի պետությանը՝ որպես ժառանգության կամ անշարժ գույքի հարկ: Կամ, օրինակ, արգելվում է ռեսուրսների օգտագործումը թմրադեղերի արտադրության նպատակով:

Մասնավոր սեփականության հաստատությունը պայմանավորում է ձեռնարկատիրության և ընտրության ազատությունը: Ձեռնարկատիրության ազատությունը նշանակում է, որ մասնավոր ձեռնարկություններն իրավունք ունեն ձեռք բերել ռեսուրսներ, իրենց սեփական ընտրությամբ կազմակերպել ապրանքների և ծառայությունների արտադրություն և դրանք վաճառել ֆիրմայի կողմից ընտրված շուկաներում: Կառավարության կամ այլ արտադրողների արհեստական արգելքները կամ սահմանափակումները չեն խանգարում ձեռնարկատերերին այս

կամ այն որոշակի ճյուղ մտնելու կամ նրանից դուրս գալու վերաբերյալ որոշում ընդունելիս:

Ընտրության ազատությունը նշանակում է, որ ա) նյութական ռեսուրսների և դրամական կապիտալի տնօրեններն այդ ռեսուրսները կարող են օգտագործել կամ իրացնել իրենց հայեցողությամբ, բ) աշխատողներն իրավունք ունեն զբաղվել ցանկացած աշխատանքով, որին նրանք ընդունակ են, գ) սպառողներն իրենց եկամուտների սահմաններում կարող են գնել իրենց նախընտրած ապրանքներն ու ծառայությունները: Սպառողական ընտրության ազատությունն ամենաընդարձակն է: Սպառողն օժտված է սուվերենությամբ: Վերջին հաշվով, մարդկային և նյութական ռեսուրսների ընտրության ազատության սահմանները պայմանավորված են սպառողական ընտրությամբ: Սպառողն է որոշում, թե ինչ պետք է արտադրի տնտեսությունը:

Անհատականության վրա հիմնված տնտեսության գլխավոր շարժիչ ուժը անձնական շահն է: Վերջինս պայմանավորում է «տնտեսական մարդու» պահվածքը: Այն կարող է բավարարվել ոչ այլ՝ քան փոխադարձ ծառայությունների ձևով: Այդ սկզբունքը շուրջ երկու հարյուր տարի առաջ Ադամ Սմիթը ձևակերպել է այսպես. «Տուր ինձ այն, ինչ ինձ անհրաժեշտ է, և դու կստանաս այն, ինչը քեզ է անհրաժեշտ: Հենց այդ ճանապարհով մենք միմյանցից ստանում ենք ծառայությունների նշանակալից մեծ մասը, որոնց կարիքը մենք ունենք: ...մենք դիմում ենք ոչ թե նրանց մարդասիրությանը, այլ նրանց եսասիրությանը և երբեք չենք խոսում մեր կարիքների, այլ միայն օգուտների մասին»: Այսինքն, յուրաքանչյուր տնտեսական միավոր ձգտում է անել այն, ինչն իրեն շահավետ է: Այդ է պատճառը, որ ձեռնարկատերերը նպատակ են դնում իրենց ֆիրմաների շահույթները հասցնել առավելագույնի, ռեսուրսների սեփականատերերը ձգտում են ռեսուրսներն իրացնել կամ վարձակալության տալ բարձր գներով, ծախսված աշխատանքի դիմաց աշխատուժի մատակարարները ձգտում են ստանալ հնարավորին չափով բարձր եկամուտ, իսկ սպառողները՝ արդյունքները ձեռք բերել ցածր գներով: Անձնական շահը ուղղություն է տալիս և կարգավորում տնտեսության գործունեությունը, առանց որի այն կվերածվեր քաոսի:

Ջուտ կապիտալիզմի մյուս կարևոր հատկանիշը մրցակցությունն է: Դա նշանակում է. ա) ցանկացած որոշակի արդյունքի կամ ռեսուրսի մեծ թվով անկախ գործող վաճառողների և գնորդների առկայություն

շուկայում, բ) վաճառողների և գնորդների համար այս կամ այն շուկայներում հանդես գալու կամ դրանք լքելու ազատություն:

Գնորդների ու արտադրողների կամ վաճառողների մեծ քանակության առկայությունը շուկայում նշանակում է, որ նրանցից որևէ մեկը չի կարող պահանջարկ կամ առաջարկ ներկայացնել արդյունքի այնպիսի քանակի համար, որ կարողանար ազդել դրա գնի վրա: Դա ենթադրում է տնտեսական իշխանության ապակենտրոնացում: Եթե առանձին արտադրողը կամ միասնաբար գործող արտադրողների փոքր խումբն ընդունակ է այս կամ այն ձևով կարգավորել կամ սահմանափակել արդյունքի առաջարկի ընդհանուր ծավալը, ապա գինը կարող է բարձրանալ հոգուտ վաճառողի: Կարգավորելով առաջարկը՝ արտադրողը, ելնելով իր շահերից, կարող է մանևրել շուկայում: Սակայն մրցակցության էությունն այն է, որ շուկայում առկա է վաճառողների այնպիսի մեծ քանակություն, որի դեպքում նրանցից յուրաքանչյուրը, ապահովելով առաջարկի ընդհանուր ծավալի չնչին մասը, գործնականում ընդունակ չէ ազդել առաջարկի վրա, հետևապես՝ նաև արդյունքի գնի վրա: Այսպիսով մրցակցության հիմքը հանդիսացող տնտեսական իշխանության ցրվածությունը սահմանափակում է դրա չարաշահման հնարավորությունները: Եթե արտադրողների նշանակալից մասը միաժամանակ կրճատի արտադրությունը, ապա դրա հետևանքով առաջացած առաջարկի ծավալի փոփոխությունն անտեսել չի կարելի, քանի որ այն կհանգեցնի գնի բարձրացմանը: Մրցակցությունը (վաճառողների մեծ թիվը) ենթադրում է այդպիսի համաձայնության անհնարիությունը: Մրցակցությունը, ինչպես Ադամ Սմիթն է ասում, այն «անտեսանելի ձեռքն է», որը կարգավորում է կապիտալիստական տնտեսությունը:

Ազնիվ և բաց մրցակցությունը շահեկան է թե սպառողների, թե արտադրողների և թե ամբողջ հասարակության համար:

Սպառողներին այդպիսի մրցակցությունն ապահովում է հետևյալ օգուտները.

- միայն շնորհիվ մրցակցության՝ սպառողը կարող է ընտրել՝ թե ինչ, ումից և ինչ գնով գնի,
- ընտրության ազատությունը նշանակում է սպառողի հարաբերական ազատությունը արտադրողների շահադիտական նկրտումներից,
- կապված ազատ ընտրության հետ՝ սպառողը ստիպում է արտադրողին հոգալ ապրանքի որակի բարձրացման և գնի իջեցման մասին:

Արտադրողի համար մրցակցության օգուտները հանգում են հետևյալին.

- ձեռնարկատիրության ձևի ընտրության հնարավորություն և կապիտալի արագ տեղաշարժ տնտեսության ընտրած ոլորտը,
- մրցակիցների համեմատությամբ արտադրության գործոնների արդյունավետ օգտագործման, ապրանքների որակի բարձրացման և գների իջեցման շնորհիվ շահույթի մեծացում,
- քանի որ արտադրողներն իրենք են արտադրության ռեսուրսների գնորդները, ապա մրցակցությունը դրանց պոտենցիալ մատակարարների միջև նրանց հնարավորություն է տալիս իրականացնել առավել խնայողական արտադրություն:

Մրցակցությունը հասարակությանն ապահովում է հետևյալ օգուտները.

- գների իջեցում, մրցակից ֆիրմաների կողմից արտադրվող ապրանքների տեսականու ավելացում, ապրանքների ու ծառայությունների որակի բարձրացում: Արտադրական ծախսերի կրճատման ձգտումն ապահովում է կենսամակարդակի բարձրացում և արտադրության տնտեսական արդյունավետություն,
- սուբստիտուտների ( փոխարինող ապրանքների) բազմազանությունը նպաստում է պահանջարկի և առաջարկի էլաստիկության աճին,
- ռեսուրսների ազատ հոսքը դեպի այն ճյուղերը, որոնց արտադրանքը բարձր պահանջարկ ունի հնարավորություն է տալիս արագորեն հաղթահարել պարբերաբար ծագող դեֆիցիտները:

Գրականության մեջ առանձնացվում են մրցակցային շուկայի հետևյալ հիմնական ձևերը.

- կատարյալ մրցակցային շուկա,
- անկատար մրցակցային շուկա (մոնոպոլիստական),
- օլիգոպոլ մրցակցային շուկա:

Չուտ կապիտալիզմին բնորոշ է կատարյալ մրցակցությունը: Վերջին երկուսի մասին կխոսվի «Պետության տնտեսական դերը» գլխում:

Կատարյալ մրցակցությունը մարմնավորում է, այսպես կոչված, իդեալական մրցակցությունը՝ արտադրողների մեծ մասի և գործնականում բոլոր սպառողների անիրականանալի երազանքը: Այն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.



- շուկայում փոխներգործում են բազմաթիվ արտադրողներ և գնորդներ,

- առք ու վաճառքի օբյեկտներ են միատարր ապրանքները,

- բազմաթիվ վաճառողների և գնորդների առկայությունը նշանակում է, որ նրանցից ոչ մեկը չի կարող թելադրել ապրանքի գինը,

- այստեղից էլ ապրանքի հավասարակշռված գնի ձևավորումը՝ որպես ազատ պահանջարկի և ազատ առաջարկի փոխներգործության արդյունք,

- կատարյալ մրցակցության շուկան վաճառողների և գնորդների համար շուկա մտնելու կամ նրանից հեռանալու խոչընդոտներ չի ստեղծում,

- նրա բոլոր մասնակիցները շուկայական կոնյունկտուրայի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն ունեն, քանի որ ապրանքների որակի միատարրությունը և գների աննշան տատանումները այն հասցնում են նվազագույնի:

Այսպիսով, կատարյալ մրցակցության շուկան իդեալական շուկա է, ու թերևս, այդ պատճառով էլ այն ընկած է բոլոր մակրոտնտեսական մոդելների հիմքում, քանի որ միայն վերոհիշյալ պայմաններում է հնարավոր դառնում պահանջարկի և առաջարկի օրենքների իրացումն ամբողջությամբ: Թեև կատարյալ մրցակցությունը, ինչպես և շուկայական տնտեսությունն ամբողջությամբ զերծ չէ որոշակի թերություններից: Խոսելով այն մասին, որ կատարյալ մրցակցությունն ապահովում է ռեսուրսների արդյունավետ բաշխում և գնորդների պահանջումներների առավելագույն բավարարում, հարկ է նկատել, որ այն.

- էլնում է վճարունակ պահանջարկից, նախկինում ձևավորված դրամական եկամուտների բաշխումից: Այն ստեղծում է հավասար հնարավորություններ, սակայն չի երաշխավորում արդյունքների հավասարություն: Կատարյալ մրցակցությունը հաշվի է առնում միայն այն ծախսերը, որոնք փոխհատուցվում են, այսինքն՝ ենթադրվում է, որ կողմնակի ծախսերն ու կողմնակի օգուտները բացակայում են: Այսպիսի պայմաններում շուկան չի կարող լուծել բացասական կողմնակի էֆեկտների հարցը,

- հաշվի չի առնում հասարակական բարիքների արտադրությունը, որոնք թեև բավարարում են սպառողների պահանջումները, սակայն

չեն կարող բաշխվել կամ վաճառվել առանձին սպառողներին (ազգային պաշտպանություն, հակահրդեհային ծառայություն և այլն),

- ենթադրում է հսկայական թվով ֆիրմաների առկայությունը և ընդունակ չէ ապահովել գիտատեխնիկական առաջընթացի համար անհրաժեշտ ռեսուրսների կենտրոնացումը,

- նպաստում է արտադրանքի ունիֆիկացմանն ու ստանդարտացմանը, դրանով իսկ նվազեցնում արդյունքի դիֆերենցումը և սահմանափակում սպառողների ամենատարբեր պահանջումներների բավարարման հնարավորությունները: Մինչդեռ ժամանակակից սպառողը հաճախ հաշվի է առնում, ոչ միայն ապրանքի օգտակար նշանակության հատկանիշը, այլև ուշադրություն է դարձնում նրա ձևավորման, դիզայնի, անհատի առանձնահատկությունների հարմարվողականության և այլ հատկությունների վրա: Իսկ դա հնարավոր է միայն արդյունքի և ծառայությունների դիֆերենցման պայմաններում:

Նկատենք, որ ժամանակակից տնտեսական կառուցվածքում կատարյալ մրցակցության շուկաները բացակայում են (առանձին վերապահումներով այդպիսին կարելի է համարել միայն արժեթղթերի շուկան):

Կապիտալիստական տնտեսության հիմնական կորրոկցացնող մեխանիզմը շուկայական համակարգն է: Կապիտալիզմը շուկայական տնտեսություն է, որտեղ գնորդների և վաճառողների կողմից ընդունված որոշումներն իրացվում են շուկայական համակարգի միջոցով: Շուկան պարզապես մեխանիզմ է, որի միջոցով իրականացվում է կապը գնորդների, կամ պահանջարկ ներկայացնողների և վաճառողների կամ ապրանքների ու ծառայությունների մատակարարների միջև: Վաճառողների և գնորդների նախասիրությունները հաշվի են առնվում պահանջարկի և առաջարկի միջոցով, իսկ նրանց որոշումների արդյունքները ձևավորում են ապրանքների և ծառայությունների գների մակարդակը: Վերջիններս ծառայում են որպես ուղեցույց, որոնցով ղեկավարվելով ռեսուրսների տերերը, ձեռնարկատերերը և սպառողները կատարում և ճշգրտում են իրենց անձնական շահն ապահովող ազատ ընտրությունը: Շուկայական համակարգի միջոցով հաշվի են առնվում անհատական որոշումները, ի մի բերվում ու փոխհավասարակշռվում: Նրանք, ովքեր հետևում են շուկայական համակարգի թելադրանքին, փոխհատուցվում են, իսկ ովքեր անտեսում են պատժվում: Կապերի այդ համակարգի միջոցով հասարակությունն իր որոշումներն է կայացնում, թե ինչ պետք է

արտադրի, ինչպես արդյունավետ կազմակերպի արտադրությունը և ինչպես բաշխի աշխատանքի արդյունքները տնտեսական միավորների միջև:

Ընդունված է այն տեսակետը, որ մրցակցային տնտեսությունն ապահովում է ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու բաշխումը: Այստեղից էլ այն ենթադրությունը, որ այդպիսի տնտեսության կարգավորման համար կառավարության միջամտության որևէ իրական անհրաժեշտություն չկա, բացառությամբ անհատական ընտրության իրականացման և մասնավոր սեփականության օգտագործման համար անենաընդհանուր իրավաբանական սահմանափակումների սահմանման կառավարության դերի: Ձուտ կապիտալիզմը, որպես ինքնակարգավորվող և ինքնաճշգրտվող տնտեսություն, բացառում է կառավարության որևէ նշանակալից դեր: Բայց ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, արդի պայմաններում կառավարությունն ակտիվ դեր է խաղում տնտեսության մեջ:

Բացի վերը նշված հաստատություններից և սկզբունքներից, որոնք առաջին հերթին ասոցացվում են զուտ կապիտալիզմի հետ, գոյություն ունեն ժամանակակից բոլոր տնտեսական համակարգերին բնորոշ նաև այլ հատկություններ: Առաջին հերթին դա վերաբերում է մասնագիտացմանը, արտադրության միջոցների լայնածավալ օգտագործմանն ու փողի կիրառությանը: Ադամ Սմիթը, ոչ պատահականորեն, իր գլխավոր աշխատությունը սկսում է արտադրության պրոցեսի առանձին մասնակիցների մասնագիտացումից, այսինքն՝ աշխատանքի բաժանումից: Վերջինս ունի ինչպես իր առավելությունները, այնպես էլ՝ թերությունները:

Այն համակարգի համեմատությամբ, որտեղ յուրաքանչյուր աշխատող պատասխանատու է ամբողջ արտադրական ցիկլի համար, օրինակ, հոսքային գիծը, որը հիմնված է աշխատանքի բաժանման վրա, հատկանշվում է հետևյալ առավելություններով.

- աշխատողների համար հնարավորություն է ստեղծվում մասնագիտանալու գործունեության այն ձևերում, որոնցում նրանք կարող են հասնել լավագույն արդյունքների, համեմատական առավելությունների սկզբունքով (որի մասին հանգամանորեն կխոսվի «Միջազգային առևտուր» գլխում) օգտագործելով իրենց բնատուր ընդունակությունները,

- միևնույն գործողության բազմակի կրկնությունն աշխատողին տալիս է համեմատական առավելություն: Այն բարձրացնում է ինչպես աշխատանքի արտադրողականությունը, այնպես էլ արտադրանքի որակը: Բացի այդ, առանձին գործողության կատարումը միշտ ավելի հեշտ է, քան ամբողջ արտադրական պրոցեսի յուրացումը,

- եթե աշխատողներից յուրաքանչյուրն իրականացներ ամբողջ արտադրության պրոցեսը, անխուսափելի կդառնար մեծ թվով սարքավորումների կիրառումը (որպեսզի չսպասեն, որ մի այլ տեղում ազատվի անհրաժեշտ գործիքը կամ հաստոցը): Այսպիսի վերադիր ծախսերն անհամեմատ կկրճատվեն, եթե յուրաքանչյուր աշխատող օգտագործի միայն այն սարքավորումը, որը նրան անհրաժեշտ է մեկ արտադրական գործողություն կատարելու համար,

- կապված արտադրության միջոցների արդյունավետ տեղաբաշխման, կիսաֆաբրիկատները տեղից տեղ տեղափոխելու բացակայության հետ, հոսքային գծերը թույլ են տալիս տնտեսել ժամանակը:

Աշխատանքի բաժանման համեմատական առավելությունների սկզբունքը կիրառելի է տնտեսական գործունեության բոլոր բնագավառների համար: Սակայն աշխատանքի բաժանումն ունի նաև իր թերությունները.

- մասնագիտացումը, կապված արտադրանքի պատրաստման միայն մի կողմի հետ, առաջ է բերում անբավարարվածություն աշխատանքից: Արտադրության ամբողջ պրոցեսի համար պատասխանատվության բացակայությունը կարող է բերել խոտանի ավելացմանը կամ էլ ստանդարտներին չհամապատասխանող արտադրանքի թողարկմանը,

- միօրինակ կրկնվող գործողություններն աշխատողների մի մասին կարող են դարձնել դյուրագրգիռ, իսկ մյուսների համար դառնալ առավելություն, որը թույլ է տալիս աշխատանքի ժամանակ զրուցել,

- աշխատանքի բաժանումը ուժեղացնում է բանվորների փոխկախվածությունը: Եթե բանվորները մի տեղում սկսեն չաշխատել, ապա պարապուրդը արագ կընդգրկի ամբողջ հոսքային գիծը,

- աշխատանքի բաժանումը ենթադրում է որոշակի սահմաններում արտադրանքի ստանդարտացում, իսկ դա նվազեցնում է ֆիրմայի հնարավորությունը՝ բավարարելու առանձին պատվիրատուների անհատական պահանջները:

Ֆիրմաները փորձում են հաղթահարել նշված դժվարությունները: Մի դեպքում ստեղծում են արտադրական խմբեր, որոնք համատեղ աշխատում են արտադրանքի պատրաստման վրա, մի այլ դեպքում՝ պարբերաբար հանձնարարում բանվորներին կատարել տարբեր ֆունկցիաներ:


Ձուտ կապիտալիզմը ենթադրում է նաև առաջադեմ տեխնոլոգիաների և արտադրության միջոցների կիրառում, որը հատուկ է նաև ժամանակակից տնտեսապես զարգացած համակարգերին: Կապիտալիստական համակարգն օժտված է խթանների կիրառման արդյունավետությամբ, որոնք ուղղված են նոր արտադրատեսակների ստեղծմանն ու արտադրության տեխնոլոգիաների կատարելագործմանը, քանի որ այդ նորամուծությունների համար դրամական պարգևատրում ստանում է դրանց անմիջական հեղինակը:

Ժամանակակից բոլոր տնտեսական համակարգերին բնորոշ հատկություններից է փողի կիրառումը: Վերջինիս ծագման, ֆունկցիաների և դերի մասին կխոսվի հատուկ թեմայում:

**3.2.** Տնտեսագետները զբաղվում են ոչ միայն կյանքի նյութական կողմի չափումներով ու նկարագրությամբ, այլև նպատակ ունեն ցույց տալու, թե ընդհանրապես ինչպես է գործում էկոնոմիկան: Այն իրականում շատ ավելի բարդ է: Չափազանց շատ են արտադրվող ապրանքներն ու ծառայությունները, ֆիրմաները, աշխատողները և սպառողները՝ իրենց բոլոր մանրամասների մեջ տրամաբանական վերլուծության ենթարկելու համար: Եվ հաճախ, իրականության նկարագրության համար, այն պարզեցվում է մոդելների ձևով: Այդպիսի մոդելներից է ռեսուրսների, արդյունքների և եկամուտների շրջապտույտի մոդելը, որը պատկերացում է տալիս զուտ կապիտալիզմի տնտեսական համակարգի գործողության մասին: Այդ պարզեցված մոդելը ֆիքսում է ռեսուրսների և արդյունքների շուկաները և ցուցադրում «եկամուտներ-ծախսեր» ու «ռեսուրսներ-արդյունքներ» կարևորագույն հոսքերը, որոնք ձևավորում են տնտեսության «արյունատար» համակարգը:

Սույն մոդելը հիպոթետիկ տնտեսական մեխանիզմ է, որտեղ բոլոր որոշումները՝ ինչ, ինչպես և ում համար արտադրել, ընդունվում են զնորդների և վաճառողների ազատ փոխգործողության հիման վրա: Այն բաժանված է երկու հատվածների՝ տնային տնտեսություններ (այդպես են անվանում տնտեսական ռեսուրսներ տրամադրողներին և իրենց կարիքների բավարարման համար ապրանքներ և ծառայություններ ձեռք

բերող զնորդներին) և ապրանքներ ու ծառայություններ արտադրող ձեռնարկություններ և ֆիրմաներ: Մոդելում առկա են երկու տեսակի շուկաներ՝ արտադրության գործոնների կամ տնտեսական ռեսուրսների շուկա և պատրաստի ապրանքների ու ծառայությունների շուկա: Ինչպես է կատարվում ռեսուրսների, արդյունքների և եկամուտների շրջապտույտը:



Նկար 3.1

Տնային տնտեսությունները, որպես սեփականատերեր, իրենց ռեսուրսները՝ հողը, աշխատանքը, կապիտալը և ձեռնարկատիրական ունակությունները, ռեսուրսների շուկայի միջոցով իրացնում են ձեռնարկություններին, որտեղ պահանջարկի ու առաջարկի հարաբերակցության միջոցով սահմանվում են դրանց գները: Այստեղ ձեռնարկությունները հանդես են գալիս որպես պահանջարկ ներկայացնողներ, իսկ

տնային տնտեսությունները՝ առաջարկի գործակալներ: Ձեռք բերած ռեսուրսներով ձեռնարկություններն արտադրում են ապրանքներ և ծառայություններ՝ պատրաստի արդյունքների շուկայի միջոցով դրանք իրացնելով տնային տնտեսություններին: Արդյունքների շուկայում ձևավորվում են գները: Այստեղ արդեն ձեռնարկություններն առաջարկներ կայացնողներ են, իսկ տնային տնտեսությունները՝ պահանջարկի գործակալներ:

Բնականաբար, ոչ տնտեսական ռեսուրսները, ոչ էլ ապրանքներն ու ծառայություններն անվճար չեն տրվում: Վճարները, որոնք կատարում են ձեռնարկությունները ռեսուրսներ գնելու համար, կոչվում են արտադրության ծախսեր, որոնք ձևավորում են տնային տնտեսությունների եկամուտները՝ ռենտայի, տոկոսի, աշխատավարձի և շահույթի ձևով: Վերջիններս, տնային տնտեսությունները, որպես սպառողական ծախսեր, օգտագործում են ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար: Ստացած հասույթը ձեռնարկություններն ու ֆիրմաները նորից օգտագործում են արտադրությանն անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման համար: Եվ այդպես շարունակ:

Այսպիսով, ռեսուրսների, արդյունքների և եկամուտների շրջապտույտի մոդելը ոչ այլ ինչ է, քան իրար հավասարակշռող, երկու հակառակ ուղղություններով միաժամանակյա անընդհատ կրկնվող, զուտ կապիտալիզմի տնտեսությունը, նրա գործունեությունը բնութագրող «եկամուտներ-ծախսեր» ու «ռեսուրսներ-արդյունքներ» հոսքեր:

Սակայն վերոհիշյալ մոդելն ունի որոշակի թերություններ և բացթողումներ.

ա) այն բացահայտում է զուտ կապիտալիզմի տնտեսական մեխանիզմի հիմնարար սկզբունքները, բայց ոչ ռեսուրսների և արդյունքների, տնային տնտեսությունների և ձեռնարկությունների կամ դրանց ներսում կատարվող բոլոր գործարքների բազմազանությունը;

բ) նրանում անտեսված է կառավարության տնտեսական դերը, քանի որ զուտ կապիտալիզմի հաստատությունները ենթադրում են ինքնակարգավորվող տնտեսության առկայություն, որտեղ պետության դերն աննշան է;

գ) մոդելը բացառում է միջազգային շուկաները, քանի որ այն դիտվում է որպես փակ համակարգ;

դ) շրջապտույտի մոդելում տնային տնտեսությունները լրիվ ծախսում են իրենց եկամուտները, և խնայողությունները բացակայում են: Եկամուտների և ծախսերի հոսքերը դիտվում են որպես հաստատուն մեծություններ: Իրական չափումներում դա նշանակում է, որ արտադրության և զբաղվածության մակարդակները նույնպես հաստատուն են, այսինքն՝ անտեսված են եկամուտների և արդյունքի հոսքերի տատանումների պատճառներն ու հետևանքները;

ե) մոդելն անպատասխան է թողնում այն հարցը, թե իրականում ինչպե՞ս են ձևավորվում շուկայական գները:

#### **ԳԼՈՒԽ 4. ՇՈՒԿԱ : ՊԱՐԱՆՋԱՐԿ ԵՎ ԱՌԱՋԱՐԿ**

- 4.1. Շուկայի բնորոշումը և հիմնական տեսակները:**
- 4.2. Պահանջարկ: Պահանջարկի օրենքը և կորը: Պահանջարկի ոչ գնային դետերմինանտները:**
- 4.3. Առաջարկ: Առաջարկի օրենքը և կորը: Առաջարկի ոչ գնային դետերմինանտները:**
- 4.4. Շուկայական հավասարակշռվածություն: Գների հավասարակշռող ֆունկցիան:**
- 4.5. Էլաստիկությունը և շուկայի ադապտացիայի պրոցեսը:**
- 4.6. Շուկայական համակարգի կողմ և դեմ փաստարկները:**

**4.1.** Գրականության մեջ հաճախ վկայակոչվում են մի անհայտ հեղինակի այն խոսքերը, թե թուֆակին կարելի է դարձնել կրթված տնտեսագետ, և այն ամենը, ինչ նա պետք է իմանա, ընդամենը երկու բառ է՝ «պահանջարկ և առաջարկ»: Տնտեսագիտության մեջ ոչինչ այնքան հաճախ չի օգտագործվում, որքան՝ պահանջարկ և առաջարկ հասկացությունները: Դրանք շուկայական տնտեսության այն երկու լծակներն են, այն երկու ուժերը, որոնք որոշում են արտադրվող ապրանքների զինը և քանակը, ռեսուրսների և եկամուտների վերաբաշխումը, կարգավորում ամբողջ տնտեսական համակարգը: «Պահանջարկ» և «առաջարկ» հասկացություններն օգտագործվում են շուկայում մարդկանց, տնտեսական սուբյեկտների փոխազդեցության ու պահվածքի նկարագրության համար:

*Շուկան* այնպիսի հաստատություն է, մեխանիզմ, շնորհիվ որի ապրանքների և ծառայությունների գնորդները (պահանջարկ ներկայացնողները) և վաճառողները (առաջարկ ներկայացնողները) միմյանց հետ մտնում են կապի մեջ: Շուկայի ձևերը բազմազան են: Դա վերաբերում է բոլոր այն իրավիճակներին, երբ պոտենցիալ գնորդները և պոտենցիալ վաճառողները գտնում են իրար՝ սկսած թերթի կրպակից մինչև դեպի տիեզերք տուրիստական շրջագայության մեկնելու գործարքը:

Շուկան ունի իր որոշակի բնութագրիչները՝ տեղը, չափերը, տարողությունը, ժամանակը և այլն: Տարածական սահմանների և ընդգրկումների առումով տարբերվում են տեղական, ազգային և միջազգային շու-

կաներ: Ըստ շուկայում վաճառվող ապրանքների կամ օբյեկտների տարբերում ենք շուկայի հետևյալ հիմնական տեսակները.

- արտադրության միջոցների կամ ինվեստիցիոն ապրանքների ,
- անձնական սպառման ապրանքների ,
- ծառայությունների ,
- աշխատուժի շուկաներ,
- արժեթղթերի շուկա կամ ֆոնդային բորսա,
- տարադրամի ,
- ինֆորմացիոն ,
- լիցենզիաների և արտոնագրերի (պատենտների) շուկաներ:

Ըստ առևտրի ձևերի շուկան լինում է մեծածախ և մանրածախ: Մեծածախ առևտուրը կատարվում է արտադրողների և առևտրականների միջև մեծ ծավալներով, որի դեպքում արտադրանքը մնում է շրջանառության կամ արտադրության ոլորտում և չի հասնում վերջնական սպառողներին: Մեծածախ առևտրի հիմնական ձևերն են՝ պայմանագրերի կնքումն ըստ ամենամյա տոնավաճառներում ներկայացված ապրանքային նմուշների, պատվերային, բորսային և աճուրդային առևտուրը:

Մանրածախ առևտուրը կատարվում է մի կողմից արտադրողի կամ առևտրականի, իսկ մյուս կողմից՝ անմիջական սպառողների միջև, որի դեպքում արդյունքը դուրս է գալիս շրջանառության ոլորտից և ենթարկվում վերջնական սպառման: Այս առևտուրը կատարվում է պետական և մասնավոր կազմակերպությունների և անհատների կողմից մասնագիտացված խանութներում և հանրախանութներում:

Շուկաների մի մասին բնորոշ է գնորդների և վաճառողների՝ պահանջարկ և առաջարկ ներկայացնողների անձնական կոնտակտը, մյուսներում՝ նրանք կարող են նաև բոլորովին չհանդիպել և իրար չճանաչել:

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է զուտ մրցակցային շուկաների գործունեությունը: Ինչպես արդեն նկատել ենք, մրցակցային շուկան ենթադրում է բազմաթիվ գնորդների և վաճառողների առկայություն, որոնցից յուրաքանչյուրը կարող է աննշան ազդեցություն ունենալ կամ բոլորովին ազդեցություն չունենալ շուկայական գնի կազմավորման վրա:

**4.2.** Շուկայի ուսումնասիրումը սկսում ենք գնորդների պահվածքի ուսումնասիրությունից, թե ինչն է որոշում ցանկացած ապրանքի պահանջարկի ծավալը, որը գնորդները ցանկանում են և կարող են ձեռք բերել:

Պահանջարկը սովորաբար դիտվում է գնի շահավետության տեսանկյունից: Պահանջարկը տվյալ արդյունքի այն քանակությունն է, որը գնորդները կգնեն տարբեր հնարավոր գներով: Պահանջարկի մեծությունը կարելի է արտահայտել աղյուսակի օգնությամբ, որը ցույց է տալիս արդյունքների այն այլընտրանքային քանակությունները, որոնց նկատմամբ պահանջարկ է ներկայացվում տարբեր գների դեպքում: Պահանջարկն անհրաժեշտ է տարբերել պահանջմունքից, որը միայն տվյալ ապրանքն ունենալու ցանկությունն է: Հետևաբար, պահանջարկի է վերածվում միայն գնողունակ պահանջմունքը:

Պահանջարկի մեծության հիմնական հատկությունն այն է, որ այլ հավասար պայմաններում տվյալ ապրանքի գնի իջեցումը մեծացնում է պահանջարկը և հակառակը: Դա նշանակում է, որ գնի և պահանջարկի մեծության միջև գործում է հակադարձ կամ բացասական կապ: Տնտեսագետներն այդ հակադարձ կապն անվանում են պահանջարկի օրենք: Ի՞նչ է ընկած այդ օրենքի հիմքում.

ա) մարդիկ սովորաբար տվյալ արդյունքից ավելի շատ գնում են ցածր գնի դեպքում: Բարձր գինը թուլացնում, իսկ ցածր գինն ուժեղացնում է գնում կատարելու գնորդի ցանկությունը: Այսինքն, գինը գնորդի համար խոչընդոտ է, որը խանգարում է գնում կատարել: Որքան մեծ է այդ խոչընդոտը, այնքան քիչ ապրանք են գնում և հակառակը,

բ) սպառումը ենթակա է նվազող սահմանային օգտակարության սկզբունքի գործողությանը, ըստ որի տվյալ արդյունքի հաջորդական միավորները բերում են ավելի ու ավելի պակաս բավարարվածություն: Հետևաբար, սպառողներն արդյունքի լրացուցիչ քանակություններ կգնեն միայն այն դեպքում, եթե դրանց գինն իջնի,


գ) գործում է եկամտի էֆեկտը: Եկամտի կրճատումը տանում է ծախսերի կրճատման: Միաժամանակ այն ցույց է տալիս, որ գների իջեցումը մեծացնում է սպառողի տվյալ դրամական եկամտի գնողունակությունը: Փողի նախկին գումարով կարելի է գնել տվյալ արդյունքի ավելի մեծ քանակություն, առանց այլընտրանքային ապրանքներից հրաժարվելու: Բացի այդ, մի ապրանքի գնի իջեցման շնորհիվ խնայված գումարով կարելի է ավելացնել մյուս ապրանքների պահանջարկը,

դ) պահանջարկի օրենքն իր հիմքում ունի նաև փոխարինման էֆեկտը: Վերջինս արտահայտվում է նրանում, որ ավելի ցածր գնի դեպքում խթանվում է մարդկանց ավելի էժան ապրանքներ ձեռք բերելու

ցանկությունը՝ նմանատիպ այն ապրանքների փոխարեն, որոնք այդ ժամանակ համեմատաբար թանկ են: Այլ կերպ ասած, սպառողները հակված են թանկ ապրանքները փոխարինել էժան ապրանքներով:

Եկամտի և փոխարինման էֆեկտները գործում են համատեղ և սպառողների մեջ առաջացնում ավելի ցածր գնով արդյունքի ավելի մեծ քանակություն գնելու ցանկություն և ունակություն:


Արդյունքի գնի և պահանջարկի մեծության միջև հակադարձ կապը կարելի է արտահայտել (4.1) գրաֆիկի տեսքով, որտեղ ուղղահայաց (օրդինատ) առանցքը արտահայտում է միավոր արդյունքի փոփոխվող գները («P» price՝ գին), իսկ հորիզոնական (աբսցիս) առանցքը՝ պահանջարկի («D», demand՝ պահանջարկ) փոփոխվող մեծություններն այդ գների պայմաններում.



Իմանալով փողոցը և այն հատող մայրուղին՝ կարելի է որոշել ցանկացած խաչմերուկի տեղադրությունը քաղաքում: Նույն ձևով, իմանալով երկայնությունն ու լայնությունը, որոշվում է նավի գտնվելու վայրը: Գիշտ այդպես էլ, կորի կառուցման համար անհրաժեշտ է իմանալ նրա կորորդինատների թվային արժեքները՝ գինը և քանակը: Այս եղանակով ստացված կորը կոչվում է պահանջարկի կոր՝ (D): Պահանջարկի օրենքը, համաձայն որի մարդիկ գնում են արդյունքի ավելի մեծ քանակություն ցածր գնի դեպքում, իր արտահայտությունն է ստանում վար-

ընթաց շարժվող պահանջարկի կորի տեսքով: Այն ներկայացնում է գնի և պահանջարկի մեծության բոլոր հնարավոր տարբերակները՝ a, b, c, d:

Իրացվող արդյունքի քանակության համար ամենակարևոր դետերմինանտը գինն է: Վերջինիս ամեն մի փոփոխություն, այլ հավասար պայմաններում, ենթադրում է պահանջարկի մեծության փոփոխություն, որը կորի նույն դիրքի պայմաններում դրսևորում է տեղաշարժ նրա երկայնքով՝ a-ից մինչև d և հակառակը: Գնի և պահանջարկի մեծության ֆունկցիոնալ կապը կարելի է արտահայտել բանաձևի միջոցով՝  $D=f(1/p)$ : Սակայն, գոյություն ունեն մի շարք գործոններ կամ, ինչպես կոչվում են, ոչ գնային դետերմինանտներ, որոնց փոփոխության հետ փոխվում է պահանջարկը, ամբողջ կորը տեղաշարժելով կամ այժմ  $D$  դիրքից  $D_1$  դիրքը, կամ ծախ՝  $D$  դիրքից  $D_2$  դիրքը: Նշվածը կունենա հետևյալ գրաֆիկական արտահայտությունը. (Տես՝ գրաֆիկ 4.2):




Պահանջարկի մեծությունը

Գրաֆիկ 4.2

Դա նշանակում է, որ անփոփոխ գնի դեպքում պահանջարկի մեծությունն աճում է km հատվածի չափով, կամ էլ նվազում՝ ek հատվածի չափով: Այս փոփոխությունը կոչվում է «պահանջարկի դինամիկա»:

«Պահանջարկի մեծություն» և «պահանջարկ» հասկացությունների տարբերությունը պատկերավոր ձևով կարելի է ներկայացնել հետևյալ

օրինակով: Պատկերացնենք մի ճոճանակ, որի մի ծայրում տեղադրված է տվյալ ապրանքի գինը, իսկ մյուսում՝ պահանջարկի մեծությունը: Գնի բարձրացման դեպքում ճոճանակի հակադիր ծայրն իջնում է դեպի ներքև, այսինքն՝ պահանջարկի մեծությունը կրճատվում է և հակառակը: Սակայն ճոճանակն ամրացված չէ գետնին, այլ կախված է մի օդապարիկից, որի դերում հանդես է գալիս պահանջարկը: Եթե օդապարիկը բարձրանում է վեր, ապա իր հետ միասին տեղաշարժում է ամբողջ ճոճանակը՝ բարձրացնելով թե՛ պահանջարկի մեծությունը, թե՛ գինը, և հակառակը:



Շուկայական պահանջարկի կարևորագույն ոչ գնային դետերմինանտներն են.

ա) սպառողների ճաշակները և նախասիրությունները՝ կապված նորաձևության, գովազդի, նոր ապրանքների արտադրության հետ,

բ) գնորդների թիվը շուկայում, որի վրա ազդում են ծնելիության, մահացության, կյանքի տևողության մակարդակները, տրանսպորտի զարգացման աստիճանը, զբոսաշրջիկների թիվը և այլն,

գ) գնորդների եկամուտների փոփոխությունը, որը կարող է երկակի ազդեցություն ունենալ ապրանքների պահանջարկի վրա: Եկամուտների աճը, որպես ընդհանուր միտում հանգեցնում է պահանջարկի աճի, իսկ նվազումը՝ պահանջարկի կրճատման: Միաժամանակ եկամուտների աճը կարող է մեծացնել որոշ ապրանքների պահանջարկը՝ կրճատելով մյուսներից: Այն ապրանքները, որոնց պահանջարկը եկամուտների աճի հետ մեծանում է, կոչվում են բարձր կարգի կամ նորմալ ապրանք-

ներ: Ապրանքները, որոնց պահանջարկը կրճատվում է, թեև սպառողների եկամուտները աճում են, կոչվում են ցածր կարգի ապրանքներ: Օրինակ, եկամուտների աճը մեծացնում է պահանջարկը այնպիսի նորմալ ապրանքների նկատմամբ ինչպիսիք են կարագը, խեցգետինը, հատիկավոր խավիարը, անոսկոր միսը, և կրճատում է պահանջարկը ցածր կարգի ապրանքների՝ կաղամբի, կարտոֆիլի, հնացած հագուստի նկատմամբ,

դ) փոխարինող և լրացնող ապրանքների գները: Մի ապրանքի գնի բարձրացումը կարող է հանգեցնել փոխարինող ապրանքների (սուրճ-ստիտուտների) պահանջարկի մեծացմանը: Օրինակ, կարագի գնի բարձրացումը մեծացնում է մարգարինի և ձեթի պահանջարկը, սուրճի գնի բարձրացման դեպքում ավելի շատ թեյ է օգտագործվում և այլն: Մի ապրանքի գնի և նրան փոխարինող ապրանքի պահանջարկի միջև գործում է ուղիղ համեմատական կախվածություն: Եթե ապրանքները միմյանց լրացնում կամ ուղեկցում են, ապա դրանց պահանջարկները նույնպես կարող են փոփոխվել զուգահեռաբար: Օրինակ, բենզինի գնի իջեցումը մեծացնում է նրա պահանջարկը և ավելացնում մեքենայի վաճառքը, որն իր հերթին բերում է շարժիչի յուղի կամ անվադողերի պահանջարկի աճին: Եթե երկու ապրանքներ միմյանց լրացնում են, ապա դրանցից մեկի գնի և մյուսի պահանջարկի միջև գոյություն ունի հակադարձ կապ:


Ապրանքների մեծ մասը միմյանց հետ կապված չեն և մեկի գնի փոփոխությունը չի ազդում մյուսի պահանջարկի մեծության վրա,

ե) սպառողների սպասելիքները. ինչպես օրինակ, ապագա գները, ապրանքների առկայությունը, ապագա եկամուտները: Ապագա սպասելիքները կարող են ազդել ապրանքների և ծառայությունների ընթացիկ պահանջարկի վրա: Եթե ապագայում սպասվում է որևէ ապրանքի գնի իջեցում, ապա սպառողները կսկսեն այդ ապրանքից քիչ գնել,

զ) լրացուցիչ ծախսերը. ապրանքի նույն գնի պայմաններում պահանջարկը կարող է փոփոխվել կապված լրացուցիչ ծախսերի փոփոխության հետ: Օրինակ, պահանջարկը կարող է փոփոխվել՝ կապված ապրանքափաթեթի փոփոխության հետ: Այստեղ գործում է «գնի համախառն մեծության» գործոնը:

**4.3.** Առաջարկը ապրանքների և ծառայությունների այն քանակությունն է, որն արտադրողները (վաճառողները) ցանկանում են և կարող

են արտադրել և առաջարկել վաճառքի որոշակի ժամանակամիջոցում հնարավոր գներից յուրաքանչյուրի դեպքում: Առաջարկի մեծությունը կարող է չհամընկնել արտադրության ծավալի հետ, քանի որ, մի կողմից՝ արտադրանքի մի մասը տարբեր պատճառներով կարող է շուկա չհասնել, իսկ մյուս կողմից՝ առաջարկի մեծությունը կարող է գերազանցել արտադրության ծավալը ներմուծվող ապրանքների հաշվին: Առաջարկի ծավալը որոշող հիմնական դետերմինանտներից մեկը գինն է: Ապրանքի գնի և առաջարկի մեծության ( «S», supply՝ առաջարկ) միջև գործում է ուղիղ համեմատական կախվածություն, այսինքն՝ գնի բարձրացման հետ մեծանում է նաև առաջարկը և հակառակը: Գնի և առաջարկի մեծության այդ փոխազդեցությունը կոչվում է *առաջարկի օրենք*: Վերջինս կարելի է արտահայտել գրաֆիկորեն, որպես ձախից աջ բարձրացող վերընթաց կոր:




Գրաֆիկ 4.3

Այլ հավասար պայմաններում տվյալ ապրանքի գնի փոփոխության հետ փոխվում է միայն առաջարկի մեծությունը, կորն իր դիրքը չի փոխում, և տեղաշարժը կատարվում է միայն նրա երկայնքով՝ a, b, c, d և հակառակը: Առաջարկի մեծության ուղիղ համեմատական կախվածությունը գների մակարդակից արտահայտվում է  $S=f(p)$  բանաձևով:



Միաժամանակ գոյություն ունեն մաս ոչ գնային դետերմինանտներ, որոնց փոփոխության հետ փոխվում է առաջարկը՝ կորը տեղաշարժելով կամ դեպի աջ  $S$  դիրքից  $S_1$  դիրքը, կամ դեպի ձախ՝  $S$  դիրքից  $S_2$  դիրքը:



Առաջարկի հիմնական ոչ գնային դետերմինանտներն են.

ա) ռեսուրսների գները: Վերջիններիս իջեցումը կրճատում է արտադրության ծախքերը և մեծացնում առաջարկը՝ կորը տեղաշարժելով աջ և հակառակը,

բ) տեխնոլոգիան. ռեսուրսների տվյալ գների պայմաններում տեխնոլոգիայի կատարելագործումն իջեցնում է արտադրության ծախքերը և մեծացնում առաջարկը՝ կորը տեղաշարժելով դեպի աջ,

գ) հարկերը և դոտացիաները. ձեռնարկությունների մեծ մասը հարկերը դիտում է որպես արտադրության ծախքեր, որոնց բարձրացումը կրճատում է առաջարկը: Դոտացիաները հակառակ ազդեցություն են ունենում: Եթե պետությունը սուբսիդավորում է որևէ արդյունքի արտադրություն, ապա կրճատում է ձեռնարկությունների ծախքերը և ավելացնում առաջարկը,

դ) այլ ապրանքների գները. մի ապրանքի գնի բարձրացումը կարող է մեկ այլ ապրանքի առաջարկի կրճատման պատճառ դառնալ: Ֆիրմայի համար շահավետ է դառնում փոխել արտադրության կառուցվածքը և անցնել համեմատաբար ավելի թանկ ապրանքի արտադրության,


ե) ապագա սպասելիքները. գնի կամ եկամուտների ապագայում սպասվող փոփոխությունները կարող են ազդել առաջարկի ներկա մա-

կարդակի վրա: Օրինակ, եթե սպասվում է գնի բարձրացում, ապա վաճառողները կրճատում են ներկա առաջարկը՝ ապագայում ավելի բարձր գնով վաճառելու ակնկալիքով,

զ) վաճառողների թիվը շուկայում. տվյալ ճյուղում արտադրողների թվի ավելացման հետ մեծանում է շուկայական առաջարկը՝ կորը տեղաշարժում դեպի աջ և հակառակը:

Վերը նշված սկզբունքներով է ձևավորվում շուկայական պահանջարկը՝ որպես որոշակի ապրանքների և ծառայությունների անհատական պահանջարկների գումարային արտահայտություն և շուկայական առաջարկը՝ որպես բոլոր վաճառողների առաջարկների ամբողջություն:

**4.4.** Պահանջարկն ու առաջարկն առանձին-առանձին ուսումնասիրելուց հետո դրանք կարող ենք միավորել, որը թույլ կտա որոշել, թե ինչպես են դրանց փոխազդեցության արդյունքում սպառողների և արտադրողների որոշումները համաձայնեցվում միմյանց հետ և որոշվում արտադրանքի գինն ու վաճառքի քանակությունը: Պահանջարկի և առաջարկի կորերը համատեղելիս դրանք հատվում են մի կետում, որտեղ երկու փոխազդող կողմերն ընդհանուր համաձայնության են գալիս տվյալ քանակի արդյունքն այդ գնով վաճառելու կամ գնելու համար:




Կորերի հատման կետում ձևավորվում է *շուկայական հավասարակշռություն*: Երկու կորերի հատման արդյունքում ձևավորված գինը կոչվում է *հավասարակշռված գին* ( $p_e$ ), իսկ առաջարկվող արդյունքի քանակը՝ *հավասարակշռված քանակ* ( $Q_e$ ): Հավասարակշռված գնով

գնորդները ցանկանում են և կարող են գնել արդյունքի այն քանակությունը, որն արտադրողներն այդ գնով ցանկանում են և կարող են արտադրել ու վաճառել:


Գնորդների և վաճառողների գործողությունները բնականոն ձևով շուկայում ձևավորում են պահանջարկի և առաջարկի հավասարակշռություն: Դրանում համոզվելու համար դիտարկենք, թե ինչ է կատարվում, երբ շուկայական գինը հավասար չէ հավասարակշռված գնին: Ընդունենք, թե շուկայական գինը բարձր է հավասարակշռված գնից (տես՝ գրաֆիկ 4.6):

Հավասարակշռված  $p_e$  գնից  $p_2$  բարձր գնի դեպքում պահանջարկի համեմատությամբ կառաջանա առաջարկի, այսինքն՝ ապրանքի ավելցուկ  $Q_1, Q_2$ -ի չափով: Այս պայմաններում առաջանում է մրցակցություն վաճառողների (արտադրողների) միջև, որոնք ապրանքային պաշարներից ազատվելու կամ իրացվող ապրանքների ծավալները մեծացնելու համար կսկսեն իջեցնել գինը, որը կտեղաշարժվի մինչև հավասարակշռության կետը:



Հավասարակշռված գնից ցածր ցանկացած գին (ընդունենք  $P_1$ ) կտանի արտադրանքի պակասորդի առաջացմանը, այսինքն՝ պահանջարկի մեծությունը կգերազանցի առաջարկի մեծությանը՝  $Q_1, Q_2$  - ի չափով (տես գրաֆիկ 4.7):

Այսպիսի պայմաններում մրցապայքար է սկսվում գնորդների միջև, որոնք պատրաստ են ավելին վճարել ապրանքային անհրաժեշտ քանակություն ձեռք բերելու համար, որը բարձրացնում է գինը և այն դարձյալ մղում դեպի հավասարակշռության մակարդակը:




Հավասարակշռված գինը ցույց է տալիս, որ միայն այս դեպքում է առաջարկված ապրանքի քանակը հավասար գնորդների կողմից ներկայացված պահանջարկին: Պահանջարկի և առաջարկի մրցակցային ուժերի ընդունակությունը, որի շնորհիվ գինը հաստատվում է մի այնպիսի մակարդակի վրա, որտեղ առք ու վաճառքի գործարքները համընկնում են, կոչվում է *գների հավասարակշռող ֆունկցիա*: Եթե մրցակցային գները ինքնաբերաբար չկարգավորվեն և միմյանց հետ չհամաձայնեցնեն առաջարկի և պահանջարկի որոշումները, ապա կառավարությունը ստիպված կլինի վարչական վերահսկողության միջոցով վերացնել կամ կարգավորել պակասորդները և ավելցուկները:

Հավասարակշռված գնի և արտադրության հավասարակշռված քանակի վրա կարող են ազդել պահանջարկի ու առաջարկի ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միաժամանակյա փոփոխությունները, որոնց հետևանքով գինը և քանակը կարող են աճել ու նվազել բոլոր հնարավոր տարբերակներով:

Հավասարակշռված գինը և հավասարակշռված արդյունքը, ինչպես արդեն նկատել ենք, կախված են պահանջարկի և առաջարկի կորերի

դիրքերից: Եթե որևէ դեպքում հանձնարարական ազդեցությամբ փոխվում է կորե-րից որևէ մեկի դիրքը, ապա շուկայական հավասարակշռվածությունը խախտվում է՝ վերականգնվելով նոր մակարդակում: Այդպիսի փոփոխությունների վերլուծությունը, հին և նոր հավասարակշռության վիճակների համեմատությունը կոչվում է *համեմատական ստատիկա*:

Այժմ փորձեք ինքնուրույն վերլուծել ստորև բերվող գրաֆիկներում պահանջարկի և առաջարկի փոփոխություններն ու դրանց ազդեցությունը գնի և արդյունքի քանակի վրա (տես գրաֆիկներ 4.8) :



Գրաֆիկներ 4.8

Վերը նշված տարբերակները համարվում են հավասարակշռության փոփոխության համեմատաբար պարզ իրավիճակներ, քանի որ բոլոր չորս

դեպքերում էլ փոփոխվում է կորեներից որևէ մեկի դիրքը, մյուսի անփոփոխ մնալու պայմաններում: Սակայն հնարավոր են նաև հավասարակշռության փոփոխության բարդ իրավիճակներ, երբ հնարավոր բոլոր ուղղություններով միաժամանակ փոփոխվում է թե՛ պահանջարկի և թե՛ առաջարկի կորերի դիրքը: Բարդ իրավիճակները կարելի է սեղմ ներկայացնել հետևյալ կերպ.

1. եթե D-ն աճում է, S-ը՝ նվազում, ապա  $P_e$ -ն բարձրանում է, իսկ  $Q_e$ -ի փոփոխությունն անորոշ է, քանի որ հնարավոր են բոլոր երեք տարբերակներն էլ (աճել, նվազել, մնալ անփոփոխ), որը կախված է պահանջարկի ու առաջարկի փոփոխության տեմպերից,

2. եթե D-ն նվազում է, S-ը՝ աճում, ապա  $P_e$ -ն իջնում է, իսկ  $Q_e$ -ի փոփոխությունն անորոշ է,

3. եթե D-ն և S-ը միաժամանակ աճում են, ապա  $P_e$ -ի փոփոխությունն անորոշ է, իսկ  $Q_e$ -ն աճում է,

4. եթե D-ն և S-ը միաժամանակ նվազում են, ապա  $P_e$ -ի փոփոխությունն անորոշ է, իսկ  $Q_e$ -ն նվազում է:

**4.5.** Պահանջարկի և առաջարկի դետերմինանտների քննարկման ժամանակ ավելի շատ ուշադրություն ենք դարձրել հարցի տեսական կողմին՝ պահանջարկի և առաջարկի ուղղությունների փոփոխություններին, մինչդեռ կարևոր նշանակություն են ստանում քանակական մեծությունները: Էլաստիկության հասկացությունը թույլ է տալիս խորացնելու մեր պատկերացումները շուկայի ադապտացիայի պրոցեսների վերաբերյալ:

Ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի մեծության վրա գնի ազդեցությունը կարող է տարբեր լինել, այսինքն՝ այդ մեծությունների և գնի փոփոխությունները կարող են համամասնական չլինել: Շուկայի համար շատ կարևոր է պարզել, թե գնի փոփոխությունն ինչպես կանդրադառնա գնումների և մատակարարումների ծավալի վրա: Գնի այդ ազդեցությունը տարբեր ապրանքների համար տարբեր է և արտահայտվում է պահանջարկի և առաջարկի գնային էլաստիկության միջոցով: Էլաստիկությունը նշանակում է գնի փոփոխության նկատմամբ մարդկանց ռեակցիայի ինտենսիվություն:

Ինչպես հայտնի է, ըստ պահանջարկի օրենքի, ապրանքի գնի իջեցումն առաջացնում է պահանջարկի ծավալի աճ: Պահանջարկի գնային էլաստիկությունը որոշում է պահանջարկի ծավալի ռեակցիան ապրանքի գնի փոփոխության նկատմամբ: Ապրանքի պահանջարկն էլաստիկ է, եթե գնի աննշան փոփոխության ժամանակ պահանջարկի ծավալն էական-

րեն փոխվում է: Պահանջարկը կոչվում է ոչ էլաստիկ, եթե գնի փոփոխության ժամանակ պահանջարկի ծավալը փոխվում է աննշան չափով:

Քանի որ ապրանքի նկատմամբ պահանջարկը կախված է սպառողների նախընտրությունից, ապրանքի գնային էլաստիկությունը որոշվում է մարդկանց ցանկությունները ձևավորող բազմաթիվ տնտեսական, սոցիալական և հոգեբանական գործոններով: Այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել պահանջարկի գնային էլաստիկությունը որոշող ընդհանուր կանոններ.

ա) առաջին անհրաժեշտության ապրանքներ և ճոխության առարկաներ. առաջին անհրաժեշտության ապրանքների պահանջարկը բնութագրվում է ցածր գնային էլաստիկությամբ, իսկ ճոխության առարկաներինը՝ բարձր էլաստիկությամբ: Ջարգացած երկրներում ունևոր ընտանիքները հազիվ թե նշանակալից չափով կրճատեն բժշկի մոտ հաճախումների քանակը, եթե նույնիսկ բժշկական ծառայությունների գինը մշտապես աճում է: Ընդհակառակ, զբոսանավի գնի աճը տանում է պահանջարկի ծավալի նշանակալից կրճատմանը: Պատճառն այն է, որ շատ անհատներ բժշկի մոտ հաճախելը դիտում են որպես անհրաժեշտություն, իսկ զբոսանավ ունենալը՝ ճոխություն: Նկատենք, որ արդյունքն առաջին անհրաժեշտության կամ ճոխության ապրանքներին դասելը որոշվում է ոչ թե նրա ներքին հատկանիշներով, այլ գնորդի տված նախապատվությամբ: Դյուցագնական առողջություն ունեցող ծովային արշավների մոլեռանդ սիրահարի համար սպորտային նավը ոչ էլաստիկ պահանջարկով առաջին անհրաժեշտության առարկա է, իսկ բժշկի մոտ հաճախելը՝ ճոխություն, գնային բարձր էլաստիկությամբ.

բ) սուբստիտուտներ. ապրանքները, որոնք ունեն մոտիկ փոխարինողներ, հատկանշվում են ավելի էլաստիկ պահանջարկով: Օրինակ սուրճի գների աճը թեյի անփոփոխ գների պայմաններում կբերի սուրճի նկատմամբ պահանջարկի կրճատմանը: Այն անվանում են նաև պահանջարկի գնային խաչաձև էլաստիկություն,

գ) ժամանակը. երկարատև ժամանակի կտրվածքով ապրանքների պահանջարկի գնային էլաստիկության նշանակությունն աճում է: Երբ աճում է բենզինի գինը, պահանջարկի ծավալը սկզբնական շրջանում կրճատվում է աննշան, բայց հետագայում նրա սպառումը նվազում է նշանակալից չափով, քանի որ մարդիկ սկսում են ձեռք բերել քիչ վառելիք ծախսող մեքենաներ, օգտվել հասարակական տրանսպորտից և այլն:

Պահանջարկի գնային էլաստիկությունը որոշվում է հետևյալ բաճանով.

$$\begin{array}{l} \text{Պահանջարկի} \\ \text{գնային} \\ \text{էլաստիկությունը} \end{array} = \frac{\text{պահանջարկի ծավալի} \\ \text{տոկոսային փոփոխություն} \\ \text{գնի տոկոսային փոփոխություն}}{\quad}$$

Ընդունենք, թե թատրոնի տոմսի գինը իջել է 4 դոլարից մինչև 2 դոլարի, որի արդյունքում հանդիսատեսների թիվը 1000-ից աճել է 2000-ի: Այստեղից.


$$\begin{array}{l} \text{պահանջարկի} \\ \text{ծավալի տոկոսային} \\ \text{փոփոխությունը} \end{array} = (2000-1000) : 1000 \times 100 = 100 \%$$

$$\begin{array}{l} \text{գնի տոկոսային} \\ \text{փոփոխությունը} \end{array} = (4-2) : 4 \times 100 = 50 \%$$

$$\begin{array}{l} \text{Պահանջարկի գնային} \\ \text{էլաստիկությունը} \end{array} = 100 : 50 = 2$$


Պահանջարկի գնային էլաստիկությունը հավասար է 2-ի, որը նշանակում է, թե պահանջարկի ծավալի փոփոխությունը երկու անգամ գերազանցում է գնի փոփոխությանը: Սովորաբար պահանջարկը համարվում է էլաստիկ, եթե էլաստիկությունը 1-ից մեծ է: Այսինքն, տոկոսով արտահայտված ապրանքի պահանջարկի փոփոխությունը համեմատաբար բարձր է, քան տոկոսով արտահայտած գնի փոփոխությունը: Պահանջարկը համարվում է ոչ էլաստիկ, եթե էլաստիկությունը 1-ից փոքր է: Եթե էլաստիկությունը հավասար է 1-ի, այսինքն ապրանքի համեմատական պահանջարկը փոխվում է գնի փոփոխությանը ճիշտ համապատասխան, պահանջարկը բնութագրվում է միավոր էլաստիկությամբ:

Պահանջարկի գնային էլաստիկությունը կարող ենք արտահայտել գրաֆիկորեն ( տես գրաֆիկներ 4.9) :




ա) պահանջարկը էլաստիկ է  
 $Q_t > 1$

1-ն ուղղանկյան մակերեսը՝ գնի իջեցման հետ կապված կորուստը ( $P_2 - P_1$ ), փոքր է 2-րդ ուղղանկյան մակերեսից՝ գնի իջեցման հետևանքով վաճառքի ծավալների մեծացումից: Եթե 2-րդ մակերեսից հանենք 1-ը, ապա կստանանք գնի իջեցումից ֆիրմայի ստացած շահույթի մեծությունը: Հետևապես, այս դեպքում գնի իջեցումը շահավետ է:



բ) պահանջարկը էլաստիկ չէ  
 $Q_t < 1$

1-ն ուղղանկյան մակերեսը՝ գնի իջեցման հետ կապված կորուստը ( $P_2 - P_1$ ), մեծ է 2-րդ ուղղանկյան մակերեսից: Եթե 1-ի մակերեսից հանենք 2-ը, ապա կստանանք գնի իջեցումից ֆիրմայի կորուստը: Գնի իջեցումը կամ չի ավելացնում պահանջարկը, կամ մեծացնում է այնքան աննշան չափով, որ պահանջարկի աճից ստացված շահույթը չի փոխհատուցում գնի իջեցումից առաջացած վնասները: Այս դեպքում ավելի ճիշտ է, որ ֆիրման չիջեցնի գինը:



գ) պահանջարկի էլաստիկությունը հավասար է 1-ի  
 $Q_t = 1$


Այս դեպքում նպատակահարմար է շուկայում պահպանել ձևավորված վիճակը: Դա նշանակում է, որ շուկայում ձևավորված է հստակ հավասարակշռված գին, հանգիստ վիճակ և նպատակահարմար չէ ենթարկվել ռիսկի:

Տվյալ դեպքում մենք դիտարկել ենք պահանջարկի էլաստիկությունը՝ կախված գնից: Սակայն այն կարելի է դիտարկել նաև ըստ առանձին-առանձին՝ գործոնների կամ ամբողջության մեջ: Բոլոր դեպք-

քերում էլաստիկության աստիճանն իր շարժման մեջ մնում է ենթակա միևնույն օրենքներին: Ինչպես օրինակ՝ պահանջարկի էլաստիկությունն ըստ եկամտի.

$$\begin{aligned} \text{Պահանջարկի էլաստիկությունը} &= \frac{\text{պահանջարկի ծավալի տոկոսային փոփոխություն}}{\text{եկամտի տոկոսային փոփոխություն}} \\ \text{ըստ եկամտի} & \end{aligned}$$

Քանի որ պահանջարկի ծավալը և եկամուտները փոփոխվում են միևնույն ուղղությամբ, ապա բարձր կարգի (նորմալ) ապրանքները բնորոշվում են եկամտի դրական էլաստիկությամբ: Ցածր կարգի բարիքների համար էլաստիկությունն ըստ եկամտի բացասական է: Պահանջարկի էլաստիկությունը մեծ կարևորություն է ներկայացնում վաճառողների համար այն առումով, թե ի վերջո գնի փոփոխությունն ինչպես է ազդում նրանց եկամուտների վրա: Այստեղ գործում է այն ընդհանուր կանոնը, ըստ որի՝ ծախսերը և եկամուտները հասնում են առավելագույնի այն կետում, որտեղ էլաստիկությունը հավասար է 1-ի: Գնի և եկամտի ընդհանուր մեծության կապը կարող ենք արտահայտել գրաֆիկորեն (տես գրաֆիկ 4.10) .




Գրաֆիկ 4.10

Գնի իջեցման հետ գնորդների ծախսերը, արդյունքում նաև եկամուտների ընդհանուր մեծությունն աճում է, հետևապես մեծանում են նաև վաճառողների ընդհանուր եկամուտները: Այն շարունակում է բարձրանալ

այնքան ժամանակ, քանի դեռ պահանջարկը մնում է էլաստիկ: Երբ գինը հասնում է A կետին, պահանջարկը դառնում է միավոր էլաստիկ: Գների հետագա իջեցումը փոքրացնում է եկամուտը, քանի որ ավելի ցածր գների պայմաններում պահանջարկը դառնում է ոչ էլաստիկ:

Ինչպես արդեն նկատել ենք, շուկայի ապրանքների մի մասի նկատմամբ պահանջարկը բացարձակ էլաստիկ չէ կամ ընդհակառակը՝ էլաստիկ է: Առաջին դեպքում (տես գրաֆիկ 4.11) պահանջարկի կորը ընդունում է ուղղահայաց դիրք՝ օրդինատների առանցքին զուգահեռ (D): Օրինակ, հացը, աղը, դեղորայքը: Դրանք կենսական նշանակության ապրանքներ են, որոնք մարդիկ ձեռք են բերում ցանկացած գնի պայմաններում: Երկրորդ դեպքում բացարձակ էլաստիկ պահանջարկը ենթադրում է պահանջարկի կորի հորիզոնական դիրք՝ աբսցիսների առանցքին զուգահեռ (D<sub>1</sub>): Այս գնով կարելի է իրացնել ցանկացած քանակի ապրանք: Բայց եթե գինը բարձրանա, գնորդները կիրաժարվեն դրանք գնել: Սակայն տնտեսագիտությանը հայտնի չեն այդպիսի օրինակներ, և դա հասկանալի է, քանի որ տնտեսության մեջ պահանջարկի անսահման աճ չի լինում: Այստեղ օրինակն ավելի շուտ պայմանական է:



Գրաֆիկ 4.11

Տնտեսության մեջ կատարվող փոփոխություններին շուկաների ռեակցիայի որոշման համար կարևոր նշանակություն ունի առաջարկի էլաստիկությունը: Ըստ առաջարկի օրենքի բարձր գինը տանում է ապրանքի առաջարկի ծավալի մեծացմանը: Առաջարկի գնային էլաստիկությունն արտահայտում է գնի փոփոխության հետ կապված առաջարկի ծավալի փոփոխությունը: Ապրանքների առաջարկը համարվում է էլաստիկ, եթե գնի փոփոխության հետ առաջարկի ծավալը եականորեն

աճում է: Այն ոչ էլաստիկ է, եթե գնի փոփոխությունն աննշան չափով է ազդում առաջարկի ծավալի վրա:

$$\text{Առաջարկի գնային էլաստիկությունը} = \frac{\text{առաջարկի ծավալի տոկոսային փոփոխություն}}{\text{գնի տոկոսային փոփոխություն}}$$

Ենթադրենք, թե մեկ տուփ կոնֆետի գինը բարձրացել է 3-ից մինչև 3,30 դոլար, իսկ արտադրության ամսական ծավալն աճել է 10 հազարից մինչև 11,5 հազար տուփի: Այստեղից.


$$\text{առաջարկի ծավալի տոկոսային փոփոխությունը} = (11,500 - 10,000) : 10,000 \times 100 = 15\%$$

$$\text{գնի տոկոսային փոփոխությունը} = (3,30 - 3,00) : 3,00 \times 100 = 10\%$$

$$\text{առաջարկի գնային էլաստիկությունը} = 15\% : 10\% = 1,5$$

Առաջարկի գնային էլաստիկությունը կազմել է 1,5՝ այսինքն այն մեկից բարձր է, հետևապես առաջարկի ծավալը փոփոխվել է ավելի մեծ համամասնությամբ, քան ապրանքի գինը:


Առաջարկի գնային էլաստիկության հնարավոր փոփոխությունը արտահայտենք գրաֆիկորեն (տես գրաֆիկ 4.12):



Գրաֆիկ 4.12

Եթե ապրանքի գինը բարձրանում է 3-ից մինչև 4 դոլար (+33%), առաջարկի ծավալն աճում է 100-ից մինչև 200 միավոր (+100%): Քանի որ առաջարկի աճի ծավալը կազմել է 100%, իսկ գինը բարձրացել է 33%-ով, ուստի առաջարկի կորն այդ հատվածում էլաստիկ է: Ընդհակառակը, երբ գինը բարձրանում է 12-ից մինչև 15 դոլարի, առաջարկի ծավալն աճում է միայն 500-ից մինչև 525 միավոր: Այս դեպքում առաջարկի ծավալն աճում է ընդամենը 5%-ով, մինչդեռ գինը՝ 25%-ով: Առաջարկի կորն այս հատվածում էլաստիկ չէ:

Առաջարկի էլաստիկությունը հավասար է 0-ի, եթե առաջարկի կորն ունի ուղղահայաց ձև: Այստեղ առաջարկի ծավալը չի մեծանում անկախ այն բանից, թե գինն ինչքան է աճում: Տվյալ դեպքում առաջարկը կատարյալ ոչ էլաստիկ է (տես գրաֆիկ 4.13):



Հատկապես արվեստի ստեղծագործությունների, օրինակ, Այվա-գոփսկու «Իններորդ ալիքը» նկարի առաջարկի կորը կատարյալ ոչ էլաստիկ է, քանի որ քանակը խիստ ֆիքսված է՝ ընդամենը մեկ նկար, որը ավելացվել չի կարող, որքան էլ գինը բարձրանա:

Ռեսուրսների սահմանափակության պատճառով առաջարկի ոչ մի իրական կոր չի կարող լինել կատարյալ էլաստիկ նրա ամբողջ երկայնքով, բայց առաջարկի կորը դիտարկվող քանակական հատվածի սահ-

մաններում կարող է ունենալ անսահման էլաստիկություն, եթե ապրանքը կարող է արտադրվել այն քանակությամբ, որը գործնականում պահանջվում է:

Հարկ է նկատել, որ առաջարկի էլաստիկությունը կախված է որոշակի գործոններից.

ա) ապրանքը երկար ժամանակ պահպանելու հնարավորությունը և դրա հետ կապված ծախսերը: Օրինակ հայտնի է, որ մրգի որոշակի տեսակները շուկա հասցնելու ժամանակ առաջանում է լարված իրավիճակ: Դրանք պետք է իրացնել հնարավորին չափ արագ, կամ էլ ստեղծել դրանց պահպանության որոշակի պայմաններ, ինչը նշանակալից չափով կբարձրացնի գինը: Դա նշանակում է, որ տվյալ ապրանքների առաջարկի էլաստիկությունը ցածր է կամ դրանց առաջարկը էլաստիկ չէ,

բ) ժամանակի գործոնը: Շուկաների մեծ մասի համար առաջարկի գնային էլաստիկության որոշիչը ժամանակի դետերմինանտն է: Առաջարկը ( ինչպես և պահանջարկը) սովորաբար առավել էլաստիկ է երկարաժամկետ, քան կարճաժամկետ հատվածում: Ոչ մի արտադրող, նույնիսկ եթե ապրանքի առաջարկը հատկանշվում է բարձր էլաստիկությամբ, չի կարող անմիջապես արձագանքել իր ապրանքի գնի բարձրացմանը կամ իջեցմանը: Սարքավորումներ, հունք, նյութեր գնելու, հոսքային գծերը կարգավորելու, համապատասխան որակավորման աշխատողներ վարձելու համար պահանջվում է որոշակի ժամանակ: Ակներև է, որ, այլ հավասար պայմաններում, որքան արտադրությունը արագ վերակառուցվի, հետևապես, որքան արագ կատարվի գնի փոփոխության նկատմամբ արձագանքը, այնքան առաջարկի էլաստիկության աստիճանը բարձր կլինի, և հակառակը,

գ) արտադրության տեխնոլոգիայի առանձնահատկությունը: Եթե արտադրողը կարող է գների աճի ժամանակ արագորեն ընդլայնել արտադրությունը կամ գների իջեցման դեպքում անմիջապես սկսել որևէ նոր արդյունքի արտադրություն, ապա տվյալ ապրանքի առաջարկը էլաստիկ է: Օրինակ, պաղպաղակի, հազուստի, հրուշակեղենի արտադրությունը:

Առաջարկի էլաստիկության առանձնահատկություններից է, որ այն միշտ դրական մեծություն է: Դա նշանակում է, որ գնի ցանկացած բարձրացման դեպքում արտադրողի եկամուտն աճում է, իսկ ցանկացած

նվազման դեպքում՝ կրճատվում: Առաջարկի էլաստիկության մյուս առանձնահատկությունն այն է, որ առաջարկի 1-ից բարձր էլաստիկության դեպքում արտադրողների եկամուտներն արագ աճում են: Նույն ձևով, որքան բարձր է առաջարկի էլաստիկությունը, այնքան ապրանքների գնի բարձրացման ժամանակ եկամուտների անկումը տեղի է ունենում սրընթաց ձևով: Դրանով է բացատրվում, թե ինչու կայուն պահանջարկի պայմաններում ապրանքի գնի իջեցումն առաջ է բերում մանր արտադրողների մասսայական սնանկացում:

**4.6.** Արդյո՞ք շուկայական համակարգը տնտեսական կյանքը կարգավորող լավագույն համակարգն է: Ինչպես և շատ հարցեր, այստեղ նույնպես միանշանակ պատասխան չկա: Այն փաստը, որ առկա են սահամանափակ ռեսուրսների բազմաթիվ այլընտրանքային բաշխման եղանակներ, արդեն վկայում է շուկայական համակարգի արդյունավետության գնահատման տարակարծությունների մասին: Հետևապես, ինչպես ամեն մի տնտեսական երևույթ, այնպես էլ շուկայական մեխանիզմը, ունի իր առավելություններն ու թերությունները:

Շուկայական համակարգի առավելություններն են.

- ռեսուրսների արդյունավետ բաշխումը. մրցակցային շուկայական համակարգը ռեսուրսներն ուղղում է դեպի այն ապրանքների ու ծառայությունների արտադրությունը, որոնց նկատմամբ հասարակությունը պահանջարկ ունի,

- շուկան ստեղծում է խթաններ տնտեսական գործունեության բոլոր ոլորտների, հատկապես արտադրության վրա ունեցած ազդեցության շնորհիվ: Այն մնան է մի հսկայական համակարգչի, որը ռեսուրսների և արդյունքների մշտապես փոփոխվող գների միջոցով պատկերացում է տալիս մատակարարվող բարիքների տեսականու, քանակի, որակի մասին, և տնտեսական սուբյեկտներին թույլ է տալիս սեփական վիճակը համեմատել շուկայական կոնյունկտուրայի հետ՝ իր հաշվարկներն ու գործողությունները հարմարեցնելով շուկային: Գների աճը ազդանշան է արտադրության ընդլայնման, իսկ իջեցումը՝ կրճատման մասին,

- շուկայական համակարգի գլխավոր արժանիքներից է ազատությունը, որը ձեռնարկատիրության և ընտրության ազատություն է, տնտեսական գործունեություն է՝ առանց հարկադրանքի, դա անձնա-

կան ազատություն է: Մարդիկ ձգտում են հասնել սեփական օգուտների մեծացմանը՝ կրելով այդ համակարգի պարզևներն ու պատիժները,

- թույլ է տալիս լայնորեն օգտագործել գիտության և տեխնիկայի նվաճումները, իսկ մրցակցությունն այդ պրոցեսը դարձնում է անընդհատ,

- ռեսուրսների օգտագործումը դարձնում է արդյունավետ, խթանում նոր, այլընտրանքային ռեսուրսների կիրառությունը:

Շուկայական համակարգի թերություններն են.

- մրցակցության մարումը. ձեռնարկատերերը, շահույթի համար պայքարի և իրենց տնտեսական վիճակի ամրապնդման համար, հաճախ փորձում են ազատվել մրցակցությունը սահամանափակող կապանքներից՝ համաձայնության գալով կամ միավորվելու, կամ էլ որոշակի միասնական գնային քաղաքականություն վարելու մասին (սովորաբար կապված գների բարձրացման հետ):

Որոշ տնտեսագետների կարծիքով մրցակցության մարելուն նպաստում է տեխնիկական առաջընթացը: Նորագույն տեխնոլոգիան պահանջում է՝ ա) մեծ քանակի իրական կապիտալի օգտագործում, բ) խոշոր շուկաներ, գ) կոնպլեքսային, կենտրոնացված և խիստ ինտեգրացված շուկաներ, դ) հումքի հարուստ և հուսալի շուկաներ: Իսկ դա նշանակում է, որ բարձր արդյունավետության կարելի է հասնել ոչ թե մեծ թվով մանր, այլ հենց այդպիսի խոշոր ֆիրմաների առկայության արդյունքում: Մինչդեռ, մրցակցության կծկվելու հետ թուլանում է նաև շուկայական մեխանիզմը՝ որպես ռեսուրսների արդյունավետ բաշխողի: «Անտեսանելի ձեռքը» սկսում է կորցնել անձնական ու հասարակական շահերի իր կարգավորիչ ուժը,

- շուկայական համակարգի ավտոմատ կառավարումը կատարվում է փորձի և սխալների միջոցով, որի արդյունքում հասարակությունը կարող է կրել էական կորուստներ,

- շուկան չի ստեղծում կոլեկտիվ օգտագործման ապրանքների և ծառայությունների (առողջապահություն, սպորտ, հասարակական տրանսպորտ, մշակույթ և այլն) արտադրության խթաններ,

- շուկան չունի սոցիալական պաշտպանվածության համակարգ: Եկամուտներ ստանում են միայն տնտեսական ռեսուրսների սեփականատերերը: Հաշմանդամները, երեխաները, թոշակառուները կարող են



չունենալ համապատասխան գոյամիջոցներ, ուստի պետությունը պետք է լուծի այդ խնդիրները,

- շուկան իրացնում է առկա գիտատեխնիկական ձեռքբերումները, միջոցներ չտրամադրելով հիմնարար և տեսական հետազոտությունների համար,

- շատ տնտեսագետներ շուկան դիտում են որպես անկատար մեխանիզմ, որը չի ապահովում լրիվ զբաղվածություն և գների կայուն մակարդակ, զարգացումը տեղի է ունենում վերելքների ու վայրէջքների հաջորդափոխության սկզբունքով:

Ճիշտ չի լինի միանշանակ ձևով համաձայնել շուկայի վերաբերյալ բերված կողմ և դեմ փաստարկներին: Մի հայտնի չափով երկուսն էլ ճիշտ են: Որոշ քննադատական դիտողություններ ճիշտ են արտացոլում շուկայական համակարգի թերությունները, որոնք անտեսել հնարավոր չէ: Բայց ստույգ են նաև նրա բերած առավելությունները: Ինչպես բոլոր տնտեսական երևույթները, այնպես էլ բերված փաստարկները հարաբերական են: Այդ տիրույթում էլ պետք է գնահատել շուկայական համակարգը:

## **ԳԼՈՒԽ 5. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՂԵՐԸ:**

### **5.1. Կառավարության տնտեսական գործառույթները.**

- շուկայական համակարգի արդյունավետ գործունեության համար իրավական հիմքի և հասարակական մթնոլորտի ապահովում,
- անկատար, օլիգոպոլ և մոնոպոլիստական շուկաներ, մրցակցության պաշտպանություն,
- եկամտի և հասարակական հարստության վերաբաշխում, Լորենցի կորը,
- տնտեսական ռեսուրսների բաշխման ճշգրտում,
- տնտեսության կայունացում:

### **5.2. Եկամտի, ռեսուրսների և արդյունքների շրջապտույտն ու պետական ոլորտը:**

**5.1.** Ժամանակակից բոլոր տնտեսական համակարգերը «խառը» համակարգեր են, որոնցում պետությունը (կառավարությունը) և շուկայական համակարգը միմյանց միջև բաժանում են տնտեսության առջև ծառայած հարցերի պատասխանները գտնելու գործառույթները: Դժվար է կառավարության տնտեսական դերը ենթարկել քանակական չափակցման: Այնուամենայնիվ, իբրև այդպիսի ցուցանիշ հաճախ ծառայում է ազգային արդյունքի արտադրության մեջ շուկայական համակարգի և պետության ունեցած տեսակարար կշռի հարաբերակցությունը:

Կառավարության միջամտությունը կարող ենք բաժանել ամբողջ տնտեսության համար (մակրոտնտեսական ազդեցություն ) և տնտեսության առանձին տարրերի՝ օրինակ, առանձին ֆիրմաների կամ սպառողների համար ( միկրոտնտեսական ազդեցություն ) ունեցած հետևանքների առումներով:

Կառավարության տնտեսական գործառույթները շատ են և բազմազան, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին.

- ա) շուկայական համակարգի արդյունավետ գործունեության համար իրավական հիմքի և հասարակական մթնոլորտի ապահովում,
- բ) մրցակցության պաշտպանություն,
- գ) եկամտի և հասարակական հարստության վերաբաշխում,

դ) ազգային արդյունքի կառուցվածքը փոխելու նպատակով ռեսուրսների բաշխման ճշգրտում,

ե) տնտեսության կայունացում, այսինքն՝ տնտեսական կոնյունկտուրայի տատանումներից բխող վերահսկողություն զբաղվածության և ինֆլյացիայի մակարդակների վրա, ինչպես նաև տնտեսական աճի խթանում:

ա) *Իրավական հիմք և հասարակական մթնոլորտ.* պետությունն իր վրա է վերցնում այնպիսի օրենքների մշակումը, որոնք ապահովում են շուկայական տնտեսության արդյունավետ գործունեությունը և մի շարք կարևորագույն ծառայությունների իրականացման խնդիրը, ինչպիսիք են ձեռնարկություններին օրինական կարգավիճակի տրամադրումը, մասնավոր սեփականության իրավունքների սահմանումը, պայմանագրերի կատարման երաշխիքների ստեղծումը և այլն: Կառավարությունը սահմանում է ձեռնարկությունների, ռեսուրսների մատակարարների և սպառողների միջև հարաբերությունները և պահվածքը կարգավորող «խաղի կանոնները»: Հասարակական կարգի պահպանման համար կառավարությունը ստեղծում է ոստիկանական ծառայություն, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների փոխանակությունը հեշտացնող դրամական համակարգ, սահմանում է արտադրանքի քաշի և որակի ստանդարտներ, արգելում վատորակ և առողջության համար վտանգավոր սննդամթերքի և դեղորայքի վաճառքը, պիտակների և արտադրության մակնիշների կեղծումը, կիրառում համապատասխան պատժամիջոցներ: Օրենսդրական ձևով կարգավորվում են ձեռնարկությունների, սպառողների և բանվորների փոխհարաբերությունները:

Նշված միջոցառումները նպատակ ունեն «ջունգլիների օրենքների» փոխարեն կարգավորել և բարձրացնել շուկայի հեղինակությունը:

բ) *Մրցակցության պաշտպանություն.* ինչպես արդեն նկատել ենք, մրցակցությունը շուկայական տնտեսության հիմնական կարգավորիչ մեխանիզմն է: Դա այն ուժն է, որն արտադրողներին և ռեսուրսների մատակարարողներին ենթարկում է գնորդների թելադրանքին կամ սպառողների իշխանությանը: Մրցակցության պայմաններում առաջարկի ու պահանջարկի մասին բազմաթիվ վաճառողների և գնորդների որոշումներն են ձևավորում շուկայական գները: Իսկ դա նշանակում է, որ անհատական արտադրողները և ռեսուրսների մատակարարները կարող են միայն հարմարվել գնորդների ցանկություններին: Շուկայական

համակարգի կամքին ենթարկվող արտադրողները ստանում են շահույթ և ամրապնդում իրենց դիրքերը, իսկ շուկայի օրենքները խախտողները՝ ունենում են կորուստներ և վերջին հաշվով սնանկանում:

Իրական շուկայական տնտեսության մեջ գերակշռող անկատար մրցակցության շուկաներն են, որտեղ արտադրողների մեծ մասն առաջարկում է իրենց նշանակությամբ միանման, բայց օգտագործման մեջ տարբերվող ապրանքներ: Այդ միանման, միմյանց փոխարինող ապրանքները, որոնք առավելագույն չափով հաշվի են առնում սպառողների նույնիսկ նվազագույն նախասիրությունները, ստացել է «ապրանքային դիֆերենցում» անվանումը: Վերջինս ֆիրմային հնարավորություն է տալիս գտնել գնորդների իր խումբը: Դա նշանակում է, որ ապրանքային դիֆերենցման ժամանակ կատարյալ մրցակցության միասնական շուկան տրոհվում է բազում սեգմենտների՝ ձևավորելով անկատար մրցակցության շուկա: Այդ սեգմենտների շրջանակներում առանձին ֆիրմաներ մյուսների նկատմամբ սկսում են զբաղեցնել ոչ հավասար դիրքեր, իսկ ապրանքի դիֆերենցումը խոչընդոտում է հավասարակշռված գնի ձևավորմանը: Բազում դիֆերենցված ապրանքների և դիֆերենցված գների առկայությունը բարդացնում է շուկայական տեղեկատվության ծավալը, և դրանով իսկ դժվարացնում սպառողների և արտադրողների պահվածքը:

Ինչ խոսք, շնորհիվ ապրանքների և գների դիֆերենցմանը, անկատար մրցակցության շուկան մեծացնում է սպառողների ընտրության հնարավորությունը և ավելի լրիվ բավարարում նրանց պահանջմունքները, սակայն ի հայտ է բերում նաև ոչ ցանկալի միտումներ,

- շուկայի տարբեր սեգմենտներում արտադրողների համար ստեղծում է տարբեր վիճակներ,

- սահմանափակում է պահանջարկի օրենքի գործողությունը,

- նոր արտադրողների մուտքը շուկայի այդ սեգմենտը դառնում է ավելի բարդ ու դժվար:

Անկատար մրցակցության շուկան սկսում է աղավաղել շուկայական տնտեսության ազատ գնագոյացման գլխավոր մեխանիզմը, քանի որ պահանջարկի և առաջարկի ազատ փոխներգործությունը խախտվում է: Անկատար մրցակցության շուկան գերազանցապես բնորոշ է սպառողական նշանակության ապրանքներին: Վերը նշված միտումների հետ կապված անկատար մրցակցության շուկան տնտեսագիտության տե-

սուբյան մեջ ստացել է նաև «մոնոպոլիստական մրցակցության շուկա» անվանումը: Մոնոպոլիստական միտումները տանում են օլիգոպոլային մրցակցային շուկայի առաջացմանը, որտեղ ապրանքների առաջարկը կենտրոնանում է սահմանափակ թվով արտադրողների ձեռքում ( երեքից հինգ խոշոր ֆիրմաներ): Այստեղ գլխավոր հատկանիշը դառնում է համակենտոնացման մակարդակը, որը չափվում է ճյուղային արտադրանքի վաճառքի ընդհանուր ծավալում խոշորագույն ֆիրմաների տեսակարար կշռով: Օլիգոպոլիայի պայմաններում նոր մրցակից ֆիրմաների ի հայտ գալը կապված է մեծ դժվարությունների հետ, քանի որ այն պահանջում է հսկայական սկզբնական ծախսեր ( օրինակ նոր օդանավերի արտադրությունը) : Բացի դրանից, գիտատար ճյուղերի տեխնոլոգիան , որպես օրենք, պաշտպանված է համապատասխան արտոնագրերով, որոնց ձեռք բերումը կապված է շատ մեծ ծախսերի հետ: Օլիգոպոլային շուկայում գինը որոշ իմաստով դառնում է անզգա շուկայական կոնյունկտուրայի փոփոխությունների նկատմամբ: Գների մանրայնության միջոցով սպառողներ գրավելու պայքարում հաջողության հասնելը, ինչպես դա հաճախ տեղի է ունենում կատարյալ և անկատար մրցակցային շուկաներում, դառնում է տնտեսապես անշահավետ: Վաճառողների և առաջարկի սահմանափակության պայմաններում գների իջեցումը չի բերի պահանջարկի աճի, քանի որ այդպես կարող են անել նաև մյուս մրցակից ֆիրմաները : Այդ պատճառով օլիգոպոլային շուկայում գնագոյացման մեխանիզմը ենթակա է « գնի լիդերության» և «գնային համաձայնության » սկզբունքներին: Առաջինը ենթադրում է օլիգոպոլիայի առաջատար ֆիրմայի սահմանած գինը, իսկ երկրորդը՝ համաձայնություն է ֆիրմաների միջև միասնական գնի և շուկայի բաժանման վերաբերյալ ( թեև հաճախ արգելվում է օրենքով):

Մոնոպոլիան այնպիսի իրավիճակ է, որի դեպքում վաճառողների թիվն այնքան է պակասում, որ նրանցից յուրաքանչյուրն ի վիճակի է ազդելու առաջարկի ընդհանուր ծավալի վրա, հետևաբար՝ նաև վաճառվող արդյունքի գնի վրա: Այսինքն, մոնոպոլային շուկայում մրցակցությունը բացակայում է, այստեղ տվյալ ապրանքն արտադրող մեկ կամ սահմանափակ թվով արտադրողներ են: Դա վաճառող մոնոպոլիստին հնարավորություն է տալիս սահմանել առավելագույն շահույթ ապահովող կամայական գին: Պահանջարկի օրենքը չի գործում: Մրցակցային մակարդակը գերազանցող մոնոպոլ գներն ու շահույթ-

ներն ուղղակի հակասում են սպառողների շահերին: Մոնոպոլիստական շուկան իջեցնում է կենսամակարդակը, քանի որ սպառողը ստիպված վճարում է բարձր գին, կրճատելով մյուս ծախսերը, վատացնում է ապրանքների որակը, որովհետև առաջարկի սահմանափակությունը գնորդին դարձնում է պակաս դժվարահաճ: Այն նվազեցնում է արտադրության տնտեսական արդյունավետությունը, քանի որ մոնոպոլիաները չեն հոգում ծախսերի տնտեսման մասին, և դրանց դիմաց վճարում են սպառողները:

Արտադրողի իշխանությունը փոխարինում է սպառողի իշխանությանն այն աստիճանով, որքանով մոնոպոլիան՝ մրցակցությանը: Արդյունքում, ռեսուրսները բաշխվում են այնպես, որ համապատասխանեն ոչ թե հասարակության պահանջունքների բավարարմանը, այլ բարձր շահույթների ձգտող մենաշնորհային վաճառողների շահերին: Մոնոպոլիան ծնում է տնտեսական ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխում:

Գոյություն ունեն այնպիսի մոնոպոլային շուկաներ, որոնց ծագումն ունի բնական կամ նպատակահարմար բնույթ: Որպես կանոն, բնական մոնոպոլային շուկան արտահայտում է երկրի բնական հարստության յուրահատկությունը (ինչպես, օրինակ, ոսկու, թանկարժեք քարերի, նավթի հանքավայրեր, ցիտրուսային կուլտուրաներ կամ կուրորտային պայմաններ): Մոնոպոլիայի տարատեսակ է հեղինակային իրավունքը: Նպատակահարմարության առումով մոնոպոլային շուկաները ծագում են այնտեղ, ուր բազմաթիվ արտադրողների առկայությունը կնվազեցնի տնտեսական արդյունավետությունը (օրինակ, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի մատակարարումը բնակչությանը, հեռախոսային ծառայությունը, տրանսպորտային կապը և այլն):

Շուկայական տնտեսություն ունեցող գրեթե բոլոր երկրներում կառավարությունները վարում են մոնոպոլիաների իշխանությունը վերահսկող և սահմանափակող քաղաքականություն: Վերջինս իրականացվում է երկու եղանակներով: Այն ճյուղերում, որոնցում գործում են, այսպես կոչված, «բնական մոնոպոլիաներ», այսինքն՝ տեխնոլոգիան կամ տնտեսական պայմանները բացառում են ազատ մրցակցային շուկաների առկայությունը, գների կարգավորման նպատակով պետությունը ստեղծում է հատուկ հանձնաժողովներ և կատարվող ծառայությունների համար սահմանում ստանդարտներ: Անհրաժեշտության դեպքում որոշ մոնոպոլիաներ գտնվում են պետական տնօրինության ներքո, և դրանց

մասնավորեցումը բացառվում է: Օրինակ, պետական բանկը, որն ունի թղթադրամի էմիսիայի իրավունք: Այլ դեպքերում, արդյունավետ բիզնեսի համար, պետությունը պարզապես կիրառում է հակամոնոպոլային օրենքներ: Մոնոպոլային կարգավիճակում ճանաչված ֆիրման վճարում է բարձր հարկեր, հաճախ այդպիսի ֆիրմաներին պետությունը հարկադրում է վերափոխվելու մի քանի ինքնուրույն ֆիրմաների: Այսպիսի միջոցառումներն առանձնակի կարևորություն ունեն շուկայական տնտեսությանն անցնող երկրների համար:

Հակամոնոպոլային քաղաքականությունը կարող է ընդգրկել առանձին սուբյեկտների կողմից արտադրության և առևտրի մոնոպոլացմանը խոչընդոտող ինչպես վարչարարական, այնպես էլ տնտեսական միջոցառումներ.

- խիստ վերահսկողություն մոնոպոլային ձեռնարկությունների գների վրա,

- գերկառավարչական, արտադրական և առևտրական կառուցվածքների ապահովագրացում,

- մրցակցության պաշտպանություն (այդ թվում արտասահմանյան արտադրողների հայրենական շուկա մուտք գործելու վրա վերահսկողություն),

- դիվերսիֆիկացիայի խրախուսում,

- ընդունվող օրենքների հակամոնոպոլային փորձաքննություն:

Մոնոպոլացումը վերաբերում է շուկայական տնտեսության իմաստենտ միտումներին: Ընդ որում, մոնոպոլային կարգավիճակի ձևերը մշտապես փոփոխվում են՝ հարմարվելով որոշակի ոլորտների առանձնահատկությանը: Այդ պատճառով հակամոնոպոլային քաղաքականությունը կազմում է շուկայական տնտեսության պետական կարգավորման մշտական ուղղություններից մեկը:

զ) *Եկամուտների վերաբաշխում*. շուկայական համակարգն անդեն, անկողմնակալ մեխանիզմ է, իսկ այդ հիմքի վրա առաջացող եկամուտների բաշխման համակարգը կարող է ծնել հասարակության համար ոչ ցանկալի մեծ անհավասարություն: Այն խոշոր եկամուտներ է բերում նրանց, ովքեր աշխատանքով կամ ժառանգաբար ստացել են նշանակալից կապիտալ և հողատարածություններ: Սակայն հասարակության մյուս անդամների եկամուտները ցածր են: Դրա համար պետությունն իրականացնում է համազգային նշանակության մի շարք միջոցառում-

ներ: Պետության միջամտությունը եկամուտների վերաբաշխման գործում դառնում է անխուսափելի, որի նպատակը ընդհանուր հասարակական պահանջումների բավարարումն է (ազգային պաշտպանություն, էկոլոգիա, արտադրական և սոցիալական ինֆրակառուցվածքների զարգացում), նպաստների ու թոշակների վճարումը ժամանակավորապես աշխատանքը կորցրածներին, անաշխատունակներին, քիչ ապահովված ընտանիքներին և այլն:

Եկամուտների վերաբաշխումն իրականացվում է ուղղակի և անուղղակի եղանակներով.

- «տրանսֆերտային վճարումներ», այսինքն՝ նպաստներ, թոշակներ, որոնք վճարվում են քիչ ապահովված շերտերին, թոշակառուներին և գործազուրկներին,

- սոցիալական կարևոր նշանակության արդյունքների «գների կարգավորում»,

- ինֆլացիայի որոշակի տոկոսի պայմաններում ֆիքսված եկամուտների ու տրանսֆերտային վճարումների «ինդեքսացիա»,

- «աշխատավարձի պարտադիր մինիմումի» սահմանում՝ որպես տնտեսության բոլոր ոլորտներում աշխատանքի վարձատրման բազայի,

- «պրոգրեսիվ հարկավորում», որի ժամանակ անվանական եկամտի աճի հետ հարկադրույքը մեծանում է: Եկամուտների այսպիսի վերաբաշխումն ընդունված է անվանել «Ռոբին Զուդի էֆեկտ», որը նշանակում է ավելի մեծ հարկեր՝ մեծ եկամուտներ ստացողներից:


Հարկավորումը և տոկոսադրույքը եկամուտ ստացողների պահվածքի կարգավորման երկու գլխավոր լծակներն են. հարկերը որոշում են իրական անձնական եկամտի չափը, իսկ տոկոսադրույքը՝ ազդելով խնայողությունների մեծության վրա, որոշում է իրական պահանջարկի («էֆեկտիվ») մեծությունը:

Տնտեսագետների մի մասի կարծիքով եկամուտների հավասարեցումը՝ իբրև սոցիալական արդարության իրականացում միշտ ուղեկցվում է տնտեսական արդյունավետության անկումով, քանի որ իմաստազրկվում է արդյունավետ աշխատանքն ինչպես աղքատի (միևնույն է պետությունը նրան մեցուկ կկանգնի), այնպես էլ հարուստի (որից, միևնույն է կխլեն) համար: Իսկ եկամուտների անհավասարու-

թյունն ապահովում է տնտեսական արդյունավետություն, բայց ուղեկցվում ունեցվածքային դիֆերենցումով:

Հետևապես, ընտրությունը եկամուտների անհավասարության և հավասարության միջև, ընտրություն է «անարդարացի տնտեսական արդյունավետության» և «արդյունավետ սոցիալական արդարության միջև»:

Այսպիսով, պետության բաշխողական ֆունկցիան հիմնականում ուղղված է սոցիալական անհավասարության կրճատմանը: Իհարկե, շատ կարևոր է պահպանել հորիզոնական ( հավասար պայմաններում գտնվողներից հավասար չափով) և ուղղահայաց ( ով շատ ստանում է, նա շատ էլ վճարում է) սկզբունքները: Այս իմաստով շուկայական տնտեսության մեջ եկամուտների բաշխման և վերաբաշխման արդարության գնահատման մասին պատկերացում է տալիս Լորենցի կորը ( ամերիկյան տնտեսագետ Մաքս Լորենցի անունով, տես գրաֆիկ 5.1):



Գրաֆիկ 5.1

Եթե երկրի ամբողջ բնակչությունը և հասարակության ամբողջական եկամուտները բաժանենք յուրաքանչյուրը հնգական հավասար մասերի՝ 20-ական տոկոսի չափով, ապա անկյան կիսորդը պատկերացում կտա եկամուտների հավասարաչափ բաշխման մասին: Հորիզոնական առանցքի վրա տեղադրում ենք երկրի բնակչության բաժանումները: Ուղղահայաց առանցքի վրա՝ եկամուտների բաժանումները: Եթե բնակչության 20%-ը ստանար ամբողջական անձնական եկամուտների 20%-ը, բնակչության 40 %-ը՝ եկամուտների 40%-ը և այլն, ապա մենք կկառուցեինք կիսորդը կամ բացարձակ հավասարության գիծը: Սա-

կայն իրականում բաշխումը բացարձակ հավասար չափով չի կատարվում: Օրինակ, բնակչության առաջին 20%-ը ստանում է եկամուտների 5%-ը, 40%-ը՝ 15%-ը, 60%-ը՝ 35%-ը, 80%-ը՝ եկամուտների 60 %-ը և վերջապես 100 տոկոս բնակչությունը՝ եկամուտների 100 տոկոսը: Այս արժեքներին համապատասխան կարող ենք կառուցել Լորենցի կորը, որը շեղվում է բացարձակ հավասարության կորից: Եթե եկամուտների բաշխումը հատկանշվում է մեծ անհավասարաչափությամբ, Լորենցի կորը ( գրաֆիկի վրա OABCDE) անկյան կիսորդի նկատմամբ ստանում է ավելի գոգավոր տեսք: Գծագիրը ցույց է տալիս նաև բացարձակ անհավասարության տարածությունը ( OFE ): OABCDE կորը ցույց է տալիս անձնական եկամուտների բաշխումը մինչև հարկերի գանձումը և առանց տրանսֆերտների: Բայց հարկերը պահելուց և տրանսֆերտները ստանալուց հետո կարող ենք կառուցել Լորենցի նոր կոր ( կետագծով), այսինքն կոր, որն արտահայտում է տնօրինվող եկամուտը: Այն արդեն պակաս գոգավոր է , քանի որ վերաբաշխման պրոցեսների արդյունքում կրճատվել է եկամուտների մակարդակների սկզբնական անհավասարությունը: Ակներև է, որ որքան շատ է անկյան կիսորդի նկատմամբ Լորենցի կորի շեղումը, այնքան ուժեղ է անհավասարությունը եկամուտների բաշխման մեջ, և որքան ակտիվ է պետության սոցիալական քաղաքականությունը եկամուտների հավասարեցման բնագավառում, այնքան տվյալ կորը պակաս գոգավոր է: Կապված որոշակի սոցիալական ծրագրերի և հարկավորման համակարգի հետ այս կամ այն երկրում Լորենցի կորի դիրքը տարբեր կլինի:

Եկամուտների անհավասարաչափ բաշխման կամ եկամուտների դիֆերենցման անհավասարությունը որոշվում է Ջինի ( իտալացի տնտեսագետ) գործակցով: Այդ գործակիցը սերտորեն կապված է Լորենցի կորի հետ: Ջինի գործակիցը հաշվարկվում է անկյան կիսորդի կամ բացարձակ հավասարության և Լորենցի կորի միջև ընկած մակերեսի (ընդունենք T) և OFE եռանկյան մակերեսի հարաբերությամբ.

$$G = \frac{T}{OFE},$$

որտեղ G - ն եկամուտների անհավասարության աստիճանի ցուցանիշն է: G-ի մեծությունը փոփոխվում է գրոյից մինչև միավոր, այսինքն՝  $0 < G < 1$  , երբեք չհասնելով 0 և 1 ծայրահեղ ցուցանիշներին:

Սովորաբար շուկայական տնտեսությանն անցնող երկրներում ռեսուրսների և եկամուտների բաշխումն ուղեկցվում է բնակչության եկամուտների մեծ դիֆերենցումով, իսկ դա ենթադրում է Ջինի բարձր գործակից, որը պայմանավորված է նաև այդ երկրներում նոր ձևավորվող հարկային համակարգի անկատարությամբ:

դ) *Ռեսուրսների վերաբաշխումը*. տնտեսական գիտությունը տարբերակում է շուկայական գործունեության կտրուկ խաթարումների երկու իրավիճակներ, որոնցում մրցակցային շուկայական համակարգը.


1) արտադրում է որոշ ապրանքների ու ծառայությունների ոչ անհրաժեշտ քանակություն,

2) ընդունակ չէ ռեսուրսներ առանձնացնել մի շարք այնպիսի ապրանքների ու ծառայությունների համար, որոնց արտադրությունը տնտեսապես արդարացված է:

Առաջինը կապված է ռեսուրսների տեղափոխությունների և կողմնակի էֆեկտների հետ, իսկ երկրորդը՝ պետական կամ հասարակական բարիքների հետ:

Հայտնի է, որ մրցակցային շուկայական համակարգի առավելություններից մեկը ռեսուրսների արդյունավետ բաշխումն է, որի հետևանքով արդյունքի հավասարակշռված ծավալը համընկնում է օպտիմալի հետ: Այս դեպքում արտադրության հետ կապված բոլոր ծախսերն ու օգուտներն ամբողջությամբ արտահայտվում են պահանջարկի ու առաջարկի կորերի վրա: Այլ կերպ ասած, ենթադրվում է, որ ամեն մի ապրանքի կամ ծառայության արտադրության ու սպառման դեպքում գոյություն չունեն տեղափոխություններ կամ կողմնակի էֆեկտներ: Տեղափոխություններն առաջանում են, երբ որևէ ապրանքի արտադրությունը կամ սպառումը մի երրորդ կողմի մոտ առաջ է բերում չփոխհատուցվող ծախսեր: Առավել ակնառու կողմնակի ծախսերը կապված են շրջակա միջավայրի աղտոտման հետ: Երբ քիմիական գործարանն իր թափոնները լցնում է գետը կամ լիճը, ապա լողացողները, ձկնորսները, շրջակայքում ապրող բնակչությունը կրում են կողմնակի ծախսեր: Արդյունքում ձեռնարկության արտադրության ծախսերն ավելի ցածր են լինում, որովհետև դրանց մի մասը տեղափոխվում է մի երրորդ կողմի վրա, որը ոչ մի առնչություն չունի այդ ապրանքի ո՛չ արտադրության, ո՛չ էլ սպառման հետ: Այսինքն, առաջարկի կորը չի ընդգրկում բոլոր այն ծախսերը, որոնք կարող են կապված լինել ապրանքի արտադրության հետ: Ուստի, արտադրողի առաջարկի կորը տեղաշարժվում է դեպի աջ՝  $St$ -ի

փոխարեն գրավելով  $S$  դիրքը, իսկ արդյունքի հավասարակշռված  $Qe$  ծավալը գերազանցում է նրա  $Qo$  օպտիմալ ծավալին (տես գրաֆիկ 5.1):



Գրաֆիկ 5.2


Կողմնակի ծախսերի հետևանքով այդ ապրանքի արտադրության ոլորտ են մտնում չափից ավելի շատ ռեսուրսներ, որովհետև ծախսերի իջեցումը խթանում է այդ ապրանքի արտադրության ընդլայնմանը՝ կատարելով առաջարկի ոչ գնային դետերմինանտի դեր: Կառավարությունը ռեսուրսների այդ անհամամասնական բաշխումը կարգավորելու, կողմնակի ծախսերն արտադրության ներքին ծախսերի վերածելու նպատակով իրականացնում է որոշակի միջոցառումներ:

1) օրենսդրական միջոցառումներ, որոնք արգելում կամ սահմանափակում են շրջակա միջավայրի աղտոտումը և պոտենցիալ աղտոտողներին ստիպում իրենց վրա վերցնել արտադրության հետ կապված բոլոր ծախսերը: Դա նշանակում է  $S$  կորի տեղաշարժը դեպի  $St$  դիրքը,

2) հատուկ հարկեր, որոնք ըստ էության լինելով ծախսեր, կատարում են առաջարկի ոչ գնային դետերմինանտի դեր: Արտադրանքի վրա դրված հատուկ հարկը մեծացնում է ֆիրմայի ծախսերը, և նրա առաջարկի կորը տեղաշարժում է  $St$  դիրքը: Կողմնակի ծախսերի ժամանակ արտադրության հավասարակշռված ծավալը մեծ է օպտիմալից ( $Qe$  -ն մեծ է  $Qo$  -ից) և պետության միջոցառումները նպատակ ունեն կրճատելու արտադրանքի  $Qe$  հավասարակշռված մեծությունը և հավասարեցնել  $Qo$  օպտիմալ մակարդակին:

Տեղափոխությունները կարող են ընդունել նաև օգուտների ձև: Որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրությունը կամ

սպառումը կարող է պայմանավորել փոխհատուցում չպահանջող կողմնակի օգուտներ երրորդ կողմի կամ ամբողջ հասարակության համար: Կրթությունը կողմնակի օգուտի դասական օրինակ է: Այն օգուտներ է բերում անհատ սպառողին, որովհետև «ավելի կրթված» մարդիկ սովորաբար ավելի բարձր եկամուտներ են ստանում: Բայց կրթությունը մեծ օգուտներ է ապահովում նաև ամբողջ հասարակության համար՝ տնտեսությունը տնօրինում է համակողմանի ու ավելի բարձր արտադրողական աշխատուժի, կրճատվում են հանցագործությունները կանխող օրենքների կատարումը հսկելու համար պահանջվող ծախսերը, բարձրանում է բնակչության քաղաքական ակտիվությունը: Կողմնակի օգուտները կարելի է արտահայտել գրաֆիկորեն (տես՝ գրաֆիկ 5.2):



Գրաֆիկ 5.3

Արտադրողի քանակը, որոնք մասնավորապես ստանում են կրթությունից: Dt կորը ներառում է այդ մասնավոր օգուտները՝ ավելացրած լրացուցիչ կողմնակի օգուտները, որոնք բաժին են ընկնում ամբողջ հասարակությանը: Այսպիսով, այն ժամանակ, երբ շուկայական առաջարկը ( $S_t$ ) և պահանջարկը ( $D$ ) ստեղծում են ( $Q_e$ ) արդյունքի հավասարակշռված քանակությունը, այն ավելի փոքր է ստացվում արդյունքի ( $Q_o$ ) օպտիմալ քանակությունից: Հետևաբար, շուկայական համակարգը չի ապահովում կրթության անհրաժեշտ մակարդակ, կրթության կարիքների համար ռեսուրսներ հատկացվում են անբավարար քանակությամբ:

Պետությունը ռեսուրսների այդպիսի անհամամասնական բաշխման խնդիրը, կապված կողմնակի օգուտների առկայության հետ, լուծում է հետևյալ հիմնական եղանակներով:

1. մեծացնում է պահանջարկը. սպառողների գնողունակությունը մեծացնելու միջոցով բարձրացվում է նաև պահանջարկն այնպիսի կոնկրետ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար, որոնց հետ կապված է կողմնակի օգուտների ծագումը: Օրինակ, ցածր եկամուտներ ունեցող ընտանիքներին հատկացվում են պարենային կտրոններ, որոնց դրամական համարժեքը փոխհատուցում է կառավարությունը,

2. մեծացնում է առաջարկը. սպառողների պահանջարկն ավելացնելու, նրանց նպաստներ հատկացնելու փոխարեն, կառավարությունը խթանում է արտադրողներին՝ տրամադրելով դոտացիաներ, իջեցնելով տվյալ ճյուղից գանձվող հարկերը և այլն: Այդ միջոցառումների շնորհիվ արտադրության ծախսերը նվազում են, առաջարկի կորը տեղաշարժվում է դեպի աջ և ավելի շատ սպառողներ են օգտվում տվյալ ճյուղի ծառայություններից,

3. կառավարությունն արտադրողի դերում. այս տարբերակը ծագում է այն դեպքում, երբ կողմնակի օգուտները արտակարգ մեծ են: Պետությունը պարզապես իր վրա է վերցնում տվյալ ճյուղի ֆինանսավորումը կամ ծայրահեղ դեպքում այն վերածում է պետական սեփականության և անմիջականորեն կառավարում:

Նշված եղանակներից որևէ մեկի ընտրությունը պայմանավորված է արտադրված արդյունքների բնույթով և կողմնակի օգուտների մեծությամբ:

Անհրաժեշտ է տարբերել *անհատական օգտագործման ապրանքներ* և պետական, *հասարակական նշանակության ապրանքներ ու ծառայություններ* կամ *բարիքներ* հասկացությունները: Անհատական օգտագործման ապրանքները, որոնք արտադրվում են շուկայական համակարգի հիմքի վրա, առաջին հերթին բաժանելի են, այսինքն՝ հանդես են գալիս փոքր միավորների ձևով և մատչելի են անհատ գնորդներին: Դրանք ենթակա են բացառման սկզբունքին, ըստ որի այդ արդյունքը կարող են ձեռք բերել բոլոր նրանք, ովքեր ցանկանում են և կարող են վճարել հավասարակշռված գին: Անհատական բարիքների մեծ մասն անձնական սպառման են: Անհատական են, քանի որ տվյալ միավոր ապրանքը միաժամանակ երկու անձի կողմից սպառվել չի կարող:

Գոյություն ունեն որոշակի ապրանքներ և ծառայություններ, այսպես կոչված պետական կամ հասարակական բարիքներ, որոնք շուկայական համակարգը չի կարող արտադրել բավարար քանակությամբ: Դրանք բարիքներ են, որոնք մարդիկ կարող են սպառել միաժամանակ, և մեկի կողմից սպառումը չի պակասեցնում մյուսի բաժինը: Հասարակական բարիքի դասական օրինակ է նավերին ավիաներձ ծովային վտանգներից նախազգուշացնող փարոսը, որի լույսը տեսանելի է բոլորին, անկախ այն բանից՝ վճարե՞լ են այդ ծառայության դիմաց, թե՛ ոչ: Գործնականորեն հնարավոր չէ բացառել փարոսի ծառայությունից առանձին նավերի օգտվելը: Տնտեսագիտության մեջ այս երևույթը կոչվում է Ֆրիմայդերի պրոբլեմ. սպառողները կարող են օգտվել ինչ-որ արդյունքի ընձեռած օգուտներից՝ որևէ ծախս չկատարելով դրա դիմաց: Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ փարոսի ծառայությունների վրա հնարավոր չէ ոչ գին սահմանել, ոչ էլ դրանք վաճառել, ակնհայտ է, որ մասնավոր ֆիրմաները ոչ մի շահ չունեն ռեսուրսներ ուղղել դրանց շինարարությանը: Այստեղ գործ ունենք մի ծառայության հետ, որն օգուտ է բերում, բայց որի արտադրության համար շուկան ռեսուրսներ չի հատկացնում: Հասարակական բարիքներ են համարվում նաև ազգային պաշտպանությունը, բնության աղետների հետ կապված ծառայությունները, քաղաքների բարեկարգումը և այլն: Նման բարիքների ու ծառայությունների արտադրությունն իրականացնում է պետական ոլորտը, իսկ ֆինանսավորումը կատարվում է հարկերի ձևով՝ պարտադիր գանձումների համակարգի օգնությամբ: Գոյություն ունեն նաև քվազի հասարակական բարիքներ, ինչպիսիք են ավտոմայրուղիներն ու կամուրջները, ոստիկանական և հրշեջ ծառայությունը, գրադարանները և թանգարանները, պրոֆիլակտիկ բժշկությունը: Կարելի է գին սահմանել, կիրառել բացառման սկզբունքը, և մասնավոր արտադրողները, շուկայական համակարգի միջոցով, կարող են ապահովել սպառողների պահանջները: Բայց քանի որ այդ ծառայություններն իրենց հետ բերում են նշանակալից կողմնակի օգուտներ, կառավարությունն իր վրա է վերցնում դրանց արտադրությունը կամ ֆինանսավորումը, որպեսզի բացառի այդ ոլորտներին ռեսուրսների դեֆիցիտային հատկացման հնարավորությունը և դրանք մատչելի դարձնի բոլորի համար:

ե) *Տնտեսության կայունացում*. կառավարության ամենակարևոր ֆունկցիան հիմնականում հանգում է լրիվ զբաղվածության և գների կա-

յուն մակարդակի ապահովմանը: Խոսքը վերաբերում է ոչ ցանկալի երկու իրավիճակների՝ գործազրկության և ինֆլյացիայի վերահսկողությանը: Այդ հարցերի մասին ավելի հանգամանորեն կխոսվի հետագա գլուխներում:

1. Գործազրկություն. մասնավոր ոլորտում ամբողջական ծախսերի մակարդակը կարող է անբավարար լինել լրիվ զբաղվածության ապահովման համար: Պետությունն այս դեպքում, մի կողմից, մեծացնում է սեփական ծախսերը՝ հասարակական բարիքների և ծառայությունների արտադրության վրա, մյուս կողմից՝ մասնավոր ոլորտի ծախսերի խրախուսման նպատակով, կրճատում հարկերը:

2. Ինֆլյացիա. այս իրավիճակում հասարակությունը փորձում է ծախսել ավելի շատ, քան թույլ են տալիս տնտեսության արտադրական հնարավորությունները: Երբ լրիվ զբաղվածության պայմաններում ամբողջական ծախսերը գերազանցում են արտադրված արդյունքի մեծությանը, ավելցուկային ծախսերն առաջ են բերում գների մակարդակի աճ: Ամբողջական ծախսերի չափից մեծ ծավալը ստանում է ինֆլյացիոն բնույթ: Ուստի ամբողջական ծախսերի կրճատման նպատակով կառավարությունը մի կողմից նվազեցնում է սեփական ծախսերը, մյուս կողմից, մասնավոր ոլորտի ծախսերի կրճատման նպատակով՝ բարձրացնում հարկերը:

**5.2.** Պետության տնտեսական ֆունկցիաներից պարզ է դառնում, որ խառը տնտեսության մեջ կառավարությունն ամբողջությամբ ինտեգրվում է տնտեսական օրգանիզմը կազմող նյութական և դրամական միջոցների շրջապտույտին: Այդ մասին հստակ պատկերացում է տալիս եկամտի, ռեսուրսների և արդյունքների շրջապտույտի նորացված մոդելը, թե ինչպես են կառավարության ծախսերը, հարկերը և տրանսֆերտային վճարումները ներգործում եկամուտների, ռեսուրսների բաշխման ու տնտեսական ակտիվության մակարդակի վրա (տես՝ նկար 5.1).


- 1-ից մինչև 4-րդ հոսքերը պարզապես ռեսուրսների, եկամուտների և արդյունքների շրջապտույտն են զուտ կապիտալիզմի պայմաններում,

- 5-ից մինչև 8-րդ հոսքերը ցուց են տալիս կառավարության գործարքներն արդյունքների և ռեսուրսների շուկաներում, որից 5-րդ և 6-րդ հոսքերը կառավարության գնումներն են մասնավոր ձեռնարկություններից՝ սկսած թղթից, համակարգիչներից մինչև զենք ու նյութատեխնիկական այլ մատակարարումներ զինված ուժերի համար, իսկ 7-րդ և



8-րդ հոսքերը՝ ռեսուրսների գնումները: Կառավարությունն աշխատավարձ է վճարում պառլամենտի անդամներին, զինված ուժերի ծառայողներին, արդարադատության նախարարության իրավաբաններին, տարբեր պաշտոնյաների և այլն: Կառավարությունը կարող է վարձակալել կամ ձեռք բերել հողամասեր զինված ուժերի, իսկ նունիցիպալիտետները՝ դպրոցների շինարարության համար,

- 9-րդ և 10-րդ հոսքերն արտահայտում են կառավարության կողմից տնային տնտեսություններին և ձեռնարկություններին հատկացվող հասարակական բարիքներն ու ծառայությունները,



Նկար 5.1

- հասարակական բարիքներն ու ծառայությունները պահանջում են ձեռնարկությունների և տնային տնտեսությունների կողմից հարկային վճարներ, ինչը ցույց են տալիս 11-րդ և 12-րդ հոսքերը: Վերջիններս ընդգրկում են նաև տնային տնտեսություններին տրվող տրանսֆերտային վճարումներն ու ձեռնարկություններին տրվող սուբսիդիաները: Այսպես՝ 11-րդ հոսքը ենթադրում է ոչ միայն կառավարության կողմից կորպորացիաների եկամուտներից գանձվող հարկը, ակցիզային հարկը, այլ նաև ֆերմերներին կամ այլ ոլորտներին տրվող սուբսիդիաները: Պետությունն ուղղակիորեն հարկավորելով տնային տնտեսություններին (անձնական եկամտից, աշխատավարձից), միաժամանակ նրանց հատկացնում է տրանսֆերտային վճարումներ (սոցիալական ապահովության նպաստներ)՝ 12-րդ հոսք:

Սույն մոդելը ցույց է տալիս, թե կառավարությունն ինչպես է փոփոխություններ իրականացնում եկամուտների բաշխման մեջ, վերաբաշխում ռեսուրսները և կարգավորում տնտեսական ակտիվությունը: Օրինակ, 12-րդ հոսքը վկայում է, որ ունևոր տնային տնտեսություններից կատարվող հարկումները, որոնք զուգորդվում են ցածր եկամուտներով ընտանիքներին տրվող տրանսֆերտային վճարումներով, եկամուտների բաշխման մեջ ապահովում են հավասարություն: 6-րդ և 8-րդ հոսքերը ենթադրում են մասնավոր ոլորտի համեմատությամբ ռեսուրսների բաշխման նոր մոտեցումներ: Եթե տնտեսության մեջ առկա է գործազրկություն, կառավարության ծախսերի մեծացումը՝ անփոփոխ հարկերի և տրանսֆերտային վճարումների պայմաններում, պետք է բերի անբողջական ծախսերի, արտադրության և զբաղվածության ծավալների մեծացմանը: Իսկ կառավարության ծախսերի տվյալ մակարդակի պայմաններում հարկերի կրճատումը կամ տրանսֆերտային վճարումների աճը կմեծացնի եկամուտները՝ խթանելով անձնական ծախսերը: Ինֆլյացիայի դեպքում կառավարությունը հակառակ քաղաքականությամբ կկրճատի իր ծախսերը, կբարձրացնի հարկերը և կնվազեցնի տրանսֆերտային վճարները:

## ԳԼՈՒԽ 6. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- 6.1. Մակրոտնտեսական ցուցանիշների դերը:
- 6.2. Համախառն ազգային արդյունք. ընդհանուր բնութագիրը:
- 6.3. Համախառն ազգային արդյունքի հաշվարկման եղանակները:
- 6.4. Մակրոտնտեսական այլ ցուցանիշներ. զուտ ազգային արդյունք, ազգային եկամուտ, անձնական եկամուտ:
- 6.5. Գների մակարդակի որոշումը:
- 6.6. Անվանական և իրական համախառն ազգային արդյունք: Ինֆլյավորում և դեֆլյավորում:
- 6.7. Համախառն ազգային արդյունքը և տնտեսական բարեկեցությունը:

6.1. Ինչպես արդեն նկատել ենք, տնտեսագիտությունը տնտեսությունը քննարկում է միկրոէկոնոմիկայի և մակրոէկոնոմիկայի հարթություններով: Միկրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է անհատական սպառողների և արտադրողների պահվածքը, շուկայի պայմաններում տնային տնտեսությունների և ֆիրմաների կողմից որոշումների ընդունման ու փոխազդեցության պրոցեսները: Միկրոտնտեսագիտության աշխարհն առաջին հերթին անհատական բիզնեսն է: Օրինակ, «X» ֆիրմայի գործունեությունը տվյալ ժամանակամիջոցում բնութագրելու համար անհրաժեշտ է համադրել նրա եկամուտները և ծախսերը: Պատկերացում կազմելով ընդհանուր վիճակի մասին՝ ֆիրման կարող է որոշում ընդունել՝ կամ կրճատել ծախսերը, կամ մեծացնել վաճառքի ծավալները, կամ բարձրացնել գները և այլն: Միջոցառումներ, որոնցից կախված է ֆիրմայի շահույթը:

Մակրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է տնտեսությունն ամբողջությամբ, նրա խնդիրը շատ շուկաների, ֆիրմաների ու տնային տնտեսությունների վրա միաժամանակ ազդող ընդհանուր փոփոխությունների բացահայտումն է: Այստեղ պահանջվում են նոր չափումներ: Մակրոտնտեսության վերաբերյալ պատկերացում ենք կազմում այնպիսի ազգային հաշիվների միջոցով, ինչպիսիք են համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ), զուտ ազգային արդյունքը (ԶԱԱ), ազգային եկամուտը (ԱԵ), անձնական եկամուտը (ԱՆձ. Ե), հարկերի զանձումից հետո մնացած անձնական եկամուտը (ԱՆձ. Ե<sub>h</sub>) և այլն: Մակրոտնտեսությունն ուսումնասիրողները փորձում են պատասխանել այն հարցերին, թե

ինչու մի երկրում մեկ շնչին ընկնող միջին եկամուտը բարձր է, իսկ մյուսում՝ ցածր, թե ինչու մի որոշակի ժամանակահատվածում գներն արագ են աճում կամ մնում են կայուն, թե ինչու որոշակի տարիների արտադրությունը և զբաղվածությունն աճում են, իսկ մի այլ ժամանակ բարձրանում է գործազրկության մակարդակը և այլն:

Ազգային հաշիվների համակարգը հնարավորություն է տալիս.

- տվյալ ժամանակամիջոցի համար չափել արտադրության ծավալը և բացահայտել տնտեսության գործունեությունը որոշող գործոնները,
- որոշակի ժամանակահատվածի համար, այդ ցուցանիշների համեմատության արդյունքում, բնութագրել տնտեսության ապագա միտումները,
- ձևավորել և կենսագործել տնտեսության գործունեությունը բարելավող պետական քաղաքականություն:

6.2. Կիրառվում են հասարակության տնտեսական բարեկեցությունը բնութագրող բազմաթիվ ցուցանիշներ, սակայն ազգային հաշիվների գլխավոր ցուցանիշը համախառն ազգային արդյունքն է: Համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) որոշակի ժամանակամիջոցում, սովորաբար մեկ տարվա ընթացքում, ստեղծված բոլոր ապրանքների և ծառայությունների վերջնական արտադրության շուկայական արժեքն է: ՀԱԱ-ը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով.

- ՀԱԱ-ը պատկերացում է տալիս տվյալ երկրի քաղաքացիների սեփականությունը հանդիսացող արտադրության գործոնների միջոցով արտադրված արդյունքների մասին: ՀԱԱ-ի մի մասը կարող է արտադրվել արտասահմանում: Օրինակ, Ռուսաստանում աշխատող Հայաստանի քաղաքացիների ստացած եկամուտը Հայաստանի ՀԱԱ-ի մի մասն է: Նույն սկզբունքով, այն եկամուտը, որը ստացվել է Հայաստանում, արտասահմանյան սեփականության մեջ գտնվող արտադրության գործոնների միջոցով, չի մտնում Հայաստանի ՀԱԱ-ի մեջ: Այս իմաստով ՀԱԱ-ն անհրաժեշտ է տարբերել համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) հասկացությունից: Վերջինս ներկայացնում է որոշակի ժամանակամիջոցում երկրի ներսում արտադրված բոլոր ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը, անկախ այն բանից, թե արտադրության գործոններն ուն սեփականությունն են:

Շատ երկրների համար ՀԱԱ-ի և ՀՆԱ-ի միջև տարբերությունը քիչ է: Դա նշանակում է, որ ՀՆԱ-ի համեմատությամբ արտասահմանում

ստացված եկամուտները փոքր են, կամ այն, որ դրանց ծավալները մոտավորապես հավասարակշռված են տվյալ երկրում արտասահմանցիների ստացած եկամուտների հետ: Հետևաբար, ՀԱԱ-ը և տվյալ երկրում արտասահմանյան արտադրության գործոններով ստեղծված զուտ եկամուտը միասին ներկայացնում են ՀՆԱ-ը: Վերջինս կարող է ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական մեծություն:

- կա այսպիսի մի արտահայտություն, ըստ որի տնտեսության մեջ, ի տարբերություն թվաբանության, «խնձորները և նարինջները իրար չի կարելի գումարել»: Սակայն ՀԱԱ-ն (ինչպես և մյուս մակրոտնտեսական ցուցանիշները) առաջին հերթին դրամական ցուցանիշ է և նրա հաշվարկման ժամանակ կատարվում է միանգամայն տարասեռ ապրանքների ամփոփում մի միասնական տնտեսական ցուցանիշի մեջ: Ընդունենք, թե երկիրն առաջին տարում արտադրել է «x» արդյունքից 10 հատ և «y» արդյունքից 5 հատ, երկրորդ տարում՝ հակառակը: Կամ դրանք արտադրում են երկու տարբեր երկրներ: Թե որ տարում կամ որ երկրում է արտադրության ծավալը մեծ, համեմատելի է դառնում այդ ապրանքների շուկայական գների միջոցով:

- ՀԱԱ-ն ճիշտ հաշվարկելու համար անհրաժեշտ է խուսափել կրկնահաշվարկից, որպեսզի տվյալ տարում արտադրված ապրանքները և ծառայությունները հաշվարկվեն մեկ անգամ: Արդյունքների մեծ մասը, մինչև շուկա մտնելը, անցնում է մի քանի արտադրական փուլեր: Դրանց առանձին մասերը մի քանի անգամ գնվում և վաճառվում են: Ուստի բազմակի հաշվարկներից խուսափելու համար, որը կտանի արտադրության իրական ծավալի կամ ՀԱԱ-ի արհեստական ուռճացմանը, հաշվի է առնվում միայն վերջնական արդյունքների շուկայական արժեքը: Մենք կխուսափենք կրկնահաշվարկից, եթե հաշվի առնենք միայն այն արժեքները, որոնք ավելացվում են յուրաքանչյուր ֆիրմայի կողմից: *Ավելացված արժեքը* ֆիրմայի վաճառքի ծավալն է՝ հանած արդյունքների արտադրության համար նրա կողմից գնված նյութերի արժեքը: Օրինակ, օդանավի արժեքը ՀԱԱ-ի մի մասն է: Եթե այն մտցնում ենք ՀԱԱ-ի մեջ, անհրաժեշտ է բացառել նրա մեջ օդանավ արտադրողների կողմից ձեռք բերված դողերի, էլեկտրասարքավորումների, ապակու, ջերմաչափերի և այլ ապրանքների արժեքը, քանի որ դրանք արդեն հաշվի են առնված օդանավի արժեքի մեջ: Այդ ապրանքները կոչվում են *միջանկյալ*: Ընդունենք, թե օդանավի արժեքը հավասար է

10,0 միլիոն դոլարի, որից 5,0 միլիոն դոլարը միջանկյալ արդյունքների արժեքն է: Վերջինս հանելուց հետո օդանավ արտադրող ֆիրմայի ավելացրած արժեքը կկազմի 5,0 մլն. դոլար: Իր հերթին, դողեր արտադրող ֆիրման օդանավ արտադրող ֆիրմային իր արտադրանքը վաճառելով 300,0 հազար դոլարով, գնել է 100,0 հազար դոլարի հումք: Օդանավի դողեր արտադրող ֆիրմայի ավելացրած արժեքը կկազմի 200,0 հազար դոլար: Այսպիսով, ամբողջ արտադրանքը բաժանվում է միջանկյալ և վերջնական արդյունքների: *Վերջնական* են կոչվում այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք գնվում են ոչ թե վերավաճառքի, հետագա վերամշակման, այսինքն՝ միջանկյալ օգտագործման, այլ վերջնական սպառման համար:

- ՀԱԱ-ի միջոցով որոշվում է տնտեսության մեջ արտադրվող ապրանքների և ծառայությունների տարեկան ծավալը: Այդ պատճառով նրանից պետք է հանվեն տվյալ տարվա բոլոր ոչ արտադրողական գործարքները: Առանձնացվում են երկու տեսակի *ոչ արտադրողական գործարքներ*.

1) *Ֆինանսական*, որոնց մեջ մտնում են.

ա) պետական բյուջեից կատարվող տրանսֆերտային վճարումները (սոցիալական ապահովագրություն, նպաստներ գործազուրկներին, թոշակներ): Տրանսֆերտային վճարումների առանձնահատկությունն այն է, որ դրանք ստացողները որևէ մասնակցություն չեն ունենում արտադրության ընթացիկ ծավալի ստեղծման մեջ,

բ) մասնավոր տրանսֆերտային վճարումները. օրինակ ընտանիքից ուսանողին տրվող դրամական օգնությունները (սուբսիդիաները), նվիրատվությունները և այլն, որոնք ոչ թե արտադրության արդյունք են, այլ միջոցների փոխանցում մի մասնավոր անձից մյուսին,

գ) արժեթղթերի, այսինքն՝ բաժնետոմսերի և փոխառությունների վաճառքի հետ կապված գործարքները: Վերջիններս ոչ այլ ինչ են, քան դրամական ակտիվների փոխանակություն, որոնք ուղղակիորեն չեն ենթադրում ընթացիկ արտադրության ավելացում: Թեև առանձին գործարքների ժամանակ միջոցները կարող են օգտագործվել ինվեստիցիոն ապրանքների գնման համար և նպաստել արտադրության ծավալի մեծացմանը,

2) *օգտագործված ապրանքների վաճառքները*. այդ գործարքները հանվում են ՀԱԱ-ից, քանի որ դրանք կապված չեն ընթացիկ տարվա

արտադրության հետևյալ և չեն ավելացնում վերջինիս ծավալը: Մի քանի տարի առաջ գնված ապրանքի արժեքը մի անգամ արդեն հաշվարկվել է ՀԱԱ-ի մեջ և վերավաճառքի արժեքը նորից մտցնելը պարզապես կնշանակի կրկնահաշվարկ:

**6.3.** ՀԱԱ-ն հաշվարկվում է երկու եղանակով՝ ծախսային և եկամտային: Ընդհանրապես, այն ինչ սպառողը ծախսում է «արդյունքի գնման համար, արտադրողի համար դառնում է եկամուտ: Նույն սկզբունքը գործում է նաև երկրի արտադրության ամբողջ ծավալը չափելու ժամանակ: Այստեղից էլ ՀԱԱ-ի հաշվարկումն ըստ արտադրության կամ ըստ ծախսերի և ՀԱԱ-ի հաշվարկումն ըստ մուտքերի կամ ըստ եկամուտների: Նշված երկու եղանակներն, ըստ էության, հանգում են հետևյալին. ՀԱԱ-ն կարող է որոշվել կամ տվյալ տարում արտադրված արդյունքների ամբողջ ծավալի գնման համար ծախսերը գումարելու, կամ էլ տվյալ տարվա արտադրանքի ամբողջ ծավալի վաճառքից ստացված եկամուտները գումարելու միջոցով: Ասվածը կարող ենք ներկայացնել որպես հավասարում.

$$\sum \text{ծախսեր} \equiv \sum \text{եկամուտներ}$$

Ըստ էության դա ավելի շատ նույնություն է, միևնույն գործարքի երկու կողմերը, որովհետև այն ինչ ծախսվել է արդյունքի գնման համար, դրամական եկամուտ է բոլոր նրանց համար, ովքեր մարդկային և նյութական ռեսուրսներ են ներդրել տվյալ արդյունքի արտադրության և իրացման համար:

Այժմ ՀԱԱ-ի հաշվարկման ծախսային և եկամտային եղանակների մասին ավելի հանգամանորեն:

1. *ՀԱԱ-ի հաշվարկն ըստ ծախսերի* կատարելու համար անհրաժեշտ է գումարել բոլոր ծախսերը: Վերջինս բաղկացած է.

ա) *անձնական սպառողական ծախսեր (C)*, որոնք ընդգրկում են տնային տնտեսությունների բոլոր ծախսերը երկարատև օգտագործման ապրանքներ (ավտոմեքենա, սառնարան, հեռուստացույց և այլն), կարճատև կամ ընթացիկ օգտագործման ապրանքներ (հաց, կաթ, օճառ, միրգ և այլն), ինչպես նաև ծառայություններ (իրավաբանի, բժշկի, վարսավիրի) ձեռք բերելու համար,

բ) *համախառն, մասնավոր, ներքին ինվեստիցիոն ծախսեր (Ig)*, որի երեք հիմնական բաղադրամասերն են.

- ձեռնարկատերերի կողմից մեքենաների, սարքավորումների և հաստոցների վերջնական գնումները,

- ամբողջ շինարարությունը, որի մեջ մտնում են ոչ միայն նոր գործարանների, պահեստների կամ ալրադացների, այլ նաև բնակարանային շինարարությունը: Բազմահարկ բնակելի շենքերը կամ նույնիսկ սեփականություն հանդիսացող անձնական օգտագործման բնակելի տները համարվում են ինվեստիցիոն, քանի որ կարող են տրվել վարձով և բերել դրամական եկամուտներ, այսինքն, եկամուտներ բերող ակտիվներ են,

- պաշարների փոփոխությունը. ՀԱԱ-ն արտացոլում է արտադրության ամբողջ ծավալը, ուստի այն պետք է ընդգրկի նաև տվյալ տարվա բոլոր պաշարների փոփոխությունը: Ձեռնարկությունների պահեստներում (օրինակ, մեքենաշինական գործարանը ունենում է պողպատի պաշար արտադրության ռիթմը պահելու համար) կամ խանութներում (օրինակ, հագուստ կամ այլ ապրանքներ՝ իրացումը չընդհատելու համար) առաջացած պաշարները, որպես չսպառված արդյունքներ, ինվեստիցիոն ապրանքներ են: Եթե տարվա վերջում ձեռնարկությունների պահեստներում կամ խանութներում նկատվել են ապրանքային կուտակումներ, ապա դա նշանակում է, որ արտադրվել է ավելի շատ, քան սպառվել է և պաշարների այդ աճն անհրաժեշտ է գումարել ՀԱԱ-ին, որովհետև դա մտնում է այդ տարվա արտադրության ծավալի մեջ և ընդհակառակը՝ պաշարների կրճատումը նշանակում է սպառման գերազանցում արտադրության նկատմամբ և նախորդ տարիների ընթացքում արտադրված արդյունքների իրացում: Ուստի պաշարների կրճատումը պետք է հանվի համախառն ազգային արդյունքից:

Ինվեստիցիան լայն իմաստ ունի և տնտեսության ընդհանուր վիճակի բնութագրության առումով անհրաժեշտ է տարբերել համախառն և զուտ ինվեստիցիա հասկացությունները: *Համախառն ինվեստիցիաներ* ասելով հասկանում ենք ընթացիկ տարում սպառված ինվեստիցիոն ապրանքների՝ մեքենաների, սարքավորումների և բոլոր շինությունների, մաշվածքի փոխհատուցման ծախսերը և արտադրության ընդլայնման ու կատարելագործման համար նախատեսված հավելումները: Սինչդեռ *զուտ ինվեստիցիաները* ենթադրում են միայն գործող ինվեստիցիաների վրա կատարված հավելածը: Այսպիսով, համախառն ինվեստիցիաները բաղկացած են տարվա ընթացքում սպառված կա-

պիտալից, որը կոչվում է ամորտիզացիա, և զուտ ինվեստիցիաներից: Վերջինս երկրի տնտեսական աճը բնութագրող կարևոր ցուցանիշներից է: Եթե համախառն ինվեստիցիաները գերազանցում են ամորտիզացիան և զուտ ինվեստիցիաները դրական մեծություն են, ապա տնտեսությունն աճում է, որովհետև միջոցներ են հատկացվում ոչ միայն մաշված կապիտալի փոխհատուցման և վերանորոգման համար, այլ նաև արտադրության ընդլայնման ու կատարելագործման նպատակով: Եթե համախառն ինվեստիցիաները հավասար են ամորտիզացիային, իսկ զուտ ինվեստիցիաները բացակայում են, ապա տնտեսությունը գտնվում է ստատիկ, անփոփոխ վիճակում, իսկ եթե համախառն ինվեստիցիաները փոքր են ամորտիզացիայից, իսկ զուտ ինվեստիցիաները բացասական մեծություն են, ապա տեղի է ունենում տնտեսության անկում, արտադրության ծավալների կրճատում, որովհետև երկիրն աստիճանաբար կորցնում է իր արտադրական հզորությունները, և արտադրական հնարավորությունների կորը տեղաշարժվում է դեպի ձախ:

Ինվեստիցիաները կոչվում են *մասնավոր*, քանի որ ծախսերի այս բաղադրիչում հաշվի են առնվում միայն մասնավոր ոլորտի ներդրումները: Ինչ վերաբերում է պետական ինվեստիցիաներին, ապա դրանք ընդգրկվում են ապրանքների և ծառայությունների պետական գնումներում:

Ինվեստիցիաները կոչվում են *ներքին*, քանի որ նկատի են առնվում միայն տվյալ երկրի քաղաքացիների կողմից կատարվող ներդրումները, իսկ արտաքին ինվեստիցիաներն ընդգրկվում են արտասահմանյան քաղաքացիների կողմից կատարված ծախսերի կամ զուտ արտահանման մեջ:

զ) *ապրանքների և ծառայությունների պետական գնումներն (G)* ընդգրկում են պետական բոլոր մակարդակի մարմինների ծախսերը, ինչպես, օրինակ, ձեռնարկությունների՝ պատրաստի արտադրանքի գնման, ռեսուրսների՝ հատկապես աշխատուժի, այդ թվում նաև զինվորական ծառայության համար: Պետական ծախսերից բացառվում են բոլոր տրանսֆերտային վճարումները, քանի որ, ինչպես արդեն նկատել ենք, դրանք չեն արտահայտում ընթացիկ արտադրության աճը, այլ պարզապես պետական եկամտի պարզ փոխանցումներ են տնային տնտեսություններին,

դ) *զուտ արտահանումը (Xn)* կապված է արտաքին առևտրի հետ: Այն ներկայացնում է արտաքին շուկայում իրացված հայրենական ար-

տադրության ապրանքների և ծառայությունների արժեքի (արտահանում) և արտասահմանյան ապրանքների գնումների (ներմուծում) տարբերությունը: Օրինակ, եթե տվյալ երկրի արտահանումը կազմել է 10,0 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ 5,0 մլրդ. դոլար, դա նշանակում է, որ զուտ արտահանումը կազմել է 5,0 մլրդ. դոլար: Դրանց տարբերությունը կարող է լինել նաև բացասական մեծություն և հանվել ՀԱԱ-ից:

Այսպիսով, զուտ արտադրված վերը նշված բոլոր ծախսերի բաղադրամասերը, կստանանք ՀԱԱ-ի շուկայական արժեքն ըստ ծախսերի.

$$\text{ՀԱԱ} = C + Ig + G + Xn$$

Հիշեցնենք, որ C-ն անձնական պառուղական ծախսերն են, Ig-ն՝ ինվեստիցիոն ծախսերը, G-ն՝ ապրանքների և ծառայությունների պետական գնումները և Xn-ը՝ զուտ արտահանումը:

2. *ՀԱԱ-ն ըստ եկամուտների* հաշվարկելու համար գումարում ենք բոլոր եկամուտները. ամորտիզացիա կամ սպառված կապիտալի փոխհատուցման տարեկան հատկացումներ, անուղղակի հարկեր բիզնեսից, վարձու աշխատողների աշխատավարձ, ռենտային վճարներ, տոկոս, շահույթ և եկամուտներ սեփականությունից: Նկատենք, որ առաջին երկուսը՝ ամորտիզացիան և անուղղակի հարկերը բիզնեսից, կապված չեն եկամուտների վճարման հետ:

ա) *Ամորտիզացիա*. արտադրության միջոցները՝ շենքերը, մեքենաները, հաստոցները արտադրության պրոցեսում մաշվում են: Սահմանված է այդ ակտիվների գործունեության օգտակար ժամկետ: Դրանց արժեքը (զինը, որով գնել են) հավասարապես բաշխվում է գործունեության ամբողջ ժամկետի վրա: Տարեկան մասհանումները, որոնք ցույց են տալիս արտադրության պրոցեսում տարբեր տարիների սպառված կապիտալի ծավալը, կոչվում են ամորտիզացիա: Վերջինս հաշվապահական գրանցում է, որը թույլ է տալիս ճիշտ պատկերացում կազմել ֆիրմայի տարեկան համախառն եկամտի մասին: Ամորտիզացիան նույնպիսի ծախք է, ինչպես նյութերի կամ աշխատանքի վրա կատարված ծախքը: Այն չի կարող օգտագործվել ռեսուրսների մատակարարների հետ հաշվարկներ կատարելու համար, ինչպես նաև չի կարող դառնալ որևէ մեկի եկամուտը: Ամորտիզացիան, ըստ էության, ցույց է տալիս, որ տվյալ տարվա ՀԱԱ-ի մի մասը պետք է հատկացվի սպառված կապիտալի փոխհատուցմանը: Այսինքն, ՀԱԱ-ն ամբողջությամբ չի կարելի սպառել

որպես հասարակության եկամուտ՝ միաժամանակ չվնասելով երկրի արտադրական հզորության պաշարները:

բ) Եկամուտների վճարման հետ չկապված մյուս հողվածը *բիզնեսից զանձվող անուղղակի հարկերն* են, որոնք պետությունը ստանում է շրջանառության հարկի, ակցիզների, գույքահարկի, լիցենզիոն վճարումների կամ ներմուծման մաքսային տարիֆների ձևով: Դրանց ստացման համար պետությունը ծախսեր չի կատարում և որևէ ռեսուրս չի տրամադրում, իսկ ձեռնարկությունները, որպես լրացուցիչ ծախսեր, այդ հարկերը մտցնում են իրացվող ապրանքների գնի մեջ: Այդ պատճառով էլ նման հարկերը կոչվում են անուղղակի, որովհետև ի վերջո զանձվում են ոչ թե բիզնեսից, այլ բնակչությունից, որը ստիպված է ապրանքներն ու ծառայությունները ձեռք բերել համեմատաբար թանկ գնով: Օրինակ, ընդունենք, թե ծխախոտ արտադրող ֆիրման 1տուփի համար սահմանել է 2 դոլար գին: Պետությունը սահմանում է 10 տոկոս ակցիզային հարկ: Մանրածախ ֆիրման պարզապես այդ 10 տոկոսն ավելացնում է արտադրող ֆիրմայի սահմանած գնի վրա՝ գինը բարձրացնելով 2-ից 2,02 դոլարի՝ դրանով իսկ հարկերը դնելով բնակչության վրա:

Միաժամանակ դրանք կոչվում են հարկեր բիզնեսից, քանի որ արտադրողներն ու առևտրականները նույնպես տուժում են այդ հարկերի աճից: Մի կողմից, գների բարձրացումը կրճատում է ապրանքների պահանջարկը, իսկ մյուս կողմից, այդ բարձրացումը կատարվում է ոչ թե ձեռներեցների կամքով, այլ հարկադրաբար, որից նրանք լրացուցիչ եկամուտ չեն ստանում:

գ) *Աշխատավարձը* եկամուտների ամենամեծ հողվածն է, որը վճարվում է բիզնեսի և պետության կողմից բոլոր աշխատողներին: Աշխատավարձին հավասարեցված եկամուտներ են համարվում նաև սոցիալական ապահովագրության նպատակով ձեռնարկատերերի կողմից կատարած մուծումները, սոցիալական ապահովության մասնավոր ֆոնդերը գործազրկության ժամանակ, բժշկական սպասարկման համար կատարվող հատկացումները և այլն:

դ) *Ռենտային վճարները* տնային տնտեսությունների կողմից ստացվող եկամուտներ են, որոնք տնտեսությունն ապահովում են սեփականության ռեսուրսներով: Ռենտային եկամուտն առաջանում է տարբեր իրավունքների փոխանցման արդյունքում, օրինակ՝ հողի օգտագործման և նրա ընդերքի վերամշակման իրավունքի, պատենտների և այլն:

ե) *Տոկոսը* մասնավոր բիզնեսի վճարումներն են կապիտալի մատակարարներին:

զ) *Շահույթը* սեփականությունից ստացված եկամուտներն են, որոնք ընդգրկում են ձեռնարկատիրական ունակությունների դիմաց ստացած եկամուտը կամ ինչպես անվանում են ոչ կորպորատիվ ձեռնարկատիրական ոլորտի եկամուտը (խոսքը վերաբերում է անհատական տնօրինման ձեռնարկությունների մաքուր եկամտին) և կորպորացիաների շահույթը: Վերջինից շահութահարկի և բաժնետոմսերի դիմաց դիվիդենտների վճարումից հետո մնում է կորպորացիայի չբաշխված շահույթը, որն ամորտիզացիայի հետ միասին օգտագործվում է սպառված սարքավորումների վերականգնման կամ նոր սարքավորումների գնման նպատակով:

**6.4.** Համախառն ազգային արդյունքի հիման վրա կարելի է հաշվարկել իրար հետ փոխկապակցված բազմաթիվ այլ ցուցանիշներ, որոնք բնութագրում են ազգային արտադրության մակարդակը տարբեր կտրվածքներով: ՀԱԱ-ի հիմնական թերությունն այն է, որ չափազանցումում, գունազարդում է արտադրության իրական վիճակը, քանի որ նրանում ընդգրկվում է նաև տարեկան արտադրության այն մասը, որը նախատեսված է ոչ թե սպառման, այլ տարվա ընթացքում մաշված կապիտալը փոխհատուցելու համար:

Ենթադրենք, թե 2000 թվականի հուլիսի 1-ի դրությամբ տնտեսության մեջ առկա են եղել 50,0 մլրդ. դոլարի ինվեստիցիոն ապրանքներ: Ընդունենք նաև, որ 2000 թվականին ՀԱԱ-ի ծավալը կազմել է 300,0 մլրդ. դոլար, որի արտադրության պրոցեսում սպառվել են 20,0 մլրդ դոլարի չափով մեքենաներ և սարքավորումներ: Այսպիսով, 2000 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա կամ կուտակված ինվեստիցիոն ապրանքների արժեքը կկազմի 30,0 մլրդ. դոլար: Հետևաբար ճիշտ կլինի ՀԱԱ-ի տարեկան ծավալից (300,0 մլրդ, դոլար) հանել տվյալ տարվա ընթացքում սպառված մեքենաների և սարքավորումների փոխհատուցման արժեքը (20,0 մլրդ դոլար): Այդ նպատակով հաշվարկվում է *զուտ ազգային արդյունքի ցուցանիշը*, որը որոշվում է համախառն ազգային արդյունքից ամորտիզացիան հանելու միջոցով:

$$\text{ՀԱԱ} = \text{ՀԱԱ} - \text{ամորտիզացիա}$$

Մեր օրինակում այն հավասար է 280,0 մլրդ դոլարի (300,0-20,0):

Այսպիսով, ՁԱԱ-ը ներկայացնում է ՀԱԱ-ը՝ ճշգրտված ամորտիզացիոն հատկացումների չափով: ՁԱԱ-ը կարելի է ամբողջությամբ սպառել, առանց վնասելու հետագա տարիների երկրի արտադրական հնարավորությունները:

Ձուտ ազգային արդյունքի որոշակի ճշգրտման արդյունքում մենք կստանանք մեկ այլ մակրոտնտեսական ցուցանիշ՝ ազգային եկամուտը, որը հնարավորություն կտա պատկերացում կազմել ռեսուրսների մատակարարների տվյալ տարվա եկամուտների վերաբերյալ, այսինքն, թե որքան ռեսուրսներ են սպառվել տվյալ ծավալի ազգային արտադրության իրականացման համար:

*Ազգային եկամուտը՝ (NI)*, տնտեսության ամբողջական եկամուտն է, որը ստանում են արտադրության գործոնների մատակարարները: Ազգային եկամուտը կարելի է հաշվարկել երկու եղանակներով՝ կամ ՁԱԱ-ից անուղղակի հարկերը հանելու միջոցով.

ԱԵ = ՁԱԱ - անուղղակի հարկեր բիզնեսից,  
կամ ռեսուրսների (հող, աշխատանք, կապիտալ, ձեռնարկատիրական ունակություն) դիմաց ստացած եկամուտները գումարելու միջոցով.

ԱԵ = ռենտա + աշխատավարձ + տոկոս + շահույթ:

Ինչպես արդեն նկատել ենք, ազգային եկամուտն արտադրության գործոնների դիմաց ստացած եկամուտների ընդհանուր գումարն է: Սակայն, կապված հարկային համակարգի առկայության հետ, այդ ամբողջ եկամուտը չի անցնում տնային տնտեսություններին՝ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման վրա ծախսելու նպատակով: Հետևապես, ազգային եկամուտը (աշխատած եկամուտը) և անձնական եկամուտը (ստացած եկամուտը) տարբեր մեծություններ են: Բանն այն է, որ աշխատած եկամտի մի մասը՝ սոցիալական ապահովագրության մուծումները (սոցիալական ապահովագրության վճարները), ֆիրմաների շահութահարկը և չբաշխված շահույթը, չեն անցնում տնային տնտեսություններին, միաժամանակ տնային տնտեսությունների եկամուտների մի մասը, օրինակ, տրանսֆերտային վճարումները, աշխատանքի արդյունք չեն: Հետևապես, ազգային եկամտի համապատասխան ճշգրտումների արդյունքում կստանանք անձնական եկամուտը՝ (PI) մինչև հարկերի գանձումը.

$$\begin{aligned} \text{Անձնական եկամուտը (PI)} &= \text{Ազգային եկամուտ} \\ (\text{մինչև հարկերի գանձումը}) &= \text{- սոցիալական ապահովագրության} \\ &= \text{հատկացումներ} \\ &= \text{- ձեռնարկությունների շահութահարկ} \\ &= \text{- ձեռնարկությունների չբաշխված} \\ &= \text{շահույթ} \\ &+ \text{տրանսֆերտային վճարումներ} \end{aligned}$$

Սակայն այդ եկամուտը նույնպես ենթակա է հարկման: Խոսքն անհատական հարկերի մասին է, որոնք բաղկացած են եկամտահարկից, անձնական ունեցվածքի և ժառանգության հարկերից: Անձնական եկամտից բոլոր տեսակի անհատական հարկերը հանելուց հետո ստացվում է *մաքուր կամ հարկերի վճարումից հետո մնացած* կամ *անձնական տնօրինման եկամուտը՝ (DI)*.

$$\begin{aligned} \text{Հարկերը վճարելուց հետո} &= \text{Անձնական եկամուտ} \\ \text{մնացած կամ անձնական} &= \text{(մինչև հարկերի գանձումը)} \\ \text{տնօրինման եկամուտը (DI)} &= \text{- անհատական հարկերը} \end{aligned}$$

*Անձնական տնօրինման եկամուտն* այն եկամուտն է, որը կարող է անմիջականորեն ծախսվել տնային տնտեսությունների կողմից: Սովորաբար այն բաժանվում է սպառողական ծախսերի և խնայողությունների: Սպառողական ծախսերն ընդգրկում են տնային տնտեսությունների գումարային ծախսերն ապրանքների և ծառայությունների վրա, բացառությամբ տան գնումը: Անձնական տնօրինման եկամտի մեծ մասը՝ շուրջ 90 տոկոսը, սպառողական ծախսերն են: Անձնական խնայողությունները տնօրինվող եկամտի այն մասն են, որը տնային տնտեսությունների կողմից օգտագործվում է հարստության կուտակման համար՝ բանկում իր հաշվին հավաքելու, պետական արժեթղթեր կամ բաժնետոմսեր կամ բնակարան գնելու միջոցով: Խնայողությունները կարող են օգտագործվել նաև հին պարտքերը մարելու համար: Քանի որ պարտքի կրճատումը բարձրացնում է տնային տնտեսությունների բարեկեցությունը, այն համարվում է խնայողության մաս:

Անձնական խնայողությունների բաժինը անձնական տնօրինման եկամտի մեջ կոչվում է *անձնական խնայողության նորմա*:

6.5. Ազգային արտադրության բոլոր մակրոտնտեսական ցուցանիշները դրամական մեծություններ են: Բնականաբար կարևոր նշանակություն է ստանում գների մակարդակի փոփոխության հարցը: Այն թույլ է տալիս պարզել .

ա) ինչպես են փոփոխվել գները որոշակի ժամանակամիջոցում, տեղի է ունեցել ինֆլացիա (գների մակարդակի աճ), թե դեֆլացիա (գների մակարդակի անկում),

բ) քանի որ ՀԱԱ-ը տարվա ընթացքում արտադրված բոլոր ապրանքների և ծառայությունների վերջնական շուկայական արժեքն է, դրամական ցուցանիշները, որպես առավել տարածված ցուցանիշներ, օգտագործվում են արտադրության ընդհանուր ծավալի տարրերը մեկ միասնական հիմքի բերելու համար: Տարբեր տարիների արտադրության ծավալների արժեքը կարող է համեմատվել միայն այն դեպքում, եթե դրամական միավորի արժեքը չի փոփոխվում: Արժեզրկված փողի պայմաններում ՀԱԱ-ն իր ֆիզիկական ծավալով կարող է անհամեմատ քիչ լինել, բայց իր դրամական արտահայտությամբ շատ երևալ: «X» արդյունքից կարող է արտադրվել ընդամենը մեկ հատ, բայց իր դրամական արտահայտությամբ գերազանցել նախորդ հարյուրին, որը չի նշանակում, թե տնտեսությունը վերելք է ապրել:

Գների փոփոխությունը կարելի է արտահայտել գների ինդեքսի տեսքով: Գների ինդեքսն արտահայտում է տվյալ ժամանակամիջոցում սպառողների մոտ ավելի մեծ պահանջարկ ունեցող ապրանքների և ծառայությունների որոշակի հավաքածուի, այսպես կոչված «շուկայական զամբյուղի» ամբողջական գնի և բազային ժամանակամիջոցում նույն կամ նմանատիպ ապրանքների և ծառայությունների ամբողջական գնի հարաբերությունը.

$$\text{Գների ինդեքսը} = \frac{\text{շուկայական զամբյուղի գինը տվյալ տարում}}{\text{նմանատիպ շուկայական զամբյուղի գինը բազային տարում}} \cdot 100$$

Եթե գների ինդեքսը մեծ է 100-ից, ապա տեղի է ունեցել ինֆլացիա, իսկ 100-ից փոքրի դեպքում՝ դեֆլացիա: Առավել տարածվածը սպառողական գների ինդեքսն է, որի օգնությամբ որոշվում է մի քանի հարյուրի հասնող ապրանքներ և ծառայություններ պարունակող սպա-

ռողական զամբյուղի ինդեքսը և բնութագրում է բնակչության կենսամակարդակի փոփոխությունները գների ազդեցության հետևանքով: Այդպիսի ինդեքսներ կարող են հաշվարկվել բազմաթիվ ապրանքների և ծառայությունների խմբերի, այդ թվում նաև ինվեստիցիոն ապրանքների համար:

ՀԱԱ-ի ինդեքսն ավելի լայն հասկացություն է, քան սպառողական գների ինդեքսը, քանի որ այն ընդգրկում է ոչ միայն սպառողական ապրանքների և ծառայությունների գները, այլ նաև ինվեստիցիոն, կառավարության կողմից գնվող ապրանքների, ինչպես նաև միջազգային շուկայում գնվող և վաճառվող ապրանքների և ծառայությունների գները: Այսպիսով.

- ՀԱԱ-ի գների ինդեքսի օգնությամբ յուրաքանչյուր տվյալ տարվա արտադրության ծավալի գինը կարելի է համեմատել բազային տարվա արտադրության ծավալի գների հետ՝ բազային տարում գործող գներով,

- տարբեր տարիների գների ինդեքսը թույլ է տալիս համեմատել գների մակարդակը,

- ՀԱԱ-ի գների ինդեքսի աճը տվյալ տարում, նախորդ տարվա համեմատությամբ, ցույց է տալիս, որ տեղի է ունեցել ինֆլացիա, ինդեքսի կրճատումը՝ դեֆլացիա:

6.6. Ինֆլացիան և դեֆլացիան բարդացնում են ՀԱԱ-ի հաշվարկը: Հարցի բացատրության համար անհրաժեշտ է տարբերել անվանական և իրական ՀԱԱ հասկացությունները: *Անվանական ՀԱԱ-ը* տվյալ տարվա արտադրության ծավալի արժեքն է, արտահայտած նույն տարվա գներով կամ տարադրամի փոփոխական կուրսով: Եթե այդ ցուցանիշն աճել է, դա նշանակում է, որ կամ տնտեսության մեջ տեղի է ունեցել արտադրության աճ, կամ ապրանքները և ծառայությունները սկսել են թանկ վաճառվել: Այսինքն ՀԱԱ-ի մեծության վրա ազդել են ինչպես արտադրված արդյունքի ֆիզիկական ծավալի փոփոխությունը, այնպես էլ գների մակարդակը: Հետևապես, ՀԱԱ-ի վերլուծության ժամանակ տնտեսագետները փորձում են սահմանազատել և որոշել, թե իրականում որքանով է աճել արտադրությունը՝ անկախ գների աճից: Դրա համար օգտագործվում է իրական ՀԱԱ-ի ցուցանիշը: *Իրական ՀԱԱ-ն* արտադրության ծավալի արժեքն է արտահայտված բազային կամ անփոփոխ գներով, կամ տարադրամի անփոփոխ կուրսով: Իրական ՀԱԱ-ի ցուցանիշը թույլ է տալիս պատասխանել այն հարցին, թե ինչպիսին կլինի ընթացիկ տարում արտադրված ապրանքների և ծառայությունների ար-



ժեքը, եթե այն արտահայտենք նախորդ տարիների գներով, ինչպես նաև որոշակի ժամանակամիջոցի համար կատարել համեմատական վերլուծություն:

Իրական ՉԱԱ-ը անվանական ՉԱԱ-ն է՝ հաշվի առած ինֆլյացիան կամ դեֆլյացիան: Այդ ճշգրտումներն անվանում են ինֆլյավորում կամ դեֆլյավորում: Տվյալ տարվա անվանական ՉԱԱ-ի դեֆլյավորման կամ ինֆլյավորման առավել պարզ և ուղղակի մեթոդն է անվանական ՉԱԱ-ի և գների ինդեքսի հարաբերությունը (հարյուրերորդական միավորներով):

$$\text{Իրական ՉԱԱ} = \frac{\text{Անվանական ՉԱԱ}}{\text{Գների ինդեքս (հարյուրերորդական միավորներով)}}$$

Ինֆլյացիայի դեպքում անվանական ՉԱԱ-ն ճշգրտվում է գների իջեցման ուղղությամբ, որը կոչվում է *դեֆլյավորում*: Դա նշանակում է, որ իրական ՉԱԱ-ն փոքր է ստացվում անվանականից, քանի որ գների աճի ազդեցությունը չեզոքացվում է: Դեֆլյացիայի դեպքում իրականացվում է անվանական ՉԱԱ-ի ճշգրտում գների բարձրացման ուղղությամբ, որն էլ կոչվում է *ինֆլյավորում*, և իրական ՉԱԱ-ն մեծ է ստացվում անվանականից:

Որքանով իրական ՉԱԱ-ն արտահայտում է ապրանքների և ծառայությունների արտադրության փաստացի ծավալը, այն առավել ճշգրիտ պատկերացում է տալիս բնակչության պահանջմունքների բավարարման տնտեսության հնարավորությունների մասին: Միաժամանակ, անվանական և իրական ՉԱԱ-ի միջոցով կարող ենք հաշվարկել ևս մի կարևոր տնտեսական ցուցանիշ՝ ՉԱԱ-ի դեֆլյատորը, որն արտահայտում է ընթացիկ գների մակարդակի և բազիսային շրջանի գների մակարդակի հարաբերությունը: Այսինքն, ՉԱԱ-ի դեֆլյատորը բնութագրում է ոչ թե արտադրության ծավալի, այլ գների հարաբերական փոփոխությունը:

$$\text{ՉԱԱ-ի դեֆլյատոր} = \frac{\text{Անվանական ՉԱԱ}}{\text{Իրական ՉԱԱ}} \cdot 100$$

Բանաձևը ցույց է տալիս, որ ապրանքների և ծառայությունների արժեքի փոփոխությունը՝ առանց դրանց ծավալների փոփոխության

ազդում է միայն ՉԱԱ-ի անվանական, այլ ոչ թե իրական ցուցանիշի վրա:

**6.7.** Թեմայի սկզբում նկատել ենք, որ ՉԱԱ-ը հասարակության տնտեսական բարեկեցությունը բնութագրող լավագույն ցուցանիշն է: ՉԱԱ-ի բարձր ցուցանիշը հնարավորություն է տալիս բարելավել մարդկանց կյանքը: ՉԱԱ-ը չի արտահայտում երեխաների առողջական վիճակը և ուսուցման որակը, չի որոշում մարդկանց կուլտուրան կամ ազնվությունը, բայց թույլ է տալիս, որ երկիրը նշանակալից ծախսեր կատարի առողջապահության և կրթության վրա, հեշտացնելով մարդկանց ամենօրյա նյութական խնդիրները՝ դրանով իսկ լուծի նաև այլ հարցեր: Ու թեև ՉԱԱ-ի և տնտեսական բարեկեցության միջև գոյություն ունի դրական հարաբերակցություն (կոռելյացիա), այնուամենայնիվ, այն գերօ չէ թերություններից:

- գոյություն ունեն մի շարք արտադրողական գործարքներ, որոնք շուկայում չեն արտացոլվում (տնային տնտեսուհու կամ հյուսնի աշխատանքը, որը վերանորոգում է սեփական տունը, կամավորական տարբեր գործունեությունները, գիտնականի աշխատանքը, որը գիրք է գրում առանց վարձատրության և այլն), հետևաբար չեն հաշվառվում ՉԱԱ-ի մեջ,

- ՉԱԱ-ն առաջին հերթին քանակական, և ոչ թե որակական ցուցանիշ է: Այն չի արտահայտում ապրանքների որակի բարելավումը և դրա հետ կապված մարդկանց բարեկեցության աճը,

- ՉԱԱ-ը պատկերացում է տալիս արտադրության ընդհանուր ծավալի մասին որպես «ապրանքների հավաքածու»: Ջենքը և հագուստը, որոնք կարող են իրացվել միևնույն գնով, ՉԱԱ-ի կազմում ունեն միևնույն կշիռը, հետևապես այն չի արտահայտում արտադրության կազմի և բաշխման փոփոխությունները,

- ՉԱԱ-ը չի արտահայտում հասարակության էկոլոգիական հիմնախնդիրները: Եթե պետությունը վերացնեք շրջակա միջավայրի պահպանության մասին օրենքները, ձեռնարկությունները տնտեսած միջոցների հաշվին կսկսեին ավելի շատ արտադրանք թողարկել: Սակայն շրջակա միջավայրի աղտոտման հետևանքներն արտադրության աճի դրական արդյունքներն ի չիք կդարձնեին,

- Հայտնի է, որ ամեն մի երկրում առկա է որոշակի չափերի հասնող ստվերային տնտեսություն, որի եկամուտները թաքցվում են՝ հարկերի վճարումից խուսափելու համար և հաշվի չեն առնվում ՉԱԱ-ի մեջ: Միա-

ժամանակ, ստվերային տնտեսության մեջ զբաղվածների թվի չափով տեղի է ունենում գործազրկության մակարդակի բարձրացում: Իրականում ընդգրկված լինելով ստվերային տնտեսության մեջ, աշխատուժի մի մասը գրանցված է որպես գործազուրկ՝ ստանալով նպաստ:

Այսպիսով, թեև ընդհանուր առմամբ ՀԱԱ-ն արտահայտում է հասարակական բարեկեցությունը, այնուամենայնիվ, հաշվի չի առնում կենսամակարդակը կազմող մի շարք որակական կարևոր բաղկացուցիչներ:

## ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

**7.1. Գործազրկությունը և նրա ձևերը:**

**7.2. Գործազրկության բնական մակարդակը:**

**7.3. Նվազագույն աշխատավարձ, արհմիություններ, էֆեկտիվ աշխատավարձ և գործազրկություն կապը:**

**7.4. Գործազրկության տնտեսական և սոցիալական ծախսերը:**

**7.1.** «Լրիվ զբաղվածություն» հասկացությունը վերացական հասկացություն է: Այն չի ենթադրում ռեսուրսների, այդ թվում նաև աշխատուժի հարյուր տոկոսանոց զբաղվածություն: Տնտեսապես ակտիվ բնակչության մի մասը զբաղված չէ ապրանքների և ծառայությունների արտադրության մեջ, այսինքն՝ գտնվում է գործազուրկի վիճակում:

XX դարի 30-ական թվականների «մեծ դեպրեսիային» հաջորդող տասնամյակներում տիրապետում էր այն կարծիքը, թե անհրաժեշտ է ամեն գնով խուսափել գործազրկությունից: Նկատենք, որ մեծ ճգնաժամի տարիներին կապիտալիստական աշխարհի արդյունաբերությունը կրճատվեց գրեթե կիսով չափ, գործազրկությունը հասավ աննախադեպ մասշտաբների: Վերջին տասնամյակներին տնտեսագիտական գրականության մեջ այն դիտվում է որպես դինամիկ տնտեսության մեջ կատարվող փոփոխությունների հետևանք՝ որոշակի մակարդակի գործազրկությունը համարելով նորմալ և արդարացված երևույթ:

Գործազրկության երևույթը պայմանավորված է բազմաթիվ գործոններով: Առանձնացվում են գործազրկության հետևյալ հիմնական ձևերը.

ա) *ֆրիկցիոն գործազրկություն*, որը պայմանավորված է աշխատանքի և աշխատատեղերի ընտրության ազատությամբ և վերաբերում է այն անձանց, ովքեր աշխատանք են փնտրում կամ սպասում գտնել այն մոտ ապագայում: Այսպիսի գործազրկությունն անխուսափելի է, ծագում է աշխատուժի կամքով՝ իր հիմքում ունենալով աշխատանքի պայմանների փոփոխության, վարձատրության, տեղի, նախասիրությունների, մասնագիտական կողմնորոշման, սեզոնային աշխատանքը կորցնելու դրդապատճառները: Այս պատճառներով պայմանավորված գործազուրկներն անընդհատ փոխարինում են միմյանց, ուստի գործազրկության այս ձևը մշտապես առկա է: Այն համարվում է ցանկալի, քանի որ մեծ մասամբ կապված է ցածր վարձատրվող աշխատանքից բարձր

վարձատրվող աշխատանքի անցնելու հետ, իսկ դա նշանակում է՝ բարձր եկամուտներ և աշխատանքային ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխում, հետևապես նաև ազգային արդյունքի ավելի մեծ ծավալ: Գոյություն ունեն նաև այնպիսի պատճառներ, որոնց հետ կապված մարդիկ գերադասում են լինել գործազուրկ: Որոշ մարդկանց համար գործազրկությունը ռացիոնալ լուծում է՝ կապված, օրինակ, հարկերի վճարման պարտավորությունների, նպաստ ստանալուց զրկվելու հետ (ցածր վարձատրվող աշխատանքը տրանսպորտային ծախսերի հետ միասին ֆինանսական իմաստով դառնում է քիչ գերադասելի, քան գործազրկությունը) և այլն:

Կամավոր գործազրկության նշված ձևերը մեծ նշանակություն չունեն ինչպես քանակական, այնպես էլ տնտեսական առումներով: Ամբողջական պահանջարկի բարձրացման միջոցով դրանց կրճատման փորձերը մեծ արդյունքներ տալ չեն կարող և ավելի շատ կունենան ինֆլացիոն հետևանքներ,

բ) *կառուցվածքային գործազրկություն*, որը պայմանավորված է սպառողական պահանջարկի և տեխնոլոգիայի փոփոխություններով, որոնք իրենց հերթին բերում են նաև աշխատուժի նկատմամբ ընդհանուր պահանջարկի կառուցվածքի փոփոխության: Արդյունքում, որոշ մասնագիտությունների նկատմամբ պահանջարկը կրճատվում է կամ ընդհանրապես վերանում, իսկ նոր մասնագիտությունների նկատմամբ՝ աճում: Մասնագիտական գիտելիքները սկսում են չհամապատասխանել շուկայի պահանջներին: Աշխատուժը դանդաղ է արձագանքում այդ փոփոխություններին: Առկա աշխատուժի կազմի և աշխատատեղերի նոր կառուցվածքի միջև առաջանում է անհամապատասխանություն: Այստեղից էլ ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունների տարբերությունները.

- ֆրիկցիոն գործազուրկները գիտելիքներ ունեն, որոնք կարող են վաճառել, կառուցվածքային գործազուրկներն աշխատանք գտնելու համար պետք է վերաորակավորվեն, փոխեն մասնագիտությունը կամ բնակության վայրը,

- ֆրիկցիոն գործազրկությունն ունի համեմատաբար կարճատև բնույթ, իսկ կառուցվածքայինը՝ տևական ու ավելի էական:

Այսպիսով, կառուցվածքային գործազրկությունն առաջանում է աշխատանքի շուկայում պահանջարկի և առաջարկի անհամապատասխանության հետևանքով, որը կարող է պայմանավորված լինել.

- գիտատեխնիկական առաջընթացի գործողությամբ, որը կանխորոշում է որոշ ճյուղերի և մասնագիտությունների առաջացումը և մյուսների վերացումը,

- երկրի ճյուղերի և տնտեսական շրջանների ոչ համամասնական զարգացմամբ,

- աշխատատեղերի բաշխման աշխարհագրական առանձնահատկություններով,

- միկրոմակարդակում կատարվող տնտեսական գործընթացներով, ինչպիսիք են որոշ ֆիրմաների սնանկացումը, որն ուղեկցվում է աշխատուժի ազատմամբ և նոր աշխատատեղերի առաջացմամբ:

Աշխատուժի շուկայում աշխատանքի նկատմամբ պահանջարկը և առաջարկը իր ամբողջության մեջ կարող են նաև քանակապես համապատասխանել, սակայն տարբեր շրջաններում, ճյուղերում, առանձին մասնագիտությունների գծով իրավիճակը կարող է տարբեր լինել՝ մի տնտեսական շրջանում կամ ճյուղում այս կամ այն մասնագիտական խմբի նկատմամբ կարող է լինել աշխատանքի պահանջարկ, իսկ մյուսում՝ ավելցուկ,

գ) *ցիկլային գործազրկություն*ն առաջանում է տնտեսական անկումների ժամանակ, կապված իրական ՀԱԱ-ի կրճատման հետ: Այն բնութագրվում է ամբողջական ծախսերի անբավարարությամբ, իսկ երբ ապրանքների և ծառայությունների նկատմամբ ամբողջական պահանջարկը կրճատվում է՝ զբաղվածությունը նվազում է, իսկ գործազրկությունն՝ աճում:

Բացի վերը նշված հիմնական ձևերից, գրականության մեջ առանձնացվում են նաև թաքնված գործազրկություն ( նրանք, ովքեր գտնվում են հարկադրական արձակուրդում, աշխատում են ոչ լրիվ աշխատանքային օր, աշխատում են, բայց աշխատավարձ չեն ստանում), ինստիտուցիոնալ գործազրկություն (կապված գործազրկության վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկատվության կամ դրա բացակայության, բարձր գործազրկության նպաստների առկայության հետ, որը թուլացնում է աշխատելու խթանը) և այլ ձևեր:

Ակներև է, որ ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունների առկայությունը միանգամայն անխուսափելի է, այսինքն, «լրիվ զբաղվածությունը» չի նշանակում գործազրկության բացարձակ բացակայու-

թյուն: Եթե զրոյական գործազրկությունն անհնար է, ապա ինքնաբերաբար հարց է առաջանում, թե գործազրկության որ մակարդակը համարել նպատակային: Տնտեսագետներն այս առումով օգտագործում են գործազրկության բնական նորմա հասկացությունը:

**7.2.** Գործազրկության մակարդակը լրիվ զբաղվածության պայմաններում հավասար է ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկության մակարդակների գումարին: Այլ խոսքերով, տնտեսությունը լրիվ զբաղվածության մակարդակի հասնում է այն ժամանակ, երբ ցիկլային գործազրկությունը հավասար է զրոյի: Հետևապես, գործազրկության բնական մակարդակը համապատասխանում է տնտեսության կայուն վիճակին, որի շուրջը տեղի են ունենում կարճատև տատանումները: Ազգային արդյունքի իրական ծավալը, որը կապված է գործազրկության բնական մակարդակի հետ, կոչվում է *տնտեսության արտադրական պոտենցիալ*: Միաժամանակ «գործազրկության բնական մակարդակ» հասկացությունը որոշ ճշգրտումների կարիք ունի.

ա) այն չի նշանակում, թե տնտեսությունը մշտապես գործում է գործազրկության բնական նորմայի մակարդակում և դրանով իսկ իրացնում իր արտադրական պոտենցիալը: Գործազրկության մակարդակը հաճախ կարող է գերազանցել բնական մակարդակը, իսկ առանձին դեպքերում այն կարող է նաև ցածր լինել բնական մակարդակից (օրինակ, հատկապես պատերազմների ժամանակ տնտեսության մեջ մեծանում է աշխատուժի պահանջարկը և արտաժամյա կամ համատեղությամբ աշխատանքները դառնում են սովորական երևույթներ),

բ) գործազրկության բնական մակարդակը մշտապես տրված հաստատուն մակարդակ չէ, այն կարող է փոփոխվել հասարակության ինստիտուցիոնալ (օրենքների, սովորությունների) փոփոխությանը զուգընթաց: 1960-ական թվականներին ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկության անխուսափելի նվազագույն մակարդակ էր համարվում աշխատուժի չորս տոկոսը: Այսինքն, աշխատուժի 96 տոկոս զբաղվածությունը համարվում էր լրիվ զբաղվածություն: Այժմ գործազրկության բնական մակարդակ է համարվում 5-6 տոկոսը: Այդ փոփոխությունը պայմանավորված է հետևյալ պատճառներով.

- փոխվել է աշխատուժի դեմոգրաֆիական կազմը: Կանայք և երիտասարդները (որոնց շրջանում գործազրկությունը սովորաբար բարձր է), դարձել են աշխատուժի կարևոր բաղկացուցիչ,

- տեղի են ունեցել ինստիտուցիոնալ փոփոխություններ: Ընդլայնվել են գործազրկության համար տրվող նպաստների ծրագրերն ինչպես չափերի, այնպես էլ նրանում ընդգրկվողների առումներով: Բարձր նպաստները թուլացնում են մարդկանց կապվածությունը հին աշխատանքի հետ, իսկ ընտանիքի այլ անդամների աշխատանքի դեպքում գործազուրկները հնարավորություն են ստանում հանգիստ աշխատանք փնտրել, որը տանում է ֆրիկցիոն գործազրկության, հետևապես նաև գործազրկության ընդհանուր մակարդակի բարձրացմանը:

Գործազրկության մակարդակը որոշելու համար 16 տարեկանից բարձր ամբողջ բնակչությունը բաժանվում է երեք մեծ խմբերի. զբաղվածներ (աշխատանք ունեցողներ), գործազուրկներ (աշխատանք փնտրողներ), աշխատուժի կազմից դուրս մնացածներ (ուսանողներ, տնային տնտեսուհիներ, թոշակառուներ):

Այսպիսով, ամբողջ աշխատուժը հավասար է զբաղվածների (աշխատողներ) և գործազուրկների թվերի գումարին: Այստեղից՝ գործազրկության մակարդակը հաշվարկվում է որպես գործազուրկների թվի և ամբողջ աշխատուժի թվի տոկոսային հարաբերություն.

$$\text{գործազրկության մակարդակը} = \frac{\text{գործազուրկների թիվը}}{\text{աշխատուժի թիվը}} \times 100$$

Գործազրկության մակարդակի ցուցանիշը հաշվարկվում է ինչպես ամբողջ չափահաս բնակչության, այնպես էլ առանձին սոցիալական խմբերի համար: Իսկ չափահաս բնակչության ընդհանուր թվի մեջ աշխատուժի բաժինը հաշվարկվում է այսպես.

$$\frac{\text{աշխատուժի թիվը}}{\text{չափահաս բնակչության թիվը}} \times 100$$


Վերջինս արտահայտում է աշխատանքի շուկայում առկա բնակչության բաժինը:

Գործազրկության փաստացի մակարդակի հստակ որոշումը կապված է որոշակի դժվարությունների հետ: Աշխատուժի մի մասը կարող է զբաղված լինել ոչ լրիվ աշխատանքային օրվա ընթացքում, սակայն դասվել ինչպես լրիվ զբաղվածների, այնպես էլ գործազուրկների խմբերին: Մյուս մասը հուսահատվել ու դադարել է աշխատանք փնտրել, որի պատճառով էլ գրանցված չէ որպես գործազուրկ և պարզապես դուրս է մնացել աշխատուժի կազմից: Աշխատանքային ռեսուրսների որոշ մասը զբաղված է սովերային տնտեսությունում, սակայն գործազրկության նպաստ ստանալու կամ որևէ այլ շարժառիթով շարունակում է գրանցվել որպես գործազուրկ՝ արհեստականորեն բարձրացնելով այս ցուցանիշի մակարդակը:

**7.3.** Ինչպես արդեն նկատել ենք, շուկայական տնտեսության պայմաններում գների մեխանիզմը հավասարակշռում է ապրանքների և ծառայությունների առաջարկը և պահանջարկը: Աշխատանքի իդեալական շուկայում այդպիսի կարգավորիչի դերը կատարում է աշխատավարձը, որը պետք է բուրդի համար երաշխավորի աշխատանք: Բայց իրական կյանքում, նույնիսկ տնտեսական վերելքների ժամանակ, միշտ առկա է լինում գործազուրկների որոշակի քանակություն: Գրականության մեջ նշվում են այդ երևույթը պարզաբանող որոշակի պատճառներ, որոնց հետ կապված իրական շուկան չի ապահովում բացարձակ զբաղվածություն:

ա) նվազագույն աշխատավարձի սահմանումը որպես գործազրկության պատճառ: Աշխատավարձի նվազագույն մակարդակի և գործազրկության միջև գոյություն ունեցող կապի մասին հստակ պատկերացում է տալիս գրաֆիկ 7.1-ը:

Առանց նվազագույն աշխատավարձի զբաղվածությունը կլիներ  $N_0$  մակարդակի, իսկ աշխատավարձը՝  $W_0$  մակարդակի վրա:  $E$  կետում առաջարկը հավասար է պահանջարկին, այսինքն, զբաղվածության մակարդակը որոշվում է պահանջարկով և առաջարկով: Ընդունենք, թե սահմանվում է նվազագույն աշխատավարձ՝  $W_{min}$ , որը բարձր է, քան հավասարակշռված մակարդակը ( $W_0$ ):  $W_{min}$  աշխատավարձի պայմաններում աշխատել ցանկացողների թիվը մեծանում է հավասարակշռված մակարդակի համեմատությամբ  $N_2-N_0$ -ի չափով: Սակայն ձեռնարկատերերն աշխատողներ են վարձում միայն  $N_1$ -ի չափով՝ առաջ բերելով լրացուցիչ գործազրկություն  $N_2-N_1$ -ի չափով:



Այսպիսով, եթե նվազագույն աշխատավարձի սահմանման արդյունքում նրա մակարդակը գերազանցում է հավասարակշռության կետը, աշխատանքի առաջարկն աճում է, իսկ պահանջարկը՝ կրճատվում, որի արդյունքում առաջանում է առաջարկի ավելցուկ և գործազրկություն:

բ) Արհմիությունների գործունեությունը. տնտեսության մեջ արհմիությունների ունեցած դերի մասին առկա են հակասական կարծիքներ: Տնտեսագետների մի մասը գտնում է, որ երբ արհմիությունների ճնշման հետևանքով աշխատավարձը բարձրանում է աշխատանքի շուկայում արդեն ձևավորված մակարդակից, ապա դա տանում է աշխատանքի առաջարկի աճի, գործազրկության ավելացման և աշխատավարձի իջեցման տնտեսության մյուս հատվածներում: Արդյունքում տեղի է ունենում աշխատուժի ոչ արդյունավետ և ոչ արդարացի օգտագործում: Ոչ արդյունավետ այն առումով, որ զբաղվածությունն իջնում է աշխատողների միջև առողջ մրցակցությունն ապահովող մակարդակից ցածր: Իսկ ոչ արդարացի, որքանով աշխատողների մի մասի սոցիալական վիճակի բարելավումն իրականացվում է մյուսների վիճակի վատացման հաշվին:

Տնտեսագետների մի այլ մասն այն կարծիքին է, թե արհմիությունները հակակշիռ են ձեռնարկատերերին և պաշտպանում են աշխատողների շահերը՝ աշխատավարձի մակարդակի կամայական իջեցումների,

աշխատանքային պայմանների, աշխատանքից ազատելու հարցերում կամ էլ մասնակցում աշխատանքային շաբաթվա տևողության, արձակուրդների, արտաժամյա աշխատանքների համար վճարման չափերի, որակավորման բարելավման հետ կապված խնդիրների կարգավորմանը:

գ) էֆեկտիվ աշխատավարձի տեսությունը, ըստ որի ֆիրմայի աշխատողների աշխատանքը դառնում է ավելի էֆեկտիվ, եթե նրանց աշխատավարձը գերազանցում է հավասարակշռված մակարդակը: Այդ պատճառով աշխատուժի նույնիսկ ավելցուկային առաջարկի պայմաններում ֆիրմային ձեռնու է աշխատավարձը պահել բարձր մակարդակի վրա, որը գործազրկության մակարդակի վրա ունենում է նույն ազդեցությունն, ինչպիսի նվազագույն աշխատավարձն ու արհմիությունների գործունեությունը: Հավասարակշռված մակարդակը գերազանցող աշխատավարձի տնտեսական շահեկանությունը հիմնավորվում է այն փաստարկներով, որ բարձր եկամուտները երաշխավորում են բանվորների առողջությունը, կրճատում են աշխատուժի հոսունությունը, խթանում որակյալ մասնագետների ներհոսքը, դրանով իսկ կրճատելով արտադրության ծախսերն ու բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը:

Եթե նվազագույն աշխատավարձի մասին օրենքը և արհմիությունները թույլ չեն տալիս ֆիրմաներին կրճատել աշխատողների եկամուտները նույնիսկ աշխատուժի ավելցուկային առաջարկի պայմաններում, ապա էֆեկտիվ աշխատավարձի տեսությունն, ընդհակառակը, բարձր աշխատավարձը դիտում է որպես արդյունավետ աշխատանքի նախապայման:

**7.4.** Գործազրկությունը, երբ հասնում է «պրոբլեմային մակարդակի», այսինքն՝ գերազանցում է բնական մակարդակը, իր հետ բերում է մեծ տնտեսական և սոցիալական ծախսեր: Առաջին հերթին գործազրկության գլխավոր գինը չթողարկվող արտադրանքն է, այսինքն չարտադրված ՀԱԱ-ի որոշակի ծավալը: Մակրոտնտեսագիտության հայտնի հետազոտող Արթուր Օուկենն այդ կապն արտահայտել է մաթեմատիկորեն: Ըստ Օուկենի օրենքի, եթե գործազրկության փաստացի մակարդակը գերազանցում է բնական մակարդակը 1 տոկոսի չափով, ապա ՀԱԱ-ը ետ է ընկնում 2,5 տոկոսով: Դա նշանակում է՝ որպեսզի գործազրկության մակարդակը չբարձրանա, անհրաժեշտ է ՀԱԱ-ի տարեկան մեծության որոշակի աճ: Այլ կերպ ասած, նոր աշխատատեղերի ստեղծ-

ման համար, որը գործազրկությունը կպահի նախկին մակարդակի վրա, անհրաժեշտ է որպեսզի իրական ՀԱԱ-ն աճի տարեկան 2,5-3 տոկոսով: Օուկենի օրենքն ուշադրություն է սևեռում մի կարևոր երևույթի վրա, թե ինչպիսին պետք է լինի տնտեսական աճը, որպեսզի լուծվի գործազրկության հիմնահարցը: Այն ենթադրում է, որ գործազրկության նորման արագ կամ դանդաղ կունուլյատիվ տնտեսական աճի արդյունք է: Բնական մակարդակը մի քանի անգամ գերազանցող գործազրկության կրճատման համար կարող է պահանջվել ինտենսիվ աճի երկարատև ժամանակահատված: Բարձր գործազրկությունը ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական աղետ է. աշխատուժը կորցնում է իր որակավորումը, մարդիկ կորցնում են սեփական անձի նկատմամբ հարգանքը, քայքայվում են ընտանիքները, այն հաճախ պատճառ է դառնում հասարակական և քաղաքական անկարգությունների, աճում են թմրամոլությունը, գողությունը, մարմնավաճառությունը, հոգեկան խանգարումները և այլն: Երևույթներ, որոնց ծախսերը տնտեսականի համեմատությամբ ավելի դժվար են փոխհատուցվում:

## ԳԼՈՒԽ 8. ԻՆՖԼԱՅՑԻԱ : ՊԱՏՃԱՌՆԵՐԸ և ԾԱԽՔԵՐԸ

**8.1.** Նախնական դիտողություններ:

**8.2.** Ինֆլյացիայի պատճառները և ձևերը:

**8.3.** Ինֆլյացիայի ազդեցությունը եկամուտների վերաբաշխման և ազգային արտադրության ծավալների վրա:

**8.4.** Ընտրություն գործազրկության և ինֆլյացիայի միջև. Օլբան Ֆիլիպսի կորը:

**8.1.** Ինֆլյացիան արդի տնտեսական կյանքի բնորոշ երևույթներից է: Հագիվ թե գտնվի մի երկիր, որտեղ ինֆլյացիա գոյություն չունենա:

Հայտնի է, որ ինչպես փողը, այնպես էլ ապրանքները գին ունեն: Եթե ապրանքների գինն արտահայտվում է փողի որոշակի քանակության մեջ, ապա փողի գինը՝ ապրանքների քանակության մեջ, որոնք կարելի է ձեռք բերել փողի որոշակի քանակով: Այդ պատճառով էլ փողի գինը ստացել է «գնողունակություն» անվանումը: Վերջինս փոփոխվում է, կարող է բարձրանալ կամ իջնել: Դա կապված է ապրանքների գների փոփոխության հետ. եթե դրանք աճում են, ապա փողի միևնույն քանակով կարելի է գնել քիչ ապրանքներ, և փողի գնողունակությունն իջնում է, իսկ եթե ապրանքների գներն իջնում են, ապա փողի մույն գումարով կարելի է գնել շատ ապրանքներ, և փողի գնողունակությունն աճում է: Հետևապես, փողի գնողունակությունն ապրանքների և ծառայությունների գների մակարդակի նկատմամբ գտնվում է հակադարձ կախվածության մեջ:

Փողի գնողունակության անկումը, կապված գների աճի հետ, անվանում են ինֆլյացիա (փողի գնողունակության բարձրացումը, կապված գների իջեցման հետ, անվանվում է դեֆլյացիա):

Ինֆլյացիայի ելությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ

ա) ինֆլյացիան մակրոտնտեսական երևույթ է, որն ընդգրկում է ամբողջ տնտեսությունը, բոլոր ապրանքների և ծառայությունների գները: Դա նշանակում է, որ գների ինֆլյացիոն աճն անհրաժեշտ է տարբերել առանձին շուկաներում «հավասարակշռված գին» սահմանելու նպատակով պահանջարկի և առաջարկի մանրայնությունից: Օրինակ, գները կարող են բարձրանալ՝ կապված արտադրանքի որակի բարե-

լավման, հանքահումքային ռեսուրսների արդյունահանության պայմանների կամ հասարակական պահանջումների փոփոխությունների հետ, սակայն դա արդեն ոչ թե ինֆլյացիոն երևույթ է, այլ առանձին ապրանքների գների արդարացված աճ,

բ) ինֆլյացիա ասելով նկատի է առնվում ոչ թե գների ցանկացած, այլ միայն այնպիսի աճ, որն իջեցնում է փողի գնողունակությունը, արժեզրկում է փողը,

գ) ինֆլյացիան վերջին հաշվով արտահայտվում է ապրանքների շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակի ավելացման (նաև կուտակման), իսկ դեֆլյացիան՝ դրա նվազման ձևով:

**8.2.** Ինֆլյացիան, որպես գների միջին մակարդակի աճ, ներկայացվում է իբրև դրամական զանգվածի և ապրանքային զանգվածի ծավալների աճի հարաբերակցության արդյունք: Այսինքն՝


$$\text{ինֆլյացիայի մակարդակը} = \frac{\text{փողի քանակի աճը (տոկոսներով)}}{\text{ապրանքների քանակի աճը (տոկոսներով)}}$$

Բանաձևից ակներև է, որ ինֆլյացիան առաջանում է կամ ապրանքների քանակի կրճատման, կամ փողի քանակի ավելացման հետևանքով: Այստեղից էլ ինֆլյացիան սանձելու երկու մոտեցումները՝ կամ կրճատել դրամական զանգվածը, կամ ավելացնել ապրանքային զանգվածը: Ահա թե ինչու տնտեսագետներն առանձնացնում են ինֆլյացիայի երկու հիմնական պատճառներ՝ պահանջարկի ինֆլյացիա և արտադրության ծախքերի աճով կամ առաջարկի կրճատմամբ պայմանավորված ինֆլյացիա:

ա) *Պահանջարկի ինֆլյացիա.* ավանդաբար գների մակարդակի փոփոխությունը բացատրվում է ավելցուկային ամբողջական պահանջարկով: Տնտեսությունը փորձում է ավելի շատ ծախսել, քան ընդունակ է արտադրելու, այսինքն՝ ձգտում է արտադրական հնարավորությունների կորից դուրս որևէ կետի: Սակայն, արտադրությունն ի վիճակի չէ բավարարել այդ ավելցուկային պահանջարկը, քանի որ ունեցած բոլոր ռեսուրսներն արդեն ամբողջությամբ օգտագործված են: Հետևապես, արդյունքի որոշակի հաստատուն ծավալի նկատմամբ ավելցուկային պահանջարկի աճն էլ ծնում է գների բարձրացում և առաջ բերում պահանջարկի ինֆլյացիա: Շրջանառության մեջ ավելի շատ փող է հայտնվում,

քան ապրանքների ու ծառայությունների ընդհանուր քանակն է: Ինչպես ասվում է, «չափից շատ փողը որսում է չափից քիչ ապրանքներ»:

Պահանջարկի ինֆլյացիան կարելի է արտահայտել գրաֆիկորեն.



Գրաֆիկ 8.1

Կորի առաջին հատվածում (տնտեսությունը գտնվում է ճգնաժամի փուլում) ամբողջական ծախսերն (սպառողական ծախսեր, ինվեստիցիաներ, պետական գնումներ և զուտ արտահանում) այնքան ցածր են, որ ազգային արտադրության իրական ծավալը զգալիորեն ետ է մնում այն առավելագույն մակարդակից, որը կարելի էր ապահովել, եթե տնտեսությունն աշխատեր ռեսուրսների լրիվ զբաղվածության պայմաններում: Գործազրկության մակարդակը բարձր է, իսկ ձեռնարկությունների արտադրական հզորությունների մեծ մասը չի օգտագործվում: Այժմ ենթադրենք, թե ամբողջական պահանջարկն աճում է: Այս դեպքում արտադրության ծավալը կմեծանա, գործազրկության մակարդակը կիջնի, իսկ գների մակարդակը կբարձրանա աննշան չափով կամ բոլորովին չի փոփոխվի: Դա բացատրվում է նրանով, որ առկա են հսկայական քանակությամբ պարապ աշխատանքային և նյութական ռեսուրսներ, որոնք կարելի է մտցնել գործողության մեջ՝ դրանց նկատմամբ առկա ցածր գների պայմաններում: Գործազրկին աշխատանքի ընդունվելու ժամանակ չի պահանջում աշխատավարձի բարձրացում, որի հետևանքով արտադրության ծավալը մեծանում է, իսկ գները չեն բարձրանում:

Աստիճանաբար պահանջարկի աճի հետ տնտեսությունը մտնում է

երկրորդ հատվածը՝ մոտենալով լրիվ զբաղվածությանը և ունեցած ռեսուրսների ավելի լրիվ օգտագործմանը: Սակայն նկատենք, որ գների մակարդակը կարող է բարձրանալ մինչև լրիվ զբաղվածության հասնելը: Եվ դա այն պատճառով, որ արտադրության ընդլայնման հետ պարապ ռեսուրսների պաշարները միանգամից չեն վերանում տնտեսության բոլոր հատվածներում և արդյունաբերության բոլոր ճյուղերում: Գյուղերի մեծ մասում դեռևս շարունակում են առկա լինել ավելցուկային արտադրական հզորություններ, իսկ որոշ ճյուղեր էլ մյուսներից շուտ ամբողջությամբ օգտագործում են իրենց արտադրական հնարավորությունները և չեն կարողանում իրենց ապրանքների արտադրությամբ բավարարել աճող պահանջարկը: Ուստի գները սկսում են աճել: Աշխատանքի շուկայում աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճի հետ սկսում է բարձրանալ աշխատավարձը, որը տանում է արտադրության ծախսերի մեծացմանը, հետևապես նաև գների աճին:

Կորի երրորդ ուղղահայաց հատվածում, բոլոր ճյուղերը հասնում են լրիվ զբաղվածության: Ազգային արդյունքի իրական ծավալը հասնում է իր մաքսիմումին: Արտադրության հետագա ընդլայնումը դառնում է անհնար: Տնտեսության արտադրական հնարավորությունները գերազանցող ամբողջական պահանջարկն առաջացնում է գների բարձրացում և ինֆլյացիա:

բ) *Արտադրության ծախսերի աճի կամ ամբողջական առաջարկի կրճատման հետ կապված ինֆլյացիա.* քանի որ այս ինֆլյացիայի պատճառը կապված է արտադրության հետ, այն այլ կերպ անվանում են «ծախսերի ինֆլյացիա»: Վերջինս առաջանում է այն դեպքում, երբ արտադրանքի միավորի արտադրության ծախսերն աճում են կապված, օրինակ, էներգակիրների թանկացման, աշխատավարձի մակարդակի բարձրացման և, ընդհանրապես, բոլոր ռեսուրսների գների աճի հետ: Արտադրանքի միավորի ծախսերի բարձրացումը կրճատում է շահույթները և արտադրության այն ծավալները, որը ձեռնարկությունները պատրաստ են առաջարկել գների տվյալ մակարդակի պայմաններում: Իսկ ապրանքների ու ծառայությունների առաջարկի կրճատումն իր հերթին կբերի գների աճի: Ինֆլյացիայի այս տեսակը հատկապես վտանգավոր է նրանով, որ այն վերաճում է պարուրած և ինֆլյացիայի, երբ աշխատավարձի բարձրացումը առաջ է բերում գների աճ, իսկ գների աճը՝ աշխատավարձի նոր բարձրացում և այլն:



Իրական կյանքում ինֆլացիայի այս երկու տեսակները հաճախ դժվար է միմյանցից սահմանազատել: Գործնականում անհնար է որոշել ինֆլացիայի տեսակը՝ առանց իմանալու գների բարձրացման իրական և սկզբնական աղբյուրը: Դրանց հիմնական տարբերությունն այն է, որ պահանջարկի ինֆլացիան շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունեն չափից ավելի մեծ ամբողջական ծախսեր: Ինչ վերաբերում է ծախքերի աճով պայմանավորված ինֆլացիային, ապա այն ունի ինքնաբերաբար կարգավորվելու, ինքնասահմանափակման հատկություն: Արտադրանքի միավորի ծախքերի աճի դեպքում առաջարկը կրճատվում է, ազգային արտադրության ծավալը և զբաղվածության մակարդակը նվազում են, որն էլ սահմանափակում է ծախքերի հետագա աճը: Պատճառն այն է, որ արտադրության անկումը փոքրացնում է ռեսուրսների նկատմամբ շուկայի կողմից ներկայացվող պահանջարկը, ռեսուրսներն ազատվում են, դրանց գները սկսում են իջնել, և ծախքերի հետագա աճը դադարեցվում է: Ինֆլացիայի պատճառն ինքնաբերաբար վերանում է:

Գրականության մեջ ինֆլացիայի երևույթը հաճախ կապվում է պետության կողմից շատ թղթադրամի թողարկման հետ: Պետությունը, տնօրինելով թղթադրամ թողարկելու մոնոպոլ իրավունքին ( որն ընդունված է անվանել սենյորատ), կապված պետական պարտքի մարման հետ, որոշ դեպքերում կարող է նաև չարաշահել այն՝ բերելով ամբողջական պահանջարկի ինֆլացիայի: Մասնավորապես դրան է հանգեցնում նաև.

ա) սոցիալական ծրագրերի ուղղությամբ պետության ծախսերի մշտական աճը (օգնություն գործազուրկներին, քիչ ապահովված ընտանիքներին, կենսաթոշակները, ծախսերը կրթության, գիտության, բնապահպանության վրա, համազգային ծրագրերի ֆինանսավորումը) ,

բ) պետական ոլորտի ընդլայնումը՝ այն ուղեկցող աշխատավարձի աճով, որը կապված է ոչ թե աշխատանքի արտադրողականության աճի, այլ պետական ծառայողների թվի ավելացման և խրախուսման հետ,

գ) ռազմական պատվերների ֆինանսավորման և ռազմաարդյունաբերական համալիրների ընդլայնումը:

Որպես ինֆլացիայի արտաքին պատճառներ նշվում են արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը, անբարենպաստ կոնյունկտուրան հանաշխարհային շուկայում՝ օրինակ արտահանվող ապրանքների

գների անկումը և ներմուծվող ապրանքների գների աճը, ինչպես նաև արտաքին պարտքի աճը:

**8.3.** Ինֆլացիայի պատճառներից անցնենք նրա հետևանքներին: Առաջին հերթին խոսքը վերաբերում է հասարակության եկամուտների վերաբաշխմանը: Հարցի պարզության համար ընդունենք, թե ազգային արտադրության իրական ծավալը և եկամուտները հաստատուն են: Եթե կարկանդակի (ազգային եկամտի) չափերը հաստատուն են, ապա պետք է պարզել, թե ինֆլացիան ինչպես է ազդում բնակչության տարբեր շերտերին ընկնող բաժինների չափերի վրա: Դրա համար հարկ է տարբերել դրամական կամ անվանական եկամուտ և իրական եկամուտ հասկացությունները:

*Դրամական կամ անվանական եկամուտը* փողի այն քանակությունն է, որը մարդիկ ստանում են աշխատավարձի, ռենտայի, տոկոսի կամ շահույթի տեսքով: *Իրական եկամուտը* որոշվում է ապրանքների և ծառայությունների այն քանակությամբ, որը կարելի է ձեռք բերել տվյալ անվանական եկամտով: Եթե անվանական եկամուտն աճում է ավելի արագ տեմպերով քան գները, ապա իրական եկամուտը նույնպես մեծանում է և հակառակը: Իրական եկամտի փոփոխությունը մոտավորապես կարելի է արտահայտել հետևյալ պարզ բանաձևով.

$$\begin{aligned} \text{Իրական եկամտի փոփոխու-} & \text{անվանական եկամտի փոփոխու-} \\ \text{թյունը (տոկոսներով)} & = \text{թյունը (տոկոսներով)} \\ & - \text{գների փոփոխությունը (տոկոսներով)} \end{aligned}$$

Օրինակ, եթե ձեր անվանական եկամուտը տվյալ տարվա ընթացքում աճել է 25 տոկոսով, իսկ նույն ժամանակամիջոցում գները բարձրացել են 15 տոկոսով, ապա իրական եկամուտը բարձրացել է 10 տոկոսով: Եվ ընդհակառակը:

Ինֆլացիան սովորաբար իջեցնում է փողի միավորի գնողունակությունը, սակայն իրական եկամուտը կամ կենսամակարդակը կիջնի միայն այն ժամանակ, եթե անվանական եկամտի աճը ետ ընկնի ինֆլացիայից:

Ինչպե՞ս է կատարվում եկամուտների վերաբաշխումը հասարակության տարբեր սոցիալական խմբերի միջև, ովքե՞ր են շահում և ովքե՞ր են կորցնում:

ա) Ֆիքսված անվանական եկամուտներ ստացողներ. ինֆլացիան

առավելագույն կորուստներ է բերում այն սոցիալական շերտերին, որոնք ստանում են ֆիքսված եկամուտներ: Խոսքը վերաբերում է թոշակառուներին, բյուջետային ոլորտի աշխատողներին, հողի սեփականատերերին (որովհետև հողի վարձակալման պայմանագրի ժամկետում հողային ռենտան հաստատուն մեծություն է) և այլն: Նկատենք, որ ինֆլյացիայի բերած կորուստները կարելի է մեղմել թոշակների բարձրացման կամ ինդեքսացիայի միջոցով, որը հաշվի է առնում սպառողական ապրանքների գների աճը:

2 ֆիքսված եկամուտներ ստացող որոշ խավեր ինֆլյացիայից կարող են նույնիսկ շահել: Օրինակ, առանձին դեպքերում ինֆլյացիան կարող է լրացուցիչ եկամուտներ բերել ֆիրմաներին, եթե պատրաստի արտադրանքի գները ռեսուրսների գների համեմատությամբ ավելի արագ աճեն:

բ) Խնայողությունների տերեր. գների աճի հետևանքով խնայողությունների իրական արժեքն իջնում է, ուստի ֆիքսված տոկոսադրույքով ավանդների, բաժնետոմսերի և փոխառությունների, ապահովագրական պոլիսների գնողունակությունն իջնում է: Օրինակ ընդունենք, թե X-ը բանկ է դրել 2000 դոլար գումարի ավանդ տարեկան 5 տոկոս տոկոսադրույքով: Ինֆլյացիան տարվա ընթացքում կազմել է 10 տոկոս: Ավանդատուն տարվա վերջում կստանա 2100 դոլար (2000 դոլար +100 դոլար տոկոսի ձևով): Բայց 2100 դոլարի դեֆլյավորումը, կապված 10 տոկոս ինֆլյացիայի հետ, նշանակում է, որ 2100 դոլարի իրական արժեքը կկազմի ընդամենը 1909 դոլար (2100:1,1):

գ) Դեբիտորներ և կրեդիտորներ. ինֆլյացիան օգուտներ է բերում դեբիտորներին (վարկ վերցնողներին) և վնասներ կրեդիտորներին (վարկ տվողներին): Դեբիտորներն իրենց պարտքերը վերադարձնում են արժեզրկված փողով: Ընդունենք, թե A-ն մեկ տարի ժամկետով վերցրել է 2000 դոլարի վարկ: Եթե այդ ընթացքում գներն աճել են 2 անգամ, ապա վերադարձվող 2000 դոլարը կունենա սկզբնական գումարի գնողունակության կեսը:

դ) Ինֆլյացիայից շահում է նաև կառավարությունը, որն իր ներքին պարտքերը փոխհատուցում է արժեզրկված թղթադրամներով: Բացի դրանից, պրոգրեսիվ հարկային տոկոսադրույքներն՝ աճող աշխատա-

վարձի և շահույթի վրա, պետական գանձարանին բերում են մեծ հարկային մուտքեր՝ անփոփոխ պետական պարտքի պայմաններում, որը նույնպես հեշտացնում է պարտքի մարումը:

Դեֆլյացիան ունենում է հակառակ ազդեցություն, ու այս դեպքում շահում են նրանք, ովքեր կորցնում են ինֆլյացիայի պայմաններում:

Մինչև այժմ ինֆլյացիայի հետևանքները քննարկվել են հասարակության առանձին խմբերի վրա ունեցած ազդեցության կտրվածքներով կապված եկամուտների վերաբաշխման հետ: Բայց գների տատանումները մեծապես ազդում են նաև ազգային արտադրության ծավալների վրա: Պատկերավոր ասած, ինֆլյացիան կարող է փոփոխել նաև վերաբաշխման ենթակա կարկանդակի մեծությունը: Արտադրության ծախքերի աճով պայմանավորված ինֆլյացիան ազգային արտադրության ծավալների վրա կարող է միայն բացասական ազդեցություն ունենալ, որովհետև ծախքերի աճը կտրուկ բարձրացնում է գները, եկամուտների տվյալ մակարդակի դեպքում արտադրանքի մի մասը չի իրացվում, որն էլ բերում է արտադրության ծավալների կրճատման ու գործազրկության: Բացի այդ ռեսուրսների թանկացումը կատարում է առաջարկի ոչ գնային դետերմինանտի դեր, որը կորը տեղաշարժում է դեպի ձախ, այսինքն, դարձյալ կրճատում, ազգային արտադրության ծավալները: Ինչ վերաբերում է պահանջարկի ինֆլյացիային, ապա այն կարող է երկակի ազդեցություն ունենալ ազգային արտադրության վրա: Դա կախված է ինֆլյացիայի տեսակից: Այս առումով անհրաժեշտ է տարբերել ինֆլյացիայի հետևյալ հիմնական տեսակները.

ա) սողացող ինֆլյացիա, որը ենթադրում է տարեկան 5-10 տոկոս գների աճ: Այն բնորոշ է գրեթե բոլոր զարգացած երկրներին: Այն տնտեսության համար որևէ վտանգ չի ներկայացնում և հաճախ նույնիսկ դիտվում որպես հակաինֆլյացիոն միջոց,

բ) սլացող ինֆլյացիա՝ տարեկան մինչև 100 տոկոս գների աճով, որն, ի տարբերություն սողացող ինֆլյացիայի, դառնում է դժվար կառավարվող:

գ) հիպերինֆլյացիա, որը համարվում է ամենավտանգավորը: Գների աճը կազմում է ամիսը 20 տոկոս և ավելի, իսկ տարեկան աճը նույնիսկ հասնում է քառանիշ թվերի: Այն գործնականում դառնում է անկառավարելի, գների լծակները սկսում են չգործել: Փող տպող մեքենաներն աշխատում են ամբողջ հզորությամբ, մոլեգնորեն զարգանում է սպեկուլյացիան: Առաջանում է կունուլյատիվ ինֆլյացիա: Անվանական

աշխատավարձը և գների աճը կերակրում են միմյանց, երբ մեկի աճը հանգեցնում է մյուսի աճին և հակառակը: Ձեռնարկությունները չգիտեն, թե ինչ գնով վաճառեն իրենց արտադրանքը, իսկ սպառողները՝ ինչ գնով գնեն: Փողը փաստորեն դադարում է կատարել արժեքի չափի և շրջանառության միջոցի ֆունկցիաները: Արտադրողները նախընտրում են բարտերային փոխանակությունը: Ձեռնարկությունները չեն վաճառում իրենց արտադրանքը, ռեզերվներ են կուտակում հետագայում ավելի բարձր գներով վաճառելու համար, արտադրությունն աստիճանաբար կրճատում է իր ծավալները, որովհետև արտադրության մեջ կապիտալ ներդնելու փոխարեն փողը վեր են ածում թանկարժեք իրերի ու անշարժ գույքի: Տնտեսական կապերը խզվում են: Տնտեսությունը կանգնում է կազմալուծման առաջ:

Տնտեսական պատմությանը հայտնի են հիպերինֆլյացիայի բազմաթիվ օրինակներ: 1920-ական թվականների սկզբներին Գերմանիայում ռեստորանում ճաշելու ընթացքում մատուցողները մի քանի անգամ փոխում էին ճաշացուցակների գները: 1947 թվականին ճապոնիայում փողը հաշվելու փոխարեն կշռում էին: 1921 թվականին Ռուսաստանում ռուբլու գնողունակությունն ընկել էր 10 միլիոն անգամ: Կամ, Ռուսաստանում 1991 թվականին կատարվող 28 միլիարդ ռուբլու դրամական էմիսիան 1992 թվականին հասել էր 1513 միլիարդի: Հիպերինֆլյացիայի ռեկորդը պատկանում է Հունգարիային, որի նախապատերազմյան մեկ ֆորինտը 1946 թվականին հավասարվել էր  $829 \times 10^{22}$  ֆորինտի, իսկ ամերիկյան 1 դոլարն արժեք  $3 \times 10^{22}$  ֆորինտ: Հիպերինֆլյացիան վերացնելու համար հաճախ անհրաժեշտ է լինում դիմել արտակարգ միջոցների: Սովորաբար այն դիտվում է որպես պետության անհեռատես քաղաքականության արդյունք:

Այսպիսով, ընդհանուր առմամբ ինֆլյացիան անցանկալի է և քայքայիչ է տնտեսության համար.

- ինֆլյացիան արժեզրկում է տնտեսության բոլոր մասնակիցների երկար տարիների դրամական խնայողությունները,

- ինֆլյացիայի պայմաններում եկամուտների մի մասի վերածումը խնայողությունների դառնում է անիմաստ,


- ամբողջ եկամուտը վերածվում է սպառողական բարիքների, ինչն ուժեղացնում է պահանջարկը և առաջացնում գների ավելի մեծ աճ,

- կրճատվում է վարկերի ծավալը, իսկ դա բերում է ինվեստիցիաների, հետևապես նաև արտադրության ծավալների փոքրացման ու գործազրկության աճի,

- արտադրության երկարատև ցիկլ ունեցող ձեռնարկությունները դադարում են աշխատելուց, քանի որ արժեզրկված փողով ստացված հասույթով չեն փոխհատուցում ծախսերը,

- իրավիճակի անորոշությունը նվազեցնում է ձեռնարկատիրական ակտիվությունը, քանի որ անհնար է դառնում հաշվարկել թե՛ հեռանկարային գները և թե՛ եկամուտները:

**8.4.** Դեռևս 1950-ական թվականներին անգլիացի տնտեսագետ Օլբրան Ֆիլիպսը շուրջ հարյուր տարվա վիճակագրական տվյալների ուսումնասիրության արդյունքում կառուցել է մի գրաֆիկ, որը ցույց է տալիս աշխատավարձի և գործազրկության մակարդակների փոփոխության կապը, որպես հակադարձ համեմատական կախվածություն: Այդ կապն արտահայտող կորը տնտեսագիտության մեջ հայտնի է Ֆիլիպսի կոր անվանումով: Ավելի ուշ նույնպիսի կապ է գրանցվել նաև ինֆլյացիայի և գործազրկության միջև, և ներկայումս Ֆիլիպսի կորը մեկնաբանվում է որպես հենց այդպիսին:



Գրաֆիկ 8.2

Ֆիլիպսի կորը ներկայանում է որպես փոխզիջումային տարբերակ ինֆլյացիայի և գործազրկության միջև: Հատկապես Քեյնսի կողմնակիցները Ֆիլիպսի կորը համարում էին ուժեղ փաստարկ բյուջեի միջոցով պահանջարկի մեծացման օգտին՝ գտնելով, թե պետությունը կարող է

կրճատել գործազրկության մակարդակը՝ ընդլայնելով ամբողջական ծախսերը: Ու թեև պետական պատվերների աճը կարող է առաջ բերել ինֆլյացիա, բայց տնտեսության համար դա վտանգավոր չէ, քանի որ այն տանում է գործազրկության կրճատմանը: Անհրաժեշտ է միայն վերահսկել ինֆլյացիան:

Եվ իրոք, մինչև 1970-ական թվականների տնտեսական ցիկլերի գերակշռող մասի համար բնորոշ է եղել. ա) անկման և դեպրեսիայի փուլերում գործազրկության աճը՝ գների նվազման պայմաններում, բ) գների աճը և գործազրկության կրճատումը տնտեսական ակտիվության աշխուժացման և վերելքի փուլերում: Ընդ որում, այդ պրոցեսները միանգամայն օրինաչափ են, քանի որ արտադրության անկումը հաջորդաբար առաջ է բերում գործազրկության աճ, եկամուտների, ծախսերի և ամբողջական պահանջարկի կրճատում, իսկ արդյունքում նաև գների անկում: Իսկ երբ արտադրությունը վերելք է ապրում, սկսվում է հակառակ պատկերը՝ գործազրկությունն աստիճանաբար կրճատվում է, աշխատողների թվի աճի հետ մեծանում են նաև եկամուտները, շրթայածև՝ ամբողջական ծախսերը, պահանջարկը, իսկ արդյունքում նաև գները ( ինֆլյացիան):

Մինչդեռ 1970-ական թվականների վերջերին, կապված նավթի միջազգային գների սրընթաց աճի հետ, Արևմուտքում ի հայտ եկավ նոր երևույթ, այսպես կոչված ստագֆլյացիա, մի իրավիճակ տնտեսության մեջ, երբ արտադրության լճացումը, դեպրեսիան և անկումը զուգորդվեցին ոչ միայն բարձր գործազրկությամբ ( ինչը բնական է) , այլ նաև անբնական թվացող բարձր ինֆլյացիայով: Այսինքն, ստագֆլյացիան արդեն ենթադրում է ոչ թե գործազրկության և ինֆլյացիայի այլընտրանք, այլ դրանց զուգորդում՝ դեպրեսիայի պայմաններում:

Ու թեև 1980-ականների վերջերին ստագֆլյացիան ավարտվել էր, այնուամենայնիվ, տնտեսագետների նշանակալից մասը համաձայնել է, որ գործազրկության և ինֆլյացիայի կապը չի կարելի մեկնաբանել միանշանակ ձևով որպես փոխհակառակ կապ, ինչի մասին զգուշացնում էր նաև Ֆիլիպսը: Այդ կապի բնույթը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ուստի երկարատև ժամանակի համար այն պարբերաբար կարող է փոփոխվել:

Այստեղից էլ, որպես տնտեսության կարգավորիչի, Ֆիլիպսի կորի քննադատությունը:

## ԳԼՈՒԽ 9. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԻԿԼԵՐ: ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՅԱՆՋԱՐԿ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ

**9.1.** *Տնտեսական ցիկլեր. փուլերը, պատճառները, ձևերը, ազդեցությունը երկարաժամկետ և կարճաժամկետ օգտագործման ապրանքների արտադրության վրա:*

**9.2.** *Ամբողջական մոդելի անհրաժեշտությունը: Ամբողջական պահանջարկի կորը և դրա ոչ գնային դետերմինանտները:*

**9.3.** *Ամբողջական առաջարկի կորը և դրա ոչ գնային դետերմինանտները:*


**9.4.** *Արտադրության հավասարակշռված ծավալը և գների հավասարակշռված մակարդակը ամբողջական առաջարկի կորի տարբեր հատվածներում: Արգելանվի էֆեկտը:*

**9.1.** Հասարակությունը միշտ ձգտում է տնտեսական աճի: Երկարատև ժամանակահատվածում աշխատանքի արտադրողականության բարձրացման, հիմնական կապիտալի մեծացման, ինչպես նաև տեխնոլոգիական նվաճումների հետևանքով աճում են ապրանքների և ծառայությունների արտադրության ծավալները: Այսինքն, աճում է ՀԱԱ-ը: Սակայն, ինչպես ցույց է տալիս հասարակության զարգացման պատմությունը, տնտեսական ակտիվության աստիճանը մշտապես տատանվում է: Պարբերաբար առաջանում են իրավիճակներ, երբ արտադրված ապրանքները և ծառայությունները մնում են չիրացված, և կրճատվում են արտադրության ծավալները: Բանվորները ժամանակավորապես ազատվում են աշխատանքից, և բարձրանում է գործազրկության մակարդակը: Տնտեսության աճի ժամանակաշրջանը փոխարինվում է գների բարձրացմամբ և ինֆլյացիայով, կամ աճին հաջորդում է անկումը և լճացումը: Այսինքն, տնտեսական աճը հավասարաչափ չի ընթանում, ցիկլային ձևով վերելքին հաջորդում է անկայունությունը՝ գործազրկությունը և ինֆլյացիան:

Մի քանի տարվա ընթացքում տնտեսական ակտիվության իրար հաջորդող վերելքներն ու վայրէջքներն անվանում են տնտեսական ցիկլ: Տնտեսական ակտիվության ցուցանիշների փոփոխությունն այլ կերպ կոչվում է «գործարար ակտիվության ցիկլ»: Տնտեսության այդ տատանումները (ֆլուկտուացիաները) իրարից տարբերվում են ինչպես

իրենց տևողությամբ, այնպես էլ ինտենսիվությամբ և չեն կրկնվում հստակ կանոնավորությամբ: Այնուամենայնիվ, դրանք հատկանշվում են միևնույն փուլերով:

Տնտեսական ցիկլի գրաֆիկական արտահայտությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ տեղի է ունենում տնտեսության առաջընթաց զարգացում, որը, սակայն, մե'րթ արագանում է, մե'րթ դանդաղում (տես գրաֆիկ 9.1):



Ցիկլի գազաթնակետում տնտեսության մեջ դիտվում է լրիվ զբաղվածություն, տնտեսությունն աշխատում է լրիվ կամ գրեթե լրիվ հզորությամբ: Այս փուլում գների մակարդակը միտում ունի բարձրանալու, իսկ գործարար ակտիվության աճը դադարում է, որովհետև ռեսուրսներն ամբողջությամբ զբաղված են: Դա պատճառ է դառնում գների էլ ավելի բարձրացման, որի արդյունքում բնակչության պահանջարկն ի վերջո նվազում է: Գազաթնակետին հաջորդող վայրէջքի փուլում արտադրությունը և զբաղվածությունը կրճատվում են, սակայն գները շարունակում են մնալ բարձր: Գներն սկսում են ընկնել, երբ վայրէջքը լուրջ և երկարատև բնույթ է կրում, այսինքն՝ ցիկլի անկման ստորին կամ դեպրեսիայի փուլում: Հին ասացվածքն ասում է. «Երբ հարևանը կորցնում է աշխատանքը, դա անկում է, իսկ երբ դու ես կորցնում, դա

արդեն դեպրեսիա է»: Գների իջեցումն այս փուլում, մի կողմից՝ մանր և թույլ ձեռնարկությունների սնանկացման պատճառ է դառնում, քանի որ նրանք չեն կարողանում փոխհատուցել իրենց ծախքերը, իսկ մյուս կողմից՝ խթանում է արտադրության կատարելագործմանը: Բացի այդ, գների իջեցման արդյունքում բարձրանում է պահանջարկը, որն արտադրողներին դարձյալ հնարավորություն է տալիս ընդլայնել արտադրությունը: Այսպիսով, ամենաստորին՝ դեպրեսիայի փուլում, արտադրությունը և զբաղվածությունը հասնում են նվազագույն մակարդակի, որից հետո սկսվում է ցիկլի աշխուժացման փուլը, երբ տնտեսությունը նորից դուրս է գալիս ծանր վիճակից: Արտադրության և զբաղվածության մակարդակներն աստիճանաբար բարձրանում են՝ հասնելով լրիվ զբաղվածության, ապրանքների և ծառայությունների գները՝ նույնպես:

Այսպիսով, տնտեսական ցիկլը ներառում է հետևյալ չորս փուլերի հաջորդական շարժումը.

գազաթնակետ → վայրէջք → դեպրեսիա → վերելք:

Որքան ուժեղ է տնտեսական տատանումների ամպլիտուդը, այնքան այն կործանարար է տնտեսության համար: Այդ պատճառով էլ այդպիսի տատանումների մեխանիզմների և դրանց հնարավոր կարգավորումների իմացությունը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն:

Տնտեսագետները տարբեր ժամանակներում առաջադրել են տնտեսական ակտիվության տատանումների տարբեր տեսություններ, այն բացատրելով, մի դեպքում էկզոգեն (արտաքին), իսկ մի այլ դեպքում էնդոգեն (ներքին) պատճառներով: Տնտեսական ցիկլը պայմանավորող արտաքին գործոններից են.

- պատերազմները, հեղափոխությունները և այլ քաղաքական ցնցումները,
- ոսկու, նավթի, ուրանի խոշոր հանքավայրերի հայտնաբերումը, նոր տարածքների յուրացումը և դրա հետ կապված բնակչության միգրացիան ու թվաքանակի տատանումները,
- խոշոր տեխնիկական հայտնագործությունները (օրինակ երկաթուղիների, ավտոմեքենաների, սինթետիկ մանրաթելերի, համակարգիչների), որոնք մեծ ազդեցություն ունեն ինվեստիցիաների և սպառողական ծախսերի, հետևապես՝ արտադրության, զբաղվածության և գների

վրա: Դրանք կանոնավոր բնույթ չունեն, դրանով իսկ, նպաստում են տնտեսական ակտիվության անկայունության առաջացմանը:

Չնայած այսպիսի տարաբնույթ կարծիքներին, տնտեսագետների մեծ մասն այդ տատանումները կապում է էնդոգեն բնույթի հետևյալ տնտեսական պատճառների հետ.

ա) սպառողական պահանջարկի մեծության տատանումները. վերջին հաշվով ամբողջ տնտեսությունն աշխատում է ամենօրյա սպառողական պահանջմունքների բավարարման համար: Այդ պատճառով սպառողական ծախսերի աճը խթանում է արտադրության, զբաղվածության և արտադրության ծավալի աճը տնտեսության բոլոր ճյուղերում: Դա նշանակում է, որ սպառողական պահանջարկի աճը տնտեսությանը մղում է վերելքի, իսկ սպառողական ծախսերի կրճատումն այն ուղղում է դեպի անկման փուլ,

բ) փոփոխություններն արտադրական ինվեստիցիաների մեծության մեջ. խոսքը վերաբերում է արտադրության մեջ ինվեստիցիաների մասշտաբներին, այսինքն՝ արտադրական նշանակության լրացուցիչ կապիտալ ներդրումներին: Ի վերջո, այդպիսի ինվեստիցիաները նոր ձեռնարկություններ են, հետևապես, նաև նոր աշխատատեղեր, աշխատավարձի ֆոնդի և սպառողական ծախսերի աճ,

գ) կառավարության տնտեսական քաղաքականությունը. շուկայական տնտեսությունը շատ զգայուն է պետության նպատակաուղղված միջոցառումների նկատմամբ, որոնք կարող են երկարացնել վերելքի փուլը և մեղմացնել վայրէջքը: Դրա համար կառավարությունը տնօրինում է երկու միջոցների՝ «գանձարանային քաղաքականություն» (հարկերի և բյուջետային ծախսերի մանրայնություն) և «մոնետար քաղաքականություն» (դրամական մասսայի ծավալի կարգավորում):

Հաճախ տնտեսական ցիկլերը կարող են պայմանավորված լինել միաժամանակ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններով:

Տնտեսական ակտիվության բոլոր տատանումները չի կարելի բացատրել ցիկլերով: Գոյություն ունեն ակտիվության սեզոնային տատանումներ, որոնք պայմանավորված են տոներով, ազգային ավանդույթներով, ինչպես նաև սեզոնային փոփոխություններով, որոնք ազդում են գյուղատնտեսության, շինարարության, մանրածախ առևտրի ծավալների վրա: Տնտեսական ցիկլերն անհրաժեշտ է տարբերել նաև կառուցվածքային ճգնաժամերից, որոնք ծագում են տնտեսության առանձին

ուղորտների և ճյուղերի միջև առաջացող անհամահասնությունների հետևանքով, որպես կանոն, ունեն ավելի տևական բնույթ և միշտ չէ, որ համընկնում են տնտեսական ցիկլի հետ:

Տնտեսագետները, նշելով ցիկլային զարգացման փաստը, միաժամանակ առանձնացնում են իրենց տևողությամբ երեք տեսակի ցիկլեր.

- կարճաժամկետ ցիկլեր ( 3-4 տարի պարբերաշրջանով ), որոնց հիմնական պատճառը պետք է փնտրել դրամական շրջանառության ոլորտում,

- միջին տևողության ցիկլեր, որոնք տևում են 10-20 տարի և համընկնում հիմնական արտադրական ֆոնդերի ֆիզիկական մաշվածքի միջին ժամկետի հետ: Ուսումնասիրելով այդպիսի ցիկլերի առաջացման հիմնախնդիրը, տնտեսագետները հայտնաբերեցին որոշակի օրինաչափություն պատրաստի արտադրանքի պահանջարկի փոփոխության և արտադրության միջոցների պահանջարկի զգալի ավելացման միջև: Այդ օրինաչափությունը կոչվում է ակսելերատորի էֆեկտ, որի օգնությամբ էլ բացատրվում է տնտեսական զարգացման ցիկլային բնույթը: Ըստ այս տեսության սպառման ապրանքների պահանջարկի ցանկացած աճ ընդունակ է առաջ բերելու ինվեստիցիոն ապրանքների արտադրության շատ ավելի մեծ ընդլայնում, որի պատճառով էլ սպառման ապրանքների արտադրությունը սկսում է գերազանցել դրանց պահանջարկին, և դրանց մի մասը շուկայում կուտակվում է ավելցուկի ձևով: Ընդ որում ինվեստիցիաների աճի և սպառման ապրանքների պահանջարկի ընդլայնման միջև ընկած է որոշակի ժամանակահատված, և ինվեստիցիաների աճն իրեն զգացնել է տալիս ուշացումով: Ակսելերատորի էֆեկտը կարելի է համեմատել վառարանի հետ, որն առավելագույն ջերմություն տալիս է փայտ լցնելուց ինչ-որ ժամանակ անց, երբ այդ ջերմությունն արդեն կարող է նաև չափից ավելի շատ լինել: Ակսելերատորը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$V = \frac{I t}{Y t-1 - Y t-2}$$

որտեղ V-ն՝ ակսելերատորն է, I-ն՝ ինվեստիցիան, Y-ը՝ սպառողական պահանջարկը (կամ եկամուտը), t-ն՝ տարին, երբ կատարվել են ինվեստիցիաները,

- երկարաժամկետ ցիկլեր, որոնք տևում են 48-55 տարի և հաճախ անվանվում են «մեծ տնտեսական ցիկլեր»: Դրանց հիմնական պատ-

ճառն ինֆրակառուցվածքի նոր տարրերի ստեղծման համար անհրաժեշտ կապիտալի կուտակումն ու կիրառումն է (օրինակ կամուրջների, մայրուղիների շինարարության համար և այլն): Այսպիսի ցիկլերը հիմնականում օգտագործվում են մակրոտնտեսական կանխատեսումների ժամանակ:

Այս տնտեսական ցիկլերից առավել կարևոր նշանակություն տրվում է միջին տևողության ցիկլերի առաջացման պատճառների վերլուծությանը, որի նպատակը տնտեսական ակտիվության տատանումները մեղմացնելն է:

Չկա տնտեսության մի ոլորտ, որտեղ չթափանցի տնտեսական ցիկլը: Տնտեսության տարրերն այնքան են փոխկապված միմյանց հետ, որ ոչ ոք չի խուսափել դեպրեսիայի կամ ինֆլյացիայի ազդեցությունից՝ լինի դա առանձին անհատ, թե ոլորտ: Սակայն այդ ազդեցությունը կարող է տարբեր լինել: Արտադրության և զբաղվածության առումներով տնտեսական անկումից հատկապես տուժում են արտադրության միջոցներ և երկարատև օգտագործման սպառման ապրանքներ արտադրող ճյուղերը: Հատկապես ծանր վիճակում է հայտնվում շինարարությունը: Կարճաժամկետ օգտագործման առարկաներ արտադրող ճյուղերի վրա ցիկլի ազդեցությունը փոքր է: Նշված երևույթը բացատրվում է հետևյալով.


ա) հետաձգելու հնարավորություն. երկարատև օգտագործման ապրանքների գնումը կարելի է որոշակի ժամանակով հետաձգել: Երբ տնտեսությունը կանգնում է դժվարությունների առաջ, արտադրողները հաճախ հրաժարվում են նոր սարքավորումներ ձեռք բերելուց և նոր գործարաններ կառուցելուց: Ինվեստիցիոն ապրանքների պաշարների ավելացումը դառնում է անհիմաստ: Ֆիրմաները շարունակում են օգտագործել ունեցած հզորություններն ու շենքերը: Ջուտ կապիտալ ներդրումները կարող են դառնալ բացասական մեծություն: Նույն սկզբունքով, երբ տեղի է ունենում, անկում և անհրաժեշտություն է առաջանում կրճատելու ընտանեկան բյուջեն, մարդիկ առաջին հերթին հրաժարվում են երկարատև օգտագործման ապրանքների (կահույք, ավտոմեքենա, սառնարան) գնելուց: Բանն այլ է կարճաժամկետ օգտագործման սպառողական ապրանքների՝ սննդամթերքի և հագուստի արտադրության դեպքում: Մարդիկ պետք է և՛ սնվեն, և՛ հագնվեն: Այդ գնումները կարող են կրճատվել և՛ քանակի, և՛ որակի իմաստով, բայց ոչ հետաձգվել, ինչպես երկարատև օգտագործման ապրանքների դեպքում,

բ) մոնոպոլիաների իշխանությունը. ինվեստիցիոն և երկարատև օգտագործման սպառողական ապրանքների արտադրության ճյուղերի մեծ մասը հատկանշվում է համակենտրոնացմամբ, երբ շուկայում իշխում են համեմատաբար քիչ թվով խոշոր ֆիրմաներ: Այդպիսի ֆիրմաները կարող են որոշակի ժամանակ հակազդել գների իջեցմանը՝ ի պատասխան պահանջարկի անկմանը սահմանափակելով արտադրանքի թողարկումը: Այդ պատճառով պահանջարկի կրճատումը գլխավորապես ազդում է արտադրության և զբաղվածության մակարդակի վրա: Կարճաժամկետ օգտագործման ապրանքներ արտադրող ճյուղերում կատարվում է հակառակը: Դրանք մեծ մասամբ մրցունակ ճյուղեր են, և բնութագրվում են ցածր համակենտրոնացմամբ: Հետևաբար չեն կարող հակազդել գների իջեցմանը, և պահանջարկի անկումն այդ դեպքում ավելի շատ ազդում է գների, քան արտադրության մակարդակի վրա:

**9.2.** Տնտեսական տատանումների պատճառների հարցը պահանջում է ավելի հանգամանալից քննություն, քանի որ այստեղ խոսք է գնում մակրոտնտեսական ամբողջական փոփոխականների մասին: Առանձին շուկաների վերլուծության ժամանակ ավելի շատ հետաքրքրում էր այն հարցը, թե պահանջարկի և առաջարկի փոփոխության արդյունքում ինչպես է կազմավորվում առանձին ապրանքների հավասարակշռված գինը և հավասարակշռված քանակը, թե վերջիններս ինչպես են փոփոխվում՝ պահանջարկը և առաջարկը որոշող մեկ կամ մի քանի դետերմինանտների փոփոխության արդյունքում: Սակայն մեկ ապրանքի պահանջարկի և առաջարկի մոդելը շատ հարցեր թողնում է անպատասխան: Օրինակ, թե ընդհանրապես գներն ինչու են իջնում կամ բարձրանում: Ինչու գների ընդհանուր մակարդակը մի փուլում հարաբերականորեն մնում է հաստատուն, մի այլ փուլում՝ փոփոխվում է: Ինչու է ազգային արտադրության իրական ծավալն իջնում կամ բարձրանում նախորդ փուլերի համեմատությամբ և այլն: Մակրոտնտեսական կարգի փոփոխությունների այդ հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է բոլոր ապրանքների և ծառայությունների առանձին-առանձին շուկաները միավորել մեկ ընդհանուր միասնական շուկայի մեջ: Այսինքն, միավորել հազարավոր ապրանքների գները՝ որպես միասնական ամբողջական գին կամ գների մակարդակ և առանձին ապրանքների հավասարակշռված քանակները՝ որպես ազգային արտադրության իրական ծավալ: Առանձին ապրանքների և ծառայությունների գների

միավորումը գների մակարդակում, ինչպես նաև բոլոր հավասարակշիռ ապրանքների և ծառայությունների միավորումն ազգային արտադրության իրական ծավալի մեջ կոչվում է ագրեգացում: Այս դեպքում արդեն առանձին ապրանքների և ծառայությունների պահանջարկն ու առաջարկը վերածվում են ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի: Վերջիններիս փոփոխականներն ընդունում են ամբողջությունների կամ ագրեգատների ձև:

*Ամբողջական պահանջարկը* կորի ձևով մոդել է, որը ցույց է տալիս ազգային արտադրության այն իրական ծավալները, որոնք տնային տնտեսությունները, ձեռնարկությունները, կառավարությունն ու արտասահմանյան քաղաքացիները պատրաստ են գնել գների ցանկացած հնարավոր մակարդակի դեպքում (տես գրաֆիկ 9.2): Այլ հավասար պայմաններում, որքան ցածր է գների մակարդակը, այնքան ավելի շատ ազգային արտադրության ապրանքներ կցանկանան ձեռք բերել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին սպառողները: Հետևաբար, գների մակարդակի և ազգային արտադրության ծավալների միջև առկա է հակադարձ կամ բացասական կախվածություն: Այստեղից էլ ամբողջական պահանջարկի կորը նույնպես ունի ձախից աջ շարժվող վարընթաց տեսք, միայն այս դեպքում հորիզոնական առանցքն արտահայտում է ազգային արտադրության իրական ծավալը, իսկ ուղղահայաց առանցքը՝ գների մակարդակը:



Ինչպես արդեն նկատել ենք, առանձին ապրանքի պահանջարկի կորն ուներ նույն տեսքը: Սակայն ամբողջական պահանջարկի և առան-

ձին ապրանքի պահանջարկի կորերի թեքության պատճառները տարբեր են: Առանձին ապրանքի դեպքում դա բացատրվում էր եկամտի և փոխարինման էֆեկտով: Երբ առանձին ապրանքի գինն իջնում էր, սպառողը, տվյալ հաստատուն եկամտի պայմաններում, հնարավորություն էր ստանում գնել ավելի շատ ապրանքներ (եկամտի էֆեկտ):

Ավելին՝ սպառողը պատրաստ էր տվյալ ապրանքից ավելի շատ գնել, քանի որ այն մյուսների համեմատությամբ դառնում էր հարաբերականորեն էժան (փոխարինման էֆեկտ): Սակայն այսպիսի բացատրությունն ամբողջական պահանջարկի մոդելի համար դառնում է անընդունելի, քանի որ այստեղ գործ ունենք ամբողջությունների հետ.

- երբ ամբողջական պահանջարկի կորով շարժվում ենք դեպի ներքև, դա նշանակում է, որ բոլոր ապրանքների գներն են իջնում, ուստի փոխարինման էֆեկտի հիմնավորումը դառնում է անընդունելի,

- եկամտի էֆեկտը չի գործում, որովհետև առանձին ապրանքների պահանջարկն ուսումնասիրելիս ենթադրվում էր, որ եկամուտը հաստատուն մեծություն է, իսկ ամբողջական պահանջարկի կորի ժամանակ գործ ունենք փոփոխվող ամբողջական եկամուտների հետ:

Հետևապես, երբ կորի վրայով շարժվում ենք դեպի վեր, բարձրանում է գների մակարդակը: Բայց եկամտի շրջապտույտի մոդելից հայտնի է, որ ապրանքների և ծառայությունների համար վճարված բարձր գները եկամուտների ձևով (աշխատավարձ, ռենտա, տոկոս, շահույթ) վերադառնում են ռեսուրսների մատակարարներին: Ուստի, գների մակարդակի աճը միշտ չէ, որ հանգեցնում է երկրի ընդհանուր անվանական եկամտի իջեցմանը: Ամբողջական պահանջարկի կորի թեքությունը, այսինքն՝ նրա հետագիծը, պայմանավորված է հետևյալ գործոնների ազդեցությամբ.

ա) տոկոսադրույքի էֆեկտ. երբ գների մակարդակը բարձրանում է, մեծանում է նաև փողի նկատմամբ պահանջարկը: Ամբողջական պահանջարկի կորի քննության ժամանակ ընդունում ենք, որ տնտեսության մեջ դրամական զանգվածի ծավալը հաստատուն է: Գների մակարդակի աճի հետ սպառողներին անհրաժեշտ է լինում կանխիկ փողի մեծ գումար գնումների համար, իսկ ձեռնարկատերերին շատ փող՝ աշխատավարձի վճարման և այլ ծախսերի համար: Այսինքն, փողի նույն զանգվածի պայմաններում աճում է փողի օգտագործման գինը՝ տոկոսադրույքը: Իսկ բարձր տոկոսադրույքի պայմաններում տնային տնտե-




սություններն ու ձեռնարկությունները կրճատում են իրենց ծախսերի մի մասը: Օրինակ, ընդունենք թե ֆիրման ձեռք է բերել ինվեստիցիոն ապրանքներ՝ նախատեսելով ստանալ 15 տոկոս շահույթ: Այդպիսի գործարքը կհամարվի արդարացված, եթե տոկոսադրույքը կազմի 10 տոկոս, և տնտեսապես ոչ շահեկան, եթե այն աճի մինչև 20 տոկոս:

Այսպիսով, գների բարձր մակարդակը, մեծացնելով փողի պահանջարկը և բարձրացնելով տոկոսադրույքը, առաջ է բերում ազգային արդյունքի իրական ծավալի նկատմամբ պահանջարկի կրճատում,

բ) հարստության էֆեկտ կամ իրական դրամարկղային մնացորդների էֆեկտ. գների մակարդակի բարձրացումը նվազեցնում է այնպիսի ֆինանսական ակտիվների գնողունակությունը, ինչպիսիք են՝ ֆիքսված դրամական արժեք ունեցող փոխառությունները, բանկային հաշիվները և այլն: Այսպիսի դեպքերում բնակչությունն իրականում աղքատանում է և կրճատում սպառումը: Ընդունենք, թե ընտանիքի ֆինանսական ակտիվները կազմում են 20 հազար դոլար: Եթե 50 տոկոս ինֆլյացիայի հետևանքով այդ ակտիվների գնողունակությունը կրճատվի կիսով չափ, ապա ընտանիքը կիրաժարվի հատկապես երկարատև օգտագործման որոշակի ապրանքներ գնելուց: Եվ ընդհակառակը, գների մակարդակի իջնելու դեպքում ֆինանսական ակտիվների գնողունակությունը կբարձրանա, և ծախսերը կաճեն: Հետևապես կփոփոխվի նաև ամբողջական պահանջարկը,


գ) ներմուծման էֆեկտ. գների մակարդակի բարձրացման հետևանքով մեծանում է համեմատաբար էժան արտասահմանյան ապրանքների ներմուծումը և կրճատվում հայրենական արտադրության թանկ ապրանքների պահանջարկը: Հետևաբար գների մակարդակի բարձրացումը հակադարձ ազդեցություն է ունենում ամբողջական պահանջարկի վրա և երկրի ներսում պատճառ դառնում ազգային արտադրության ծավալների կրճատման:

Շարադրանքից պարզ է դառնում, որ գների մակարդակի բարձրացումն այլ հավասար պայմաններում տանում է արտադրության իրական ծավալի նկատմամբ պահանջարկի կրճատմանը և ընդհակառակը: Այս դեպքում կորի դիրքը անփոփոխ է, իսկ տեղաշարժը կատարվում է միայն նրա երկայնքով (տես՝ գրաֆիկ 9.3):



Գրաֆիկ 9.3

Սակայն, եթե «այլ հավասար պայմաններից» մեկը փոփոխվում է, ապա ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժվում է աջ կամ ձախ AD-ից AD<sub>1</sub> կամ AD<sub>2</sub> դիրքը (տես՝ գրաֆիկ 9.4):



Գրաֆիկ 9.4

Այդ «այլ հավասար պայմանները» անվանվում են ամբողջական պահանջարկի ոչ գնային դետերմինանտներ: Առաջին դեպքում (գրաֆիկ 9.3) արտադրության իրական ծավալի նկատմամբ ամբողջական պահանջարկի փոփոխությունը պայմանավորված է գների մակարդակի փոփոխությամբ, իսկ երկրորդ դեպքում՝ ամբողջական պահանջարկի

մեկ կամ մի քանի ոչ գնային դետերմինանտների փոփոխությամբ: Առաջին դեպքում փոփոխվում է պահանջարկի մեծությունը, իսկ երկրորդ դեպքում՝ պահանջարկը:

Ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժող ոչ գնային դետերմինանտներն են .

1. սպառողական ծախսերի փոփոխությունները.

ա) սպառողի բարեկեցությունը,

բ) սպառողի սպասելիքները,

գ) սպառողի պարտավորությունները՝ կապված նախկինում կատարված ապառիկ գնումների հետ,

դ) հարկերը,

2. ինվեստիցիոն ծախսերի փոփոխությունները.

ա) տոկոսադրույքները,

բ) ինվեստիցիաներից սպասվող զուտ շահույթի մեծությունը, որի աճը ինվեստիցիաների խթանման պատճառ է դառնում և ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժում դեպի աջ,

գ) ձեռնարկություններից գանձվող հարկերը,

դ) տեխնոլոգիան, որի կատարելագործումը պահանջում է լրացուցիչ ինվեստիցիաներ և պահանջարկի կորը դարձյալ տեղաշարժում դեպի աջ,

ե) ավելցուկային հզորությունները, որոնց մեծացումը նշանակում է չօգտագործված կապիտալի աճ և կրճատում պահանջարկը նոր ինվեստիցիաների, հետևաբար, նաև ամբողջ ազգային արտադրության ծավալների նկատմամբ:

3. Պետական ծախսերի փոփոխությունները: Պետական ծախսերի աճը գների անփոփոխ մակարդակի դեպքում մեծացնում է ամբողջական պահանջարկը, քանի դեռ հարկերը և տոկոսադրույքները մնում են անփոփոխ:

4. Չուտ արտահանման ծավալի փոփոխությունները.

ա) այլ երկրների ազգային եկամուտների մեծությունը, որոնց աճը մեծացնում է պահանջարկը նաև արտահանող երկրի ազգային արտադրության նկատմամբ,


բ) տարադրամի կուրսերը, որոնց տատանումները կարող են պատճառ դառնալ արտահանման կամ ներմուծման ծավալների փոփոխության համար: Ազգային թղթադրամի արժեզրկումը երկրի ներսում մեծացնում է հայրենական ապրանքների արտահանումը և կրճատում ներմուծման ծավալները, որովհետև այդ դեպքում արտասահմանցիների

համար ավելի շահավետ է դառնում արտահանող երկրից ապրանք գնելը: Արդյունքում աճում են զուտ արտահանման ծավալները, հետևաբար նաև ամբողջական պահանջարկը արտահանող երկրի ներսում՝ ի հաշիվ արտասահմանյան գնորդների:

**9.3.** Ամբողջական առաջարկը կորի ձևով մի մոդել է, որը ցույց է տալիս ազգային արտադրության իրական ծավալի մեծությունը գների յուրաքանչյուր հնարավոր մակարդակի դեպքում: Գների համեմատաբար բարձր մակարդակները խթաններ են ստեղծում ապրանքների լրացուցիչ քանակների արտադրության համար և հակառակը: Այսինքն՝ գների մակարդակի և արտադրության ծավալի միջև գործում է ուղիղ համեմատական կամ դրական կախվածություն: Ամբողջական առաջարկի կորի բնույթի և ձևի վերաբերյալ տնտեսագետների շրջանում առկա են տարակարծություններ: Սակայն առաջին հերթին անհրաժեշտ է որոշակիացնել այդ կորի հատվածները: Ամբողջական առաջարկի կորը բաղկացած է երեք հատվածներից՝ ա) քեյնսյան կամ հորիզոնական, բ) միջանկյալ կամ վերընթաց, գ) ուղղահայաց կամ դասական (տես գրաֆիկ 9.5),

ա) *քեյնսյան (հորիզոնական) հատված (ab)*. Նկատենք, որ ՉԲ-ը ցույց է տալիս ազգային արտադրության իրական ծավալը լրիվ զբաղվածության պայմաններում: Քեյնսյան հատվածում ազգային արտադրության իրական ծավալը (Չ) նշանակալից չափով փոքր է լրիվ զբաղվածության ժամանակ ազգային արտադրության իրական ծավալից (ՉԲ): Դա վկայում է այն մասին, որ տնտեսությունը գտնվում է խորը ճգնաժամի կամ դեպրեսիայի մեջ, և որ մեծ քանակությամբ ռեսուրսներ (մեքենաներ, սարքավորումներ, աշխատուժ) չեն օգտագործվում: Այդ ռեսուրսները կարելի է օգտագործել առանց որևէ ճնշում գործադրելու գների մակարդակի վրա: Քանի դեռ արտադրողները կարող են աշխատանքային և մյուս ռեսուրսները ձեռք բերել կայուն գներով, արտադրության ընդլայնման ժամանակ արտադրության ծախքերը չեն աճի, հետևաբար, ապրանքների գները չեն բարձրանա: Եվ ընդհակառակը, եթե այս հատվածում արտադրության ծավալը կրճատվի, ապա ռեսուրսների և պատրաստի ապրանքների գները կմնան անփոփոխ: Այս հատվածը կոչվել է անզլիացի տնտեսագետ Ջոն Մեյնարդ քեյնսի անունով: Համաձայն նրա տեսակետի՝ ճգնաժամի մեջ հայտնված տնտե-

սությունում կարելի է ընդլայնել արտադրությունը՝ առանց մեծացնելու արտադրության ծախքերը կան գները: Եվ ընդհակառակը, աշխատավարձի և գների իջեցումը չի թուլացնում արտադրության անկումն ու գործազրկության աճը,



բ) միջանկյալ (վերընթաց) հատված (bc). այստեղ արտադրության ծավալների աճն ուղեկցվում է գների մակարդակի բարձրացմամբ: Պատճառներից մեկն այն է, որ տնտեսությունը բաղկացած է ապրանքների և ռեսուրսների բազմաթիվ շուկաներից, որոնք լրիվ զբաղվածության հասնում են ոչ միաժամանակ և ոչ հավասարաչափ ձևով: Որոշ ճյուղերում նկատվում է ռեսուրսների պակաս և արտադրության հետագա ընդլայնումն ուղեկցվում է դրանց գների բարձրացմամբ, հետևաբար, նաև պատրաստի արտադրանքի թանկացմամբ: Բացի այդ, արտադրության ծավալների ընդլայնումը ստիպում է օգտագործել համեմատաբար հին ու նվազ արդյունավետ արտադրական հզորություններն ու աշխատանքի ընդունել ցածր որակավորում ունեցող աշխատողների, որի հետևանքով արտադրության ծախքերն աճում են և արտադրությունը շահութաբեր դարձնելու համար բարձրացվում են ապրանքների գները,

գ) դասական (ուղղահայաց) հատված (cd). երբ տնտեսությունը գործում է լրիվ հզորությամբ, ապահովված է ռեսուրսների լրիվ զբաղվածությամբ, և գների յուրաքանչյուր հետագա բարձրացում չի կարող ուղեկցվել ազգային արտադրության ծավալների հետագա ընդլայնմամբ: Առանձին ձեռնարկություններ կարող են փորձել ընդլայնել արտադրությունը՝ ավելի բարձր գին առաջարկելով ռեսուրսների համար, սակայն դա կնշանակի ռեսուրսների տեղափոխում և արտադրության ծավալների կրճատում մեկ այլ ձեռնարկությունում, իսկ արտադրության իրական ծավալը կմնա նույնը (Q<sub>f</sub>): Ամբողջական առաջարկի կորի այս հատվածը կոչվում է դասական, որովհետև տնտեսագիտության այս դպրոցի ներկայացուցիչների կարծիքով շուկայական տնտեսության համար լրիվ զբաղվածությունը բնական երևույթ է:

Ամբողջական առաջարկի կորին վերաբերող վիճաբանությունները հիմնականում ընթանում են դասական ու քայնայան դպրոցների միջև: Դասականների կարծիքով ամբողջական առաջարկի կորը բաղկացած է միայն ուղղահայաց հատվածից, քանի որ պահանջարկի փոփոխություններն ազդում են միայն գների մակարդակի վրա՝ անփոփոխ թողնելով արտադրության ծավալները: Քայնասականների կարծիքով կորը կան հորիզոնական, կան էլ, լավագույն դեպքում, վերընթաց տեսք ունի, և պահանջարկի փոփոխությունները կարող են լուրջ հետևանքներ ունենալ արտադրության ծավալների ու զբաղվածության մակարդակի վրա:

«Այլ հավասար պայմաններում» ամբողջական առաջարկի կորն արտահայտում է գների մակարդակի և արտադրության ծավալների փոխազդեցությունը: Դա նշանակում է, որ գների մակարդակն ազդում է ամբողջական առաջարկի մեծության վրա, որի դեպքում կորի դիրքը մնում է անփոփոխ, և տեղաշարժը կատարվում է միայն նրա երկայնքով: Բայց բավական է փոփոխվեն այդ պայմաններից մեկը կամ մի քանիսը, և կորը տեղաշարժվում է աջ կամ ձախ, AS-ից AS<sub>1</sub>, կամ AS-ից AS<sub>2</sub>, որովհետև դրանք ազդում են առաջարկի վրա և կոչվում են ամբողջական առաջարկի ոչ գնային դետերմինանտներ (տես գրաֆիկ 9-6): Ամբողջական առաջարկի կորը տեղաշարժող ոչ գնային դետերմինանտներն են.

1. Ռեսուրսների գների փոփոխությունները, որոնց վրա ազդում են.
  - ա) ներքին ռեսուրսների առկայությունը,
  - բ) ներմուծվող ռեսուրսների գները,

գ) տիրապետությունը շուկայում, այսինքն՝ մոնոպոլիաների առկայությունը և գների փոփոխության հարցում նրանց ներգործության հզորությունը:

2. Աշխատանքի արտադրողականության փոփոխությունները: Այն որոշվում է ազգային արտադրության իրական ծավալի և օգտագործված ռեսուրսների հարաբերությամբ և ցույց է տալիս ծախքերի յուրաքանչյուր միավորի դիմաց ստեղծված արդյունքի միջին ծավալը:

$$\text{Արտադրողականությունը} = \frac{\text{ազգային արտադրության իրական ծավալ}}{\text{ծախքեր}}$$

Աշխատանքի արտադրողականությունն ազդում է արտադրանքի միավորի համար կատարված ծախքերի վրա, որովհետև նրա բարձրացումը հնարավորություն է տալիս ավելի քիչ ծախքերով հասնել մեծ արդյունքի: Միավոր արտադրանքի ծախքերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$\text{արտադրանքի միավորի ծախքեր} = \frac{\text{ռեսուրսների արժեք}}{\text{արտադրանքի քանակ}}$$

Այսպիսով, աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ արտադրանքի միավորի ծախքերը նվազում են, որն էլ ամբողջական առաջարկի կորը տեղաշարժում է դեպի աջ և հակառակը:


3. Իրավական նորմերի փոփոխությունները, որոնց վրա ազդում են.

ա) ձեռնարկություններից գանձվող հարկերը և վճարվող սուբսիդիաները,

բ) պետական կարգավորումը, որի ուժեղացումը պահանջում է լրացուցիչ դրամական միջոցներ, որոնք, ի վերջո, հարկերի ձևով գանձվում են ձեռնարկություններից, մեծացնում արտադրանքի միավորի ծախքերն ու առաջարկի կորը տեղաշարժում դեպի ձախ:

Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ բոլոր այս դետերմինանտներն ազդում են արտադրանքի միավորի ծախքերի վրա, որոնց աճի

դեպքում ամբողջական առաջարկի կորը տեղաշարժվում է դեպի ձախ և հակառակը:




Գրաֆիկ 9.6

**9.4.** Առանձին ապրանքի պահանջարկի և առաջարկի կորերի հատման կետում ձևավորվում են տվյալ ապրանքի հավասարակշռված գինը և հավասարակշռված քանակը, իսկ ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի կորերի հատման արդյունքում՝ գների հավասարակշռված մակարդակը և ազգային արտադրության իրական արդյունքի հավասարակշռված ծավալը:

Սկզբում ընդունենք, թե ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի կորերը հատվում են միջանկյալ հատվածում, որտեղ  $P_e$ -ն գների հավասարակշռված մակարդակն է, իսկ  $Q_e$ -ն՝ ազգային արտադրության հավասարակշռված ծավալը (տես գրաֆիկ 9.7): Որպեսզի ցույց տանք, թե ինչու  $P_e$ -ն հավասարակշռված գինն է, իսկ  $Q_e$ -ն հավասարակշռված ծավալը, ենթադրենք, թե գների իրական մակարդակը համապատասխանում է ոչ թե  $P_e$ , այլ  $P_1$  կետին:

Ամբողջական առաջարկի կորը ցույց է տալիս, որ  $P_1$  գների մակարդակի պայմաններում ազգային արտադրության իրական ծավալը չի գերազանցի  $Q_1$  մակարդակը: Մինչդեռ, ամբողջական պահանջարկի կորից ակնհայտ է, որ գնորդները պատրաստ են գնելու  $Q_e$ -ից ավելի մեծ արդյունք՝  $Q_2$ : Ինչպես ցույց են տալիս սլաքները, գների մակարդակի բարձրացումը  $P_1$ -ից մինչև  $P_e$ , կստիպի արտադրողներին ավելացնել


արտադրության ծավալը  $Q_1$ -ից մինչև  $Q_e$ , իսկ սպառողներին կրճատելու իրենց գնումները՝  $Q_2$ -ից մինչև  $Q_e$ : Երբ արտադրված և գնված արդյունքների իրական ծավալները հավասարվեն, տնտեսության մեջ կառաջանա հավասարակշռվածություն ( $P_e$  և  $Q_e$ ):




Գրաֆիկ 9.7

Եթե կորերը հատվում են քայնայան կամ հորիզոնական հատվածում (տես գրաֆիկ 9-8), ապա գները ոչ մի դեր չեն կատարում, որովհետև դրանք հաստատուն են: Այս դեպքում, եթե ազգային արտադրության ծավալն աճի  $Q_e$ -ից մինչև  $Q_2$ , ապա շուկայում կառաջանա ավելցուկ, որովհետև արտադրանքի մի մասը AD պահանջարկի դեպքում հնարավոր չի լինի վաճառել: Անցանկալի պաշարներից խուսափելու նպատակով ազգային արտադրության ծավալները կկրճատվեն  $Q_2$ -ից մինչև  $Q_e$  մակարդակ: Եվ հակառակը: Եթե ազգային արտադրության ծավալը կազմի  $Q_1$ , ապա պաշարներն արագ կնվազեն, որովհետև վաճառքը կգերազանցի արտադրությանը, որն էլ ձեռնարկություններին կխթանի ընդլայնել արտադրությունը  $Q_1$ -ից մինչև  $Q_e$ : Սողելի դասական հատվածում գոյություն ունի լրիվ զբաղվածություն և ամբողջական պահանջարկի աճը ( $AD_1$ -ից մինչև  $AD_2$ ) կազդի միայն գների վրա, վերջինս բարձրացնելով  $P_1$ -ից մինչև  $P_2$ : Ազգային արտադրության իրական ծավալը կմնա լրիվ զբաղվածության մակարդակի վրա՝  $Q_f$  (տես գրաֆիկ 9.-9):

Այսպիսով, ամբողջական պահանջարկի աճի հետևանքները կախված են այն բանից, թե դա ամբողջական առաջարկի որ հատվածում է կատարվում.



Գրաֆիկ 9.8



Գրաֆիկ 9.9

- հորիզոնական (քայնայան) հատվածում այն հանգեցնում է ազգային արտադրության իրական ծավալի մեծացմանը՝ չանդրադառնալով գների մակարդակի վրա,

- դասական (ուղղահայաց) հատվածում բարձրանում են գները, իսկ ազգային արտադրության իրական ծավալը մնում է նույն «լրիվ զբաղվածության» մակարդակի վրա,

- միջանկյալ հատվածում ամբողջական պահանջարկի աճը բերում է ինչպես ազգային արտադրության իրական ծավալի, այնպես էլ գների մակարդակի աճի:

Ամբողջական պահանջարկի աճը դասական և միջանկյալ հատվածներում վկայում է պահանջարկի ինֆլյացիայի մասին:


Իսկ ինչ տեղի կունենա, եթե ամբողջական պահանջարկը կրճատվի: Եթե առաջնորդվենք պարզ տրամաբանությամբ, ապա

- քայնայան հատվածում ազգային արտադրության իրական ծավալը կկրճատվի, իսկ գների մակարդակը կմնա նույնը,

- դասական հատվածում գները կիջնեն, իսկ ազգային արտադրության իրական ծավալը կմնա լրիվ զբաղվածության մակարդակի վրա,

- միջանկյալ հատվածում կկրճատվեն ինչպես ազգային արտադրության իրական ծավալը, այնպես էլ գների մակարդակը:

Սակայն գոյություն ունի իրավիճակը բարդացնող մի կարևոր գործոն, որը կասկածի տակ է դնում դասական և միջանկյալ հատվածներում ամբողջական պահանջարկի կրճատման հետևանքների կանխատեսումները: Հստակության համար հարցի բացատրությունը դիտարկենք գրաֆիկական արտահայտության մեջ:



Եթե ամբողջական պահանջարկը մեծանում է  $AD_1$  -ից մինչև  $AD_2$ , ապա տնտեսությունը հորիզոնական հատվածի  $a$  կետի  $P_1Q_1$  հավասարակշռված վիճակից անցնում է նոր հավասարակշռված վիճակի՝ ուղղահայաց հատվածի  $b$  կետում ( $P_2Q_e$ ): Բայց գները ինչպիսի հեշտությամբ որ բարձրանում են, հատկապես կարճ ժամանակամիջոցում, նույնպիսի հեշտությամբ չեն վերադառնում սկզբնական մակարդակին: Ուստի, եթե

ամբողջական պահանջարկը սկսի շարժվել հակառակ ուղղությամբ և իջնի  $AD_2$ -ից մինչև  $AD_1$ , տնտեսությունը չի վերադառնա իր սկզբնական հավասարակշռությանը  $a$  կետում: Ավելի շուտ կպահպանվի գների բարձր մակարդակ  $P_2$  կետում, և այդ պատճառով ամբողջական պահանջարկի կրճատումը  $AD_2$  -ից մինչև  $AD_1$ , տնտեսությունը կշարժի նոր հավասարակշռության արդեն  $c$  կետում, որին կհամապատասխանի  $P_2$  գների մակարդակը, իսկ արտադրության իրական ծավալը կիջնի մինչև  $Q_2$ : Այս երևույթն անվանվում է *արգելանքի էֆեկտ*: Դա այնպիսի մեխանիզմ է, որը թույլ է տալիս անիվը պտտել առաջ, բայց ոչ հետ: Ինչպես ապրանքների, այնպես էլ ռեսուրսների գները դառնում են ոչ ճկուն և իջնելու միտում չեն դրսևորում: Սեկ անգամ արդեն աճած տնտեսական ցուցանիշները չեն իջնում, ծայրահեղ դեպքում, չեն վերադառնում իրենց սկզբնական մակարդակին: Այն, որ գները դժվարությամբ են իջնում, պայմանավորված է մի շարք պատճառներով.

1. աշխատավարձը կազմում է ֆիրմայի ընդհանուր ծախսերի մեծ մասը: Ֆիրմաները չեն կարող միաժամանակ և՛ իջեցնել գները և՛ շահութաբաժնի լինել: Աշխատավարձի իջեցման ոչ ճկունությունը բացատրվում է.

ա) աշխատանքային պայմանագրերի առկայությամբ, որոնք արգելում են մինչև պայմանագրի ժամկետի լրանալը վերանայել աշխատավարձի չափը,


բ) աշխատավարձի իջեցման անպատակահարմարությամբ: Ձեռնարկատերերի համար աշխատավարձի իջեցումը կարող է շահավետ չլինել, որովհետև կարող է տանել աշխատանքի արտադրողականության, արտադրանքի որակի իջեցմանը, որի կորուստները կգերազանցեն աշխատավարձի իջեցման շնորհիվ տնտեսված միջոցներին: Բացի այդ, աշխատավարձի իջեցման հետևանքով կարող են աշխատանքից հեռանալ բարձր որակավորում ունեցող աշխատողները, որոնց ուսուցման վրա ձեռնարկատերերը զգալի միջոցներ են ծախսել,

գ) աշխատավարձի նվազագույն մակարդակի սահմանմամբ, որն այն իրավական հիմքն է, որից ելնելով հաշվարկվում է ցածր որակավորման աշխատողների աշխատավարձը,

2. մոնոպոլիաների առկայությունը, որոնք պահանջարկի իջեցման դեպքում կարող են հակազդել գների իջեցմանը՝ ավելի մեծ չափերով կրճատելով արտադրության և զբաղվածության մակարդակները:

Մինչև այժմ դիտարկել ենք, թե ինչպես են փոփոխվում գների հավասարակշռված մակարդակն ու արտադրության հավասարակշռված ծավալը, երբ ամբողջական առաջարկի կորի անփոփոխ դիրքի պայմաններում

տեղաշարժվում է ամբողջական պահանջարկի կորը: Սակայն գների հավասարակշռված մակարդակն ու արտադրության հավասարակշռված ծավալը կարող են փոփոխվել նաև այն դեպքում, երբ ամբողջական պահանջարկի անփոփոխ մակարդակի դեպքում տեղաշարժվում է ամբողջական առաջարկի կորը (տես գրաֆիկ 9.11): Պահանջարկի տվյալ մակարդակի դեպքում ամբողջական առաջարկի կորձատուները կրկնակի բացասական ազդեցություն է ունենում տնտեսության վրա: Առաջարկի կորը տեղաշարժվում է դեպի ձախ  $AS_1$ -ից  $AS_2$ , որի հետևանքով միաժամանակ կրճատվում է ազգային արտադրության ծավալը և բարձրանում գների մակարդակը: Այսպիսի իրավիճակը, ինչպես արդեն նկատել ենք, կոչվում է *ստագֆլյացիա*, որի պայմաններում գործազրկությունն ու ինֆլյացիան աճում են միաժամանակ: Պահանջարկի անփոփոխ մակարդակի դեպքում ամբողջական առաջարկի աճը նշանակում է ազգային արտադրության ծավալների աճ գների մակարդակի իջեցման պայմաններում: Ամբողջական առաջարկի կորի աջ տեղաշարժը ( $AS_1$ -ից  $AS_3$ ) վկայում է տվյալ երկրի արտադրական պոտենցիալի աճի մասին, այսինքն, դեպի աջ է տեղաշարժում նաև արտադրական հնարավորությունների կորը: Այսպիսի իրավիճակը, երբ ազգային արտադրության ծավալներն աճում են՝ գների մակարդակի իջեցման պայմաններում, վկայում է տնտեսական աճի մասին (ժլետ):



### ԳԼՈՒԽ 10 . ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՆ և ՔԵՅՆԱՅԱՆ ՏԵՍԻՏՅՈՒՆՆԵՐԸ

*Նախնական դիտողություններ:*

- 10.1.** *Չբաղվածության դասական տեսությունը: Սեյի օրենքը:*
- 10.2.** *Չբաղվածության քեյնսյան տեսությունը. դասականների տեսությունը մերժող փաստարկներ:*
- 10.3.** *Չբաղվածության քեյնսյան տեսության լաբորատորիան.*
  - ա)** *սպառում և խնայողություններ, սպառման և խնայողության միջին և սահմանային հակվածություն, սպառման և խնայողությունների վրա ազդող գործոնները:*
  - բ)** *ինվեստիցիաներ. մակարդակը, կորը և դրանց վրա ազդող գործոնները:*
- 10.4.** *Արտադրության հավասարակշռված ծավալը քեյնսյան մոդելում:*
- 10.5.** *Մուլտիպլիկատորի էֆեկտը:*
- 10.6.** *Տնտեսության պետական կարգավորումը: Քեյնսյան խաչը:*

Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի մոդելը ելակետային նշանակություն ունի մակրոտնտեսական հիմնահարցերի հետագա ուսումնասիրության համար: Խոսքը հատկապես վերաբերում է ամբողջական պահանջարկի և ամբողջական ծախսերի (հետևաբար նաև արտադրության ծավալների, եկամուտների և զբաղվածության) փոփոխություններին: Այս առումով սույն թեման նպատակ ունի համարել զբաղվածության դասական և քեյնսյան տեսությունները, ցույց տալ դրանց բաժանող տիրույթները: Հետագա վերլուծության պարզեցման համար կատարում ենք հետևյալ նախնական ենթադրությունները.

- ա)** ընդունում ենք, որ գոյություն ունի «փակ տնտեսություն», այսինքն՝ վերլուծությունը վերաբերում է միայն ներքին տնտեսությանը:
- բ)** ազատ մրցակցության պայմաններում լրիվ զբաղվածության ապահովման հնարավորությունը պարզելու համար անտեսում ենք պետության տնտեսական գործունեությունը,

գ) հայտնի է, որ խնայողություններ կատարում են ինչպես տնային տնտեսությունները, այնպես էլ ձեռնարկությունները, սակայն ընդունում ենք, որ բոլոր խնայողությունները միայն անձնական են:

Առաջին և երկրորդ ենթադրություններից հետևում է, որ ամբողջական ծախսերի չորս բաղկացուցիչ տարրերից հաշվի ենք առնում միայն երկուսը՝ անձնական սպառումը և ինվեստիցիաները, և վերանում ենք պետական գնումների ու զուտ արտահանման առկայությունից: Երկրորդ և երրորդ ենթադրությունների համաձայն ՀԱԱ -ը, ՋԱԱ-ը, ԱԵ, անձնական եկամուտը և հարկերի գանձումից հետո մնացած անձնական եկամուտն իրար հավասար են: Ելնելով այս ճշգրտումներից՝ պարզ ենք, թե ի վիճակի է արդյոք զուտ կապիտալիզմն ապահովել ամբողջական ծախսերի այնպիսի մակարդակ, որի դեպքում հնարավոր է ռեսուրսների լրիվ զբաղվածություն:

**10.1.** Մինչև XX դարի 30-ական թվականները՝ «մեծ դեպրեսիան», դասական և նեոդասական ուղղությունների բազմաթիվ ներկայացուցիչներ (Ռ.Մալթուս, Դ.Ռիկարդո, Ֆ.Էջոուտ, Ա.Մարշալ, Ա.Պիգու), որոնք զարգացնում էին Ա. Սմիթի գաղափարները, տնտեսական տատանումները համարելով պատահական երևույթներ, գտնում էին՝

- շնորհիվ հավասարակշռված գների, որպես պահանջարկի և առաջարկի ազատ փոխազդեցություն, տնտեսությունն ինքնակարգավորվող համակարգ է,

- ամբողջական պահանջարկի (բոլոր անհատական պահանջարկների գումարը) և ամբողջական առաջարկի (բոլոր անհատական առաջարկների գումարը) հավասարակշռությունն ինքնաբերաբար ապահովում է լրիվ զբաղվածություն և արտադրված ապրանքների իրացում,

- պետության միջամտությունը տնտեսությանը պետք է լինի նվազագույն չափով: Տնտեսության մեջ պետք է գործի ինքնակարգավորման սկզբունքը:

Ավելի կոնկրետ՝ զբաղվածության դասական տեսությունը հիմնված է հետևյալ երկու դրույթների վրա. ա) ենթադրվում է, որ ամբողջական ծախսերի մակարդակը դժվար թե անբավարար լինի լրիվ զբաղվածության ժամանակ ստեղծված ամբողջ արտադրանքը գնելու համար, բ) եթե նույնիսկ ամբողջական ծախսերն անբավարար լինեն, ապա

արագ կսկսեն գործել կարգավորման այնպիսի լծակներ, ինչպիսիք են՝ գինը, աշխատավարձը և տոկոսադրույքը:


Ծախսերի անբավարար մակարդակի անհնարինության դրույթը հիմնվում է «Սեյի օրենքի» վրա, որի համար առիթ է ծառայել հետևյալ դեպքը. ֆրանսիացի տնտեսագետը երիտասարդ ժամանակ մասնակցում է մի ուրախ հավաքույթի: Հյուրերից մեկը գինու շշերը դատարկելու հետ միասին, սկսում է դրանք ջարդել, անընդհատ կրկնելով, թե «անհրաժեշտ է աջակցել գործարաններին»: Սեյին օրիգինալ է թվում հայրենական արդյունաբերությանն այդպիսի աջակցությունը, ուղղելով այն մտքին, թե ինչ պայմաններում արտադրությունը կարող է շարունակվել, իսկ արտադրված արդյունքներն՝ իրացվել:

Ապրանքների առաջարկը ստեղծում է սեփական պահանջարկը: Ապրանքների պահանջարկի և դրանց առաջարկի միջև խզում գոյություն չունի, դրանք հավասարակշռված են, «ամեն մի արդյունք արտադրության պահից իր լրիվ արժեքի չափով ճանապարհ է բացում այլ արդյունքների իրացման համար»: Դա նշանակում է, որ ամեն մի արտադրություն ստեղծում է եկամուտներ, որոնցով գնվում են դրանց հավասար արժեքի ապրանքներ: Ամբողջական պահանջարկը միշտ հավասար է ամբողջական առաջարկին, հետևաբար համընդհանուր գերարտադրությունն անհնարին է:

Սակայն գոյություն ունի այդպիսի բացատրությունը բարդացնող խնայողությունների գործոնը: Թեև ապրանքների արտադրությունն ապահովում է համապատասխան մեծության դրամական եկամուտ, բայց երաշխիք չկա, որ եկամուտ ստացողներն այն ամբողջությամբ կծախսեն: Եկամուտների մի մասը կարող է խնայվել, հետևապես, այն չի արտահայտվի պահանջարկում, առաջ բերելով խանգարում «եկամուտներ-ծախսեր» հոսքերում: Խնայողությունները միջոցների նվազեցում են եկամուտների հոսքից, որը սպառողական ծախսերն անբավարար կդարձնի արտադրված ամբողջ արդյունքի գնման համար: Եթե տնային տնտեսությունները խնայում են իրենց եկամուտների մի մասը, ապա առաջարկը չի կարող ստեղծել սեփական պահանջարկը: Խնայողություններն առաջ են բերում սպառման անբավարարություն: Իսկ դա նշանակում է չիրացված ապրանքներ, արտադրության կրճատում, գործազրկություն և եկամուտների նվազում: Հետևապես Սեյի օրենքն արդյունավետ չի գործում:



Սակայն, դասականների կարծիքով, իրականում խնայողությունները չեն բերում պահանջարկի անբավարարության, քանի որ տնային տնտեսությունների կողմից խնայված գումարները վերածվում են ինվեստիցիաների և փոխհատուցում սպառողական ծախսերի անբավարար մեծությունը: Ինվեստիցիաները գումարվում են ծախսեր-եկանուտներ հոսքին և լրացնում սպառման պակասը՝ կապված խնայողությունների հետ: Հետևաբար, արտադրության մակարդակը և զբաղվածությունը մնում են հաստատուն: Իսկ այն, որ խնայողությունները և ինվեստիցիաներն իրար հավասար են, երաշխավորում է դրամական շուկան: Վերջինիս, իսկ ավելի ստույգ, տոկոսադրույքի (փողի օգտագործման դիմաց գնի) միջոցով եկամուտներ-ծախսեր հոսքից որպես խնայողություն դուրս մնացած գումարները՝ իբրև ինվեստիցիոն նպատակով կատարված ծախսեր, նորից վերադառնում են նույն հոսքի մեջ: Սովորաբար տնային տնտեսություններն ավելի շատ հակված են ծախսելու իրենց եկամուտները, քան խնայելու: Այստեղից էլ այն հետևությունը, որ նրանք կխնայեն միայն այն դեպքում, եթե դրա դիմաց ստանան տոկոսներ: Որքան բարձր է տոկոսադրույքն, այնքան մեծ են խնայողությունները, որոնց կորն ունի վերընթաց տեսք (S):




Խնայողություններ և ինվեստիցիաներ  
Գրաֆիկ 10.1

Խնայողությունների օգտագործման դիմաց տոկոսադրույք վճարում են ձեռնարկատերերը, որոնք պատրաստ են ինվեստիցիաներ կատարել համեմատաբար ցածր տոկոսադրույքների դեպքում: Հետևաբար, այլ հավասար պայմաններում, ինվեստիցիաների կորն ունի վար-

ընթաց տեսք (I): Այդ կորերի հատման կետում ձևավորվում է փողի օգտագործման հավասարակշռված գինը, այսինքն՝ տոկոսադրույքի  $r$  հավասարակշռված մակարդակը, որի դեպքում խնայողությունների մեծությունը հավասար է ինվեստիցիաներին (q):

Խնայողությունների աճը պարզապես խնայողությունների կորը կտեղաշարժի  $S$ -ից  $S_1$  դիրքը (տես գրաֆիկ 10.2), ու թեև խնայողությունները կարճ ժամանակամիջոցում կգերազանցեն ինվեստիցիաներին և, հնարավոր է, առաջ բերեն ժամանակավոր գործազրկություն, սակայն դրանց ավելցուկները կհանգեցնեն տոկոսադրույքի իջեցման մինչև հավասարակշռության ավելի ցածր մակարդակ: Իսկ այդ ցածր տոկոսադրույքը ( $r_1$ ) կտանի ինվեստիցիաների վրա կատարվող ծախսերի աճին՝ մինչև այն կհավասարվի խնայողությունների հետ  $q_1$  կետում: Այս մեխանիզմն էլ հենց ապահովում է Սեյի օրենքի գործողությունը:



Խնայողություններ և ինվեստիցիաներ  
Գրաֆիկ 10.2

Այսպիսով, ըստ դասականների տեսության, տնտեսությունը նման է ջրավազանի, որտեղ ջրի ծավալը համապատասխանում է արդյունքի թողարկմանը և զբաղվածությանը: Խնայողությունների ծորակով ցանկացած արտահոսք նորից վերադառնում է ջրավազան ինվեստիցիաների ծորակով: Այդ կարգավորումը կատարվում է տոկոսադրույքի միջոցով, որն իրար է միացնում ջրթափ խողովակը և ծորակը:

Դասական տնտեսագետներն իրենց դրույթը հիմնավորում են մի այլ փաստարկով ևս. նրանց կարծիքով արտադրվող և իրացվող արդ-

յունքների քանակը կախված է ոչ միայն ամբողջական ծախսերի, այլ նաև արտադրանքի գների մակարդակից: Դա նշանակում է, որ եթե նույնիսկ ինչ-որ պատճառով, ժամանակավորապես, տոկոսադրույքն ընդունակ չլինի համապատասխանության բերելու տնային տնտեսությունների խնայողությունները և ձեռնարկատերերի ինվեստիցիաները, ապա ամբողջական ծախսերի ամեն մի կրճատում համամասնորեն կփոխհատուցվի գների մակարդակի իջեցումով: Այսինքն, եթե տնային տնտեսությունները ժամանակավորապես խնայել են ավելի, քան ձեռնարկատերերը մտադիր են ինվեստավորել, ապա դրա հետ կապված ամբողջական ծախսերի կրճատումը չի բերի արտադրության իրական ծավալի, եկամուտների և զբաղվածության մակարդակի երկարատև կրճատման: Այդ ծախսերի կրճատման հետ գները կիջնեն, փողի գնողունակությունը կբարձրանա, և կաճի ամբողջական պահանջարկը: Օրինակ, ընդունենք, թե սկզբում 20 դոլարով կարելի էր գնել X ապրանքից 5 միավոր, գների իջեցումից հետո նույն 5 միավորն արդեն կարելի կլինի գնել 10 դոլարով:

Նույն երևույթը տեղի է ունենում նաև ռեսուրսների շուկայում, որտեղ ռեսուրսների գները, այդ թվում նաև աշխատավարձի դրույքներն իջնում են, որպեսզի ձեռնարկատերերին շահավետ լինի գների իջեցման պայմաններում զբաղվել ապրանքների արտադրությամբ: Խնայողությունների աճի հետևանքով առաջացած պահանջարկի կրճատումը փոքրացնում է նաև աշխատուժի պահանջարկը, որի հետևանքով էլ իջնում է վերջինիս գինը՝ աշխատավարձը: Դրա շնորհիվ ձեռնարկատերերին շահավետ է դառնում վարձել ավելի շատ աշխատուժ, հաստատվում է աշխատավարձի հավասարակշռված դրույք, որն էլ բացառում է գործազրկությունը:

Այսպիսով, ըստ դասական տնտեսագետների, տոկոսադրույքը մի կողմից, գների ու աշխատավարձի ճկունությունը՝ մյուս, ապահովում են լրիվ զբաղվածություն և պետության միջամտությունն ավելորդ և նույնիսկ վնասակար է:

**10.2.** Իր նամակներից մեկում անգլիացի տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսը նկատում է. «Ենթադրում են, որ տնտեսագիտության տեսության վերաբերյալ գիրքը, որը ես գրում եմ, նշանակալից չափով հեղափոխականացնում է...աշխարհում տնտեսական պրոբլեմների նկատմամբ վերաբերմունքը»: Եվ նա իրավացի էր: Խոսքը «Զբաղվածության,

տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» (1936) աշխատության մասին է: «Մեծ դեպրեսիան» տնտեսագիտության տեսությունը դրել էր կատարված դեպքերի քննության տակ: Մինչքեյնսյան շրջանի տնտեսագետները երևույթները դիտարկում էին միկրոտնտեսական տեսանկյունից: Ջ. Մ. Քեյնսը տարակարծություն է արտահայտում դասական ու նեոդասական ավանդական տեսությունների վերաբերյալ, առաջադրելով նոր մեթոդաբանական ուղեցույցներ, վերլուծություններ, չափումներ ու կախվածություններ, ագրեգատիվ այնպիսի մեծություններ ու փոփոխականներ, որոնք գործում են մի նոր՝ մակրոտնտեսական հարթության մեջ: Ըստ Քեյնսի տեսության կապիտալիզմի ժամանակ պարզապես բացակայում է այն մեխանիզմը, որը կարող է երաշխավորել լրիվ զբաղվածություն: Կապիտալիզմն ինքնակարգավորվող համակարգ չէ, իսկ տնտեսական տատանումները ոչ այնքան պատահական խանգարումների արդյունք են, որքան օրինաչափություն: Տնտեսությունը կարող է հասնել արտադրության ամբողջական ծավալի հավասարակշռության նաև գործազրկության և ինֆլյացիայի որոշակի մակարդակների պայմաններում: Քեյնսականները ուղղակի մերժում էին տոկոսադրույքի, գնի և աշխատավարձի հարաբերակցության, որպես ավտոմատ կարգավորիչների վերաբերյալ դասականների պոստուլատները:

1. Տոկոսադրույքը չի կարող կատարել կարգավորիչ ֆունկցիայի դեր և խնայողությունները հավասարեցնել ինվեստիցիաներին, քանի որ.

ա) խնայողությունների և ինվեստիցիաների որոշումներն ընդունվում են հասարակության տարբեր խմբերի կողմից և որևէ երաշխիք չկա, որ նրանց պլանները հնարավոր է համաձայնեցնել միմյանց հետ,

բ) խնայողություններ և ինվեստիցիաներ իրականացնող սուբյեկտներն առաջնորդվում են տարբեր շարժառիթներով: Խնայողությունները չի կարելի կապել միայն տոկոսադրույքների հետ: Միշտ չէ, որ խնայողություններ են կատարվում տոկոսներ ստանալու ակնկալիքով: Մարդիկ խնայողություններ են անում խոշոր գնումներ կատարելու, երեխաներին կրթության տալու, ապահով ծերության, երկարատև հիվանդություններից կամ գործազրկությունից ապահովագրվելու համար, ըստ սովորության կամ պարզապես առանց որևէ էական պատճառի: Այսպիսի դեպքերում խնայողությունների մակարդակն ուղիղ համեմատականորեն կախված չէ տոկոսադրույքից, և հնարավոր է նույնիսկ հակադարձ կախվածություն: Օրինակ, եթե անհրաժեշտ է ապահովել հաստատուն

մեծությամբ լրացուցիչ եկամուտ, ապա բարձր տոկոսադրույթի դեպքում այդ նպատակին կարելի է հասնել ավելի փոքր խնայողությունների առկայության պայմաններում:

Քեյնսականների կարծիքով խնայողությունների և ինվեստիցիաների մեծությունը որոշող հիմնական գործոնն ազգային եկամուտն է, իսկ ինվեստիցիաների մեծության վրա բացի տոկոսադրույթից ազդում է նաև զուտ շահույթի սպասվելիք նորման: Տոկոսադրույթը (ինվեստավորման նպատակով վերցրած դրամական կապիտալի գինը) հաշվի է առնվում ինվեստիցիաների պլանները կազմելու ժամանակ, իսկ շահույթը՝ ինվեստիցիաներ կատարելուց որոշ ժամանակ անց: Իսկ արտադրության անկման փուլում շահույթների ստացումը փոքրանում է, և, չնայած նշանակալից չափով տոկոսադրույթի իջեցմանը, փոքրանում է նաև ինվեստիցիաների մակարդակը,

զ) ըստ դասականների ինվեստավորման միակ աղբյուրը ընթացիկ խնայողություններն են: Քեյնսականների կարծիքով դասականների մոդելում դրամական շուկան շատ է պարզեցված, քանի որ առկա են միջոցների ևս երկու այլ աղբյուր՝ բնակչության կանխիկ կուտակումները և վարկային կազմակերպությունները, որոնք մեծացնում են փողի առաջարկը: Բնակչությունը բանկային համակարգից դուրս փողը պահում է ոչ միայն անենօրյա գումարների, այլ նաև կանխիկ ձևով հարստության կուտակման համար: Ուրեմն, եթե դրանց մի մասը տրվի ինվեստորներին, դրամական շուկայում ընթացիկ խնայողությունների համեմատությամբ կարող է առաջանալ միջոցների ավելցուկ: Նույն ձևով վարկային կազմակերպությունները ևս մեծացնում են փողի առաջարկը դրամական շուկայում: Այսպիսով, բնակչության ձեռքում գտնվող կանխիկ խնայողությունների կրճատումը կամ բանկերի կողմից վարկի տրամադրումը կարող է հանգեցնել այն բանին, որ ինվեստիցիաները գերազանցեն ընթացիկ խնայողություններին: Դա նշանակում է, որ Սեյի օրենքը չի գործում, և որ արտադրության, զբաղվածության և գների մակարդակները կարող են տատանվել: Բացի այդ ընթացիկ խնայողությունները կարող են չվերածվել ինվեստիցիաների, որի պատճառով ամբողջական պահանջարկը կնվազի, և արտադրության ու զբաղվածության մակարդակը կիջնի: Դարձյալ Սեյի օրենքը չի գործի, որովհետև ընթացիկ խնայողությունները կգերազանցեն ինվեստիցիաներին: Այսպիսով, ըստ քեյնսականների խնայողությունների և ինվեստիցիաների համընկ-

մեղը կարող է զուտ պատահական լինել, ուստի մակրոտնտեսական անկայունությունը միանգամայն օրինաչափ է:


2. Քեյնսականները հերքում են նաև դասականների երկրորդ՝ գների ու աշխատավարձի ճկունության փաստարկը, քանի որ, ինչպես ցույց է տալիս արգելանվի էֆեկտը, շուկայի անկատարությունը, մոնոպոլիաների, արհմիությունների, նվազագույն աշխատավարձի վերաբերյալ օրենսդրության և բազմաթիվ այլ գործոնների առկայությունն անհնարին է դարձնում գների ու աշխատավարձի քիչ թե շատ էական իջեցում: Ավելին, նույնիսկ դրանց իջեցման դեպքում գործազրկության հաղթահարումը հնարավոր չէ, քանի որ գների և աշխատավարձի իջեցումը նշանակում է եկամտի կրճատում, որն էլ իր հերթին ուղեկցվում է ամբողջական ծախսերի նվազեցմամբ: Եթե ամբողջական ծախսերը նվազեն ավելի արագ տեմպերով, ապա արտադրության ընդլայնման և աշխատուժի առաջարկի մեծացման մասին խոսք չի կարող: Առանձին ձեռնարկության համար աշխատավարձի իջեցումը կարող է ուղեկցվել աշխատողների թվի ավելացմամբ, բայց ամբողջ հասարակության մասշտաբով դա նշանակում է եկամտի նվազում և ամբողջական պահանջարկի կրճատում: Եթե արտադրանքն այդպիսի պայմաններում հնարավոր չլինի իրացնել, ապա ձեռնարկությունը պարզապես շահագրգռված չի լինի արտադրել, առավել ևս ընդլայնել արտադրության ծավալները:

Այսպիսով, դասական տնտեսագետները գտնում են, որ ամբողջական պահանջարկը հաստատուն է, և եթե նույնիսկ այն նվազի, ապա շուկայի ինքնակարգավորող մեխանիզմը, առանց պետության միջամտության, տնտեսությունը կպահի արտադրության պոտենցիալ ծավալի և գործազրկության բնական մակարդակի վրա: Քեյնսյան տեսությունը գործազրկությունը համարում է հնարավոր և երկարատև երևույթ՝ կապված պահանջարկի փոփոխության, գների ու աշխատավարձի իջեցման նվազ ճկունության հետ: Ուստի անկունների և ճգնաժամների ժամանակ կորուստներից խուսափելու համար անհրաժեշտ է ամբողջական պահանջարկի մակրոտնտեսական կարգավորում պետության կողմից:

Այս իմաստով հետագա վերլուծությունը վերաբերում է ամբողջական պահանջարկը պայմանավորող ամբողջական ծախսերի բաղադրիչների դիտարկմանը:

**10.3.** Ըստ քեյնսյան տեսության արտադրված ապրանքների ու ծառայությունների քանակը, հետևաբար նաև զբաղվածության մակարդակը, ուղիղ համեմատական կախվածության մեջ են գտնվում ամբողջական ծախսերի մակարդակից: Քեյնսյան տեսության լաբորատորիայի հիմնական գործոններն են. սպառման, խնայողությունների և ինվեստիցիաների գրաֆիկները, որոնք ցույց են տալիս, թե գների որոշակի մակարդակի պայմաններում տնային տնտեսություններն ինչքան են պլանավորում սպառել և խնայել, իսկ ձեռնարկություններն՝ ինվեստավորել:

ա) *Սպառում և խնայողություններ.* սպառումն ամբողջական ծախսերի հիմնական բաղադրիչն է, ուստի նախ կարևոր է պարզել վերջինս որոշող հիմնական գործոնները, որոնք միաժամանակ նաև խնայողությունները պայմանավորող գործոններ են: Սպառողական ծախսերի մակարդակը պայմանավորող գլխավոր գործոնը հարկերի վճարումից հետո մնացած անձնական եկամուտն է (DI), որը սպառման և խնայողությունների գումարն է: Սպառման և հարկերի վճարումից հետո մնացած եկամտի միջև գործում է ուղիղ համեմատական կապ, ընդ որում, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, տնային տնտեսությունները սպառում են իրենց եկամտի գերակշռող մասը: Գրաֆիկորեն այդ փոխազդեցությունն ունի հետևյալ տեսքը:




Գրաֆիկ 10.3

Անկյան կիսորդի վրա գտնվող ցանկացած կետ ցույց է տալիս եկամուտների այնպիսի մեծություն, որտեղ խնայողությունները բացակայում են, և սպառումը հավասար է եկամուտներին, այսինքն  $DI = C$ , իսկ  $S = 0$ : Անկյան կիսորդից վեր գտնվող կետերը վկայում են, որ սպա-

ռումը գերազանցում է եկամուտներին, և տնային տնտեսություններն ապրում են պարտքերի կամ նախկինում կուտակած միջոցների հաշվին: Կիսորդից վար գտնվող կետերում արդեն եկամուտներն են գերազանցում սպառմանը, այսինքն եկամուտների մի մասը տնային տնտեսությունները կուտակում են:

Խնայողությունների գրաֆիկը (տես՝ գրաֆիկ 10.4) կառուցելու համար անհրաժեշտ է որոշել խնայողությունների մեծությունը  $S = DI - C$  բանաձևով և տեղադրել ուղղահայաց առանցքի վրա:



Գրաֆիկ 10.4

Այս գրաֆիկում արքսիսների առանցքից ցած գտնվող կետերը վկայում են, որ տնային տնտեսություններն ապրում են պարտքերի հաշվին, իսկ հատման կետում խնայողությունները բացակայում են, և եկամուտներն ամբողջությամբ սպառվում են: Ավելի բարձր եկամուտների դեպքում տնային տնտեսություններն իրենց եկամուտների մի մասը կուտակում են, որի մեծությունն արտահայտվում է արքսիսների առանցքի ու խնայողությունների գրաֆիկի միջև ընկած հեռավորությամբ:

Տոկոսներով արտահայտված ընդհանուր եկամտի այն մասը, որը սպառվում է, կոչվում է *սպառման միջին հակվածություն (APC)*, իսկ այն մասը, որը վեր է ածվում խնայողությունների՝ *խնայողության միջին հակվածություն (APS)*:

$$APC = \frac{\text{սպառում}}{\text{եկամուտ}} \times 100 \quad APS = \frac{\text{խնայողություն}}{\text{եկամուտ}} \times 100$$

Ընդ որում, եկամտի աճին զուգընթաց APC-ն նվազում է, իսկ APS-ն՝ աճում, այսինքն, խնայողությունների միջին հակվածությունը եկամտի աճի հետ մեծանում է: Քանի որ հարկերի վճարումից հետո մնացած եկամուտը կամ սպառվում է կամ էլ կուտակվում, հետևաբար դրանց գումարը պետք է հավասար լինի եկամտի ընդհանուր մեծությանը, այսինքն՝  $APC + APS = 1$ :

Այն, որ տնային տնտեսությունները սպառում են եկամտի որոշակի մասը, դեռևս չի նշանակում, որ նրանք կսպառեն նույնպիսի մեծության գումար նաև եկամտի փոփոխության դեպքում: Եկամտի փոփոխության (աճի կամ կրճատման) այն մասը, որը սպառվում է, կոչվում է *սպառման սահմանային հակվածություն (MPC)*, իսկ այն մասը, որը խնայվում է՝ *խնայողության սահմանային հակվածություն (MPS)*: Այլ կերպ ասած, դա սպառման (խնայողության) ցանկացած փոփոխության հարաբերությունն է եկամտի մեծության այն փոփոխությանը, որն առաջացրել է սպառման (խնայողության) այդպիսի փոփոխություն:

$$MPC = \frac{\text{փոփոխություն սպառման մեջ}}{\text{փոփոխություն եկամուտներում}} \times 100$$

$$MPS = \frac{\text{փոփոխություն խնայողության մեջ}}{\text{փոփոխություն եկամուտներում}} \times 100$$

Քանի որ եկամուտների ցանկացած փոփոխություն կամ սպառվում է, կամ էլ վերածվում խնայողությունների, ուստի  $MPC + MPS = 1$ : Տնտեսագետների մեծ մասի կարծիքով հասարակության մասշտաբով MPC-ն և MPS-ը համեմատաբար հաստատուն մեծություններ են, այսինքն, եկամտի ցանկացած փոփոխություն տրոհվում է սպառման և խնայողության միջև մոտավորապես նույնպիսի հարաբերակցությամբ:

Հարկերի վճարումից հետո մնացած եկամուտը սպառման և խնայողության մեծությունը որոշող հիմնական գործոնն է, այնպես, ինչպես զինը՝ պահանջարկի և առաջարկի դեպքում: Հիշենք, որ տվյալ գնի պայմաններում այլ գործոնների փոփոխությունը (սպառողների ճաշակ-

ները, եկամուտները և այլն) բերում է պահանջարկի կորի տեղաշարժին: Նույն ձևով, բացի եկամտի մեծությունից, գոյություն ունեն նաև բազմաթիվ այլ գործոններ, որոնք տնային տնտեսություններին ստիպում են փոխել սպառման և խնայողության չափը եկամտի տվյալ մեծության դեպքում, և գրաֆիկները տեղաշարժում են իրենց սկզբնական դիրքից: Այդ գործոններն են.

1) հարստությունը. որքան մեծ է տնային տնտեսությունների կուտակած հարստությունը, այնքան մեծ է սպառման չափը և փոքր խնայողությունների մեծությունը: Հարստություն ասելով՝ հասկանում ենք ինչպես անշարժ գույքը (տուն, մեքենա, հեռուստացույց և երկարաժամկետ օգտագործման այլ ապրանքներ), այնպես էլ՝ ֆինանսական միջոցները (կանխիկ փող, բանկային հաշիվներում պահվող խնայողություններ, բաժնետոմսեր, փոխառություններ, ապահովագրական պոլիսներ, թոշակներ): Տնային տնտեսությունները, հրաժարվելով սպառումից, կուտակում են իրենց հարստությունը մեծացնելու նպատակով: Այլ հավասար պայմաններում տնային տնտեսությունները որքան շատ հարստություն են կուտակում, այնքան քիչ խթան են ունենում խնայողությունների հետագա ավելացման համար: Հետևաբար հարստության աճը սպառման գրաֆիկը տեղաշարժում է դեպի վեր, իսկ խնայողությունների գրաֆիկը՝ ձախ,

2) գների մակարդակը, որի բարձրացումը սպառման գրաֆիկը տեղաշարժում է դեպի ներքև և հակառակը: Այս եզրակացությունն ուղղակի կապ ունի հարստության վերլուծության հետ, քանի որ գների մակարդակի փոփոխությունն ազդում է հարստության որոշ տեսակների իրական արժեքի կամ գնողունակության վրա: Այլ կերպ ասած, ֆինանսական միջոցների իրական արժեքը հակադարձ համեմատական է գների մակարդակին: Դա էլ հենց կոչվում է հարստության կամ դրամարկղային մնացորդների էֆեկտ: Ընդունենք, թե ունենք 1000 դոլարի պետական փոխառություններ: Եթե գների մակարդակը բարձրանա 10 տոկոսով, ապա այդ ֆինանսական ակտիվների իրական արժեքը կպակասի 10 տոկոսով: Այստեղից պետք է եզրակացնել, որ սպառման և խնայողությունների գրաֆիկներում գների մակարդակներն ընդունել էինք հաստատուն և հորիզոնական առանցքի վրա տեղադրել ոչ թե անվանական, այլ իրական եկամուտների մեծությունը, որը բացառում է գների փոփոխությունները,

3) սպասելիքները. տնային տնտեսությունների ապագա սպասելիքները, որոնք կապված են գների, դրամական եկամուտների և ապրանքների առկայության հետ, կարող են էական ազդեցություն ունենալ ընթացիկ ծախսերի ու խնայողությունների վրա: Գների մակարդակի սպասվող բարձրացումը կամ ապրանքային պակասորդի առաջացման հնարավորությունը սպառման գրաֆիկը տեղաշարժում են վեր, իսկ խնայողությունների՝ ձախ: Դրամական եկամուտների ապագայում սպասվելիք աճի շնորհիվ սպառողներն ավելի ազատ են վարվում իրենց ընթացիկ ծախսերի հետ,

4) սպառողական պարտքի մեծությունը. սպառողական պարտքի աճը ստիպում է կրճատել սպառումը և ավելի շատ միջոցներ հատկացնել ապահով գնված ապրանքների դիմաց վճարումներ կատարելու և պարտքը նվազեցնելու նպատակով,


5) հարկերի մակարդակը. քանի որ հարկերը մասամբ վճարվում են սպառման, մասամբ էլ խնայողությունների հաշվին, ուստի դրանց բարձրացումը կկրճատի թե՛ սպառումը, թե՛ խնայողությունները՝ սպառման գրաֆիկը տեղաշարժելով ներքև, իսկ խնայողությունների՝ ձախ (գրաֆիկներ 10.5 ա, 10.5բ):

Սպառման և խնայողությունների գրաֆիկների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել իրար հետ փոխկապակցված հետևյալ երևույթների վրա.

- հարկերի վճարումից հետո մնացած եկամտի փոփոխության հետևանքով սպառման և խնայողությունների գրաֆիկներն իրենց դիրքերը չեն փոխում, և տեղաշարժը կատարվում է միայն դրանց երկայնքով (օրինակ՝ A-ից B): Այսինքն՝ այդ փոփոխության միակ պատճառը եկամտի մակարդակի փոփոխությունն է, որն ազդում է միայն սպառման կամ խնայողության մեծության վրա,

- եկամտի հետ չկապված մեկ կամ մի քանի գործոնների փոփոխությունը տեղաշարժում է սպառման և խնայողությունների գրաֆիկները: Եթե տնային տնտեսությունները հարկերը վճարելուց հետո եկամտի տվյալ մակարդակի պայմաններում շատ են սպառում, ապա նրանք ստիպված կլինեն քիչ խնայել: Գրաֆիկորեն դա կնշանակի, որ սպառման գրաֆիկը կտեղաշարժվի դեպի վեր ( $C_0$ -ից  $C_1$ ), իսկ խնայողության գրաֆիկը՝ դեպի ձախ ( $S_0$ -ից  $S_2$ ): Եվ ընդհակառակը, եթե տնային տնտեսությունները հարկերը վճարելուց հետո եկամտի տվյալ մակար-

դակի պայմաններում սպառում են քիչ, ապա նրանք կխնայեն շատ: Այս դեպքում սպառման գրաֆիկի տեղաշարժը դեպի ներքև ( $C_0$ -ից  $C_2$ ) կուղեկցվի խնայողության գրաֆիկի տեղաշարժով դեպի աջ ( $S_0$ -ից  $S_1$ ):



Ոչ եկամտային գործոններից բացառություն է միայն հարկերի փոփոխությունը, որի դեպքում երկու գրաֆիկներն էլ շարժվում են միևնույն ուղղությամբ (վերը նշված առաջին չորս գործոնների ազդեցության հետևանքով սպառման և խնայողության գրաֆիկների տեղաշարժը կատարվում է հակառակ ուղղություններով),

- տնտեսագիտության բոլոր դպրոցների ներկայացուցիչները համակարծիք են, որ սպառման և խնայողության գրաֆիկները գրեթե չեն փոփոխվում, եթե պետությունը կանխատեսված միջոցառումներ չի

իրականացնում այդ ուղղությամբ: Հավանաբար, դա հետևանք է տնային տնտեսությունների սպառելու կամ խնայելու որոշումների վրա համապատասխան սովորության ունեցած ազդեցության: Բացի դրանից, հաշվի է առնվում նաև այն, որ ոչ եկամտային բազմաթիվ գործոնների փոփոխությունները գործում են հակադիր ուղղություններով, ուստի և հաճախ միմյանց հավասարակշռում են:


բ) *Ինվեստիցիաներ*. այժմ անդրադառնանք ամբողջական ծախսերի երկրորդ հիմնական բաղադրիչին՝ ինվեստիցիաներին: Նկատենք, որ ինվեստիցիաները նշանակում են նոր գործարանների շինարարությունը, հաստոցների, երկարատև օգտագործման սարքավորումների վրա կատարվող ծախսերը: Վերջինիս մակարդակը որոշում են երկու հիմնական գործոններ՝ զուտ շահույթի սպասվելիք նորման և տոկոսադրույքը:

1. Չուտ շահույթի սպասվելիք նորմա. ինվեստիցիաների կատարման խթանիչ շարժառիթը շահույթն է: Ձեռնարկատերերն արտադրության միջոցներ են ձեռք բերում միայն այն դեպքում, երբ այդպիսի գնումներից շահույթ են ակնկալում: Հետևաբար, ինվեստիցիաներն ուղիղ համեմատականորեն կախված են զուտ շահույթի սպասվելիք նորմայից:

2. Տոկոսադրույքը այն գինն է, որը ձեռնարկությունը պետք է վճարի իրական կապիտալ գնելու համար անհրաժեշտ դրամական միջոցներ պարտք վերցնելու դիմաց: Ընդ որում ինվեստիցիոն որոշումների վրա ազդում է ոչ թե անվանական, այլ իրական տոկոսադրույքը, որը ճշգրտված է ինֆլյացիայի տեմպերին համապատասխան: Ինվեստիցիաները շահութաբեր են միայն այն դեպքում, երբ զուտ շահույթի սպասվելիք նորման բարձր է իրական տոկոսադրույթից: Օրինակ, եթե զուտ շահույթի սպասվող նորման 10 տոկոս է, իսկ տոկոսադրույքը՝ 6 տոկոս, ապա ինվեստավորումը շահութաբեր է: Բայց եթե տոկոսադրույքն է գերազանցում զուտ շահույթի նորման, ապա ինվեստավորումը դառնում է ոչ շահութաբեր:

Առանձին ձեռնարկությունների ինվեստիցիոն որոշումները միավորելու դեպքում մակրոտնտեսական մակարդակով կարելի է ստանալ ամբողջ ձեռնարկատիրական ոլորտի պահանջարկն ինվեստիցիոն ապրանքների նկատմամբ: Դրա համար առանձին-առանձին պետք է գումարել բոլոր այն ինվեստիցիոն ծրագրերը, որոնք ի վիճակի են ապահովել տվյալ մեծության զուտ շահույթի սպասվելիք նորմա: Տվյալները գրա-

ֆիկորեն ներկայացնելու դեպքում կարելի է ստանալ ինվեստիցիաների պահանջարկի կորը, որն ունի հետևյալ տեսքը (տես՝ գրաֆիկ 10.6).



Գրաֆիկ 10.6

Ընդհանուր տեղեկատվություն ունենալով բոլոր հնարավոր ինվեստիցիոն ծրագրերից զուտ շահույթի սպասվելիք նորմայի մասին, կարելի է որոշել տոկոսադրույթի իրական մեծությունը կամ ինվեստիցիաների գինը: Այս գրաֆիկից հետևում է, որ ինվեստիցիոն ծրագրերը կիրականացվեն մինչև այն կետը, որտեղ զուտ շահույթի սպասվելիք նորման մեծ կամ առնվազն հավասար է տոկոսադրույթին: Հակառակ դեպքում ինվեստիցիաները կդադարեն շահութաբեր լինելուց, և նրանց պահանջարկը կնվազի կամ կհավասարվի զրոյի: Ինվեստիցիաների պահանջարկի կորն արտահայտում է հակադարձ կախվածություն ինվեստիցիաների մեծության և տոկոսադրույթի միջև: Փողի անփոփոխ առաջարկի դեպքում գների մակարդակի փոփոխություններն ազդում են ինվեստիցիաների մեծության վրա տոկոսադրույթի էֆեկտի միջոցով: Գների մակարդակի բարձրացման դեպքում մեծանում է փողի քանակությունը, որը սպառողներն ու ձեռնարկատերերը կցանկանային ունենալ ապրանքներ գնելու համար: Փողի պահանջարկի այդպիսի աճը բերում է նրա գնի, այսինքն՝ տոկոսադրույթի բարձրացման, որն էլ կրճատում է ինվեստիցիաները և հակառակը:

Տոկոսադրույքն ինվեստիցիաները որոշող հիմնական գործոնն է զուտ շահույթի տվյալ սպասվելիք նորմայի պայմաններում: Դրա փոփոխության դեպքում ինվեստիցիաների պահանջարկի կորի դիրքը մնում է

անփոփոխ, իսկ տեղաշարժը կատարվում է նրա երկայնքով: Կորի դիրքի վրա ազդում են այլ գործոններ կամ փոփոխականներ: Դրանք բոլորն էլ փոխում են զուտ շահույթի սպասվելիք նորմայի մեծությունը, որի աճի դեպքում կորը տեղաշարժվում է դեպի աջ և հակառակը: Ինվեստիցիաների պահանջարկի կորը տեղաշարժող այդ գործոններն են.

1) սարքավորումների ձեռքբերման, սպասարկման ու շահագործման ծախսերը: Հիմնական կապիտալի վրա կատարված սկզբնական ծախսերը նրա տեխնիկական սպասարկման, ընթացիկ վերանորոգման ու շահագործման ծախսերի հետ միասին շատ կարևոր են ցանկացած ինվեստիցիոն նախագծի զուտ շահույթի սպասվելիք նորման հաշվարկելու գործում: Եթե այդ ծախսերն աճում են, ապա զուտ շահույթի սպասվելիք նորման նվազում է, և ինվեստիցիաների պահանջարկի կորը տեղաշարժվում է դեպի ձախ և հակառակը,

2) ձեռնարկություններից գանձվող հարկերը: Ինվեստիցիոն որոշումներ ընդունելիս ձեռնարկատերերը հաշվի են առնում զուտ շահույթի նորման հարկերը վճարելուց հետո: Հետևաբար, հարկերի բարձրացումը կիջեցնի եկամտաբերությունը, և ինվեստիցիաների պահանջարկի կորը կտեղաշարժի դեպի ձախ,

3) տեխնոլոգիական փոփոխությունները: Տեխնիկական առաջընթացը, նոր արտադրանքի թողարկումը կամ հնի կատարելագործումը, նոր տեխնիկայի ու արտադրական պրոցեսների ստեղծումն ինվեստիցիաների հիմնական խթաններն են: Առավել արտադրողական սարքավորումների ստեղծումը, օրինակ, կրճատում է արտադրության ծախսերը կամ բարձրացնում արտադրանքի որակը՝ դրանով իսկ բարձրացնելով տվյալ սարքավորման ինվեստավորումից սպասվող զուտ շահույթի նորման: Կարճ ասած, տեխնիկական առաջընթացի արագացումն ինվեստիցիաների պահանջարկի կորը տեղաշարժում է դեպի աջ և հակառակը,


4) առկա հիմնական կապիտալի մեծությունը: Եթե տվյալ ճյուղն ապահովված է արտադրական հզորություններով և պատրաստի արտադրանքի պաշարներով, ապա նոր ինվեստիցիաների նկատմամբ պահանջարկը նվազում է, որովհետև ավելցուկային արտադրական հզորությունները թույլ են տալիս ամբողջությամբ բավարարել ընթացիկ և ապագա պահանջարկն այդ ճյուղի արտադրանքի նկատմամբ այնպիսի գներով, որոնք ապահովում են միջին շահույթ: Եթե ճյուղում առկա են

բավարար կամ նույնիսկ ավելցուկային արտադրական հզորություններ, ապա ինվեստիցիաների աճից սպասվող զուտ շահույթի նորման ցածր կլինի, և ինվեստիցիաներն աննշան կլինեն կամ ընդհանրապես կբացակայեն: Ավելցուկային արտադրական հզորություններն ինվեստիցիաների պահանջարկի կորը տեղաշարժում են դեպի ձախ և հակառակը,

5) սպասելիքները: Քանի որ հիմնական կապիտալի գործողության ժամկետը հաճախ հաշվարկվում է տասնյակ տարիներով, ուստի ցանկացած կապիտալ ներդրման եկամտաբերությունը կախված է նրա միջոցով թողարկված արտադրանքի սպասվելիք վաճառքից և շահութաբերության աստիճանից: Ձեռներեցների սպասելիքները կարող են հիմնված լինել ձեռներեցության ապագա պայմանների կանխատեսումների վրա: Միաժամանակ այնպիսի անորոշ և դժվար կանխատեսելի գործոններ, ինչպիսիք են՝ ներքին քաղաքական մթնոլորտի փոփոխությունները, միջազգային իրադրության բարդացումները, բնակչության աճը, ֆոնդային բորսայի պայմանները և այլն, պետք է հաշվի առնվեն սուբյեկտիվ կամ ինտուիտիվ հիմքի վրա: Թե որքանով դրանք կհամապատասխանեն իրականությանը, պարզ չէ, սակայն կարող են ինվեստիցիաների կորը տեղաշարժել կամ աջ կամ ձախ:

Ձեռնարկատերերի ինվեստիցիոն որոշումները տնային տնտեսությունների սպառողական պլանների հետ համատեղելու համար անհրաժեշտ է ինվեստիցիաները կապել հարկերի վճարումից հետո մնացած անձնական եկամտի (DI) կամ ՋԱԱ-ի հետ: Դա նշանակում է, որ անհրաժեշտ է կառուցել ինվեստիցիաների գրաֆիկ, որը ցույց է տալիս բոլոր այն միջոցները, որոնք ձեռնարկությունները նախատեսում են ներդնել եկամտի կամ արտադրության ծավալի ցանկացած հնարավոր մակարդակի դեպքում: Պարզության համար կարելի է ենթադրել, որ ինվեստիցիաները կախված են միայն տոկոսադրույքից և զուտ շահույթի սպասվելիք նորմայից, և նրանց մակարդակը չի փոփոխվում ՋԱԱ-ի կամ հարկերի վճարումից հետո մնացած եկամտի փոփոխության դեպքում: Այսպիսի ենթադրությունը կարելի է հիմնավորել նրանով, որ ձեռնարկատերերն ինվեստիցիաներ են կատարում ապագայում շահույթ ստանալու ակնկալիքով: Ուստի հնարավոր է, որ ինվեստիցիաներն անկախ լինեն եկամտի ներկա մեծությունից կամ արտադրության ծավալից: Գրաֆիկորեն այդ ենթադրությունը կարելի է ներկայացնել In գծի միջոցով (տես՝ գրաֆիկ 10.7) :





Գրաֆիկ 10.7

Եկամուտների և ինվեստիցիաների անկախության նման ենթադրությունը, իհարկե, պարզեցում է: Գործարար ակտիվության աճը կարող է մեծացնել հիմնական կապիտալի վրա կատարված հատկացումները, որը գրաֆիկորեն կարելի է ներկայացնել  $I_n$  գծի օգնությամբ: Առնվազն երկու պատճառ կա, որոնք ստիպում են փոխել ինվեստիցիաները՝ եկամուտների փոփոխությանը զուգընթաց: Առաջին՝ ինվեստիցիաները կապված են շահույթի հետ, այսինքն, խոշոր ինվեստիցիաները ֆինանսավորվում են ձեռնարկատիրական շահույթի հաշվին: Յետևաբար, հարկերի վճարումից հետո մնացած եկամտի և ՁԱԱ-ի աճին զուգընթաց մեծանում են շահույթները և, համապատասխանաբար, նաև ինվեստիցիաները: Երկրորդ՝ եկամտի և արտադրության փոքր ծավալների դեպքում ձեռնարկատիրական ոլորտում առկա են չօգտագործված կամ ավելցուկային արտադրական հզորություններ, որոնք անիմաստ են դարձնում լրացուցիչ կապիտալ ներդրումները: Բայց հենց որ եկամուտներն աճում են, հզորությունների ավելցուկը վերանում է, և ձեռնարկությունը խթան է ունենում ընդլայնելու իր հիմնական կապիտալը:

Ի տարբերություն սպառման գրաֆիկի՝ ինվեստիցիաների գրաֆիկն անփոփոխ չէ: Դա բնական է, քանի որ ինվեստիցիաներն ամբողջական ծախսերի ամենափոփոխական բաղադրիչն են: Յետագոտության արդյունքները վկայում են այն մասին, որ ինվեստիցիաների և արտադրության ծավալների անկախությանը վերաբերող ենթադրությունն այնքան էլ անիրական չէ, քանի որ ինվեստիցիոն ծախսերը ճշգրտորեն չեն համապատասխանում համախառն ազգային արտադրությանը: Ինվեստիցիաների այդ անկախությունը բացատրվում է նրանց ծառա-

յության երկարատև ժամկետներով, իննովացիաների անկայունությամբ, քանի որ տեխնոլոգիական փոփոխությունները կատարվում են ժամանակ առ ժամանակ և փոփոխվում ավիքաձև, շահույթների փոփոխությամբ և սպասելիքների տատանումներով: Բոլոր այս և նման գործոնների ազդեցության հետևանքով ինվեստիցիաները փոփոխվում են, որով էլ կարելի է բացատրել արտադրության ծավալների և զբաղվածության մակարդակի տատանումների մեծամասնությունը:


**10.4.** Արտադրության հավասարակշռված ծավալը որոշելու համար դարձյալ կատարենք տնտեսական իրավիճակը պարզեցնող ենթադրություններ, ըստ որի պետությունը չի միջամտում արտադրությանը, արտաքին առևտուրը բացակայում է, խնայողություններ կատարում են միայն տնային տնտեսությունները, զուտ ազգային արդյունքը (ՁԱԱ) հավասար է հարկերի վճարումից հետո մնացած անձնական եկամտին, գների մակարդակն անփոփոխ է, այսինքն, տնտեսությունը գործում է քեյնսյան հատվածի շրջանակներում, և վերլուծությունը հիմնված է արտադրության իրական, և ոչ թե անվանական ծավալի վրա:

Արտադրության հավասարակշռված մակարդակը որոշելու համար կիրառվում են երկու՝ միմյանց հետ փոխկապակցված եղանակներ. ամբողջական ծախսերի և արտադրության ծավալի համեմատման եղանակը (կամ  $C+I_n = \text{ՁԱԱ}$ ) և արտահոսք – ներհոսքի եղանակ (կամ  $S = I_n$ ):

*Ամբողջական ծախսերի և արտադրության ծավալի համեմատման եղանակ.* ըստ այս եղանակի արտադրողները պատրաստ են առաջարկել արտադրության այնպիսի ծավալ, որի իրացումից սպասում են նույնպիսի մեծության եկամուտներ: Դա նշանակում է, որ արտադրության հավասարակշռված ծավալն ապահովում է այնպիսի ամբողջական ծախսեր, որոնք բավարար են արտադրանքի այդ քանակը գնելու համար: Փակ մասնավոր տնտեսությունում այդ ծախսերը հավասար են տնային տնտեսությունների սպառողական ծախսերի (C) և զուտ ինվեստիցիաների ( $I_n$ ) գումարին: Այս դեպքում համախառն ինվեստիցիաների փոխարեն վերցվում են զուտ ինվեստիցիաները, որովհետև արտադրության ծավալը որոշելու համար կիրառվում է ՁԱԱ-ի, և ոչ թե ՅԱԱ-ի ցուցանիշը, որտեղ ամորտիզացիան բացակայում է: Այսպիսով, ՁԱԱ-ը համարվում է հավասարակշռված, եթե այն հավասար է ամբողջական ծախսերին՝  $(C+I_n)$ -ին: Ամբողջական ծախսերի գերազանցումը

հանգեցնում է ապրանքանյութական պաշարների կրճատմանը և ձեռնարկություններին ստիպում է ընդլայնել արտադրությունը: Անբավարար ամբողջական ծախսերի դեպքում արտադրանքի մի մասը չի իրացվում, ապրանքանյութական պաշարներն աճում են, որն արտադրողներին ստիպում է կրճատել արտադրության ծավալները: Այդ հավասարակշռված մակարդակը գրաֆիկորեն պատկերելու համար անհրաժեշտ է տնային տնտեսությունների սպառողական ծախսերին ավելացնել զուտ ինվեստիցիաները, որոնք, ըստ ընդունված ենթադրության, հաստատուն մեծություն են ազգային արտադրության տարբեր մեծությունների դեպքում: Հետևաբար, զուտ ինվեստիցիաների չափով տնային տնտեսությունների սպառողական ծախսերի գրաֆիկը զուգահեռաբար տեղաշարժվում է դեպի վեր: Ըստ այդ գրաֆիկի, հավասարակշռությունն ապահովվում է ամբողջական ծախսերի և անկյան կիսորդի հատման  $K$  կետում, որտեղ ամբողջական ծախսերը համապատասխանում են զուտ ազգային արդյունքի իրական ծավալին (տես՝ գրաֆիկ 10.8): Անկյան կիսորդից ցած գտնվող  $a_1$ ,  $b_1$ ,  $c_1$  կետերում  $C+I_n < ZԱԱ$ -ից, և նյութական պաշարներն աճում են, արտադրանքը լրիվ չի իրացվում, իսկ անկյան կիսորդից բարձր  $a$ ,  $b$ ,  $c$  կետերում  $C+I_n > ZԱԱ$ -ից, հասարակությունը ձգտում է ավելի շատ սպառել, քան արտադրում է: Պաշարները կրճատվում են, որը ստիպում է ընդլայնել արտադրության ծավալները:


*Արտահոսք-ներհոսքերի եղանակի* էությունը հետևյալն է. ինչպես գիտենք, արտադրության ցանկացած ծավալ ստեղծում է համապատասխան եկամուտ, որը մնում է հարկերը վճարելուց հետո:



Միաժամանակ հայտնի է նաև, որ այդ եկամտի մի մասը տնային տնտեսությունները կարող են չսպառել, այսինքն՝ վերածել խնայողությունների: Հետևաբար խնայողությունները արտահոսք են եկամուտներից, որի պատճառով սպառման մեծությունը ետ է մնում արտադրության ծավալից կամ  $ZԱԱ$ -ից: Արդյունքում, սպառումը դառնում է անբավարար ամբողջական արտադրանքը գնելու համար, որն էլ բերում է արտադրության ծավալների կրճատմանը: Սակայն ձեռնարկատերերը նպատակ չունեն ամբողջ արտադրանքը վաճառել վերջնական սպառողներին, որովհետև դրա մի մասն արտադրության միջոցներ կամ ինվեստիցիոն ապրանքներ են, որոնք սպառվում են ձեռնարկատիրական ուղորտի ներսում: Այդ պատճառով էլ ինվեստիցիաները կարելի է դիտել որպես ներարկում կամ ներհոսք «եկամուտներ - ծախսեր» հոսքին, որը լրացնում է սպառումը և փոխհատուցում խնայողությունների ձևով կատարված արտահոսքը: Եթե խնայողությունների ձևով կատարված արտահոսքը գերազանցում է ինվեստիցիաների ձևով կատարված ներհոսքին, ապա ամբողջական ծախսերը փոքր են  $ZԱԱ$ -ից, իսկ ազգային արտադրության մակարդակը չափից ավելի բարձր է կայուն լինելու համար: Եթե ինվեստիցիաների ձևով կատարված ներհոսքն է գերազանցում արտահոսքին, ապա ամբողջական ծախսերը մեծ են  $ZԱԱ$ -ից, որը ստիպում է ընդլայնել արտադրությունը:  $ZԱԱ$ -ի հավասարակշռությունն ապահովվում է միայն այն դեպքում, երբ արտահոսքը հավասարվում է ներհոսքին, այսինքն՝ խնայողությունները հավասար են ինվեստիցիաներին ( $S = I_n$ ): Իրական տնտեսությունում, որտեղ արդեն մեր ենթադրությունները չեն գործում, արտահոսքի դերում հանդես են գալիս նաև պետության կողմից գանձված հարկերը և ապրանքների ներմուծումը, իսկ ներհոսքի դերում՝ պետական գնումներն ու ապրանքների արտահանումը: Իսկ առայժմ փակ մասնավոր տնտեսությունում արտահոսքի միակ ձևը խնայողություններն են, իսկ ներհոսքինը՝ ինվեստիցիաները: Արտահոսք - ներհոսքերի եղանակը կարելի է պատկերել հետևյալ կերպ (տես՝ գրաֆիկ 10.9):

Ըստ այս եղանակի, հավասարակշռությունն ապահովվում է խնայողությունների և ինվեստիցիաների հատման կետում, որտեղ տնային տնտեսությունները մտադիր են խնայել այնքան, որքան ձեռնարկատերերը ցանկանում են ինվեստիցիաներ անել: Այդ պլանների համապա-

տասխանության դեպքում  $ՉԱԱ = C+I_n$ -ին: Եթե  $ՉԱԱ > C+I_n$ -ից, ապա, խնայողությունները մեծ են զուտ ինվեստիցիաներից ( $S > I_n$ ), որն էլ կստիպի կրճատել ազգային արտադրության ծավալները: Եթե  $ՉԱԱ < C+I_n$ -ից, ապա խնայողությունները փոքր են զուտ ինվեստիցիաներից ( $S < I_n$ ), որն էլ կխթանի ազգային արտադրության ծավալների ընդլայնմանը:



**10.5.** Ինչպես արդեն նկատել ենք,  $ՉԱԱ$ -ի հավասարակշռված մակարդակը կարող է փոփոխվել խնայողությունների, սպառման կամ ինվեստիցիաների գրաֆիկների տեղաշարժման դեպքում: Օրինակ, շահույթի սպասվելիք նորմայի բարձրացումը, տոկոսադրույքի իջեցումը մեծացնում են ինվեստիցիոն ծախսերը, և  $ՉԱԱ$ -ի հավասարակշռված մակարդակը նույնպես բարձրանում է և հակառակը: Նույնպիսի ազդեցություն ունենում է նաև սպառողական ծախսերի աճը, որը մինչև լրիվ զբաղվածության մակարդակին հասնելը խթանում է արտադրության ընդլայնմանը: Ընդ որում նկատվում է մի հետաքրքիր օրինաչափություն: Սպառողական ծախսերի կամ ինվեստիցիաների փոքր փոփոխությունը հանգեցնում է  $ՉԱԱ$ -ի բազմապատկված փոփոխության: Այս երևույթը կոչվում է *մուլտիպլիկատորի էֆեկտ* կամ պարզապես *մուլտիպլիկատոր*: Մուլտիպլիկատորը  $ՉԱԱ$ -ի փոփոխության և այն առաջացնող ծախսերի փոփոխության հարաբերությունն է:

$ՉԱԱ$ -ի փոփոխություն

$$\text{Մուլտիպլիկատորը} = \frac{\text{\textit{ՉԱԱ-ի փոփոխություն}}}{\text{\textit{ծախսերի փոփոխություն}}}$$

Ըստ այս բանաձևի, որ  $ՉԱԱ$ -ի փոփոխության մեծությունը կարելի է որոշել ծախսերում առաջացող փոփոխությունը մուլտիպլիկատորով բազմապատկելու միջոցով: Մուլտիպլիկատորի էֆեկտի համաձայն ծախսերի աննշան աճը հանգեցնում է  $ՉԱԱ$ -ի բազմակի ավելացման և հակառակը: Մուլտիպլիկատորի էֆեկտը պարզաբանենք օրինակի օգնությամբ: Ընդունենք, թե  $A$  ճյուղում 10 մլն. դոլարի լրացուցիչ ինվեստիցիաներն ապահովում են 2 հազար լրացուցիչ աշխատատեղ՝ 10 մլն. դոլարի միջին տարեկան եկամտով: Սակայն  $A$  ճյուղի լրացուցիչ ինվեստիցիաները պահանջում են լրացուցիչ տնտեսական ռեսուրսներ, որը նշանակում է՝ զբաղվածության և եկամուտների աճ դրանք արտադրող  $B$  ճյուղում: Չբաղվածության աճն այդ ճյուղում ենթադրում է լրացուցիչ պահանջարկ սպառման առարկաների նկատմամբ և այլն: Ընդունենք, թե այդ 10 մլն. դոլարի սկզբնական ինվեստիցիան  $A$  ճյուղում շղթայական ձևով իր հետ բերում է ոչ թե 10 մլն. դոլարի, այլ 40 մլն. դոլարի լրացուցիչ եկամուտ: Մուլտիպլիկատորը՝  $K$ -ն տվյալ դեպքում հավասար կլինի 4-ի ( $40 : 10$ ):

Մուլտիպլիկատորի երևույթը հիմնված է երկու փաստերի վրա. 1) տնտեսությանը հատուկ են ծախսերի ու եկամուտների կրկնվող, անընդհատ հոսքեր, երբ մեկի ծախսը մյուսի համար դառնում է եկամուտ և այսպես շարունակ, 2) եկամտի ցանկացած փոփոխություն նույն ուղղությամբ փոխում է նաև սպառման ու խնայողությունների մեծությունը, ընդ որում սպառման ու խնայողությունների համամասնությունը պահպանվում է եկամտի ցանկացած փոփոխության դեպքում: Այս երկու փաստերից հետևում է, որ ծախսերի մեծության ցանկացած սկզբնական փոփոխությունն առաջացնում է շղթայական ռեակցիա, որը, չնայած յուրաքանչյուր հաջորդ փուլում թուլանում և աստիճանաբար մարում է, սակայն ի վերջո հանգեցնում է  $ՉԱԱ$ -ի բազմապատիկ փոփոխության: Եկամտի փոփոխությունը բաշխվում է սպառման և խնայողությունների ֆոնդերի միջև, սպառման ֆոնդը դարձյալ հաջորդ փուլում բաշխվում է սպառման և խնայողության միջև և այլն: Հետևաբար, մուլտիպլիկատորի մեծությունը կախված է խնայողության սահմանային հակվածու-

թյունից՝ MPS-ից, որով էլ որոշվում է ծախսերի բոլոր տեսակներում կատարված սկզբնական փոփոխության գումարային ազդեցությունը: MPS-ը և մուլտիպլիկատորը միմյանց հետ կապված են հակադարձ համեմատականորեն: Որքան փոքր է եկամտի փոփոխության այն մասը, որը վեր է ածվում խնայողության, այնքան մեծ է ծախսը յուրաքանչյուր փուլում, հետևաբար մեծ է նաև մուլտիպլիկատորը:

$$\text{Մուլտիպլիկատորը} = \frac{1}{\text{MPS}}$$

Քանի որ  $\text{MPC} + \text{MPS} = 1$ -ի, իսկ  $\text{MPS} = 1 - \text{MPC}$ , ուստի

$$\text{Մուլտիպլիկատորը} = \frac{1}{1 - \text{MPC}}$$

Այս մուլտիպլիկատորը կոչվում է պարզ մուլտիպլիկատոր, որովհետև արտահայտում է միայն խնայողությունների ձևով կատարված արտահոսքը, որը հնարավոր է միայն տնտեսության պարզեցված մոդելում: Սակայն, բացի խնայողություններից, յուրաքանչյուր փուլում եկամտից կարող են հանվել նաև հարկերը և ներմուծման վրա կատարված ծախսերը: Այս դեպքում արդեն MPS-ի փոխարեն վերցվում է նաև այդ արտահոսքերը հաշվի առնող մեծություն, օրինակ, եկամտի փոփոխությունը, որը չի ծախսվել տվյալ երկրի ներսում և այլն: Խնայողությունները, հարկերը և ապրանքների ներմուծումը հաշվի առնող մուլտիպլիկատորը կոչվում է բարդ մուլտիպլիկատոր:

Մուլտիպլիկատորի վերլուծությունը և ՋԱԱ-ի հաշվարկումը արտահոսք-ներհոսքերի եղանակի օգնությամբ հանգեցնում է *խնայողության պարադոքսի գոյությանը*: Պարադոքսի էությունն այն է, որ ավելի շատ տնտեսելու հասարակության ձգտումը կարող է հանգեցնել խնայողությունների նույնպիսի կամ նույնիսկ ավելի փոքր ծավալի: Խնայողության պարադոքսն արտահայտում է տնտեսագետների հին վեճը: Եթե հասարակությունը փորձում է շատ խնայել, ապա դա բերում է ՋԱԱ-ի բազմապատիկ կրճատման: Խնայողության ձգտումը կարող է բարիք լինել անհատի համար, որն ապահովում է սպառման բարձր մակարդակ ապագայում, բայց հասարակության մասշտաբով վերածվել չարիքի, որովհետև յուրաքանչյուր խնայողություն նշանակում է չծախսված գումար, որը մեկ այլ անձի համար չի վերածվում եկամտի՝ դրանով իսկ


կրճատելով արտադրության և զբաղվածության մակարդակները: Որպես կանոն, տնային տնտեսությունները ձգտում են խնայողությունները մեծացնել տնտեսության անկման փուլում, այսինքն, հենց այն ժամանակ, երբ այդ խնայողությունների աճը հատկապես անցանկալի է և ավելի է խորացնում անկումը: Հետևաբար, որքան խնայողություններն աճում են, այնքան ամբողջական ծախսերը փոքրանում են, արտադրության ծավալները կրճատվում են, գործազրկությունն աճում է, և եկամուտները, ուստի նաև խնայողություններ անելու հնարավորությունները պակասում են:

Խնայողության պարադոքսը ճշգրտման կարիք ունի: Նախ, եթե տնտեսությունը գործում է ոչ թե քեյնսյան, այլ դասական հատվածում, որտեղ պահանջարկի հետագա աճը բերում է միայն ինֆլյացիայի, ապա խնայողությունների աճը պահանջարկի կորը տեղաշարժում է դեպի ձախ և նպաստում ինֆլյացիայի տեմպերի դանդաղեցմանը: Երկրորդ, եթե խնայողություններն ամբողջությամբ վերածվեն ինվեստիցիաների, ինչպես պնդում են դասականները, ապա արտադրության փաստացի ծավալը և զբաղվածությունը չեն փոփոխվի, սակայն տեղի կունենա արտադրության կառուցվածքային տեղաշարժ՝ կարտադրվեն ավելի շատ ինվեստիցիոն, ավելի քիչ անձնական սպառման ապրանքներ: Դա կնպաստի արտադրության միջոցների նորացմանը, արտադրական հնարավորությունների կորը կտեղաշարժի դեպի աջ և կարագացնի տնտեսական աճի տեմպերը:

**10.6. Ջ. Մ. Քեյնսի կարծիքով** շուկայական տնտեսությունն ինքնուրույն չի կարող լուծել մակրոտնտեսական հավասարակշռության խնդիրը, հետևապես այն կարիք ունի պետական կարգավորման: Այս իմաստով հետաքրքրություն է ներկայացնում նրա «ազգային եկամուտ-ամբողջական ծախսեր» մոդելը, որը ստացել է «քեյնսյան խաչ» անվանումը: Վերլուծության ժամանակ Քեյնսը ելակետ ուներ այն, որ անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես անձնական սպառումը (C), այնպես էլ ինվեստիցիոն ծախսերը (I): Եթե հասարակության հեռանկարները լավատեսական չեն, ապա ձեռնարկատերերը արտադրությունը չեն ընդլայնի, իսկ խնայողությունները կձգտեն զրոյի: Տնտեսության աշխուժացման համար անհրաժեշտ են ինվեստիցիաներ: Եթե դրանք կատարվեն, ապա ազգային արտադրության իրական արդյունքը կաճի  $S_0$ -ից մինչև N, իսկ հավասարակշռության կետը կտեղաշարժվի  $E_0$ -ից E (տես՝ գրաֆիկ 10.10): Ըստ Քեյնսի, հենց պետությունն է խթանում ակտիվությունը,

պետական ծախսերն (G) աճում են, և հավասարակշռությունը E-ից տեղաշարժվում է E<sub>1</sub>, իսկ ՉԱԱ-ի արտադրությունը՝ N-ից N<sub>1</sub>: Ազգային եկամտի այդ աճը շարունակվում է մինչև լրիվ զբաղվածության մակարդակը, որին ձգտում է ընդհանուր ծախսերի և զուտ արտահանումից ստացվող եկամուտների (E<sub>2</sub>) գումարման արդյունքում: Այս դեպքում ՉԱԱ-ը հավասարվում է N<sub>2</sub>-ի:

Պետական միջամտությունը տնտեսությունը մոտեցնում է լրիվ զբաղվածության (FF) մակարդակին: Այսպիսով, հավասարակշռության քեյնսյան մոդելը կարող է արտահայտվել  $C+I+G+X_n$  բանաձևով (հիշենք, որ C-ն սպառումն է, I -ն՝ ինվեստիցիաները, G-ն՝ պետական ծախսերը, X<sub>n</sub> -ը՝ զուտ արտահանումը):



Գրաֆիկ 10.10

Ըստ Քեյնսի, վերջին հաշվով տնտեսական հավասարակշռվածությունը որոշվում է խնայողությունների և ինվեստիցիաների միջև հավասարակշռությամբ: Ժամանակակից տնտեսության գլխավոր չարիքն էֆեկտիվ պահանջարկի անբավարարությունն է, որը պայմանավորված է սպառման սահմանային հակվածության աճող կրճատումով, կապիտալի սահմանային էֆեկտիվության նվազումով և լիկվիդայնության նախապատվությամբ: Այստեղից էլ որպես հիմնական ուղի ինվեստավորման, տարբեր հասարակական աշխատանքների կազմակերպման

(ճանապարհների, գործարանների շինարարություն, նոր շրջանների յուրացում և այլն, եթե նույնիսկ այդ աշխատանքներն օգտակար չեն), ինվեստավորման ձևերի վրա վերահսկողության, ինչպես նաև սակավ ապահովված սոցիալական շերտերի գնողունակության բարձրացման (բարձր կենսաթոշակների, նպաստների, կրթաթոշակների բարձրացում, արտոնյալ հարկավորում և այլն) միջոցով սպառման հակվածության կարգավորման և այլ հարցերում պետության ակտիվ միջամտության պահանջը, որը դրական ազդեցություն կունենա բնակչության ինվեստիցիոն և սպառողական պահանջարկի վրա և կազդի մուլտիպլիկատորի էֆեկտի, հետևապես, նաև ազգային եկամտի աճի վրա:

Ճգնաժամային վիճակից տնտեսության ելքի մյուս ուղին Քեյնսը համարում է դրամական զանգվածի միջոցով տոկոսադրույքի կարգավորումը: Թեև այս ուղին պահանջում է զգուշություն, քանի որ հնարավոր է «լիկվիդայնության ծուղակի» առաջացում, երբ տոկոսադրույքը դրամական զանգվածի նկատմամբ դառնում է ոչ էլաստիկ: Այսպիսի պայմաններում տնտեսության մոնետար կարգավորումը արդյունավետ չէ, թեև տոկոսադրույքը շատ ցածր է, բայց ինֆլյացիայի պայմաններում այն չի խթանում գործարար ակտիվությանը:

Չ. Մ. Քեյնսի առաջադրած դրույթներն օգտակար են դիտվում շուկայական տնտեսությանն անցած երկրների ճգնաժամային կացությունից ելքի համար:

## ԳԼՈՒԽ 11. ԳԱՆՁԱՐԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

11.1. Դիսկրեցիոն գանձարանային քաղաքականություն:

11.2. Ոչ դիսկրեցիոն գանձարանային քաղաքականություն:

11.3. Գանձարանային քաղաքականության դժվարություններն ու հակասությունները:

Հայտնի է, որ տնային տնտեսությունների և ֆիրմաների սպառողական, ինվեստիցիոն, արտահանման և ներմուծման վերաբերյալ որոշումների հիմքում ընկած է մասնավոր շահը, և որ այդ որոշումները կարող են հանգեցնել տնտեսական անկման ու ինֆլացիայի: Իսկ ինչպես արդեն նկատել ենք, պետության հիմնական ֆունկցիաներից է տնտեսական կայունության ապահովումը: Վերջինս մասամբ իրականացվում է գանձարանային քաղաքականության միջոցով, պետական բյուջեի ծախսերի ու հարկերի մանիպուլիացիայի օգնությամբ: Դա ֆինանսական քաղաքականություն է, որը նպատակ ունի վերահսկելու տնտեսական իրավիճակը և ՀԱԱ-ի ծավալն առավելագույն չափով մոտեցնելու պոտենցիալ մակարդակին կամ կրճատելու ինֆլացիան: Գանձարանային քաղաքականությունը լինում է դիսկրեցիոն և ոչ դիսկրեցիոն:


11.1. Դիսկրեցիոն գանձարանային քաղաքականությունը նշանակում է հարկերի ու պետական ծախսերի կանխամտածված փոփոխություն, որի նպատակն է կարգավորել ՀԱԱ-ի իրական ծավալը և զբաղվածության մակարդակը, վերահսկել ինֆլացիան և խթանել տնտեսական աճը: «Դիսկրեցիոն» հասկացությունը նշանակում է, որ հարկերն ու պետական ծախսերը փոփոխվում են կառավարության հայեցողությամբ: Պարզության համար ընդունում ենք, որ.

- պետական գումարները չեն ազդում մասնավոր ծախսերի վրա,
- գանձարանային քաղաքականությունն ազդում է միայն ամբողջական պահանջարկի վրա՝ որևէ ազդեցություն չունենալով ամբողջական առաջարկի վրա:

Գանձարանային քաղաքականությունը կիրառվում է երկու իրավիճակներում՝ անկման փուլում և պահանջարկի ինֆլացիայի ժամանակ:

Ա. Անկման փուլում կառավարությունը վարում է *խթանիչ գանձարանային քաղաքականություն*, որի նպատակը տնտեսական աճին նպաստելն է: Ընդունենք, թե ինվեստիցիոն ծախսերի կտրուկ կրճատումը բերել է ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժին  $AD_1$ -ից  $AD_2$ : Դա կապված է այն բանի հետ, որ ինվեստիցիոն ծրագրերից սպասվող շահույթների հեռանկարը լավատեսական չէ: Արդյունքում իրական ՀԱԱ-ն  $Q_1$ -ից կրճատվել է մինչև  $Q_2$  մակարդակը, որն ուղեկցվել է գործազրկության աճով, քանի որ քիչ ծավալի արտադրանքի համար կպահանջվի քիչ աշխատուժ (տես՝ գրաֆիկ 11.1): Այսպիսի իրավիճակներում կառավարությունը կիրառում է գանձարանային քաղաքականության երեք հիմնական լծակները.

- պետական ծախսերի աճ,
- հարկերի կրճատում,
- նախորդ երկու տարբերակների զուգորդում:



Եթե պետական բյուջեն հավասարակշռված է, ապա անկման փուլում գանձարանային քաղաքականությունը պետք է ուղղված լինի բյուջետային դեֆիցիտի ստեղծմանը, այսինքն, պետական ծախսերը գերազանցեն հարկային մուտքերին:


*Պետական ծախսերի աճ.* այլ հավասար պայմաններում պետական ծախսերի աճը կբերի ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժին

դեպի աջ՝  $AD_2$  դիրքից  $AD_1$  դիրքը: Դա հասկանալու համար ենթադրենք, թե անկումը մեղմացնելու համար կառավարությունն առանձնացրել է լրացուցիչ  $K$  միլիոն դոլար՝ կրթության, ավտոճանապարհների շինարարության, արբանյակային կապի և այլ նպատակների համար: Պետական ծախսերի այդ լրացուցիչ գումարը գրաֆիկում ներկայացնում է  $AD_2$  ամբողջական պահանջարկի կորի և կետագծով ներկայացված կորի միջև ընկած հատվածը: Գների ցանկացած մակարդակի պայմաններում արտադրվող արդյունքի իրական ծավալի նկատմամբ ամբողջական պահանջարկը  $K$  մլրդ դոլարի չափով ավելին կլինի, քան մինչև պետական ծախսերի աճը: Սակայն ամբողջական պահանջարկի կորը կտեղաշարժվի մինչև  $AD_1$  դիրքը, այսինքն՝ պահանջարկը կգերազանցի  $K$  մլրդ դոլարը: Դա տեղի կունենա շնորհիվ մուլտիպլիկատորի էֆեկտի, որը նոր սպառողական ծախսերի յուրաքանչյուր հաջորդ ցիկլի հետ բազմապատկում է պահանջարկի սկզբնական փոփոխությունը: Արդյունքում հորիզոնական հատվածի սահմաններում աճում է արտադրության ծավալը և կրճատվում գործազրկությունը:

**Չարկերի կրճատումը.** նույն նպատակին կարելի է հասնել հարկերի կրճատման միջոցով: Ընդունենք, թե կառավարությունն անհատական եկամտահարկը կրճատել է մի այնպիսի  $n$  գումարի չափով, որի արդյունքում տնային տնտեսությունների տնօրինությանը մնացած եկամուտն աճել է  $K$  մլրդ դոլարով (նույն գրաֆիկի վրա): Դարձյալ կապված մուլտիպլիկատորի էֆեկտի հետ՝ սպառողական ծախսերի սկզբնական ավելացումը  $K$  մլրդ դոլարի չափով հաջորդական ցիկլերի ընթացքում կբերի դրանց բազմապատիկ աճին: Ամբողջական պահանջարկի կորը  $AD_2$  դիրքից կտեղաշարժվի  $AD_1$  դիրքը, իրական ՉԱԱ-ի ծավալը կաճի, և համապատասխանաբար կմեծանա զբաղվածությունը: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել մի հանգամանք. ամբողջական պահանջարկի կորը միևնույն չափով՝  $AD_2$  դիրքից  $AD_1$  դիրքը տեղաշարժելու համար, հարկերը պետք է իջեցվեն ավելի մեծ գումարի չափով, քան պետական ծախսերի աճն էր: Դա բացատրվում է նրանով, որ հարկերի մի որոշակի մասի կրճատումը հանգեցնում է ոչ թե սպառման, այլ խնայողությունների աճի: Սկզբնական սպառումը որոշակի գումարի չափով մեծացնելու համար, կառավարությունը պետք է հարկերն իջեցնի այդ մեծությունը գերազանցող գումարի չափով:

Կառավարությունը կարող է վերը նշված երկու տարբերակները գուցորդել. միաժամանակ ավելացնել պետական ծախսերը և կրճատել հարկերը՝ առաջացնելով սկզբնական ծախսերի ցանկալի աճ, դրանով իսկ մեծացնելով ամբողջական պահանջարկն ու իրական ՉԱԱ-ը:

Բ. Պահանջարկի ինֆլյացիայի դեպքում, կառավարությունը վարում է այն *սահմանփակող կամ արգելակող գանձարանային քաղաքականություն* (տես՝ գրաֆիկ 11.2):



Ընդունենք, թե ամբողջական առաջարկի կորի ուղղահայաց հատվածում ամբողջական պահանջարկի կորի տեղաշարժը  $AD_3$  դիրքից մինչև  $AD_4$  դիրքը գների մակարդակը բարձրացրել է  $P_3$ -ից մինչև  $P_4$ , որն, օրինակ, կարող է կապված լինել ինվեստիցիոն ծախսերի կտրուկ աճի և զուտ արտահանման հետ: Երբ կառավարությունը հսկողություն է իրականացնում ինֆլյացիայի վրա, գանձարանային միջոցառումները, ի տարբերություն անկման ժամանակ կիրառվող միջոցառումների, պետք է ունենան միանգամայն այլ բնույթ: Այսպիսի տնտեսական իրավիճակներում կառավարությունը կարող է .

- ա) կրճատել պետական ծախսերը,
- բ) բարձրացնել հարկերը,
- գ) զուգորդել նախորդ երկու տարբերակները:

Երբ տնտեսությունն ընդհարվում է պահանջարկի ինֆլյացիայի հետ, գանձարանային քաղաքականությունը պետք է ուղղված լինի բյուջետային ավելցուկի ստեղծմանը, այսինքն, հարկային մուտքերը գերազանցեն պետական ծախսերին:

*Պետական ծախսերի կրճատումը.* ինֆլյացիայի տեմպերի կրճատման կամ լրիվ վերացման նպատակով կառավարությունը կարող է կրճատել իր ծախսերը ամբողջական պահանջարկի  $AD_4$  կորի և դրանից դեպի ձախ կետագծով նշված կորի միջև ընկած հատվածի չափով, որը ներկայացնում է ինչ-որ  $K$  գումար: Ծախսերի այդ կրճատումն ամբողջական պահանջարկի կորը կտեղաշարժի  $AD_4$  դիրքից  $AD_3$  դիրքը, երբ մուլտիպլիկատորի գործողության գործընթացն ավարտվի: Եթե ենթադրենք, որ գները ճկուն են իջնելու ուղղությամբ, ապա դրանք կվերադառնան  $P_3$  կետին, այսինքն, մինչինֆլյացիոն մակարդակին: Արտադրության իրական ծավալը կմնա արտադրական հնարավորությունների առավելագույն մակարդակի վրա ( $Q_f$ ):

Իրական տնտեսության մեջ գներն իջեցման առումով ավելի շուտ պահպանում են «կայունություն»: Ուստի, որպեսզի ինֆլյացիան արգելակվի, անհրաժեշտ է խոչընդոտել գների աճին, և ոչ թե փորձել այն իջեցնել նախկին մակարդակին: Սովորաբար պահանջարկի ինֆլյացիան մշտապես ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժում է դեպի աջ: Այդ դեպքում, գանձարանային քաղաքականության նպատակն է կանգնեցնել այդ տեղաշարժը, և ոչ թե վերականգնել գների նախկին՝ ավելի ցածր մակարդակը: Այնուամենայնիվ, գործում է այն հիմնական սկզբունքը, որ պետական ծախսերի կրճատումը կարող է արգելակել ինֆլյացիան:

*Չարկերի բարձրացումը.* Ճիշտ այնպես, ինչպես կառավարությունը կրճատում է հարկերը՝ սպառողական ծախսերը մեծացնելու նպատակով, այդպես էլ կարող է բարձրացնել դրանք՝ սպառողական ծախսերը կրճատելու համար: Այստեղ նորից գործում է այն սկզբունքը, որ կառավարությունը հարկերը պետք է բարձրացնի ավելի մեծ գումարի չափով, որպեսզի սպառումը կրճատվի  $K$ -ի չափով: Մուլտիպլիկատորի էֆեկտի արդյունքում ամբողջական պահանջարկի կորը կտեղաշարժվի դեպի ձախ (գների ցանկացած մակարդակի պայմաններում), իսկ գների մակարդակը  $P_4$ -ից կիջնի  $P_3$ -ի, որը և կապահովի հսկողություն ինֆլյացիայի վրա:

Նույն արդյունքին կարելի է հասնել՝ միաժամանակ կրճատելով պետական ծախսերը և ավելացնելով հարկերը:

Ինչպես արդեն նկատել ենք, կառավարության դիսկրեցիոն քաղաքականության հետևանքով բյուջեում առաջանում են դեֆիցիտներ (եթե խթանիչ քաղաքականություն է) ու ավելցուկներ (եթե արգելակիչ քաղաքականություն է): Այս իմաստով կարևոր նշանակություն է ստանում այդ դեֆիցիտների ֆինանսավորումն ու ավելցուկների վերացումը: Բյուջետային դեֆիցիտի ազդեցությունը տնտեսական աճի վրա կախված է նրա ֆինանսավորման աղբյուրներից: Գոյություն ունեն երկու եղանակներ, որոնցով կառավարությունը կարող է ֆինանսավորել դեֆիցիտը.

ա) *ներքին պարտքի մեծացում*, որը կատարվում է բնակչությանը փոխառություններ վաճառելու միջոցով: Այս եղանակի խթանիչ ազդեցությունը թույլ է, որովհետև փողի նկատմամբ լրացուցիչ պահանջարկն առաջ է բերում նաև տոկոսադրույքի հավասարակշռված մակարդակի աճ: Չետևաբար, պետական փոխառությունները, նպաստելով տոկոսադրույքի մակարդակի բարձրացմանը, հանգեցնում են մասնավոր ինվեստիցիաների և սպառողական ծախսերի կրճատմանը,

բ) *լրացուցիչ փողի թողարկում*. Եթե դեֆիցիտային բյուջեի պետական ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է նոր փողերի թողարկման հաշվին, ապա կարելի է խուսափել ինվեստիցիաների և սպառման վրա ունեցած բացասական ազդեցությունից: Դեֆիցիտային ծախսերի ֆինանսավորման երկրորդ եղանակն ավելի բարենպաստ է համարվում տնտեսական աճի համար,

Բյուջետային ավելցուկի օգտագործման հիմնական ձևերն են. ա) պետական պարտքի մարումը, երբ պետությունը բնակչությունից ետ է գնում նախկինում վաճառված իր պարտատոմսերը, բ) ավելցուկի դուրս բերումը շրջանառությունից, որն արգելում է դրանց որևէ օգտագործումը: Առաջին եղանակը նվազեցնում է արգելակիչ քաղաքականության հակաինֆլյացիոն ազդեցությունը, որովհետև դրամական շուկա է վերադարձնում հարկերի ձևով հավաքված միջոցների մի մասը: Դրա հետևանքով փողի առաջարկը մեծանում է, տոկոսադրույքն իջնում, ինվեստիցիաներն ու սպառումն աճում են՝ նպաստելով պահանջարկի ինֆլյացիայի տեմպերի արագացմանը: Ինչ վերաբերում է երկրորդ եղանակին, ապա այն ավելի արդյունավետ է, որովհետև նվազեց-




նում է ամբողջական ծախսերը, հետևաբար նաև պահանջարկը: Եթե ավելցուկային մուտքերը նորից չեն վերադառնում տնտեսություն, ապա դրանով իսկ բացառվում է դրանք ծախսելու հնարավորությունը, այսինքն, կառավարությունը մի որոշ աստիճանով կրճատում է տնտեսության գնողունակությունը:

**11.2.** Դիսկրեցիոն գանձարանային քաղաքականությունը, որը կապված է կառավարության կողմից կոնկրետ որոշումների ընդունման հետ, կարևոր նշանակություն ունի տնտեսության կայունության ապահովման խնդրում: Սակայն, ինչպես ասում են, դա գործի միայն մի մասն է: Ժամանակակից գանձարանային քաղաքականությունն իր մեջ ներառում է ավտոմատ կայունացման մի շարք տարրեր, որոնք որպես համակարգ պետական ծախսերի ու հարկերի մակարդակների որոշ անհրաժեշտ փոփոխություններն իրականացնում են ինքնաբերաբար, առանց պետական միջամտության՝ ներքին կայունացուցիչների միջոցով: Այդպիսի ինքնակարգավորումը կոչվում է ոչ դիսկրեցիոն գանձարանային քաղաքականություն: Ներքին կայունացուցիչն այն ցանկացած ներգործությունն է, որն ավելացնում է պետական բյուջեի դեֆիցիտը (կամ կրճատում ավելցուկը) անկման փուլերում և մեծացնում ավելցուկը (կամ կրճատում դեֆիցիտը) ինֆլյացիայի ժամանակ՝ առանց կառավարության կողմից ձեռնարկվող հատուկ միջոցառումների:

Ներքին ավտոմատ կայունացուցիչների տակ նկատի են առնվում հետևյալ գործոնները.

ա) հարկային մուտքերի ավտոմատ փոփոխությունը. գործնականում ՀԱԱ-ի աճի հետ բոլոր հարկերը բերում են մեծ բյուջետային մուտքեր: Մասնավորապես, անհատական եկամտահարկն ունի պրոգրեսիվ դրույքներ և ՀԱԱ-ի աճի հետ ապահովում է հարկային մուտքերի համամասնական աճ: Բացի դրանից, ՀԱԱ-ի և ապրանքների ու ծառայությունների գնումների աճի հետ մեծանում են նաև կորպորացիաներից գանձվող շահութահարկը, շրջանառության և ակցիզային հարկերը: ՀԱԱ-ի աճը նշանակում է նաև հարկային դաշտի մեծացում, քանի որ գործազրկության կրճատման շնորհիվ ավելանում է եկամուտ ստացողների թիվը, ինչպես նաև գործող ձեռնարկությունների քանակը: Եվ ընդհակառակը, ՀԱԱ-ի կրճատման դեպքում այդ աղբյուրներից կատարվող հարկային մուտքերը կրճատվում են: Հարկային համակարգի՝ որպես ավտոմատ ներքին կայունացուցիչ գործողությունը կարելի է արտահայտել գրաֆիկորեն (գրաֆիկ 11.3):



Համախառն ազգային արդյունք Գրաֆիկ 11.3

Գրաֆիկում պետական ծախսերը (G) ընդունում են որպես հաստատուն և ՀԱԱ-ի մակարդակից անկախ մեծություն: Հայտնի է, որ այդ ծախսերի մակարդակը որոշակի ժամանակի, սովորաբար մեկ տարվա համար, սահմանվում է երկրի պառլամենտի կողմից: Բայց պառլամենտը չի որոշում հարկային մուտքերի մակարդակը, նա որոշում է միայն հարկային դրույքաչափերը: Հարկային մուտքերն ուղիղ կախվածություն են դրսևորում ՀԱԱ-ի մակարդակից, որն արտահայտում է T կորը: Այդպիսի ուղիղ համեմատական կախվածությունը դառնում է ակնհայտ՝ հետևյալ պատճառներով.

- հարկերը կրճատում են ծախսերը և ամբողջական պահանջարկը,
- կայունության առումով ծախսերի կրճատումը ցանկալի է այն ժամանակ, երբ տնտեսությունը շարժվում է դեպի ինֆլյացիա, և ընդհակառակը՝ գործարար ակտիվության խիստ կրճատման փուլերում ցանկալի է դառնում ծախսերի մեծացումը:

Տնտեսական վերելքի՝ ՀԱԱ-ի մակարդակի աճի հետ, հարկային մուտքերն ավտոմատ ձևով մեծանում են և նպաստում բյուջետային դեֆիցիտի վերացմանն ու բյուջետային ավելցուկների ստեղծմանը: Եվ ընդհակառակը, երբ ՀԱԱ-ը կրճատվում է անկման փուլերում, հարկային մուտքերն ավտոմատ ձևով կրճատվում են, որը տանում է ծախսերի աճին և մեղմացնում տնտեսական անկումը: Ինչպես տեսնում ենք

գրաֆիկից, երբ տնտեսությունը գտնվում է ՀԱԱ<sub>1</sub> ցածր մակարդակի պայմաններում, տնտեսական բարենպաստ աճի համար ավտոմատ ձևով ստեղծվում է բյուջետային դեֆիցիտ, իսկ երբ հասնում է ՀԱԱ<sub>3</sub> մակարդակի, որը բերում է ինֆլյացիայի, ձևավորվում է արգելակող բյուջետային ավելցուկ: 19-րդ դարի տնտեսագետների համար հարկային կայուն մուտքերը դրական երևույթ էին, իսկ դրանց տատանումները, կապված ազգային եկամտի աճի կամ նվազման հետ, անընդունելի: 20-րդ դարի տնտեսագետները ճշմարտությունը տեսնում էին հենց հակառակ միտումների մեջ, քանի որ հարկային համակարգը, շնորհիվ իր «ավտոմատ ճկունության», թույլ է տալիս մուտքերը մեծացնել ինֆլյացիայի ժամանակ և դրանք կրճատել դեպրեսիայի ժամանակ, որպես ամբողջ տնտեսությունը կայունացնող և տնտեսական ցիկլը մեղմացնող գործոն:

Նկատենք, որ T կորի թեքությունը կախված է գործող հարկային համակարգի բնույթից: Պրոգրեսիվ հարկային համակարգի պայմաններում T կորի թեքությունն ավելի մեծ կլինի (այսինքն, մեծ կլինի նաև դեֆիցիտների և ավելցուկների չափը), քան համամասնական կամ ռեգրեսիվ հարկային համակարգերի պայմաններում: Որքան հարկային համակարգը պրոգրեսիվ է, այնքան մեծ է տնտեսության կայունացման հավանականությունը,

բ) տրանսֆերտային վճարներ (կամ «բացասական հարկեր»): զբաղվածության բարձր մակարդակի պայմաններում հարկերը, որոնց հաշվին ֆինանսավորվում են տրանսֆերտային վճարները, աճում են: Ուստի ռեգրեսիվային ֆոնդն աճում է վերելքի շրջանում և ճնշում չափից շատ կատարվող ծախսերի վրա: Իսկ գործազրկության աճի ժամանակ ռեգրեսիվային ֆոնդն օգտագործվում է տրանսֆերտային վճարների համար սպառման մակարդակը պահպանելու և անկումը մեղմացնելու նպատակով,

գ) ֆերմերներին օգնության (սուբսիդիաների) ծրագրերը. երբ ամբողջական ծախսերը նվազում են, և ֆերմերների արտադրանքի գներն իջնում են, կառավարությունը ֆերմերներին հատկացնում է սուբսիդիաներ և կլանում արտադրանքի ավելցուկները: Իսկ երբ առաջանում է ինֆլյացիա, և գներն աճում են, պահեստներից ապրանքները հանվում են շուկա և կլանում ավելցուկային փողը,

դ) ձեռնարկությունների և տնային տնտեսությունների անձնական խնայողությունները. օրինակ, եկամուտների աճի հետ ընտանիքները սկսում են ծախսել ավելացած փողը, իսկ տնտեսական անկայունության ժամանակ կրճատում են սպառումը:

**11.3.** Սովորաբար տեսությունը և իրականությունն իրար չեն համապատասխանում: Գոյություն ունի հսկայական տարբերություն նաև գանձարանային քաղաքականության տեսության և նրա գործնական կիրառման միջև: Կառավարության կողմից գանձարանային քաղաքականության իրականացման դժվարությունները կարող են կապված լինել ինչպես ժամանակային, այնպես էլ քաղաքական հիմնահարցերի հետ:

ա) ժամանակային խնդիրներ.

- հաճախ գոյություն ունի խզվածություն տնտեսության անկման կամ ինֆլյացիայի փուլում հայտնվելու և այդ երևույթների գիտակցման միջև: Դժվար է բացառապես ճիշտ կանխատեսել տնտեսական ակտիվության ապագա բնույթը: Թեև գոյություն ունեն տնտեսական զարգացման ուղղությունը կանխատեսող ցուցանիշներ, սակայն հաճախ անցնում է 4-5 ամիս, մինչև որ սկիզբ առած անկումը կամ ինֆլյացիան արտահայտվում են համապատասխան վիճակագրության մեջ և գիտակցվում,

- սովորաբար տնտեսության կառավարման անիվը դանդաղ է պտտվում, միշտ պահանջվում է որոշակի ժամանակահատված իրավիճակը գնահատելուց հետո համապատասխան գանձարանային քաղաքականության մասին որոշում ընդունելու համար,

- գոյություն ունի կտրվածություն որոշումների ընդունման ժամանակի և այն ժամանակի միջև, երբ այդ որոշումները սկսում են գործել և իրական ազդեցություն ունենալ արտադրության, զբաղվածության կամ գների մակարդակի վրա, այսինքն՝ հնարավոր է ֆունկցիոնալ ուշացում, որը հատկապես վերաբերում է պետական ծախսերի փոփոխությանը՝ կապված երկարատև շինարարական աշխատանքների իրականացման հետ: Դրանք կարող են բոլորովին չօգնել փոքր տևողությամբ տնտեսական տատանումների ժամանակ, որի պատճառով էլ նման դեպքերում օգտագործվում են հարկային փոփոխություններ, որոնց ազդեցությունը տնտեսության վրա ավելի արագ է դրսևորվում:

բ) Քաղաքական դժվարություններ.

-տնտեսական կայունության ապահովումը պետության քաղաքականության միակ նպատակը չէ ծախսերի և հարկավորման բնագա-

վառում: Կառավարությունը զբաղվում է նաև բնակչությանը հասարակական բարիքների և ծառայությունների ապահովման և եկամուտների վերաբաշխման հարցերով, որը միշտ չէ, որ ուղեկցվում է տնտեսական կայունության ապահովմամբ,

- որոշակի քաղաքական հակվածություն կա խթանիչ միջոցառումների նկատմամբ, որոնք ի վերջո առաջացնում են ինֆլյացիա: Պատճառն այն է, որ քաղաքական առումով շատ գրավիչ է հարկերի իջեցումն ու պետական ծախսերի մեծացումը, որը քաղաքական գործիչներին մեծ դիվիդենդներ է խոստանում՝ վերընտրվելու համար: Մինչդեռ հարկերի բարձրացումը կամ, օրինակ, սուբսիդիաների կրճատումը, միշտ առաջացնում է ընտրողների դժգոհություն,

- քաղաքական գործիչները վերընտրվելու նպատակով կարող են օգտագործել նաև գանձարանային քաղաքականությունը, որը կարող է բխել ոչ թե ազգային տնտեսության շահերից, այլ վերընտրվելու անձնական մոլորներից, իսկ դա կարող է ապակայունացնել տնտեսությունը և տնտեսական տատանումների պատճառ դառնալ:

Գանձարանային քաղաքականությունն ունի մի շարք անկատարություններ և հակասական կողմեր, որոնք տնտեսության վրա կարող են ունենալ բացասական ազդեցություններ: Ինչպես, օրինակ, արտամղման էֆեկտի առաջացումը: Արտամղման էֆեկտի էությունն այն է, որ խթանիչ (դեֆիցիտային) գանձարանային քաղաքականությունը հանգեցնում է տոկոսադրույքների բարձրացման և ինվեստիցիոն ծախսերի կրճատման, դրանով իսկ չեզոքացնելով այդ քաղաքականության խթանիչ էֆեկտը: Ենթադրենք, տնտեսությունը գտնվում է անկման փուլում, և կառավարությունը դիմում է դիսկրեցիոն միջոցների՝ արտադրությունը խթանելու նպատակով մեծացնելով իր ծախսերը: Դրանք ֆինանսավորելու համար նա դրամական շուկայում վաճառում է փոխառություններ, որը մեծացնում է փողի պահանջարկը: Դա իր հերթին բարձրացնում է վարկի դիմաց պահանջվող տոկոսադրույքը, իսկ քանի որ ծախսերը տոկոսադրույքի հետ փոփոխվում են հակադարձ կախվածությամբ, ապա որոշ ինվեստիցիաներ պարզապես մերժվում են:

Եթե գանձարանային քաղաքականության նպատակն ամբողջական պահանջարկի աճն է, որը հիմնականում իրականացվում է պետական ծախսերի ավելացման միջոցով, ապա նրա խթանիչ ազդեցությունը մասամբ խափանվում է ինֆլյացիայի տեմպերի աճի հետևանքով: Պատ-

ճառն այն է, որ երբ տնտեսությունը մոտենում է լրիվ զբաղվածության մակարդակին, այսինքն՝ հայտնվում է ամբողջական առաջարկի միջակայքի հատվածում, պահանջարկի հետագա աճը մեծացնում է ոչ միայն արտադրության ծավալը, այլ նաև գների մակարդակը:

Գանձարանային քաղաքականության իրականացման ժամանակ լրացուցիչ դժվարություններ կարող են առաջանալ նաև այն դեպքում, երբ հաշվի ենք առնում, որ տնտեսությունը փակ չէ: Այս դեպքում երկրի իրական տնտեսական վիճակը և վարվող գանձարանային քաղաքականությունը կարող են չհամապատասխանել առևտրական գործընկերների տնտեսական վիճակին և հակասությունների պատճառ դառնալ: Եթե երկրի ներսում սպասվում է արտադրության անկում, և պետությունը խթանիչ քաղաքականություն է վարում մինչև այնպիսի մակարդակ, որը բավարար է ինֆլյացիա չառաջանալու համար, իսկ մյուս երկրներում վերելքի հետևանքով եկամուտներն աճում են, և նրանք սկսում են շատ ապրանքներ գնել այդ երկրից, ապա վերջինիս զուտ արտահանումն աճում է, պահանջարկն էլ ավելի մեծանում, որն էլ հանգեցնում է ինֆլյացիայի:

Գանձարանային քաղաքականության արդյունավետությունը կարող է նվազել նաև զուտ արտահանման կամ ներմուծման էֆեկտի հետևանքով: Արտամղման էֆեկտից գիտենք, որ խթանիչ գանձարանային քաղաքականությունը բերում է տոկոսադրույքի բարձրացման և ինվեստիցիաների կրճատման: Բայց տոկոսադրույքի բարձրացումը գրավում է արտասահմանյան ֆինանսական կապիտալին, որը սկսում է հոսել դեպի տվյալ երկիր: Արտասահմանյան ինվեստորները տվյալ երկրի ներսում արժեթղթեր ձեռք բերելու համար նախ իրենց թղթադրամը պետք է փոխանակեն այդ երկրի թղթադրամի հետ: Դա մեծացնում է ազգային թղթադրամի պահանջարկը, հետևաբար, բարձրացնում է նաև նրա կուրսը: Իսկ թղթադրամի կուրսի բարձրացման դեպքում զուտ արտահանումը նվազում է, այդ երկրի արտադրանքի նկատմամբ պահանջարկը կրճատվում է, որն էլ մասամբ չեզոքացնում է գանձարանային քաղաքականության խթանիչ ազդեցությունը: Այս դեպքում դարձյալ ամբողջական ծախսերի մակարդակը մնում է նույնը կամ նույնիսկ նվազում, որովհետև պետական ծախսերի աճն ուղեկցվում է մեկ այլ զուտ արեկի՝ զուտ արտահանման ծավալների կրճատմամբ: Արգելակիչ գանձարանային քաղաքականությունը, որի նպատակն

ինՖլյացիայի հաղթահարումն է, փոքրացնում է տոկոսադրույքը, մեծացնում զուտ արտահանումը, հետևաբար նաև ամբողջական պահանջարկը և դարձյալ հանգեցնում ինՖլյացիայի:

Գանձարանային քաղաքականությունը, պահանջարկի վրա ազդելուց բացի, կարող է փոփոխել նաև առաջարկի մեծությունը: Ընդ որում, այս դեպքում շեշտը դրվում է ոչ թե ամբողջական ծախսերի մեծացման վրա, որն արվում էր պետական գնումների ավելացման հաշվին, այլ առաջնային է համարվում հարկերի փոփոխությունը: Այս տեսության կողմնակիցների կարծիքով հարկերի կրճատումն առաջարկի կորը տեղաշարժում է դեպի աջ և խթանիչ ազդեցություն ունենում: Ցածր հարկերը մեծացնում են տնային տնտեսությունների եկամուտները, հետևաբար, նաև խնայողություններն ու դրանց վրա հիմնված ինվեստիցիաները: Բացի այդ, հարկերի իջեցումը մեծացնում է ինվեստիցիաների շահութաբերությունը և դարձյալ ազդում կապիտալի կուտակման տեմպերի վրա: Իսկ դա դարձյալ նշանակում է արտադրության ծավալների մեծացում: Հարկերի իջեցումը խթանում է մեծացնելու աշխատուժի առաջարկը, որովհետև կմեծանա նաև հարկերի վճարումից հետո մնացած աշխատավարձը: Այն խթան է ծառայում նաև ռիսկի դիմելու համար, քանի որ բարձրացնում է ձեռներեցությամբ զբաղվելու շահագրգռվածությունը: Այսպիսով, բոլոր տեսանկյուններից, հարկերի իջեցումը մեծացնում է ապրանքների և՛ պահանջարկը, և՛ առաջարկը, ընդ որում առաջարկի աճն այս դեպքում կրճատում է ինՖլյացիայի տեմպերը և մեծացնում ՀԱԱ-ի իրական մակարդակը: Այս տեսության կողմնակիցների կարծիքով հարկերի իջեցումը չի փոքրացնի հարկային գանձումների ընդհանուր գումարը, որովհետև աճող տնտեսության պայմաններում մեծանում է հարկեր վճարողների քանակը և ընդլայնվող հարկային դաշտը նպաստում է հարկային գանձումների ավելացմանը՝ նույնիսկ դրանց դրույքների իջեցման դեպքում:

Հայտնի է, որ առաջարկի կորի՝ դեպի աջ կատարվող բոլոր տեղաշարժերն իրենց բնույթով տևական են, ուստի այդպիսի քաղաքականությունը կարող է ունենալ նվազ արդյունավետություն: Հետևաբար, ամբողջական առաջարկի փոփոխությանն ուղղված գանձարանային քաղաքականությունը նույնպես զերծ չէ թերություններից:

## ԳԼՈՒԽ 12. ՓՈՂՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԸ: ԴՐԱՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ : IS - LM ՄՈՂԵԼԸ:

**12.1.** Փողի էությունը, ֆունկցիաները, տեսակները:

**12.2.** Փողի առաջարկը և պահանջարկը: Փողի քանակային տեսությունը:

**12.3.** Բանկերը և դրանց գործառնությունները:

**12.4.** Բանկային համակարգի վարկային պոտենցիալը և դրամական մուլտիպլիկատորը:

**12.5.** Դրամավարկային քաղաքականության հիմնական լծակները:

**12.6.** IS - LM մոդելը:

Փողը մարդկության մեծագույն հայտնագործություններից մեկն է: Այն տնտեսական համակարգի պասիվ բաղադրիչը չէ կամ տնտեսության աշխատանքին օժանդակող ինչ-որ մի հասարակ բան: Գիշտ գործող դրամական համակարգը նպաստում է արտադրական հզորությունների լրիվ օգտագործմանն ու լրիվ զբաղվածությանը, իսկ հակառակ դեպքում՝ կարող է դառնալ արտադրության, զբաղվածության և գների մակարդակների կտրուկ տատանումների պատճառ, աղճատել ռեսուրսների բաշխումը: Տնտեսական էվոլյուցիայի հետ մեծացել է փողի, որպես տնտեսական գործոնի նշանակությունը, իսկ հաճախ էլ այն համարվում է ամենավճռականը: Հենց այդ հետազոտում է ընդհանրացնում տնտեսագետներից մեկը՝ գրելով, թե.

Փողը նշանակություն չունի,

փողը նույնպես նշանակություն ունի,

միայն փողը նշանակություն ունի:

**12.1.** Տնտեսագետները փող հասկացության մեջ դնում են խիստ որոշակի իմաստ: Փողն ակտիվների ամբողջություն է, որոնցով մարդիկ իրականացնում են գործարքներ: Տնտեսագետների համար փողը չի նշանակում ամբողջ հարստությունը, այն դրա միայն մի տեսակն է:

Տնտեսության մեջ փողը իրականացնում է երեք ֆունկցիաներ. շրջանառության միջոց, արժեքի չափ, կուտակման կամ խնայողության միջոց:

*Շրջանառության միջոց.* փողը միակ ապրանքն է, առանց որից ազատվելու հնարավոր չէ նրանից օգտվել: Որպես շրջանառության միջոց

այն օգտագործում ենք ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար՝ ազատվելով բարտերային փոխանակության անհարմարություններից:

*Արժեքի չափ.* դրամական միավորը որպես չափի մասշտաբ օգտագործվում է ապրանքների և ծառայությունների գնահատման, այսինքն՝ բարիքների և ռեսուրսների համեմատական արժեքների չափակցման համար: Տնտեսական գործառնությունների իրականացման ժամանակ փողը ծառայում է որպես գնահատման միջոց: Գիշտ այնպես, ինչպես որ հեռավորությունները չափում ենք կիլոմետրերով կամ մետրերով և համեմատում միմյանց հետ, այդպես էլ բարիքների և ծառայությունների արժեքները չափակցում ենք դրամական արտահայտությամբ: Փողի միջոցով բոլոր ապրանքները և ծառայությունները դառնում են համեմատելի:

*Կուտակման կամ խնայողության միջոց.* քանի որ փողը ամենալիկվիդային ունեցվածքն է, այն հարստության պահպանության ամենահարմար միջոցն է: Փողը յուրատեսակ միջոց է, որը թույլ է տալիս ներկա գնումները տեղափոխել ապագա: Այսօրվա 100 դոլարը կարելի է պահել և ծախսել հաջորդ շաբաթ կամ մեկ ամիս հետո: Փողի կուտակումը, հազվադեպ բացառություններով, եկամուտ չի բերում, ինչպես, օրինակ, անշարժ գույքի կամ արժեթղթերի ձևով կուտակելու դեպքում, բայց ունի այն առավելությունը, որ հարմար է ցանկացած անհետաձգելի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակ: Իհարկե, փողը խնայողության ամենակատարյալ միջոցը չէ: գների բարձրացումից նրա իրական արժեքն ընկնում է: Չնայած դրան՝ մարդիկ շահագրգռված են ունենալ կանխիկ փող, քանի որ հետագայում դրանք կարելի է փոխանակել ապրանքների և ծառայությունների հետ:

Փողի ֆունկցիաների մասին ճիշտ պատկերացում կազմելու համար ընդունենք, թե տնտեսությունը հիմնված է բարտերային առևտրի վրա: Նախ այդպիսի տնտեսության մեջ փոխանակող կողմերի՝ x-ի և y-ի պահանջարկները (անհրաժեշտ ապրանքների նկատմամբ) պետք է իրար համընկնեն, և ապա անհրաժեշտություն կառաջանա կուտակել հսկայական չափերով «ոչ պետքական ապրանքներ» (ինչը կապված է մեծ ծախքերի հետ), կամ էլ իրենց աշխատանքը և նյութական ռեսուրսները ներդնել արտադրության տարբեր ձևերում, ճիշտ ժամանակին և տեղում փոխանակելու համար, որը գործնականում անհնար է: Այդպիսի տնտեսությունում կարող են տեղի ունենալ միայն տնտեսական պարզագույն գործառնություններ: Այլ կերպ ասած, եթե չլիներ փողը, ապա

x-ը և y-ը ստիպված կլինեին բավարարվել ինքնապահովմամբ, և մասնագիտացման՝ աշխատանքի բաժանման, առավելությունները հասարակության համար կմնային չիրացված: Ավելի ստույգ ասած, փողն իբրև հարմար միջոց ապրանքների փոխանակության համար, ծառայում է որպես աշխատանքի բաժանման նախադրյալ:

Փողը թույլ է տալիս հեշտությամբ լուծել այն մեծ դժվարությունները, որոնք կարող էին առաջանալ, եթե ընդունենք, թե աշխատանքի դիմաց վարձատրությունն իրականացվում է բարտերային սկզբունքով:

Տարբերում են փողի երեք տեսակներ. *ապրանքային փող, թղթադրամ կամ սիմվոլիկ փող և վարկային փող:*

ա) Բոլոր այն դեպքերում, երբ փողի դերում հանդես է գալիս որևէ ապրանք, որն ունի ներքին արժեք, գործ ունենք *ապրանքային փողի* հետ: Վերջինս օգտագործվում է որպես շրջանառության միջոց, ինչպես նաև վաճառվում է և գնվում որպես սովորական ապրանք: Այսինքն, ներքին արժեք հասկացությունը կիրառվում է այն փողերի նկատմամբ, որոնք արժեք ունեն նաև այն ժամանակ, երբ դրանք չեն օգտագործվում որպես փող: Հայտնի է, որ շրջանառության միջոցի դեր են կատարել այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են՝ անասունները, ցորենը, աղը, մորթիները և այլն: Աստիճանաբար փողի ֆունկցիան անցել է մետաղներից, որոնցից բիմետալիզմի ժամանակաշրջանում ի վերջո ընտրվել են արծաթն ու ոսկին: Մոնոմետալիզմի ժամանակաշրջանում, այսինքն XVIII դարի կեսերին, երբ հայտնաբերվեցին ոսկու բավարար պաշարներ, այդ ֆունկցիան ամբողջությամբ ամրացվեց ոսկուն, որին նախապատվությունը տրվեց իր ֆիզիկաքիմիական և տնտեսական հատկությունների շնորհիվ: Առաջին մետաղադրամները հատվել են մ.թ.ա. VII դարում Չինաստանում, ապա նաև Հունաստանում, Հռոմում և Պարսկաստանում: Մ.թ.ա. V դարում Հայաստանում հատվել են պղնձե և արծաթե դրամներ, իսկ 2-րդ դարում հիմնական փողային միավոր է համարվել ատտիկյան դրամը՝ 4,36 գրամ արծաթի քաշով: Հատված մետաղադրամները եղել են լիարժեք փողեր, այսինքն, դրանց քաշը համապատասխանել է անվանական արժեքին:

բ) *Թղթադրամ կամ սիմվոլիկ փող.* այն վճարման միջոց է, որի արժեքը կամ գնողունակությունը գերազանցում է դրա արտադրության ծախքերը, այսինքն՝ անվանական արժեքն անհամեմատ մեծ է: Թղթադրամը պետության կողմից սահմանված և պարտադիր ընդունման հա-

մար դրոշմանիշ է, որը կատարում է վճարման միջոցի ֆունկցիա: Մինչև 20-րդ դարի երեսունական թվականները թղթադրամը գործել է ոսկու ստանդարտի պայմաններում: Ոսկու ստանդարտը նշանակում է թղթադրամի շրջանառելիությունը ոսկով: Թղթադրամը, պարզապես հարմարության համար, կատարել է ոսկու ներկայացուցչի դեր և բանկերում, ըստ սահմանված կուրսի, ազատ փոխանակվել ոսկու հետ և հակառակը: Սակայն, ոսկով ապահովվածության անհրաժեշտությունը աստիճանաբար վերացել է, և ապրանքային փողի վրա հենվող համակարգը վերափոխվել է թղթադրամ օգտագործող համակարգի:

գ) *Վարկային փողը (բանկային փող կամ չեկային դեպոզիտներ)* վճարման միջոց է, որը ներկայացնում է մասնավոր անձի կամ ֆիրմայի պարտավորությունները: Օրինակ, բանկային դեպոզիտը վարկային փող է, քանի որ բանկը պարտավոր է ավանդատիրոջ ցանկությանը նրան վերադարձնել պահանջվող գումարը: Այն նաև փոխանակության միջոց է, քանի որ կանխիկ փողի փոխարեն շրջանառության միջոցի դեր են կատարում բանկային հաշիվներն ու չեկերը: Ժամանակակից տնտեսության մեջ օգտագործվող փողի մեծ մասը բաժին է ընկնում վարկային փողին:

**12.2.** Տնտեսության համար անհրաժեշտ փողի քանակությունը մեծ ազդեցություն է ունենում տնտեսական բազմաթիվ չափումների վրա: Դրա համար առաջին հերթին հարկ է պարզել փողի առաջարկի և պահանջարկի տարրերը: Տնտեսագետները միասնական կարծիք չունեն, դրամական առաջարկի բաղկացուցիչ տարրերի վերաբերյալ: Նեղ իմաստով փողի առաջարկը, որը սովորաբար նշանակում են  $M_1$ -ով, բաղկացած է երկու տարրերից. ա) կանխիկ փող (մետաղադրամներ և թղթադրամներ) և բ) չեկային ավանդներ, այսինքն՝ բանկերում գտնվող այնպիսի գումարներից, որոնց դիմաց կարելի է չեկեր դուրս գրել: Մետաղական փողը սովորաբար կազմում է  $M_1$ -ի մոտավորապես 2-3 տոկոսը: Այն ևս սիմվոլիկ փող է, քանի որ դրա իրական արժեքը, այսինքն՝ մետաղադրամում պարունակվող մետաղական ձուլվածքի արժեքը, շատ ավելի փոքր է վրան նշված անվանական արժեքից: Եթե 50 ցենտանոց մետաղադրամը պարունակեր 75 ցենտ արժողությամբ արծաթի ձուլվածք, ապա շատ շահավետ կլիներ այն ձուլելն ու իբրև մետաղ վերավաճառելը:

Թղթադրամի տեսակարար կշիռն ավելի մեծ է և զարգացած երկրներում կազմում է  $M_1$ -ի մոտ 25 տոկոսը: Մնացած մասը չեկային ավանդներն են, որոնց բաժին է ընկնում բոլոր գործարքների մոտավորապես 90 տոկոսը: Փողի առաջարկի մեջ մտնում են նաև ոչ չեկային ավանդները և փոքր գումարի կարճաժամկետ ավանդները, որոնք տվյալ պահին չեն գործում որպես շրջանառության միջոց, և դրանց դիմաց չեկեր դուրս չեն գրվում: Սրանց լիկվիդացությունը (ծախսելու ունակությունը) համեմատաբար փոքր է, բայց ժամկետը լրանալուց հետո այս գումարները ևս կարող են օգտագործվել որպես կանխիկ փող կամ փոխանցվել ընթացիկ հաշվին: Ուստի փողի առաջարկին տրվում է ավելի լայն բնորոշում ( $M_2$ ).

$M_2 = M_1 +$  ոչ չեկային խնայողամարկղային հաշիվներ + փոքր գումարի կարճաժամկետ ավանդներ

Մի երրորդ բնորոշմամբ փողի առաջարկում հաշվի են առնվում խոշոր ժամկետային ավանդները, որոնք սովորաբար պատկանում են ձեռնարկություններին՝ դեպոզիտային սերտիֆիկատների ձևով.

$M_3 = M_2 +$  խոշոր գումարի երկարաժամկետ ավանդներ:

$M_2$ -ը և  $M_3$ -ը «գրեթե փող» կամ «համարյա թե փող են», որովհետև անհրաժեշտության դեպքում կարող են վերածվել շրջանառության միջոցների և ազդել փողի առաջարկի ու գնողունակության վրա: Սակայն շրջանառության միջոցի դեր անմիջականորեն կատարում է  $M_1$ -ը, որի պատճառով էլ տնտեսագետների մեծ մասը հակված է ընդունել  $M_1$  բնորոշումը:

Փողի գնողունակությունն առաջին հերթին կախված է շրջանառության մեջ գտնվող փողի առաջարկից: *Փողի գնողունակությունը* կամ *իրական արժեքը* ապրանքների և ծառայությունների այն քանակությունն է, որը կարելի է գնել դրամական միավորով: Այդ գնողունակության և ապրանքների գների միջև գործում է հակադարձ կախվածություն. որքան գները բարձր են, այնքան շատ փող է պահանջվում ապրանքի միևնույն քանակություն գնելու համար: Փողի գնողունակությունը բարձրացնելու և տնտեսական կայունություն ապահովելու հիմնական միջոցը փողի առաջարկի նկատմամբ վերահսկողություն սահմանելն ու համապատասխան պետական դրամարկղային ու մոնետար քաղաքականություն վարելն է:

Մինչ այժմ խոսքն այն մասին էր, թե ինչից է բաղկացած և ինչի վրա է հիմնվում փողի առաջարկը: Սակայն փողի ֆունկցիաների վերլուծությունն արդեն ենթադրում է նաև փողի պահանջարկի երկու հիմնական պատճառների գոյությունը:


ա) մարդիկ փողի կարիք ունեն կապված ապրանքների ու ծառայությունների առք ու վաճառքի հետ: Ձեռնարկություններին այն անհրաժեշտ է աշխատանքի դիմաց վարձատրություն, նյութերի, էներգիայի դիմաց վճարումներ կատարելու համար և այլն: Այս նպատակների համար անհրաժեշտ փողն անվանվում է փողի պահանջարկ գործարքների համար: Եվ բնականաբար, գործարքների համար փողի քանակն առաջին հերթին պետք է որոշվի անվանական ՀԱԱ - ով: Որքան մեծ է իրացվող ապրանքների ու ծառայությունների դրամական արժեքը, այնքան շատ փող կպահանջվի գործարքների իրականացման համար: Այս դեպքում անհրաժեշտ փողի քանակն ուղիղ համեմատական է համախառն ազգային արդյունքի անվանական մեծությանը և հակադարձ համեմատական փողի միավորի շրջապտույտի տարեկան արագությանը: Գործարքների համար անհրաժեշտ փողի քանակը ( $D_t$ ) որոշվում է հետևյալ բանաձևով:

$$D_t = \frac{\text{ՀԱԱ-ի անվանական մեծություն}}{\text{փողի շրջապտույտի արագություն}}$$

բ) փողի պահանջարկի երկրորդ պատճառը բխում է նրա խնայողության ֆունկցիայից: Մարդիկ իրենց ֆինանսական ակտիվները կարող են պահել բաժնետոմսերի, մասնավոր կամ պետական փոխառությունների կամ էլ  $M_1$ -ի ձևով ( $D_a$ ): Հետևապես, գոյություն ունի նաև փողի պահանջարկ ակտիվների ձևով: Սակայն նշված ֆինանսական ակտիվներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Փողի ձևով ակտիվներ ունենալու առավելությունը բարձր լիկվիդայնությունն է, քանի որ այդ խնայողությունները կարելի է անմիջապես օգտագործել գնումների համար: Ակտիվների ձևով փողը հատկապես գերադասելի է այն ժամանակ, երբ սպասվում է ապրանքների ու ծառայությունների կամ այլ ֆինանսական ակտիվների գների իջեցում: Եթե, օրինակ, փոխառությունների գներն իջնում են, նրանց տերերը վնաս են կրում այն դեպքում, եթե փոխառությունները պետք է


իրացվեն որոշակի ժամկետը լրանալուց հետո: Սակայն փոխառությունների համեմատությամբ խնայողությունների ձևով դրամական ակտիվների թերությունն այն է, որ եկամուտ չեն բերում, ինչպես փոխառությունները կամ ոչ ժամկետային ավանդները: Իսկ այն հարցի լուծումը, թե ֆինանսական ակտիվներից ինչքան պահել փոխառությունների կամ փողի ձևով, առաջին հերթին կախված է բանկի տոկոսադրույքից: Փողի ձևով խնայողությունն ի վերջո տոկոսի ձևով ստացվող եկամտի զոհաբերություն է: Պատահական չէ, որ փողի ձևով ակտիվների պահանջարկը տոկոսադրույքի հետ փոփոխվում է հակադարձ կախվածությամբ: Եթե տոկոսադրույքը ցածր է, ապա մարդիկ նախընտրում են ավելի շատ ակտիվներ կուտակել, և ընդհակառակը:

Այսպիսով փողի ընդհանուր պահանջարկը հավասար է գործարքների և ակտիվների ձևով պահանջվող փողի գումարին ( $D_m$ ), որը կարելի է ներկայացնել գրաֆիկորեն (տես՝ գրաֆիկ 12.1):



Փողի ընդհանուր պահանջարկը՝  $D_m$  -ը, որոշվում է ակտիվների ձևով փողի պահանջարկի՝  $D_a$  կորի տեղաշարժով՝ գործարքների համար անհրաժեշտ փողի պահանջարկի՝  $D_t$  -ի չափով: Գործարքների համար անհրաժեշտ փողի պահանջարկն ( $D_t$ ) ուղղահայաց է , քանի որ ենթադրվում է, որ այն կախված է ՀԱԱ-ից, և ոչ թե տոկոսադրույքից:

Դրամական առաջարկի՝  $S_m$ -ի, միավորումը փողի ընդհանուր պահանջարկի՝  $D_m$ -ի, հետ պատկերացում է տալիս դրամական շուկայի մասին և որոշում հավասարակշռված տոկոսադրույքը՝  $I_e$ -ն: Դրամական շուկայի անհավասարակշռության դեպքում սկսում են գործել այնպիսի լծակներ, որոնք ի վերջո վերականգնում են հավասարակշռությունը (տես՝ գրաֆիկ 12.2):



Փողի պահանջարկի և առաջարկի մեծությունը  
Գրաֆիկ 12.2

Փողի առաջարկի նվազեցումը, այսինքն՝ առաջարկի կորի ձախ տեղաշարժը  $S_m$ -ից դեպի  $S_{m1}$  դիրքը, դրամական շուկայում առաջացնում է դրամի պակասորդ, որը ստիպում է տնային տնտեսություններին և ձեռնարկություններին, ավելի շատ փող ստանալու նպատակով, վաճառել իրենց տրամադրության տակ եղած փոխառությունները: Դա մեծացնում է փոխառությունների առաջարկը շուկայում, իջեցնում դրանց գինը և բարձրացնում տոկոսադրույքը, որովհետև փոխառությունների գնի և տոկոսադրույքի միջև գործում է հակադարձ կախվածություն:

$$\text{Տոկոսադրույքը} = \frac{\text{փոխառությունների տարեկան եկամուտ}}{\text{փոխառությունների գին}} \times 100$$

Ավելի բարձր տոկոսադրույքի դեպքում փողի այն քանակը, որը մարդիկ ցանկանում են կուտակել խնայողությունների ձևով նվազում է, որովհետև տոկոսով տալը դառնում է շահավետ: Փողի առաջարկի կրճատումն ուղեկցվում է ակտիվների ձևով պահվող  $D_a$  փողի պահանջարկի նվազեցմամբ, և հավասարակշռությունը վերականգնվում է նոր, ավելի բարձր տոկոսադրույքի դեպքում: Փողի առաջարկի աճը կորը

տեղաշարժում է դեպի աջ ( $S_m$ -ից դեպի  $S_{m2}$ ), որը ստեղծում է դրամի ժամանակավոր ավելցուկ: Փոխառությունների պահանջարկը մեծանում է, դրանց գինը՝ բարձրանում: Դա հանգեցնում է տոկոսադրույքի իջեցման, ակտիվների ձևով տանը կուտակված միջոցներն աճում են, և առաջարկն ու պահանջարկը հավասարակշռվում են ավելի ցածր տոկոսադրույքի դեպքում:

*Նորից շրջանառության համար պահանջվող փողի քանակի մասին.* շրջանառության մեջ գտնվող փողի քանակի և ապրանքների գների մակարդակի հարաբերակցության տեսական մշակումներին անդրադարձել են տնտեսագիտական բազմաթիվ դպրոցների ներկայացուցիչներ: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում փողի քանակային տեսությունը (Լոկ, Յուն, Ռիկարդո), ըստ որի, որքան շատ փող կա շրջանառության մեջ, այնքան ապրանքների գները բարձր են և ընդհակառակը: Վերոհիշյալ կապին տնտեսագետ Ի.Ֆիշերը տվել է քանակական կախվածության մաթեմատիկական հստակություն, համաձայն որի

$$M V = P Q, \text{ որտեղ}$$


$M$  –ը փողի զանգվածն է կամ առաջարկը,

$V$  –ն՝ փողի շրջանառության արագությունը,

$P$ –ն՝ ապրանքների ու ծառայությունների միջին գինը,

$Q$ –ն՝ ապրանքների քանակը:

Ելնելով քանակային տեսության հիմնադրույթներից՝ Ի.Ֆիշերը ձևակերպել է մի շարք քանակային հարաբերակցություններ: Տվյալ դեպքում բանաձևը ցույց է տալիս, որ որոշակի ժամանակամիջոցում իրացվող ապրանքների ընդհանուր արժեքը ( $P Q$ ) հավասար է շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածի և շրջապտույտի արագության արտադրյալին: Ի. Ֆիշերը դա բացատրում է կշեռքի օրինակով.





Ինչպես որ պահանջարկի և առաջարկի կորերի հատման արդյունքում ձևավորվում է հավասարակշռված գինը, այնպես էլ «կշեռքի սկզբունքով» տեղի է ունենում ապրանքային և դրամական շուկաների հավասարակշռության հաստատում: Միաժամանակ նկատենք, որ ժամանակակից պայմաններում բանկային ավտոմատների տարածումը, որը հնարավորություն է ստեղծել հատուկ քարտերով ստանալ կանխիկ փող, թույլ է տվել կրճատել բնակչության ձեռքում եղած կանխիկ փողի միջին քանակությունը: Մեծացել է փողի շրջապտույտների թիվը: Տնտեսագետները բացահայտել են նաև, որ փողի շրջանառության հաստատումն արագության ենթադրությունը հնարավորություն է տալիս ստանալ ճշգրիտ արդյունքներ և այլն: Այս իմաստով տարակարծություններն ու ճշգրտումները շարունակվում են:

**12.3.** Դրամական շուկայի կարգավորման, փողի պահանջարկի ու առաջարկի հարաբերակցության սահմանման գործում կարևոր դեր են խաղում բանկերը, որոնք ձևավորում են երկրի ֆինանսական համակարգը և որոշում դրամական քաղաքականության ուղղվածությունը: Բանկերի ստեղծման պատմությունը սկսվում է ոսկերչական կրպակներից: Դեռևս հնագույն ժամանակներում, երբ ոսկին սկսեց օգտագործվել տնտեսական գործարքներում, ակնհայտ դարձավ, որ ինչպես գնորդների, այնպես էլ վաճառողների համար նպատակահարմար և անվտանգ չէ այս կամ այն գործարքի ժամանակ ամեն անգամ այն տեղափոխել, կշռել և ստուգել մաքրությունը: Ուստի սկսեցին ոսկին պահպանության տալ (որոշակի վճարով) ոսկերչական կրպակներին փոխարենը վերցնելով ստացական: Շուտով ապրանքները սկսեցին փոխանակվել այդ ստացականների հետ, որոնք փաստորեն կատարում էին փողի նախնական ձևի դեր: Ընդ որում, այդ ստացականներն ունեին 100 տոկոս ոսկով ապահովվածություն: Տեսնելով ոսկու փոխարեն այդ ստացականները որպես թղթադրամ վերցնելու մարդկանց պատրաստականությունը, ակնհայտ դարձավ, որ պահպանության տրված ոսկին՝ դեպոզիտները, միանգամից չեն հանվում, և որոշակի ժամանակամիջոցում որպես ավանդ տրված ոսկին գերազանցում է ետ պահանջվող ոսկու քանակին: Եվ ահա ծագեց այն գաղափարը, որ թղթադրամի թողարկումը կարող է գերազանցել ունեցած ոսկու քանակությանը: Այդ ավելցուկային փողը դրվեց շրջանառության մեջ, որոշակի տոկոսով վարկեր տրամադրվեցին առևտրականներին, արտադրողներին և սպառողներին: Այդպես

ստեղծվեց մասնակի ռեզերվների բանկային համակարգը և բանկային գործառնությունները:

Բանկի ստեղծման համար սկզբնապես անհրաժեշտ է որոշակի գումարի սեփական կապիտալ: Սակայն բանկային գործառնությունները հիմնականում հիմնված են փոխառու միջոցների վրա: Տնտեսապես զարգացած երկրներում սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցությունը գտնվում է 1:10–ից մինչև 1 :100–ի մակարդակի վրա:

Ժամանակակից բանկային համակարգն իրականացնում է երեք խումբ գործառնություններ.

- 1) պասիվ գործառնություններ,
- 2) ակտիվ գործառնություններ,
- 3) բանկային ծառայություններ:

1.Պասիվ գործառնությունները նպատակ ունեն հավաքագրելու ազատ դրամական միջոցները, որոնց դերն, ըստ էության, վարկ վերցնելն է. ա) առաջին հերթին խոսքը վերաբերում է դեպոզիտների (ավանդների) ընդունմանը: Դեպոզիտների աղբյուրները բազմազան են: Դրանք ձեռնարկությունների, պետական կազմակերպությունների, քաղաքացիների հաշիվներում եղած միջոցներն են, որոնք ժամանակավորապես չեն օգտագործվում: Դեպոզիտները կարելի է բաժանել երկու խմբի՝ ցպահանջ և ժամկետային: Ցպահանջ դեպոզիտները միջոցներ են, որոնք կարող են պահանջվել ցանկացած ժամանակ: Դրանց համար սովորաբար սահմանվում է ցածր տոկոսադրույք: Այդպիսի դեպոզիտների միջոցով առաջին հերթին իրականացնում են ընթացիկ հաշվարկները: Ձեռնարկությունների ամենօրյա վճարային գործառնությունները կապված են որոշակի ծախսերի հետ: Բանկն այդ ծախսերը փոխհատուցում է նրանով, որ ցպահանջ ավանդատերերն իրենց հաշիվներում եղած գումարներն ամբողջությամբ չեն օգտագործում: Որպես կանոն, միշտ առկա է մի կայուն մնացորդ, որը բանկն օգտագործում է սեփական առևտրային նպատակների համար, այսինքն՝ շահույթ ստանալու նպատակով կարող է վարկ տալ:

Ժամկետային ավանդները վերադարձվում են ավանդատիրոջը՝ նախապես սահմանված ժամկետը լրանալուց հետո:

բ) Պասիվ գործառնություններ են նաև ներգրավված միջոցները, ինչպես օրինակ, այլ բանկերից ստացած վարկերը: Սրանք սովորական վարկային գործարքներ են: Այստեղ նախաձեռնությունը բանկին է:

Եթե նրան որոշակի ժամանակի համար անհրաժեշտ է փողի որոշակի գումար, ապա որպես փոխառու բանկը դուրս է գալիս դրամական շուկա:

զ) Հիպոթեկային և բանկային փոխառությունների թողարկումը նույնպես համարվում է պասիվ գործառնություն, որը նպատակ ունի դրամական միջոցներ հավաքագրել՝ որոշակի արժեթղթերի դիմաց:

Բանկերն այդ հավաքագրված միջոցներն օգտագործում են ակտիվ գործառնությունների ֆինանսավորման համար:

2. Ակտիվ են համարվում ավանդների (դեպոզիտների) և սեփական կապիտալի եկամտաբեր տեղաբաշխման գործառնությունները:

ա) կարծաժամկետ, միջին ժամկետային և երկարաժամկետ վարկավորումները՝ մուրհակների, անշարժ գույքի, ապրանքների, արժեթղթերի ձեռք բերման համար,

բ) բանկային ներդրումները, այսինքն, բանկի կողմից բաժնետոմսերի և պարտատոմսերի ձեռք բերումը,

գ) մասնավոր գործարարության, պետության, բնակչության ( ներառյալ սպառողական և բնակարանային) վարկավորումը:

Բանկային ակտիվների մեծ մասը բաժին է ընկնում վարկային և արժեթղթերի հետ կատարվող գործառնություններին:

3. Բանկային ծառայություններին են պատկանում շուկայի սուբյեկտների միջև դրամական հաշվարկների միջնորդավորումը՝ ինկասո, ակրեդիտիվային, փոխանցումային և առևտրական կոմիսիոն գործառնությունները:

Առանձնահատուկ տեղ ունեն տրաստային և լիզինգային գործառնությունները, որոնք, թերևս ավելի լայն իմաստ ունեն, քան զուտ միջնորդական ծառայությունները:

Բանկերը համապատասխան համաձայնագրերի հիման վրա իրականացնում են հետևյալ տրաստային գործառնությունները. մասնավոր անձանց համար՝ ունեցվածքի ժամանակավոր կառավարում, ովքեր զրկված են այն իրականացնելու իրավունքից (այրի կին, անչափահաս), ժառանգորդների շահերից ելնելով մահացածի ունեցվածքի կառավարում, առավելագույն շահույթ ստանալու նպատակով կապիտալի կառավարում (արժեթղթերի, անշարժ գույքի գնում), գանձապահարաններում թանկարժեք իրերի և այլ արժեքների պահպանում և այլն: Ֆիրմաների հետ տրաստային գործառնություններում բանկը կարող է հանդես

գալ որպես փոխառության բաժնետոմսերի երաշխավոր, իրականացնել կենսաթոշակային ֆոնդի միջոցների կառավարում և այլն:

Լիզինգային գործառնություններ. բանկը կամ նրան ենթակա լիզինգային կազմակերպությունը գնում է արտադրության միջոցներ (մեքենաներ, սարքավորումներ, հաշվողական տեխնիկա, օդանավեր, բեռնատար նավեր և այլն) և տալիս երկարատև վարձակալության: Վարձակալը պարբերաբար մուծումներ է կատարում գործարքը վարկավորող կազմակերպությանը, որոնց հաշվին մարվում է սարքավորումների արժեքը և վարձատուին ապահովում շահույթով:

Ինչպես ամեն մի շուկայական սուբյեկտի, այնպես էլ բանկի գործունեության նպատակը եկամուտ ստանալն է: Ակտիվ գործառնությունների ժամանակ բանկը պահանջում է բարձր տոկոսներ, իսկ պասիվ գործառնությունների ժամանակ վճարում ցածր տոկոսներ: Այդ տարբերությունը և բանկային ծառայություններից ստացած միջոցները ձևավորում են բանկային եկամուտները, որոնց մի մասը փոխհատուցում են ծախսերը, իսկ մնացածը կազմում է բանկի շահույթը:

Ժամանակակից տնտեսության մեջ բանկային համակարգը ներառում է. կենտրոնական, պետական, առևտրային, ներդրումային, խնայողական, հիպոթեկային, գյուղատնտեսական, արտաքին առևտրային, միջպետական բանկերը: Ըստ էության, այս համակարգին են պատկանում նաև բոլոր ֆինանսավարկային կազմակերպությունները, որոնք ներգրավում են ժամանակավորապես ազատ դրամական միջոցներ՝ դրանք շահավետ տեղաբաշխելու նպատակով (ապահովագրական, ներդրումային և ֆինանսական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները, խնայողամարկղերը):

Բանկային համակարգում, որպես «բանկերի բանկ», առանձնահատուկ տեղ է զրավում կենտրոնական բանկը: Նրա գործառնություներն ընդգրկում են. երկրի բոլոր բանկերի ղեկավարումը և դրանց նկատմամբ հսկողությունը, բանկերի պարտադիր ռեզերվների պահպանումը, առևտրային բանկերին վարկերի տրամադրումը, փողի մենաշնորհային թողարկումը (էմիսիան), պետական բյուջեի գանձարանային կատարումը, պետության վարկավորումը:

Բանկային համակարգի շուկայական բնույթն առաջին հերթին ապահովում են առևտրային բանկերը:

Բանկերը, դրամական խնայողությունները «պասիվ պահպանման» վիճակից փոխադրելով դրանց ակտիվ կիրառման վիճակի, այսինքն, ներդնելով առավել շահութաբեր ճյուղերում և ձեռնարկություններում, նպաստում են արտադրության արդյունավետության աճին: Նկատենք, որ բանկերը կարող են առաջ բերել նաև ինֆլյացիա՝ տալով չափահովված վարկեր: Այս իմաստով կենտրոնական բանկն իր հսկողական ֆունկցիայով բարձրացնում կամ իջեցնում է առևտրային բանկերի պարտադիր ռեզերվների չափերը և հաշվարկային դրույքները, առևտրային բանկերին տրամադրվող պետական վարկի դիմաց տոկոսը, որը խթանում կամ սահմանափակում է վերջիններիս ակտիվ գործառնությունները և, դրանով իսկ, ընդհանուր ձեռնարկատիրական ակտիվությունը:

**12.4.** Առևտրային բանկերը վարկերի տրամադրման ընթացքում փող են ստեղծում, որը հանդես է գալիս ընթացիկ հաշիվների կամ բանկային փողի տեսքով: Փող ստեղծելու հնարավորությունը կախված է ռեզերվային նորմայից և ավելցուկային ռեզերվների մեծությունից: Ավելցուկային ռեզերվները գոյանում են բանկի տրամադրության տակ գտնվող ավանդներից, ռեզերվային նորմային համապատասխանող պարտադիր ռեզերվները կենտրոնական բանկին փոխանցելուց հետո: Միայն այդ ավելցուկային ռեզերվների շրջանակներում է բանկն իրավասու վարկ տրամադրել: Բանկային համակարգը կարող է բազմակի անգամ ավելացնել վարկ տրվող գումարների մեծությունը՝ հաջորդաբար մի բանկից մյուսին փոխանցելով ավելցուկային ռեզերվները: Փողի աճի այս պրոցեսը կոչվում է դրամական մուլտիպլիկատոր, որի մեծությունը հակադարձ համեմատական է ռեզերվային նորմային (R-ին): Ռեզերվային նորման այն մեծությունն է, որի չափով յուրաքանչյուր հաջորդ փուլում փոքրանում են ավելցուկային ռեզերվները, այսինքն, բանկերի կողմից վարկի ձևով տրամադրվող միջոցները: Մուլտիպլիկատորը որոշվում է հետևյալ կերպ.

$$m = \frac{1}{R} \times 100:$$

Փողի աճը, որը կարող են ապահովել առևտրային բանկերն իրենց տրամադրության տակ ունեցած միջոցներից (D), որոշվում է հետևյալ բանաձևով.

$$D = E \times m,$$

որտեղ՝ E –ն ավելցուկային ռեզերվներն են,  
m –ը՝ դրամական մուլտիպլիկատորը:

Առևտրային բանկերի կողմից փողի ստեղծումն իրականացվում է բազմակի վարկավորման միջոցով, որի մասին պատկերացում է տալիս ստորև բերվող աղյուսակը (տես՝ աղյուսակ 12.1):

Աղյուսակ 12.1

Բանկեր	1 Ստացված ռեզերվները և հաշիվները (դոլար)	2 Պարտադիր ռեզերվները (դոլար)	3 Ավելցուկային ռեզերվները (1) - (2) = (3)	4 Փողի այն քանակը, որը բանկը կարող է տալ որպես վարկ: Նոր ստեղծված փողերը (դոլար)
A	100,0	20,0	80,0	80,0
B	80,0	16,0	64,0	64,0
C	64,0	12,80	51,20	51,20
D	51,20	10,25	40,96	40,96
Այլ բանկեր	204,80	40,96	163,86	163,86
Նոր ստեղծված փողերը				400,0

Ենթադրենք, թե որևէ մեկը A բանկի իր հաշիվն մուծել է 100 դոլար: Պարտադիր 20 տոկոս ռեզերվային նորմայի պայմաններում A բանկն իր 80 դոլար ավելցուկային ռեզերվներից կարող է վարկ տալ: Եթե փոխառուն այն տեղադրում է B բանկում, ապա A բանկն իր ռեզերվներից և հաշիվներից պակասեցնում է 80 դոլար, իսկ B բանկը իր հաշիվներին և ռեզերվներին զրանցում է 80 դոլար: Բայց B բանկն այդ ձեռք բերած 80 դոլարից 20 տոկոսը կամ 16 դոլարը պետք է պահի որպես պարտադիր ռեզերվ, որն ապահովում են 80 դոլարանոց ընթացիկ հաշիվները: Դա նշանակում է, որ B բանկը կունենա 64 դոլարի ավելցուկային ռեզերվ (80-16), որը կարող է իր հերթին փոխառության տալ C բանկին և, այդպես շարունակ:

Ինչպես տեսնում ենք, դրամական մուլտիպլիկատորը նման է եկամտի մուլտիպլիկատորին, իսկ վերջինիս հիմքում ընկած է այն փաստը, որ մի տնային տնտեսության ծախսերը, որպես եկամուտ, ստանում են մյուսները: Տվյալ դեպքում մի բանկի կորցրած ռեզերվները և հաշիվները ստանում են մյուսները:

Մեր օրինակում սկզբնական գումարը հավասար է 100 դոլարի, կենտրոնական բանկի կողմից հաստատված ռեզերվային նորման՝ 20 տոկոսի: Դրամական մուլտիպլիկատորը հավասար կլինի 5-ի (1:20x100): Այստեղից էլ նոր ստեղծված փողի քանակությունը հավասար կլինի 400 դոլարի (80 X 5) :

Այսպիսով, չեկային հաշվին դնելով 100 դոլարի կանխիկ գումար, սկզբնապես ստեղծվում է 100 դոլարանոց ընթացիկ հաշիվ: Եթե օրենքը թույլատրում է միայն 20 դոլարի ռեզերվ՝ 100 դոլարի ընթացիկ հաշիվ պահելու համար, այս դեպքում 80 դոլարի ավելցուկային ռեզերվները բանկային համակարգին թույլ են տալիս վարկ տալու միջոցով ընթացիկ հաշվում ստեղծել 400 դոլար: Մեր օրինակում 100 դոլարի ռեզերվները պահպանում են 500 դոլարի դրամական գումար կամ ստեղծում են 100 դոլար + 400 դոլար:

**12.5.** Բանկային համակարգը հնարավորություն է տալիս համապատասխան քաղաքականություն վարել ֆինանսները կառավարելու, շրջանառության մեջ դրված դրամի զանգվածը ավելացնելու կամ պակասեցնելու միջոցով: Այն նպատակ ունի տնտեսության մեջ հասնել արտադրության այնպիսի վիճակի, որն ապահովում է լրիվ զբաղվածություն և խուսափում ինֆլյացիայից: Դրամավարկային քաղաքականությունը մեծացնում է դրամի առաջարկը տնտեսության անկման փուլում, որը թույլ է տալիս ավելացնել հասարակության ամբողջական ծախսերը և աշխուժացնել արտադրությունը: Ինֆլյացիայի փուլում, հակառակը, սահմանափակում է փողի առաջարկը՝ ամբողջական ծախսերը փոքրացնելու և գների հետագա աճը դադարեցնելու նպատակով: Դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է կենտրոնական բանկի կողմից, որն օգտագործում է հետևյալ հիմնական լծակները.

- գործառություններ բաց շուկայում,
- ռեզերվային նորմայի փոփոխություն,
- զեղչատոկոսի նորմայի փոփոխություն:

*Գործառությունները բաց շուկայում* համարվում են դրամական առաջարկի վերահսկողության առավել կարևոր միջոցը: Դա նշանակում է բաց շուկայում կենտրոնական բանկի կողմից պետական փոխառությունների առջ ու վաճառք առևտրային բանկերին և բնակչությանը: Եթե կենտրոնական բանկը որոշում է ընդունում առևտրային բանկերից և բնակչությունից արժեթղթեր գնելու մասին, ապա դրանով նա ավելաց-

նում է առևտրային բանկերի ավելցուկային ռեզերվները և մեծացնում վարկ տալու նրանց հնարավորությունները: Արդյունքում մեծանում է նաև շրջանառության մեջ դրված փողի քանակը: Եթե բանկերը գտնվում են վարկային հնարավորությունների սպառման վիճակում, կենտրոնական բանկի կողմից առևտրային բանկերից և բնակչությունից 1000 դոլարի փոխառությունների գնումը 20 տոկոս ռեզերվային նորմայի պայմաններում դրամական առաջարկը կավելացնի 5000 դոլարով (դրամական մուլտիպլիկատորի էֆեկտի միջոցով):

*Ռեզերվային նորմայի փոփոխության* ժամանակ փոխվում է դրամական մուլտիպլիկատորի մեծությունը, հետևապես նաև՝ դրամական առաջարկը:

*Չեղչատոկոսի նորմայի փոփոխությունը.* ինչպես որ առևտրային բանկերն են իրենց տված վարկերի դիմաց պահանջում տոկոսներ, այնպես էլ կենտրոնական բանկը տոկոսներ է պահանջում առևտրային բանկերին տրվող վարկերի համար, ինչը կոչվում է զեղչատոկոս: Ցածր զեղչատոկոսը շահագրգռում է առևտրային բանկերին կենտրոնական բանկից ձեռք բերելու լրացուցիչ ռեզերվներ: Այդ նոր ռեզերվների միջոցով առևտրային բանկերը մեծացնում են դրամական առաջարկը: Եվ ընդհակառակը, զեղչատոկոսի աճը թուլացնում է առևտրային բանկերի շահագրգռվածությունը կենտրոնական բանկից ձեռք բերելու լրացուցիչ ռեզերվներ: Այսինքն, զեղչատոկոսի բարձրացումը ծառայում է որպես միջոց՝ սահմանափակելու դրամական առաջարկը:

Տնտեսության անկման փուլում, որը բնութագրվում է արտադրության ծավալների կրճատումով, գործազրկության աճով և դեֆլյացիայով, ամբողջական ծախսերի խթանման համար անհրաժեշտություն է առաջանում մեծացնել փողի առաջարկը: Այդ նպատակով կենտրոնական բանկն իրականացնում է հետևյալ միջոցառումները.

ա) բնակչությունից և առևտրային բանկերից սկսում է փոխառություններ գնել, արդյունքում շրջանառության մեջ բաց է թողնում լրացուցիչ թղթադրամ և մեծացնում առևտրային բանկերի ավելցուկային ռեզերվները,

բ) իջեցնում է ռեզերվային նորման, որն ինքնաբերաբար պարտադիր ռեզերվները վեր է ածում ավելցուկային ռեզերվների և մեծացնում է դրամական մուլտիպլիկատորի չափը,

գ) նվազեցնում է զեղչատոկոսի նորման, որպեսզի առևտրային բանկերը շահագրգռված լինեն սեփական ռեզերվներն ավելացնելու համար կենտրոնական բանկից վարկ վերցնել:

Վերոհիշյալ միջոցառումները կոչվում են «էժան փողերի» քաղաքականություն, որի նպատակը վարկը մատչելի դարձնելու միջոցով ամբողջական ծախսերի և զբաղվածության մակարդակի բարձրացնելն է:

Եթե տնտեսությունը հայտնվել է ինֆլյացիայի փուլում, ապա անհրաժեշտություն է առաջանում կրճատել դրամական զանգվածը և նվազեցնել ամբողջական ծախսերը: Այս դեպքում վարվում է «թանկ փողերի» քաղաքականություն՝ կենտրոնական բանկը սկսում է վաճառել պետական փոխառություններ, բարձրացնում ռեզերվային նորման և մեծացնում զեղչատոկոսը:

Իհարկե, դրամավարկային քաղաքականությունը բախվում է դժվարությունների, սակայն նրա ճկունությունն ու կիրառման հնարավորությունը թույլ են տալիս կարգավորել փողի առաջարկը, որն արտադրության մակարդակը որոշող կարևոր գործոններից է:

**12.6.** Անգլիացի տնտեսագետ Ջոն Յիկսը, ելակետ ունենալով քեյնսյան տեսությունը, մշակել է մի մոդել, որը թույլ է տալիս որոշել այն պայմանները, որոնց դեպքում ապրանքային և դրամական շուկաներում ստեղծվում է հավասարակշռված վիճակ: Այն ստացել է «IS-LM մոդել» անվանումը: IS նշնակում է «ինվեստիցիաներ - խնայողություններ», իսկ LM՝ «փողի պահանջարկ - փողի առաջարկ»: Մոդելի մշակմանը մասնակցել է ամերիկյան տնտեսագետ Էդվին Յանսենը, այդ պատճառով էլ այն կոչվում է Յիկս - Յանսենի մոդել:


IS-LM մոդելը հիմնավորում է գանձարնային և դրամավարկային քաղաքականությունների զուգորդման առաջնությունները, ինչպես նաև տոկոսադրույքի, ինվեստիցիաների և ՀԱԱ-ի (ԼԵ-ի) մակրոտնտեսական ճշգրտման ուղղությունները:

Մոդելի առաջին մասն արտահայտում է ապրանքային շուկայի, իսկ երկրորդը՝ դրամական շուկայի հավասարակշռության պայմանները: Ապրանքային շուկայի հավասարակշռության պայմանն է ինվեստիցիաների և խնայողությունների հավասարությունը, դրամական շուկայում՝ փողի պահանջարկի և փողի առաջարկի (զանգվածի) միջև հավասարությունը:

Փոփոխություններն ապրանքային շուկայում առաջ են բերում որոշակի տեղաշարժեր դրամական շուկայում, և ընդհակառակը: Ըստ Յիկսի, հավասարակշռությունը երկու շուկաներում միաժամանակ որոշվում է տոկոսի նորմայով և եկամտի մակարդակով, այսինքն երկու շուկաները միաժամանակ որոշում են հավասարակշռված եկամտի մակարդակը և տոկոսի նորմայի հավասարակշռված մակարդակը:

Չարցի պարզության համար մոդելը ենթադրում է հաստատուն գներ, կարճ ժամանակահատված, խնայողությունների և ինվեստիցիաների հավասարություն, փողի պահանջարկի և առաջարկի համապատասխանություն:

IS կորն արտահայտում է հավասարակշռությունն ապրանքային շուկայում: Ինվեստիցիաների և տոկոսադրույքի միջև գոյություն ունի հակադարձ կախվածություն, այսինքն ցածր տոկոսադրույքի պայմաններում ինվեստիցիաները կաճեն: Համապատասխանաբար կմեծանան եկամուտները ( $Y$ ) և կաճեն խնայողությունները ( $S$ ), իսկ տոկոսադրույքը ( $r$ ) կիջնի, որպեսզի խթանի խնայողության փոխակերպությունը ինվեստիցիայի ( $I$ ):




Ազգային եկամուտ Գրաֆիկ 12.3

Բարձր տոկոսադրույքը ( $r_1$ ) հանգեցնում է ինվեստիցիաների կրճատմանը մինչև  $I_1$  մակարդակը, ինչին համապատասխանում է նաև խնայողությունների ցածր մակարդակը ( $S_1$ ): Բնականաբար նաև քիչ եկամուտների արտադրությունը ( $Y_1$ ): Բոլոր այդ փոփոխությունները կենտրոնանում են  $I_1S_1$  կետում: Նույն դիտողությունները կարող ենք կատարել ցածր տոկոսադրույքի ( $r_0$ ) համար: Համապատասխանաբար՝ ցածր տոկոսադրույքը ( $r_0$ ) կտանի ինվեստիցիաների աճին ( $I_0$ ),

իսկ դրան կհետևի խնայողությունների աճը ( $S_0$ ), ինչին կհամապատասխանի ազգային եկամտի ավելացած  $Y_0$  մակարդակը: Այժմ արդեն այդ բոլոր փոփոխությունները կենտրոնանում են ( $I_0S_0$ ) կետում: Այստեղ կարևորն այն է, որ IS կորն արտահայտում է և ինվեստիցիաների, և խնայողությունների դիմանկան, քանի որ ելնում ենք ենթադրությունից, որ  $I=S$ -ին: Այս հավասարակշռության պայմաններում IS-ն ուղեկցվում է տալիս տոկոսադրույքի և ազգային եկամտի արտադրության փոխադարձ կապը:

Դրամական շուկայի հավասարակշռության մասին պատկերացում է տալիս LM կորը, այսինքն այն արտահայտում է փողի պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունը դրամական շուկայում գների տվյալ մակարդակի պայմաններում:




Գրաֆիկ 12.4

Փողի առաջարկի տվյալ մեծության պայմաններում եկամտի մակարդակի աճը կտանի փողի նկատմամբ պահանջարկի աճին, քանի որ այն կախված է առևտրական գործարքների քանակից: Փողի նկատմամբ պահանջարկի աճը տանում է տոկոսադրույքի աճին: Բայց երկարատև ժամանակի կտրվածքում այդ պրոցեսները սկսում են գործել հակառակ ուղղություններով՝ մասնավորապես կրճատում են ինվեստիցիոն պահանջարկը, քանի որ որքան բարձր է տոկոսադրույքը, այնքան վարկը դառնում է շատ թանկ և տնտեսապես ոչ նպատակահարմար: Տոկոսադրույքի աճը կոչված է չափելու այդ պահանջարկը: Տոկոսի նորմայի փոփոխությունը նպաստում հասնելու որոշակի հավասարակշռության փողի պահանջարկի և առաջարկի միջև:

Եթե տոկոսի նորման սահմանվում է շատ բարձր մակարդակի վրա, փող ունեցողները կգերադասեն ձեռք բերել արժեթղթեր: Ինչպես նկատել ենք վարկը դառնում է թանկ, վերջինիս նկատմամբ իջնում է պահանջարկը, ինչը կրճատում է ինվեստիցիոն ծախսերը և ՀԱԱ-ը: Այժմ արդեն եկամտի ցածր մակարդակին կհամապատասխանի տոկոսի ցածր մակարդակ: Տոկոսի մակարդակն իջնում է և նորից աստիճանաբար վերականգնվում է հավասարակշռությունը դրամական շուկայում:

Հավասարակշռությունը ապրանքային և դրամական շուկաներում սահմանվում է փոխկապակցված ձևով: Փոփոխությունները մի շուկայում իրենց հետ բերում են համապատասխան փոփոխություններ մյուսում:

IS և LM գրաֆիկներն արտահայտում են այն պայմանները, երբ ապրանքային և դրամական շուկաները գտնվում են հավասարակշռված վիճակում: IS կորն արտահայտում է  $Y$ -ի և  $r$ -ի միջև բոլոր այն հարաբերակցությունները, որոնց դեպքում ապրանքային շուկան գտնվում է հավասարակշռության մեջ, իսկ LM կորը  $Y$ -ի և  $r$ -ի այն հարաբերակցությունները, որոնք ապահովում են հավասարակշռությունը դրամական շուկայում: Որպեսզի որոշվի ընդհանուր հավասարակշռվածությունը ապրանքային և դրամական շուկաներում, երկու կորերն անհրաժեշտ է տեղադրել մեկ գրաֆիկում (տես գրաֆիկ 12.5):




Գրաֆիկ 12.5

Գրաֆիկների հատման  $E$  կետում  $r_0$  տոկոսադրույքի և  $Y_0$  ազգային եկամտի մակարդակների պայմաններում ձևավորվում է հավասարակշռվածություն ապրանքային և դրամական շուկաներում:

IS և LM կորերը տարբեր գործոնների ազդեցության արդյունքում կարող են փոխել իրենց դիրքերը: Այսպես, սպառման, պետական զնունների, հարկերի փոփոխությունները կարող են տեղաշարժել IS, իսկ փոփոխությունները դրամական առաջարկում՝ LM կորերը: Չատկապես հետաքրքրություն են ներկայացնում կորերի տեղաշարժերը՝ կապված պետական ծախսերի և դրամական առաջարկի փոփոխությունների հետ, քանի որ դրանք գանձարանային և դրամավարկային քաղաքականության կարգավորման աղբյուրներն են:

Դիտարկենք IS կորի տեղաշարժը՝ կապված պետական ծախսերի աճի հետ: Ենթադրենք, թե ապրանքային և դրամական շուկաների սկզբնական հավասարակշռվածությունը ձևավորվել է  $E$  կետում՝  $r_0$  տոկոսադրույքի և  $Y_E$  ազգային եկամտի պայմաններում (տես գրաֆիկ 12.6):



Ազգային եկամուտ


Գրաֆիկ 12.6

Ընդունենք, թե երկրի տնտեսական իրավիճակը պահանջում է պետական ծախսերի աճ, որը կբերի ամբողջական ծախսերի աճի՝ պայմանավորելով արտադրության ազգային ծավալի և ազգային եկամտի մեծացումը (անհրաժեշտ է հաշվի առնել, որ պետական ծախսերի աճի ժամանակ գործում է մուլտիպլիկատորի էֆեկտը): Դա կառաջացնի IS կորի տեղաշարժ  $IS_1$  դիրքը: Ընդ որում, եթե տոկոսադրույքը մնար

$r_E$  մակարդակի վրա, ապա նոր հավասարակշռությունը կհաստատվեր  $E_2$  կետում, որին կհամապատասխաներ  $Y_2$  ազգային եկամտի մակարդակը: Սակայն աճող ազգային եկամուտը մեծացնում է փողի նկատմամբ ամբողջական պահանջարկը, որը սկսում է գերազանցել փողի առաջարկին՝ տանելով տոկոսադրույքի աճի: Ապրանքային շուկայում ամբողջական ծախսերի աճը համապատասխանաբար դրդում է ձեռնարկատերերին մեծացնել ինվեստիցիաների ծավալը: Սակայն տոկոսադրույքի աճը սկսում է կասեցնել այդ պրոցեսը՝ ստիպելով ձեռնարկատերերին կրճատել նախատեսվող ինվեստիցիաների աճը  $r_E$  տոկոսադրույքի պայմաններում: Դրա արդյունքում ազգային եկամուտը կաճի ոչ թե մինչև  $Y_2$ , այլ մինչև  $Y_1$  մակարդակը: Այս դեպքում ապրանքների և դրամական շուկաների միջև հավասարակշռություն կստեղծվի  $E_1$  կետում, որը համապատասխանում է տոկոսադրույքի և ազգային եկամտի  $Y_1$  արժեքներին:

Այսպիսով, IS-LM մոդելը ցույց է տալիս, որ պետական ծախսերի աճը առաջ է բերում ինչպես ազգային եկամտի ծավալի աճ  $Y_E$ -ից մինչև  $Y_1$ , այնպես էլ տոկոսադրույքի աճ  $r_E$ -ից մինչև  $r_1$ : Միաժամանակ հարկ է նկատել, որ ազգային եկամուտն աճում է պակաս չափով քան կարելի էր սպասել, քանի որ տոկոսադրույքի աճը կրճատում է պետական ծախսերի մուլտիպլիկացիոն էֆեկտը. պետական ծախսերի աճը (ինչպես և մյուս ծախսերի) մասնակիորեն դուրս է մղում պլանային մասնավոր ինվեստիցիաները: Այդ երևույթը ստացել է արտամղման էֆեկտ անվանումը: Այն թուլացնում է խթանիչ գանձարանային քաղաքականության էֆեկտիվությունը: Չենց դա էլ փաստարկում են մոնետարիստները, պնդելով թե գանձարանային քաղաքականությունն արդյունավետ և ներգործական չէ, ուստի մակրոտնտեսական կարգավորման ժամանակ նախապատվությունը պետք է տրվի վարկադրամական քաղաքականությանը:

Այժմ դիտարկենք LM կորի տեղաշարժը՝ կապված փողի առաջարկի փոփոխության հետ: Ենթադրենք, որ փողի առաջարկը մեծացել է և սկսել է գերազանցել պահանջարկը, որը կբերի տոկոսադրույքի կրճատմանը: Դրամական շուկայում նոր հավասարակշռություն կստեղծվի համեմատաբար ցածր տոկոսադրույքի պայմաններում ( $r_1$ ), ինչը կպայմանավորի LM կորի համապատասխան տեղաշարժը դեպի աջ՝  $LM_1$  դիրքը (տես գրաֆիկ 12.7):




Ազգային եկամուտ

Գրաֆիկ 12.7

Ապրանքային շուկայում տոկոսադրույքի հետ ձեռնարկատերերը կսկսեն մեծացնել պլանային ինվեստիցիաները, որը կբերի ամբողջական ծախսերի աճի և վերջին հաշվով ազգային եկամտի աճի  $Y_E$  - ից մինչև  $Y_1$  :  $E_1$  կետում դրամական և ապրանքային շուկաները նորից կգտնվեն հավասարակշռված վիճակում:

Այսպիսով, էքսպանսիոնիստական (խթանիչ) վարկադրամական քաղաքականությունը բերեց նոր հավասարակշռության, որը բնութագրվում է համեմատաբար ցածր տոկոսադրույքով ( $r_1$ ) և համեմատաբար բարձր ազգային եկամտով ( $Y_1$ ) : Դրամական առաջարկի կրճատման հետ ամեն ինչ տեղի է ունենում հակառակ ուղղությամբ: Չեղարկված, IS-LM մոդելում փողի առաջարկի փոփոխություններն ազդում են ազգային եկամտի հավասարակշռության մակարդակի վրա: Սակայն Քեյնսի հետևորդները պնդում էին, որ երբեմն այդ ազդեցությունը լինում է աննշան, օրինակ, նվազագույնի մոտ տոկոսադրույքի ժամանակ: Չափազանց ցածր տոկոսադրույքների պայմաններում բնակչությունը, բանկերը չեն ցանկանում ձեռք բերել փոխառություններ, այլ գերադասում են փողը կուտակել՝ ինչպիսին էլ լինի դրա առաջարկը: Այս դեպքում փողի պահանջարկի կորը գրեթե զուգահեռ է աբսցիսների առանցքին, իսկ դա նշանակում է, որ սկզբում LM կորը գործնականորեն ունի հորիզոնական հատվածի տեսք:

Ենթադրենք, թե սկզբում ապրանքների և դրամական շուկաները հավասարակշռության մեջ էին IS և LM կորերի հատման  $E$  կետում (տես գրաֆիկ 12.8) : Ընդունենք, թե փողի առաջարկը մեծացել է: Դա պայմանավորել է LM կորի տեղաշարժը դեպի աջ՝  $LM_1$  դիրքը: Իսկ քանի որ կորն ունի գրեթե հորիզոնական հատված, այդ տեղաշարժը չի բերի տոկոսադրույքների շատ թե քիչ էական իջեցման, իսկ ինվեստիցիաների և ազգային եկամտի ծավալները կմնան նախկին մակարդակի վրա: Չեղարկված, տվյալ դեպքում փողի առաջարկի փոփոխությունը չի փոխի իրական ազգային եկամուտը:



Ազգային եկամուտ

Գրաֆիկ 12.8

Այսպիսի իրավիճակը ստացել է լիկվիդային ծուղակ անվանումը: Դրան հետևում էին Քեյնսի վաղ հետևորդները, նպատակ ունենալով ցույց տալ դրամավարկային քաղաքականության ոչ արդյունավետությունը:

Մոնետարիստներն ավելի խորը հետազոտեցին տնտեսության վրա փողի քանակության ունեցած ազդեցությունը: Նրանք գտնում էին, որ դրամավարկային քաղաքականությունն ազգային եկամտի վրա ազդում է ոչ միայն տոկոսի նորմայի և ինվեստիցիաների միջոցով, ինչպես կարծում էին քեյնսականները, այլ նաև երկարատև օգտագործման առարկաների ձեռքբերման, արժեթղթերի գների, պետական գնումների ծավալների փոփոխության միջոցով:

Ժամանակակից պայմաններում տնտեսագետները միակարծիք են այն հարցում, որ դրամավարկային քաղաքականությունն արդյունավետ միջոց է մակրոտնտեսական կարգավորման համար:



**ԳԼՈՒԽ 13 . ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ: ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ**

**13.1. Պետական բյուջե. կառուցվածքը և կարգավորումը»**

- ընդհանուր բնութագիրը,
- բյուջեի եկամտային մասի աղբյուրները: Հարկի էությունը, տեսակները: Հարկավորման սկզբունքները,
- բյուջեի ծախսային մասի ուղղությունները,
- Լաֆֆերի կորը: Տեսակետներ բյուջեի կարգավորման վերաբերյալ:

**13.2. Պետական պարտք և նրա տնտեսական հետևանքները:**

Պետական բյուջեն երկրի ֆինանսական համակարգի հիմնական օղակն է: Սկսած այն պահից, երբ պետությունը սկսում է կանոնավոր ձևով կազմել բյուջե, կարելի է ասել, որ ֆինանսներն ընդունում են համընդհանուր բնույթ: Պետական բյուջեի միջոցով կազմավորվում և օգտագործվում է համապետական կենտրոնացված դրամական միջոցների ֆոնդը: Պետական բյուջեի օգնությամբ պետությունը կազմակերպում է միջոցների վերաբաշխում տնտեսության տարբեր ոլորտների, տնտեսական շրջանների, տնտեսության ճյուղերի միջև:

**13.1.** Պետական բյուջեն պետական ծախսերի և դրանց աղբյուրների կամ եկամուտների տարեկան պլանն է: Այն որոշակի ժամանակի համար (տարի, ամիս, եռամսյակ) ծախսերի և եկամուտների գումարի դրամական արտահայտության նախահաշիվն է: Պետական ծախսերի և եկամուտների հիմնական մասը կատարվում է պետական բյուջեի միջոցով, որն ընդգրկում է կենտրոնական կառավարության և տեղական իշխանությունների բյուջեները: Կախված այս կամ այն երկրի վարչատարածքային բաժանումից՝ բյուջեները լինում են կենտրոնական, մարզային, տեղական և այլն: Դրանց միջև միշտ առկա են բավական բարդ հարաբերություններ՝ կապված բյուջետային եկամուտների աղբյուրների բաժանման, կենտրոնական բյուջեի կողմից տեղական բյուջեների ֆինանսավորման և այլ հարցերի հետ: Այսպիսով, պետական բյուջեն ոչ միայն կենտրոնական կառավարության բյուջեն է, այլև պետական վարչատարածքային բոլոր մակարդակների իշխանությունների բյուջեների ամբողջությունը:

Ընդհանրապես, բյուջեն իր էությամբ արտահայտում է ուժերի հարաբերակցությունը երկրի սոցիալ-տնտեսական շահերը կրող հիմնական խմբերի միջև, սեփականատերերի և վարձու աշխատողների միջև՝ կապված սեփականության, եկամուտների և աշխատավարձի հարկման, սոցիալական նպատակներով բյուջետային ծախսերի հետ, համապետական և տեղական շահերի, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ՝ կապված հարկերի բաշխման և բյուջեից դոտացիաներ ստանալու հետ և այլն:

Ամեն տարի բյուջեի նախագիծը քննարկվում և ընդունվում է օրենսդրական օրգանի՝ պառլամենտի կողմից: Որպես երկրի հիմնական դրամական հաշվեկշիռ, բյուջեն բաղկացած է երկու մասերից՝ եկամտային և ծախսային:

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունի *պետական բյուջեի եկամուտների աղբյուրների* հետևյալ դասակարգումը.

ա) հարկային եկամուտներ և տուրքեր (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտահարկ, գույքահարկ, հողի հարկ, հաստատագրված վճարներ, մաքսատուրք, պարզեցված հարկ, բնօգտագործման և բնապահպանության վճարներ, պետական տուրք),

բ) ոչ հարկային եկամուտներ (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ծախսերի և մասհանումների նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը, դիվիդենտները և շահաբաժինները, պետական ձեռնարկությունների և գույքի, համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները, պետության տված վարկերի օգտագործման դիմաց վճարները՝ տոկոսները, բռնագրավված, տիրագուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի իրացումից մուտքերը, պետական վիճակախաղերի անցկացումից ստացվող եկամուտները, իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը),

գ) եկամուտներ կապիտալի գործառնություններից (պետությանը պատկանող հիմնական միջոցների՝ ֆոնդերի օտարումից մուտքերը, պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի օտարումից մուտքերը, պետության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների

իրացումից մուտքերը, պետական սեփականություն համարվող հողի և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքերը),

դ) մուտքեր պաշտոնական տրանսֆերտներից (օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած տրանսֆերտներ, այլ աղբյուրներից ստացվող տրանսֆերտներ):

Հարկը պետական բյուջեի եկամտային մասի հիմնական աղբյուրն է: Այն պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով պարտադիր վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով և սահմանված ժամկետներում:

Մի քանի հարկատեսակների համառոտ բովանդակության մասին.

- ավելացած արժեքի հարկը գանձվում է ապրանքների ներմուծման, դրանց արտադրության և շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում, դա արժեքի հավելածի մի մասն է,

- ակցիզային հարկը մտցվում է ապրանքների գնի մեջ, ուստի նրա վերջնական վճարողները սպառողներն են: Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են սպիրտային խմիչքները, ծխախոտը, բենզինը, նավթը, նավթամթերքը և այլն,

- շահութահարկը կազմակերպությունների և ձեռնարկությունների հարկվող շահույթի այն մասն է, որը գանձվում է պետական բյուջե,

- եկամտահարկը ֆիզիկական անձանց եկամուտներից կատարվող հանուրդ է:

Հարկային համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում տուրքը և դրա տեսակները: Տուրքը հիմնականում իրավաբանական և պետական այլ ծառայությունների համար քաղաքացիներից ու կազմակերպություններից գանձվող վճար է: Տուրքերը գանձվում են դատարան տրված հարցադրումներից, նոտարական գործողությունների, ամուսնության, ամուսնալուծության, անձնագրերի տրման ու գրանցման և այլ ծառայությունների համար: Պետական սահմանի վրայով անցկացվող (ներմուծվող, արտահանվող) ապրանքների համար գանձվում են մաքսատուրքեր:

Հարկերը լինում են ուղղակի և անուղղակի: Ուղղակի հարկերը գանձվում են հարկատուի եկամուտներից և ունեցվածքից ( գույքից): Դրանց աղբյուրը եկամուտներն են (աշխատավարձ, շահույթ, տոկոս, ռենտա) և վարկատուի ունեցվածքի արժեքը (մեքենա, տուն, հող և

այլն): Անուղղակի հարկերը սահմանվում են ապրանքների գների և ծառայությունների սակագների վճարման վրա՝ որպես հավելուրդ (ակցիզային հարկ, ավելացված արժեքի հարկ):

Հարկային մեխանիզմի հիմքում ընկած են «հարկի սուբյեկտ կամ հարկ վճարող», «հարկի օբյեկտ կամ աղբյուր», «հարկային միավոր», «հարկային արտոնություններ» հասկացությունները:

- Հարկի սուբյեկտ կամ հարկ վճարող ասելով հասկանում ենք իրավաբանական և ֆիզիկական այն անձանց ( ձեռնարկություններ, կազմակերպություններ, քաղաքացիներ), որոնք օրենսդրությամբ պարտավոր են պետությանը վճարել սահմանված հարկերը:

- Հարկային օբյեկտ կամ աղբյուր են գույքը ( ունեցվածքը), աշխատավարձը, շահույթը, այլ եկամուտները, ապրանքները, աշխատանքները, ծառայությունները, բնական ռեսուրսները և այլն:

- Հարկային միավոր ասելով հասկանում ենք հարկման ենթակա օբյեկտի այն միավորը, որի նկատմամբ սահմանվում են հարկի դրույքաչափերը ( օրինակ, շահութահարկի գծով՝ հարկվող շահույթի գումարը, քաղաքացիներից գանձվող եկամտահարկի համար՝ հարկվող ամսական աշխատավարձի կամ տարեկան եկամտի չափը, հողի հարկի դեպքում՝ հեկտարով, քառակուսի մետրով տարածության չափը և այլն:)

- Հարկային արտոնություններ ասելով հասկանում ենք հարկի սուբյեկտներին կամ հարկ վճարողներին հարկումից մասնակի կամ լրիվ ազատումը:

Հարկավորման համակարգի ընդհանուր բնութագրման տեսակետից տարբերում են.

- պրոգրեսիվ հարկ, երբ հարկային դրույքաչափերը մեծանում են եկամուտների աճի հետ միասին: Այդպիսի հարկը, ճիշտ է, կրճատում է եկամուտների անհավասարությունը, բայց ունենում է նաև բացասական հետևանքներ, երբ մարդիկ սկսում են թաքցնել իրենց եկամուտները, իսկ հաճախ էլ կորցնում արդյունավետ աշխատելու ցանկությունը,

- ռեգրեսիվ հարկ. դա հարկ է, որը դրամական արտահայտությամբ բոլոր վճարողների համար հավասար է՝ այսինքն կազմում է ցածր եկամտի մեծ մասը և մեծ եկամտի փոքր մասը: Այլ կերպ ասած, դա նշանակում է տոկոսային հարաբերությամբ եկամտի նվազման հետ հարկի աճ: Ռեգրեսիվ հարկը կարող է մեծացնել նաև բյուջեի դրամական մուտքերը և խթանել մեծ եկամուտների դուրս գալը « հարկային ստվերից »: Ընդունենք հարկվող եկամտի գումարները հաջորդաբար կազմել են 100,110,

122, 135 դրամական միավոր, ռեգրեսիվ դրույքաչափերը` ( տոկոսներով) 1,3, 1,2, 1,1, 1,0: Հարկային մուտքերի դինամիկան հավասար կլինի ( դրամական միավորներով) ` 1,3, 1,32, 1,342, 1,35, իսկ հարկ վճարողի եկամուտը հարկը վճարելուց հետո` 98,7, 108,8, 120,658, 133,65,

- համամասնական հարկ` երբ հարկային դրույքաչափը մնում է անփոփոխ ` անկախ հարկման օբյեկտի արժեքից ( եկամտի գումարից կամ գույքի արժեքից): Եթե, օրինակ, սահմանված է 4 տոկոս միասնական հարկ վաճառքից, անկախ գնումների քանակից, ապա առկա է համամասնական հարկ:

Ըստ տարածական ոլորտների հարկերը բաժանվում են համապետականի և տեղականի: Համապետական հարկերը, որոնք կազմում են հարկերի գերակշիռ մասը, համալրում են պետական բյուջեի մուտքերը, իսկ տեղական նշանակության հարկերը` տուրքերը ( համայնքի տարածքում շինարարական տարբեր աշխատանքների , բացօթյա վաճառք կազմակերպելու, զովազդի տեղադրության թույլտվության և այլ ծառայությունների համար) և վճարները ( մուկիցիպալ մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը վարձակալության տրամադրելու հետ կապված և այլն) համալրում են տեղական բյուջեները:

Ինչպես ցույց է տալիս հասարակության պատմությունը և ոչ մի պետություն չի կարող գոյություն ունենալ առանց հարկերի: Երկարատև փորձը ցույց է տվել հարկման այն գլխավոր սկզբունքը, որ «չի կարելի ձուլ ածող հավը մորթել», այսինքն որքան էլ մեծ լինի ֆինանսական միջոցների նկատմամբ պահանջարկը այս կամ այն ծախսերի համար, հարկերը չպետք է քայքայեն տնտեսական գործունեություն իրականացնելու հարկատուների շահագրգռվածության հիմքերը:

Հարկման ժամանակակից համակարգի հիմնական սկզբունքներն են. - արդարությունը և չեզոքությունը բոլոր հարկ վճարողների նկատմամբ: Դա նշանակում է հարկավորման համընդհանրությունը և հարկային դրույքաչափերի կախվածությունը եկամուտների մակարդակից, որն իրացվում է դիֆերենցված դրույքաչափերի միջոցով,

- որոշակիությունը, պարզությունը և հասանելիությունը. դա պահանջում է, որ գանձման ենթակա գումարը, եղանակը և ժամանակը նախապես հայտնի լինեն հարկատուներին: Տույժերի և տուգանքների համակարգը պետք է լինի այնպիսին, որ հարկեր չվճարելը կամ ժամանակին չվճարելը

լինի պակաս օգտավետ, քան հարկային մարմինների նկատմամբ ունեցած պարտավորությունների ժամանակին կատարումը,

- հարկային համակարգը պետք է կառուցված լինի հորիզոնական և ուղղահայաց արդարության սկզբունքների վրա. դա նշանակում է, որ հարկային օրենքները եկամուտների միևնույն մակարդակի վրա գտնվողների համար ( հորիզոնական) պետք է նախատեսեն հավասար, իսկ եկամուտների մակարդակով ոչ հավասար պայմաններում գտնվողների համար ( ուղղահայաց) ` ոչ հավասար դրույթուն,

- հարկման ճկունությունը, որը ենթադրում է պետության տնտեսական քաղաքականությանը համապատասխանող գործունեության որոշակի ուղղությունների զարգացման համար արտոնյալ պայմանների ստեղծում,

- հարկային դրույքաչափերը պետք է սահմանվեն` ելակետ ունենալով հարկատուների հնարավորությունները,

- հարկերի վճարման պարտադիր բնույթը:

Պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվում են պետական նշանակության ծրագրերը և ծախսերը` հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) ընդհանուր բնույթի պետական ծառայություններ,

բ) պաշտպանություն,

գ) հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն,

դ) կրթություն և գիտություն,


ե) առողջապահություն,

զ) սոցիալական ապահովագրություն ու սոցիալական ապահովություն և այլն:

Բյուջեի եկամտային և ծախսային մասերը կարող են գոյություն ունենալ կամ հավասարակշռված կամ անհավասարակշռված վիճակներում: Եթե պետական բյուջեի ծախսերը գերազանցում են եկամուտների մակարդակը, նշանակում է առկա է բյուջետային դեֆիցիտ կամ բացասական սալդո, իսկ եթե հարկերի գումարը գերազանցում է ծախսերի մակարդակը, ապա դա վկայում է բյուջետային ավելցուկի կամ դրական սալդոյի մասին, որը կոչվում է պրոֆիցիտ:

Ամերիկյան տնտեսագետ Ա. Լաֆֆերը ցույց է տվել այն փոխկախվածությունը, որն առկա է հարկերի դրույքաչափերի և պետական բյուջե ստացվող եկամուտների միջև: Այն հայտնի է Լաֆֆերի կոր անվանումով:

Հարկերի դրույքաչափերի բարձրացումը սկզբնական շրջանում տանում է պետության եկամուտների ավելացմանը: Սակայն, երբ հարկերի դրույքաչափերը գերազանցում են մի որոշակի M սահմանը, հարկային մուտքերից ստացվող եկամուտները սկսում են կրճատվել (տես՝ գրաֆիկ 13.1):



Գրաֆիկ 13.1

Բարձր հարկերը թուլացնում են արտադրության խթանները և դրա հաշվին կրճատում պետության եկամուտները և հակառակը: Հարկերի իջեցումն այս դեպքում պետության ֆինանսների վրա ունենում է դրական ազդեցություն: Լաֆֆերի կորն անպատասխան է թողնում այն հարցը, թե որ հարկադրույթի պայմաններում են հարկային մուտքերը դառնում առավելագույնը: Բանն այն է, որ հարկերի այդպիսի դրույքաչափերը տարբեր երկրների համար տարբեր են և կախված են բազմաթիվ գործոններից՝ հարկային քաղաքականությունից, տնտեսության պետական ոլորտի չափերից ու կառուցվածքից և այլն: Համաձայն Լաֆֆերի կորի, ինչպես N կետում՝ համեմատաբար բարձր դրույքաչափերի, այնպես էլ L կետում՝ համեմատաբար ցածր դրույքաչափերի պայմաններում, հարկային մուտքերը միևնույնն են: Սակայն, եթե N կետում հարկերի դրույքաչափը չի խթանում պահանջարկը, ապա հարկերի դրույքաչափը L կետում ստեղծում է աշխատանքի, խնայողությունների և ինվեստիցիաների խթաններ, հետևապես, խթանելով նաև արտադրության ընդլայնումն ու ազգային եկամտի ավելացումը:

*Տեսակետներ բյուջեի կարգավորման վերաբերյալ.*

ա) մինչև XX դարի 30-ական թվականների «Մեծ դեպրեսիան» տարեկան հավասարակշռված բյուջեն համարվում էր պետական ֆինանսների ցանկալի նպատակը: Ի դեպ, տարեկան հավասարակշռված բյուջեն Ադամ Սմիթը համարում էր «լավագույն բյուջե»: Սակայն այդպիսի բյուջեն հիմնականում բացառում է պետության գանձարանային քաղաքականությունը՝ որպես հակացիկլային կայունացնող ուժի: Ավելին, այն խորացնում է տնտեսական ցիկլի տատանումները: Այսպես, ենթադրենք, թե տնտեսությունը մտել է մի այնպիսի ժամանակահատված, որը բնութագրվում է գործազրկության բարձր մակարդակով և նվազող եկամուտներով: Ինչպես դա ցույց է տրված «Գանձարանային քաղաքականություն» թեմայի 11.3 գրաֆիկում, այդպիսի պայմաններում հարկային մուտքերն ինքնաբերաբար կկրճատվեն: Չգտելով հավասարակշռել բյուջեն, կառավարությունը պետք է կամ բարձրացնի հարկադրույթները, կամ կրճատի պետական ծախսերը, կամ էլ զուգորդի այդ երկու միջոցառումները: Ամբողջ խնդիրն այն է, որ բոլոր այդ միջոցառումներն ունեն արգելակող բնույթ՝ դրանցից յուրաքանչյուրն ավելի շատ կրճատում և բոլորովին էլ չի խթանում ամբողջական պահանջարկը: Նույն ձևով, տարեկան հավասարակշռված բյուջեն առաջ կբերի ինֆլյացիայի ուժեղացում: Գրաֆիկը ցույց է տալիս, որ ինֆլյացիայի ընթացքում, հենց որ սկսեն բարձրանալ եկամուտները, ինքնաբերաբար կսկսեն մեծանալ հարկային մուտքերը: Որպեսզի վերացվեն առաջացած բյուջետային ավելցուկները, կառավարությունը կամ պետք է իջեցնի հարկադրույթները, կամ մեծացնի պետական ծախսերը, կամ էլ զուգորդի այդ երկու միջոցառումները: Նշված երեք դեպքերում էլ տնտեսության մեջ կուժեղանա ինֆլյացիոն ճնշումը:

Այսպիսով, հավասարակշռված բյուջեի պահպանումը դառնում է ինքնանպատակ և չունի տնտեսական չեզոքություն. այդպիսի քաղաքականությունը ավելի շատ նպաստում է ցիկլային տատանումներին, և ոչ թե դառնում հակացիկլային միջոց:

բ) տնտեսագետների մի այլ կարծիքի համաձայն առավել նպատակահարմարը ցիկլային հիմքի վրա բյուջեն հավասարակշռելն է: Պարտադիր չէ, որ ամեն տարի բյուջեն հավասարակշռվի, բավական է, որ դա տեղի ունենա տնտեսական ցիկլի ընթացքում: Անկմանը դիմակայելու համար, կառավարությունը պետք է իջեցնի հարկերը և մեծացնի

ծախսերը՝ դրանով իսկ գիտակցորեն առաջ բերելով դեֆիցիտ: Հետագա ինֆլյացիոն վերելքի ժամանակ կառավարությունը պետք է բարձրացնի հարկերը և կրճատի ծախսերը: Այս հիմքի վրա առաջացած բյուջեի դրական սալդոն կարող է օգտագործվել անկման փուլում առաջացած կառավարության պարտքի մարման համար:

Այս կոնցեպցիայի կողմնակիցների կարծիքով տնտեսական ցիկլի վերելքներն ու վայրէջքներն իրենց խորությամբ և տևողությամբ կարող են միատեսակ չլինել: Հետևապես կայունացման խնդիրը հակասության մեջ է մտնում ցիկլի ընթացքում բյուջեի հավասարակշռման խնդրի հետ:

Այսպիսով, տասներկու ամսվա կտրվածքով բյուջեն հավասարակշռելու մասին որևէ «սուրբ օրենք» գոյություն չունի,

գ. երրորդ տեսակետի կամ ֆունկցիոնալ ֆինանսների գաղափարներին համապատասխան, տարեկան կամ ցիկլային հիմքի վրա բյուջեի հավասարակշռման հարցը երկրորդական խնդիր է: Պետական ֆինանսների գլխավոր նպատակը ոչ ինֆլյացիոն լրիվ զբաղվածության ապահովումն է, այսինքն, ոչ թե բյուջեի, այլ տնտեսության հավասարակշռումը: Եթե այդ նպատակի ապահովումն ուղեկցվում է կայուն բյուջետային դրական սալդոյով, կամ մեծ և աճող պետական պարտքով՝ թող այդպես լինի: Այս դրույթի օգտին բերվում են հետևյալ փաստարկները. մախ՝ գործող հարկային համակարգը թույլ է տալիս տնտեսության աճի արագացմանը զուգընթաց ավելացնել հարկային գանձումները: Հետևապես, կառավարության ծախսերի տվյալ մակարդակի պայմաններում, տնտեսության աճը խթանող դեֆիցիտը ինքնաբերաբար կկրճատվի: Բացի այդ, դեֆիցիտը ֆինանսավորելու պետական հնարավորությունները գրեթե անսահման են, որովհետև կառավարության ձեռքում են գտնվում թղթադրամի էմիսիան և հարկային քաղաքականությունը փոխելու բոլոր իրավական լծակները: Եվ վերջապես, բյուջեի դեֆիցիտի հետևանքով առաջացած պետական պարտքի աճն այնքան էլ ծանր ու սարսափելի հետևանքներ չունի, ինչպես ենթադրում է մարդկանց մեծամասնությունը:

**13.2.** Պետական պարտքը ոչ այլ ինչ է, քան կառավարության պարտքը երկրի բնակչությանը: Պետական պարտքը մեծանում է ամեն անգամ, երբ պետական բյուջեն գտնվում է դեֆիցիտային վիճակում: Պետական պարտքը լինում է ներքին և արտաքին: Այն կարող է պայմանավորված լինել այնպիսի պատճառներով, ինչպիսիք են պատերազմները, որոնք պահանջում են պետական ծախսերի հսկայական աճ, և տնտեսական

ճգնաժամները, երբ սկսում են գործել տնտեսության ներքին կարգավորիչներն ու արտադրության ծավալների կրճատմանը զուգընթաց բյուջետային մուտքերում փոքրանում է հարկային գանձումների ընդհանուր ծավալը: Պետական պարտքի մեծացման պատճառ կարող են դառնալ նաև հարկային քաղաքականությանը վերաբերող օրենսդրական թերությունները, երբ հարկերն իջեցվում են՝ առանց պետական ծախսերի կրճատման: Բացի այդ, պետական պարտքը կարող է աճել նաև պետության վարած սխալ քաղաքականության կամ քաղաքական մոտիվների առկայության հետևանքով, որը քաղաքական գործիչներին ստիպում է ձայներ շահելու նպատակով իջեցնել հարկերը կամ մեծացնել պետական ծախսերը՝ հաշվի չառնելով տնտեսության իրավիճակը:

Ինքնին հարց է առաջանում, թե պետական պարտքի աճը մի ինչ-որ կետում կարո՞ղ է արդյոք հանգեցնել պետության սնանկացմանը՝ վերջինիս զրկելով իր ֆինանսական պարտավորությունները կատարելու հնարավորությունից: Գրականության մեջ այդ հարցին ավելի շուտ տրվում է բացասական պատասխան, ելակետ ունենալով հետևյալ փաստարկները.

- անհրաժեշտություն չկա, որ պետությունը նվազեցնի իր պարտքը, առավել ևս, այն ամբողջությամբ վերացնի: Խոսքն առաջին հերթին վերաբերում է ներքին պարտքին, որն առաջանում է պետական փոխառությունների վաճառքի հաշվին: Եթե լրանում է այդ պարտքի մարման ժամկետը, ապա պետությունը ստիպված չի կրճատում իր ծախսերը կամ, փոխառությունները մարելու նպատակով, բարձրացնում հարկերը, որն ինչպես հայտնի է, դեպրեսիայի պայմաններում համարվում է սխալ գանձարանային քաղաքականություն: Պարզապես նա *վերաֆինանսավորում* է իր պարտքը՝ նոր փոխառություններ վաճառելու միջոցով, որի հաշվին փոխհատուցում է հին պարտքերը, նոր պարտք վերցնում հաջորդ ժամանակաշրջանի համար, և այդպես շարունակ,

- պետությունը, համաձայն սահմանադրության, իրավունք ունի հարկեր գանձել բնակչությունից: *Հարկերի մեծացումն* այն եղանակն է, որը կառավարությանը հնարավորություն է տալիս ստանալ բավականաչափ եկամուտներ՝ տոկոսները և ամբողջ պարտքը մարելու համար: Մասնավոր տնտեսությունները և ֆիրմաները հարկերի հաշվին եկամուտներ ստանալ չեն կարող, իսկ կառավարությունը կարող է: Արդյունքում, առաջինները կարող են սնանկանալ, իսկ կառավարությունը՝ ոչ,

- պետության սնանկացումը դժվար է պատկերացնել թեկուզ այն պատճառով, որ նա թղթադրամ տպելու իրավունք ունի, որի միջոցով կարող է և՛ փակել պարտքը, և՛ վճարել տոկոսները: Կառավարությունը կարող է մարման ժամկետը հասած փոխառությունները մարել կամ այլ փոխառությունների վաճառքի, կամ էլ լրացուցիչ էմիսիայի հաշվին: Եհիշտ է, դա կարող է առաջացնել ինֆլացիոն էֆեկտ, սակայն տվյալ դեպքում խոսքը վերաբերում է պետական պարտքերի մարմանը:

Պետական պարտքի առկայությունը ծնուն է իրական ու պոտենցիալ մի շարք այլ հիմնահարցեր.

ա) պետական փոխառությունները հավասարաչափ չեն բաշխվում բնակչության տարբեր խմբերի միջև և մեծ մասամբ կուտակվում են համեմատաբար ունևոր մասի ձեռքում: Ոչ այնքան պրոգրեսիվ հարկային համակարգի առկայության պայմաններում, պետական պարտքի մարումը խորացնում է եկամուտների անհավասարությունը, իսկ այդպիսի վերաբաշխողական էֆեկտը հակասում է սոցիալական հավասարության սկզբունքին, խոչընդոտում Ռոբին Դոլդի էֆեկտին,

բ) պարտքի մարման համար տոկոսների վճարումը պահանջում է հարկերի բարձրացում, որը կարող է թուլացնել տնտեսական խթանների, այսինքն՝ ինովացիաների, նոր ինվեստիցիաների ձգտումը և այլն,

գ) վերաֆինանսավորումը ենթադրում է պետական փոխառությունների վաճառքի ընդլայնում, իսկ դա մեծացնում է փողի պահանջարկը, նվազեցնում շրջանառության մեջ դրված փողի զանգվածը, որն էլ կարող է բարձրացնել բանկերի կողմից պահանջվող տոկոսադրույքները: Իսկ դա, ինչպես հայտնի է, առաջ է բերում արտամղման էֆեկտ, այսինքն, դարձյալ կրճատվում են մասնավոր ինվեստիցիաները, և տնտեսական աճը դանդաղում է: Այս իմաստով պետական պարտքը կարող է տնտեսական ծանր բեռ դառնալ ապագա սերունդների համար, քանի որ նրանք կստանան ինվեստիցիոն ապրանքների քիչ պաշարներ, այսինքն, փոքր ծավալի «ազգային գործարան»,

դ) հատուկ ուշադրության է արժանի արտաքին պարտքը. վերջինս ոչ այլ ինչ է, քան տվյալ երկրի պարտքը այլ պետությունների քաղաքացիներին և հաստատություններին: Այդպիսի պարտքերը մեծացնում են երկրի տնտեսական, հետևապես, նաև քաղաքական կախվածությունն այն երկրներից, որոնք վարկ են տրամադրել: Եթե արտաքին պարտքի վճարումները կազմում են արտաքին տնտեսական գործունեությունից

ստացվող մուտքերի 20-30 տոկոսը, ապա նոր վարկեր վերցնելը դառնում է դժվար: Եթե վարկեր տրվում են, ապա միայն բարձր տոկոսներով՝ պահանջելով ապահովագրական որոշակի երաշխիքներ կամ գրավ:

Անվճարունակ պարտատիրոջ վիճակում հայտնվելը նշանակում է զրկվել արտասահմանյան ֆինանսական ռեսուրսներից օգտվելու հնարավորությունից: Դրա համար օգտագործվում են հետևյալ ուղիները.

- որպես տրադիցիոն ուղի պարտքերի մարումը կատարվում է ոսկու վալյուտային ռեզերվների հաշվին, եթե այդպիսիք առկա են,

- կարճաժամկետ և միջին ժամկետային պարտքերը երկարաժամկետ դարձնելու միջոցով: Դա հնարավոր է միայն վարկատուի համաձայնության պայմաններում: Օրինակ, հայտնի են Լոնդոնյան ակումբը, որը միավորում է վարկատու բանկերին և Փարիզյան ակումբը, որը ներկայացնում է վարկատու երկրներին, որոնք հատուկ հանձնաժողովների միջոցով, ուսումնասիրելով վարկառու երկրների անվճարունակության փաստերը, կամ հետաձգում են պարտքերի մարումը, կամ, առանձին դեպքերում, այդ պարտքերը մասնակիորեն դուրս են գրում,

- արտաքին պարտքը կարող է մարվել նաև կոնվերսիայի միջոցով, երբ արտասահմանյան վարկատուներին իրավունք են տալիս վարկառու երկրում ձեռք բերել անշարժ գույք, մասնակից դառնալ ազգային կապիտալին (օրինակ, մասնակից դառնալ սեփականաշնորհմանը): Այսպիսի գործառույթը տանում է ազգային տնտեսության մեջ արտասահմանյան կապիտալի մեծացմանը, սակայն հեշտացնում է պարտքի մարումը, հնարավոր դարձնում նոր վարկերի ստացումը և խթանում մասնավոր արտասահմանյան ինվեստիցիաների ներհոսքը,

- առավել սովորական ուղին այն է, երբ ծանր վիճակում հայտնված վարկառու երկրները դիմում են միջազգային բանկերին (որոնցից է օրինակ Զամաշխարհային բանկը), որոնք թեև, որպես կանոն, արտոնյալ պայմաններով տրամադրում են վարկեր, սակայն խիստ պահանջներ են ներկայացնում էմիսիոն, վարկային քաղաքականության, մրցակցության խթանման, պետական բյուջեի դեֆիցիտը նվազագույնի հասցնելու և այլ հարցերում:

**ԳԼՈՒԽ 14. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ**

**14.1. Տնտեսական աճի չափումները և նշանակությունը:**

**14.2. Տնտեսական աճի հիմնական գործոնները:**

**14.3. Տնտեսական աճի դեմ և կողմ փաստարկները: Տնտեսական աճի պետական կարգավորումը:**

Տնտեսագիտական մտքի պատմության մեջ մերկանտիլիստներն առաջին տնտեսագետներն էին, ովքեր անդրադարձել են տնտեսական աճի հիմնահարցին: Թեև ըստ էության, այն առարկայական քննության խնդիր է դարձել սկսած Ֆ. Քենեդից և հատկապես 20-րդ դարում: Եվ դա հասկանալի է, աճող տնտեսությունը մեծ ունակություն ունի բավարարելու հասարակության աճող պահանջմունքները և լուծելու սոցիալ-տնտեսական բազմաթիվ հիմնահարցեր ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով:

**14.1.** Ինչպես արդեն նկատել ենք, լրիվ զբաղվածության տեսության հիմնական հարցն այն էր, թե ինչ է անհրաժեշտ անել տնտեսության մեջ առկա արտադրական հզորությունների լրիվ օգտագործման համար: Իսկ տնտեսական աճի տեսության խնդիրն է պարզել, թե ինչպես կարելի է մեծացնել արտադրական հզորությունները կամ ՀԱԱ-ի ծավալը՝ լրիվ զբաղվածության պայմաններում: Տնտեսական աճը որոշվում է երկու եղանակով.

ա) որպես որոշակի ժամանակամիջոցում ՀԱԱ-ի կամ ազգային եկամտի աճ,

բ) որպես որոշակի ժամանակամիջոցում բնակչության մեկ շնչին ընկնող ՀԱԱ-ի կամ ազգային եկամտի աճ:

Նշված եղանակներից որն ընտրել տնտեսական աճը բնութագրելու համար, կախված է այն բանից, թե ինչ հիմնահարց է կամ ինչ նպատակով է այն ուսումնասիրվում: Օրինակ, երկրի ընդհանուր ռազմաքաղաքական պոտենցիալի գնահատման առումով, ավելի նպատակահարմար է առաջին բնորոշումը, սակայն տարբեր երկրների կամ տարածաշրջանների բնակչության կենսամակարդակի բնութագրության կամ համեմատության համար գերադասելի է երկրորդ եղանակը: Այսպես՝ հայտնի է, որ ՀԱԱ-ի աճի տեմպը վերջին տասը տարիներին Չինաստանում կազմում է 8-11 տոկոս՝ աշխարհում ամենաբարձրերից մեկը:

Նույն ցուցանիշն ԱՄՆ-ում տարեկան կազմում է 2-3 տոկոս: Բայց եթե ԱՄՆ-ում ազգային եկամտի արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով ավելացել է բնակչության աճին համամասնական ձևով, ապա Չինաստանում, 1,2 մլրդ. բնակչության պայմաններում, այդ աճը եղել է հազիվ նկատելի: Այդ պատճառով էլ Չինաստանում վերջին տասնամյակների ընթացքում պլանաչափ ձևով փորձ է արվում իրականացնել «մեկ ընտանիք - մեկ երեխա» սկզբունքը: Երկրորդ երեխա ունենալու դեպքում պետք է վճարել:

Անկախ նրանից, թե որ եղանակն է օգտագործվում, տնտեսական աճը չափվում է տարեկան աճի տեմպերով՝ արտահայտած տոկոսներով: Օրինակ, եթե ՀԱԱ-ի իրական ծավալն անցյալ տարի կազմել է 100 մլրդ. դոլար, իսկ ընթացիկ տարում 110 մլրդ. դոլար, ապա ընթացիկ տարվա տնտեսական աճի տեմպը կարելի է որոշել ընթացիկ տարվա ՀԱԱ-ի իրական ծավալի և անցյալ տարվա ՀԱԱ-ի իրական ծավալի տարբերությունը հարաբերելով անցյալ տարվա ՀԱԱ-ի իրական ծավալի վրա.

$$\frac{110 \text{ մլրդ. դ.} - 100 \text{ մլրդ. դ.}}{100} \times 100 = 10 \%$$

Անհրաժեշտ է տարբերել հնարավոր և փաստացի աճի տեմպեր հասկացությունները: Հնարավոր աճի տեմպերին, տնտեսությունը կարող է հասնել իր արտադրական հնարավորությունների սահմաններում, այսինքն, երբ և՛ տնտեսական, և՛ կազմակերպչական առումներով խստորեն իրագործում է «նվազագույն ծախսեր - առավելագույն արտադրություն» սկզբունքը: Փաստացի աճի տեմպերը կարող են ցածր լինել հնարավորից, կապված բոլոր արտադրական հնարավորությունների ոչ լրիվ օգտագործման, հատկապես՝ ոչ ճիշտ կառավարչական որոշումների ընդունման հետ:

1985-1995 թթ. տնտեսական աճի մասին պատկերացում են տալիս հետևյալ համեմատական տվյալները.

1. Շուկայական տնտեսությանն անցնող երկրներում ...	- 4,0
այդ թվում	
Ռուսաստան	- 2,4
Նախկին ԽՍՀՄ	- 4,3
Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներ	- 3,1

2. Չարգացած երկրներ՝ այդ թվում ԱՄՆ	+ 2,5  + 2,6
Եվրոպական երկրներ	+ 2,4
3. Ասիական երկրներ՝ այդ թվում Չինաստան	+ 4,2  + 10,0
Հարավային Կորեա	+ 8,6
Թաիլանդ	+ 8,9
Իրաք	- 11,8

Ակներև է, որ ասիական երկրներից բարձր աճի տեմպեր ունեն այն երկրները, որոնք իրականացնում են կշռադատված և ֆինանսապես ապահովված ռեֆորմներ: Նախկին ԽՍՀՄ-ը և սոցիալիստական բոլոր երկրները բնութագրվում են բացասական աճով:

Տնտեսական աճը համարվում է երկրի տնտեսական զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշ, քանի որ այն.

- առաջին հերթին ենթադրում է արտադրված ապրանքների և ծառայությունների իրական ծավալի, հետևապես, նաև կենսամակարդակի իրական աճ,

- թույլ է տալիս արդյունավետ ձևով լուծել կրթության, բնապահպանության, աղքատության և այլ հարցեր՝ առանց առկա կենսամակարդակի իջեցման,

- հեշտացնում է ռեսուրսների սահմանափակության հիմնահարցերի լուծումը, նոր ինվեստիցիոն ծրագրերի իրականացումը, հետևապես, օգնում է կրճատել արտադրության ծախսերը և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը:

Յուրաքանչյուր երկիր, իր առանձնահատկություններից ելնելով, տվյալ ժամանակամիջոցի համար փորձում է լուծել տնտեսական աճի հետևյալ հիմնահարցերը.

- որոշել աճի միտումները և աղբյուրները (գործոնները),
- ապահովել տնտեսական աճի կայունությունը երկարաժամկետ հեռանկարի համար,
- որոշել այն հետևանքները, որոնք կարող է ունենալ տեխնոլոգիական զարգացման այս կամ այն մոդելի ընտրությունը,

- աճի ինչպիսի տեմպեր սահմանել տնտեսության նոր կառուցվածքների հաստատման համար և ինչ ժամկետներում,
- որոշակիորեն ինչպես չափակցել տնտեսական աճի գործոնների ազդեցությունը, դրանց արդյունավետությունը:

**14.2.** Ցանկացած երկրի տնտեսական աճը պայմանավորում են հետևյալ գործոնները.

1. առաջարկի գործոններ, որոնք են.

- ա) բնական ռեսուրսների քանակը և որակը,
- բ) աշխատանքային ռեսուրսների քանակը և որակը,
- գ) կապիտալային (ինվեստիցիոն) ռեսուրսները,
- դ) տեխնոլոգիան:

Շնորհիվ այս գործոնների՝ արտադրության ֆիզիկական աճը դառնում է հնարավոր. միայն դրանք են հնարավորություն տալիս մեծացնել արտադրության իրական ծավալը:

Սակայն անհրաժեշտ է տարբերել աճելու ունակությունը և իրական աճն ինքնին, այսինքն՝ տնտեսական աճի ունակության իրացման համար կարևոր է նկատի ունենալ, որ

2. աճը կախված է պահանջարկի գործոններից՝ ամբողջական ծախսերի մակարդակից,

3. տնտեսական աճի վրա ազդում են բաշխման գործոնները: Տնտեսական ռեսուրսները պետք է ոչ միայն ընդգրկվեն տնտեսական շրջանառության մեջ, այլև բաշխվեն այնպես, որպեսզի ստացվի օգտակար արդյունքի առավելագույն քանակ:

Տնտեսական աճի վերը նշված բոլոր գործոնները փոխկապակցված են, որի մասին պատկերացում է տալիս արտադրական հնարավորությունների կորը (տես՝ գրաֆիկ 14.1):


«Տնտեսագիտության հիմքը: Հասարակության արտադրական հնարավորությունների սահմանը» գլխում արդեն պարզաբանվել է, որ AE կորն արտահայտում է տնտեսության առավելագույն արդյունավետությունը: Այն ցույց է տալիս ինվեստիցիոն և սպառողական ապրանքների արտադրության առավելագույն ծավալների այնպիսի զուգորդումներ, որոնք տնտեսությունն ընդունակ է արտադրել տվյալ քանակի և որակի բնական, մարդկային և կապիտալային ռեսուրսների և տեխնոլոգիական մակարդակի պայմաններում: Վերը նշված առաջարկի ցանկացած գործոնի դրական փոփոխությունն արտադրական հնարավորությունների



կորը տեղաշարժում է դեպի աջ՝ AE դիրքից A'E' դիրքը: Սակայն տնտեսությունն իր արտադրական պոտենցիալը կարող է իրացնել միայն այն դեպքում, եթե.

- ամբողջական պահանջարկն աճի այն չափով, որը համապատասխանում է լրիվ զբաղվածությանը,

- լրացուցիչ ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ ձևով, այսինքն՝ արտադրված արդյունքում ունենան առավելագույն արժեքային ներդրում:



Գրաֆիկ 14.1


Հակառակ դեպքում AE կորը կարող է տեղաշարժվել դեպի աջ՝ A'E' դիրքը, բայց տնտեսությունը կմնա ցածր մակարդակի՝ օրինակ, AE կորի a կետի վրա: Այլ կերպ ասած, արտադրության իրական մակարդակը չի հասնի պոտենցիալին: Օրինակ, ենթադրենք, թե երկրում աշխատուժի տարեկան աճը կազմում է 1 մլն. մարդ, որը նշանակում է ոչ այլ ինչ, քան տնտեսության արտադրական հզորության, նրա պոտենցիալի աճ: Բայց որպեսզի այդ ավելացած 1 մլն. աշխատողներն արտադրեն առավելագույն քանակության լրացուցիչ արդյունք, անհրաժեշտ է ոչ միայն համապատասխան աշխատանք բոլորի համար, այլև աշխատանք այնպիսի ճյուղերում և ֆիրմաներում, որտեղ կարող են ամբողջությամբ իրացվել նրանց ընդունակությունները: Հասարակությունը պահանջ չունի գործազուրկների շարքերը համալրող նոր աշխատանքային ռեսուրսների և ոչ էլ բարձրագույն կրթությամբ հավաքարարների, ճիշտ այնպես, ինչպես որ կարիք չունի արդյունքի սահմանային օգուտից բարձր ծախքերով արտադրող բանվորների:

Որքան էլ կարևորվեն պահանջարկի և արդյունավետության գործոնները, տնտեսական աճի հիմնահարցերի քննության ժամանակ տնտեսագետներն առանձնահատուկ տեղ են հատկացնում առաջարկի գործոններին: Հասարակությունը կարող է հասնել իրական արդյունքի և եկամտունների մեծացմանը երկու հիմնական եղանակներով.

ա) արտադրության մեջ ավելի մեծ ծավալների ռեսուրսներ ներգրավելով,

բ) այդ ռեսուրսների արտադրողականության բարձրացումով:

Իրական արդյունքի ծավալը որոշող գործոնները կարելի է արտահայտել սխեմատիկ ձևով (տես նկար 14-1):



Նկար 14.1

Ժամանակի ցանկացած հատվածում ՀԱԱ-ը որոշվում է աշխատանքային ծախսումները (մարդ/ժամեր) աշխատանքի արտադրողականությամբ (աշխատողի մեկ ժամում արտադրած արդյունքի քանակ) բազմապատկելու միջոցով.

ՀԱԱ = աշխատած մարդ/ժամերի թիվ X աշխատանքի արտադրողականություն

Աշխատանքի արտադրողականությունը որոշվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են տեխնիկական առաջընթացը, ֆոնդազինվածությունը, աշխատուժի որակը, ռեսուրսների բաշխման արդյունավետությունը, կառավարումը և այլն:

Իր ընդհանրության մեջ տնտեսական աճ կարելի է ապահովել երկու եղանակներով՝ էքստենսիվ (քանակական) և ինտենսիվ (որակական):

*էքստենսիվ եղանակը* ներկայացնում է տնտեսական աճը՝ արտադրության գործոնների պարզ քանակական ընդլայնման միջոցով.

- աշխատողների թվաքանակի ավելացում,
- արտադրության նյութական գործոնների՝ հումքի, նյութերի, վառելիքի, հողատարածությունների ավելացում և այլն,
- կապիտալ ներդրումների աճ:

*Ինտենսիվ եղանակը* ենթադրում է տնտեսական աճ՝ առկա արտադրության գործոնների ավելի արդյունավետ օգտագործման միջոցով.

- նյութական բարիքների և ծառայությունների արտադրության ընդլայնում նոր, ավելի արդյունավետ տեխնոլոգիաների, կապիտալի նորացման հաշվին,

- աշխատողների որակավորման բարձրացում,
- արտադրության արդյունավետ կազմակերպում (տնտեսական կապերի նոր կառուցվածք, կառավարում, մարքեթինգ և այլն):

Այսպիսով, տնտեսական աճի էքստենսիվ ուղին ենթադրում է արտադրության գործոնների պարզ քանակական ավելացում, իսկ ինտենսիվ ուղին՝ դրանց օգտագործման որակական բարելավում, տեխնիկայի և տեխնոլոգիայի կատարելագործում:

Սովորաբար, ինտենսիվ և էքստենսիվ եղանակները զուգակցվում են միմյանց հետ: Տնտեսության մեջ, որպես կանոն, գոյություն չունեն տնտեսական աճի բացարձակ ինտենսիվ և բացարձակ էքստենսիվ ուղիներ: Այդ պատճառով ավելի ճիշտ է խոսել տնտեսական աճի առավելապես ինտենսիվ կամ առավելապես էքստենսիվ ուղիների մասին:

Հարկ է նկատել, որ տնտեսական աճը ոչ միայն տնտեսական, այլ նաև ոչ տնտեսական գործոնների արդյունք է: Խոսքը վերաբերում է ռազմաքաղաքական, աշխարհագրական, կլիմայական, ազգային, դեմոգրաֆիական, կուլտուրական և այլ գործոններին: Տնտեսագիտության շվեդական դպրոցի հայտնի ներկայացուցիչ Գ. Մյուրդալը, անդրադառնալով ասիական երկրների զարգացման առանձնահատկություններին, շեշտում է սովորությունների, կուլտուրայի և այլ գործոնների նշանակությունը՝ գործոններ, որոնք տնտեսականի համեմատությամբ «բավականաչափ դժվար է ենթարկել համակարգված վերլուծության»: Տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության ակներևության համար հաճախ վկայակոչվում է այն փաստը, որ Հարավային Ասիային


և Հնդկաստանին է պատկանում աշխարհի խոշոր եղջերավոր անասունների 1/4 մասը: Բայց այդ նույն Հնդկաստանին էլ բաժին է ընկնում կաթ չտվող կովերի մեծ մասը: Պատճառը կովերի՝ որպես սուրբ կենդանիների, սպանդի արգելքն է, որը թույլ չի տալիս դրանք ռացիոնալ օգտագործել, ոչ էլ ժամանակին ազատվել՝ որպես ավելորդ բեռի:

Առաջարկի գործոնների մեջ իր նշանակությամբ առանձնահատուկ տեղ ունի հող ռեսուրսը: Երբ երկրի տնտեսական կյանքում գերակշռում է գյուղատնտեսությունը, ինչպես դա տեղ ուներ մինչև արդյունաբերական հեղաշրջումը և շատ զարգացող երկրներում շարունակվում է մինչև այժմ, մեկ շնչի հաշվով մշակվող հողատարածությունները դառնում են այդ երկրի կենսամակարդակը բնութագրող գլխավոր գործոն:

19-րդ դարասկզբի տնտեսագետները, և այս առումով առավել հայտնի Ռոբերտ Մալթուսը, գտնում էին, թե որքանով հողը սահմանափակ է և նրա առաջարկը մեծացվել չի կարող, այնքանով այն ունի տնտեսական աճը սահմանափակող ֆունկցիա: Բնակչության աճին զուգընթաց մեծանում է հողի տվյալ տարածությանն ընկնող բնակչության թիվը: Հողի առաջարկը ֆիքսված է և նախկինի համեմատությամբ աշխատանքի ամեն մի առաջարկ չի զուգորդվում արդյունքի ավելացումով, այսինքն, իջնում է արտադրողականությունը՝ գոյամիջոցների արտադրությունը: Կենսամակարդակը իջնում է՝ կասեցնելով բնակչության հետագա աճը: Բնակչությունն աճում է երկրաչափական պրոգրեսիայով՝ 1, 2, 4, 8, 16, իսկ գոյամիջոցների արտադրությունը՝ թվաբանական պրոգրեսիայով՝ 1, 2, 3, 4, 5:

Հատկապես զարգացող երկրները կարող են հայտնվել, այսպես կոչված, «մալթուսյան ծուղակում» (տես գրաֆիկ 14.2):

Երբ բնակչության թիվը քիչ է, մեկ մարդու հաշվով արտադրվող սննդի քանակը բավական մեծ է, և բնակչությունն աճում է: Բնակչության աճը հանգեցնում է այն վիճակին, որ մեկ շնչին ընկնող սննդամթերքի արտադրության ծավալը մոտենում է գոյատևելու մակարդակին: Եթե բնակչության քանակը գերազանցում է N մակարդակը, որի ժամանակ մարդիկ կարող է միայն գոյատևել, ապա սկսվում է սով, և բնակչությունը նորից կրճատվում է մինչև N կետը: Հետևապես E կետում մեկ շնչին ընկնող սննդամթերքի արտադրությունն ընդամենը բավարար է գոյատևելու համար: Գրաֆիկում N կետը ներկայացնում է բնակչության այն հավասարակշռված քանակը, որի ժամանակ տնտեսությունը հայտնվում է «մալթուսյան ծուղակում»:



Ինչ խոսք, չի կարելի անտեսել այն հսկայական տեղաշարժերը, որոնք կատարվել են գյուղատնտեսական արտադրության մեջ՝ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը: Այնուամենայնիվ, հազիվ թե կարելի է պնդել, որ երկրագնդի մի շարք տարածաշրջաններում այդպիսի հակասություն չկա:

**14.2.** Տնտեսագետների շրջանում տնտեսական աճի երևույթը միանշանակ չի ընդունվում: Բերվում են ինչպես դեմ, այնպես էլ կողմ փաստարկներ:

ա) Տնտեսական աճի դեմ փաստարկներ.

- ինդուստրացումը և տնտեսական աճը ծնում են այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են՝ շրջակա միջավայրի աղտոտումը, արդյունաբերական աղմուկը և արտանետումները, տրանսպորտային կուտակումները, քաղաքների տեսքի վատացումը և այլն: Բոլոր այդ տնտեսական ծախսերն արդյունք են այն բանի, որ արտադրության գործընթացը վերափոխում է տնտեսական ռեսուրսները, բայց դրանք ամբողջությամբ չի օգտագործում: Գործնականում այն ամենը, ինչ մտնում է արտադրություն, ժամանակի ընթացքում վերադառնում է շրջակա միջավայր՝ որպես թափոն: Որքան նշանակալից է տնտեսական աճը, և բարձր կենսամակարդակը, այնքան շրջակա միջավայրը կլանում է ավելի շատ թափոն, ինչը միայն մեծացնում է էկոլոգիական ճգնաժամի վտանգը: Այդ պատճառով էլ տնտեսագետների մի մասի կարծիքով տնտեսական աճն անհրաժեշտ է նպատակամղված ձևով կասեցնել,

- տնտեսական աճն ինքնին չի լուծում սոցիալ-տնտեսական հիմնահարցերը, ինչպես ենթադրում են նրա կողմնակիցները,

Աղքատության (եկամուտների անհավասարության) խնդիրն ըստ էության ոչ թե արտադրության, այլ բաշխման հարց է, որը պահանջում է քաղաքական լուծում և ոչ թե հասարակական արդյունքի մակարդակի բարձրացում:

- արագ տնտեսական աճը, հատկապես՝ կապված նորագույն տեխնոլոգիաների օգտագործման հետ, հաճախ առաջ է բերում անհանգստություն և անվստահություն: Աշխատողները սկսում են վախենալ, որ իրենց գիտելիքներն ու փորձը՝ կապված տեխնիկական առաջընթացի հետ, կարող են արագ հնանալ,

- թեև տնտեսական աճն ապահովում է «անհրաժեշտ կենսամիջոցներ», սակայն չի ապահովում «բարեկեցիկ կյանք»: Տեխնիկական առաջընթացի երկու հարյուր տարիների ընթացքում մարդիկ ամբողջական արտադրողներից վեր են ածվել մեքենայի կցորդների, կորցնելով աշխատանքից հաճույք ստանալու բավականությունը: Այլ կերպ ասած, տնտեսական աճն իր հետ բերել է ինդուստրացում և զանգվածային արտադրություն, որը չունի ստեղծագործական բնույթ և ենթադրում է կենսական կարևոր որոշումների ընդունումից աշխատողների օտարում:

բ) Տնտեսական աճի կողմ փաստարկներ.

- տնտեսական աճը նյութական առատության և կենսամակարդակի բարձրացման հիմնական նախապայմանն է: Այն մեղմացնում է հակասությունն անսահմանափակ պահանջումների և սահմանափակ ռեսուրսների միջև: Տնտեսական աճի շնորհիվ հեշտանում է սոցիալական պայմանների ընտրությունը՝ տանելով բնակչության տարբեր խմբերի միջև հակասությունների մեղմացման: Հնարավորություն է ստեղծվում երկրի անվտանգությունն ապահովելու հետ միաժամանակ իրականացնել սոցիալական ոլորտին վերաբերող տարբեր ծրագրեր, կատարելագործել կրթական համակարգը, բարձրացնել անձնական եկամուտները,

- տնտեսական աճը թույլ է տալիս լուծել շրջակա միջավայրի աղտոտման հիմնահարցերը, որոնք ոչ այնքան տնտեսական աճի, որքան սխալ գնագոյացման հետևանք են: Բնական ռեսուրսների նշանակալից մասը (գետերը, լճերը, օվկիանոսները և օդը) դիտվում են որպես «ընդհանուրի սեփականությունը» և զին չունեն, ուստի և օգտագործվում են առանց սահմանափակումների: Հետևաբար, շրջակա միջավայրի աղտոտումն ավելի շուտ կողմնակի ծախսերի արդյունք է, որը կարելի է լուծել հատուկ հարկերի և օրենսդրական կարգավորման միջոցով,

- չի կարելի ենթադրել, թե տնտեսական աճի դանդաղեցումը և դանդաղեցումն ինքնաբերաբար բարերար ազդեցություն պիտի ունենան մարդկային արժեքների վրա՝ մարդկանց համար ապահովելով «լավ

կյանք»։ Ավելի շուտ տեղի կունենա հակառակը, քանի որ միայն տնտեսական աճն է, որ ապահովելով բարձր կենսամակարդակ, մարդկանց հնարավորություն է տալիս կրթության և սեփական արժեքների իրացման համար։

Իր կողմն է դեմ փաստարկներով հանդերձ, տնտեսական աճը համարվում է պետության հիմնական նպատակներից մեկը և իրականացվում են որոշակի միջոցառումներ այն խթանելու ուղղությամբ։ Այդ միջոցառումներն իրենց ընդհանրության մեջ հանգում են հետևյալին.

1) քայնասկանները տնտեսական աճը գերազանցապես դիտում են պահանջարկի գործոնների տեսանկյունից։ Նրանք աճի ցածր տեմպերը բացատրում են անբողջական ծախսերի մակարդակի անհամազորությամբ, որը չի ապահովում ՀԱԱ-ի անհրաժեշտ աճ։ Անհրաժեշտության դեպքում նրանք առաջարկում են կառավարության ծախսերի և սպառման սահմանափակում այն հաշվով, որ կապիտալ ներդրումների բարձր տեմպերը չբերեն ինֆլյացիայի,

2) ի տարբերություն քայնասկանների, առաջարկի տեսության կողմնակիցները հիմնական շեշտը դնում են տնտեսական համակարգի արտադրական պոտենցիալը բարձրացնող գործոնների վրա՝ մասնավորապես, հարկերի կրճատումը դիտելով որպես խնայողությունները և կապիտալ ներդրումները, աշխատանքային ջանքերը և ձեռնարկատիրական ռիսկը խթանող միջոց,

3) տնտեսագիտության այլ տեսությունների ներկայացուցիչներն առաջարկում են տնտեսական աճը խթանող ուրիշ միջոցներ։ Ինչպես, օրինակ, ինդուստրիալ քաղաքականության կիրառում, որի դեպքում պետությունը պետք է իր վրա վերցնի արտադրության կառուցվածքի ձևավորման խնդիրը և նպաստի ռեսուրսների վերաբաշխմանը՝ նվազ արդյունավետ ճյուղերից դեպի բարձր արդյունավետություն ապահովող ճյուղեր։ Պետությունը կարող է մեծացնել նաև հիմնարար գիտական հետազոտություններին հատկացվող միջոցները և խթանել տեխնիկական առաջընթացը։ Աշխատանքի արտադրողականության և աշխատուժի որակի բարձրացմանը կարող է նպաստել նաև կրթությանը հատկացվող միջոցների աճը։

Բազմաթիվ միջոցների առկայության պայմաններում տնտեսագետների մեծամասնությունը միակարծիք է, որ տնտեսական աճը դժվարահաս խնդիրներից է և որ հաճախ կապիտալատարությունը և խնայողության հակվածությունը դժվարությամբ են ենթարկվում կարգավորման։

## ԳԼՈՒԽ 15 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

**15.1.** *Միջազգային առևտրի դերը, տնտեսական հիմքերը։ Մասնագիտացում, բացարձակ և հարաբերական առավելություններ։ Գեկշեր-Օլիների տեսությունը և « Լեոնտևի պարադոքսը »:*

**15.2.** *Միջազգային առևտրի պետական կարգավորիչները:*

**15.3.** *Արժույթային հիմնախնդիրներ։ Վճարային հաշվեկշիռ:*

**15.1.** Ինչպես արդեն նկատել ենք «Ձուտ կապիտալիզմի ինստիտուցիոնալ հատկանիշները» գլխում, մասնագիտացումը (աշխատանքի բաժանումը) մեծապես նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ Նույն սկզբունքը գործում է նաև միջազգային առևտրի բնագավառում։ Հասարակությունը վաղուց յուրացրել է այն ճշմարտությունը, որ ինքնաապահովումը ծնունդ է անարդյունավետություն։ Եվ այն, որ երկու երկրներ միմյանց հետ ապրանքներ և ծառայություններ են փոխանակում, պայմանավորված է երկու հանգամանքներով.

ա) տնտեսական ռեսուրսները՝ բնական, մարդկային, ինվեստիցիոն, տարբեր երկրների միջև բաշխված են խիստ անհավասարաչափ։ Երկրները միմյանցից տարբերվում են տնտեսական ռեսուրսների ապահովվածությամբ,

բ) տարբեր ապրանքների արդյունավետ արտադրությունը պահանջում է տարբեր տեխնոլոգիաներ կամ ռեսուրսների զուգակցություններ։

Միջազգային առևտրի հիմքում ընկած է շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքը՝ շահ ստանալու ձգտումը, որի էությունը տվյալ դեպքում այն է, որ փոխանակելով իր ապրանքի ավելցուկը, երկիրը ձեռք է բերում իր համար անհրաժեշտ ուրիշ ապրանք՝ յուրաքանչյուրն իրացնելով սեփական առավելությունները։ Վերջիններս ընդունված է անվանել «բացարձակ» և «հարաբերական» կամ «համեմատական» առավելություններ։

Ադամ Սմիթը միջազգային առևտրի հարցերում ելնում էր արտասահմանի նկատմամբ միավոր արտադրանքի ծախքերի բացարձակ առավելությունների սկզբունքից, այսինքն նրանից, որ ամեն մի երկիր ունի հատուկ պայմաններ և հատուկ ռեսուրսներ, որոնք մյուսների համեմատությամբ ապահովում են առավելություններ և հնարավորություն

տալիս որոշ ապրանքների արտադրությունն իրականացնել ցածր ծախքերով: Խոսքը վերաբերում է այս կամ այն երկրում պատմականորեն ստեղծված առանձնահատուկ բնակլիմայական, հուճքային և աշխատանքային ռեսուրսների ամբողջությամբ (օրինակ՝ նավթի, գազի, քարածխի պաշարներով հարուստ, սուրճ կամ ցիտրուսային կուլտուրաներ աճեցնելու կլիմայական հնարավորություններ ունեցող երկրները և այլն): Բացարձակ առավելությունների առկայությունը նշանակում է, որ երկիրը որևէ ոլորտում ունի մոնոպոլային դիրք, որը կանխորոշում է նրա արտադրության «բնական» մասնագիտացման ուղղվածությունն աշխատանքի միջազգային բաժանման համակարգում:

Հարաբերական առավելությունների տեսությունն իր հիմքում ունի ոչ թե տվյալ երկրի արտադրության պայմանների առանձնահատկությունները, այլ տարբեր երկրներում միանման արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ այլընտրանքային արժեքի մեծությունների համեմատությունը: Այդ պատճառով էլ հարաբերական առավելություններն անվանում են նաև «համեմատական առավելություններ»: Համեմատական առավելությունների տեսությունը կապված է անգլիացի տնտեսագետ Դավիթ Ռիկարդոյի անվան հետ: Նա ելակետ էր ընդունում միավոր արտադրանքի ծախքերի համեմատական առավելությունը: Ռիկարդոն չի քննարկել միջազգային շուկայում արտադրության գործոնների տեղաշարժի հարցը: Ազատ առևտրի քաղաքականության պայմաններում փոխանակությունը շահավետ է բոլորի համար: Պարզության համար նա վերցնում է երկու երկրներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է իր նյութական և մարդկային ռեսուրսներն օգտագործել երկու ապրանքների արտադրության համար, ինչպես փակ, այնպես էլ բաց շուկայի պայմաններում (որը ենթադրում է փոխանակություն և մասնագիտացում): Բաց շուկայի պայմաններում արտադրության ամբողջական ծախքերն ավելի փոքր են լինում, քան փակ շուկայի պայմաններում: «Առևտրի լրիվ ազատության համակարգի պայմաններում, երկիրը, բնականաբար իր կապիտալը և աշխատանքը ծախսում է արդյունաբերության այնպիսի ճյուղերում, որոնք նրան բերում են առավելագույն օգուտներ: Անհատական օգուտին հետամուտ լինելը ամենազարմանալի կերպով կապված է բոլորի համար ընդհանուր բարեկեցության հետ»:

Համեմատական առավելությունները դիտարկենք հետևյալ պայմանական օրինակի հիման վրա: Ենթադրենք, թե  $a$  և  $b$  ապրանքները կա-

րելի է թողարկել երկու երկրներում՝  $x$  և  $y$ , բայց տարբեր այլընտրանքային արժեքներով:  $x$  երկրում կարելի է թողարկել  $a$  արտադրանքի 5 միավոր կամ  $b$  արտադրանքի 15 միավոր (դա նշանակում է, որ  $a$  ապրանքի մեկ միավորի այլընտրանքային արժեքը հավասար է  $b$  ապրանքի 3 միավորի արժեքին), իսկ  $y$  երկրում կարելի է արտադրել  $a$  արտադրանքի 10 միավոր կամ 5 միավոր  $b$  ապրանքից (այստեղ  $a$  ապրանքի միավորի այլընտրանքային արժեքը հավասար է  $b$  արտադրանքի կեսին): Այստեղից.

$x$ երկիր	$y$ երկիր
$1 a = 3 b$	$1 a = 0,5 b$
$1 b = 1/3 a$	$1 b = 2 a$


Հետևապես որ<sup>օ</sup> երկրում է ավելի էժան միավոր  $a$  ապրանքի և որ երկրում՝  $b$  ապրանքի արտադրությունը: Բերված տվյալներից ակներև է, որ  $x$  երկրում միավոր  $a$  ապրանքի այլընտրանքային արժեքը հավասար է 3  $b$ -ի, իսկ  $y$  երկրում՝ 0,5  $b$ -ի, ուստի  $a$  ապրանքի արտադրությունը շահավետ է իրականացնել  $y$  երկրում: Այլ է պատկերը  $b$  ապրանքի դեպքում: Համեմատական առավելությունն այստեղ պատկանում է  $x$  երկրին:

Ասվածը կարելի է պատկերել արտադրական հնարավորությունների գրաֆիկի ձևով, նրա վրա տեղադրելով  $a$  և  $b$  ապրանքների արտադրության այլընտրանքային արժեքները  $x$  և  $y$  երկրներում (տես գրաֆիկ 15-1):

Երկրների մեծ մասը միջազգային առևտրին մասնակցում է հիմնըվելով իր համեմատական առավելությունների վրա: Վերջինիս պահպանումը և բազմապատկումը ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է:

20-րդ դարի նշանավոր տնտեսագետ Պ. Սամուելսոնը նկատում է, որ եթե տեսությունների համար կազմակերպվեր գեղեցկության մրցույթ, ինչպես դա արվում է աղջիկների համար, ապա համեմատական առավելությունների տեսությունը, լինելով կուռ և տրամաբանական, կարժանանար բարձրագույն տեղի: Միաժամանակ, նույն հեղինակը այդ տեսության հիմնական թերությունը համարում է նրա ստատիկ բնույթը: Այն անտեսում է գների կամ աշխատավարձի տատանումները, վերացարկվում միջանկյալ ստադիաներում տեղի ունեցող ինֆլյացիոն և դեֆլյացիոն շեղումներից, վճարային հաշվեկշռի հնարավոր հիմնահարցերից: Այդ տեսությունը ելնում է այն բանից, որ եթե բանվորները թողնում են մի որևէ ճյուղ, ապա նրանք չեն վերածվում խրոնիկական գործազուրկների, այլ անպայմանորեն անցնում են մի այլ ավելի արտադրողական

ճյուղ: Ազգը, որն անտեսում է համեմատական առավելությունների սկզբունքը, կորուստներ կունենա ինչպես կենսամակարդակի իջեցման, այնպես էլ տնտեսական աճի պոտենցիալ տեմպերի դանդաղեցման առումներով: Սակայն նույնը տեղի կունենա, եթե իրականության վերլուծության ժամանակ այն կիրառենք «շուտափույթ և անքննադատ» ձևով:



Գրաֆիկ 15.1

Համեմատական առավելությունների տեսությունը պատկերացում է տալիս միջազգային առևտրի մասին, կապված տարբեր երկրների ծախքերի հարաբերական տարբերությունների հետ, սակայն մի կողմ է թողնում այն հարցը, թե ինչու են դրանք առաջանում: Փորձելով պատասխանել այդ հարցին շվեդ տնտեսագետներ էլի Յեկչերը և Բերտիլ Օլինը XX դարի 20-ական թվականներին առաջադրում են արտադրության գործոնների հարաբերակցության տեսությունը: Նկատենք, որ ընդհանուր առմամբ վերջինս իր հիմքում ունի բացարձակ և հարաբերական առավելությունների տեսությունների սկզբունքները, այն տարբերությամբ, որ միջազգային առևտրի այս կամ այն ձևը իր հիմքում պետք է ունենա ոչ թե արտադրության արդյունավետության տարբերությունները, այլ տվյալ երկրի հագեցվածությունը ( օժտվածությունը) արտադրության գործոններով: Հենց դա էլ , նրանց կարծիքով , պայմանավորում է միջազգային առևտրին մասնակցող երկրներում դրանց նկատմամբ գների հարաբերակցությունների տարբերությունները:

Համաձայն Յեկչեր-Օլինի տեսության երկրները պետք է ձգտեն արտահանել այնպիսի ապրանքներ, որոնցում առկա է դրանց արտադրության համար անհրաժեշտ գործոնների հարաբերական ավելցուկ և

ցածր ինքնարժեք, միաժամանակ ներմուծելով ապրանքներ, որոնց արտադրության համար անհրաժեշտ գործոնները կամ բացակայում են կամ բարձր ինքնարժեք ունեն: Փաստորեն անուղղակի ձևով արտահանվում են արտադրության ավելցուկային գործոնները, և ներմուծվում են այն գործոնները, որոնք տվյալ երկրի համար դեֆիցիտային են, այսինքն երկրների միջև ապրանքների տեղաշարժը փոխհատուցում է արտադրության գործոնների ցածր մոբիլությունը համաշխարհային տնտեսության մասշտաբով: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այստեղ խոսք է գնում ոչ թե տվյալ երկրի արտադրության գործոնների ունեցած քանակի մասին, այլ դրանցով նրա հարաբերական ապահովվածության ( օրինակ մեկ աշխատողին ընկնող պիտանի հողատարածություն) մասին: Եթե տվյալ երկրում արտադրության այս կամ այն գործոնը համեմատաբար շատ է քան մյուս երկրներում, ապա նրա գինը համեմատաբար ցածր կլինի: Օրինակ, եթե աշխատանքը (կամ կալիտալը) համեմատաբար ավելցուկային գործոն է, ապա, այլ հավասար պայմաններում, աշխատավարձի մակարդակը ցածր կլինի: Հետևապես, այն արդյունքի հարաբերական գինը, որի արտադրության ժամանակ այդ էժան գործոնը մյուսների համեմատությամբ օգտագործվում է մեծ չափով, մյուս երկրների համեմատությամբ ցածր կլինի: Այսինքն, նորից ծագում են համեմատական առավելություններ և որոշում արտաքին առևտրի ուղղությունները:

Տնտեսագետները մի անգամ չէ, որ փորձել են Յեկչեր-Օլինի տեսությունը ենթարկել փորձարարական ստուգաբանության: Հատկապես առանձնանում է ամերիկյան տնտեսագետ Վ.Լեոնտևի ուսումնասիրությունը, որը հանգեցրել է հակասական եզրակացությունների: Հաշվի առնելով, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ում, ի տարբերություն մնացած առևտրական գործընկերների, կապիտալը համեմատաբար ավելցուկային գործոն էր, իսկ աշխատավարձի մակարդակը նշանակալից չափով բարձր էր, ապա համաձայն Յեկչեր-Օլինի տեսության ԱՄՆ-ն պետք է արտահաներ կապիտալատար և ներմուծեր աշխատատար ապրանքներ: Մինչդեռ, հաշվարկելով որոշակի քանակության արտահանվող արդյունքների արտադրության համար անհրաժեշտ կապիտալի և աշխատանքի ծավալների հարաբերակցությունը և նույնը, այդ նույն քանակության ներմուծվող արդյունքների համար, Լեոնտևը հանգել է այն եզրակացության, որ ամերիկյան

ներմուծումը 30 տոկոսով ավելի կապիտալատար է քան արտահանումը: Այդ պատճառով էլ այն անվանվում է « Լեոնտի պարադոքս», որը վկայում է այն մասին, որ տնտեսական երևույթների ուսումնասիրության ժամանակ չի կարելի առաջնորդվել միանշանակ չափանիշներով: Այդ պարադոքսը բացատրելու նոր ուսումնասիրությունների արդյունքում Հեկշեր-Օլինի տեսությունը հարստացվել է, միջազգային մասնագիտացման հարցերը ենթարկելով նոր դիտարկումների: Մասնավորապես հարկ է նկատի ունենալ արտադրության գործոնների ոչ միատարրությունը: Օրինակ զարգացած երկրների արտահանության մեջ կարող է արտահայտվել ոչ թե հարաբերական ավելցուկային աշխատանքն ընդհանրապես, այլ բարձր որակավորման աշխատանքը, մինչդեռ զարգացող երկրներն արտահանում են արտադրանք, որի մեջ մեծ է ոչ որակյալ աշխատուժի տեսակարար կշիռը: Կամ կարևոր նշանակություն կարող են ունենալ բնական հարստությունները, որոնց շահագործումը կապված է մեծ կապիտալների հետ: Հետևաբար, զարգացող երկրների արտահանությունը կարող է լինել կապիտալատար, թեև կապիտալն այդ երկրներում արտադրության հարաբերական ավելցուկային գործոն չէ:

**15.2.** Համեմատական առավելությունների տեսության հիմքում ընկած է ազատ առևտրի քաղաքականությունը: Ազատ առևտրի դեպքում ոչ ներմուծման, ոչ էլ արտահանման վրա որևէ սահմանափակում չի դրվում, և գործում են պահանջարկի ու առաջարկի օրենքները: Ապրանքները գնվում են այնտեղ, որտեղ դրանք համեմատաբար էժան են և վաճառվում են այնտեղ, որտեղ դրանք համեմատաբար թանկ են: Ապրանքների այս տեղաշարժն ի վերջո վերացնում է առկա տարբերությունները և շուկայում հաստատում միասնական միջազգային գներ: Ազատ առևտրի օգտին է խոսում այն փաստը, որ անարգել իրականացվող առևտուրը նպաստում է աշխատանքի փոխադարձ միջազգային բաժանմանը, որի հետևանքով մեծանում է բոլոր երկրների իրական ազգային արդյունքը և հնարավորություն է տալիս բարձրացնել բոլորի կյանքի մակարդակը:

Տեսականորեն ամեն ինչ ճիշտ է: Եվ համեմատական առավելությունների տեսությունը տնտեսապես նպատակահարմար է, սակայն դրանից փոխադարձ օգուտ կարող են քաղել այն երկրները, որոնք տնտեսական զարգացման մակարդակի և տնտեսական կառուցվածքի

առումներով իրար մոտ են: Իսկ եթե համեմատական առավելությունները մի կողմի մոտ շատ մեծ լինեն, ապա օգուտը կարող է կամ անհավասար կամ միակողմանի լինել:

Արտահանումը և ներմուծումը ամբողջության մեջ ներկայացնում են երկրի արտաքին ապրանքաշրջանառությունը: Որքան երկրի ՀԱԱ-ի մեջ մեծ է արտաքին ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը, այնքան զարգացած է ազգային տնտեսությունը և այնքան շատ համեմատական առավելություններ ունի: Իրականում այդպես է: Միաժամանակ, հաշվի առնելով արտաքին առևտրի բացառիկ նշանակությունը, յուրաքանչյուր երկիր վարում է իր առևտրական քաղաքականությունը, որն ուղղված է համաշխարհային առևտրում իր դիրքերի ամրապնդմանը և սեփական երկրում այդ առևտրի արդյունավետության և օգտակարության բարձրացմանը:

Թեև ավելի համոզիչ են հնչում ազատ առևտրի վերաբերյալ դատողությունները, այնուամենայնիվ, միշտ առկա են առևտրական արգելքներ: Դրանք են.

ա) տարիֆներ կամ մաքսային հարկեր: Դրանք կիրառվում են եկանուտներ ստանալու կամ ազգային արտադրությունը հովանավորելու նպատակով, ըստ որի էլ բաժանվում են գանձարանային և հովանավորչական տարիֆների: Դրանցից առաջինը՝ պետական բյուջեն ապահովում է եկանուտներով, իսկ երկրորդը՝ տեղական արտադրանքը պաշտպանում ներմուծվող ապրանքների մրցակցությունից: Տարիֆները գումարվում են ապրանքների գնին, դրանով իսկ կրճատելով արտասահմանյան ապրանքների մրցունակությունը, հետևաբար, նաև ներմուծման ծավալները,

բ) ներմուծման քվոտներ, որոնց օգնությամբ որոշվում է ապրանքների ներմուծման առավելագույն ծավալը: Ի տարբերություն տարիֆների, դրանք ավելի արդյունավետ միջոց են առևտուրը սահմանափակելու գործում, իսկ արգելակիչ քվոտները նույնիսկ կարող են լրիվ արգելել ապրանքների որոշ տեսակների ներմուծումը:

Ըստ էության, տարիֆների և քվոտների կիրառման նպատակը նույնն է՝ զինը սահմանել հավասարակշռվածից բարձր, իսկ ծավալը՝ հավասարակշռվածից ցածր մակարդակի վրա: Չնայած ընդհանրությանը, քվոտների և տարիֆների հիմնական տարբերությունն այն է, որ տարիֆներ սահմանելու դեպքում պետական բյուջեն ապահովվում է

որոշակի եկամտով, որը ստացվում է սպառողների եկամուտների կրճատման հաշվին, իսկ քվոտներ սահմանելիս օգտվում են անհատները, որոնք ստանում են ներմուծման լիցենզիա,

գ) ոչ տարիֆային արգելքներ, որի մեջ մտնում են լիցենզավորման համակարգը, արտադրանքի որակի չարդարացված ստանդարտների կիրառումը կամ պարզապես բյուրոկրատական արգելքները, որոնք կան մաքսային գործընթացներում: Այսպես, օրինակ, ճապոնիան և եվրոպական երկրները հաճախ ապրանք ներմուծողներից պահանջում են լիցենզիաներ: Սահմանափակելով լիցենզիաների քանակը, կարելի է արդյունավետ ձևով կրճատել ներմուծումը,

դ) ներմուծման կամավոր սահմանափակումներ, որոնք առևտրական արգելքների համեմատաբար նոր ձև են: Արտասահմանյան ֆիրմաները կամավոր սահմանափակում են իրենց արտահանման ծավալները, հուսալով խուսափել ավելի կոշտ առևտրական արգելքներից (բարձր տարիֆներ կամ ներմուծման ցածր քվոտներ):

Այս արգելակիչ միջոցառումներն ունեն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի տնտեսական հետևանքներ: Տարիֆների կիրառումը բարձրացնում է ապրանքների գինը, որի հետևանքով կրճատվում է դրանց պահանջարկը, իսկ ապրանքի տեղական արտադրողները ստանում են լրացուցիչ եկամուտներ: Ապրանք ներմուծողները տուժում են, քանի որ կրճատվում են նրանց զուտ արտահանման ծավալները, պետությունը ստանում է լրացուցիչ եկամուտ, որը, սակայն, չի ազդում երկրի ընդհանուր բարեկեցության մակարդակի վրա, քանի որ պետությունը շահում է այնքանով, որքանով կորցնում են սպառողները:

Տարիֆների կիրառման անուղղակի հետևանքն այն է, որ ներմուծման սահմանափակումը կրճատում է առևտրական գործընկերների՝ այդ երկրի տարադրանք վաստակելու հնարավորությունը, ինչպես նաև փոքրացնում այդ երկրի արտահանման ծավալներն այն ճյուղերում, որտեղ նա ուներ հարաբերական առավելություն: Ուստի տարիֆները, հովանավորելով համեմատաբար թույլ, ոչ արդյունավետ ճյուղերը, հանգեցնում են առավել արդյունավետ ճյուղերի արտադրության կրճատմանը և պատճառ դառնում են քրիստոսի և միջազգային ռեսուրսների անարդյունավետ տեղաբաշխմանը: Վերջին հաշվով տեղի է ունենում արտադրության համաշխարհային մասշտաբների կրճատում:

Միջազգային առևտրին մասնակցությամբ միշտ տրվել են հակասական գնահատականներ: Այս իմաստով որքան փաստարկներ կարելի է բերել ազատ առևտրի օգտին, նույնքան էլ կարելի է բերել հովանավորման քաղաքականության օգտին: Հովանավորչությունն ազգային տնտեսության պաշտպանությունն է արտասահմանյան տնտեսական ներխուժումից, որի անհրաժեշտությունը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

ա) ապահովվում է երկրի պաշտպանունակությունը: Հովանավորչական տարիֆներ կիրառվում են երկրի պաշտպանության համար անհրաժեշտ ստրատեգիական նշանակության ապրանքներ և նյութեր թողարկող ճյուղերի պահպանման և ուժեղացման համար,

բ) ազգային տնտեսության նոր կամ թույլ ճյուղերի պաշտպանությունը: Սակայն հաճախ բերվում են նաև հակառակ փաստարկներ, ըստ որի տարիֆների և քվոտների կիրառումը կարող է այնքան էլ արդյունավետ չլինել, քանի որ այն կարող է հանգեցնել արտադրության ընդհանուր արդյունավետության նվազեցմանը և բարձր գների միջոցով հովանավորել այն ճյուղերը, որոնց զարգացումն այնքան էլ նպատակահարմար չէ տվյալ երկրի համար,

գ) ազգային տնտեսության պաշտպանությունը դեմպինգից: Վերջինս արտադրանքի վաճառքն է մեկ այլ երկրում ծախքերից էլ ցածր գնով, որը կարող է կատարվել երկու պատճառներով: Նախ, մրցակիցներին սնանկացնելու և շուկայում մոնոպոլ դիրք գրավելու նպատակով, որը հետագայում թույլ կտա բարձրացնել գները: Երկրորդ, դեմպինգը կարող է գնային դիսկրիմինացիա ենթադրել՝ գնորդների համար սահմանելով տարբեր գներ: Բարձր գնով արտադրանքը վաճառվում է ներքին, մոնոպոլացված շուկայում, իսկ ցածր գնով՝ արտաքին շուկայում, որի նպատակն ավելցուկներից ազատվելն է,

դ) ազգային ապրելակերպի պաշտպանությունը,

ե) պաշտպանությունն էժան արտասահմանյան աշխատուժի մրցակցությունից, ըստ որի հայրենական ֆիրմաները և աշխատուժը պետք է պաշտպանվեն այն երկրների մրցակցությունից, որոնցում աշխատավարձը ցածր է: Հակառակ դեպքում ազգային շուկան կողոպտի արտասահմանյան էժան ապրանքներով, ազգային ապրանքների գները, ինչպես նաև աշխատավարձի մակարդակը կիջնի և կընկնի երկրի կենսամակարդակը: Ներմուծման կրճատումը խթանիչ ազդեցություն կարող է ունեն



նալ նաև ներքին արտադրության ընդլայնման, հետևապես, նաև զբաղվածության աճի՝ գործազրկության մակարդակի կրճատման առումով:

**15.3.** Գրեթե բոլոր երկրներն ունեն իրենց ազգային փողերը՝ ազգային արժույթները, որոնցով իրականացվում են ներմուծվող ապրանքների դիմաց վճարումները: Սակայն, օրինակ, ամերիկյան ֆիրմայի համար Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքների դիմաց իմաստ ունի ստանալ հայկական դրամ միայն երկու պայմանների առկայության դեպքում.

ա) եթե հայկական դրամը կարելի է արագ և հեշտ փոխարկել դոլարների, քանի որ ֆիրման գտնվում է ԱՄՆ-ում և արտադրական ծախքերի համար նրան անհրաժեշտ են դոլարներ (հումքի ձեռք բերման կամ աշխատավարձի վճարման համար),

բ) դրամի փոխարկումը դոլարով ֆիրմային պետք է շահույթ ապահովի դոլարներով և ոչ թե դրամներով:

Արժութային համակարգի կարևորագույն տարրերից մեկը արժութային կուրսն է, որը ցույց է տալիս մի երկրի արժույթի գինն արտահայտած մի այլ երկրի արժույթով: Գոյություն ունի արժութային կուրսի սահմանման երեք կարգ.

- ըստ ոսկյա ստանդարտի,
- փոխարժեքների սահմանված կուրսերի համակարգի,
- փոխարժեքների լողացող կուրսերի համակարգի, որը տատանվում է պահանջարկից և առաջարկից կախված:

*Ոսկյա ստանդարտը*, որը միջազգային առևտրում տիրապետող է եղել 1879-ից, ենթադրում էր արժույթի կայուն կուրս: Այն հիմնված էր դրամական միավորի ոսկու պարունակության հարաբերակցության, այսինքն ոսկու պարիտետի ( հավասարության) վրա: Այսպես՝ եթե անգլիական ֆունտ ստերլինգի ոսկու պարունակությունը հավասար էր 1/4ունցիա ոսկու ( 1 տրոյական ունցիան հավասար է 31,1 գրամի) , իսկ ԱՄՆ-ի դոլարը՝ 1/20-ի, ապա դրանց փոխարժեքը հավասար կլինի 1:5, այսինքն՝ 1 ֆունտ ստերլինգը հավասար է 5 դոլարի:

Ոսկյա ստանդարտն ըստ էության համաշխարհային շուկայում կատարում էր ավտոմատ կարգավորիչի դեր: Ոսկու որոշակի քանակի հետ թղթադրամի փոխանակության բանկի պարտավորությունը պրոցեսները դարձնում էր վերահսկելի և հնարավորություն չէր տալիս մեծացնել դրամական շրջանառության մասշտաբներն ու խթանել ին-

ֆլյացիան: Այդ համակարգի առավելությունն այն էր, որ նրա կայունությունը նվազեցնում էր անորոշությունը և ռիսկը՝ նպաստելով միջազգային առևտրի ընդլայնմանը: Միաժամանակ այն զերծ չէր նաև որոշակի թերություններից: Նախ տվյալ երկիրը փաստորեն զրկված էր ինքնուրույն դրամական քաղաքականություն վարելու հնարավորությունից , կապված օտարերկրյա արժույթի պահանջարկի և առաջարկի փոփոխությունների հետ, և ի վերջո ոսկյա ստանդարտը գործում էր, քանի դեռ երկիրը չի սպառել իր ոսկու պաշարները:

Որոշակի տնտեսական ու քաղաքական պատճառների արդյունքում ոսկու ստանդարտի համակարգը սկսում է քայքայվել: Առաջին համաշխարհային պատերազմի և հատկապես 1929-1933թթ. Մեծ ճգնաժամի արդյունքում գործնականում բոլոր մեծ երկրները հրաժարվում են ոսկու ստանդարտից: Եվ արդեն 30-ական թվականներին արժութային համակարգը տրոհվում է ենթահամակարգերի՝ ստեռլինգային, դոլարային և այլն: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ միջազգային հաշվարկները հիմնականում կրում էին անկանխիկ բնույթ, ծախսերի մարումը կատարում էին ապրանքներով ու ծառայություններով: Սակայն արդեն 1944թ.-ին ԱՄՆ-ի Բրետոն-Վուդս քաղաքում տեղի է ունենում միջազգային համաժողով, որտեղ ընդունվում են միջազգային արժութային հարաբերությունները կարգավորող որոշակի համաձայնություններ: Դրանք ստացան «Բրետոն-Վուդսյան» անվանումը: Այդ համակարգը շատ չէր տարբերվում ոսկե ստանդարտին բնորոշ արժույթների հաստատագրված փոխարժեքների սկզբունքից, որտեղ որպես ռեզերվներ հանդես էին գալիս ոսկին և դոլարը: Համաձայնությունը ստորագրած երկրները որոշում ընդունեցին ստեղծել փոխկապակցված արժութային փոխարժեքների համակարգ: Բրետոն-Վուդսյան համաժողովում ստեղծվում է միջազգային արժութային հիմնադրամը (ՄԱՀ), որտեղ դոլարն ընդունվեց որպես համաշխարհային դրամական միավոր, որպես մյուս երկրների համեմատությամբ ավելի ուժեղ և կայուն արժույթ: Դոլարն ըստ էության ճանաչվեց որպես ոսկու փոխարինիչ (1 ունցիա ոսկին գնվում և վաճառվում էր 35 դոլարով): ԱՄՆ-ը իր վրա պարտականություն վերցրեց ոսկու գինը այդ մակարդակի վրա պահելու և առանց սահմանափակումների դոլարի ցանկացած քանակություն ոսկու հետ փոխանակելու վերաբերյալ ( այդ հնարավորությունը տրված էր միայն կենտրոնական բանկերին): Սակայն

միջազգային առևտրի ֆինանսական վիճակը ոչ միշտ է ունեցել հարթ ու կայուն բնույթ: Տարիների ընթացքում ԱՄՆ-ի վճարային հաշվեկշիռը բացասական էր, ինչն էլ դժվարացնում էր կատարելու համաշխարհային կարգավորիչի ֆունկցիան: Բացի դրանից ոսկու պաշարների աճը սկսեց ետ մնալ միջազգային առևտրի և ֆինանսական գործառնությունների աճող ծավալներից (ոսկու մի որոշակի մասը օգտագործվում է ոսկերչական իրերի պատրաստման համար, մեծացան գիտատեխնիկական նպատակով նրա օգտագործման ծավալները): Մի իրողություն ևս. արտասահմանյան երկրներում դոլարի քանակության ավելացման հետ ԱՄՆ-ի ոսկու պաշարները սկսեցին աստիճանաբար նվազել:

1971-ին Բրետոն-Վուդսյան համակարգը, որն սկսել էր գործել 1947թվականից, դադարեց աշխատելուց և վճարային հաշվեկշռի հսկայական պակասորդի պայմաններում ԱՄՆ-ի կառավարությունը չեղյալ համարեց դոլարի ոսկով փոխարկելիությունը:


Շատերը հրաժարվեցին կայուն պարիտետներից, իրենց արժույթների համար սահմանելով լողացող կուրսերի սկզբունքը: Համաշխարհային փողի դեր սկսեցին կատարել ազգային և կոլեկտիվ արժույթները: Ոսկին դադարեց միջազգային հաշվարկների ժամանակ օգտագործվելուց: Դառնալով առ ու ծախի առարկա, նրա գինը 1980թ. հասավ 800 դոլարի (1 ունցիայի դիմաց), հետագայում կայունանալով և իջնելով 400 դոլարի:

Միջազգային արժութային համակարգում կարևոր երևույթ է 1999 թվականին միասնական եվրոպական արժույթի՝ եվրոյի հանդես գալը:

Այժմ *լողացող արժույթի մասին*. Լողացող արժութային կուրսերի պայմաններում, ինչպես և ամեն մի ուրիշ գին, որոշվում է պահանջարկի և առաջարկի շուկայական ուժերի ազդեցությամբ: Արտասահմանյան արժույթի նկատմամբ պահանջարկը որոշվում է ներմուծվող ապրանքների ու ծառայությունների նկատմամբ երկրի ունեցած պահանջարկով, զբոսաշրջիկների ծախսերով, երկրի կողմից կատարվող տարբեր վճարումներով և այլն: Արժույթի առաջարկի չափերը որոշվում են երկրի արտահանման ծավալներով, փոխառություններով, որը ստանում է երկիրը և այլն:

Ազատ լողացող կուրսերի պայմաններում Կենտրոնական բանկը չի միջամտում արժութային շուկայի գործունեությանը, և հավասարակշռված կուրսը սահմանվում է շուկայական ուժերի ազդեցության ներ-

քո: Այսպես, եթե կրճատվում է հայրենական ապրանքների սպառումը և մեծանում ներմուծումը, ապա տեղի է ունենում արժույթի նկատմամբ պահանջարկի աճ, որը կարող է հանգեցնել նրա արժեզրկմանը: Ազգային ապրանքների արտահանումը կարող է տանել արժույթի առաջարկի աճին և նրա թանկացմանը (տես գրաֆիկ 15.2):



Արտասահմանյան արժույթի նկատմամբ պահանջարկն ու առաջարկը

Գրաֆիկ 15.2

Արժույթի կուրսի դինամիկայի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ազգային եկամուտը և արտադրության ծախսերի մակարդակը, փողի իրական գնողունակությունը և ինֆլյացիայի մակարդակը երկրում, տոկոսադրույթի մակարդակը, վճարային հաշվեկշռի վիճակը, համաշխարհային շուկայում վստահությունը արժույթի նկատմամբ և այլն:

Հետևաբար ազգային արժույթների փոխանակությունը ոչ թե զուտ տեխնիկական հարց է, այլ միջազգային առևտրի անհրաժեշտ պայման: Միջազգային առևտուրը կարող է իրականացվել մաս ապրանքափոխանակության (բարտերային) ձևով, որը սակայն սովորաբար կատարվում է արժութային պաշարների բացակայության դեպքում: Երկար ժամանակ արժույթների փոխանակությունն իրականացվում էր, այսպես կոչված, «սահմանված արժութային կուրսերով», երբ ազգային դրամական միավորների հարաբերակցությունը սահմանվում և պահպանվում էր պետությունների կողմից: Արդի պայմաններում, ինչպես արդեն նկատել ենք, երկրների մեծ մասում ազգային արժույթների փոխանակությունը տեղի է ունենում «լողացող արժութային կուրսերով», այսինքն արտասահմանյան արժութային շուկաներում պահանջարկի և առաջարկի

ազդեցությամբ տարերայնորեն ձևավորվող գներով: Եթե, օրինակ, արտարժույթի շուկայում առևտրական գործարքների օրը 1 միլիոն դոլարի դիմաց տրվի 100 միլիոն դրամ, ապա 1 դոլարը կարժենա 100 դրամ, և ընդհակառակը, եթե 100 միլիոն դոլարի դիմաց տրվի 1 միլիոն դրամ, ապա այս դեպքում 1 դրամը կարժենա 100 դոլար:

Այսպիսով, որքան մեծ է ազգային արժույթի նկատմամբ արտասահմանյան ֆիզիկական և իրավաբանական անձանց պահանջարկը, այնքան արժույթային կուրսը բարձր է, իսկ որքան մեծ է ազգային արժույթի առաջարկը, այնքան նրա կուրսը ցածր է:

Տարադրամի բորսայում առաջանում են նաև այնպիսի իրավիճակներ, երբ կառավարությունը, նպատակ ունենալով պահպանելու ազգային արժույթի կուրսը (կամ արտասահմանյան արժույթի, որը կախված է կոնկրետ իրավիճակից), իրականացնում է «արժույթային ինտերվենցիա» (օրինակ, որպեսզի պահպանվի հայկական դրամի կուրսը, Հայաստանի Կենտրոնական բանկը պետք է արժույթային շուկայում մեծացնի դոլարների առաջարկը: Նկատենք, որ դա թանկարժեք և սակավ կիրառվող գործառնություն է):

Հարց է առաջանում, թե ինչպես է որոշվում ազգային արժույթի այս կամ այն հարաբերակցությունը: Կուրսերի հարաբերակցության որոշման համար պահանջվում է, որ համադրենք երկու երկրների սպառողական ապրանքների պայմանական «զամբյուղի» գները: Եթե օրինակ Հայաստանում այդպիսի զամբյուղն արժե 50.000 դրամ, իսկ ԱՄՆ-ում 100դոլար, ապա նշանակում է, որ 1 դոլարը հավասար է 500 դրամի: Տվյալ կախվածությունը կարելի է արտահայտել բանաձևով.

$$r = \frac{P}{P_1},$$

որտեղ  $r$  - ը արժույթի կուրսն է կամ արտասահմանյան փողի գինը,

$P$  - ն գների մակարդակը մեր երկրում,

$P_1$  - ը գների մակարդակն արտասահմանյան երկրում:

Կարելի է թվարկել բազմաթիվ պատճառներ (այդ թվում նաև քաղաքական), սակայն հիմնականն այն է, որ տվյալ երկրի արժույթի նկատմամբ պահանջարկն արտահայտում է տվյալ երկրի ապրանքների նկատմամբ արտասահմանյան երկրների պահանջարկը: Եթե արտասահմանյան գնորդները տվյալ երկրի ապրանքներից խույս են տալիս,

ապա նրանք նույն ձևով խույս են տալիս նաև տվյալ երկրի արժույթից: Հետևապես, փոխարկելի արժույթ ունենալու համար առաջին հերթին պետք է մտածել արտադրության մասին:

Ազգային փողի արժույթային կուրսի իջեցումը կոչվում է «դեվալվացիա», իսկ բարձրացումը՝ «ռեվալվացիա»:

Քանի որ արժույթների հարաբերակցությունը ոչ միայն արտահայտում է, այլև իր ազդեցությունն է ունենում արտահանման և ներմուծման գործարքների վրա, ուստի դեվալվացիան և ռեվալվացիան ունենում են տարբեր հետևանքներ:

Արժույթային կուրսի իջեցում նշանակում է, որ, օրինակ, այժմ 1 դոլարը փոխանակվում է ոչ թե 300, այլ 600 դրամով: Արդյունքում դոլարների նույն գումարով Հայաստանի շուկայում կարելի է գնել կրկնակի անգամ շատ ապրանքներ: Շահավետ է դառնում արտահանումը, որն ազգային արժույթի դեվալվացիայի ժամանակ մեծանում է: Ընդհակառակը, դրամի արժույթային կուրսի բարձրացումը նշանակում է, որ այժմ էժանացել են արտասահմանյան ապրանքները, քանի որ դրամի նույն քանակությամբ կարելի է ձեռք բերել արտասահմանյան ապրանքների ավելի մեծ քանակություն: Հետևապես, ռեվալվացիան խթանում է ներմուծումը:

Այսպիսով, դեվալվացիայի ժամանակ շահավետ է դառնում արտահանումը, իսկ ռեվալվացիայի ժամանակ՝ ներմուծումը: Քանի որ ցանկացած երկրի համար կարևոր է ինչպես ներմուծումը, այնպես էլ արտահանումը, ապա ազգային փողի արժույթային կուրսի կարգավորման ժամանակ կառավարությունն անմիջականորեն կարող է ազդել արտահանման և ներմուծման ծավալների վրա, այն օգտագործելով արտաքին առևտրի պակասորդի հաղթահարման նպատակով:

Բոլոր վճարային հարաբերությունների տարեկան արդյունքն արտահայտվում է «վճարային հաշվեկշռում»: Վճարային հաշվեկշռի հիմնական տարրը «առևտրային հաշվեկշիռն» է, որը ներկայացնում է ազգային արտահանության և ազգային ներմուծման մեծությունների տարբերությունը: Սակայն, բացի առևտրային հաշվեկշիռից, վճարային հաշվեկշիռը ներառում է նաև ինվեստիցիաների, փոխառությունների և տոկոսների, մատուցվող ծառայությունների (տրանսպորտային, փոստային), թոշակների, ժառանգության, օտարերկրյա աշխատողների աշխատավարձի, զբոսաշրջիկության սալդոն (մնացորդը՝ տարբերությունը):

Եթե արտասահմանից տվյալ երկիր մուտք են եղել ավելի շատ դրամական միջոցներ, քան արտահոսել են, ապա առկա է դրական վճարային հաշվեկշիռ, որը թույլ է տալիս տարբերության չափով ձեռք բերել արտասահմանյան արտարժույթ: Իսկ եթե երկրից արտահոսել են ավելի շատ դրամական միջոցներ, քան մուտք են եղել արտասահմանից, ապա առկա է բացասական (պակասորդային) վճարային հաշվեկշիռ, որը ենթադրում է տարբերության փոխհատուցում ազգային արժույթի կամ էլ ոսկու պահուստների մի մասի հաշվին:

Հարկ է նկատի ունենալ, որ առևտրային հաշվեկշռի համար կարևոր նշանակություն ունի արտասահմանյան բանկերի վստահությունը տվյալ երկրի ազգային արժույթի նկատմամբ: Եթե այդ վստահությունը պակասում է, ապա սկսվում է ազգային արժույթի զանգվածային «արտանետում», և նրա կուրսը ընկնում է, դրանով իսկ ավելի սրելով վճարային հաշվեկշռի պակասորդը:

Պետությունը տնօրինում է միջոցների, որոնք անհրաժեշտության դեպքում ապահովում են արտասահմանյան արտարժույթի ներհոսքը. դա ազգային բանկերում տոկոսադրույթի բարձրացումն է: Բարձր տոկոսադրույթը օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ինվեստիցիաները դարձնում է շահավետ: Նրանք սկսում են գնել տվյալ երկրի ազգային արժույթը, որը բերում է ազգային արժույթի կուրսի բարձրացմանը, սակայն դժվարացնում է ապրանքների արտահանումը:

## ԳԼՈՒԽ 16. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Տնտեսագիտական գաղափարներն այն միջավայրի արդյունքն են, ուր դրանք առաջանում են:

XIII դարի վերջերից և հատկապես XIV դարից սկսած Եվրոպան արթնանում է դարավոր անշարժությունից: Սկսվում է ձևավորվել տնտեսական նոր կուլտուրա: Փոխվում է նյութական քաղաքակրթությունը: Հասարակության ֆեոդալական անջատվածությունը փոխարինվում է կենտրոնացված պետական իշխանությամբ: Պետությունը դառնում է ազգային տնտեսության կարգավորողը:

Աշխուժանում է ազգային առևտուրը: Հին աշխարհը ճաշակում է առևտրի բերած շահը, նրան մղելով նոր գայթակղությունների ու նոր ծովային ուղիներ հայտնագործելուն: Համաշխարհային ապրանքաշրջանառության համար ուրվագծվում է կապերի ու փոխազդեցությունների մի ամբողջ համակարգ, փոխում՝ այդ համակարգում տարբեր երկրների դիրքը:

Տարբեր երկրներում ի հայտ են գալիս առաջին տնտեսագիտական աշխատությունները, որոնք նպատակ ունենին բացատրություն տալու տնտեսական կյանքի բերած փոփոխություններին: Դրանց հեղինակները Եվրոպայի նոր տնտեսական պայմանների վաղ տնտեսագետներն էին՝ մերկանտիլիստները, որոնք սկզբնավորեցին տեսական տնտեսագիտությունը:

Մերկանտիլիզմ (իտալերեն «mercante» - առևտրական) հասկացությունն առաջին անգամ շրջանառության մեջ են դրել ֆիզիոկրատները: Մերկանտիլիզմի տնտեսական փիլիսոփայության հայտնի ներկայացուցիչներն էին Անգլիայում Թոմաս Մենը (1571-1641), Վիլիամ Պետին (1623 -1687), Ֆրանսիայում Անտուան Մոնկրետյեն (1575 –1621, նրա շնորհիվ «քաղաքատնտեսություն» անվանումը առաջին անգամ դրվում է գործածության մեջ), Ժան Բատիստ Կոլբերը (1619 - 1683), Իտալիայում Գասպարո Սկարուֆին (1519 - 1584), Անտոնիո Սերան (1613) և ուրիշներ:

Մերկանտիլիզմի ընդհանուր պոստուլատն այն էր, որ հարստության աղբյուրն արտաքին առևտուրն է, իսկ նրա ունիվերսալ ձևը՝ ազնիվ մետաղները:

Ժամանակագրական առումով առանձնացվում են մերկանտիլիզմի զարգացման երկու հատվածներ՝ վաղ, որին բնորոշ էր դրամական հաշվեկշռի քաղաքականությունը և ուշ, որը կողմ էր առևտրական հաշվեկշռին: Վաղ շրջանի մերկանտիլիզմը կամ մոնետար համակարգը (XVI դար) արգելում էր ազնիվ մետաղների արտահոսքը երկրից, խրախուսում ներմուծումը, արդարացում կուտակման բոլոր հնարավոր միջոցները: Տնտեսական քաղաքականությունն ուներ հստակ արտահայտված գանձարանային բնույթ:

«Առևտրական հաշվեկշռի» (XVII դար) տեսությունը ենթադրում է սեփական արտադրության զարգացման հիման վրա արտաքին առևտրի ընդլայնում, հետևապես, նաև շուկաների գրավում և հովանավորչական միջոցառումներ՝ ներմուծվող ապրանքների նկատմամբ: Հետևապես, փողը անհրաժեշտ է ոչ թե կուտակել, այլ նորից դնել շրջանառության մեջ՝ ավելի շատ «բազմանալու համար»:

Հատկապես, XVII դարի կեսերին մի շարք մտածողների (Վիլիամ Պետի, Ջոն Լոկ, Դիդլեյ Նորս) հայացքներում տեղի էին ունենում տնտեսագիտական մտքի դիտարկումների խորացումներ, որոնք, որպես նոր մտածողության տարրեր, միաժամանակ սկզբնավորում են մերկանտիլիզմի առաջադրույթների հաղթահարումը:

*Ֆիզիոկրատական* միտքը իբրև դպրոց Ֆրանսիայում ձևավորվել է 18-րդ դարի կեսերին, որպես ռեակցիա մերկանտիլիստական քաղաքականության հանդեպ: «Ֆիզիոկրատիա» բառն ունի հունական ծագում, որը նշանակում է «բնության իշխանություն»: Շնորհիվ մերկանտիլիզմի Ֆրանսիան դարձել էր Եվրոպական մայրցամաքի առևտրական և արդյունաբերական ազգերից մեկը: Բայց դա նաև կորուստների ժամանակաշրջան էր: Անտեսված էին գյուղատնտեսության շահերը: Այն հասել էր ծայրագույն քայքայման: Ի հայտ եկան մտածողներ, որոնք երկրի և ազգի հիմքը կապում էին արտադրության այդ ճյուղի հետ: Սակայն որպես ուսմունք այն համակարգվեց Ֆրանսուա Քենեի (1694-1774) կողմից: Ազգային հարստության աղբյուրը գյուղատնտեսությունն է, որտեղ էլ իրացվում են տնտեսական շահերը: Գյուղատնտեսությունը ոչ միայն նոր նյութի, այլ նաև մարդկանց կենսամիջոցների միակ աղբյուրն է,

որից «կախված է պետության բոլոր ճյուղերի կառավարումը»: Եթե փոխանակությունը կամ առևտուրը «հարստություն չի ծնում» և «պարզապես անհրաժեշտ է պահանջմունքների բավարարման համար», արդյունաբերության մեջ տեղի է ունենում գյուղատնտեսության մեջ ստեղծած արժեքների գումարում, ապա գյուղատնտեսության մեջ՝ հարստության բազմապատկում: Այդ ավելցուկը Ֆ. Քենեն անվանում է «զուտ կամ մաքուր արդյունք», որը պայմանավորված է բնության արտադրողական ֆունկցիայով:

Տնտեսական պրոցեսների վերաբերյալ ֆիզիոկրատների տեսակետներն արտահայտվում են շրջանառության, հասարակական արդյունքի և բաշխման գաղափարներում: Դրանք խտացված են Ֆ. Քենեի «տնտեսական աղյուսակում»: Այն ցույց է տալիս երեք դասակարգերի՝ արտադրողական (ֆերմերներ), հողասեփականատերերի և անպտուղ դասակարգերի (արդյունաբերողների) տարեկան հարստությունը և շրջանառությունը.

- ֆերմերները հողասեփականատերերից փողով վարձակալում են հողը և աճեցնում բերքը,

- սեփականատերերը ֆերմերներից գնում են գյուղատնտեսական արդյունքներ, իսկ արդյունաբերողներից՝ արդյունաբերական ապրանքներ, որի հետևանքով հողի վարձակալության դիմաց ստացած փողի մի մասը անցնում է ֆերմերներին և արհեստավորներին,

- ֆերմերները արդյունաբերողներից գնում են արդյունաբերական ապրանքներ,

- արդյունաբերողները ֆերմերներից գնում են գյուղատնտեսական ապրանքներ:

Եվ այդպես, տնտեսական գործնթացը պարբերաբար կրկնվում է :

Ֆ. Քենեի «տնտեսական աղյուսակը» տնտեսության «ստացիոնար վիճակի» արդյունքների և փողի անընդհատ շրջանառող հոսքերի առաջին վերլուծությունն է:

Տնտեսական կյանքը նույնպես ենթակա է «բնական կարգի» սկզբունքին և այդ բնական ընթացքին պետությունը չպետք է միջամտի: Լինելով ավելի լայնատես և ազատ Ֆ. Քենեի պահպանողական նկրտումներից, Ան Ռորեր Ժակ Տյուրգոն (1727-1781) տնտեսական կյանքի ամեն մի ռեգլամենտացիա համարում էր «աբսուրդ»: Որպես Ֆրանսիայի ֆինանսների գլխավոր վերահսկողի նրա կարճատև գործունեությունը նշանավորվեց՝ հարկերի, հացի առևտրի, ցեխերի մասին մի

շարք ռեֆորմների իրականացումով, որոնք ուղի էին հարթում տնտեսական ազատության համար: Շուտով այդ ռեֆորմները չեղյալ են համարվում: Սակայն «այնպիսի մի ժամանակ, երբ միայն ամենավճռական ռեֆորմը կարող է կանխել հեղափոխությունը, ռեֆորմի չհաջողված փորձը ընդունակ է միայն արագացնելու այն»: Շուտով վրա է հասնում ֆրանսիական մեծ հեղափոխությունը:

1776 թվականին լույս է տեսնում մի աշխատություն՝ «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» վերնագրով: Այդ գիրքը տնտեսագիտության ընդհանուր հիմքերը շարադրող առաջին լիարժեք աշխատությունն է, որի հեղինակն էր շոտլանդացի Ադամ Սմիթը (1723-1790): Սկզբնավորվում է *դասական տնտեսագիտությունը*, հայտնի հետևորդներ ունենալով՝ Ռոբերտ Մալթուսին (1766-1834), Ժան Բատիստ Սեյին (1768-1832), Դավիթ Ռիկարդոյին (1772-1823), Ջոն Ստյուարտ Միլին (1806-1873) և ուրիշների:

Սկզբում, Գլազգոյի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր Ա. Սմիթը ավելի շատ հայտնի էր «Բարոյական զգացմունքների տեսությունը» ուսումնասիրությամբ, որտեղ վեր է լուծվում մարդու բարոյական աշխարհը: Վերջինիս հիմքում դրված են համակրությունների զգացմունքը կամ ալտրուիստական մոտիվները, անհատի ապրումներին մասնակից լինելը: Այդ կոնցեպցիան իր հետագա զարգացումը ստանում է «եսասիրության» մեջ: Բացարձակ հունանիզմ գոյություն չունի, որևէ մեկի նկատմամբ կարեկցանքը «բոլորովին չի բխում ամբողջ հասարակական բարեկեցության նկատմամբ մեր հոգատարությունից», այլ միայն էսասիրությունից, քանի որ «դեպի հարստություն տանող ուղին և դեպի առաքելություն տանող ուղին դժբախտաբար հաճախ լինում են մեկը մյուսին հակասող»: Ա. Սմիթի մոտ նույն անհատն է՝ մի դեպքում ալտրուիստական, մի այլ դեպքում՝ անձնական շահի, օգտակարության մոտիվներով: Դրանք իրար չեն հակասում, այլ իրար լրացնում են, դրանք «էթիկական» են և համապատասխանում են բնականին, այսինքն՝ մարդկային բնությանը: Տնտեսական մարդու պահվածքը կառուցված է էսասիրության, անձնական շահի վրա, որը մարդը կարող է բավարարել ոչ այլ, քան փոխադարձ ծառայությունների ձևով. «Տուր ինձ այն, ինչը ինձ անհրաժեշտ է և դու կստանաս այն, ինչը քեզ է անհրաժեշտ»:

Հասարակական շահը անձնական շահերի գումարն է: Վերջիններիս բավարարումը ենթադրում է ընդհանուր հասարակական շահի բավարարումը: Իսկ այդ ներդաշնակությունն իրականացվում է ազատ մրցակցության կամ «անտեսանելի ձեռքի» միջոցով: Տնտեսական մարդը՝ իր էսասիրական մղումներով, և անտեսանելի ձեռքը բխում ու համապատասխանում են բնական կարգին: Եթե հասարակական կառուցվածքում վերացնենք արդյունաբերությունը «խթանող և կաշկանդող» համակարգերը՝ այսինքն, պետության միջամտությունը, ապա կմնա «տնտեսական ազատության մի պարզ ու թեթև համակարգ»: Չկա ավելի զորեղ ինքնակարգավորիչ ուժ, քան «բնական ազատության համակարգը», «laissez faire» սկզբունքը: «Թող ընթանա, ինչպես ընթանում է» և «աշխատող մրցակցությունը» կկարգավորի զները, ռեսուրսների և արդյունքների բաշխումը և այլն: Աշխատանքի բաժանման պայմաններում ամեն մարդ «հայտնի չափով դառնում է առևտրական, իսկ ինքը՝ հասարակությունը, վեր է ածվում առևտրական միության»: Անհատական շահերի իրացումը կատարվում է ոչ այլ ձևով, քան փոխանակության: Հակվածությունը վերջինիս նկատմամբ բխում և համապատասխանում է մարդու բնությանը. «Ոչ ոք երբևէ չի տեսել, որ շունը շան հետ ոսկոր փոխանակի»:

Ա. Սմիթի աշխատության ամբողջ շարադրանքը հանգում է այն հարցին, թե ինչպիսի պայմաններում և ինչ ձևով մարդիկ կարող են հասնել առավելագույն բարեկեցության: Հասարակության հարստությունը ստեղծվում է նյութական արտադրության մեջ: Այն կախված է այդ ճյուղերում զբաղված աշխատողների թվից և աշխատանքի արտադրողականության աստիճանից: Վերջինիս բարձրացման գլխավոր գործոնը աշխատանքի բաժանումն է, որն էլ սահմանափակված է շուկայի զարգացվածությամբ. որքան շուկան զարգացած է, այնքան պայմանները նպաստավոր են աշխատանքի բաժանման ու արտադրության մասնագիտացման համար:

Ա. Սմիթի աշխատության հրատարակման հաջորդ երկու տասնամյակները ավելի շուտ նրա առաջադրած դրույթների յուրացման տասնամյակներ էին: Եվ ասիա 1798-ին լույս է տեսնում Ռոբերտ Մալթուսի «Փորձ ազգաբնակչության օրենքի մասին» կապված հասարակության ապագա կատարելագործման հետ» աշխատությունը, որը հասարակական միտքը նույնքան շարժեց, որքան և Ա. Սմիթի աշխատությունը: Ռո-

բերտ Մալթուսի ազգաբնակչության օրենքի մասին ամենաընդհանուր գծերով արդեն խոսել ենք «Տնտեսական աճը» թեմայում: Նկատենք միայն, որ այն նպատակ է հետամտում բնակչության և գոյամիջոցների միջև սահմանելու այնպիսի հարաբերակցություն, որը դրանց միջև չի առաջացնի խզվածություն, հետևապես, նաև պայքար, իսկ հավասարակշռվածությունը հենց ինքը տնտեսական հավասարակշռվածության իրավիճակն է: Նրա հայացքներն ավելի շատ ելք են որոնում դեպի լավատեսություն, քան հոռետեսություն, ինչի մեջ նրան հաճախ մեղադրում են: Ժամանակակից պայմաններում Մալթուսը ավելի շատ «դարձել է մի խորհրդանիշ, որը զգուշացնում է աշխարհին գերբնակեցվածությունից»:

Ռ. Մալթուսը բազմաթիվ այլ առաջադրույթների հեղինակ է: Ինչպես, օրինակ, «էֆեկտիվ պահանջարկի» վերաբերյալ գաղափարների, տնտեսագիտության մեջ վերլուծական մաթեմատիկայի կիրառման օգտակարության մասին և այլն:

Ֆրանսիացի տնտեսագետ Ժ. Բ. Սեյը առավելապես հայտնի է իրացման կամ շուկաների տեսությամբ (այդ մասին խոսվել է «Ամբողջական ծախսերի դասական և քայնայան տեսությունները» թեմայում):

Դասական տնտեսագիտության հայտնի անուններից է Դավիթ Ռիկարդոն, որին լայն ճանաչում բերեց «Քաղաքատնտեսության և հարկային համակարգի սկզբունքները» (1817) աշխատությունը: Ա. Սմիթին նա համարում էր իր ուսուցիչը: Սակայն աշխարհայեցության ընդհանուր նստվածքների իմաստով Դ. Ռիկարդոն ավելի շատ կապված էր անգլիացի մտածող Բենթամի ուտիլիտարիստական փիլիսոփայությանը: Օգտակարությունը ուտիլիտարիզմի գերագույն սկզբունքն է, բարոյականության և մարդկային արարքների չափանիշը: Բնական կարգի և ուտիլիտարիզմի տեսական քննության ոլորտները համընկնում են այն հարցում, թե ամեն ինչ ենթակա է անհատականության սկզբունքին: Անհատի ազատության տարածական սահմանները ստանում էին տարբեր լուծումներ: Ֆիզիոկրատների հայեցության մեջ «հասարակությունը դեռևս իշխում էր անհատի վրա, կարծես թե որոշելով վերջինիս հատկացվող ազատության չափը», Ա. Սմիթը՝ անհատը և հասարակությունը դնում է նույն գծի վրա որպես «իրավահավասար տարրեր», և արարչի «անտեսանելի ձեռքը» ապահովում է դրանց միջև ներդաշնակությունը, իսկ ուտիլիտարիստների, ինչպես նաև Դ. Ռիկարդոյի համակարգում «հա-

սարակությունն ամբողջապես ենթարկված է անհատին և տարրալուծված է նրանում»: Հասարակությունը ներկայացնում է ձևական միասնություն, այն կազմող անհատների մեխանիկական գումար: Հենց այդ ոգով է Դ. Ռիկարդոն ընդհանրացնում, թե ձգտումը անձնական շահին զարմանալիորեն համապատասխանում է բոլորի ընդհանուր շահին:

Դ. Ռիկարդոն իր ավարտին է հասցնում Ա. Սմիթի առաջադրած աբստրակտ մեթոդը:

Սույն աշխատության առաջադրույթի շրջանակներից դուրս է անդրադառնալու տնտեսական բազմաթիվ հարցերի նրա քննությանը: Նկատենք միայն, որ նրան է պատկանում «համեմատական առավելությունների» տեսությունը, որը տեսական հիմք է հանդիսացել ազատ առևտրի (ֆրիտրիդերականության) քաղաքականության համար, ինչը ժամանակակից տարբերակներով օգտագործվում է «բաց տնտեսության» քաղաքականության մշակումների և հիմնավորման համար (այդ մասին տես՝ «Միջազգային առևտուր» թեման):

19-րդ դարասկզբին դասական տնտեսագիտության դրույթները ներկայանում էին որպես քսիոմատիկ: Դրանք ենթակա չէին քննաբանության: Մարդիկ պետք է ճանաչեին դասականների առաջադրած տնտեսական օրենքները և առաջնորդվեին դրանցով: Մինչդեռ տնտեսական կյանքի փոփոխությունները չէին զուգորդվում սոցիալական ներհակությունների թուլացմամբ: Երևույթները սկսեցին դրվել նոր չափումների: Շվեյցարացի տնտեսագետ Սիմոն դը Բիսմոնդու(1773-1842) ավանդապահ և ռոմանտիկ տնտեսական փիլիսոփայությունը իր հիմքում ուներ մանր արտադրությունը, որն իբր պիտի շտկեր առկա տնտեսակարգին բնորոշ արտադրության և սպառման, ազգային եկամտի և բնակչության աճի միջև անհավասարակշռությունները: «Ինդուստրիալ կապիտալիզմի քննադատը» իր ժամանակից առանձնացավ առաջադրելով սպառման աճ - ընդհանուր պահանջարկի աճ թեզը: Իսկ գերմանացի տնտեսագետ Ֆրիդրիխ Լիստը (1789-1846) առաջադրեց մեթոդաբանական նոր դրույթներ, որոնք պայմանավորեցին ամբողջ 19-րդ դարի տնտեսագիտական մտքի ուղեգծերը Գերմանիայի համար: Ֆ. Լիստը ձևակերպում է հայացքների այն տարրնթաց սահմանագիծը, որը նրան բաժանում է դասական տնտեսագիտությունից, վերջինիս համար բնորոշ դիտելով՝ «անհիմն կոսմոպոլիտիզմը», որը չի ճանաչում ազգայնականության եությունը և հաշվի չի առնում ազգային շահերը...

«անհոգի մատերիալիզմը», «քայքայիչ ինդիվիդուալիզմը»: Մինչդեռ, տնտեսագիտությունը պետք է ելակետ ունենա ազգային առանձնահատկության գործոնը՝ ի դեմս ազգային տնտեսության: Յուրաքանչյուր տնտեսական, պատմական և ազգային առանձնահատկությունների հաշվառում տնտեսագիտությանը տալիս է որոշակի իմաստ, այլ ոչ թե բոլորի համար վավերացնում համընդհանուր և վերացարկված օրենքներ: Հենց այդ էին ակնկալում հին ու նոր *պատմական դպրոցների* տեսաբաններ Վ.Ռոշերը(1817-1894), Բ. Հիլդեբրանդը (1812-1878), Գ. Շմուլերը(1838-1917), Կ. Բյուխերը (1847-1930), Վ. Ջոնսթրոնը (1863-1941) և ուրիշներ, որոնք կարևորելով պատմական մեթոդը, գտնում էին, որ տնտեսական կյանքը ոչ թե անհատների մեխանիկական զանգված է, այլ օրգանիզմ, որտեղ միաձուլված են իրավունքը, տնտեսությունը, բարոյականությունը, մշակույթը, աշխարհագրական և էթնիկական բազմաթիվ գործոններ: Այս իմաստով պատմական դպրոցը առաջադրեց նոր խնդիրներ, մի զգալի մասով պայմանավորելով XIX և XX դարերի սահմանագծում տնտեսագիտական մտքի մի նոր ուղղության՝ *ինստիտուցիոնալիզմի* սկզբնավորումը, որը պիտի վերանայեր տնտեսական պրոցեսների շարժիչ ուժերի վերաբերյալ ավանդական տեսությունները (Թորսթայն Վեբլեն, 1857-1929):

Տնտեսագիտական մտքի պատմության մեջ քչերին է հաջողվել ստեղծել համակարգ: Դրանցից մեկը գերմանացի տնտեսագետ Կարլ Մարքսն է (1818-1883): Նրա համակարգն ընդգրկում է բոլոր սոցիալական գիտությունները, ուստի հաճախ նրա տնտեսական գաղափարները հանդես են գալիս փիլիսոփայական, սոցիոլոգիական, պատմական գաղափարների հետ միասնության մեջ: Կ. Մարքսի տնտեսական ուսմունքը հիմնականում շարադրված է «Կապիտալ» աշխատության մեջ: Եթե Ա. Սմիթի աշխատության ոգին ուսմունքն է անտեսանելի ձեռքի մասին, ապա մարքսիստական դոկտրինայում հավելյալ արժեքի տեսությունն է: Վերջինս հանգում է հետևյալին. կապիտալիստական տնտեսաձևի պայմաններում ապրանք է հանդիսանում ոչ թե աշխատանքը, ինչպես կարծում էին դասական տնտեսագետները, այլ աշխատուժը: Կապիտալիստը ավանսավորում կան ներ է դնում արտադրության մեջ որոշակի գումարի փող՝ մի մասը արտադրության միջոցների, իսկ մյուսը՝ աշխատուժի գնման համար: Բայց արտադրության պրոցեսից նա ստանում է ավելի մեծ արժեք, քան սկզբնական ներդրածը: Այդ հակասու-

թյունը կապված է այն բանի հետ, որ աշխատուժը գնվում է մի արժեքով, որն ավելի փոքր է, քան ստեղծվում է նրա սպառման պրոցեսում: Այսինքն՝ բանվորը ստեղծում է ավելի մեծ արժեք, քան իր աշխատուժի արժեքն է: Նա աշխատանքային օրվա միայն մի մասն է (անհրաժեշտ աշխատաժամանակ) ծախսում իր աշխատուժի արժեքի համարժեքը՝ իր և իր ընտանիքի անհրաժեշտ կենսամիջոցների արժեքը, արտադրելու համար, աշխատօրվա մնացած մասը (հավելյալ աշխատաժամանակ) նա աշխատում է կապիտալիստի համար: Փոխանակությունը կատարվում է արժեքի օրենքին համապատասխան: Աշխատավարձը հավասար է աշխատուժի արժեքին: Հետևապես, մյուս եկամուտները՝ շահույթը, տոկոսը, ռենտան ոչ այլ ինչ են, քան անաշխատ եկամուտներ, որոնք ունեն մեկ ընդհանուր աղբյուր՝ հավելյալ արժեքը: Այնուհետև, ցույց է տրվում թե վերջինիս զանգվածը ինչպես է վերաբաշխվում կապիտալիստների տարբեր խմբերի միջև, ներդրած կապիտալներին համամասնական չափով: Հաճախ նրա բերած սխեմաները ունեն մտահայաց և ապրիորի թվային օրինակների տեսք, որոնք հեռու են իրական տնտեսական կյանքն արտահայտելուց:

Կ. Մարքսի տնտեսական ուսմունքում հասարակական կյանքի բոլոր շարժումները քննարկվում են տնտեսական գործոնի տեսանկյունից, այն դիտելով մեկնակետային: Ոչ միայն չեն ուսումնասիրվել մյուս գործոնների հետ տնտեսական գործոնի փոխներգործության կապերը, այլև դրանց ինքնուրույնության հարցը, ինչի հետևանքով տնտեսական գործոնը բացարձակացվել է և դարձել նախապաշարմունք: Իսկ այդպիսի մյուսապաշտական ուղղվածության մեջ «մարդ ազդակի» կեցությունն աղճատվում է, աղճատելով նաև մարդու զարգացման պատմության լուսաբանումը:

Կ. Մարքսի ուսմունքը ենթադրում է «եսասիրական մարդու» վերացումը: Նրա ապագա հասարակական շինությունը կառուցված է այն թեզի վրա, որը ենթադրում էր վերջ տալ «մասնավոր սեփականության կեղտին» (հայտնի տնտեսագետ Պրուդոնի ոգով): Իսկ եթե չկա մասնավոր սեփականություն, ապա հասարակությունը սկսում է գործ ունենալ արդեն «փորձառական, պատահական մարդու հետ»: Նրա ուսմունքի հիմքը դասակարգային պայքարն է, որը չի ճանաչում բարոյական ար-



ժեքներ և ամեն ինչ ենթարկված է հակադրությունների, կորուստների և բռնությունների անխուսափելիությանը:

XIX դարի 70-ական թվականները դարձան շրջադարձային տնտեսագիտության տեսության համար: Առաջադրված էին նոր պոստուլատներ: Այդ նոր ուղղության *մարժինալիզմի* (ծագել է ֆրանսիական բառից, որը նշանակում է սահմանային, լրացուցիչ) տեսաբաններն էին Ավստրիայում՝ Կարլ Մենգերը (1840-1921), Եվգենի Բեմ-Բավերկը (1851-1919), Անգլիայում՝ Ուլյամ Ջևոնսը (1835-1882), Շվեյցարիայում և Ֆրանսիայում՝ Լեոն Վալրասը (1834-1910), Ամերիկայում՝ Ջոն Բեյթս Կլարկը (1847-1938) և ուրիշներ: Ըստ մարժինալիստների, ապրանքի գինը որոշվում է ոչ թե դրա արտադրության վրա ծախսված աշխատանքի քանակով, ինչպես ենթադրում էին դասկան տնտեսագետները, այլ՝ գնորդի ապրանքի նկատմամբ ունեցած սուբյեկտիվ հոգեբանական առանձնահատկություններով՝ տվյալ ապրանքի ունեցած օգտակարությամբ: Իսկ օգտակարությունը կախված է պահանջմունքների համակարգից և սպառողի ունեցած ապրանքի պաշարից: Պահանջմունքները տարակարգվում են ըստ կարիքների չափանիշների: Օրինակ, սննդամթերքի կարիքն ավելի մեծ է, որպես առաջին կարգի պահանջմունք: Մյուս՝ երկրորդ, երրորդ, չորրորդ և այլ կարգի պահանջմունքներն ապահովվում են ապրանքներով, որոնց նկատմամբ մարդիկ համեմատաբար պակաս կարիք ունեն: Մյուս կողմից, տվյալ տեսակի յուրաքանչյուր հաջորդ ապրանքը սպառողի համար ունի ավելի ու ավելի պակաս օգտակարություն: Հետևապես, որքան տվյալ ապրանքի պաշարը մեծ է, այնքան յուրաքանչյուր հաջորդ միավորի օգտակարությունը պակաս է: Կարևոր նշանակություն է ստանում ոչ միայն պահանջմունքը, այլ նաև բարիքի հազվագյուտությունը, այսինքն՝ առաջնային նշանակության պահանջմունքները բավարարող բարիքները կարող են ունենալ ավելի ցածր արժեք, քանի որ դրանք շատ են: Եթե մեծանում կամ փոքրանում է առաջարկը, ապա մեծանում կամ փոքրանում է պահանջմունքների բավարարման աստիճանը, իսկ դրան զուգընթաց նաև բարիքների արժեքը: Վերջինս որոշվում է բարիքների սահմանային օգտակարությամբ, որը կարող է ստացվել տվյալ պաշարի դեպքում: Սուբյեկտը միշտ հրաժարվում է առավել պակաս նշանակության պահանջմունքները բավարարելուց: Այստեղից էլ դասականների ժամանա-

կից եկող այն հարցի պատասխանը, թե ինչու ավմաստը, որը չի տնօրինում մեծ օգտակարության, ունի ավելի մեծ արժեք: «Գինը, - գրում է Բեմ-Բավերկը,- սկզբից մինչև վերջ հանդիսանում է արժեքի սուբյեկտիվ որոշումների արդյունք» և քանի որ այն իր հիմքում ունի եսասիրական մոտիվ, ուստի կարող ենք շուկայական գինը անվանել սուբյեկտների միջև մրցակցության հետևանքով սուբյեկտիվ արժեքների բախումներից կազմավորված գին: Նշանակալից էր մարժինալիզմի ներդրումը կապված մի կողմից՝ տնտեսական երևույթների հոգեբանական ազդակների վերլուծության, իսկ մյուս կողմից՝ մաթեմատիկական մոդելների, հատկապես մակրոտնտեսական հավասարակշռության մաթեմատիկական մոդելների կառուցման առումներով:

1890 թվականին լույս է տեսնում «Տնտեսագիտության սկզբունքներ» վերնագրով մի աշխատություն, որի հեղինակին՝ քեմբրիջյան համալսարանի պրոֆեսոր Ալֆրեդ Մարշալին (1842-1924), անվանում են «ամենասինթետիկ» մտածողը ամբողջ տնտեսագիտական մտքի պատմության մեջ, որը նպատակ ուներ մի համակարգում զուգորդել դասական տնտեսագիտության և մարժինալիզմի տեսական դրույթները: Նրա սկզբնավորած դպրոցը հաճախ անվանում են քեմբրիջյան կամ *ներդասական* ուղղություն:

Տնտեսական գիտությունը չի օգտվում նյութի վերլուծության յուրահատուկ մեթոդներից: Վերջիններս ընդհանրական են նաև մյուս գիտությունների համար: Այս կամ այն մեթոդը կամ օգտագործվում է ինքնուրույն, կամ էլ մյուսների հետ զուգակցումների մեջ, որը կարելի է համեմատել շախմատային տախտակի հնարավոր զուգորդումների քանակի հետ: Թեև Մարշալը չէր բացառում «մաթեմատիկական լեզվի» հնարավորությունները տնտեսագիտության համար և օգտագործել է հատկապես ֆունկցիոնալ կախվածությունների բացահայտման առումով, այնուամենայնիվ այն չի արտահայտում այն գաղափարը, որ էկոնոմիկան պրոցես է:

Եթե ամենաընդհանուր ձևով բնութագրելու լինենք, ապա ամբողջ տնտեսական գիտությունը հանգում է պահանջարկի ու առաջարկի խնդրին, թե այդ երկու խումբ դրդապատճառներն «ինչպես են իրար հավասարակշռում»: Դա հատկապես դրսևորվում է գնի կազմավորման տեսության մեջ: Նկատի է առնվում մրցակցային պայմաններում կազմավորվող գինը: Մի կողմից՝ ամեն մի վաճառող ցանկանում է իր ապ-

րանքը վաճառել առավելագույն բարձր գնով, իսկ մյուս կողմից՝ ամեն մի գնորդ ցանկանում է այն գնել որքան հնարավոր է ցածր գնով: Վաճառողի գինը իր նվազագույն արժեքով որոշվում է արտադրության սահմանային ծախսերով: Գնորդի գինը իր առավելագույն արժեքով հանգում է այդ ապրանքի սահմանային օգտակարությանը: Գործարքը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև որ վաճառողի գինը չի համընկնում գնորդի գնի հետ: Ապրանքի այդպիսի քանակությունը կոչվում է «հավասարակշռված քանակություն», իսկ գինը, որով այն իրացվում է՝ «հավասարակշռված գին»: Այսպիսով, վաճառողի գինը սահմանվում է ըստ դասականների, իսկ գնորդի գինը՝ մարժինալիզմի սկզբունքներին համապատասխան: Արդյունքում, փաստորեն տեղի է ունենում երկու մոտեցումների յուրատեսակ համադրում:

Հավասարակշռված գինը առաջանում է պահանջարկի և առաջարկի կորերի հատման կետում, որը հաճախ անվանում են «Մարշալի խաչ»: Հավասարակշռված գնի բացատրության ժամանակ հարկ է ելակետ ունենալ ոչ թե մեկ, այլ մի քանի գործոնների փոխազդեցությունը: Վիճել այդ մասին, նշանակում է վիճել այն մասին, թե մկրատի դանակներից որն է կտրում թուղթը: Գինը, տվյալ շուկայում, պահանջարկի և առաջարկի միջև քանակական հարաբերակցության արդյունք է:

Գինը և պահանջարկի մեծությունը գտնվում են հակադարձ կախվածության մեջ. որքան գինը բարձր է, այնքան պահանջարկը ցածր է, և ընդհակառակը: Գինը և առաջարկը գտնվում են ուղիղ կախվածության մեջ՝ որքան գինը բարձր է, այնքան բարձր է առաջարկը:

Մարշալի կողմից շրջանառության մեջ է դրվում «պահանջարկի էլաստիկություն» հասկացությունը, որը ցույց է տալիս պահանջարկի և գնի փոփոխության ֆունկցիոնալ կախվածությունը: Մինչև 19-րդ դարի վերջերը ժամանակի գործոնն ըստ էության տնտեսագետների կողմից չի քննարկվել: Մարշալի կարծիքով, գնի և հավասարակշռության վրա կարճ ժամանակի կտրվածքով ավելի շատ հարկ է հաշվի առնել պահանջարկի ազդեցությունը, իսկ երկարատև և ժամանակի համար՝ արտադրության ծախսերի ազդեցությունը: Քենդրիջյան դպրոցի նեոդասական ավանդների գլխավոր շարունակողը դարձավ Արթուր Պիգուն (1877-1959):

XIX դարվերջի և XX դարասկզբի ռուս տնտեսագիտական մտքի վրա ունեցած ազդեցության առումով հաճախ հիշատակվում են Ա.Ֆ.Տու-

գան - Բարնովսկու, Ն.Դ.Կոնդրատևի և Ա.Վ.Չայանովի անունները: Նշված ժամանակաշրջանի ռուս տնտեսագիտական միտքը չէր բնորոշվում հստակ ուրվագծված դպրոցների առկայությամբ: Բայց այդ «ունիվերսալ» մտածողության մեջ առկա էին և մարքսիստական, և պատմական, և մարժինալիզմի և այլ ուղղությունների նստվածքները: Եթե Տ.Բարնովսկու (1865-1918) ներդրումը տնտեսության ցիկլային զարգացման պատճառների բացահայտումն է, մասնավորապես այն կապելով հասարակական արտադրության տարբեր ճյուղերի միջև գոյություն ունեցող անհամահասկան զարգացման փաստի հետ, ապա Ն.Դ.Կոնդրատևը (1892-1938) հայտնի է կոնյունկտուրայի մեծ ցիկլերի կամ երկարատև տնտեսական դինամիկայի տեսությամբ, իսկ Ա.Չայանովը (1888-1937) մանր գյուղացիական տնտեսությունների կայունության և կոոպերացիայի տեսությամբ:

Տնտեսագիտական մտքի պատմության մեջ հայտնի են անհատակա-նություններ, որոնք չեն տեղադրվում այս կամ այն դպրոցի հայեցության մեջ, նույնիսկ պայմանական բաժանման առումով: Ինչպես Դավիդ Յունի, այնպես էլ Իյոզեֆ Շումպետերի համար (1883-1950) հաճախ ավելի շուտ գծվում են առանձին հորիզոնականներ: Շումպետերին հաճախ անվանում էին ձեռնարկատիրության գաղափարախոս: Նա ուրվագծում է այդ սոցիալական ուժի «ստեղծագործական ֆունկցիաները, նրա հոգեբանական դիմանկարը»: Տնտեսական զարգացման շարժիչը ձեռնարկատերն է, որի միջոցով ինվեստիցիոն ցիկլը դրվում է շարժման մեջ: Հասարակության տնտեսական կյանքը ենթակա է ընդհանուր առաջադիմության օրենքին. « սոցիալական կյանքի տրանսֆորմացիան անընդմեջ պրոցես է, բայց ինքնին շատ դանդաղ»: Կապիտալիզմը « չի հանգում միայն նրան, որ տնային տնտեսուհին սիսեռի կամ լոբու իր ընտրությամբ կարող է ազդել արտադրության վրա», այն ենթադրում է «արժեքների համակարգ, հարաբերություն կյանքի նկատմամբ, որոշակի քաղաքակրթություն»:

XX դարի 30-ական թվականներն արգասաբեր էին տնտեսագիտության տեսության համար: Ի հայտ եկան մի շարք աշխատություններ, որոնց ազդեցությունը նշանակալից էր հաջորդ տասնամյակների հետազոտական մտքի վրա: Դրանցից են ամերիկյան տնտեսագետ Էդուարդ Չենբերլինի (1899-1967) «Մոնոպոլիստական մրցակցության տեսությունը» (1933) և անգլիացի տնտեսագետ Ջոան Ռոբինսոնի (1903-1983) «Անկատար մրցակցության տնտեսագիտական տեսությունը» (1933) աշխատությունները: Սակայն «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տե-

սություն» (1936) աշխատությունը սկզբնավորեց *քեյնսականության* ուղղությունը, նրա հեղինակին՝ անգլիացի տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսին (1883-1946), դասելով տնտեսագիտական մտքի պատմության մեջ ամենաերևելիների շարքին: «Մեծ դեպրեսիան» տնտեսագիտության տեսությունը դրել էր կատարված դեպքերի քննության տակ: Քիչ աշխատություններ են գրվում այդքան ժամանակին:

Մինչքեյնսյան շրջանի տնտեսագետները երևույթները դիտարկում էին միկրոտնտեսական տեսանկյունից: Քեյնսը ստեղծեց մակրոէկոնոմիկայի տեսություն, ցույց տալով, որ այն գործոնները, որոնք ճշմարիտ են միկրոէկոնոմիկայի համար, չեն գործում մակրոտնտեսական հարթության մեջ:

Մինչև Քեյնսը տարածված էր այն պատկերացումը, որ արտադրության ծավալների աճի հետ աճում են նաև անձնական եկամուտները, որն ինքնաբերաբար հանգեցնում է սպառողական պահանջարկի մեծացմանը: Իսկ եթե դրամական եկամտի մի մասը չի ծախսվել սպառման նպատակով, ապա, միևնույն է, այն կծախսվի ինվեստիցիոն ապրանքների գնման նպատակով: Ուստի, խնայված եկամուտների ընդհանուր գումարը հավասար է ինվեստիցիաների գումարներին: Այսինքն՝ ստացվում է, որ առաջարկն ինքը ծնում է իր սեփական պահանջարկը: Սակայն տնտեսական անհավասարակշռությունները պայմանավորված են ոչ թե առաջարկի, այլ պահանջարկի գործոններով, ավելի ստույգ՝ անբավարար «ամբողջական» կամ «էֆեկտիվ պահանջարկով»: Յենց դա էլ դառնում է ելակետային՝ պատասխանելու այն հարցին, թե «ինչով է որոշվում զբաղվածության ծավալը»: Ամբողջական պահանջարկը ապրանքների և ծառայությունների ազգային արտադրության իրական ծավալն է, որը սպառողները, ձեռնարկությունները և պետությունը պատրաստ են գնելու ամբողջական եկամտի տվյալ մակարդակի պայմաններում: Էֆեկտիվ պահանջարկը կախված է անձնական սպառման և ինվեստիցիաների մակարդակներից: Դրանց միջև որոշակի համապատասխանության պայմաններում է, որ տնտեսությունը հասնում է լրիվ զբաղվածության: Անձնական սպառման աճը եկամտի աճի կայուն ֆունկցիան է: Սակայն Քեյնսը նշում է մի «հոգեբանական օրենք», ըստ որի «մարդիկ, որպես կանոն, հակված են եկամտի աճի հետ ավելացնելու իրենց սպառումը, բայց ոչ նույն չափով, ինչ չափով աճում է եկամուտը»: Այսինքն, եկամտի աճի հետ, որպես կանոն, ավելի է մեծանում

եկամտի այն մասի տեսակարար կշիռը, որն ուղղվում է խնայողության համար»: Առաջանում է հետաձգված պահանջարկ: Խնայողությունները հանուրդ են եկամուտների հոսքից: Դա սպառման ծախսերի կրճատում է, չիրացված ապրանքներ և ծառայություններ, արտադրության կրճատում, գործազրկության աճ և ոչ «էֆեկտիվ պահանջարկ»: Վերջինս պայմանավորող մյուս գործոնը ինվեստիցիաների չափերն են: Դասականների մոտ նույն տրամաբանությունն է՝ ըստ որի խնայողությունները վեր են ածվում ինվեստիցիաների: Վերջիններս էլ ծածկում են այն ճեղքվածքը, որը կարող է առաջանալ սպառման չափերում: Փաստորեն տնտեսության մեջ միշտ գոյություն ունի էֆեկտիվ պահանջարկ, որն ապահովում է մակրոտնտեսական հավասարակշռությունը: Սակայն ինվեստիցիաների դինամիկան որոշվում է այլ գործոններով, մասնավորապես, կապիտալի սահմանային էֆեկտիվությամբ և տոկոսի նորմայով: Վերջինս շահույթի նվազագույն սահմանն է: Որքան փոքր թանկ է, այսինքն, որքան տոկոսադրույքը բարձր է, այնքան ձեռնարկատերերը միջոցներ քիչ են ինվեստավորում և ընդհակառակը: Յետևապես, խնայողությունների գումարը, կարող է չհամընկնել ինվեստիցիաների գումարին:

Այսպիսով, կապված այն բանի հետ, որ ամբողջական պահանջարկը միտում ունի կրճատվելու, տնտեսական զարգացումը ապակայունանում է՝ շուկաներում առաջանում են ապրանքների ավելցուկներ, ձեռնարկությունները փակվում են, աշխատատեղերը կրճատվում են, և աճում է գործազրկությունը: Եթե շուկան ի վիճակի չէ կարգավորել այդ պրոցեսները, ապա պետությունն իր քաղաքականությամբ պետք է ապահովի կայուն վճարունակ պահանջարկ: Քանի որ ամբողջական պահանջարկը բաղկացած է մի քանի բաղադրամասերից, ապա մեկի կրճատումը պետք է փոխհատուցվի մյուսի աճով: Օրինակ, եթե կրճատվում են բնակչության սպառողական ծախսերը, պետք է մեծացվեն պետական ծախսերը:

Պետության գլխավոր խնդիրը ամբողջական պահանջարկի ներգործության միջոցով մակրոտնտեսական հավասարակշռության պահպանումն է: Եթե երկրում սկսվում է ինֆլյացիա, նշանակում է՝ առկա է ավելցուկային ամբողջական պահանջարկ, որը պետք է կրճատվի: Խստացնելով հարկային ռեժիմը և վարելով «թանկ» փողերի քաղաքականություն, պետությունը պետք է կրճատի վճարունակ պահանջարկը,

և ինֆլյացիան կոպտարի: Իսկ եթե երկրի գլխավոր խնդիրը գործազրկության վերացումն է, պետությունը պետք է թուլացնի հարկային ճնշումը, ձեռնարկատերերի համար վարկերը դարձնելով նպաստավոր, որը կհանգեցնի ամբողջական պահանջարկի աճին, նոր աշխատատեղերի ստեղծմանը և գործազրկության կրճատմանը: Այսպիսով, քեյնսականությունը դարձել է պետության հակացիկլային կարգավորման տեսական հիմքը:

XX դարի 40-ական թվականների վերջերին ձևավորվում է նեոքեյնսականությունը, որի ներկայացուցիչները հանդես եկան մի շարք նորամուծություններով տնտեսական աճի և տնտեսական ցիկլերի տեսության մեջ: Եթե Քեյնսի համար քննության առարկան տնտեսական ցիկլի անկման և դեպրեսիայի փուլերն էին, ապա Ռոյ Յարոդի (1900-1978) և Էլվին Յանսենի (1887-1976) համար ամբողջ ցիկլն է՝ իր բոլոր փուլերով:

Աշխարհի շատ երկրներ տնտեսության կարգավորման ժամանակ ելակետ էին ընդունել քեյնսյան դոկտրինան: Սակայն վերջինիս կիրառումը ուղեկցվում էր որոշակի ոչ ցանկալի երևույթներով: Պետական կարգավորումը պահանջում էր բյուջետային միջոցների մեծ ծախսեր, որն առաջ էր բերում մշտական դեֆիցիտ, պետական պարտքի աճ և ինֆլյացիա: Տնտեսական կյանքն աստիճանաբար բյուրոկրատացվում էր, կարգավորման մեթոդներով համընդհանուր ոգևորությունը տանում էր զարգացման տնտեսական խթանների թուլացմանը և տնտեսական աճի տեմպերի դանդաղեցմանը: Նեոլիբերալիզմի հայտնի տեսաբան Ֆրիդրիխ Յայեկի ( 1899-1992) կարծիքով XX դարի երրորդ քառորդում տեղ գտած յուրահատուկ համաշխարհային ինֆլյացիայի և նրա արդյունքը հանդիսացող դաժան գործազրկության համար մենք պարտական ենք Քեյնսի «Ընդհանուր տեսությանը»: Գործազրկությունը չի կարելի կապել էֆեկտիվ պահանջարկի անբավարար մակարդակի հետ: Վարկային էքսպանսիայի և ամբողջական պահանջարկի խթանման միջոցով ժամանակավորապես կարելի է հասնել լրիվ զբաղվածության, ստեղծել նոր աշխատատեղեր, բայց դա տեղի է ունենում աշխատանքային ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործման հաշվին: Աշխատանքային ռեսուրսները հոսում են դեպի արհեստանորեն ստեղծված բարձր կոնյունկտուրա ունեցող ճյուղեր (կապված գների աճի հետ): Այդ նոր կոնյունկտուրայի պահպանումը պահանջում է տնտեսության մեջ վարկադրամական նոր ներարկումներ (այլապես ինֆլյացիան կան-

խելու հետ կվերանան նաև այդ նոր աշխատատեղերը), որն առաջ է բերում նոր ինֆլյացիա և ուժեղացնում գործազրկությունը: Հետևաբար, Յայեկի կարծիքով, հիմնախնդրի լուծումը պետք է փնտրել ոչ թե «միջակա Ֆիլիպսի կորի մեջ», այլ ազատ շուկայական տնտեսության շրջանակներում: Նրա տնտեսական փիլիսոփայության խարիսխը շուկայական տնտեսությունն է կամ, ինչպես ինքն է անվանում, կատալակտիկան: «Շուկայական կարգը» ձևավորվել է բնական ընտրության էվոլյուցիոն պրոցեսի արդյունքում: Նրա կարևոր կողմը մրցակցությունն է, որը ստիպում է գործել ռացիոնալ: Սոցիալական արդարության հասկացությունն անբովանդակ հասկացություն է: Հասարակությունը պետք է գործի ատոմիստական սկզբունքով: Արդարությունը կարող է լինել անհատական, այլ ոչ թե սոցիալական: Արդարացին այն է, ինչը սպոնտան ձևով ստեղծում է շուկայական համակարգը: Այս իմաստով էլ նա հաջողված չի դիտում տնտեսագիտության տեսության մեջ ճանաչում գտած հավասարակշռության հասկացությունը, որը փաստորեն նշանակում է, որ մրցակցությունը դադարեցված է: Յայեկը «կենտրոնացված վերահսկողության», «կենտրոնացված պլանավորման» գաղափարը ամբողջովին դիտում է «թյուրիմացություն»: Բոլորովին հնարավոր չէ, որ «դեկավարող բանականությունը» զբաղվի ամեն ինչով: Ինչպիսին էլ լինի այդ կենտրոնական կառավարող կառուցվածքը, չի կարող վերամշակել այն ամբողջ ինֆորմացիան, որն ապակենտրոնացված ձևով կատարում է շուկան:

Յայեկի սոցիալական փիլիսոփայությունը մի նշանակալից մասով նպատակ ունի ցույց տալու, որ «սոցիալիզմը... հիմնված է ակնհայտորեն կեղծ առաջադրույթների վրա»: Ամեն մի կենտրոնացված պլանավորում և վերահսկողություն նշանակում է անհատի ազատության սահմանափակում՝ «ճանապարհ դեպի ստրկություն»: Եվ ահա XX դարի 50-60-ական թվականներին քեյնսականության պոստուլատները մի շարք նոր դպրոցների կողմից սկսեցին մերժվել կամ դրվել կասկածի տակ: Այդ ընդդիմախոսների մեջ հատկապես առանձնանում են *մոնետարիզմի կամ Չիկագոյի դպրոցի* ներկայացուցիչները: Տնտեսագետներին վաղուց է զբաղեցնում այն միտքը, թե փողն ինչպես է ազդում տնտեսության վրա. այն նրա պասիվ տարրն է, թե հենց ինքը «մարմնավորում է ամբողջ էկոնոմիկան» ու պայմանավորում վերջինիս կենսագործունեությունը: Այս իմաստով մոնետարիզմի տարրերն առկա

էին մերկանտիլիստների, դասականների՝ և, հատկապես, Դ. Ռիկարդոյի աշխատություններում: Մոնետարիզմը ավարտուն տեսք է ստանում ի դեմս ամերիկյան տնտեսագետ Միլթոն Ֆրիդմենի (1912): Մոնետարիզմի հիմնական սկզբունքները հանգում են հետևյալին. եթե ավելի շատ փող է շրջանառում, քան ապրանք, ապա առաջանում է ինֆլացիա: Իսկ քանի որ դրամական զանգվածի չափը որոշում է կառավարությունը, ապա ինֆլացիան չափից շատ փող տպելու որոշումների արդյունք է: Երբ այն դառնում է անկառավարելի, կառավարությունը դրությունը շտկելու նպատակով կտրուկ կրճատում է շրջանառության մեջ գտնվող փողի քանակը: Ինչին հաջորդում է տնտեսական աճի դանդաղում և գործազրկության ուժեղացում: Կառավարությունը ձեռնմուխ է լինում նոր ծրագրերի, որն ավելի է վատացնում իրավիճակը: Կառավարության ճիշտ քաղաքականությունն է. «իրականացնել փողի առաջարկի կայուն կանխատեսվող ավելացում, տնտեսության արտադրողականության աճի տեմպերին մոտավորապես հավասար չափով: Մնացած ամեն ինչը պետք է թողնել այնպես, ինչպես որ կա և թողնել շուկային կատարելու իր գործը»: Դետևապես տնտեսական կյանքի կարգավորիչ ու ներգործական լծակը դրամական էմիսիան է, «դրամական իմպուլսները»:

Ֆրիդմենը «Միացյալ Նահանգների մոնետար պատմությունը» աշխատության մեջ, որն ընդգրկում է շուրջ 100 տարվա (1867-1960) ԶԱԱ-ի, ինվեստիցիաների և փողի դինամիկ շարքերի վերլուծությունը, հանգում է այն եզրակացության, ըստ որի ԶԱԱ-ի և փողի միջև հայտաբերվում է ավելի սերտ կոռելյացիա, քան ԶԱԱ-ի և ինվեստիցիաների: Քանի որ ԶԱԱ-ի փոփոխությունը հաջորդում է դրամական գործոնի փոփոխությանը, ուստի վերջինս ունի զարգացումը պայմանավորող առաջնային գործոնի նշանակությունը:

Մ. Ֆրիդմենը ենթադրում է, թե պետության միջամտությունը շուկայական տնտեսությանը կարող է դրական արդյունքներ ունենալ միայն կարճաժամկետ հատվածում: Սակայն, տնտեսական համակարգը բարդ է, և անկանխատեսելի, ուստի երկարաժամկետ հեռանկարի համար անորոշ են պետության միջոցառումների ունեցած դրական կամ բացասական հետևանքները:

XX դարի 60 - 70-ական թվականներից արևմտյան տնտեսագիտական միտքը նշանավորվեց նոր մշակումներով: Խոսքը վերաբերում է առաջարկի, ռացիոնալ սպասումների և նոր ինստիտուցիոնալ տեսու-

թյունների: Առաջարկի տեսության կողմնակիցները պահանջարկի փոխարեն առաջադրում են ամբողջական առաջարկի խթանումը: Դա ենթադրում է փոփոխություններ տնտեսական քաղաքականության և, առաջին հերթին, հարկային համակարգում: Այդ տեսության կողմնակիցները ( Ա. Լաֆֆեր, Մ.Ֆելդստայն, Ռ.Բարրոուն և ուրիշներ) տնտեսության կազմակերպման առավել արդյունավետ եղանակը համարում են շուկան՝ մերժելով պետության կողմից անմիջական կարգավորման մեթոդները:

1960-ական թվականներին ամերիկյան տնտեսագետ Ջոն Մուտը շրջանառության մեջ է դնում «ռացիոնալ սպասումներ» հասկացությունը: Որպես տեսություն այն ձևավորվել է 1970-ական թվականներին: Ռացիոնալ սպասումների տեսությունը ( Ջ.Մուտ, Ռ.Լուկաս, Տ.Սարժենտ, Լ.Լեյտերման և ուրիշներ) իր հիմքում ունի նեոդասականների հայտնի առաջադրությունները, ըստ որոնց տնտեսական սուբյեկտների պահվածքը ռացիոնալ է, սպասումների ձևավորման ժամանակ տեղեկատվությունը լիակատար է, բոլոր շուկաներում առկա է կատարյալ մրցակցություն, ամեն մի նոր տեղեկատվություն արագորեն արտահայտվում է պահանջարկի ու առաջարկի կորերի վրա:

Տնտեսագետ Օ.Ուլյամսոնը 1975 թվականին օգտագործում է «նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտական տեսություն» հասկացությունը, նպատակ ունենալով այդ ուղղությունը տարանջատել հին ինստիտուցիոնալիզմից: Եվ իրոք, նմանությունը լոկ անվան մեջ է: Եթե վերլենյան ինստիտուցիոնալիստների համար հիմնականը տնտեսության վրա ոչ տնտեսական հաստատությունների՝ պետական հիմնարկությունների, իրավական նորմերի, սովորությունների բարոյական ազդեցությունն է, ապա նոր ինստիտուցիոնալիստները տնտեսագիտության մեջ գծում են նոր պարադիգմա՝ քննության առարկա դարձնելով ֆիրմաները, կառավարման կառուցվածքները, սեփականության իրավունքը և այլն, ոչ անհատի պահվածքը, այլ այն պայմանավորող ինստիտուցիոնալ կառուցվածքները:

1937 թվականին Ռոնալդ Բոուզի «ֆիրմայի բնույթը» հոդվածը կարծես աննկատ մնաց: Այդ ժամանակ տնտեսագետների ամբողջ ուշադրությունը սևեռված էր Ջ. Քեյնսի ուսմունքի վրա: Մինչդեռ նրանում արտահայտված գաղափարները, ըստ էության, սկզբնավորում էին նոր որոնումներ, նոր մոտեցումներ: Խոսքը հատկապես վերաբերում է նոր

ինստիտուցիոնալիստների կողմից շրջանառության մեջ դրվող տրանսակցիոն ծախսեր, սեփականության իրավունքներ, կոնտրակտային հարաբերություններ հասկացություններին, որպես «շուկայական մեխանիզմն օգտագործելու ծախքերի».

- տեղեկատվություն որոնելու ծախքեր՝ տեղեկատվություն ստանալու և դրա մշակման վրա ժամանակի և ռեսուրսների ծախսումները, ինչպես նաև կորուստներն անկատար տեղեկատվությունից,
- բանակցություններ վարելու ծախքեր,
- հատկորոշման ( ճշգրիտ որոշման) և սեփականության իրավունքի պաշտպանության ծախքեր, դատարանների, արբիտրաժի, պետական կառավարման օրգանների, խախտված իրավունքների վերականգնման համար ժամանակի և ռեսուրսների անհրաժեշտ ծախսումները, ինչպես նաև գրված կանոնների և նորմերի պաշտպանության ոգով « կոնսենսուսային գաղափարախոսության » դաստիարակության ծախսերը,
- շրջանառության մեջ մտնող ապրանքների և ծառայությունների քանակի և որակի չափումների, չափողական տեխնիկայի ծախսերը , կորուստները սխալներից,
- օպորտունիստական պահվածքի ծախքեր, որոնք ծագում են այն ժամանակ, երբ մարդիկ աշխատում են համատեղ ( կոլեկտիվ) և դժվար է պատկերացում կազմել յուրաքանչյուրի աշխատանքի արդյունավետության մասին:

Նոր ինստիտուցիոնալ տեսության ձևավորման մեջ մեծ է ամերիկյան տնտեսագետ Դուգլաս Նորտի դերը, որը տնտեսական փոխակերպությունների պատմությունը կապում է ինստիտուցիոնալ փոփոխությունների հետ:

Նոր ինստիտուցիոնալ ուղղության մեջ նկատելի է մի որոշակի ցրվածություն, որը դրսևորվում է նրա ճյուղավորումներում՝ սոցիոլոգիական (Ֆ.Պերրու), տնտեսական կազմակերպությունների ( Ա. Ալչիյան, Օ.Ուլյամսոն), տնտեսական տեղեկատվության ( Ջ.Սոիգլեր), տրնտեսական իրավունքի (Ռ.Պոզներ, Գ.Բեքքեր ) և այլն:

Նոր ինստիտուցիոնալ տեսության քննադատները նրա թուլությունը տեսնում են եզրակացությունների անբավարար հստակության, տրանսակցիոն ծախքերի հասկացության անորոշության մեջ:

Ակներև են վերջին տասնամյակներում կատրվող նոր որոնումները՝ տնտեսագիտական մտքի նոր պարադիգմայի ստեղծման ուղղությամբ:

## ԳԼՈՒԽ 17. ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Հայ պատմիչների՝ Սովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Փավստոս Բյուզանդի ( V դ.), միջնադարյան մշակույթի ներկայացուցիչների՝ Թովմա Արծրունու ( IXդ.), Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու և Սմբատ Սպարապետի ( XII-XIIIդդ.) և ուրիշների մատենագիտական աղբյուրներում կարելի է հանդիպել դատողություններ շահեկանի և ոչ շահեկանի, հարստության և աղքատության, հարկերի, առևտրի և դրամաշրջանառության, կենսամիջոցների նվազագույն չափի և այլ հարցերի վերաբերյալ: Արժեքավոր են Գրիգոր Տաթևացու ( XIV – XV դդ.) վերլուծություններն ապրանքի և աշխատանքի, արժեքի, շահույթի, աշխատանքի հասարակական բաժանման մասին: Ինչ խոսք, տնտեսագիտական միտքը իր էվոլյուցիայի մեջ ունեցել է վերլուծական խորացումներ, այնուամենայնիվ, այն պարզ տնտեսաձևերին՝ բնատնտեսությանը բնորոշ մտայնություն էր:

XVIIIդ. վերջին քառորդում հնդկահայ լուսավորիչներ և ազգային - ազատագրական շարժման գաղափարախոսներ Շ.Շահամիրյանը, Մ.Բաղդամյանը և Հ.Եմինը ապագա անկախ Հայաստանի օրենսգիրք-սահմանադրության մեջ առաջադրում էին ժողովրդավական հանրապետության գաղափարը: Հարստության ստեղծման, ապրանքների արտահանման և ներմուծման, ազգային արտադրության զարգացման հարցերում Մադրասի խմբակի անդամները հարում էին ներկանտիլիզմի տնտեսական հայեցողությանը:

XIX դ. 40-ական թվականներից սկսած՝ հայ իրականության մեջ սկսում են լույս տեսնել առաջին զուտ տնտեսագիտական ուսումնասիրությունները. Վիեննայի Մխիթարյաններից՝ Ղ.Տերտերյանցի « Գիտություն վաճառականության » գիրքը, Տ.Թնկրյանի հոդվածները «Բազմավեպ»-ում, Ն.Զորոյանի «Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ» աշխատությունը: Ն.Զորոյանը շեշտում է տնտեսական գիտության գործնական նշանակությունը որպես հարստության արտադրության, բաշխման և սպառման մասին գիտության, մասնավոր սեփականությունը, եսասիրությունը համարում զարգացման գրավականներ, անդրադառնում տնտեսական կատեգորիաների վերլուծությանը:

Ա.Նազարյանի, Մ.Նալբանդյանի, Հ.Սվաճյանի ուղեգծումները հայ միտքը հաղորդակից դարձրին ժամանակի սոցիալ-փիլիսոփայական տեսություններին:

XIX դարի 70-ական թվականներին սկիզբ է առնում հայ հասարակա-

կան զարգացման կապիտալիստական շրջափուլը: Հասարակական մտքի առաջ ծառանում է սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների հարցը, տնտեսագիտական միտքը ստորաբաժանելով տարբեր հոսանքների: Այդ միտքն արտահայտում էր անցման շրջանին բնորոշ մտայնությունը, որն ընդհանրապես հատուկ էր իր զարգացման մակարդակով, այսպես ասած, «ուշացած ժողովուրդների» մտավոր գործունեությանը: Երբ արդեն զարգացած ազգերը հարյուրամյակների ընթացքում անցել էին տնտեսաձևերի օրինաչափ և բնական հաջորդափոխությունը, «ուշացած ժողովուրդների» մտածող մարդիկ փորձում էին համատեղել այն, ինչ զարգացած ազգերը յուրացրել և հաղթահարել են պատմական զարգացման երկարատև պրոցեսում: Հայ տեսաբանները փորձում էին ըմբռնել հասարակական միտումները և այս առումով նրանց համար հակասական չէր թվում ինչպես նախորդ, այնպես էլ իրենց ժամանակի տնտեսագիտական ուսմունքների յուրացումն ու մեկ միասնական համակարգում դրանց համատեղումը: Ահա թե ինչու նրանց համար գոյությունը չունեի բացարձակ տնտեսագիտական ուսմունք: Փորձ էր արվում տնտեսագիտական ուսմունքներից վերցնել այն հնարավոր օգտագործման տարրերը, որոնք հարմար էին գտնում Անդրկովկասի տնտեսական զարգացման կոնկրետ պայմանների համար՝ ձև տալով մի ուրույն, «համապարփակ էկլեկտիզմի»: Թերևս այդ էր պատճառը, որ հայ տնտեսագետների հայացքներում հաճախ կարելի է նկատել նույն հարցի վերաբերյալ իրարամերժ հետևությունների, տնտեսագիտական տարբեր ուղղությունների իրար բացառող տեսական ընդհանրացումների:

Իհարկե, դա հայ տնտեսագիտական միտքը չի զրկում ինքնուրույնությունից և սոցիալ-տնտեսական կյանքի վերլուծությունից: Հայ հեղինակներն իրենց հրապարակախոսական և տնտեսագիտական աշխատություններում տվեցին երկրամասի հասարակական նոր հարաբերությունների տնտեսական կառուցվածքի ուրույն վերլուծությունը՝ եվրոպական երկրների ու Ռուսաստանի հասարակական զարգացման տնտեսագիտական մտքի փորձով լուսաբանելով Անդրկովկասի սոցիալ-տնտեսական փոխակերպության ընթացքը:

XIX դարի վերջին քառորդի հայ տնտեսագիտական մտքի գլխավոր ուղղությունները մի ուրույն համապատասխանություն ունեին հասարակական հոսանքների սոցիալ-բովանդակության հետ: Իսկ այն տարրնթաց էր հասարակական մտայնության համար: Այս իմաստով որոշակի են տարբերվում տնտեսական զարգացման այն ուղեգծումները, որ առաջադրում էին նշված ժամանակաշրջանի տնտեսագիտական մտքի ազատամտական, ազգային պահպանողական և նարոդնիկական

հոսանքները:

x            x  
                  x

« Ստրկության ազատությունը և վերջն էլ դատական վերանորոգությունը, գյուղական ինքնավարությունը, նորամուտ լուսավորությունը, երկաթուղի, հեռագիր և այլն, մին, մինի հետևից հանկարծ գալով շլացրին ժողովուրդին, մի հանկարծական փոփոխություն ձգեցին նրա միտ ու կացի և վարք ու բարքի մեջ: Ժողովուրդն այնպես փոխվեց մի տասն տարվա մեջ, որքան փոխված չէր հարյուրավոր տարիների ընթացքում»: XIX դարի երկրորդ կիսաշրջանն այսպես էր բնութագրել հայ անվանի գրող Ղազարոս Աղայանը: Դա տնտեսական ու սոցիալական զարգացման մի աննախադեպ պատմաշրջան էր հայկական կյանքում:

Կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը, որը վաղուց սկսվել էր Ռուսաստանում և Անդրկովկասում, ճորտատիրության վերացումը, օտար կապիտալների մուտքը երկրամաս ստեղծել էին այն բոլոր նախադրյալները, որոնք անհրաժեշտ էին արդեն զարգացող կապիտալիստական հարաբերությունների համար: Աշխուժացող առևտրական կապիտալն ընդարձակում էր ապրանքադրամական հարաբերությունների շրջանակները՝ նպաստելով նահապետական գյուղի քայքայմանը: Ծընվում էին նոր արտադրողական ուժեր: Արտադրության մեքենայական տնտեսաձևը թափանցում էր ամենատարբեր ճյուղեր, դուրս մղելով հնամենի եղանակները: Ձևավորվում էր հայկական արդյունաբերական բուրժուազիան: Դա հայ իրականության « հասարակական կյանքի մեծ զարկերի» ժամանակաշրջանն էր, որին զուգադիպեց Գրիգոր Արծրունու ( 1845-1892) գործունեությունը: Հայկական ազատամտականության պարագլուխը հրապարակ եկավ նոր պատմափիլիսոփայությամբ՝ սոցիալ-տնտեսական տեղաշարժերը քննության ենթարկելով աշխատանքի փիլիսոփայության դիտակետից: Աշխատանքն իր ամենաընդհանուր հասկացությամբ բնութագրվում էր որպես լուսավորության և առաջադիմության հիմք:

«Երեկ մենք կտակարանային ազգ էինք  
Այսօր մենք ազգասերներ ենք  
Էգուց մենք պետք է աշխատողներ դառնանք»:

Աշխատանքի, որպես «ժամանակակից քաղաքակրթության ամենագործող, հիմնական, կենդանացնող տարրի», Գ. Արծրունու դրվատանքը միանգամայն համահնչուն էր կապիտալիստական տնտեսակարգի զարգացման վերելքին և բխում էր այդ զարգացման պահանջներից: Իսկ սա

թելադրում էր «ինքնաճանաչում» և «ինքնաքննություն», հասարակական երևույթները «տնտեսական կետից վերլուծելու անհրաժեշտություն: «Քարոզիչների դարձնում անցավ», կյանքը գործնականություն է պահանջում, խարսխված ժամանակակից հասարակական կազմակերպության հիմնական սկզբունքների՝ անհատական զարգացման, աշխատանքի և հավասարության վրա:

Գ. Արծրունին փոխանակությունը համարում է հասարակության գլխավոր հատկությունը, գտնելով, որ որտեղ չկա փոխանակություն, այնտեղ չկա և հասարակություն: Փոխանակության զարգացման աստիճաններն էլ պայմանավորում են քաղաքակրթության առաջընթացի աստիճանները: Աշխատանքի բաժանումը և փոխանակությունը կապված են միմյանց հետ: Հասարակական տնտեսական համայնքը նրան ներկայացնում է որպես փոխադարձ ծառայությունների ամբողջություն:

Աշխատանքի բաժանումը նպաստում է արտադրողի «ճարտարության» բարձրացմանը, ժամանակի խնայողությանը, մեքենաների գյուտերին և, վերջին հաշվով, աշխատանքի արտադրողականության աճին: Բայց այն նաև մարդու մեջ զարգացնում է միակողմանի հատկություններ, խլացնելով մյուսները: Ուստի, անհրաժեշտ է աշխատանքի բաժանումը դնել որոշակի չափի մեջ: Պատահական չէր, որ ելակետ ունենալով «ամբողջի անբաժանելիության» գաղափարը, Գ. Արծրունին հակված էր նաև աշխատանքի կոոպերացիայի պարզ ձևերի պահպանությանը. «Զմռանանք, որ մեր փրկությունը մենք կգտնենք նպաստելով, ընդարձակելով փոքր արդյունաբերության շրջանը և փոքր արդյունաբերողների թիվը»:

Իր հասարակագիտական հայացքներով Գ. Արծրունին հարում էր օրգանական դպրոցին: Հասարակությունը նմացնելով բնական ճանապարհով զարգացող օրգանիզմի, յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր առանձնահատկությունները, որը ենթադրում է սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների կրկնելիության անհնարինությունը: Եվ հասարակական անհատի, և ազգի հարատևությունը պայմանավորված է այն բանով, թե դրանք որքանով են լավ հարմարված շրջապատող պայմաններին: Իսկ դրա համար անհրաժեշտ է քաղաքակրթվել, «լուսավորության որքան կարելի է մեծ պաշար ձեռք բերել», որպեսզի «շրջապատողների հետ հավասար զենքով պատերազմել և գոյությունը պաշտպանել»: Ի վերջո հասարակության զարգացման պատմությունը ոչ միայն գոյության պայքարի, այլև այդ պայքարի համար անհրաժեշտ միջոցների կատարելագործման պատմություն է: Ընդ որում պատմական զարգացման վճռական գործոնը հասարակության ինտելեկտուալ զարգացման աստիճանն է:

«Ոչ օրգանական և ոչ անօրգանական բնության մեջ չկա անշար-

ժություն», «բայց ամեն տեղ կնկատենք մշտնջավոր ձգտումն դեպի կատարելագործության»: Գ. Արծրունին կատարելագործվելու ուժը բնութագրում է իբրև զարգացման զսպանակ: Սրանում է դրսևորում նրա սոցիալական օպտիմիզմը:

Մարդկության պատմությունը անհատականության զարգացման պատմություն է: Մասնավոր սեփականությունը տնտեսական ձևերի կատարելագործման բնական պայմանն է: «Անձնական շահը միշտ ավելի զորեղ, դրդիչ է աշխատանքի և կատարելագործության, քան թե հասարակաց շահը», թեև վերջինս էլ ունի իր առավելությունները: Գ. Արծրունին հանգում է մի եզրակացության, որը ենթադրում է զարգացման մի ինչ-որ միջին գիծ, իր մեջ սինթեզելով համայնական և մասնավոր տնտեսաձևերի դրական կողմերը, որոնք «իրանց փոխադարձ պակասություններով և արժանավորությամբ միմյանց հավասարակշռում են ... մինը մյուսին պահպանում են»:

Հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում Ավետիք Արասխանյանը (1857-1912): Նա, այն «տնտեսագետն էր, որ գիտության աշխարհում ուշադրություն գրավեց և գնահատել տվեց թե իր և թե մեր ցեղի մտային կարողությունները»: Նա բազմիցս անդրադարձել է տնտեսագիտական ուսմունքներին, մի կողմից դրանց փորձով հաստատելու սոցիալ-տնտեսական իր ծրագրերի ճշմարտացիությունը, մյուս կողմից՝ հայ միտքը հաղորդակից դարձնելով դրանց գիտական ու պատմական նշանակությանը: Ասպարեզ գալով մի ժամանակաշրջանում, երբ հայ իրականությունը ոտք էր դրել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման ուղին, Արասխանյանը տվեց Անդրկովկասի հասարակական մոր հարաբերությունների տնտեսական կառուցվածքի վերլուծությունը, լուսաբանեց երկրամասի սոցիալ-տնտեսական առաջընթացի օրինաչափությունները:

Երկրամասի կապիտալիստական փոխակերպության համար ազդակ հանդիսացան մի կողմից՝ ճորտատիրության վերացումը Ռուսաստանում, մյուս կողմից՝ եվրոպական կապիտալի հոսքն Անդրկովկաս: Վերջինս ունի երկակի նշանակություն, օգտակար է այնքանով, որ նպաստում է երկրամասի տնտեսական զարգացմանը, բայց վնասակար է այն իմաստով, որ խոչընդոտում է հայրենական կապիտալի ինքնուրույն զարգացմանը: Տեղական կապիտալի հնարավորությունների առումով Արասխանյանը մեծ նշանակություն էր տալիս հայ բուրժուազիայի տնտեսական ուժին, որն ուներ բավական դրամական կուտակումներ և կարող էր ստանձնել երկրամասի արդյունաբերական զարգացման ֆունկցիան ու մրցակցել օտարերկյա ուժի դեմ: «Ազգային վերածննդի» կարևոր պայմաններից



մեկն էլ «ընկերական ոգու» դաստիարակությունն է: Քանի որ Անդրկովկասում բացակայում էին խոշոր չափերի հասնող անհատական կապիտալները, ինչը խանգարում էր արագ տնտեսական զարգացմանը, ուստի հակասությունը պետք է լուծվի անհատական կապիտալների համակենտրոնացումով՝ ակցիոներական ընկերությունների ձևով:

Նա ընդգծում է ամերիկական կապիտալը արդյունաբերականի փոխակերպելու անհրաժեշտությունը: Եվրոպական երկրների տնտեսական փորձով հայրենական խոշոր արդյունաբերության զարգացումը Արասխանյանը հանգեցնում է հովանավորական տնտեսական մի քաղաքականության, որը կապահովեր ազգի «ինքնապաշտպանությունն» ու ինքնուրույնությունը: Նա սրում է ազգային տնտեսության գաղափարը «պատմական այլ և այլ հանգամանքների շնորհիվ, մի որևէ ազգի տնտեսական գործունեությունը կարող է ստանալ հատկապես այդ ազգի համար անպաստ ուղղություն, և երբ այդ ազգի շահերը պաշտպանելու օրգաններ չկան, երբ ազգի տնտեսությունը որբացած դրության մեջ է, այդ դրության մեջ ընկած ազգի անդամները հակված են դեպի համաշխարհային շրջնալիկությունը, առանց որևէ բարոյական կապի որևէ մարդկային համայնքի հետ: Հարստահարող ոգին հենց այն ժամանակ է իր ամենամեծ զարգացմանը հասնում, երբ տնտեսությունը զրկվում է բարոյական հիմունքներից, իսկ բարոյական կապեր հաստատելու գործնական միջոցներից մեկն է՝ մարդու մեջ զարգացնել նրա կապված լինելու զգացումները մի մեծ մարդկային համայնքի հետ, իսկ ազգ ասած բանը հենց այդ հանգամանքներից խոշորագույնն է ... Ստացնել մի ժողովրդի տնտեսական գործունեության մեջ գաղափարական տարր, այդ գաղափարը հիմնել ազգային ընդհանուր կուլտուրական շահերի վրա, ահա թե ինչ պիտի լինի ազգային տնտեսության քաղաքականությունը»: Ակներև է, որ Արասխանյանը տնտեսական գաղափարաբանությունը դիտում է ազգային զարթոնքի, նրա ինքնագիտակցության, ազգային գաղափարաբանության կարևոր հատկանիշը: XIX դարավերջին Անդրկովկասում գոյություն ունեցող վարչատարածքային բաժանումը, հայկական դրամատիկական խավի գործունեությունը բուն Հայաստանի սահմաններից դուրս լուրջ խոչընդոտներ էին հարուցում ազգային միասնական տնտեսական քաղաքականության համար: Այնուամենայնիվ, Ա. Արասխանյանի կարծիքով հայ ազգի քաղաքակրթական տրվածքը պարտադրում է տնտեսական քաղաքականության մշակում, որպես ազգային գոյության և նրա ապագա ինքնուրույնության երաշխիքի. «Հայոց մնան մի ազգ, որ ունի իր կուլտուրան առհասարակ, պետք է ունենա նաև իր տնտեսական քաղաքականությունը: Ոչ մի ազգ չի կարող հարատև գոյություն ունենալ և կուլտուրական և

քաղաքակրթական դերերի ձեռնամուխ լինել, առանց ամուր տնտեսական հիմքի: Նայած թե մի ազգի տնտեսական կյանքը ինչ ուղղություն է ստանում, դրանով շատ զգալի կերպով որոշվում է նորա ոգու ուղղությունը առհասարակ, այդ ոգու ուղղությունն ապա իր դրոշմն է դնում այդ ազգի կյանքի և ձգտումների վրա և ոչ միայն տնտեսական, այլև հոգեկան, բարոյական և քաղաքական կյանքի ձգտումների վրա: Մի անհող ժողովուրդ այլ բան է ներկայացնում, հողով ապահովը՝ այլ, մի բան է ներկայացնում մի երկիր խոշոր կալվածատերերով, այլ բան՝ երբ բռնված է մանր սեփականատերերից: Այլ բան է, երբ մի ազգի տնտեսությունը անլուծելի կերպով շղթայված է մի այլացեղ կամ այլազգի ժողովրդի տնտեսության հետ, այլ է, երբ ազգը մի անկախ կամ իր մեջ ամփոփված տնտեսական կյանք է վարում: Այլ է նաև, երբ մի ազգի տնտեսականը ենթարկված է մի այլ ազգի շահերին, և այլ է, երբ ազգը ինքն է տնօրինում իր տնտեսական վիճակը»: Ազգի ապագան մեծապես կախված է այն ուղղությունից, որ ունեցել է նրա տնտեսական կյանքը, այն հիմքից, «որի վրա նա կառուցել է իր տնտեսական կյանքի շինությունը: ... ինքն իրեն թողնված մի ժողովուրդ կարող է այնպիսի տնտեսական ճանապարհներով ընթանալ, որ ոչ մի կերպ հաշտելի չեն լինի ազգի բարոյական, մտավոր և առհասարակ առողջ կյանքի և իդեալների հետ: Պետք է, որ մի ազգ ունենա իր տնտեսակազմը, որը մի օրգանական առողջ ամբողջություն ներկայացնի: Ուղղություն ենք պահանջում մենք ազգային տնտեսության մեջ»:

Ա. Արասխանյանի դիտողությունները համաշխարհային փորձից քաղված դասեր են ազգային տնտեսության վերաբերյալ, արված այսօրվա համար, որոնք կատարվող հասարակական վերափոխությունների ու նորոգությունների բովանդակության մեջ հայտնաբերում են արդիական նշանակություն:

Ստեփան Գուլիշամբարովը (1849-1915) իր ապրած ժամանակաշրջանի տնտեսական զարգացման պատմաբանն էր: Այդ հարցերն արծարծվել են նրա հարյուրից ավելի մենագրություններում ու հոդվածներում, նվիրված ինչպես Կովկասի ու Ռուսաստանի, այնպես էլ համաշխարհային տնտեսության զարգացմանը: Ս. Գուլիշամբարովն անխուսափելի էր դիտում կապիտալիզմի զարգացումը: Տնտեսական առաջընթացի պրոցեսը վկայում էր հասարակական հերթափոխության անխուսափելիության մասին, հաստատելով «մանր արտադրության հանդեպ կապիտալիստական խոշոր արտադրության հաղթանակը»: Տնտեսական քաղաքականության հարցերում նա պրոտեկցիոնիստ էր, ինչը խրախուսվում էր ռուսական շատ տնտեսագետների կողմից և որոնց հետ մասնակ-

ցել է տարիֆների մշակման համատեղ աշխատանքներին:

Համաշխարհային կապիտալիստական համակարգի կազմավորման հետ միասին կազմավորվում է նաև համաշխարհային կապիտալիստական տնտեսությունը: Վերջինիս պատճառը աշխատանքի հասարակական բաժանման խորացումն է, մարդկության «կուլտուր-պատմական առումով» առաջընթացը իր ամենաընդհանրական իմաստով: Տարբեր երկրների աշխարհագրական-տնտեսական ինքնուրույնություն հասկացությունն ունի հարաբերական իմաստ, քանի որ դրանցից յուրաքանչյուրը լոկ ամբողջի մասն է միայն: Այդ մերձեցումն օբյեկտիվ և անխուսափելի է, որն էլ ավելի ուժեղանալով հանգեցնելու է ժողովուրդների տնտեսական միավորմանը, իսկ այդ ընդհանուր միության մեջ յուրաքանչյուր ժողովրդի ազգային-քաղաքական դերն ուղիղ համեմատական կլինի համաշխարհային ընդհանուր տնտեսության մեջ նրա մասնակցությանը:

Հասարակական զարգացման ուղիների վերաբերյալ այլ ծրագիր էր առաջադրում ազգային պահպանողական հոսանքը (Պետրոս Սիմոնյանի «Սեղու Հայաստանի», Սպանդար Սպանդարյանի «Նոր դար» և Աբգար Հովհաննիսյանի «Արձագանք» պարբերականները):

Ինչպես արդեն նկատել ենք, ազատամտական հոսանքն ազգի զարգացումը կապում էր «նյութական հարստության» հետ և արմատական էր երկրամասի կապիտալիստական վերածնության իր պահանջներում: Ազգային պահպանողականները, ընդհակառակը, ամենուրեք քննադատում էին կապիտալիզմի հակասությունները, դիմադարձ լինելով նրա տնտեսական հեռանկարից: Ծիշտ է հայ ազգային պահպանողականները չէին պահանջում վերադարձ դեպի անցյալը, բայց և փորձում էին նոր տնտեսական հարաբերությունները վերածնել արտադրության կազմակերպման ազգային կացութաձևի վրա: Ահա թե «Նոր դարը» ինչպես է պարզում իր ուղղությունը, ցույց տալով սոցիալ-տնտեսական ուղեգծումների այն սկզբունքային տարբերությունները, որ ուներ ազատամտականների համեմատությամբ. «Կա բարոյական շահերի մրցում, կա նյութական շահերի մրցում: Գործարան հիմնել, խանութ բանալ, տնտեսական արդյունաբերությամբ պարապել, փող կորզելու զանազան միջոցներ հնարել, բոլորը ծառայում են մարդկային նյութական շահերը բազմապատկելու համար ... մեր աչքում մի առանձին կարևորություն էլ չունի»: Այստեղից էլ այն հայտնի բանաձևը, թե «երկրի տնտեսական վերածնությունը» պետք է հաջորդի «երկրի բարոյական վերածնությամբ»: Այս բարոյագիտական կոնցեպցիան որոշակի ռեակցիա էր հասարակության կապիտալիստական զարգացման հանդեպ: Խորտակվում էր մանր արտադրությունը, աղարտվում համայնական, նահապետական հարաբե-

րությունները անհատին օտարելով հասարակությունից: Ազգային պահպանողականությունը դրամատիկության զարգացման առաջամարտիկ չէր: Նա երկյուղով էր նայում երկրամասի դրամատիկական վերածնությանը, հիվանդագին ընդունելով մանր արհեստավորության ու մանր բուրժուական այլ շերտերի քայքայումը, դրա մեջ գուշակելով ազգի միասնության տրոհումը: Նրա ներկայացուցիչները չէին պահանջում վերադարձ դեպի անցյալը, բայց և փորձում էին նոր տնտեսական հարաբերությունները վերածնել արտադրության կազմակերպման ազգային կացութաձևի վրա: Եվ մի բան ակներև է, որ ազգային պահպանողականությունը տնտեսական առաջընթացի իր ծրագիրը կառուցում էր ազգային սուբստանցիոնալ գործոնի վրա և բխում է «պատմության համաշխարհային ընթացքի օրենքներից»:

Պատմատնտեսագիտական գրականության մեջ մի դեպքում ազգային պահպանողականության և ազատամտականների տնտեսական ծրագրերում նույնություն էին փնտրում, իսկ մի այլ դեպքում ենթադրում, թե իբր ազգային պահպանողականները հակված չէին ընդունելու հասարակական առաջադիմությունը: Նման մեկնաբանությունների դեմ էին ուղղված Սպանդար Սպանդարյանի այն խոսքերը, թե «պետք է տգետ լինել՝ չհասկանալու համար, որ պահպանողականը չի կարող ժողովրդի լուսավորության գործին ( ընդարձակ իմաստով - Ռ.Ս.) հակառակ լինել»: Իսկ այն իրողությունը, որ պահպանողականներն արժարժում էին կապիտալիզմի զարգացման հարցերը,- նկատում է Ս.Սարինյանը,- «ոչ այլ ինչ էր, եթե ոչ իրական հանգամանքներին համակերպվելու ձգտում: Առանց այս էական փաստի հաշվառման անհասկանալի կլինի կապիտալիզմի պահպանողական քննադատության բնույթը և այն ճեղքվածքը, որին դիմառնում է պահպանողական հոսանքի ազգային երազանքը՝ կապիտալիստական զարգացման փաստի հանդեպ: Հենց այստեղից էլ ծայր է առնում կապիտալիզմի ռոմանտիկական քննադատությունը պահպանողականների սոցիալական հայեցողության մեջ»:

Հայ հասարակական մտքի այդ երկու հիմնական հոսանքների միջև տասնամյակների տևած այս բանավեճը ինչ-որ տեղ եզրեր է գծում շուկայական հարաբերությունների վերաբերյալ արդի տեսակետների հետ: Այսինքն՝ նորից ամբողջ խնդիրը հանգում է այն բանին, թե ինչ ուղղություն տալ կատարվող տնտեսական ընթացքներին:

XIX վերջին քառորդին արևելահայ իրականության ազդեցիկ ուղղություններից էր նարոդնիկությունը, որպես համառուսական հոսանքի մի բաղկացուցիչ մաս, որին ավելի շուտ հետաքրքրում էին հետռեֆորմյան գյուղի սոցիալ-տնտեսական բարեկարգման հարցերը: Հայ նարոդնիկու-

թյանն ավելի շատ բնորոշ էր լիբերալ նարոդնիկության հայեցողությունը: Առաջադրվում էր համայնքը քաղաքակրթական ձևի մեջ դնելու մի սկզբունք, որը բնավ էլ «լուսավորության և զարգացման անհամապատասխան կազմակերպություն չէ», իսկ Սիմոն Ջավարյանը(1865-1913) Երևանի և Կարսի մարզի գյուղատնտեսության և գյուղացիության վիճակի մասին ուսումնասիրության մեջ, խոսելով գյուղացիության տնտեսական քայքայման ու շերտավորման, հողասակավության, վարձակալական հարաբերությունների, տարագնացության, հարկային համակարգի, վաշխառության և այլ երևույթների մասին, առաջադրում է լուծումներ, որոնք որպես գյուղի նյութական կյանքի բարելավման առաջադրույթներ, առաջարկվում էին նարոդնիկների կողմից:

Սողոմոն Եղիազարյանը (1852-1914) հատկապես հայտնի է Անդրկովկասի հաստատությունների՝ գյուղական համայնքի և համքարական կամ քաղաքային ցեխային կազմակերպությունների վերաբերյալ ուսումնասիրություններով: Եվ դա հասկանալի է: XIX դ. երկրորդ հիսնամյակին կապիտալիստական տնտեսաձևի արագ զարգացումը օրակարգում էր դրել այդ հաստատությունների պատմական գոյության իրավունքը: Դրանց ուսումնասիրումը ներկայացնում էր և գիտական և պրակտիկ հետաքրքրություն: Ռուսաստանի ծայրամասերում «ապրող ժողովուրդները գտնվում են քաղաքացիության տարբեր աստիճաններում ... նրանց հաստատությունները միաժամանակ կարելի է ուսումնասիրել զարգացման տարբեր փուլերում և այդպիսով հետևել դրանց բնական աճի ընթացքին ..., նոր լույս սփռել իրավունքի և հաստատությունների հաջորդական և առաջընթաց զարգացման օրենքների վրա ընդհանրապես»: Բաշխման և հարկային համակարգերի կատարելագործման, վարկի, արտադրության առաջավոր մեթոդների օգտագործման կամ զների քաղաքականության վերաբերյալ նրա առաջարկներն ու ուղեգծումները նպատակ էին հետամտում նոր իրադրության հետ կապակցելու հին տնտեսական հաստատությունները:

x x  
x

XX դարակիզքը հասարակության ու սոցիալական զարգացման նոր որոնումների ժամանակաշրջան էր: Հասարակության հայեցողության առաջ ծառանում են բազմաթիվ նոր անհայտներ, նոր պատրանքներ, ակնկալվում նոր սպասումներ՝ հասարակության կնճռոտ հարցերի լուծման ասպարեզում: Արդեն 1890-ական թվականների կեսերին, տնտեսական և քաղաքական դարասկզբի նոր կացության պայմաններում «ազգային մտայնության շերտերում ի հայտ եկան սոցիալական նորահայտ

շարժումներ դավանող հոսանքներ ու տեսություններ»: Ավարտվում էր հայ հասարակական, տնտեսագիտական մտքի հոսանքների դասական շրջանը: Այնուամենայնիվ հայ տնտեսագիտական միտքը նշանավորվում է նոր շահեկան ուսումնասիրություններով:

Վահան Տոտոմյանցը (1873–1952) կոոպերատիվ մտքի հայտնի տեսաբաններից է: Կոոպերացիան՝ որպես մարդկային աշխատանքի համագործակցության որոշակի ձև, պատմականորեն գոյություն է ունեցել հասարակության վաղ աստիճաններից սկսած: Սակայն բոլոր դեպքերում կոոպերատիվ ընկերությունների (արտադրողական, սպառողական, վարկային, գյուղատնտեսական) դարաշրջանը կապվում է կապիտալիստական տնտեսակարգի՝ սոցիալական, տնտեսական ու իրավական այն հարաբերությունների հետ, որոնք անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծել այդ կազմակերպությունների առաջացման համար: Դրանք չեն ենթադրում լոկ եսասիրության սկզբունքը և բացառում ավտորիզմը: Այն նպատակ ուներ եսասիրության սկզբունքը հաշտեցնել, այսպես կոչված, հասարակական շահերից բխող «սոցիալական պարտքի» հետ: Վ. Տոտոմյանցի ուսմունքը, եթե մի կողմից, հայտ ուներ դեպի Օ. Կոնտի «Սոցիալական ֆիզիկան», որը ենթադրում է «համընդհանուր սոցիալական համերաշխություն», քանի որ կոոպերացիան այն հաստատությունն է, որ հնարավորություն կտա նրա անդամներին գիտակցել եսասիրության և ավտորիզմի սկզբունքների փոխկախվածությունը, ապա մյուս կողմից, ելակետ ուներ Հ. Սպենսերի հայեցողությունը, և նպատակ ուներ կոոպերացիայի անդամների մարդկային բնության կատարելագործման և դեմոկրատացման սկզբունքների արմատավորման միջոցով հասնելու հասարակական հիմքերի փոփոխության: Այս իմաստով, պետության օգնությամբ կոոպերատիվ ասոցացիաների ստեղծումը նա համարում էր պակաս ռացիոնալ ուղի, քան ինքնօգնության սկզբունքի վրա հիմնված ներքևից կատարվող ուղին. «Սոցիալական կարգը կախված է անհատների որակական հատկություններից: Պրոգրեսը քիչ է կախված կառավարությունից, դրան ավելի շուտ կարելի է հասնել կազմակերպված և դաստիարակված մասսայի միջոցով: Կոոպերացիան ներկայացնում է միավորված անհատների ստեղծագործությունը»:

Տնտեսական ձևերի հաջորդափոխությունը բարդ ու երկարատև էվոլյուցիոն պրոցես է, հնի և նորի տարրերը սինթեզող բազմաթիվ ձևերի միջնորդվածություն: Տնտեսական կազմակերպության ձևերը բարդ են, բազմազան և գտնվում են մեկը մյուսի հետ հաջորդական կապի մեջ: Իսկ քանի որ հասարակության պատմությունը տնտեսաձևերի հաջորդափոխության, դրանց կատարելագործման պատմությունն է, ուստի և նոր

տնտեսաձևերը մեկուսացած իրողություններ չեն և հաճախ դրանց նախատիպերը կարելի է հանդիպել հասարակության վաղ շրջաններում՝ ամենատարբեր ձևերով: Հետհասարակական զարգացումը ենթադրում է տնտեսաձևերի հաջորդափոխությունը, որը սակայն չի բացառում նախորդ ձևերի որոշ տարրերի կրկնությունն ու պահպանումը, դրանց հետագա զարգացումը:

Տնտեսական ու սոցիալական ներհակությունների պրոբլեմը մշտապես ուղեկցել է հասարակության զարգացմանը, և հասարակական միտքը միշտ էլ փորձել է լուծել կնճռոտ հարցերը: Առաջադրվել են ուսմունքներ ու ծրագրեր, որոնց նպատակն է եղել հարթել այդ ներհակությունները պայմանավորող հանգույցները: Այս իմաստով Վ. Տոտոմյանցի բազմաթիվ աշխատությունները ոչ միայն կոոպերացիայի ձևերի ծագման ու էվոլյուցիայի նկարագրությունն են, այլև դրանց տեսական հիմնավորումը, գոյություն ունեցող տնտեսական ու սոցիալական ուսմունքների պարբերացումը, դրանց գիտական ու պատմական նշանակության վերլուծությունը:

Մենտոր Բուենիայանի (1877-1969) գիտական նախասիրությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում տնտեսական ճգնաժամերի տեսության ու պատմության հարցերը: Ճգնաժամերը խախտում են «արտադրության հաստատված կարգը», փոխելով տնտեսական զարգացման ռիթմը, խորացնելով դասակարգային ու սոցիալական ներհակությունները: Դա այն հանգուցային պրոբլեմն է, որի հետ անմիջականորեն առնչվում և խաչաձևում են «քաղաքատնտեսության ընդհանուր տեսության» համար կարևոր նշանակություն ունեցող «մի ամբողջ շարք կարևորագույն հարցեր»: Մ. Բուենիայանը տալով ճգնաժամերի «մորֆոլոգիան», դիտողություններ է անում դրամական, վարկային, ապրանքային, բորսային և սպեկուլյատիվ, արդյունաբերական ու ագրարային ճգնաժամերի առանձնահատկությունների, ծագման ու ընթացքի վերաբերյալ: Դրանք, լինելով հասարակական վերարտադրության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերը, «տնտեսական երևույթներից կտրած աբստրակցիաներ» են, որոնք իրականում գտնվում են փոխադարձ կապի մեջ: Ճգնաժամը որոշ առումով հավասարակշռվածություն է ստեղծում տնտեսության մեջ: Հատկապես կարևոր է կապիտալի նորացումը, թե տեխնիկական վերազինումները հնարավորություն են տալիս «արդյունքներն էժանացնելով, սպառումն ընդլայնելով և նոր պահանջումներն ծնելով, դնելու նոր շրջանի վերելքի հիմքը»:

Գերարտադրության ճգնաժամերը բնորոշ են ոչ միայն արդյունաբերությանը, այլև գյուղատնտեսությանը, որոնք չունեն նույն պարբերակա-

նությունը և «ըստ իրենց ծագման ներկայացնում են որպես կամ արտադրության, կամ բաշխման ֆենոմեն»: Տնտեսության պարբերական ցնցումների պատճառը մի մասով էլ պայմանավորված է տնտեսական կյանքի կազմակերպման տեխնիկական թերություններով: «Ժամանակակից տնտեսական կազմակերպությունը ... իր մեջ ամփոփում է նրա ներդաշնակ զարգացմանը և տնտեսական խանգարմանը հեշտ առիթ տվող մի շարք մոմենտներ»: Խոսքը վերաբերում է մասնավոր սեփականության և աշխատանքի բաժանման սկզբունքների առկայությանը: Աշխատանքի բաժանման խորացումը «օրգանական կապ» ու «կախվածություն» է ստեղծում ձեռնարկությունների միջև, որոնք իրենց «տնտեսական ինքնորոշման մեջ մնալով իրարից անկախ», միաժամանակ հանդես են գալիս որպես «հասարակական տնտեսության անբաժանելի մասեր»: Հասարակական արտադրության ղեկավար սկզբունքը դառնում է ոչ թե ապրանքի, այլ «արժեքի» արտադրությունը, իսկ որքանով այն իրականացվում է տարերային ձևով՝ առաջ է գալիս հակասություն՝ մի կողմից մասնավոր տնտեսական շահերի, իսկ մյուս կողմից՝ դրանց ու հասարակական շահերի միջև, որը դրսևորվում է հասարակական արտադրության և պահանջումների ու սպառման միջև գոյություն ունեցող հակասության ձևով: Իսկ քանի որ բացակայում է «ժողովրդական օրգանիզմի առանձին անդամների տնտեսական գործունեությունը կարգավորող մարմինը», ուստի և տնտեսական կյանքը չի կարող գերծ լինել խափանումներից:

Ճգնաժամերը բացատրող տեսություններից նա հատկապես արժեքավորում է Ս. Ջևոնսի, Կ. Մենգերի և Ա. Վալրասի «նոր տեսությունը»: Նյութական բարիքները բաժանվում են անմիջական սպառման առարկաների և արտադրական սպառման առարկաների: Վերջիններս, այսպես կոչված «բարձրագույն կարգի բարիքներ» են, որոնց միջոցով իրականացվում է սպառման առարկաների արտադրությունը: «Բարձրագույն կարգի բարիքները» ածանցյալ արժեք ունեն և կախված են դրանց միջոցով արտադրվող սպառողական բարիքների արժեքից: Հաճախ «սպառողական և արտադրողական բարիքների արժեքների կազմավորման գործոնների փոխադարձ կապը կտրվում է և արտադրությանը զրկում նրա ամբողջ ընթացքում արժեքի սկզբունքը խիստ վերահսկողության ենթարկվելուց»: Սակայն, մոնոպոլիստական միավորները տնտեսական զարգացման պրոցեսում առաջ են բերում «նոր գծեր» և «վերացնելով կամ սահմանափակելով մրցակցությունը», արտադրությանը տալիս են պլանաչափ բնույթ և վերականգնում «կապիտալացման և կապիտալի սպառման պրոցեսի միջև հավասարակշռությունը»:

Հայ մտքի նոր չափումների համար շահեկան հանդիսացան Միքայել

Վարանդյանի (1870-1934) աշխատությունները: Նա մարքսիզմը դիտում է որպես մի ուսմունք, որում առաջադրված շատ թեզեր, որպես պատրանքներ, խոցելի են դարձել իրական զարգացման ճշմարտության հանդեպ: «Չեզեյան վերացական մի կառուցվածքի» վրա հիմնված այդ ուսմունքը, որը չափումների անհամապատասխանություն է հայտնաբերում և «անհամաձայն էր կենդանի իրականության հետ», իր շատ մասերով չի դարձել պատմության ուղեկիցը: Մարքսի ուսմունքի խարխալը, որի վրա կառուցվում է հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգը, ենթադրում է տնտեսական գործոնը, իսկ դա նշանակում է «պատմական վերիվարումներին» տալ միագիծ գնահատումներ, մի կողմ թողնելով հոգևոր ու գաղափարական ազդակների նշանակությունը:

Մարքսիզմի բազմաթիվ դրույթներ հակասության մեջ են կյանքի քննության հետ: Սահմանափակ պիտի դիտել այն անվերապահ դիտարկումը, թե գնալով խորանում են դասակարգային ու սոցիալական ներհակությունները: XX դարասկզբին, քաղաքակրթության ընթացքը պարտադրում է ճշտումներ կատարելու այդ ըմբռնումներում և որքան էլ այն ենթակա լինի «շահամոլ էգոիզմի» դրսևորումներին, այնուհանդերձ նախորդ դարաշրջանների համեմատությամբ հունամիզմի սկզբունքն ավելի շեշտված է և ընդհանուր զարգացումը գնում է հենց այդ ուղղությամբ. «էգոիստական մոլիչները հետզհետե նվազում են, տեղի տալով ավտորիտատական կամ այլասիրական մոլիչներին»:

Հասարակության էվոլյուցիայի գործակիցները միանգամից ստեղծվել չեն կարող, դա պահանջում է նախապատրաստական մի երկարատև պատմաշրջան, որն այդ որակափոխությանը կտա պատճառականացված և բնականոն ձև. «նոր բարձր ընկերային իրավակարգը, արդեն պատրաստված ու հասունացած հնի ծոցի մեջ, պիտի բխի հին, կապիտալիստական իրավակարգից նույնքան բնականորեն, ինչպես հասունացած երեխան լույս աշխարհ է գալիս մոր արգանդից ...»: Այս օրինաչափության մեջ է, որ չի տեղադրվում ռամկավարության ռուսական տարբերակը, որը փորձ էր ցատկելու բնականոն զարգացման հայտնի փուլերի վրայով: Արդյունքում երկիրը վերածվեց Tabula rasa - ի, մի կատարյալ «մերկ տախտակ» տրոհված հասարակական օրգանիզմ, քայքայված արդյունաբերություն և գյուղատնտեսություն, զինվորական կարգապահություն:

Մ. Վարանդյանի դարասկզբին արված դիտողությունները համահընչուն լինելով դարեվերջի նորագույն ըմբռնումներին ձեռք են բերում արդիական նշանակություն: Նա իր վերլուծություններում առաջնորդվում էր քննադատական մտքի վերընթաց չափանիշներով:

Դարասկզբի հայտնի դեմքերից է Բախչի Իշխանյանը (1879-1921), որի մտորումները «հասարակության ինչ է լինելու և ինչպես է զարգանալու մասին» հայ քննադատական մտքի ուշագրավ էջերից են: Նրա «Տնտեսական զարգացման ֆազերը» աշխատությունը նվիրված է հասարակական զարգացման աստիճանների, այն պայմանավորող օրենքների և այդ աստիճանները բնութագրող առանձնահատկությունների վերլուծությանը: Ուրվագծելով հասարակության առաջընթացի հետագիծը առանձնացվում է տնտեսական զարգացման երեք շրջաններ՝ տնային փակ տնտեսություն, քաղաքային տնտեսություն և ժողովրդական տնտեսություն: Այս բաժանման հիմքում դրված է փոխանակային կոնցեպցիան, որով ելակետային նշանակություն է տրվում փոխանակության ձևերի փոփոխությանը, ճշգրիտ ու առավել ընդհանրական ցուցադրելով «պատմական մարդու տնտեսության զանազան ձևերը, նրանց աստիճանական բարդացումը»: Հասարակական կյանքի ճանաչողության հարցերում հայ իրականությանը հաղորդակից դարձնելով համաշխարհային մտքի ձեռքբերումներին, նա փորձում է պարզել, թե ի՞նչ է ինքն այդ հասարակություն ասածը, ինչպես է կազմված, ի՞նչ օրենքներ են իշխում նրա զարգացման մեջ, որո՞նք են նրա առաջադիմությանը նպաստող հանգամանքները և ի՞նչ - պայմաններ են արգելք հանդիսանում նրա զարգացման ընթացքում: Սոցիոլոգիական մտքի բոլոր ուղղություններից առավել տարողունակը հոգեբանականն է: Այն հասարակական երևույթների պատմական բացատրության ու զարգացման օրինաչափությունների հիմքում դնում է անհատի ու կոլեկտիվի հոգեբանական գործակիցները իրենց փոխազդեցությունների մեջ և առավել ստույգ է արտահայտում ընդհանուր էվոլյուցիան, քանի որ «անհատական և հասարակական հոգեբանությունների ընդհարումները ու հաշտությունները կազմում են հասարակական կյանքի զարգացման ուղին»: Բ. Իշխանյանի «Հասարակական գաղափարները» (1910) իր վերլուծական մեթոդաբանությամբ, հասարակական մտքի չափումների իր առանձնահատկություններով նորարարություն էր ակրնկալում, ինչը անվանվում է «զենետիկ-վերլուծական մեթոդ»: Ի տարբերություն պատմա-խրոնիկականի, այն ենթադրում է «գաղափարների ու պրոբլեմների այսպես ասած՝ խմբակցության (գրուպայիրովկա) եղանակը ... իրենց ներքին օրգանական կապակցությամբ և դրանց շուրջը խմբել հեղինակի զանազան ժամանակներում ունեցած արտադրությունները», որպես «որոշ հասարակական կատեգորիայի դասակարգային շահերի և ձգտումների պատմական միսիայի լոգիկական արտահայտիչներ»:

Ուշագրավ է Բ. Իշխանյանի «Ծննդն է լեզուն և լեզուն է մտածումը» (1917) աշխատությունը: Ի դեպ գրքի ներածությունը գրել է Մ.

Տուգան-Քարանուկսկին, այն արժեքավորելով որպես պատերազմի պատճառները լուսաբանող «ընդարձակ և ուսանելի փաստացի նյութի» վրա շարադրված և «հասարակական ուշադրության» արժանի ուսումնասիրություն: Այն հանգամալից պատկերացում է տալիս Գերմանիայի տնտեսական էվոլյուցիայի մասին, որը զուգորդվում էր բնակչության գաղափարական ու հոգեբանական նախապատրաստությամբ, առաջ բերելով մի տեսակ «միլիտարիստական մանկավարժություն», որը ուժի փառաբանությունը հասցնում է բացարձակ հասկացության, ուր մնացած ամեն ինչի գոյությունը դառնում է ենթակայական:

Բ. Իշխանյանը Կովկասի տեխնիկատնտեսական ու ընդհանուր մշակութային առաջադիմության աղյուսակի առաջին հորիզոնականը հատկացնում է հայերին, որոնց մոտ զարգանում է նորաքաղաքացիության օրգանիզմը իր արդյունաբերական, առևտրական և ֆինանսա-բանկային ճյուղավորումներով, զարգացում, որի հիմքում արդեն դրված է տնտեսական ռացիոնալիզմի սկզբունքը:

Հայ մտքի պատմության մեջ կան այնպիսի հեղինակներ, որոնց գործերը ժամանակի հետ ստանում են նոր հնչեղություն: Այդ մտածողներից է Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան) (1879-1942): Նրա հետազոտությունները գերազանցապես պատմա-տնտեսագիտական բնույթ ունեն: «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» աշխատությունը տալիս է հայ ազգի տնտեսական, կուլտուրական և հոգևոր էվոլյուցիայի ընդհանուր նկարագիրը, «քաղաքացիական զարգացման գործոնները»:

Ռուսական տիրապետությունն «Անդրկովկասի տնտեսական կյանքի համար ունեցավ հեղաշրջող նշանակություն»: Դ. Անանունն այս իմաստով քննության է ենթարկում Ռուսաստանին միանալուց հետո արևելահայ ազգարային հարաբերությունների օրենսդրական կարգավորման ընթացքը, ցույց տալիս արդյունաբերության ու առևտրի զարգացումը: Լինելով պատմաբան-տնտեսագետ նա տնտեսական գործոնը դիտում էր որպես հայ ազգային անկախության և ուժի գրավականը: Նրա հայեցողության մեջ թեև չէր սահմանազատվում տնտեսական զարգացման վերաբերյալ հասարակական մտքի ուղղությունների տիրույթը, հաճախ տարրալուծելով դրանք, այնուհանդերձ նշմարվում են կռվաններ, որոնց վրա «պիտի ամրանար ու ծավալվեր հայության հավաքումը»: «Հայության ազգային կառուցվածքն այլանդակված դուրս եկավ թուրք-պարսկական տիրապետությունից»: Իսկ ինչ արդյունք ունեցան հայահավաք գաղափարները ռուսահայերի հասարակական զարգացման արդյունքում XIX դարի ընթացքում, ինչպիսին էին տնտեսական կյանքն ու դասակարգային փոխհարաբերությունները, որոնք պայմանավորեցին գաղափարի

և դրա իրականացման ճեղքվածքը. «Հայությունը չէր ապրում ինքնամփոփ տնտեսական կյանքով: Նրա տարբեր դասակարգերի շահերը բացասաբար չէին խաչաձևում կամ անջատվում միևնույն տնտեսական պտվանդանի կամ երևույթի շուրջը: Հաշտությունն ու բախումը տեղի էր ունենում այնպիսի պայմաններում, որ ազգային հանգամանքը բռնում էր ետին տեղը: Անդրկովկասի խայտաբղետ ազգաբնակչական կազմը, հայկական դրամազլխի գաղութայնությունն ու թափառասիրությունը, պետականության ստեղծած հարստացման հնարավորությունները առանց հայկական տարրի որևէ մասնակցության, Հայաստանի անջատված լինելը մեծ ուղիներից ու զարգացած տնտեսական կենտրոններից այս բոլորը չէին վկայում ու խոսում այն մասին, թե հայությունը տնտեսապես ինքնամփոփ է և նրա դասակարգերը շահագրգռված իրար գոյության այս կամ այն վիճակով: Այո, տնտեսական կապը հայերի, իբրև ազգության մեջ, չափազանց թույլ էր և այդ պատճառով տկար էր ազգային մարմինը»:

Ազգության «ներքին ու արտաքին» խորհուրդը տնտեսական խնդիրն է, որի համար անհրաժեշտ է ստեղծել ընդհանուր տարածքային պատվանդան, որպես «ազգային բարոյական կապն ամրացնող» գործոնի, որից դուրս մնացած հատվածներն իրենց «նյութական զորությամբ անմասն են մնում ազգի կյանքին»:

Վերլուծելով Հայաստանի ու Ղարաբաղի տնտեսական ամբողջության հիմքերը, Դ. Անանունը եզրակացնում է, թե «Ղարաբաղը ամբողջական Հայաստանից դուրս՝ դա խոց է ... եթե Ադրբեջանում խելքը զլխին քաղաքագետներ լինեին, նրանք ամենից առաջ կիրաժարվեին Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենիքի հավաքման համոզված գործիչներ կան՝ նրանք օրն ի բուն պիտի խորհեն Ղարաբաղի մասին»: «Պայքարին է վերապահված լուծելու հարցը ...»:

Այդ է պահանջում «հավաքական հայության» գաղափարը՝ ազգային միասնության գաղափարը:

x x  
x

XX դար մուտք գործելուց երկու տասնամյակ անց տնտեսագիտական միտքը «ռուսական դաշտում» սկսում է կծկվել, երևույթների բացատրության համար մեկնակետ ընդունելով մարքսիստական տնտեսագիտությունը, որպես պաշտոնական տեսություն: Գործում էին որոշակի չափանիշներ, որոշարկվում էին ճշտի ու սխալի սահմանները,

մեկն ընդունելով՝ ժխտում մյուսը: Միակողմանի դարձած բնորոշումներն ընդունել էին վերջավորված սահմանումների ձև: Իր վերլուծական խորագումների մեջ այդ անհամաչափությունը, որը դրսևորվում էր խորհրդային տնտեսագիտության մեջ՝ արևմտյան տեսական մտքի համեմատությամբ, պիտի շարունակվեին տասնամյակներ:

## Նորբլյան մրցանակի դափնեկիր տնտեսագետները

1969թ.

**Յան Տինբերգեն** (Նիդեռլանդիա)

**Ռազնար Ֆրիշ** (Նորվեգիա)

«Տնտեսական պրոցեսների վերլուծության նկատմամբ դիմամիկ մոդելների զարգացման և կիրառության համար»:

**Յան Տինբերգեն** (1903-1994). 1926-ին ավարտել է Լեյդենի համալսարանը, որտեղ ուսումնասիրել է մաթեմատիկական ֆիզիկա: Ասպիրանտուրայում ուսանելու տարիներին նա սկսում է զբաղվել տնտեսագիտությամբ, 1929-ին ստանալով դոկտորի աստիճան: 1930-ական թվականներին Ֆրիշի հետ միասին ստեղծել է նոր գիտություն՝ էկոնոմետրիկա, միավորելով վիճակագրությունը և տնտեսական վերլուծությունը: Այդ հիմքի վրա Տինբերգենը ստեղծել է հոլանդական տնտեսության աշխատող մոդել՝ բաղկացած շուրջ երեք տասնյակ մաթեմատիկական հավասարումներից: Ավելի ուշ այդպիսի մոդել նա կառուցել է ամերիկյան տնտեսության համար: Տինբերգենի տեսության համաձայն տնտեսական աճը միշտ ընթանում է անհավասարաչափ ձևով, որպես բարձր տեմպերի և անկումների ցիկլային հաջորդափոխություն՝ 40-60 տարի ընդգրկող «երկարատև ալիքների» ձևով: 1966-ին նա ընտրվել է ՄԱԿ-ին կից զարգացման պլանավորման կոմիտեի նախագահ: 1975-ին Հռոմեական ակումբի հանձնարարությամբ Տինբերգենը պատրաստում է զեկուցում գլոբալ-տնտեսական պրոբլեմների վերաբերյալ սկզբնավորելով գլոբալացումը որպես գիտություն, հիմնավորելով նոր միջազգային կարգի գաղափարը:

**Աշխատությունները.** *«Տնտեսական ցիկլը Միացյալ Նահանգներում 1919-1932թթ.»* (1939), *«Տնտեսական աճի մաթեմատիկական մոդելները»* (1942), *«Տնտեսական քաղաքականություն: Սկզբունքները և պլանը»* (1956), *«Տնտեսական քաղաքականության տեսության մասին»* (1952), *«Եկամուտների բաշխումը»* (1975), *«Միջազգային կարգի վերանայում»* (1980):

**Ռանգար Ֆրիշ** (1895-1975). սովորել է Օսլոյի համալսարանում տնտեսագիտություն մասնագիտությամբ, որն, իր խոսքերով ասած «ամենակարճ և ամենահեշտ դասընթացն էր»: 1919-ին ստանում է բակալավրի աստիճան, այնուհետև ուսումը շարունակում Ֆրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում: 1926-ին ստանում է դոկտորի աստիճան մաթեմատիկական վիճակագրության գծով: Նա նորոպի է մտնում

սպառողական պահանջարկի տեսությանը որպես տնտեսագիտության մի բնագավառի, որն ուսումնասիրում է անհատի պահվածքը:

Տնտեսագիտական վերլուծությունները նա արդյունավետ է դիտում տնտեսագիտության տեսության, վիճակագրության և մաթեմատիկայի սինթեզի մեջ ու առաջիններից մեկն էր, որ սահմանազատեց մակրո և միկրո վերլուծությունները: Նորարական են համարվում նրա «ցիկլերի տեսության դինամիկ արտահայտության», «վարկածների վիճակագրական տեսավորման մեթոդները» մշակումները:

1932-65թթ. Ֆրիշը գլխավորել է Օսլոյի տնտեսագիտության ինստիտուտը: Եղել է Նորվեգիայի կառավարության կոնսուլտանտը, մի շարք երկրների ազգային ակադեմիաների պատվավոր անդամ:

**Աշխատությունները.** «Ձուտ տնտեսագիտության հիմնահարցի մասին» (1926), «Սահմանային օգտակարության չափման նոր մեթոդներ» (1932), «Խնայողությունները և շրջանառության պլանավորումը» (1933), «Մուլտիպլիկացիոն մեթոդ գծային ծրագրավորման համար» (1955), «Էկոնոմետրիկական ժամանակակից աշխարհում. ներածություն, աճ և առևտուր» (1970):

**1970թ.**

### **Պոլ Սամուելսոն** (ծն. 1915, ԱՄՆ)

«Տնտեսական գիտություններում գիտական վերլուծության մակարդակի բարձրացման մեջ կատարած ներդրման համար»:

Կրթությունը ստացել է Չիկագոյի համալսարանում: 1941-ին Հարվարդի համալսարանում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա: 1947-ին լույս է տեսնում «Տնտեսագիտական վերլուծության հիմունքներ» աշխատությունը, հեղինակին արժանացնելով մի շարք մրցանակների: Այն XX դարի տնտեսագիտական մտքի առավել հիշարժան երևույթներից մեկն է: Նրանում ավանդական տնտեսագիտական վերլուծությունը զուգորդված է մաթեմատիկական շարադրանքի հետ, հակառակը, ինչպես ինքն է նկատել, պարզապես կնշանակեր զբաղվել «աղավաղված բնույթի մտավոր վարժանքներով»: Մաթեմատիկայի և վերլուծության այդ զուգորդումը դարձել է ելակետային ստատիկ և դինամիկ տեսությունների և տնտեսական համակարգերի կայունության հիմքերի մշակման համար: Սամուելսոնի հետազոտական տեսադաշտը ընդգրկում է տնտեսագիտության զրեթե բոլոր բաժինները, որն իր արտացոլումն է գտել 1948-ին լույս տեսած «Տնտեսագիտություն. վերլուծության ներածություն» աշխատության մեջ: Այն ունեցել է շուրջ 15 հրատարակություն, թարգմանվել տասնյակ լեզուներով, դառնալով աշխարհի բազմաթիվ ուսումնական հաս-

տատությունների դասական դասագրքերից մեկը: Սամուելսոնը «ճեղքասական սինթեզի» նշանավոր հեղինակներից է, փորձելով արտադրության օպտիմալ մակարդակը պայմանավորող գործոնների ճեղքասական վերլուծությունը միավորել պահանջարկի գործոնների քեյնսյան վերլուծության հետ: Տնտեսական աճի խթանման, բնակարանային շինարարության, պարենային օգնության ծրագրերի հարցերում ընդունում էր տնտեսության մեջ պետության միջամտությունը:

Սամուելսոնը եղել է պրեզիդենտ Ջոն Քենեդիի խորհրդականը, Ամերիկյան տնտեսագիտական ասոցիացիայի, Տնտեսագիտական ընկերության և Միջազգային տնտեսագիտական ասոցիացիայի նախագահը:

**Աշխատությունները.** «Տնտեսագիտական վերլուծության հիմունքներ» (1947), «Տնտեսագիտություն. վերլուծության ներածություն» (1948), «Գծային ծրագրավորում և տնտեսագիտական վերլուծություն» (Ռ. Սոլոուի և Ռ. Դորֆմանի հետ համատեղ) (1958), «Սպառողական վարկի ճշգրիտ մոդելը սոցիալական ասիզնացիաների օգտագործումով կամ առանց օգտագործման» (1958):

**1971թ.**

### **Սայմոն Կուզնեց** (1901-1985, ԱՄՆ)

«Տնտեսական աճի էմպիրիկ հետազոտությունների համար»:

1926-ին Կոլումբիայի համալսարանում ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան: 1930-ին լույս է տեսել առաջին աշխատությունը՝ «Արտադրության և գների հարյուրամյա դինամիկան», որտեղ մշակել է ազգային եկամտի հաշվարկման մեթոդները: Տնտեսագիտական հետազոտությունների Ազգային բյուրոյում ղեկավարել է ազգային եկամտի հետազոտության ծրագիրը: Արդյունքում (որոնք ամփոփվել են բազմաթիվ գիտական հաշվետվություններում) փաստորեն ստեղծվում են մակրոէկոնոմիկայի վիճակագրական հիմքերը: Կիրառելով «կրկնակի հաշվարկման» սկզբունքը ազգային եկամուտը գնահատվում է երկու չափումներով՝ որպես ամբողջական պահանջարկ (սպառողական ապրանքների և ծառայությունների ծախսերի, ինվեստիցիայի և պետական ծախսերի գումար) և առաջարկի տեսանկյունից ընդհանուր եկամտի ցուցանիշ (աշխատավարձի, շահույթի, ռենտայի գումար): Նա որոշարկել է նաև համախառն և զուտ եկամտի հասկացությունները, տվել դրանց հաշվարկման մեթոդիկան:

Կուզնեցի ուսումնասիրություններում նշանակալից էին տնտեսական աճի հարցերը, ցույց տալով կուտակման, ինվեստիցիաների և տեխնոլոգիաների փոփոխությունների ազդեցությունը: Նա բացահայտել է



տնտեսական աճի «երկարատև ալիքները», որն ընդունված է անվանել «Կուզնեցի ցիկլեր»՝ որպես գիտատեխնիկական առաջընթացի, բնակչության թվի և ազգային եկամտի արագ և դանդաղ հաջորդափոխություն: Նա հանգել է այն եզրակացության, որ ժամանակակից պայմաններում տնտեսական աճն ավելի շատ կախված է «մարդկային կապիտալի» ուղղությամբ կատարվող ներդրումներից, քան նյութական կապիտալի: Մի շարք երկրների տվյալների ուսումնասիրությունը նրան հանգեցրել են այն հետևությանը, որ արտադրության վերելքի հետ դրսևորվում է տարբեր սոցիալական խմբերի եկամուտների անհավասարության նվազման միտում: Ընդ որում, թույլ զարգացած երկրներին բնորոշ է այլ դինամիկա. սկզբում եկամուտների անհավասարությունն աճում է, տասնամյակ հետո սկսում կրճատվել: Ս. Կուզնեցը դասախոսել է Պենսիլվանիայի, Ջոն Գոպկինսի և Չարվարդի համալսարաններում: Եղել է Ամերիկյան վիճակագրական ասոցիացիայի և Ամերիկյան տնտեսագիտական ասոցիացիայի նախագահը:

**Աշխատությունները.** «Արտադրության և գների հարյուրամյա դինամիկան» (1930), «Կապիտալը և ամերիկյան տնտեսությունը» (1961), «Ժամանակակից տնտեսական աճը. նորման, կառուցվածքը և տևողությունը» (1966), «Արտադրողականությունը և արտադրական կառուցվածքը» (1971), «Բնակչությունը, կապիտալը և աճը. ուրվագծերի ժողովածու» (1973):

**1972թ.**

**Ջոն Դիկս** (Մեծ Բրիտանիա)

**Քեննետ Էրրոու** (ԱՄՆ)

«Չավասարակշռության ընդհանուր տեսության մեջ նորարական ներդրման համար»:

**Ջոն Դիկս** (1904-1989). Կրթություն է ստացել Օքսֆորդի համալսարանում, այնուհետև դասախոսել Լոնդոնի տնտեսագիտական դպրոցում, զբաղվել է հետազոտական աշխատանքով Քենբրիջում, եղել է Մանչեստերի համալսարանի պրոֆեսոր: Նա ավելի քան 20 աշխատությունների հեղինակ է: «Աշխատավարձի տեսությունը» մենագրությունում տնտեսագիտական վերլուծության մեջ նա կատարում է երկու հիմնարար նորամուծություններ. որոշում է «սուբստիտուցիայի էլաստիկությունը» (արտադրության մեկ գործոնը մյուսով փոխարինելու ցուցանիշը) և որ էլաստիկության գործոնը ուղղակի հարաբերություն ունի եկամտի բաշխման և տնտեսական աճի հետ:

Դիկսի գլխավոր աշխատությունը համարվում է «Արժեք և կապի-

տալ» ուսումնասիրությունը: Նա մշակել է դինամիկ հավասարակշռվածության տեսությունը. դինամիկան դիտելով որպես ստատիկ հավասարակշռվածության իրավիճակների հաջորդական շարք: Ընդհանրապես, նրա մտադրությունում տնտեսական սուբյեկտների սպասումները, հանդես են գալիս որպես համակարգի դինամիկան պայմանավորող գլխավոր գործոն:

**Աշխատությունները.** «Աշխատավարձի տեսությունը» (1932), «Արժեք և կապիտալ» (1939), «Ներդրում առևտրական ցիկլի տեսության մեջ» (1950), «Կապիտալը և աճը» (1965), «Տնտեսական պատմության տեսություն» (1969), «Քեյնսյան տնտեսագիտական տեսության ծգնաժամը» (1974), «Փողը, տոկոսը և աշխատավարձը» (1982), «Դինամիկ տնտեսության մեթոդները» (1985):

**Քեննետ Էրրոու** (ծն. 1921, ԱՄՆ). տնտեսագիտական կրթությունը ստացել է Կոլումբիայի համալսարանում: 1951-ին «Սոցիալական ընտրությունը և անհատական արժեքները» ուսումնասիրության համար ստացել է դոկտորի աստիճան: Դասախոսել է Չիկագոյի, Ստենֆորդի, Չարվարդի համալսարաններում:

1950-ական թվականները Էրրոուի համար արգասաբեր էին տնտեսագիտական տեսության մեջ էական ներդրումներով, հատկապես կապված մրցակցային շուկայում հավասարակշռության պայմանների հետազոտության ուղղությամբ: Նա ցույց է տվել, որ շուկայական համակարգի օպտիմալ գործողության համար կառավարությունը չպետք է ուղղակի (օրինակ՝ գների վերահսկման միջոցով) միջամտի եկամուտների վերաբաշխմանը: Շուկայական ուժերի ազատ գործողության համար ավելի արդյունավետ է դիտվում տնտեսական լծակների (հարկերի, տրանսֆերտների) օգտագործումը: Որոշակի են նրա ներդրումները օպտիմալ պաշարների տեսության, շուկայական մոդելների կայունության, մաթեմատիկական ծրագրավորման, վիճակագրական որոշումների տեսության, տնտեսական աճի և բաշխման հիմնահարցերի վերլուծության ուղղությամբ:

**Աշխատությունները.** «Սոցիալական ընտրությունը և անհատական արժեքները» (1951), «Դասական տնտեսության բարեկեցության բազային տեսությունների ընդլայնումը» (1954), «Կապիտալի փոխարինումը աշխատանքով և տնտեսական արդյունավետությունը» (1961), «Պետական ինվեստիցիաները, շահույթի նորման և օպտիմալ հարկային քաղաքականությունը» (Մ. Կուրցի հետ համատեղ-1970):

1973թ.

**Վասիլի Լեոնտև (1906-1999, ԱՄՆ)**

«Ծախքեր-թողարկում» մեթոդի զարգացման և այն կոնկրետ տնտեսական հիմնահարցերի նկատմամբ կիրառելու համար»:

1921-ին ընդունվել է Պետերբուրգի համալսարանը ուսումնասիրելով փիլիսոփայություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն: Ավարտելուց հետո կրթությունը շարունակում է Բեռլինի համալսարանում: 1928-ին 22 տարեկանում «Էկոնոմիկան որպես շրջապտույտ» ուսումնասիրության համար (նվիրված տնտեսական հոսքերի ցիկլայնությանը) ստանում է դոկտորի աստիճան: 1931-ին տնտեսագիտական հետազոտությունների Ազգային բյուրոյի հրավերով տեղափոխվում է աշխատանքի ԱՄՆ: Կարճ ժամանակ անց նա արդեն Հարվարդի համալսարանում էր, աշխատելով ավերի քան չորս տասնամյակներ: Նրա «Ամերիկյան տնտեսության կառուցվածքի հետազոտությունը» նվիրված է, «ծախքեր-թողարկում» խաչաձև կախվածություններին, որտեղ տնտեսության ճյուղերի, ոլորտների փոխկախվածություններն արտահայտվում են հավասարումների համակարգի միջոցով: Այն ներկայացվում է աղյուսակների կամ հաշվեկշռի (միջճյուղային հաշվեկշռի) ձևով, որպես առաջին աստիճան: Մոդելի երկրորդ աստիճանը շուրջ 200-ի հասնող «տեխնիկական գործակիցներն» են, որոնք բխում են առաջին աստիճանից և ներկայացնում են այդ փոխկախվածությունների քանակական և որակական չափումները: Այն նմանեցվում է գնացքների չվացուցակի, որտեղ նշվում է, թե որտեղից և ուր են գնում գնացքները, ժամանումը և հանդիպական կայարանները: Երրորդ կարգավորող աստիճանը հավասարումների համակարգն է, որը հայտնի է «Լեոնտևի ինվերսիա» անվանումով: Այն թույլ է տալիս պատասխանելու այն հարցին, թե յուրաքանչյուր ոլորտին որքան ծախքեր են անհրաժեշտ համախառն արդյունքը մեկ դոլարով աճելու համար, այսինքն թե ինչ և ինչքան պետք է ծախսի յուրաքանչյուր ոլորտը այս կամ այն կոնկրետ արդյունքի թողարկումը ավելացնելու համար: Ծախքերը հաշվարկվում են ինչպես նյութական, այնպես էլ դրամական արտահայտությամբ: Նրա «ծախքեր-թողարկում» մոդելի հիման վրա նշակումներ են իրականացվել աշխարհի տասնյակ երկրներում:

**Աշխատությունները.** «Ամերիկյան տնտեսության կառուցվածքը 1919-1929թթ. հավասարակշռության վերլուծության էմպիրիկ հետազոտություն» (1941), «Ամերիկյան տնտեսության կառուցվածքի հետազոտություն» (կոլեկտիվ-1953), «Ծախքեր-թողարկում տնտեսությունը» (1966), «Նոր հայացք տնտեսության վերաբերյալ» (1967), «Տնտեսական

*համակարգը բեկումնային ժամանակաշրջանում» (1976), «Տնտեսագիտական էսսեներ, տնտեսություն, հետազոտություններ, փաստեր, քաղաքականություն» (1977), «Համաշխարհային տնտեսության ապագան» (համահեղինակությամբ-1979):*

1974թ.

**Գուննար Սյուրդալ (Շվեդիա)**

**Ֆրիդրիխ Ֆոն Հայել (Ավստրիա, ԱՄՆ)**

«Փողի տեսության և տնտեսական տատանումների վերաբերյալ աշխատությունների և տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ երևույթների փոխկախվածությունների վերլուծությունների համար»:

**Գուննար Սյուրդալ ( 1898-1987 )** :Շվեդական տնտեսագետ: 1923-ին ավարտել է Ստոկհոլմի համալսարանը՝ դառնալով դիպլոմավորված իրավաբան, այնուհետև խորանում տնտեսագիտության մեջ, կրթությունը շարունակելով Անգլիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում: 1927-ին պաշտպանում է դոկտորական դիսերտացիա «Գնագոյացման պրոբլեմները տնտեսական տեղաշարժերի պայմաններում» թեմայով, որն ուսումնասիրություն է այն մասին, թե անորոշ շուկայական պայմանների սպասումներն ապագայում, մակրոտնտեսական մակարդակում, ինչպես են ազդում տնտեսական ընկերությունների պահվածքի վրա:

«Գանձրանային քաղաքականության տնտեսական արդյունքները» (1934) աշխատության քննության առարկան հարկային քաղաքականության հարցերն են դեպրեսիայի ժամանակ, իսկ «Դրամական հավասարակշռվածությունը»՝ տոկոսադրույքի տեսությունը:

1938-ին Կարնեգիի ֆոնդի հրավերով Գ.Սյուրդալը գլխավորում է «նեգրական պրոբլեմը» ուսումնասիրող հետազոտական խումբը, որի արդյունքում 1944-ին լույս է տեսնում «Ամերիկյան երկրներում. նեգրական պրոբլեմը և ժամանակակից դեմոկրատիան » աշխատությունը, որը մեծապես պայմանավորեց ամերիկյան կառավարության պետական քաղաքականության հետագա ընթացքը:

1947-1957թթ. Գ.Սյուրդալը եղել է եվրոպայի գծով տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղարը:

**Աշխատությունները.** «Միջազգային էկոնոմիկա. պրոբլեմներ և հեռանկարներ»( 1956), «Ասիական դրամա. ժողովուրդների աղքատության ուսումնասիրությունը»(1968), «Հոսանքին հակառակ. տնտեսագիտության քննադատական ուրվագծեր»(1973):

**Ֆրիդրիխ Հայել**( 1899-1992) ավստրո-անգլո-ամերիկյան տնտեսագետ: 1921-ին ավարտել է Վիեննայի համալսարանը: Նրա հե-

տաքրքրությունների շրջանակներն էին իրավագիտությունը, տնտեսագիտությունը, սոցիոլոգիան, հոգեբանությունը, փիլիսոփայությունը: 1927-ին Լյուդվիգ Ֆոն Միզեսի հետ հիմնադրել է տնտեսական հետազոտությունների Ավստրիական ինստիտուտը, այնուհետև ապրել է Անգլիայում, աշխատել է կոնոմիկայի Լոնդոնյան դպրոցում:

1950-ին տեղափոխվում է ԱՄՆ, աշխատելով Չիկագոյի համալսարանում: 1962-ին վերադառնում է Եվրոպա՝ Ֆրեյբուրգի և Զալզբուրգի համալսարաններում զբաղեցնելով պրոֆեսորի պաշտոն: Ընտրվել է Բրիտանական թագավորական Ակադեմիայի գիտությունների անդամ:

Նա համարվում է XX դարի դասականներից մեկը:

**Աշխատությունները.** «Չները և արտադրությունը» (1931), «Փողի տեսությունները և տնտեսական ցիկլը» (1933), «Շահույթը, տոկոսը և ինվեստիցիաները» (1939), «Կալիտալի զուտ տեսությունը» (1941), «Ծանապարհի դեպի ստրկություն» (1944), «Անհատականությունը և տնտեսական կարգը» (1945), «Ընկալումների կառուցվածքը» (1952), «Ազատության սահմանադրություն» (1960), «Փիլիսոփայության, քաղաքականության, էկոնոմիկայի և գաղափարների պատմության վերաբերյալ ուսումնասիրություններ» (1967, 1978), «Կործանարար անձնապատանություն. սոցիալիզմի սխալները» (1988) և այլն:

**1975թ.**

**Լեոնիդ Կանտորովիչ (ԽՍՀՄ)**

**Տյալլինգ Կուպմանս (ԱՄՆ)**

«Ռեսուրսների օպտիմալ օգտագործման տեսության մշակման համար»:

**Լեոնիդ Կանտորովիչ (1912-1986).** Ծնվել է Պետերբուրգում: Տասնութ տարեկանում ավարտում է Պետերբուրգի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը, չորս տարի անց դառնում է պրոֆեսոր, իսկ մեկ տարի հետո շնորհվում գիտությունների դոկտորի աստիճան:

Կանտորովիչը տնտեսական վերլուծությունների մաթեմատիկական մեթոդների ուղղության հիմնադիրներից մեկն է ԽՍՀՄ-ում: Կիրառելով օպտիմալացման մեթոդները նա մշակել է տնտեսական ցուցանիշների դասակարգման նոր մեթոդ, հետազոտել է գնագոյացման, կապիտալ ներդրումների արդյունավետության հարցերը, ամորտիզացիայի, ռենտային գնահատումների տեսությունները: Օպտիմալացման հաշվարկներում մտցվում է բնական ռեսուրսների ռենտան, ինչը հակասում էր հասարակական սեփականություն հանդիսացող ռեսուրսների անվճարության կոնցեպցիային:

1964-ին ընտրվում է ԽՍՀՄ ԳԱ Ակադեմիկոս: Արժանացել է մի շարք պետական մրցանակների: 1960-ին տեղափոխվում է Նովոսիբիրսկ, ուր ղեկավարում է ԳԱ Սիբիրի բաժանմունքի տնտեսա-մաթեմատիկական մեթոդների բաժինը: 1971-ից Մոսկվայի ժողովրդական տնտեսության կառավարման ինստիտուտում լաբորատորիայի ղեկավար էր: 1976-ից ԳԱ համակարգային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն:

**Աշխատությունները.** «Արտադրության կազմակերպման և պլանավորման մաթեմատիկական մեթոդները» (1939), «Ռեսուրսների լավագույն օգտագործման տնտեսագիտական հաշվարկ» (1959), «Ֆեռանկարային պլանավորման օպտիմալ մոդելները» (1965), «Օպտիմալ որոշումները էկոնոմիկայում» (1972), «Էկոնոմիկան և օպտիմալացումը» (համահեղինակությամբ 1990):

**Տյալլինգ Կուպմանս (1910-1975).** Ծնվել է Նիդեռլանդիայում: 1933-ին ավարտել է Ուտրեխտի համալսարանը մաթեմատիկա և տեսական ֆիզիկա մասնագիտությամբ: Սակայն, աստիճանաբար նրա գիտական հետաքրքրությունները տեղափոխվում են տնտեսագիտության բնագավառը: 1936-ին «Տնտեսական ժամանակավոր շարքերի գծային ռեգրեսիվ վերլուծություն» հետազոտության համար Լեյդենի համալսարանում արժանանում է դոկտորի աստիճանի: 1946-ին ստանում է ամերիկյան քաղաքացիություն, իսկ 1955-ին դառնում է Իյելի համալսարանի պրոֆեսոր:

Կուպմանսը ստեղծել է մրցակցող սպառողների միջև ռեսուրսների օպտիմալ բաշխման մեթոդ, որն ստացել է «տնտեսական գործունեության վերլուծություն» անվանումը: Այն նշանակալից չափով փոխել է պլանավորման և բաշխման հիմնահարցերի վերաբերյալ տնտեսագետների մոտեցումները:

Կուպմանսը ընտրվել է Ամերիկյան տնտեսագիտական ընկերության պրեզիդենտ (1950), Ամերիկյան տնտեսագիտական ասոցիացիայի պրեզիդենտ (1978): Նրա հիմնարար հետազոտությունները վերաբերում են տնտեսագիտության մեջ էկոնոմետրիկ մեթոդների, տնտեսական գործունեության վերլուծության, ժամանակի մեջ օպտիմալացման տեսության հարցերին:

**Աշխատությունները.** «Տարբեր երթուղիներով բեռնահոսքերի միջև հարաբերակցությունը» (1942), «Տնտեսական դինամիկայի մոդելների վիճակագրական ներածություն» (1950), «Արտադրական գործունեության և բաշխման վերլուծություն» (1951), «Երեք ուրվագիծ տնտեսագիտության վիճակի մասին» (1957):

## 1976թ.

### Միլթոն Ֆրիդմեն (ծն. 1912, ԱՄՆ)

«Սպառնամ, դրամաշրջանառության պատմության վերաբերյալ հետազոտությունների և մոնետարիզմի տեսության մշակման համար»:

**Միլթոն Ֆրիդմեն (1912):** Ամերիկյան տնտեսագետ, ծնվել է Բրուկլինում: 1932-ին ավարտելով Ռուտգերի համալսարանը, միանգամից արժանանում է բակալավրի երկու աստիճանների՝ մաթեմատիկայի և տնտեսագիտության գծով: 1933-ին Չիկագոյի համալսարանում ստանում է մագիստրոսի աստիճան: Ինչպես XX դարի շատ տնտեսագետներ, նա ելել է տնտեսագիտություն մաթեմատիկայից:

1940թ. (Ս. Կուլմենցի հետ միասին) լույս է տեսնում նրա առաջին խոշոր ախտաբանությունը՝ « Անկախ մասնավոր պրակտիկայի եկամուտները »:

1948-ից աշխատանքը Չիկագոյի համալսարանում շատ արգասաբեր էր Ֆրիդմենի կենսագրության մեջ: Դրամաշրջանառության, գների, սպառնամ տեսության և այլ հարցերին են նվիրված նրա բազմաթիվ աշխատությունները:

1950-ական թվականներին որպես խորհրդատու նա մասնակցել է « Մարշալի պլանի » իրականացմանը: 1967-ին Ֆրիդմենն ընտրվում է ամերիկյան տնտեսական ասոցիացիայի նախագահ, իսկ 1976-ին արժանանում նոբելյան մրցանակի:

Ս.Ֆրիդմենը մշակեց XX դարի տնտեսագիտական մտքի այն ուղղության հիմքերը, որն անվանվում է մոնետարիզմ:

**Աշխատությունները.** «Պոզիտիվ տնտեսության ուրվագծեր» (1953), «Մոնետար կայունացման ծրագիր» (1959), «Դրամական և զանձարանային քաղաքականություն» (1969), «Հակահեղափոխություն փողի տեսության մեջ» (1970), «Մոնետար փոփոխությունները ԱՄՆ-ում և Միացյալ թագավորությունում» (1981):

## 1977թ.

### Ջեյմս Միդ (Մեծ Բրիտանիա)

### Բերտիլ Ուլիհն (Շվեդիա)

«Միջազգային առևտրի և կապիտալի միջազգային շարժման տեսության մեջ կատարած ներդրման համար»:

**Ջեյմս Միդ (1907-1995).** կրթություն ստացել է Օքսֆորդի համալսարանում: 1936-ին լույս է տեսնում նրա «Տնտեսագիտական վերլուծության և տնտեսական քաղաքականության ներածություն» աշխատությունը,

որտեղ համակարգված ձևով շարադրվում է Քեյնսի տեսությունը: Հետագայում նրա հիմնական հետազոտական օբյեկտը դառնում է միջազգային տնտեսական հարաբերությունները: Տնտեսական հարաբերությունները երկրների միջև պետք է կառուցվեն երկու սկզբունքների վրա. յուրաքանչյուր երկրի ներքին հավասարակշռվածության, որն արտահայտվում է լրիվ զբաղվածության և արտաքին հավասարակշռվածության՝ վճարային հաշվեկշռի հավասարակշռվածության մեջ: Առաջինն իրականացվում է զանձարանային քաղաքականության, երկրորդը՝ մոնետար քաղաքականության միջոցներով:

Դասախոսել է Օքսֆորդի, Քեմբրիջի համալսարաններում:

**Աշխատությունները.** «Միջազգային տնտեսական քաղաքականության տեսություն», հ.1-վճարային հաշվեկշիռ (1951), «Առևտուրը և բարեկեցությունը», հ.2 (1955), «Ստագֆլյացիա» (երկու հատորով), 1982-1983, «Բաժնետիրական տնտեսության տարբեր ձևերը» (1986):

**Բերտիլ Ուլիհն (1899-1979).** ավարտել է Լուդոֆի համալսարանը ուսանելով վիճակագրություն և մաթեմատիկա: 1924-ին ստացել է դոկտորի աստիճան: Առաջին հիմնավոր աշխատանքը եղել է 1931-ին Ազգերի Լիգայում կարդացած զեկուցումը՝ «Համաշխարհային տնտեսական դեպրեսիայի ընթացքը և փուլերը»: Ուլիհնը օգտագործել է Է. Խեկշերի ուսումնասիրությունները եկամուտների բաշխման վրա առևտրի ունեցած ազդեցության վերաբերյալ: Արդյունքում ձևավորվել է «Խեկշերի Ուլիհնի մոդելը», ըստ որի ազատ առևտրի պայմաններում տարբեր երկրներում ձևավորվում է արտադրության գործոնների գների հավասարակշռություն, որը բերում է համաշխարհային տնտեսական հավասարակշռվածության: Ռիկարդոյի համեմատական առավելությունների տեսությունը տրանսֆորմացվում է արտադրության գործոններից որևէ մեկի հարաբերական առատության սկզբունքին:

Այն երկրները, որոնք ունեն կապիտալով ապահովվածության հարաբերական առավելություններ, արտահանում են կապիտալատար արտադրանք, իսկ աշխատանքային ռեսուրսների առավելություններ ունեցող երկրները՝ աշխատատար արտադրանք: Ուլիհնը, օգտագործելով «ծախքեր-թողարկում» մոդելը միջազգային առևտրի տեսությամբ թարմ շունչ է հաղորդում:

Դասախոսել է Կոպենհագենի համալսարանում, Ստոկհոլմի տնտեսագիտական դպրոցում, 1944, 1945 թվականներին զբաղեցրել է Շվեդիայի առևտրի նախարարի պաշտոնը:

**Աշխատությունները.** «Միջոցառումային միջազգային առևտուրը» (1933), «Ձբաղվածության կայունացման հիմնահարցը» (1949):

## 1978թ.

### Չերբերտ Սայմոն (ծն. 1916, ԱՄՆ)

«Տնտեսական կազմակերպություններում որոշումների ընդունման պրոցեսների վերաբերյալ հետազոտությունների համար»:

Կրթություն է ստացել Չիկագոյի համալսարանում, ուսումնասիրել է քաղաքատնտեսություն, տրամաբանություն, մաթեմատիկա, կենսաֆիզիկա և էկոնոմետրիկա: 1943-ին ստացել է դոկտորի աստիճան: Նա հիմնավորում է հոգեբանական գործոնների դերը որոշումների կայացման տեսության մեջ, ցույց տալով, որ անհրաժեշտ է հաշվի առնել մարդկանց վարքագծի և ճանաչողական որակները: Ի տարբերություն նոր դասականների բացարձակ ռացիոնալ գործող մարդու հայեցողության, Սայմոնը ելակետ ունի մարդու «սահմանափակ ռացիոնալության» սկզբունքը: Մարդկանց գիտելիքները միշտ թերի են, իսկ տեղեկատվության իմաստավորման և ճիշտ հետևություններ կատարելու ունակություններն անսահման չեն: Եվ նա առաջադրում է տարբեր իրավիճակներում մարդու վարքագծի համակարգչային նմանակման գաղափարը (գիտություն արհեստականի մասին):

**Աշխատությունները.** «Մարդու մոդելները» (1957), «Կազմակերպություն» (1958), «Նոր գիտություն կառավարչական որոշումների ընդունման մասին» (1960), «Մտածողության մոդելները» (1979), «Բանականությունը մարդու գործունեության մեջ» (1983), «Մարդու մոդելները. սոցիալականը և ռացիոնալը» (1987):

## 1979թ.

### Ուլյամ Լյուիս (Մեծ Բրիտանիա)

### Թեոդոր Շուլց (ԱՄՆ)

«Տնտեսական զարգացման պրոցեսների (հատկապես զարգացող երկրների) վերաբերյալ նորարարական հետազոտությունների համար»:

**Ուլյամ Լյուիս** (ծն. 1915). կրթությունը ստացել է Լոնդոնի համալսարանի տնտեսագիտական դպրոցում: Գիտական հետաքրքրությունները վերաբերում են զարգացող երկրների տնտեսությանը և զարգացած երկրների հետ նրանց առևտրա-տնտեսական հարաբերություններին: Նա առաջադրել է դուալիստական տնտեսության տեսությունը, ըստ որի թույլ զարգացած երկրների տնտեսությունների արդյունաբերական և ագրարային ոլորտները սկզբունքորեն տարբերվում են: Արդյունաբերության ոլորտին բնորոշ են շուկայի օրենքները, իսկ գյուղատնտեսությունը կարգավորվում է ավանդական տեղական հաստատություններով: Արդյունաբերության մեջ գործում է սահմանային արտադրողականության

օրենքը, իսկ ագրարային ոլորտում, կապված ավելցուկային աշխատանքային ռեսուրսների առկայության հետ, ըստ էության, բացակայում է սահմանային արտադրողականությունը: Ավելցուկային ռեսուրսների վերացման հետ կսկսի աճել աշխատավարձը և կառաջանան խթաններ ինվեստիցիաների համար:

**Աշխատությունները.** «Աշխատանքը Վեստ Ինդիայում» (1939), «Մոնոպոլիան բրիտանական արդյունաբերության մեջ» (1945), «Տնտեսական պլանավորման սկզբունքները» (1949), «Վերադիր ծախսերը. տնտեսական վերլուծության ուրվագիծ» (1950), «Տնտեսական աճի տեսությունը» (1955), «Տնտեսական աճի տեսությունը» (1970), «Տնտեսական աճի դինամիկ գործոնները» (1974), «Տնտեսական աճը և տնտեսական անկայունությունը 1870-1913» (1978):

**Թեոդոր Շուլց** (ծն. 1902). կրթությունը ստացել է Կոլումբիայի և Վիսկոնսի համալսարաններում: 1940-1967թթ. եղել է տնտեսական հետազոտությունների Ազգային բյուրոյի նախագահ: Վերլուծելով ագրարային ոլորտի գլոբալ պրոբլեմները, առաջադրել է այն տեսակետը, որ թույլ երկրների «ավանդական գյուղատնտեսության» զարգացումը պայմանավորված է ոչ թե խոշոր տնտեսությունների կազմակերպման և ինվեստիցիաների քանակական աճով, այլ հողագործության «ավանդական արվեստի» վերակառուցման, նրա նյութական և մարդկային ռեսուրսների, գյուղատնտեսական կրթության և գիտության զարգացման հետ:

Շուլցը առաջիններից մեկն էր «մարդկային կապիտալի» ուսումնասիրության բնագավառում, այն համարելով վճռական գործոն «երրորդ աշխարհի» երկրների համար:

**Աշխատությունները.** «Կրթության տնտեսական արժեքը» (1963), «Ավանդական գյուղատնտեսության վերափոխումը» (1964), «Տնտեսական աճը և գյուղատնտեսությունը» (1968), «Ինվեստիցիաները մարդկային կապիտալում. կրթության և գիտական հետազոտությունների դերը» (1971):

## 1980թ.

### Լոուրենս Քլեյն (ծն. 1920, ԱՄՆ)

«Տնտեսական մոդելների ստեղծման և տնտեսական քաղաքականության ու ցիկլային տատանումների վերլուծության ժամանակ դրանց կիրառման համար»:

Ավարտել է Կալիֆոռնիայի համալսարանը տնտեսագիտություն և մաթեմատիկա մասնագիտությամբ: 1947-ին հրատարակում է «Քեյնսյան հեղափոխություն» աշխատությունը, որտեղ Քեյնսի տեսությունը արտա-

հայտում է մաթեմատիկական լեզվով: Նրա կառուցած հավասարումների շարքը հնարավորություն է տալիս հաշվարկելու ազգային տնտեսության մեջ արտադրության ապագա ծավալը: Նա ժամանակակից մակրոտնտեսական մոդելների ճանաչված մասնագետներից է: Իր տնտեսական մոդելների վաճառքով նա ստեղծել է «մոդելների շուկա»:

**Աշխատությունները.** *«Քեյնսյան հեղափոխությունը» (1947), «Տնտեսական անկայունությունը ԱՄՆ-ում 1921-1941թթ» (1950), «Եկոնոմետրիկայի ներածություն» (1962), «Տնտեսագիտության տեսությունը և էկոնոմետրիկան» (1985):*

**1981թ.**

**Ջեյմս Թոբին** (ծն. 1918, ԱՄՆ)

«Ֆինանսական շուկաների իրավիճակների և արտադրության, զբաղվածության ու գների բնագավառում որոշումների ընդունման ժամանակ դրանց ազդեցության վերաբերյալ վերլուծությունների համար»:

1939-ին ավարտել է Յարվարդի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Դասախոսել է Յարվարդի և Իյելի համալսարաններում: Թոբինը մշակել է «պորտֆելային ընտրության» տեսությունը, թե մարդիկ ինչպես են ընտրում իրենց միջոցների ծախսման եղանակը, իրենց «պորտֆելում» ինչպիսի հարաբերակցություն են գերադասում բաժնետոմսերի, փոխառությունների, կանխիկ փողի և այլ ակտիվների միջև: Կախված այն բանից, թե ինչպես է փոփոխվում այդ հարաբերակցությունը, սկսվում է փոփոխվել նաև «պորտֆելի» պարունակությունը, որն իր հերթին տարբեր ձևերով ազդում է տնտեսության վրա: Թոբինը կարևոր ներդրում է կատարել Քեյնսյան տեսության զարգացման մեջ, հանդես գալով պետության գանձարանային և դրամական քաղաքականության պաշտպանությամբ, քննադատելով մոնետարիստական սկզբունքները: Վերլուծելով գործազրկության և ինֆլացիայի հիմնահարցերը, կատարել է գործնական առաջարկություններ պետության արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականության համար:

**Աշխատությունները.** *«Ազգային տնտեսական քաղաքականություն» (1966), «Տնտեսագիտության ուրվագծեր» (երեք հատորով), հ. 1, Մակրոտնտեսագիտություն» (1972), հ. 2 Սպառումը և էկոնոմետրիկան (1975), հ. 3 Տեսություն և քաղաքականություն (1982), «Բարգավաճման քաղաքականություն. ուրվագծեր քեյնսականի տեսանկյունից» (1987):*

**1982թ.**

**Ջորջ Ստիգլեր** (1911-1991, ԱՄՆ)

«Արդյունաբերական կառուցվածքների, շուկաների գործողության,

ինչպես նաև պետական կարգավորման պատճառների և հետևանքների վերաբերյալ ուսումնասիրությունների համար»:

1931-ին ավարտել է Վաշինգտոնի համալսարանը: Արտադրության և բաշխման նեոդասական տեսության պատմության վերաբերյալ ուսումնասիրության համար 1938-ին շնորհվում է դոկտորի աստիճան: Նրան հատկապես հետաքրքրել են արդյունաբերական կազմակերպությունների տեսության հարցերը: Ստիգլերը որոշել է արտադրության մրցակցային ճյուղում փոքր ֆիրմաների պահպանության պայմանները, գոյատևումն ապահովող արդյունավետության նվազագույն մասշտաբները: Նրա հետաքրքրությունների ոլորտներից էին նաև տնտեսության պետական կարգավորման հարցերը: Ու թեև, իր իսկ խոսքերով, ինքը «չէր պատկանում ռեյզանոմիկայի դպրոցին... միայն ձգտում է թուլացնել կառավարության կողմից ավելորդ ճնշումը արտադրության վրա»: Նրա գիտական կենսագրության մի բաժինն էլ պատկանում է տնտեսագիտական մտքի պատմությանը:

**Աշխատությունները.** *«Արտադրության և բաշխման տեսությունը» (1941), «Գնի տեսությունը» (1942), «Օլիգոպոլիայի տեսությունը» (1964), «Քաղաքացիները և պետությունը. ուրվագծեր կարգավորման մասին» (1975), «Արդյունաբերության կազմակերպումը» (1983):*

**1983թ.**

**Ջերարդ Դեբրե** (ծն. 1921, ԱՄՆ)

«Ընդհանուր հավասարակշռության տեսության մշակման մեջ ունեցած ներդրման և տնտեսագիտության տեսության մեջ վերլուծությունների նոր մեթոդների նորամուծությունների համար»:

1946-ին ավարտել է Փարիզի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը, այնուհետև տնտեսագիտության գծով խորացել Ավստրիայի, ԱՄՆ-ի և սկանդինավյան երկրների տարբեր համալսարաններում: 1956-ին ստացել է դոկտորի աստիճան: Նրան գերազանցապես հետաքրքրել է ընդհանուր հավասարակշռության տեսությունը, մասնավորապես գների կազմավորումը «որպես շուկայի միջոցով մասնավոր սեփականության միկրոտնտեսական գործակալների փոխազդեցության արդյունք» և գների դերի հիմնավորումը «տնտեսության օպտիմալ վիճակում»: Մեծ է նրա ներդրումը բարեկեցության տեսության, օգտակարության տեսության, պահանջարկի ածանցյալ ֆունկցիաների մշակման և այլ բնագավառներում:

**Աշխատությունները.** *«Արժեքի տեսությունը. տնտեսական վերլուծության արսիոմատիկ վերլուծություն» (1959), «Պրոֆեսոր Դեբրեի շու-*

կայական հավասարակշռության թեորեմը, մերկացուցիչ երանգ» (1973), «Մաթեմատիկական էկոնոմիկա. քսան էջ Ջերարդ Դեբրեից» (1983):

**1984թ.**

**Ռիչարդ Սթոուն** (1913-1991, Մեծ Բրիտանիա)

«Ազգային հաշիվների համակարգի ստեղծման մեջ հիմնարար ներդրման համար»:

Ավարտել է Քեմբրիջի համալսարանը 1935-ին: Նրա հետաքրքրությունը տնտեսագիտության նկատմամբ պայմանավորված էր Մեծ դեպրեսիայով, «ծնված պատանեկան անգիտությամբ և օպտիմիզմի հավատով, որ եթե տնտեսագետները սկսեն շատ բան հասկանալ աշխարհը կդառնա ավելի լավը»: 1945-ից աշխատել է Քեմբրիջում որպես դեկան, 1955-ից ֆինանսների և հաշվապահության ամբիոնի պրոֆեսոր, 1955-ին ընտրվում է էկոնոմետրիկական ընկերության և միջազգային վիճակագրական ինստիտուտի պրեզիդենտ:

Ռ. Սթոունը ազգային հաշիվների ժամանակակից համակարգի ստեղծողն է: Այն նրա համակարգում ներկայացված է աղյուսակի ձևով: Ի տարբերություն նախորդների նա առաջին անգամ մակրոմակարդակում կիրառել է երկակի գրանցման հաշվապահական սկզբունքը: Այդ աղյուսակներում ազգային արդյունքը, սպառումը, առևտրական հաշվեկշիռը և այլն, խմբավորված են այն ձևով, որ լիարժեքորեն ուրվագծում են տնտեսության կառուցվածքի և նրա գործողության պրոցեսները, ինչը թույլ է տալիս իրականացնելու տնտեսության տարբեր ոլորտների համեմատական վերլուծություն: Սթոունը որոշել է ազգային եկամտի մեծացման աղբյուրները, բաշխման ուղիները, և օգտագործումը: Նրա ուսումնասիրություններում նշանակալից տեղ է հատկացված պարենային և ոչ պարենային սպառման ձևերին, գնային ինդեքսների տեսությանը և ազգային հաշիվների համակարգում սխալների որոշման մեթոդներին:

**Աշխատությունները.** «Քանակը և գնային ինդեքսները ազգային հաշիվներում» (1956), «Ծախքեր-թողարկում» մեթոդը և ազգային հաշիվները» (1961), «Մաթեմատիկական սոցիալական գիտություններում և այլ ուրվագծեր» (1966), «ժողովրդագրական հաշվարկ և մոդելների կառուցումը» (1971), «Ազգային եկամուտը և ծախսերը» (1977):

**1985թ.**

**Ֆրանկո Մոդիլյանի** (ծն. 1918, ԱՄՆ)

«Խնայողությունների տեսության հիմքերի մշակման և կուտակումների ու ֆինանսական շուկաների վերաբերյալ հետազոտությունների

համար»:

1939-ին ավարտել է Յոնի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Տնտեսագիտության դոկտորի աստիճան ստացել է 1942-ին: Դասախոսել է ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում: Իր հետազոտական գործունեության ընթացքում նա ձգտել է ինտեգրել քեյնսյան և նեոդասական տեսությունների սկզբունքները: Տնտեսագիտության մեջ առաջին անգամ Մոդիլյանին մշակել է «կենսական ցիկլի» մոդելը, որը բացատրում է անձնական խնայողությունների կազմավորման օրինաչափությունները: Խնայողությունների գլխավոր շարժառիթը կյանքի հաստատուն ստանդարտների պահպանումն է: Խնայողություններն արտահայտում են այդ ցանկալի կայուն սպառման մակարդակի և փոփոխվող եկամուտների մակարդակի տարբերությունը, որը մարդու աշխատանքային գործունեության ընթացքում անընդհատ բարձրանում է ելակետային ցածրից դեպի առավելագույնը, որից հետո թոշակի անցնելու ժամանակ իջնում է շատ ցածր մակարդակի: Մարդիկ սկսում են ծախսել նախորդ խնայողությունները. «երիտասարդները խնայում են, տարեցները ծախսում»: Նա մարդու խնայողության հակվածության Քեյնսի դրույթը մանրամասնում է տալով ռացիոնալ բացատրություն:

Մոդիլյանիի հետազոտություններում քննության են ենթարկվել ֆինանսական շուկաները: Հայտնի է «Մոդիլյանի-Միլլեր» մոդելը, որտեղ վերանայվում են ֆիրմաների ինվեստիցիոն որոշումների կայացման նախկին պատկերացումները:

**Աշխատությունները.** «Ազգային եկամուտները և ինտերնացիոնալ առևտուրը» (Խ. Նեյգերի հետ համատեղ, 1953), «Կապիտալի արժեքը, կորպորացիաների ֆինանսավորումը և ինվեստիցիաների տեսությունը» (Մ. Միլլերի հետ համատեղ, 1958), «Խնայողության նկատմամբ պահվածքի վարկածը կյանքի ցիկլի ընթացքում» (1960), «Ֆրանկո Մոդիլյանիի գրվածքների ժողովածուն երեք հատորով» (1980):

**1986թ.**

**Ջեյմս Բյուքենեն** (ծն. 1919, ԱՄՆ)

«Տնտեսական և քաղաքական որոշումների ընդունման տեսության պայմանագրային և սահմանադրական հիմքերի ուսումնասիրությունների համար»:

Տնտեսագիտական կրթությունը ստացել է Տեննեսի և Չիկագոյի համալսարաններում: Դոկտորական դիսերտացիա պաշտպանել է 1948-ին: Դասախոսել է ամերիկյան տարբեր համալսարաններում: Նա հայտնի է հասարակական ընտրության բնագավառի ուսումնասիրություններով:

Հասարակական համակարգը պայմանագրային համակարգ է, բաղկացած երկու մակարդակներից: Առաջինում պետությունը հանդես է գալիս որպես դատավոր, որպես պայմանավորվող սուբյեկտների իրավունքների պաշտպանության երաշխավոր, երկրորդում՝ քաղաքացիներին ապահովում է հասարակական բարիքներով: Քաղաքական համակարգը փոխանակության գործընթաց է՝ նպատակ ունենալով հասնել փոխադարձ շահեկանության:

Բյուքենենը հայտնի է հասարակական ֆինանսների, գների կարգավորման վերաբերյալ հետազոտություններով: Կառավարության կողմից վերահսկողությունը գների և արտադրության վրա թույլատրելի է միայն բացառիկ դեպքերում: Նրա կարծիքով քեյնսյան մոդելը խախտել է քաղաքական և տնտեսական շահերի հավասարակշռությունը, հանգեցնելով նրան, որ քաղաքական գործոնները սկսել են գերիշխել բյուջետային քաղաքականության մեջ ի վնաս տնտեսականի:

**Աշխատությունները.** «Պետական պարտքի հասարակական սկզբունքները» (1958), «Հարկային տեսությունը և քաղաքատնտեսությունը» (1960), «Համաձայնության հաշվարկումը. սահմանադրական դեմոկրատիայի տրամաբանական հիմքերը» (Գ. Տուլլոկի հետ միասին, 1962), «Ազատությունը, շուկան և պետությունը. քաղաքատնտեսությունը 80-ական թվականներին» (1986), «Համընդհանուր բարեկեցության պետության քաղաքատնտեսությունը» (1988):

**1987թ.**

**Ռոբերտ Սոլոու** (ծն. 1924, ԱՄՆ)

«Տնտեսական աճի տեսության մեջ կատարած ներդրման համար»:

Ավարտել է Հարվարդի համալսարանը: Նրա ներդրումը վերաբերում է տնտեսական աճի տեսությանը: Նա ստեղծել է տնտեսական դինամիկայի իր մաթեմատիկական մոդելը, որտեղ արտահայտված է արտադրության տարբեր գործոնների դերը տնտեսական զարգացման մեջ: Նրանում հաշվի է առնված համախառն ազգային արդյունքի, արտադրական ֆոնդերի և աշխատանքային ռեսուրսների միջև կախվածությունն արտահայտող «ազրեգատիվ արտադրական ֆունկցիան»:

Վերարտադրության պրոցեսները նա դիտում է որպես քանակական կապեր որոշակի գործոնների և արտադրության արդյունքների միջև:

Սոլոուի առաջարկած մոդելը հետագայում օգտագործվել է արժեթղթերի շուկայի, խնայողությունների օպտիմալության, տնտեսության վրա հարկերի ունեցած ազդեցության և այլ հարցերի վերլուծության համար:

**Աշխատությունները.** «Գծային ծրագրավորումը և տնտեսագիտական վերլուծությունը» (Պ. Սամուելսոնի, Ռ. Դորֆմանի համահեղինակությամբ, 1958), «Ինվեստավորումը և տեխնիկական առաջընթացը» (1960):

**1988թ.**

**Սորիս Ալլե** (ծն. 1911, Ֆրանսիա)

«Շուկաների տեսության մեջ ներդրման և ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերաբերյալ աշխատությունների համար»:

Կրթություն է ստացել Փարիզի պոլիտեխնիկական ինստիտուտում: Լինելով Լեռնային արդյունաբերության նախարարության գլխավոր ինժեներ՝ նա հաճախակի առնչվում էր տնտեսական խնդիրների հետ: Դասավանդել է տնտեսագիտություն բարձրագույն լեռնային դպրոցում և Փարիզի համալսարանի վիճակագրության ինստիտուտում: Նա առաջադրել է տնտեսական համակարգի գործողության ավելի կատարելագործված մոդել, մասնավորապես տարբեր ապրանքների համար շուկաների համակարգի կոնցեպցիան, որտեղ գործարքների բոլոր մասնակիցների համար բացակայում են միասնական գները:

Հայտնի են նրա աշխատությունները դրամաշրջանառության և վարկի, մոնետար քաղաքականության, եկամուտների բաշխման, հարկավորման և այլ հարցերի վերաբերյալ: Արդյունավետ տնտեսավարության գլխավոր պայմանը համարելով մրցակցային շուկան, միաժամանակ գտնում էր, որ ազատ շուկան պետք է զուգորդվի պետական պլանավորման հետ, որը սակայն պետք է լինի ոչ թե յուրաքանչյուր տնտեսական սուբյեկտի գործողությունների պլանավորումը այլ «կառուցվածքների պլանավորումը»:

**Աշխատությունները.** «Տնտեսությունը և տոկոսը» (երկու հատորով, 1947), «Փողի քանակական տեսության հաստատումը» (Ամերիկյան տնտեսագիտության տեսություն, 1966, դեկտեմբեր 56), «Այսպես կոչված Ալլեի պարադոքսը և ռացիոնալ որոշումները անորոշության պայմաններում» (1979), «Իմ կյանքի փիլիսոփայությունը» (1988):

**1989թ.**

**Թրյուգվե Խաավելմո** (ծն. 1911, Նորվեգիա)

«Ֆինանսների էկոնոմիկայի վերաբերյալ նորարարական աշխատանքների համար»:

1933-ին ավարտել է Նորվեգիական համալսարանը Օսլոյում: 1948 - ից տնտեսագիտության պրոֆեսոր է: Նրա նշանաբանն էր «անցնել Քեյնսին»: Նա սահմանել է, որ բնակչության տարբեր սոցիալական խմբերը դրսևորում են ոչ միատեսակ հակվածություն սպառման կամ հակա-



սական մղում խնայողության նկատմամբ և, որ «սպառման սահմանային հակավաճությունը» փոփոխվում է կախված սպառման առարկայից:

Խաավելմոյի գիտական աշխատանքների մեծ մասը կապված է էկոնոմետրիկայի հետ: Նրա տնտեսա-վիճակագրական մոդելները հնարավորություն են տվել որոշակի հավանականությամբ կանխագուշակելու թե փոփոխությունները, տնտեսության մի բնագավառում ինչպես կարող են անդրադառնալ այլ բնագավառների վրա: Էկոնոմետրիկան նա համարում է ոչ թե չոր տեսություն, այլ կարևոր գործնական նշանակության գործիք:

Խաավելմոյի գիտական հետաքրքրությունների կարևոր բաղկացուցիչներից են գլոբալ տնտեսական անհավասարության, ինվեստիցիաների վրա պահանջարկի միկրոտնտեսական հիմքերի, կապիտալի տեսության, բյուջետային մուլտիպլիկատորի վերաբերյալ վերլուծությունները:

**Աշխատությունները.** «Միաժամանակյա հավասարումների վերլուծությունը» (1943), «Տնտեսական էվոլյուցիայի տեսության վերլուծություններ» (1954), «Ինվեստիցիայի տեսության վերլուծություններ» (1960):

**1990թ.**

**Գարի Մարկովից (ԱՄՆ)**

**Ուլյան Շարպ (ԱՄՆ)**

**Մերտոն Միլլեր (ԱՄՆ)**

«Ֆինանսական էկոնոմիկայի տեսության վերաբերյալ աշխատությունների համար»:

**Գարի Մարկովից** (ծն. 1927). ավարտել է Զիկագոյի համալսարանը 1950-ին: 1952-ից սկսում է զբաղվել «արժեթղթերի պորտֆելի» կոնցեպցիայով: Նա հիմնարար ներդրում ունի ֆինանսական շուկաների վերլուծության բնագավառում մշակելով օպտիմալ «պորտֆելային ընտրության» էֆեկտիվ տեսություն: Այդ տեսությունը լայն չափով օգտագործում են ինչպես տեսաբանները, այնպես էլ պրակտիկները արժեքների (կապիտալների, խնայողությունների և այլն) առավել շահավետ տեղադրման որոշման համար «Ինվեստիցիաների ռացիոնալ պորտֆելի ընտրության տեսության հիման վրա նրա մշակած մոդելը, ենթադրում է, որ արժեթղթերի վերաբերյալ որոշումների ընդունման ժամանակ ֆինանսական շուկաների սուբյեկտները ղեկավարվում են սպասվող եկամտի մակարդակի և ռիսկի աստիճանով: Պորտֆելի ընտրության տեսության վերաբերյալ Մարկովիցի վերլուծությունները ուղի են հարթել նոր ուսումնասիրությունների համար, ծագել է նոր մասնագիտություն «պորտֆելային

մենեջեր»:

**Աշխատությունները.** «Պորտֆելային ընտրություն» (1959), «Պորտֆելային ընտրություն և կապիտալ ներդրումների արդյունավետ դիվերսիֆիկացիան» (1970):

**Ուլյան Շարպ** (ծն. 1934). 1951-ին ընդունվել է Կալիֆոռնիայի համալսարանի բժշկական ֆակուլտետը, սակայն մեկ տարի հետո տեղափոխվել է գործնական վարչարարության ֆակուլտետը: 1961-ին պաշտպանել է դոկտորական դիսերտացիա: Դասախոսել է տարբեր համալսարաններում: Նրա առաջադրած մոդելը նկարագրում է ֆինանսական ակտիվների գների կազմավորումը՝ կախված սպասվող եկամտաբերության և ռիսկի մակարդակից: Նա ցույց է տվել, որ ժամանակակից պայմաններում տնտեսական գործունեության սուբյեկտը կորցրել է Սմիթի «տնտեսական մարդու» կերպը, փոխակերպվելով ակտիվ գործող, նախաձեռնող մարդու՝ պատրաստ լինելով ռիսկի և փոխգիջման: Ֆինանսական շուկաներում յուրաքանչյուրի կողմից իր սեփական տակտիկայի և ստրատեգիայի մշակումը դարձել է անհրաժեշտություն: Նշանակալից է Շարպի ներդրումը պորտֆելների կառավարման և ընդհանրապես «ֆինանսական էկոնոմիկայի» բնագավառում, որը ձեռք է բերել տեխնիկականակերպչական հարաբերական ամբողջություն ոչ միայն ազգային շրջանակներում, այլ նաև համաշխարհային մասշտաբով:

**Աշխատությունները.** «Գնագոյացումը ֆինանսական շուկաներում. շուկայական հավասարակշռության տեսությունը ռիսկի պայմաններում» (1964), «Պորտֆելային տեսությունը և կապիտալի շուկաները» (1970), «Կապիտալ ներդրումներ» (1978), «Ինվեստիցիայի հիմունքներ» (1989):

**Մերտոն Միլլեր** (ծն. 1923). 1943-ին ավարտել է Յարվարդի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1952-ին ստացել է դոկտորի աստիճան: Ֆրանկո Մոդիլյանիի հետ միասին Միլլերը մշակել է ֆիրմայի ֆինանսավորման տեսության հիմքերը: Ֆիրմայի գնահատումը ինվեստիցիոն առաջնությունների տեսակետից չի համընկնում ֆինանսական գնահատության հետ, քանի որ առաջինը նկատի է առնում միայն ֆիրմայի ապագա շահութաբերությունը, իսկ երկրորդը՝ նրա պասիվների չափերը և կառուցվածքը: «Միլլեր-Մոդիլյանի» թեորեմը ցույց է տալիս երկու սկզբունքային դրույթներ, որ ֆիրմայի արժեքը գլխավորապես որոշվում է ապագա եկամուտների գներացիայի ունակությամբ և որ ֆիրմայի ֆինանսական քաղաքականության մեջ գլխավոր գործոնը պետք է դառնա նրա ֆինանսական դրությունը:

Միլլերի գիտական հետաքրքրությունները ընդգրկում են նաև ավելի ընդհանուր տնտեսագիտական հարցերի և ֆինանսական ծառայություն-

ների կարգավորման ոլորտները:

**Աշխատությունները.** «Կապիտալի արժեքը, կորպորացիաների ֆինանսավորումը և ինվեստիցիայի տեսությունը» (Ֆ. Մոդիլյանի հետ համատեղ, 1948) «Ֆինանսների տեսություն» (Է. Ֆամոյի հետ համատեղ, 1972), «Փողը և հարկերը» (Ֆ. Մոդիլյանի հետ համատեղ, 1977), «Մակրոտնտեսագիտություն. ներդասական ներածություն» (Ս. Ապտոնոմի հետ համատեղ, 1986):

**1991թ.**

**Ռոնալդ Կոուզ** (ծն. 1910, ԱՄՆ)

«Տրանսակցիոն ծախքերի և սեփականության իրավունքի հիմնահարցերի վերաբերյալ աշխատությունների համար»:

**Ռոնալդ Կոուզ** (ծն 1910): Ծնվել է Լոնդոնի հյուսիսային արվարձանում՝ Ուիլլեսդեմում: Լոնդոնի տնտեսական դպրոցում ուսումնասիրել է կոմերցիա, որտեղ նրա վրա մեծ ազդեցություն է թողել Առնոլդ Պլանտը: 1931-ին, ստանալով հատուկ կրթաթոշակ, Կոուզը մեկնում է ԱՄՆ՝ ուսումնասիրելու տարբեր ճյուղերի ֆիրմաների կառուցվածքների տարբերությունները:

Կոուզը մինչև 1951թ. դասախոսել է Լոնդոնի տնտեսական դպրոցում, իսկ 1941-1946թթ. ընդգրկվել նախարարների կաբինետի հետ համագործակցության մեջ: Այնուհետև նա մեկնում է ԱՄՆ, աշխատելով Բուֆալոյի (1951-1958), Ստենֆորդի (1958), Վիրժինի (1959), Չիկագոյի համալսարանի իրավաբանական դպրոցներում: (1964-1984) :

**Աշխատությունները.** «Ֆիրմայի էությունը» (Էկոնոմիկա, 1937, հ.4), «Սոցիալական ծախքերի հիմնահարցերը» (Իրավունք և էկոնոմիկա, 1960, հ.3, հոկտեմբեր):

**1992թ.**

**Գերի Բեքթեր** (ծն. 1920, ԱՄՆ)

«Մարդկային պահվածքի և փոխներգործության, ներառյալ նաև ոչ շուկայական ոլորտի նոր բնագավառների վրա տնտեսագիտության տեսության կիրառության ընդլայնման համար»:

Կրթություն է ստացել Պրինստոնի և Չիկագոյի համալսարաններում: 1951-ին հրատարակում է «Դիսկրիմինացիայի էկոնոմիկա» աշխատությունը, որտեղ ուսումնասիրվում են մարդկային պահվածքի այն կողմերը, որոնք հնարավոր չէ չափակել մոնետարիստական մեթոդներով: Նա ռասայական դիսկրիմինացիայի արժեքը համարում է տնտեսական կորուստները: Դիսկրիմինացիան նմանեցնում է երկրների միջև մաքսային արգելքների. այն պակասեցնում է ապրանքների և ծառայությունների

ծավալները, որոնցով կարող էին փոխանակվել դիսկրիմինացնողները և դիսկրիմինացվողները, բարձրացնում է գները և բացասաբար անդրադառնում երկու կողմերի բարեկեցության վրա: Բեքթերը նշանակալից ներդրում ունի մարդկային կապիտալի տեսության մեջ: Նա հիմնավորում է կրթության ոլորտում ինվեստիցիաների շահութաբերության հաշվարկի հնարավորությունը ինչպես անհատի, այնպես էլ ամբողջ հասարակության համար, դրանք դիտելով որպես ապագա շահութաբերության աղբյուր:

«Տրակտատ ընտանիքի մասին» ուսումնասիրության մեջ նա ընտանիքը համեմատում է ոչ մեծ ֆիրմայի հետ, որտեղ «ամուսնության շուկայի» վերլուծության համար օգտագործում է տնտեսագիտության ավանդական հասկացությունները՝ պահանջարկ և առաջարկ, օգուտները և ծախքերը, սուբստիտուցիաները և բարիքների կոմպլեմենտարությունը և այլն:

**Աշխատությունները.** «Դիսկրիմինացիայի էկոնոմիկա» (1957), «Մարդկային կապիտալ. տեսական և էմպիրիկ վերլուծություն» (1975), «Տնտեսագիտական մոտեցում մարդկային պահվածքի նկատմամբ» (1976), «Տրակտատ ընտանիքի մասին» (1984):

**1993թ.**

**Դուգլաս Նորտ** (ԱՄՆ)

**Ռոբերտ Ֆոդել** (ԱՄՆ)

«Տնտեսության պատմության ուսումնասիրության նոր ուղղության ստեղծման համար («Կլիոմետրիա»), որը ենթադրում է տնտեսական վիճակագրության կիրառում տնտեսական զարգացման պատմության ուսումնասիրության ժամանակ»:

**Դուգլաս Նորտ** (ծն. 1920) : Ծնվել է ԱՄՆ-ում: Ավարտել է Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1952-ին ստացել դոկտորի աստիճան: Վաշինգտոնի համալսարանի պրոֆեսոր է: Եղել է տնտեսագիտական հետազոտությունների Ազգային բյուրոյի դիրեկտորների խորհրդի անդամ, իսկ 1987-ից՝ արվեստի և գիտությունների Ամերիկյան ակադեմիայի անդամ:

Իր հետազոտություններում նա օգտագործել է ինստիտուցիոնալ տնտեսագիտության տեսության վերլուծական ապարատը, անդրադառնալով տնտեսության պատմության, սեփականության իրավունքի զարգացման, ռեսուրսների սահմանափակության և այլ տնտեսական հիմնահարցերին: Նրա մեթոդը շատ արգասաբեր է եղել տարբեր տնտեսական համակարգերի պատմական զարգացման ուղիների բացատրությունը

դրանց բնորոշ հաստատությունների էֆեկտիվության տեսանկյունից:

**Աշխատությունները.** «*Աճը և բարեկեցությունը ամերիկյան անցյալում. նոր տնտեսական պատմություն*»(1966), «*Ինստիտուցիոնալ փոփոխությունները և ամերիկյան տնտեսական աճը*» (Լ. Դեվիսի *հետ*, 1971), «*Կառուցվածքը և փոփոխությունները տնտեսական պատմության մեջ*» (1981), «*Հաստատությունները, տնտեսական աճը և ազատությունը. պատմական ներածություն*»(1988):

**Ռոբերտ Ֆոզել** (ծն. 1926). կրթությունը ստացել է Կորնելի և Կոլումբիայի համալսարաններում: 1963-ին ստացել է դոկտորի աստիճան: Դասավանդել է տարբեր համալսարաններում: Նրա հետազոտական գործունեությունը կապված է տնտեսության, տնտեսության պատմության, ժողովրդագրության և վիճակագրության հետ: Ֆոզելի հետազոտությունների պարադիգման, որն ստացել է «կլիոմետրիկա» անվանումը, ելակետ ունի այն դրույթը, ըստ որի անցյալն իր մեջ պարունակում է ավելի շատ տեղեկատվություն, որը կարելի է ստանալ ժամանակակից վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդների օգնությամբ: «Փորձությունների ժամանակը» երկհատորանոց աշխատությունը հիմնովին փոխել է ամերիկյան պատմության իրական ընթացքի մասին պատկերացումները: Վերջին շրջանի նրա հետազոտությունները վերաբերում են տնային տնտեսությունների պատմությանը, նպատակ ունենալով որոշելու պատմական ավանդույթների ազդեցությունը տնային տնտեսությունների վիճակի և դերի վրա ժամանակակից տնտեսական միջավայրում:

**Աշխատությունները.** «*Երկաթուղիները և ամերիկյան տնտեսական աճը. տնտեսական պատմության ուրվագծեր*» (1964), «*Նոր տնտեսական պատմություն. ձեռքբերումները և մեթոդը*» (1966), «*Ամերիկյան տնտեսական պատմության նոր մեկնություն*» (Լ. Էնգերմենի *համահեղինակությամբ*, 1974), «*Փորձությունների ժամանակը*» (Լ. Էնգերմենի *համահեղինակությամբ*, 1974), «*Գիտական պատմությունը և ավանդական պատմությունը*» (1982):

**1994թ.**

**Ջոն Նեշ** (ԱՄՆ)

**Ջոն Խարշանի** (ԱՄՆ)

**Ռեյնիսարդ Ջելտեն** (Գերմանիա)

«Տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության ժամանակ խաղերի տեսության մշակման համար»:

**Ջոն Նեշ** (ծն. 1928). ստացել է մաթեմատիկական կրթություն Պիտսբուրգի համալսարանում: Ավարտել է Պրինստոնի համալսարանի ասպի-

րանտուրան:

1955-ից պրոֆեսոր է: Նրան գերազանցապես հետաքրքրել են խաղերի տեսության, մաթեմատիկական տնտեսագիտության և խաղային իրավիճակներում ռացիոնալ պահվածքի ընդհանուր տեսությունը: Նա մաթեմատիկորեն հիմնավորել է խաղացողների գործողության կանոնները, որոնք ընդունված ստրատեգիային համապատասխան հասել են հաղթանակի: Խաղի մասնակիցներից յուրաքանչյուրը ձգտում է նվազեցնել ռիսկի աստիճանը այն խաղացողների պահվածքին հարմարվելու միջոցով, ովքեր նույնպես ձգտում են հասնել առավել շահավետ արդյունքների: «Նեշի հավասարակշռությունը» դա արդյունք է, որում խաղացողներից յուրաքանչյուրի ստրատեգիան խաղի մասնակիցների ընդունած մյուս ստրատեգիաներից լավագույնն է:

**Աշխատությունները.** «*Հավասարակշռության կետերը խաղերում ու խաղացողների մասնակցությամբ*» (1950), «*Գործարքների կնքման հիմնահարցերը*», *Էկոնոմետրիկա* (1950), «*Ոչ կոլեկտիվ խաղեր*», *Մաթեմատիկա* (1951):

**Ջոն Խարշանի** (ծն. 1920). ավարտել է Բուդապեշտի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1947-ին ստացել է փիլիսոփայության դոկտորի աստիճան: Սկսած 1960-ական թվականներից դասախոսել է ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում, իր գիտական հետաքրքրություններով կողմորոշվելով դեպի տնտեսագիտություն: Խաղերի տեսության վերաբերյալ նրա աշխատությունները գտնվում են մաթեմատիկայի և փիլիսոփայության շփման կետում: Խարշանին հիմնավորել է «ռացիոնալ պահվածքի ընդհանուր տեսությունը» ներառյալ «անհատական որոշման տեսությունը», գործարար էթիկայի հարցերը և խաղերի տեսությունը:

**Աշխատությունները.** «*Էթիկայի, սոցիալական պահվածքի և գիտական բացատրության ուրվագծեր*» (1976), «*Ռացիոնալ պահվածքը և բանակցային հավասարակշռությունը խաղերում և սոցիալական իրավիճակներում*» (1977), «*Նշումներ խաղերի տեսության վերաբերյալ*» (1982), «*Հավասարակշռության ընտրության տեսությունը խաղերում*» (Ռ. Ջելտենի *համահեղինակությամբ*, 1988):

**Ռեյնիսարդ Ջելտեն** (ծն. 1930). ծնվել է Գերմանիայում: 1957-ին ավարտել է ֆրանկֆուրտ Մայնի վրա համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը: Իր հետազոտություններում մշակել և կատարելագործել է «Նեշի հավասարակշռությունը», այն զարգացնելով դիմամիկայի տեսանկյունից և մոտեցնելով իրական տնտեսական միջավայրի պայմաններին: Նա հաշվարկել է օլիգոպոլի խաղերի, այդ թվում այնպիսի շուկայական իրավիճակի մոդելները, որի ժամանակ սահմանափակ թվով խոշոր

վաճառողներին դիմակայված են սահմանափակ թվով խոշոր գնորդներ: Ջելտենի ներդրումը էական է փորձարարական էկոնոմիկայի ծնավորման և զարգացման մեջ:

**Աշխատությունները.** «Կաթնամթերքային արդյունքներ արտադրողների գնային քաղաքականությունը վիճակագրական տեսության մեջ (1970)», «Գնագոյացման քաղաքականությունը վիճակագրական բազմարդյունք մոդելներում» (1970), «Ատրատեգիական ռացիոնալության մոդելները» (1988):

**1995թ.**

**Ռոբերտ Լուկաս-կրտսեր** (ծն. 1937, ԱՄՆ)

«Ռացիոնալ սպասումների վարկածի մշակման համար, որը բերել է մակրոտնտեսական վերլուծության փոփոխությանը և տնտեսական քաղաքականության վերաբերյալ պատկերացումների խորացմանը»:

Կրթություն է ստացել Չիկագոյի համալսարանում: 1964-ին ստացել է դոկտորի աստիճան: Նա նոր դասական դպրոցի հայտնի անուններից է, որոնք տնտեսական գործնաթացներում կարևորում են սպասումների (առաջին հերթին ինֆլյացիոն) դերը:

Ռ. Լուկասի ներդրումը մակրոտնտեսագիտության մեջ այն է, որ նա ընդհանրացրել, համակարգել և դասակարգել է տարբեր անալիտիկ, էկոնոմետրիկ և վիճակագրական մեթոդները, դրանք կիրառելով դիմանիկ զարգացող տնտեսության վերլուծության մեջ:

**Աշխատությունները.** «Սպասումները և փողի չեզոքությունը» (1972), «Էկոնոմետրիկ քաղաքականության գործնական նշանակությունը. քննական վերլուծություն» (1976), «Գործարար ցիկլի տեսության վերլուծություններ» (1981), «Գանձարանային և մոնետար քաղաքականության սկզբունքները» (1986), «Գործարար ցիկլի մոդելները» (1987):

**1996թ.**

**Ուլյան Վիկրի** (ԱՄՆ)

**Ջեյմս Միրլիս** (Մեծ Բրիտանիա)

«Ասիմետրիկ տեղեկատվության ստացման ժամանակ խթանների տեսության բնագավառում կատարած մշակումների համար»:

**Ուլյան Վիկրի** (1914-1996). կրթություն է ստացել Իյելի համալսարանում: 1947-ին ստացել է դոկտորի աստիճան: Նա հայտնի է աուկցիոն մեխանիզմի վերլուծություններով: Նրա ներդրումը նշանակալից է նաև օպտիմալ եկամտահարկի տեսության բնագավառում, որի ելակետային սկզբունքներից մեկն այն է, որ «պետության կարիքները բավարարվում են միայն հարկատուի կենսական անհրաժեշտ կարիքները ապահովելուց

հետո», ցույց տալով թե ինչպես կարելի է լուծել պրոգրեսիվ հարկավորման հիմնահարցը: Նա հետազոտել է նաև հասարակական ոլորտում օպտիմալ գնագոյացման տեսական և գործնական հարցերը, հասարակական ընտրության տեսությունը և այլն: Վիկրիի գրչին է պատկանում տնտեսագիտության տեսության երկհատոր աշխատությունը, որի առաջին հատորը անվանել է «Միկրոտատիկա», իսկ երկրորդը «Մեզաստատիկա և մակրոէկոնոմիկա»:

**Աշխատությունները.** «Սահմանային օգտակարության չափումը ռիսկի ռեակցիայով» (1945), «Օրակարգի հարցը պրոգրեսիվ հարկավորման համար» (1947), «Աուկցիոնը և գների բարձրացման խաղերը» (վերջին նվաճումները խաղերի տեսության մեջ, 1962), «Քաղաքը որպես ֆիրմա» (հասարակական ծառայությունների էկոնոմիկա, 1970), «Տնտեսական զարգացման մեխանիզմի մասին» (1968), «Կրկնվող մեթոդները տնտեսական դինամիկայում» (Ն. Ստոկեի հետ համատեղ, 1988):

**Ջեյմս Միրլիս** (ծն. 1936). ավարտել է Էդինբուրգի համալսարանը: 1963-ին Քեմբրիջի համալսարանում պաշտպանում է դիսերտացիա մաթեմատիկական տնտեսագիտության գծով՝ ստանալով փիլիսոփայության դոկտորի աստիճան: Նրա ավանդը տնտեսագիտության մեջ հատկապես կապված է հասարակական ոլորտի էկոնոմիկայի, հարկավորման տնտեսական և էթիկական սկզբունքների մշակման հետ: Նրա կարծիքով օգտակարությունների վերաբաշխումը հասարակության մեջ պետք է իրականացվի եկամտահարկի միջոցով, ընդ որում, բոլոր քաղաքացիների համար հարկային սանդղակը պետք է միատեսակ լինի: Միրլիսը վերլուծության է ենթարկել աշխատանքի վարձատրության տարբեր համակարգերի խթանիչ նշանակությունը, հանգելով այն եզրակացության, որ կառավարման ստորին մակարդակների համար վարձատրությունը պետք է ունենա ֆիքսված աշխատավարձի ձև, իսկ մենեջերների վերին օղակի համար նախընտրել է վարձատրությունը կախված ֆիրմայի շահույթից:

**Աշխատությունները.** «Չետագոտություն օպտիմալ եկամտահարկի տեսության մեջ» (1971), «Օպտիմալ հարկավորումը և հասարակական արտադրությունը. I. Արտադրական արդյունավետությունը, II. Հարկային կանոններ» (Ամերիկյան տնտեսագիտական ռեվյու, 1971, հ.61), Նշումներ տնտեսական բարեկեցության, տեղեկատվության և անորոշության վերաբերյալ» (Ուրվագծեր հավասարակշռված պահվածքի մասին, 1974), «Օպտիմալ հարկավորումը ստոխաստիկ տնտեսության մեջ» (Պ. Դայմոնդի հետ համատեղ, 1978):

1997թ.

**Մայրոն Շոուլզ (ԱՄՆ)**

**Ռոբերտ Մերտոն (ԱՄՆ)**

«Երկրորդային արժեթղթերի արժեքի որոշման նոր մեթոդի մշակման համար»:

**Մայրոն Շոուլզ** (ծն. 1941). կրթություն է ստացել Չիկագոյի համալսարանում, որտեղ 1969-ին պաշտպանել է դոկտորական դիսերտացիա, արժեթղթերի մրցակցային շուկայի վերաբերյալ: 1973թ. Չիկագոյում հրատարակվող «Քաղաքատնտեսության ամսագրում» լույս է տեսնում Ֆ. Բլեկի, Մ. Շոուլզի և Ռ. Մերտոնի շատ նշանավոր «Օպցիոնների վրա գնի սահմանման և կորպորացիոն դրամական պարտավորությունները» հոդվածը, որտեղ հիմնավորվում է այն միտքը, որ եթե օպցիոնի վրա սահմանվում են ճիշտ գներ, ապա հնարավոր է անհրաժեշտ շահույթի ստացումը ինչպես երկար, այնպես էլ կարճ ժամանակի համար: Դրա վրա է հիմնված օպցիոնային գնագոյացման հայտնի բանաձևը:

Այսպես կոչված դերիվատների՝ երկրորդային արժեթղթերի, այսինքն՝ օպցիոնների շուկաները շատ կարևոր են ֆիրմաների և մասնավոր սեփականատերերի համար, որոնք կանխատեսում են իրենց գործողությունները, ցանկանալով նախատեսել ապագա եկամուտները և վճարումները և երաշխավորում են մի ինչ-որ միջին մակարդակից բարձր շահույթ և ցածր վնասներ: Դերիվատների արժեքի որոշման այդ մեթոդը հաճախ համարվում է վերջին տասնամյակների տնտեսագիտական մտքի ամենամեծ ձեռքբերումներից մեկը՝ «ժամանակակից ֆինանսական շուկաների մաթեմատիկական վերլուծության անկյունաքարը»:

**Աշխատությունները.** «Փոխառություններից ստացած եկամուտների և սովորական արժեթղթերից ստացած եկամուտների միջև փոխադարձ կապը» (1971), «Օպցիոնային կոնտրակտների գնահատումը և շուկայական արդյունավետության տեստ (Ֆ. Բլեկի հետ համատեղ, 1972), «Օպցիոնային գնագոյացումը և կորպորատիվ պարտավորությունները (Ֆ. Բլեկի համահեղինակությամբ, 1973):

**Ռոբերտ Մերտոն** (ծն. 1944). Տնտեսագիտության գծով դոկտորական դիսերտացիա պաշտպանել է 1970-ին, «Ընդհանուր հավասարակշռության դինամիկ մոդելը» թեմայով: 1988-ից Յարվարդի բիզնես դպրոցի պրոֆեսոր է:

1993-ին ընտրվել է ԱՄՆ-ի Գիտությունների Ազգային Ակադեմիայի անդամ:

**Աշխատությունները.** «Ակտիվների շուկայի դինամիկ ընդհանուր հա-

վասարակշռության մոդելը և դրա օգտագործումը ֆիրմայի կապիտալային կառուցվածքի գնագոյացման մեջ» (1970), «Երկարաժամկետ ֆինանսները» (1990), «Գլոբալ ֆինանսական համակարգը. գործողության հեռանկարները» (1995):

1998թ.

**Ամարտյա Սեն** (ծն. 1933, ԱՄՆ)

«Բարեկեցության հիմնարար տեսության համար»:

Ծնվել է Յնդկաստանում: Սովորել է Քեմբրիջում, որտեղ էլ ստացել է տնտեսագիտության դոկտորի աստիճան: Աշխատել է տարբեր համալսարաններում: Նա նշանակալից ներդրում ունի հասարակական ընտրության արժեքների տեսության զարգացման, զանգվածային աղքատության արդի հիմնահարցերի վերլուծության բնագավառում: Ավելի քան երկու հարյուր գիտական հրատարակումների հեղինակ է:

**Աշխատությունները.** «Կոլեկտիվ ընտրությունը և հասարակական բարեկեցությունը» (1970), «Ընտրություն, բարեկեցությունը և չափման մեթոդը» (1982), «Ռեսուրսները, արժեքները և զարգացումը» (1984), «Աղքատությունը և սովը» (1981), «Ձարգացումը որպես ազատություն» (1999):

1999թ.

**Ռոբերտ Մանդել** (ծն. 1932, ԱՄՆ)

«Վալյուտային կուրսերի տարբեր ռեժիմների (exchange rate regimes) պայմաններում դրամավարկային և բյուջետային (գանձարանային) քաղաքականության վերլուծության համար, ինչպես նաև օպտիմալ վալյուտային գոտիների (optimum currency areas) վերլուծության համար»:

Մանդելը Բրիտանական Կոլումբիայի և Վաշինգտոնի համալսարանն ավարտելուց հետո ուսումը շարունակում է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի ասպիրանտուրայում և Լոնդոնի տնտեսագիտական դպրոցում: 1956-ին պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա համաշխարհային շուկաներում կապիտալի միգրացիայի վերաբերյալ: Դասախոսել է Ստենֆորդի համալսարանում, Չոնս Գոպկինսի միջազգային հետազոտությունների կենտրոնում, Չիկագոյի համալսարանում: Եղել է «Քաղաքատնտեսության ամսագրի» խմբագիր:

Տարբեր համալսարաններում զբաղեցրել է պրոֆեսորի պաշտոն և եղել է մի շարք միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ՄՎՖ, ՅՔ և այլն) խորհրդատու:

Շուրջ 40 գրքերի և 200 հոդվածների հեղինակ է:

**Աշխատությունները.** «Օպտիմալ վալյուտային գոտիների տեսություն-

նը» (1961), «Կապիտալի մոբիլությունը և կայունացնող քաղաքականությունը ֆիքսված և լողացող վայրուտային կուրսի պայմաններում» (1963), «Միջազգային վայրուտային համակարգի էվոլյուցիան» (1965), «Միջազգային էկոնոմիկա» (1968), «Մակրոտնտեսական կայունացումը անցումային տնտեսություններում» (1997):

**2000թ.**

**Ղենիել Մակ-Ֆադդեն (ԱՄՆ)**

**Ջեյմս Յեկման (ԱՄՆ)**

**Ղենիել Մակ-Ֆադդեն** (ծն. 1937). 1957-ին ավարտել է Մեննեստի համալսարանը «ֆիզիկա» մասնագիտությամբ: 1962-ին պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա տնտեսական բիխեվորիզմի գծով: 1968-ից Կալիֆոռնիայի համալսարանում էկոնոմիկայի պրոֆեսոր: Աշխատել է տարբեր համալսարաններում: Գիտական հետաքրքրությունները վերաբերում են տնտեսագիտության համեմատաբար նոր բնագավառի՝ միկրոէկոնոմետրիկային, որը գտնվում է ավանդական տնտեսագիտության տեսության և վիճակագրության շփման կետում: Մակ-Ֆադդենի վերջին շրջանի հետազոտությունները վերաբերում են ժողովրդագրության, ծերացման, առողջության և մահացության դինամիկայի, տնտեսական աճի, շրջակա միջավայրի էկոնոմիկայի և այլ հարցերի: 1981-ից Ամերիկայի գիտությունների Ազգային ակադեմիայի անդամ է:

Արժանացել է Նոբելյան մրցանակի «դիսկրետ ընտրության տեսության և վերլուծության մեթոդների զարգացման» բնագավառում կատարած ներդրման համար:

**Աշխատությունները.** «Տնտեսական աճի մոդելները» (1973), «Արտադրության էկոնոմիկա. տեսության երկակի մոտեցումները և կիրառումները» (1978), «Միկրոտնտեսական մոդելավորումը և քաղաքական վերլուծությունը» (1984), «Առավելություններ, անորոշություն և օպտիմալություն» (1990), «Էկոնոմետրիկայի տեղեկատու» (1994), «Տնային տնտեսությունների էկոնոմիկա» (1997):

**Ջեյմս Յեկման** (ծն. 1944). «Վիճակագրական ընտրության (selective samples) տեսության և ձևավորման մեթոդների մշակման համար»:

1965-ին ավարտել է քոլեջը «մաթեմատիկա» մասնագիտությամբ, այնուհետև ուսումը շարունակել Փրինսթոնի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում, որտեղ 1968-ին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա «Երեք ուրվագիծ տնային տնտեսության մեջ աշխատանքի առաջարկի և շուկայական ապրանքների պահանջարկի մասին» թեմայով: Աշխատել է տարբեր համալսարաններում: 1977-ից Զիկագոյի

համալսարանի պրոֆեսոր է, իսկ 1995-ից տնտեսագիտության վաստակավոր պրոֆեսոր: Գեկմանի գիտական հետաքրքրությունների հիմնական բնագավառներն են էկոնոմետրիկան, մարդկային ռեսուրսների, աշխատանքի, ազգաբնակչության էկոնոմիկան: Նրա հետազոտությունները մեթոդոլոգիական և էմպիրիկ հետաքրքրություն են ներկայացնում տնտեսության և հասարակության վրա սոցիալական ծրագրերի ունեցած ներգործության գնահատության առումներով:

**Աշխատությունները.** «Ընտանիքի էկոնոմիկան. ամուսնություն, երեխաներ և մարդկային կապիտալը» (1974), «Էկոնոմետրիկ շարունակական վերլուծություն» (1984), «Աշխատանքի շուկայի տվյալների երկայնական վերլուծությունը» (1985), «Սոցիալական ծրագրերի գնահատումը. մեթոդոլոգիական և էմպիրիկ եզրակացություններ մասնագիտական ուսումնասիրությունների ծրագրերից» (2002):

## Տնտեսագիտական բառարան

**Աբստրակցիա.** պարզեցման նպատակով տնտեսական վերլուծությունից որոշ տնտեսական և ոչ տնտեսական գործոնների անտեսում:

**Ազրեզավորում.** առանձին միավորների կամ տվյալների միավորումը մեկ ընդհանուր ցուցանիշի մեջ: Օրինակ բոլոր առանձին ապրանքների և ծառայությունների գները կազմավորում են գների մեկ ընդհանուր մակարդակ կամ արտադրանքի բոլոր միավորները ազրեզավորվում են իրական համախառն ազգային արդյունքի մեջ:

**Ազատ լողացող տարադրամի կուրս.** տարադրամի կուրս, որը որոշվում է արտասահմանյան փողի պահանջարկով ու առաջարկով, և որը կարող է ազատ բարձրանալ կամ իջնել:

**Ազգային եկամուտ.** ռեսուրսների մատակարարների կողմից համախառն ներքին արդյունքի արտադրության մեջ նրանց ներդրման դիմաց ստացած ընդհանուր եկամուտը: Հավասար է համախառն ներքին արդյունքից (ՀՆԱ) հանած եկամտի հետ չկապված վճարումները:

**Ազգային հարստություն.** բնական ռեսուրսների, ստեղծված արտադրության միջոցների, նյութական բարիքների և արժեքների ամբողջությունը, որին տնօրինում է երկիրը: Ազգային հարստության մեջ մտնում են ֆինանսական ակտիվները( ոսկի, տարադրամ, արժեթղթեր և այլն) և ոչ ֆինանսական ակտիվները, որոնք լինում են արտադրական և ոչ արտադրական:

**Ակորդային հարկ.** հարկ, որը հաստատուն մեծություն է ՀԱԱ-ի ցանկացած մակարդակի պայմաններում (օրինակ պետական եկամուտներից գանձվող հարկը):

**Ակսելերատոր.** ինվեստիցիաների աճի հարաբերություն այն առաջացնող արտադրության ծավալի աճին: Սովորաբար արտադրության աճը բերում է ինվեստիցիաների ավելի արագ աճի:

**Ակտիվներ.** ձեռնարկությանը պատկանող ունեցվածքի և դրամական միջոցների ամբողջություն, որի մեջ մտնում են կառույցները, սարքավորումները նյութական պաշարները, բանկային ներդրումները, արժեթղթերը և դրամական գնահատման ենթակա այլ սեփականությունները:

**Ակրեդիտիվ.** դրամական փաստաթուղթ, որը պարունակում է հանձնարարական ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նշված գումարի չափով վճարում կատարելու մասին նրանում նշված պայմաններին համապատասխան:

**Ակցիզային հարկ.** կոնկրետ ապրանքի կամ ապրանքի որոշակի քանակի ձեռք բերման համար կատարված ծախսերից գանձվող հարկ:

**Ամբողջական առաջարկ.** գրաֆիկ կամ կոր, որը ցույց է տալիս ապրանքների և ծառայությունների այն ընդհանուր քանակը, որը կարող է առաջարկվել (արտադրվել) գների տարբեր մակարդակների պայմաններում:

**Ամբողջական պահանջարկ.** գրաֆիկ կամ կոր, որը ցույց է տալիս ապրանքների կամ ծառայությունների այն ընդհանուր քանակը, որի նկատմամբ կարող է ներկայացվել պահանջարկ (կամ դրանց ինչ ծավալը կարող է գնվել) գների տարբեր մակարդակների պայմաններում:

**Ամբողջական ծախսեր.** պատրաստի ապրանքների և ծառայությունների վրա կատարած ծախսերի ընդհանուր գումարը:

**Ամբողջական ծախսերի և արտադրության ծավալի համադրման եղանակ.** ՋԱԱ-ի հավասարակշռված ծավալի որոշում, որի դեպքում ամբողջական ծախսերը հավասար են ՋԱԱ-ին :

**Ամորտիզացիա.** համախառն ներքին արդյունքի արտադրության համար անհրաժեշտ հիմնական կապիտալի չափի (արժեքի) գնահատումը :

**«Այլ հավասար պայմաններում» ենթադրություն.** ըստ որի, բացառությամբ հետազոտվողների, մյուս բոլոր փոփոխականները մնում են հաստատուն:

**Անձնական եկամուտ.** աշխատած և չաշխատած մասերից բաղկացած եկամուտ, որը գտնվում է տնային տնտեսությունների տնօրինության տակ մինչև անհատական հարկերի (եկամտահարկ, գույքահարկ և այլն) վճարումը:

**Անձնական եկամուտ հարկերը գանձելուց հետո.** տնային տնտեսությունների տնօրինության տակ գտնվող ամբողջ եկամուտը, անհատական հարկերի գանձումից հետո, որը բաշխվում է սպառման և կուտակման մասերի:

**Անձնական սպառողական ծախսեր.** երկարատև և կարճատև օգտագործման սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար տնային տնտեսությունների ծախսերը:

**Անվանական աշխատավարձ.** աշխատավարձի մեծությունը դրամական արտահայտությամբ, որը բնութագրում է նրա մակարդակը՝ անկախ ապրանքների և ծառայությունների գներից: Ի տարբերություն անվանականի, իրական աշխատավարձը հաշվի է առնում փողի գնդունակությունը:

**Անվանական եկամուտ.** անձանց կամ մարդկանց խմբերի կողմից որոշակի ժամանակամիջոցում ստացած փողի քանակը:

**Անվանական տոկոսադրույք.** տոկոսադրույք՝ արտահայտված փողի ընթացիկ կուրսով (առանց ինֆլյացիայի ճշգրտման):

**Անվանական համախառն ազգային արդյունք.** համախառն ազգային արդյունքը՝ արտահայտված ընթացիկ գներով տվյալ չափման պահին (առանց գների մակարդակի փոփոխությունների ճշգրտման):

**Անսահմանափակ պատասխանատվություն.** կորուստների չսահմանափակված մեծություն, որն անհատ սեփականատերը կամ ընկերության անդամը պետք է փոխհատուցի սնանանկացման դեպքում՝ ոչ միայն մասնավոր այլ նաև անձնական սեփականության հաշվին :

**«Անտեսանելի ձեռք».** ֆիրմաների և ռեսուրսների մատակարարողների ձգտումը մրցակցային շուկաներում ստանալ առավելագույն օգուտ՝ հասարակության շահերի (պահանջմունքների) առավելագույն բավարարման միջոցով:

**Անուղղակի հարկեր.** հարկեր ապրանքների և ծառայությունների դիմաց, որոնք սահմանվում են ապրանքների գների կամ ծառայությունների տարիֆների վրա որպես վերադիրներ և կախված չեն հարկատուների եկամուտներից (ի տարբերություն ուղղակի հարկերի, որոնք կապված են եկամուտների հետ): Արտադրողները (վաճառողները) ապրանքները և ծառայությունները վաճառում են հարկային վերադիրը հաշվի առնող գներով և տարիֆներով, որոնք այնուհետև փոխանցում են պետությանը: Անուղղակի հարկեր վճարում է բնակչությունը: Առավել տարածված անուղղակի հարկերն են ակցիզային գանձումները, շրջանառության հարկը, մաքսային տարիֆները, գույքահարկը, տնտեսական և արտադրական գործունեությանը զբաղվելու համար լիցենզիաների վճարումը:

**Աշխատանք.** մարդկանց ֆիզիկական և մտավոր ունակությունները, որոնք օգտագործվում են ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

**Աշխատանքի արտադրողականություն.** արտադրանքի ընդհանուր ծավալը բաժանած նրա արտադրության վրա ծախսված աշխատանքի քանակին. մեկ ժամվա ընթացքում աշխատողի կողմից արտադրված արդյունքի միջին ծավալը:

**Աշխատավարձ.** աշխատանքի (աշխատանքային ծառայության օգտագործման) գինը միավոր ժամանակում (ժամ, օր և այլն):

**Աշխատանքի բաժանում.** արդյունքի արտադրության համար պահանջվող աշխատանքի բաժանում տարբեր աշխատողների կողմից կատարվող մի շարք առանձին գործողությունների. աշխատողների մասնագիտացում:

**Ապրանքային շուկա, արդյունքների շուկա.** շուկա, որտեղ տնային տնտեսությունները գնում են, իսկ ֆիրմաները վաճառում են իրենց արտադրած արդյունքները:

**Առաջարկի գնային էլաստիկություն.** ապրանքի առաջարկի մեծության տոկոսային փոփոխության և այդ ապրանքի գնի տոկոսային փոփոխության հարաբերությունը, ապրանքի առաջարկի մեծության ռեակցիան նրա գնի փոփոխության նկատմամբ:

**Առաջարկի գրաֆիկ.** գրաֆիկ, որը ցույց է տալիս ապրանքների կամ ծառայությունների այն քանակը, որը վաճառողներն առաջարկում են որոշակի ժամանակամիջոցում:

**Առաջարկի մեծություն.** ապրանքի կամ ծառայության քանակությունը, որը վաճառողը առաջարկում է վաճառքի կոնկրետ գնով որոշակի ժամանակամիջոցում:

**Առաջարկի ոչ գնային դետերմինանտներ.** գործոններ, բացառությամբ գնի, որոնք որոշում են ապրանքի կամ ծառայության առաջարկի քանակական մեծությունները :

**Առաջարկի տնտեսագիտություն.** ժամանակակից մակրոտնտեսագիտական տեսության բաժին, որը <<ծախքեր >> և <<ամբողջական առաջարկ>> հասկացություններն օգտագործում է ինֆլացիայի և գործազրկության բացատրության մեջ:

**Առաջարկի օրենք.** ուղիղ կախվածություն ապրանքի կամ ծառայության գնի և առաջարկի մեծության միջև որոշակի ժամանակամիջոցում:

**Առաջարկի էլաստիկություն.** առաջարկ, որի էլաստիկության գործակիցը մեծ է մեկից, իսկ առաջարկի մեծության փոփոխության տոկոսը մեծ է ապրանքի գնի փոփոխության տոկոսից:

**Առևտրական հաշվեկշռի ակտիվ սալդո.** երկրի ապրանքային արտահանման գերազանցումը նրա ապրանքային ներմուծմանը:

**Առևտրային հաշվեկշիռ.** երկրի ապրանքային արտահանման ծավալի և նրա ապրանքային ներմուծման տարբերությունը:

**Առևտրային (կոմերցիոն) բանկ.** ֆիրմա, որն ունի կառավարության թույլատվությունը բանկային գործարքներ իրականացնելու համար:

**Առևտրի ազատություն.** անհատների և ձեռնարկությունների միջև պետության կողմից արհեստական խոչընդոտների ձևով առևտրի իրականացման սահմանափակումների բացակայություն:

**Ավանդական տնտեսություն.** տնտեսական համակարգ, որտեղ ավանդույթներն ու սովորություններն են որոշում սահմանափակ ռեսուրսների օգտագործումը:

**Ավելացված արժեք.** ֆիրմայի կողմից վաճառված ապրանքի արժեքը հանած նրա արտադրության համար գնված և օգտագործված նյութերի արժեքը. հավասար է հասույթին, որն ընդգրկում է աշխատավարձի, վարձակալական վճարի, տոկոսի և շահույթի համարժեքը:

**Ավելացված արժեքի հարկ.** հարկ, որը դրվում է տվյալ ֆիրմայի կողմից վաճառված և նրա կողմից այլ ֆիրմաներից գնված ապրանքների արժեքների տարբերության վրա:

**Ավիզո.** տեղեկատվություն, որն ուղարկվում է գործարքի մասնակիցների կողմից համապատասխան կազմակերպությանը և վկայում



գործարքների, վճարումների կատարման կամ փոխադարձ հաշվարկների մասին:

**Ավտարկիա.** պետության, տարածաշրջանի կողմից իրականացվող տնտեսական մեկուսացման քաղաքականություն, ուղղված փակ, անկախ տնտեսության ստեղծմանը, որն իվիճակի է իրեն ինքնուրույն բավարարել անհրաժեշտ ամեն ինչով:

**Ավտորիտար կապիտալիզմ.** տնտեսական համակարգ, որտեղ ռեսուրսները մասնավոր սեփականություն են, իսկ կառավարությունը լայն մասշտաբներով կարգավորում և ուղղություն է տալիս տնտեսական գործընթացներին:

**Արգելակիչ զանձարանային քաղաքականություն.** քաղաքականություն, որը վարվում է ավելցուկային պահանջարկի հետևանքով առաջացած ինֆլյացիայի պայմաններում: Այն ենթադրում է 1) կառավարության ծախսերի կրճատում, կամ 2) հարկերի բարձրացում, կամ

3) դրանց զուգակցում: Գանձարանային քաղաքականության այս ձևը ենթադրում է բյուջեի դրական սալդոյի առաջացում:

**Արգելանվի էֆեկտ. կամ իներցիոն էֆեկտ.** գների մակարդակի բարձրացման միտում անբողջական պահանջարկի աճի դեպքում. կայունության պահպանման միտում անբողջական պահանջարկի կրճատման դեպքում:

**Արժեթղթեր.** դրամական կամ ապրանքային փաստաթղթեր, որոնք դրանց տիրոջը տալիս են գույք կամ որոշակի դրամական գումարներ, եկամուտներ ստանալու իրավունքներ: Դրամական արժեթղթեր են հանարվում փոխառությունները, մուրհակները, չեկերը, դրամական սերտիֆիկատները: Ապրանքային արժեթղթեր են անդորրագրերը, պահեստային վկայականները: Հատուկ տեղ են գրավում բաժնետոմսերը, որոնք տալիս են ինչպես դրամական, այնպես էլ գույքային իրավունքներ:

**Արտադրական հնարավորությունների աղյուսակ (կոր).** կախվածություն, որն արտահայտում է երկու ապրանքների կամ ծառայությունների միաժամանակյա արտադրության հնարավորությունները (դրանց զանազան զուգակցումները) լրիվ զբաղվածության և արտադրության լրիվ ծավալի պայմաններում, ռեսուրսների հաստատուն պաշարներ և անփոփոխ տեխնոլոգիա ունեցող տնտեսության մեջ:

**Արտադրության լրիվ ծավալ.** ապրանքների և ծառայությունների առավելագույն քանակությունը, որը կարող է արտադրվել տնտեսության մեջ օգտագործվող ռեսուրսներից: Ունեցած ռեսուրսների լրիվ օգտագործումը:

**Արտադրության ծախսեր.** արդյունքների արտադրության հետ ուղղակիորեն կապված ծախսեր, որոնք լինում են հաստատուն (անկախ արտադրության ծավալից, օրինակ շենքի վարձակալական վճար-

ները, կառավարման ապարատի ծախսերը) և փոփոխական ( հումքը, նյութերը, գործարքային աշխատավարձը):

**Արտահանում.** այլ երկրների անհատների, ֆիրմաների և կառավարությունների կողմից կատարած ծախսերը՝ տվյալ երկրում արտադրված ապրանքների գնման համար:

**Արտահոսք-ներհոսքերի եղանակ.** ՋԱԱ-ի հավասարակշռված մակարդակի որոշում, որի դեպքում արտահոսքերի չափը հավասարվում է ներհոսքերին:

**Արտամղման էֆեկտ.** տոկոսադրույքի բարձրացում և դրանից հետևող ինվեստիցիաների զուտ ծավալի կրճատում տնտեսության մեջ՝ պայմանավորված դրամական շուկայում կառավարության փոխառությունների աճով:

**Արտաքին առևտրի կարգավորում.** մաքսերի, արտահանման սուբսիդիաների, ներմուծման քվոտաների և այլ միջոցների սահմանում, որոնք կարող է կիրառել երկիրը ներմուծումը կրճատելու և արտահանումը ընդլայնելու համար՝ վճարային հաշվեկշռի դեֆիցիտը վերացնելու նպատակով:

**Արտաքին պարտք.** պետության պարտքը արտասահմանյան քաղաքացիներին, ֆիրմաներին և հաստատություններին:

**Բազիսային տարի.** տարի, որն ընդունվում է որպես հիմք գների ինդեքսի հաշվարկման ժամանակ, այլ տարիներին գործող գների հետ այն համեմատելու նպատակով:

**Բաժնետիրական ընկերություն.** տնտեսավարող կազմակերպություն, որի հիմնադիր կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետերերի միջև: Ղեկավարվում է տնօրենների խորհրդի կողմից, որին ընտրում է ընդհանուր ժողովը: Լինում է փակ, որը բաժնետոմսերը տարածում է հիմնադիրների որոշմամբ՝ փակ բաժանորդագրման միջոցով, և բաց, որը դրանք բաշխում է ազատ առևտրի օգնությամբ:

**Բաժնետոմս.** բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկվող արժեթղթեր, որոնք վկայում են ընդհանուր կապիտալում նրա տիրոջ ունեցած մասնակցության մասին: Բաժնետոմսը իրավունք է տալիս շահույթից բաժին ստանալ դիվիդենտի ձևով, դրանք վաճառել արժեթղթերի շուկայում, մասնակցել ընկերության կառավարմանը և լուծարման դեպքում ստանալ ընկերության ունեցվածքի մի մասը:

**Բանկնոտ.** Կենտրոնական բանկի կողմից շրջանատության մեջ թողարկվող բանկային տոմսեր, տարբեր արժողության դրամանիշեր:

**Բարդ մուլտիպլիկատոր.** մուլտիպլիկատոր, որի դեպքում ՋԱԱ-ի փոփոխությունն առաջանում է ոչ միայն խնայողությունների ծավալի, այլ նաև հարկային մուտքերի և ներմուծման ծավալի փոփոխության պատճառով:

**Բարձր կարգի ապրանքներ (նորմալ ապրանք).** ապրանք կամ ծառայություն, որը սպառողը ցանկացած գնի պայմաններում պատրաստ է շատ (քիչ) գնել, երբ նրա եկամուտները աճում (նվազում) են:

**Բարտեր, բարտերային առևտուր.** մի ապրանքի կամ ծառայության բնահրային փոխանակումը մեկ այլ ապրանքի կամ ծառայության հետ:

**Բացառման սկզբունք.** չվճարող անձանց հեռացումը օգուտներ բերող ապրանքի կամ ծառայության օգտագործման գործընթացից:

**Բյուջետային դեֆիցիտ.** յուրաքանչյուր տարում կառավարության եկամուտների նկատմամբ նրա ծախսերը գերազանցող գումարը:

**Բյուջետային պրոֆիցիտ.** յուրաքանչյուր տվյալ տարում կառավարության ծախսերի նկատմամբ նրա եկամուտները գերազանցող գումարը:

**Բնական մոնոպոլիա.** ճյուղ, որտեղ մասշտաբի էֆեկտը այնքան մեծ է, որ արդյունքը կարող է արտադրվել մեկ ֆիրմայի կողմից ավելի ցածր միջին ծախսերով, քան եթե նրա արտադրությամբ զբաղվեին ոչ թե մեկ, այլ մի քանի ֆիրմաներ:

**Բորսա.** նմանատիպ ապրանքների մշտապես գործող մեծածախ շուկաներ, որտեղ կնքվում են ապրանքների մեծ քանակության առք ու վաճառքի գործարքներ: Բորսաները միջնորդի դեր են կատարում գնորդների և վաճառողների միջև և նպաստում մեծածախ գների ձևավորմանը բորսային սակարկությունների օգնությամբ: Լինում են ապրանքային, որոնք վաճառում են նյութական արժեքներ, ֆոնդային, որոնք իրականացնում են արժեթղթերի առք ու վաճառք, արժութային և աշխատանքային, որոնք զբաղվում են գործազուրկների աշխատանքի տեղավորման հարցերով:

**Բրետոն-Վուդյան համակարգ.** երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված միջազգային տարադրամային համակարգ, որի շրջանակներում իրականացվում էին տարադրամային կուրսերի կարգավորման միջոցառումներ: Միջազգային արժութային հիմնադրամը նպաստում էր արտասահմանյան տարադրամների կուրսերի կայունացմանը, իսկ ոսկին և դոլարը օգտագործվում էին որպես միջազգային տարադրամային ռեզերվներ:

**Գլոբալացում.** աշխարհի տարբեր երկրների տնտեսավարման համակարգերի տնտեսական կապերի և փոխազդեցությունների ուժեղացում, արտադրության և կապիտալի ինտերնացիոնալիզացում, որը բերում է տնտեսավարման նորմերի ու պայմանների նույնացմանը: Առաջացնում է առանձին երկրների տնտեսությունների ազգային առանձնահատկությունները պաշտպանողների դժգոհությունն ու հակազդեցությունը:

**Գնային դիսկրիմինացիա.** վաճառողի վարքագիծը ոչ կատարյալ մրցակցային շուկայում, երբ միևնույն ապրանքի համար սահմանվում

են տարբեր գներ: Գնային դիսկրիմինացիայի պայմանն է վաճառողի կողմից տվյալ ապրանքի նկատմամբ ըստ պահանջարկի էլաստիկության գնորդների սահմանազատման հնարավորությունը:

**Գների ինդեքս.** ինդեքս, որը ցույց է տալիս «շուկայական զամբյուղի» գնի, այսինքն սպառողական ապրանքների շուկայական հավաքածուի գնի փոփոխության դինամիկան. որոշվում է ընթացիկ տարվա «շուկայական զամբյուղի» գնի և նմանատիպ զամբյուղի բազիսային գնի հարաբերությամբ: Օգտագործվում է արտադրանքի անվանական ծավալը (եկամուտը) իրական ծավալի (եկամտի) վերահաշվարկելու համար:

**Գների հավասարակշռող ֆունկցիա.** մրցակցային շուկայում գնի ունակությունը՝ բարձրանալու կամ իջնելու միջոցով հավասարեցնելու պահանջարկի մեծությունը առաջարկի մեծության հետ, վերացնելու ապրանքների կամ ծառայությունների պակասն ու ավելցուկը:

**Գործազրկության բնական մակարդակ.** գործազրկության մակարդակը ցիկլային գործազրկության պայմաններում. ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունը միասին, որը կազմում է աշխատանքային ռեսուրսների 5-6 տոկոսը:

**Գործառնություններ բաց շուկայում.** ֆեդերալ ռեզերվային բանկի կողմից կառավարության արժեթղթերի առք ու վաճառք:

**Գույքահարկ (սեփականության հարկ).** ֆիրմաների և տնային տնտեսությունների սեփականության (կապիտալի, հողի, բաժնետոմսերի, փոխառության պարտատոմսերի և այլ ակտիվների) արժեքի վրա դրվող հարկ:

**Դեդուկցիա.** դատողությունների (մտահանգումների) հիմնական եղանակներից և հետազոտության մեթոդներից մեկը, որի օգնությամբ վարկածի (ենթադրության) ճշմարտացիությունը ստուգվում է նրանից բխող եզրակացությունները իրական տնտեսական փաստերի հետ համեմատելու միջոցով: Դեդուկցիան անցում է ընդհանուրից դեպի մասնավորը, տեսությունից դեպի փաստերը, համադրում է առաջարկված վարկածը փաստերի հետ:

**Դեմպինգ.** ապրանքների վաճառք այլ երկրներում ինքնաժեքից ցածր գնով:

**Դեֆյավորում.** իրական ՀԱԱ-ի հաշվարկում տվյալ տարվա անվանական ՀԱԱ-ի փոքրացման միջոցով, եթե այդ տարում գների մակարդակը ավելի բարձր է եղել, քան բազիսային տարում:

**Դեֆյացիա.** երկրի տնտեսության մեջ գների ընդհանուր (միջին) մակարդակի իջեցում:

**Դեֆոլտ.** փոխառու միջոցների վերադարձման, արժեթղթերի դիմաց տոկոսների վճարման անկարողություն: *Դեֆոլտը* վերաբերում է ձեռնարկությանը, բանկին և պետությանը, որոնք ի վիճակի չեն կատարել իրենց ֆինանսական պարտավորությունները:

**Դիլեր.** մասնավոր անձ կամ ֆիրմա, ֆոնդային բորսայի անդամներ, որոնք գործարքներ են կատարում ոչ թե որպես պարզ միջնորդ- գործակալներ( բրոկերներ), այլ գործում են, իր անունից և իրենց հաշվին, այսինքն գործի մեջ ներդրում են սեփական միջոցները, իրականացնում արժեթղթերի, տարադրամի և թանկարժեք մետաղների ինքնուրույն առք ու վաճառք:

**Դինամիկ տնտեսություն.** տնտեսություն, որը միաժամանակ կարող է ավելացնել երկու արդյունքների արտադրությունը: Արտադրական հնարավորությունների կորն այս դեպքում տեղաշարժվում է դեպի աջ, որը հնարավոր է ռեսուրսների քանակական աճի, որակի բարելավման կամ տեխնոլոգիայի կատարելագործման հաշվին:

**Դիսկրեցիոն գանձարանային քաղաքականություն.** կառավարության կողմից հարկերի (հարկադրույքների) և պետական ծախսերի ծավալի (ապրանքների և ծառայությունների ծախսերի, տրանսֆերտային վճարումների ծրագրերի) կանխամտածված փոփոխությունը՝ նպատակ ունենալով ապահովել ոչ ինֆլյացիոն ՅԱՎ-ի արտադրությունը լրիվ զբաղվածության պայմաններում և խթանել տնտեսական աճը:

**Դիվիդենտ.** բաժնետիրական ընկերության շահույթի մի մասը, որը նա բաշխում է փայտերերի միջև և վճարում ամեն տարի՝ նրանց ունեցած բաժնետոմսերի արժեքին համապատասխան: Արտոնյալ բաժնետոմսերի դիվիդենտը հաստատուն մեծություն է, որը ֆիքսվում է նախապես, իսկ սովորական բաժնետոմսերի դեպքում կարող է փոփոխվել՝ կախված բաժնետիրական ընկերության շահութաբերությունից և ստացված շահույթի օգտագործման ուղղություններից:

**Դևալվացիա.** տարադրամի օրենսդրորեն սահմանված արժեքի իջեցում:

**Եկամտի էֆեկտ.** ազդեցություն, որն ունենում է արդյունքի գնի փոփոխությունը սպառողի իրական եկամտի (գնողունակության) վրա՝ և համապատասխանաբար սպառողի կողմից գնվող ապրանքի քանակի վրա՝ հաշվի առնելով (կամ հաշվի չառնելով) փոխարինման էֆեկտը:

**Զբաղվածության դասական տեսություն.** մակրոտնտեսական տեսություն, համաձայն որի շուկայական տնտեսությունն ամբողջությամբ օգտագործում է ռեսուրսները, և ճգնաժամերը պատահական երևույթներ են:

**Չեղչադրույք.** տոկոսադրույք, որը ֆեդերալ ռեզերվային բանկերը գանձում են առևտրային բանկերին տրամադրված վարկերից:

**Զբաղվածության քեյնսյան տեսություն.** մակրոտնտեսական տեսություն, համաձայն որի շուկայական տնտեսությունն ինքնին չի ապահովում ռեսուրսների լրիվ օգտագործում, որի համար պահանջվում է դրամավարկային և գանձարանային քաղաքականություն:

**Չեղչադրույք.** տոկոսադրույք, որը ֆեդերալ ռեզերվային բանկերը գանձում են առևտրային բանկերին տրամադրված վարկերից:

**Չուտ ազգային արդյունք.** համախառն ազգային արդյունքը՝ հանած արտադրված արդյունքի այն մասը, որն օգտագործվել է արտադրության պրոցեսում մաշված հիմնական արտադրության միջոցների վերականգնման համար (ամորտիզացիոն հատկացումներ):

**Չուտ արտահանում.** արտահանում հանած ներմուծում:

**Չուտ ներքին ինվեստիցիաներ.** համախառն մասնավոր ներքին ինվեստիցիաներից հանած ամորտիզացիոն հատկացումները. երկրի հիմնական կապիտալի տարեկան աճը:

**Չուտ հարկային մուտքեր.** կառավարության հարկային գանձումները՝ հանած կառավարության տրանսֆերտային վճարումները:

**«Էժան» փողերի քաղաքականություն.** շրջանառության մեջ փողի զանգվածը մեծացնելու քաղաքականություն:

**Էլաստիկության գործակից.** պահանջարկի (առաջարկի) մեծության տոկոսային փոփոխության և ապրանքի գնի տոկոսային փոփոխության հարաբերությունը:

**Էնթալպի.** 1) ապրանքի որոշակի տեսակների, արժեքների, ոսկու, արժեթղթերի արտահանման կամ ներմուծման վրա պետական արգելքի սահմանում, 2) ՄԱԿ-ի որոշմամբ որոշ երկրների հետ առևտրի շրջափակում, որպես տվյալ երկրի կողմից ՄԱԿ-ի կանոնադրության խախտման համար պատժամիջոց:

**Էքստենսիվ աճ.** որն ապահովվում է արտադրության մեջ ռեսուրսների ավելի մեծ ծավալ ընդգրկելու հաշվին:

**Ընտրության ազատություն.** նյութական ռեսուրսների և փողի սեփականատերերի ազատ իրավունքը դրանք օգտագործելու իրենց հայեցողությամբ, աշխատողների ազատ իրավունքը զբաղվելու ցանկացած աշխատանքով, որին նրանք ընդունակ են, սպառողների ազատ իրավունքը սեփական եկամուտները ծախսելու իրենց համար նախընտրելի (լավագույն) նպատակով:

**«Թանկ» փողերի քաղաքականություն.** շրջանառության մեջ փողի զանգվածը կրճատելու կամ սահմանափակելու քաղաքականություն:

**Ժամկետային ավանդ.** դեպոզիտային հաստատությունում տոկոսաբեր հաշիվ, որից ավանդատուն առանց տոկոսների կորստի կարող է հետ վերցնել միջոցներ կամ սահմանված ժամկետում, կամ ժամկետը լրանալուց հետո, կամ էլ որոշակի ժամանակահատվածի վերջում:

**Ինդուկցիա.** դատողությունների (մտահանգումների) եղանակ և հետազոտության մեթոդ, շարժում մասնավորից դեպի ընդհանուրը, փաստերից դեպի տեսությունը: Ինդուկցիայի միջոցով փաստերը հավաքվում, համակարգվում և ընդհանրացվում են:

**Ինկասսո.** դրամական միջոցները մի հաճախորդից մյուսին փոխանցելու բանկային գործառնության տեսակ:

**Ինտենսիվ աճ.** որն ապահովվում է տեխնոլոգիայի կատարելագործման և ռեսուրսների որակական բարելավման հաշվին :

**Ինֆլյավորում.** իրական ՉԱԱ-ի հաշվարկում տվյալ տարվա անվանական ՉԱԱ-ի մեծացման միջոցով, եթե այդ տարում գների մակարդակը ավելի ցածր է եղել, քան բազիսային տարում:

**Ինֆլյացիա.** Երկրի տնտեսության մեջ գների ընդհանուր (միջին) մակարդակի բարձրացում:

**Ինֆլյացիոն ճեղքվածք.** մեծություն, որի չափով ամբողջական ծախսերի կորը պետք է տեղաշարժվի դեպի ներքև, որպեսզի իրական ՉԱԱ-ն համապատասխանի լրիվ զբաղվածության պայմաններում արտադրված ոչ ինֆլյացիոն ՉԱԱ-ի մակարդակին:

**Ինֆրակառուցվածք.** կապիտալ կառույցներ, որոնց օգտագործումը քաղաքացիների և ֆիրմաների կողմից սովորաբար ապահովում է պետությունը (ավտոմագիստրալներ, կամուրջներ, քաղաքային տրանսպորտի համակարգեր, ջրամաքրման կառույցներ, ջրամատակարարման մունիցիպալ համակարգեր, օդանավակայաններ):

**Իրական եկամուտ.** ապրանքների և ծառայությունների այն քանակը, որն առանձին անհատ կամ անձանց խումբ կարող է գնել իր անվանական եկամուտով որոշակի ժամանակամիջոցում. անվանական եկամուտը՝ գների մակարդակի փոփոխությամբ:

**Իրական համախառն ազգային արդյունք.** ՉԱԱ-ը գների մակարդակի փոփոխության ճշգրտմամբ. որոշվում է տվյալ տարվա անվանական ՉԱԱ-ի և նույն տարվա անվանական ՉԱԱ-ի դեֆլատորի հարաբերությամբ:

**Իրական տոկոսադրույք.** տոկոսադրույքը դրամական արտահայտությամբ՝ ինֆլիացիայի ճշգրտմամբ. հավասար է անվանական տոկոսադրույքին՝ փոքրացված ինֆլյացիայի չափով:

**Իրավաբանական անձ.** ձեռնարկություն, կազմակերպություն, որը հանդես է գալիս իբրև իրավունքների և պարտականությունների միասնական, ինքնուրույն կրող և ունի իրավաբանական անձի հիմնական հատկանիշները. ա) գոյության անկախություն նրա մեջ մտնող առանձին անձանցից, բ) մասնակիցների գույքից առանձին ունեցվածքի առկայություն, գ) սեփականության ձեռքբերման , օգտագործման և տնօրինման իրավունք , դ) իր անունից տնտեսական գործարքներ կատարելու իրավունք, ե) դատարանում հայցվորի կամ պատասխանողի դերում հանդես գալու իրավունք, զ) ինքնուրույն գույքային պատասխանատվություն: Իրավաբանական անձն ունի իր ֆիրմային անվանումը, հասցեն, կանոնադրությունը, կնիքը և հաշվի համարը բանկում: Նա ենթարկվում է պետական գրանցման և մտցվում պետական ռեսսորի մեջ:

**Լաֆերի կորը.** կոր, որը ցույց է տալիս հարկային դրույքաչափերի և հարկային մուտքերի ծավալի միջև կապը, այնպիսի դրույքաչափի

բացահայտումը, (0-ից մինչև 100 տոկոս), որի դեպքում հարկային մուտքերը հասնում են առավելագույն մակարդակի:

**Լիզինգային գործառնություն.** երբ բանկը կամ նրա ենթակա լիզինգային կազմակերպությունը գնում է արտադրության միջոցներ (սարքավորումներ, հաշվողական տեխնիկա, օդանավեր, բեռնատար նավեր և այլն) և տալիս երկարատև վարձակալության : Վարձակալը պարբերաբար մուծումներ է կատարում դրանց դիմաց :

**Լիկվիդայնություն.** Փող կամ ապրանք, որոնք կարելի է հեշտ և արագ փոխարկել(վերածել) փողի առանց կորստի կամ դրանց գնողունակության քիչ կորուստով:

**Լորենցի կոր .** կոր, որը ցույց է տալիս, թե երկրի համախառն եկամտի ո՞ր մասն է ստանում ցածր եկամուտներով կամ բարձր եկամուտներով ընտանիքների յուրաքանչյուր խումբ, այսինքն տոկոսներով արտահայտում է եկամտի բաշխումը տարբեր եկամուտներ ստացող ընտանիքների միջև: Այն պատկերվոր ձևով ցույց է տալիս, թե որքանով է եկամուտների փաստացի բաշխումը տարբեր ընտանիքների միջև տարբերվում հավասարակշռվածից:

**Լրացուցիչ ծախսերի աճի օրենք.** X արդյունքի լրացուցիչ քանակության միավորների արտադրությունը ենթադրում է Y արդյունքի միավորների զոհաբերություն՝ աճող քանակությամբ:

**Լրիվ զբաղվածություն.** 1) ապրանքների ու ծառայությունների արտադրության համար բոլոր պիտանի ու մատչելի ռեսուրսների օգտագործումը, 2) զբաղվածության այնպիսի մակարդակ, երբ առկա է միայն ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկություն (բացակայում է ցիկլային գործազրկությունը), և , իրական ՉԱԱ-ն հավասար է պոտենցիալ մեծությանը:

**Լիառը կապիտալիզմ.** տնտեսություն, որտեղ ռեսուրսների բաշխումն իրականացվում է և՛ կառավարության, և՛ մասնավոր որոշումներով:

**Լիթանիչ գանձարանային քաղաքականություն.** պետության դիսկրեցիոն քաղաքականություն, որը վարվում է տնտեսական անկման և դեպրեսիայի փուլերում. այն ենթադրում է 1) կառավարության ծախսերի աճ, կամ 2) հարկային մուտքերի ծավալների կրճատում կամ, 3) դրանց զուգակցում:

**Խնայողության միջին հակվածություն.** խնայողությունների բաժինը՝ հարկերը վճարելուց հետո մնացած եկամտի այն մասը, որը տնային տնտեսությունները խնայում են. որոշվում է խնայողության ծավալի և հարկերը վճարելուց հետո մնացած եկամտի հարաբերությամբ:

**Խնայողության պարադոքս.** խնայողություններն ավելացնելու հասարակության փորձերը կարող են հանգեցնել խնայողությունների նույն կամ նույնիսկ ավելի փոքր ծավալի:

**խնայողության սահմանային հակվածություն.** խնայողության բաժինը հարկերը վճարելուց հետո մնացած եկամտի ցանկացած փոփոխության մեջ. որոշվում է խնայողությունների փոփոխության և հարկերը վճարելուց հետո մնացած եկամտի փոփոխության հարաբերությամբ:

**խնայողությունների գրաֆիկ.** գրաֆիկ, որը ցույց է տալիս տնային տնտեսությունների կողմից պլանավորվող խնայողությունների ծավալը (այսինքն՝ այն միջոցները, որոնք չեն նախատեսված սպառողական ապրանքների գնման համար) հարկերը վճարելուց հետո մնացած եկամտի տարբեր մակարդակների դեպքում:

**Ծախքերի ինֆլյացիա.** ինֆլյացիա, որն առաջանում է ռեսուրսների թանկացման արդյունքում՝ կապված աշխատվարձի, էներգակիրների և հումքի գների բարձրացման հետ. ուղեկցվում է արտադրության իրական ծավալի և զբաղվածության կրճատմամբ (գործազրկության մակարդակի աճով):

**Կապիտալ.** արտադրական գործունեության հետևանքով ստեղծված ռեսուրսներ, որոնք օգտագործվում են ապրանքների ու ծառայությունների արտադրման համար: Լայն իմաստով կապիտալը այն ամենն է, ինչը կարող է եկամուտ բերել: Ապրանքները, որոնք անմիջականորեն չեն բավարարում մարդկանց պահանջմունքները, ինվեստիցիոն ապրանքներ են, արտադրության միջոցներ:

**Կառուցվածքային գործազրկություն.** գործազրկություն, որն առաջանում է սպառողական ապրանքների պահանջարկի կառուցվածքում և արտադրության տեխնոլոգիայում կատարված փոփոխությունների հետևանքով. գործազուրկներ, որոնք զրկվել են աշխատանքից ձեռնարկատերերի կողմից՝ նրանց մասնագիտության նկատմամբ պահանջարկի բացակայության կամ էլ աշխատանք ստանալու համար բավարար որակավորում չունենալու հետևանքով:

**Կատարյալ էլաստիկ առաջարկ.** իրավիճակ, որի ժամանակ առաջարկի մեծության փոփոխությունը չի պահանջում ապրանքի գնի փոփոխություն. իրավիճակ, երբ վաճառողները պատրաստ են առաջարկել ապրանքի այժպիսի քանակություն, որը գնորդները պատրաստ են գնել անփոփոխ գնով:

**Կատարյալ էլաստիկ պահանջարկ.** իրավիճակ, որի ժամանակ պահանջարկի մեծության փոփոխությունը չի պահանջում ապրանքի գնի փոփոխություն. իրավիճակ, երբ գնորդները պատրաստ են գնելու շուկայում եղած ամբողջ ապրանքը՝ անփոփոխ գնով:

**Կենտրոնական բանկ.** բանկ, որի գլխավոր ֆունկցիան տվյալ երկրի շրջանառության մեջ փողի զանգվածի վերահսկողությունն է:

**Կողմնակի ծախքեր.** ծախքեր, որոնք կրում են ոչ թե արտադրողներն ու սպառողները, այլ հասարակության մի երրորդ կողմը՝ առանց որևէ փոխհատուցման:

**Կողմնակի օգուտներ.** երրորդ կողմի մոտ առաջացող օգուտներ, որոնք առնչություն չունեն ապրանքի կամ ծառայության արտադրության կամ սպառման հետ:

**Կոնգլոմերատային միավորում.** մեկ ֆիրմայի պատկանող և տարասեռ արդյունքների ( մեկը մյուսի հետ չմրցակցող ) մեկ կամ մի քանի արտադրության փուլեր իրականացնող ձեռնարկությունների խումբ:

**Կորպորացիա.** բաժնետիրական սկզբունքով ձևավորվող բազմաթիվ անձանց սեփականություն, որն ունի անսահման ֆինանսական հնարավորություններ և սահմանափակ պատասխանատվություն:

**Կրկնահաշվարկ.** միևնույն ապրանքի կամ ծառայության մեկից ավելի հաշվառում. միջանկյալ ապրանքների արժեքների հաշվառումը ՀԱԱ-ի կազմում:

**Համախառն ազգային արդյունք.** տարվա ընթացքում երկրում արտադրված բոլոր պատրաստի ապրանքների և ծառայությունների ընդհանուր շուկայական արժեքը:

**ՀԱԱ-ի դեֆլատոր.** բոլոր պատրաստի ապրանքների և ծառայությունների գների ինդեքսը, որն օգտագործվում է դրամական (անվանական) ՀԱԱ-ը ճշգրտելու և իրական ՀԱԱ-ը հաշվարկելու համար:

**Համախառն մասնավոր ներքին ինվեստիցիաներ.** արտադրության միջոցների (մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ և կառույցներ) արտադրության, ինչպես նաև ապրանքա-մյուսական պաշարների համալրման վրա կատարած ծախսերը:

**Համախառն ներքին արդյունք.** մեկ տարում տվյալ երկրում արտադրված բոլոր վերջնական ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը՝ անկախ ռեսուրսների ստացման աղբյուրից (ներմուծվող ,թե՛ ներքին):

**Համաշխարհային բանկ.** բանկ, որի մեջ մեջ մտնում են 151 երկրներ, և որը վարկեր է տրամադրում (և երաշխավորում) զարգացող երկրներին՝ նպատակ ունենալով ապահովել նրանց զարգացումը. վերականգնման և զարգացման միջազգային բանկ:

**«Համարյա փող».** ֆինանսական ակտիվներ, որոնցից ամենակարևորներն են՝ կարծաժամկետ խնայողամարկղային դեպոզիտները, կարծաժամկետ պետական արժեթղթերը և խնայողական պարտատոմսերը. չլինելով շրջանառության միջոց՝ դրանք կարող են արագ վերածվել փողի:

**Համեմատական առավելություններ.** միևնույն արդյունքի արտադրության ավելի ցածր ծախքեր մի այլ արտադրողի համեմատությամբ:

**Հասարակական բարիքներ.** ապրանքներ և ծառայություններ, որոնց նկատմամբ կիրառելի չէ բացառման սկզբունքը, և որոնց արտադրությունը իրականացվում է պետության կողմից այն պայմանով, որ դրանք հասարակությանը բերում են էական օգուտներ:

**Չարտություն էֆեկտ.** գների մակարդակի աճը (իջեցումը) միտում ունի կրճատելու (բարձրացնելու) ֆիքսված դրամական արտա-հայտությամբ ֆինանսական ակտիվների իրական արժեքը (կամ գնողունակությունը), իսկ արդյունքում նաև կրճատել (մեծացնել) տնտեսության մեջ ծախսերի ընդհանուր ծավալը, հետևաբար նաև ամբողջական պահանջարկը:

**Չիպերինֆլացիա.** գների մակարդակի շատ արագ աճ:

**Չիպթեկային վարկ.** Անշարժ գույքի դիմաց բանկերի կողմից տրվող երկարաժամկետ վարկ: Տոկոսադրույքները դիֆերենցվում են՝ փոխառուի ֆինանսական վիճակից ելնելով:

**Չող, բնական ռեսուրսներ.** բնական ռեսուրսներ (բնության պարզևած բարիքներ), որոնք կարող են օգտագործվել ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

**Չորիզոնական միավորում.** արտադրության միևնույն փուլերն իրականացնող և մեկ ֆիրմայի սեփականությունը հանդիսացող ձեռնարկությունների խումբ:

**Չրամայական տնտեսություն.** տնտեսական համակարգի կառավարման եղանակ, որտեղ նյութական ռեսուրսները պետական սեփականություն են, իսկ տնտեսական գործունեության ուղղությունն ու կոորդինացումը իրականացվում է կենտրոնացված տնտեսական պլանավորման միջոցով:

**Չեռնարկատիրական ունակություն.** ապրանքների արտադրության ռեսուրսների լավագույն գույքորոնմներ օգտագործելու, որոշումներ կայացնելու, նորույթներ ստեղծելու և կիրառելու, ռիսկի դիմելու մարդու ունակություն:

**Չեռներեցության ազատություն.** մասնավոր ֆիրմաների ազատ իրավունքը ռեսուրսներն օգտագործելու սեփական ընտրությամբ ապրանքների արտադրության համար և արտադրված ապրանքները վաճառելու իրենց ընտրած շուկաներում:

**Մակեր.** միջնորդ գնորդի և վաճառողի միջև, որը զբաղվում է ապրանքների, արժեթղթերի, ապահովագրական ծառայությունների առք ու վաճառքով: Վարձատրություն ստանում է գործարքի մասնակից երկու կողմերից յուրաքանչյուրից՝ կախված գործարքի գումարից:

**Մակրոտնտեսագիտություն.** տնտեսագիտության բաժին, որն ուսումնասիրում է տնտեսությունը որպես ամբողջություն, ինչպես նաև կարևորագույն բաղադրիչները կազմող տնային տնտեսությունները, պետական ոլորտը, մասնավոր ոլորտը, դրա համար օգտագործվող ընդհանուր (ամբողջական) տնտեսական ցուցանիշներ (արտադրանքի ընդհանուր ծավալ, զբաղվածության ընդհանուր մակարդակ, եկամուտների ընդհանուր ծավալ, ծախսերի ընդհանուր մեծության, գների ընդհանուր մակարդակ և այլն):

**Մասնագիտացում.** անհատի, ֆիրմայի, տարածաշրջանի կամ երկրի կողմից ռեսուրսների օգտագործումը ապրանքների ու ծառայությունների մեկ կամ մի քանի որոշակի տեսակների արտադրության համար:

**Մասնավոր ոլորտ.** տնային տնտեսությունների և ֆիրմաների ամբողջությունը երկրում:

**Մասնավոր սեփականություն.** մասնավոր անձանց ու ֆիրմաների հող, կապիտալ և այլ ակտիվներ ձեռք բերելու, տնօրինելու, վերահսկելու, օգտագործելու, վաճառելու և կտակելու իրավունքը:

**Միկրոտնտեսագիտություն.** տնտեսագիտության բաժին, որն ուսումնասիրում է տնտեսության առանձին միավորները՝ ճյուղերը, ֆիրմաները, տնային տնտեսությունները, առանձին շուկաները, որոշակի գները, ապրանքներն ու ծառայությունները:

**Միջազգային արժույթային հիմնադրամ.** պետությունների միջազգային ասոցիացիա, որը կազմավորվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ վճարային հաշվեկշռի ժամանակավոր դիֆիցիտ ունեցող երկրներին օտարերկրյա արժույթով փոխառություններ տրամադրելու և տարադրամի կուրսերի տատանմանն ուղղված մջջոցառումների իրականացման նպատակով:

**Միջազգային արժույթային ռեզերվներ.** արտասահմանյան տարադրամ և այլ ակտիվներ, օրինակ՝ ոսկի, որոնք պետությունը կարող է օգտագործել վճարային հաշվեկշռի դեֆիցիտը ծածկելու համար:

**Միջազգային ոսկյա ստանդարտ.** XX դարասկզբից գործող միջազգային տարադրամային համակարգ, որին համապատասխան յուրաքանչյուր երկիր իր փողային միավորի արժեքն արտահայտում էր ոսկու որոշակի քանակով, պահպանում էր անփոփոխ հարաբերակցություն իր ոսկու պաշարների և շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածի միջև, թույլատրում էր ոսկու ազատ ներմուծումն ու արտահանումը:

**Միջանկյալ ապրանքներ.** տվյալ տարում վերավաճառման, նախնական մշակման կամ դրանցից վերջնական արդյունքների արտադրման համար գնվող ապրանքներ:

**Մոնետարիզմ.** մակրոտնտեսական հայեցողություն, համաձայն որի արտադրանքի համախառն ծավալը և գների մակարդակը փոփոխվում են՝ կապված փողի առաջարկի փոփոխության հետ. հիմնվում է մոնետար կանոնի վրա:

**Մոնետար կանոն.** մոնետարիզմի կողմնակիցների ձևակերպած կանոն, ըստ որի շրջանառության մեջ փողի զանգվածը պետք է աճի իրական ՀԱԱ-ի տարեկան աճի պոտենցիալ տեմպերին հավասար չափով. դրամական զանգվածը պետք է ունենա 3-5 տոկոս կայուն աճի տեմպեր:

**Մոնոպոլիա.** շուկա, որտեղ վաճառողների թիվն այնքան քիչ է, որ նրանցից յուրաքանչյուրն ընդունակ է ազդելու ապրանքի կամ ծառայության ընդհանուր ծավալի առաջարկի և գնի վրա:

**Մոնոպոլիստական մրցակցություն.** շուկա, որտեղ շատ ֆիրմաներ վաճառում են դիֆերենցված արտադրանք. շուկա, որի մուտքը համեմատաբար ազատ է. շուկա, որտեղ ֆիրման որոշակի վերահսկողություն ունի իր արտադրած ապրանքի վաճառքի գնի վրա և որտեղ նշանակալի չափով գործում է ոչ գնային մրցակցություն:

**Մոնոպսոնիա.** շուկա, որտեղ հանդես է գալիս ապրանքի, ծառայության կամ ռեսուրսի միայն մեկ գնորդ:

**Մրցակցություն.** մեծ թվով իրարից անկախ գնորդների և վաճառողների առկայությունը շուկայում, գնորդների և վաճառողների շուկա ազատ մուտք գործելու և այն լքելու հնարավորությունը:

**Մուլտիպլիկատոր.** հավասարակշռված ՀԱԱ-ի փոփոխության և ինվեստիցիաների ծավալի փոփոխության, կամ ամբողջական ծախսերի ցանկացած այլ բաղադրիչի, կամ էլ հարկային մուտքերի զուտ ծավալի փոփոխության հարաբերությունը: Թիվ, որով պետք է բազմապատկել ամբողջական ծախսերի ցանկացած բաղադրիչի փոփոխությունը հավասարակշիռ ՀԱԱ-ի արդյունաբար փոփոխությունը ստանալու համար:

**Մուլտիպլիկատորի էֆեկտ.** այն ազդեցությունը, որն ամբողջական ծախսերի ծավալի փոփոխությունն ունենում է ՀԱԱ-ի հավասարակշռված մակարդակի վրա (ազդեցություն, որն առաջանում է սպառման, ինվեստիցիաների, հարկային մուտքերի զուտ ծավալի, ապրանքների և ծառայությունների պետական գնումների կամ արտահանման ծավալների փոփոխության պատճառով):

**Մուրհակ.** արժեթուղթ երկարաժամկետ պարտավորության տեսքով, որը գրավոր ձևով փոխառուն տալիս է վարկատուին: Այն վերջինիս օրենքով պաշտպանվող իրավունք է տալիս որոշակի ժամանակում փոխառուից պահանջելու մուրհակում նշված գումարը:

**70 թվի կանոն.** տարիների թվի որոշման մեթոդ, որոնց ընթացքում գների մակարդակը կարող է կրկնապատկվել: 70-ը բաժանվում է ինֆլյացիայի տարեկան մակարդակին:

**Ներհոսք, ներարկում.** <<եկամուտներ-ծախսեր>> հոսքի մեջ ներարկվող լրացուցիչ միջոցներ ինվեստիցիաների, ապրանքների և ծառայությունների պետական գնումների, ապրանքների արտահանման ձևերով:

**Ներմուծման էֆեկտ.** փոխառությունների աճով պայմանավորված տոկոսադրույքի բարձրացում, արտասահմանյան կապիտալի ներհոսք, ազգային թղթադրամի կուրսի բարձրացում և ապրանքների ներմուծման գերազանցում արտահանումից:

**Ներմուծման քվոտա.** տվյալ երկրի կողմից որոշակի ժամանակամիջոցում այլ երկրներից ներմուծվող ապրանքների ծավալի սահմանափակում:

**Ներքին կարգավորիչներ.** բոլոր այն գործոնները, որոնք առանց պետության միջամտության միտում ունեն մեծացնել պետական բյուջեի դեֆիցիտը (կամ կրճատել դրական սաղոն) անկման փուլում և մեծացնել դրական սաղոն (կամ կրճատել դեֆիցիտը) ինֆլյացիայի փուլում:

**Ներքին պետական պարտք.** պետության պարտքը տվյալ երկրի քաղաքացիներին, ֆիրմաներին և հաստատություններին (այսինքն՝ տվյալ երկրի պետական արժեթղթերի տերերին):

**Նկարագրական տնտեսագիտություն.** որոշակի խնդրի կամ երևույթի վերաբերյալ համապատասխան տնտեսական փաստերի (տվյալների) հավաքում և կուտակում:

**Նորմալ ( սողացող) ինֆլյացիա.** գների մակարդակի աճ տարեկան 5-10%-ի չափով:

**Նորմատիվային տնտեսագիտություն.** տնտեսագիտության ուղղություն՝ հիմնված սուբյեկտիվ գնահատումային դատողությունների վրա, թե ինչպիսին պետք է լինի տնտեսությունը, որոնք են տնտեսության հիմնական նպատակները և տնտեսական քաղաքականության խնդիրները:

**Նվազագույն աշխատավարձ.** ամենացածր աշխատավարձը (դրույքաչափը), որը ձեռնարկատերերը օրինական հիմունքներով վճարում են մեկ ժամվա աշխատանքի դիմաց:

**Նվազող սահմանային օգտակարության օրենք.** սպառողի կողմից ապրանքի կամ ծառայության սպառման մեծացմանը զուգընթաց, ապրանքի և ծառայության յուրաքանչյուր լրացուցիչ միավորի սահմանային օգտակարությունը կրճատվում է:

**Շահույթ.** տնտեսական շահույթ և նորմալ շահույթ. նրանց եկամուտները, ովքեր տնտեսությանն առաջարկում են իրենց ձեռնարկատիրական ունակությունները:

**Շուկա.** հաստատություն կամ մեխանիզմ, որի միջոցով իրականանում է գնորդների և վաճառողների փոխհամաձայնությունը ապրանքների ու ծառայությունների գնի ու քանակի որոշման հարցում:

**Ոչ դիսկրեցիոն գանձարանային քաղաքականություն.** հարկային մուտքերի զուտ ծավալի մեծացում (կրճատում), որն առաջանում է ՀԱԱ-ի աճի ժամանակ և նպաստում տնտեսության կայունացմանը:

**Ոչ տարիֆային արգելքներ.** արգելքներ (բացառությամբ մաքսային հարկերի), որոնք կիրառում են պետությունները երկրների միջև առևտուրը խոչընդոտելու նպատակով. հատուկ լիցենզիաներ, ապրանքների որակի չիմնավորված ստանդարտներ, մաքսային ընթացակարգի իրականացման ժամանակ բյուրոկրատական քաշքշուկ և այլն:

**Չեկային ավանդ (դեպոզիտ).** առևտրային կամ խնայողական բանկի ցանկացած ավանդ, որի դիմաց կարելի է դուրս գրել չեկ. ընդգրկում է անժամկետ ավանդները, ինչպես նաև վարկային միությունների հաշիվները:

**Պահանջարկի գնային էլաստիկություն.** ապրանքի պահանջարկի մեծության տոկոսային փոփոխության և այդ ապրանքի գնի տոկոսային փոփոխության հարաբերությունը: Գնողունակ պահանջարկի մեծության ռեակցիան ապրանքի գնի փոփոխության նկատմամբ:

**Պահանջարկի գրաֆիկ.** գրաֆիկ, որը ցույց է տալիս ապրանքների կամ ծառայությունների այն քանակը, որ գնորդները պատրաստ են գնել տվյալ ժամանակամիջոցում:

**Պահանջարկի էլաստիկություն.** պահանջարկ, որի էլաստիկության գործակիցը մեծ է մեկից, իսկ պահանջարկի մեծության փոփոխության տոկոսը մեծ է ապրանքի գնի փոփոխության տոկոսից:

**Պահանջարկի ինֆլյացիա.** ամբողջական պահանջարկի աճով պայմանավորված ինֆլյացիա. հասարակությունը փորձում է սպառել շատ, քան կարող է արտադրել:

**Պահանջարկի մեծություն.** տվյալ ապրանքի կամ ծառայության այն քանակությունը, որը գնորդը ցանկանում է գնել որոշակի գնով տվյալ ժամանակամիջոցում:

**Պահանջարկի ոչ գնային դետերմինանտներ.** գործոններ, բացառությամբ գնի, որոնք որոշում են ապրանքի և ծառայության պահանջարկի քանակական մեծությունները:

**Պահանջարկի օրենք.** հակադարձ կախվածություն ապրանքի կամ ծառայության գնի և պահանջարկի մեծության միջև որոշակի ժամանակամիջոցում:

**Պարտադիր ռեզերվ.** օրենքով սահմանված ռեզերվ, որը ֆեդերալ ռեզերվային բանկը սահմանում է կոմերցիոն բանկերի համար:

**Պարիտետ.** 1) երկու և ավելի գործոնների, նպատակների համարժեքություն, տարբեր տնտեսական սուբյեկտների իրավունքների և պարտականությունների, վճարումների, իրավիճակի հավասարություն շուկայում, 2) տարբեր երկրների դրամական միավորների հարաբերակցություն, որը սահմանվում է կամ նրանց ոսկու պարունակությամբ կամ գնողունակությամբ:

**Պետական պարտքի ռեֆինանսավորում.** մարման ժամկետի լրացման դեպքում կառավարության կողմից պետական արժեթղթերի տերերին տվող վճարումները՝ նոր արժեթղթերի վաճառքից գոյացած գումարների հաշվին կամ մարված արժեթղթերի փոխանակումը նորերով:

**Պոզիտիվ տնտեսագիտություն.** տնտեսական պահվածքի վերաբերյալ գիտական ընդհանրացումների նպատակով փաստերի կամ տվյալների վերլուծություն, ուսումնասիրում է այն, ինչ որ կատարվել է:

**Պրոգրեսիվ հարկ.** հարկ, որի միջին դրույքն աճում է հարկ վճարողի եկամտի աճին զուգընթաց և նվազում է այդ եկամտի կրճատման հետ:

**Ռեգրեսիվ հարկ.** հարկ, որի միջին դրույքը իջնում (բարձրանում) է հարկ վճարողի եկամտի մեծանալուն (իջնելուն) զուգընթաց:

**Ռենտային եկամուտներ.** տնտեսությունը հողային ռեսուրսներով ապահովող անձանց եկամուտը:

**Ռիզիսիոն ճեղքվածք.** մեծություն, որի չափով պետք է աճի ամբողջական ծախսերի գրաֆիկը (տեղաշարժվի դեպի վեր), որպեսզի իրական ՅԱԱ-ն հասնի ոչ ինֆլյացիոն լրիվ զբաղվածության մակարդակին:

**Ռոբին Յուդի էֆեկտ.** հարկերի պրոգրեսիվ դրույքաչափերի սահմանում, որի նպատակը բնակչության եկամուտները վերաբաշխելն է:

**Ռևալվացիա.** տարադրամի նախկինում սահմանված արժեքի բարձրացում:

**Սալդո.** ձեռնարկության դրամական մուտքերի և ծախքերի տարբերություն որոշակի ժամանակահատվածում, երկրի արտահանման և ներմուծման ծավալների տարբերություն:

**Սակագին.** 1) ծառայությունների վճարման համար սահմանված գին, 2) աշխատանքի վարձաչափ, 3) մաքսային գանձման չափ:

**Սահմանափակ պատասխանատվություն.** կորուստների առավելագույն չափի սահմանափակում ըստ նախապես հաստատված մեծության. կորուստների առավելագույն գումարը, որ կարող են կրել կորպորացիայի տերերը (բաժնետերերը), հավասար է նրանց կողմից բաժնետոմսերի փաթեթի համար վճարված գումարին:

**Սանացիա.** պետական և բանկային միջոցառումների համակարգ՝ ուղղված ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավմանը և սնանկացումների կանխմանը:

**Սեյի օրենքը.** մակրոտնտեսական սկզբունք, ըստ որի ապրանքների և ծառայությունների արտադրությունը (առաջարկը) ստեղծում է իրեն հավասար ամբողջական պահանջարկ:

**Սենյորաժ.** թղթադրամի էմիսիայից ստացվող եկամուտ:

**Սոցիալական ապահովություն.** պետության կողմից սոցիալապես անապահով խավերին տրվող օգնություն, որն արտահայտվում է ծերության թոշակների, նպաստների, հիվանդներին ու երեխաներին տրվող աջակցության տեսքով և այլն:

**Սպառման գրաֆիկ.** գրաֆիկ, որը ցույց է տալիս տնային տնտեսությունների սպառողական ապրանքների վրա կատարած ծախսերի դինամիկան՝ հարկերը վճարելուց հետո մնացած եկամուտների տարբեր մակարդակների պայմաններում:



**Սպառման միջին հակվածություն.** հարկերը վճարելուց հետո մնացած եկամուտի այն մասը, որը տնային տնտեսությունները ծախսում են սպառողական ապրանքների և ծառայությունների վրա:

**Սպառման սահմանային հակվածություն.** սպառման բաժինը հարկերը վճարելուց հետո մնացած եկամուտի ցանկացած փոփոխության մեջ. որոշվում է սպառման փոփոխության և հարկերը վճարելուց հետո մնացած եկամուտի փոփոխության հարաբերությամբ:

**Սպառողական ապրանքներ.** մարդկանց անմիջական պահանջ-մունքները բավարարող ապրանքները և ծառայությունները:

**Սպառողական պարտք.** պարտք, որը գոյանում է ապառիկ առևտրի դեպքում և ստիպում կրճատել ընթացիկ սպառողական ծախսերը:

**Ստագնացիա.** տնտեսության լճացում, որը նախորդում կամ ուղեկցում է անկմանը:

**Ստագֆլյացիա.** ինֆլյացիա, որն ուղեկցվում է արտադրության ծավալների կրճատմամբ (ստագնացիայով) և գործազրկության բարձր մակարդակով. գների և գործազրկության մակարդակների միաժամանակյա բարձրացում:

**Ստատիկ տնտեսություն.** 1) տնտեսություն, որտեղ ռեսուրսների առաջարկը, տեխնիկան, տեխնոլոգիան անփոփոխ են, որտեղ որևէ ապրանքի աճ նշանակում է մյուսի կրճատում, պահանջում է ռեսուրսների տեղափոխություն մի ճյուղից մյուսը, իսկ տեղաշարժը կատարվում է արտադրական հնարավորությունների կորի երկայնքով, 2) տնտեսություն, որտեղ զուտ ինվեստիցիաների ծավալը հավասար է զրոյի, իսկ համախառն, մասնավոր, ներքին ինվեստիցիաները հավասար են անորտիզիացիոն հատկացումներին:

**Ստվերային տնտեսություն.** տնտեսական պրոցեսներ, որոնք թաքցվում են դրանց մասնակիցների կողմից, չեն վերահսկվում պետության կամ հասարակության միջոցով, չեն ֆիքսվում պետական վիճակագրությամբ: Ստվերային տնտեսությունն ընդգրկում է հակա-օրինական, արգելված գործունեությունը, հարկերից խուսափելու նպատակով թողարկված ոլորտը և ոչ ֆորմալ, հաշվարկման չենթարկվող գործարքները, որոնք պայմանավորված են դրանց անհատականությամբ, անձնական, ընտանեկան բնույթով, կամ չափորոշիչների բացակայությամբ:

**Վենչուրային գործարքներ.** դրամական և արժեթղթերի հետ իրականացվող գործարքներ, կապված տեխնիկական նորարարությունների, գիտական հետազոտությունների, գյուտերի և հայտնագործությունների ներդրման վարկավորման և ֆինանսավորման հետ: Այդպիսի գործարքները հիմնականում կատարվում են իննովացիոն բանկերի կողմից և կապված են մեծ ռիսկի հետ:

**Վերջնական արդյունքներ.** ապրանքներ գնված ոչ թե վերավաճառքի կամ հետագա վերամշակման, այլ դրանց վերջնական սպառման նպատակով:

**Տարադրամի կուրս.** արտասահմանյան տարադրամի մեկ միավորի դիմաց ազգային տարադրամով վճարվող գին. կուրս, որով մի երկրի թղթադրամը փոխանակվում է մի այլ երկրի թղթադրամով:

**Տնային տնտեսություն.** մեկ կամ մի քանի անձից բաղկացած տնտեսական միավոր, որը տնտեսությանը մատակարարում է ռեսուրսներ և դրանց դիմաց ստացած եկամուտներով ձեռք բերում իր պահանջ-մունքների բավարարման համար անհրաժեշտ նյութական բարիքներ և ծառայություններ:

**Տնտեսական աճ.** 1. արտադրական հզորությունների աճ օգտագործվող արտադրության գործոնների ծավալների մեծացման կամ տեխնիկայի ու տեխնոլոգիայի կատարելագործման միջոցով. 2. կամ արտադրանքի իրական ծավալի (ՀԱԱ), կամ էլ բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի իրական ծավալի աճ:

**Տնտեսական աճի գործոններ.** տնտեսական աճ ապահովող աղբյուրներ, որոնք բաժանվում են երեք խմբի. 1.առաջարկի գործոններ (բնական ռեսուրսների քանակ և որակ, աշխատանքային ռեսուրսների քանակ և որակ, հիմնական կապիտալի ծավալ, տեխնոլոգիա), 2. պահանջարկի գործոններ, 3. բաշխման գործոններ:

**Տնտեսական արդյունավետություն.** հազվագյուտ ռեսուրսների ծախսերի և դրանց օգտագործման արդյունքում արտադրված ապրանքների ու ծառայությունների ծավալի առնչություն: Ռեսուրսների նվազագույն ծախսերով որոշակի արժեքի արդյունքի ստացում: Ապրանքների և ծառայությունների արտադրության առավելագույն ծավալի ստացում՝ որոշակի արժեքի ռեսուրսների կիրառմամբ:

**Տնտեսական շահույթ.** ֆիրմայի ընդհանուր եկամուտը՝ հանած նրա բոլոր տնտեսական ծախսերը. «զուտ շահույթ» և «գերշահույթ» տերմինների հոմանիշը:

**Տնտեսական ռեսուրսներ.** հողը, աշխատանքը, կապիտալը և ձեռնարկատիրական ունակությունը, որոնք օգտագործվում են ապրանքների և ծառայությունների արտադրության ժամանակ:

**Տնտեսական ցիկլ.** մի շարք տարիների ընթացքում տնտեսական ակտիվության մակարդակի վերելքների և վայրէջքների կրկնությունը:

**Տնտեսական քաղաքականություն.** տնտեսական գործընթացներին որոշակի ուղղություն տվող միջոցառումների համակարգ՝ ցանկալի արդյունքների հասնելու կամ ոչ ցանկալի երևույթներից խուսափելու նպատակով:

**Տոկոսադրույքի էֆեկտ.** գների մակարդակի բարձրացումը (իջեցումը) տանում է փողի նկատմամբ պահանջարկի բարձրացմանը

(իջեցմանը), բարձրացնում (իջեցնում) է տոկոսադրույթը և արդյունքում կրճատում (մեծացնում) ծախսերի ընդհանուր ծավալը երկրում:

**Տրանսֆերտային վճարումներ.** վճարում կառավարության կամ ֆիրմայի կողմից տնային տնտեսությանը կամ ֆիրմային (փողի, ապրանքների կամ ծառայությունների ձևով), որի փոխարեն վճարողն անմիջականորեն ապրանքներ կամ ծառայություններ չի ստանում: Գոյություն ունեն տրանսֆերտային վճարումների երեք տարածված ձևեր. սուբսիդիաներ, մասնավոր ձեռնարկատերերի պետական պարտքի տոկոսների վճարումներ, սոցիալական կարիքների համար պետական դրամական վճարումներ (թոշակներ, նպաստներ և այլն):

**Տրաստային գործառնություն.** երբ բանկը համաձայնագրերի հիման վրա իրականացնում է մասնավոր անձանց ունեցվածքի ժամանակավոր կառավարում, եթե նրանք զրկված են դրա իրավունքից (այրի կին, անչափահաս), առավելագույն շահույթ ստանալու նպատակով կապիտալի կառավարում (արժեթղթերի, անշարժ գույքի գնում), գանձապահարաններում թանկարժեք իրերի և այլ արժեքների պահպանում և այլն:

**Ցածր կարգի ապրանքներ.** ապրանք կամ ծառայություն, որը սպառողը գնում է քիչ (շատ), երբ նրա եկամուտները ավելանում (պակասում) են:

**Ցիկլային գործազրկություն .** ամբողջական ծախսերի անբավարարության պատճառով առաջացող գործազրկություն:

**Ցիկլային կարգավորվող բյուջե.** ապրանքների և ծառայությունների համար կատարված պետական ծախսերի հավասարությունը զուտ հարկային մուտքերի ծավալին տնտեսական ցիկլի սահմաններում. տնտեսական ակտիվության անկման փուլերում առաջացող բյուջեի դեֆիցիտը փոխհատուցվում է վերելքի փուլի բյուջետային ավելցուկով:

**Ուղղահայաց միավորում.** մեկ ֆիրմայի սեփականությունը հանդիսացող ձեռնարկությունների խումբ, որոնք իրականացնում են միևնույն ապրանքի արտադրության տարբեր փուլեր:

**Փակ տնտեսություն.** ապրանքներ և ծառայություններ չարտահանող և չներմուծող երկիր:

**Փոխադարձ փոխարինելի ապրանքներ.** ապրանքներ կամ ծառայություններ, որոնց համար գոյություն ունի ուղիղ համեմատական կախվածություն մեկի գնի, մյուսի՝ պահանջարկի միջև, այսինքն՝ մեկի գնի իջեցումը (բարձրացումը) առաջ է բերում մյուսի պահանջարկի փոքրացում (մեծացում):

**Փոխարինման էֆեկտ.** երբ ցածր գինը խթանում է նմանատիպ, բայց համեմատաբար էժան ապրանքների ձեռքբերումը:

**Փոխլրացնող ապրանքներ.** ապրանքներ կամ ծառայություններ, որոնցից մեկի գնի և մյուսի պահանջարկի միջև առկա է հակադարձ կախվածություն, այսինքն՝ մի ապրանքի կամ ծառայության գնի

իջեցումը (բարձրացումը) բերում է մյուս ապրանքի կամ ծառայության պահանջարկի բարձրացում(կրճատում):

**Փողի առաջարկ, փողի զանգվածը շրջանառության մեջ.** շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածը, նեղ իմաստով M1 (կանխիկ փողը մետաղադրամների և թղթադրամների տեսքով, չեկային ավանդները), լայն իմաստով M2 (M1-ին գումարած ոչ չեկային ավանդներ և փոքր գումարի կարճաժամկետ ավանդներ) և M3 (M2-ին գումարած խոշոր գումարի երկարաժամկետ ավանդներ):

**Փողի մուլտիպլիկատոր.** ավելցուկային ռեզերվների այն մասը, որն առևտրային բանկերի համակարգը կարող է օգտագործել շրջանառության մեջ գտնվող փողի զանգվածի և անժամկետ ավանդների գումարների ավելացման համար՝ նոր վարկեր տրամադրելու (կամ արժեթղթեր գնելու) միջոցով. հավասար է մեկը բաժանած պարտդիր ռեզերվի:

**Փողի պահանջարկ ակտիվների համար.** փողի այն քանակը, որը մարդիկ ցանկանում են պահել խնայողությունների ձևով (ֆինանսական ակտիվների քանակը փողի տեսքով), և որը հակադարձ համեմատական է տոկոսադրույթին:

**Փողի պահանջարկ գործարքների համար.** փողի այն քանակը, որը մարդիկ ցանկանում են ունենալ իբրև շրջանառության միջոց՝ առք ու վաճառքի գործարքներ կատարելու համար, և որն ուղիղ համեմատական է անվանական ՀՀԱ-ի փոփոխությանը:

**Քվազի հասարակական, քվազիպետական ապրանք.** ապրանքներ կամ ծառայություններ, որոնց վրա կարող է տարածվել բացառման սկզբունքը, որոնք սակայն ապահովում են այնպիսի մեծ կողմնակի օգուտներ, որ կառավարությունը խրախուսում է դրանց արտադրությունը՝ ռեսուրսների պակասի առաջացում թույլ չտալու նպատակով:

**Օուկենի օրենք.** գործազրկության «բնական» մակարդակի համեմատությամբ ընթացիկ գործազրկության մեկ տոկոս աճը մեծացնում է իրական ՀԱԱ-ի ետ մնալը պոտենցիալ ՀԱԱ-ից 2,5 տոկոսի չափով:

**Օֆֆշոր.** ֆինանսական կենտրոններ, որոնք կապիտալ են գրավում արտասահմանյան ֆիրմաներին հարկային և այլ արտոնություններ տրամադրելու միջոցով:

**Ֆիզիկական անձ.** քաղաքացի, մարդ, որը մասնակցում է տնտեսական գործունեությանը որպես այդ գործունեության լիիրավ անդամ: Ֆիզիկական անձ են համարվում տվյալ երկրի քաղաքացիները, արտասահմանցիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք տնտեսության մեջ գործում են որպես ինքնուրույն սուբյեկտ, իրավունք ունեն անձանք իրականացնելու որոշակի տնտեսական գործունեություն, կարգավորել տնտեսական հարաբերությունները այլ անձանց և կազմակերպությունների հետ, հարաբերությունների մեջ մտնել իրավաբանական անձանց հետ: Ֆիզիկական անձը գործում է սեփական ա-

նունից, կարիք չունի ֆիրմայի, ձեռնարկության ստեղծման, ինչն անհրաժեշտ է իրավաբանական անձանց համար:

**Ֆիլիպսի կոր.** կոր, որը ցույց է տալիս գործազրկության մակարդակի (աբսոլյուտների առանցք) և գների մակարդակի տարեկան աճի տեմպերի (օրդինատների առանցք) միջև գործող կապը:

**Ֆիրմա.** կազմակերպություն, որը շահույթ ստանալու նպատակով ռեսուրսներ է օգտագործում ապրանքների և ծառայությունների արտադրության համար, տնօրինում և կառավարում է մեկ կամ մի քանի ձեռնարկությունների:

**Ֆյուչերսային գործարքներ.** ապրանքների, տարադրամի և արժեթղթերի վաճառքի բորսային գործարքներ, որոնք կնքվում են նախապես, ապագայի համար՝ տվյալ պահին գործող գներով:

**Ֆրիկցիոն գործազրկություն.** գործազրկություն, որը կապված է աշխատանքի տեղի կամավոր փոփոխության և աշխատանքից ժամանակավորապես ազատվելու հետ. մի աշխատանքից մի այլ աշխատանքի անցնելու ընթացքում առաջացած ժամանակավոր գործազրկություն:

**«Ֆրիռայդերի» պրոբլեմ.** ապրանքի կամ ծառայության օգտագործում առանց դրանց դիմաց նախապես վճարելու, բացառման սկզբունքի կիրառման անհնարիություն, որը մասնավորի համար անշահավետ է դարձնում որոշ տնտեսապես ցանկալի և անբաժանելի ապրանքների ու ծառայությունների արտադրությանը զբաղվելը:

**Ֆունկցիոնալ ֆինանսավորում.** գանձարանային քաղաքականության օգտագործումը ոչ ինֆլյացիոն ՀԱՎ-ի ապահովման համար լրիվ զբաղվածության պայմաններում՝ անկախ պետական պարտքի վրա՝ այդ քաղաքականության ազդեցությունից:

## Գրականություն

- 1 Кэмпбелл Р. Макконнелл, Стэнли Л. Брю, Экономикс, М., 2002
- 2 Самуэльсон П., Экономика, М., 1964.
- 3 Хейне Л., Экономический образ мышления, М., 1991.
- 4 Фишер С., Дорнбуш Р., Шмалензи Р., Экономика, М., 1999.
- 5 Грегори Менкью Н., Принципы экономики, М., 1999.
- 6 Баликоев В.З. , Общая экономическая теория , Новосибирск, 1999.
- 7 Экономическая теория ( под ред. И.П. Николаевой), М., 2002.
- 8 Курс экономической теории ( под общей редакцией М.И. Чепурина, Е.А. Киселевой), Киров, 2002.
- 9 Экономическая теория ( под ред. Н.И. Базылева и С.П.Гурко), Минск, 2004.
- 10 Курс экономики ( под ред. Б.А. Райтзверга), М., 2004.
- 11 Экономика (под ред. А.С.Булатова), М., 2000.
- 12 Селигмен Б., Основные течения современной экономической мысли, М., 1968.
- 13 Блауг М., Экономическая мысль в ретроспективе, М., 1994.
- 14 Сорвина Г. Н. , Экономическая мысль XX столетия: страницы истории, М., 2000.
- 15 Michel Beaud, Gilles Dostaler, Economic Thought Since Keynes, Broukfeld, 1995.
- 16 Սարինյան Ռ. Ն., Տնտեսագիտական ուսմունքների պատմություն, Ե., 2004.
- 17 Современный экономический словарь, М., 2003.

## Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1. Տնտեսագիտության առարկան և մեթոդը.....	5
Գլուխ 2. Տնտեսագիտության հիմքը: Հասարակության արտադրական հնարավորությունների սահմանը.....	25
Գլուխ 3. Ջուտ կապիտալիզմի ինստիտուցիոնալ շրջանակները: Արդյունքների և եկամուտների շրջապտույտի մոդելը.....	43
Գլուխ 4. Շուկա: Պահանջարկ և առաջարկ.....	56
Գլուխ 5. Պետության տնտեսական դերը .....	81
Գլուխ 6. Մակրոտնտեսական ցուցանիշներ.....	98
Գլուխ 7. Գործազրկության բնական մակարդակը .....	115
Գլուխ 8. Ինֆլյացիա. պատճառները և ծախքերը .....	124
Գլուխ 9. Տնտեսական ցիկլեր: Ամբողջական պահանջարկ և ամբողջական առաջարկ .....	135
Գլուխ 10. Ամբողջական ծախսերի դասական և քեյնսյան տեսությունները .....	157
Գլուխ 11. Գանձարանային քաղաքականություն .....	186
Գլուխ 12. Փողը և բանկային գործը: Դրամավարկային քաղաքականություն: IS-LM մոդելը .....	199
Գլուխ 13. Պետական բյուջե: Պետական պարտք.....	224
Գլուխ 14. Տնտեսական աճ .....	236
Գլուխ 15. Միջազգային առևտուր.....	247
Գլուխ 16. Տնտեսագիտական ուսմունքների պատմության համառոտ ակնարկ.....	263
Գլուխ 17. Հայ տնտեսագիտական միտքը .....	283
Նորբեյան մրցանակի դափնեկիր տնտեսագետները.....	301
Տնտեսագիտական բառարան .....	332
Գրականություն.....	357